

Տիմոադիր՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2(102)
2021

Խմբագրական խորհուրդ՝

**Ա. ԴԻԼԻՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ն. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ,
Ն. ՆԱԶԱՐՅԱՆ, Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՎԱԴԱՐՇՅԱՆ**

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ – 2. ԱՊՐԵՍՅԱՆ 12
- ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ – Ն. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 21

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

- ԲԱՑԱՐԿԻ ԵՎ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՅՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ – Ա. ՍՄԲԱՏՅԱՆ, Լ. ՎԱՐԱԳՅԱՆ 31

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1587-1605)

- ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ ԱԺՈ-014-Ա ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1587, 13 ապրիլի 2021 թվականի) 44

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 58
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 69
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 77
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ (ՀԱՄԸՆԿՆՈՂ) ԿԱՐԾԻՔԸ 87
- 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՇԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1588, 13 ապրիլի 2021 թվականի) 90
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 99
- 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1589, 13 ապրիլի 2021 թվականի) 108
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 114

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ
ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԵՐԻ,
5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4.2-ՐԴ ԿԵՏԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1590, 29 ապրիլի 2021 թվականի) 123
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ (ՀԱՄԸՆԿՆՈՂ) ԿԱՐԾԻՔԸ 155
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 175
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԹՈՒՆՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 229
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 234
- 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1591, 4 մայիսի 2021 թվականի) 250
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ256

- ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1586-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ 9.1-ԻՆ ԵՎ 9.2-ՐԴ ԿԵՏԵՐԻ, ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 182.5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-7-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԵՏ ՓՈՒԽԿԱՊԱԿՑՎԱԾ 13-ՐԴ ԵՎ 14-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1592, 4 մայիսի 2021 թվականի) 265
- ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱԲՈՎՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԾԱՂԿԱԶՈՐ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ՀԱԾՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1.1-ԻՆ ՄԱՍԻ, 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1593, 14 մայիսի 2021 թվականի) 295
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 316
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 325

- 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՀՈՈՄՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1959 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1594, 18 մայիսի 2021 թվականի) 336
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 340
- 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1595, 18 մայիսի 2021 թվականի) 349
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 355
- 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1596, 18 մայիսի 2021 թվականի) 364

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 371

- 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԳՐԻ
(ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՍՐԱՇՐՋԱՆԱԿԻ ԱՆՁՆԱԳՐԻ) ԵՎ
ԻՆՔՆԱԳՆԱՑ ՄԵՔԵՆԱՅԻ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԻ
ԱՆՁՆԱԳՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՋԵՎԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ
(ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՍՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1597, 18 մայիսի 2021 թվականի)380

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 386

- ՀԱՅԿ ԵՐԵՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍՊԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 94-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ
ԵՎ 109-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1598, 10 հունիսի 2021 թվականի) 396

- 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ
ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՆ ՈՒ ՇՐՋԱՆՑԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1599, 15 հունիսի 2021 թվականի) 408

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 415
- 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1994 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1600, 15 հունիսի 2021 թվականի) 424
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ431
- 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ՀԱՆՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1601, 15 հունիսի 2021 թվականի)440
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 444
- 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԱԼԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝
ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ
ՀԱՐԿԵՐ ԶՎՃԱՐԵԼՆ ՈՒ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ
ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1602, 15 հունիսի 2021 թվականի) 453

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 461
- ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ
ԵՎ «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1603, 15 հունիսի 2021 թվականի) 470
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ
Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 501
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԽԱԶՏԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 513
- 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ
(Ս6 ՎԱՆԱԶՈՐ-ԲԱԳՐԱՏԱԾԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ»
(ՎԱՐԿ ԹԻՎ 3449-ARM) ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1604, 22 հունիսի 2021 թվականի)523
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 527

- ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱՄ
«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ,
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴԻՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1605, 29 հունիսի 2021 թվականի) 537

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՏԵՍԱՀԱՆԴԻՊՈՒՄ Է
ՈՒՆԵՑԵԼ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ 549
- ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԻԴԵՈՒԼԱՆԴՆԵՐԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊՊԱՆԻՆ 550
- ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊՊԱՆԻՆ551
- ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՂԱԶԱԽՍԱՆԻ ԴԵՍՊՊԱՆԻՆ 552
- ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՊԱՆԸ ԳՐՔԵՐ Է ՆՎԻՐԱԲԵՐԵԼ
ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ 553
- ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է
ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ554
- ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ 555
- ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ 556
- ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՉՆԵՐԻՆ 557



ՉՈՀՐԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ

*Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱՌԻՄ**

Ամփոփագիր. Հոդվածում խոսվում է հարկային պատասխանատվության և մարդու հիմնական իրավունք հանդիսացող սեփականության իրավունքի պաշտպանության հարաբերակցության, հարկային պատասխանատվության՝ որպես իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակի բնորոշ հատկանիշների մասին, ինչպես նաև ներկայացվում են հարկային պատասխանատվության կիրառելիության սահմանները: Պրակտիկայում հարկային մարմինը հարկ վճարողի նկատմամբ կիրառում է և՛ հարկային, և՛ վարչական պատասխանատվության միջոցներ, ինչը նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության տեսանկյունից առանձին դեպքերում կարող է խնդրահարույց լինել:

Հիմնաբառեր. սեփականության իրավունք, իրավունքի սահմանափակում, հարկային պատասխանատվություն, վարչական պատասխանատվություն, գույքային վնաս:

Ի տարբերություն 2005 թվականի փոխփոխություններով ՀՀ Սահմանադրության՝ ներկայումս գործող Սահմանադրությունում հարկեր և պարտադիր այլ վճարներ մուծելու պարտականությունը նախատեսված է սեփականության իրավունքին նվիրված հոդվածում: Նման կարգավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկերի և այլ պարտադիր վճարների սահմանումը և զանձումն ուղղակիորեն հանդիսանում է անձի սեփականության իրավունքի սահմանափակում: Դրա մասին խոսվում է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴ-Ո-1436 որոշման մեջ, որի համաձայն. «(...) **սեփականության իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում, այդ թվում՝ հարկի սահմանումը, պետք է տեղի ունենա բացառապես օրենքի հիման վրա, համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին, իսկ այդ սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ և նպատակ և ունենա արդարացի հիմնավորում**»:

Պետական իշխանությունը պատմության բոլոր ժամանակահատվածներում կարիք է ունեցել միջոցների իր պահպանման համար, որոնց ներգրավման եղանակներն են փոփոխվել միայն կախված հասարակության զարգացման աստիճանից¹:

Հարկերի միջոցով կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների եկամուտների մի մասը մոբիլիզացվում է՝ պետության պահանջների, նրաներքին ու արտաքին խնդիրների լուծման համար²:

Դեռևս հին ժամանակներից հարկերը և պարտադիր այլ վճարները հանդիսանում են պետության գոյության անհրաժեշտ միջոց: Պետությունը չի կարող կատարել իր առջև դրված գործառնություններն առանց բավարար տնտեսական միջոցների, որի մեծ հատվածը ձևավորվում է հարկերի և պարտադիր այլ վճարների հավաքագրումից: Ընդ որում՝ անձինք հարկեր և պարտադիր այլ վճարներ վճարում են ոչ միայն պետությանը, այլ նաև համայնքին, ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց հերթին լուծում են համայնքային նշանակության հանրային հարցեր, ինչի համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան անգամ ուղղակիորեն սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցների **առնվազն մի մասը պետք է գոյանա տեղական հարկերի և վճարների հավաքագրման հաշվին**³:

Պետությունը և համայնքը, սեփականության իրավունքի մյուս սուբյեկտներից հավաքագրելով հարկեր և պարտադիր այլ վճարներ, դրանք վերածում են իրենց սեփականության: Ի լրումն այնի՝ հարկերի հավաքագրման գործառնությամբ հանդիսանում է այն հիմնական առանձնահատկությունը, որով պետությունը և համայնքը տարբերվում են սեփականության իրավունքի մյուս սուբյեկտներից: Բայցևայնպես, այդ միջոցների հավաքագրման նպատակը հանրային նշանակության հարցերի լուծման համար անհրաժեշտ տնտեսական հիմքի ապահովումն է: Հետևապես, սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումն իրականացվում է **հանրության շահերի պաշտպանության նպատակով**:

Մինևոյն ժամանակ, սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ է հարկերի գանձումից բացի քննարկել նաև հարկային պարտավորությունների չկատարման դեպքում վրա հասնող հարկային պատասխանատվության՝ որպես իրավական պատասխանատվության առանձին տեսակի կիրառելիության իրավաչափության հարցը: Իրավական պա-

¹ **Ռամզյան Ա.** Հարկային օրենսդրության հիմունքներ, Երևան, Ֆինանսաբանկային քոլեջ, 2003, էջ 7:

² **Մուրադյան Ս.** Ֆինանսական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ» իր., 2003, էջ 117:

³ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, 9-րդ հոդված, 3-րդ մաս:

տասխանատվությունը իրավախախտման համար անձնական, գույքային և կազմակերպական բնույթի սահմանափակումներ առաջացնող պետական հարկադրանքի միջոցների կիրառում է¹:

Անհրաժեշտ է նշել, որ հանդիպում են դեպքեր, երբ միևնույն իրավախախտման համար նախատեսված է պատասխանատվություն ինչպես ՀՀ հարկային օրենսգրքով, այնպես էլ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով (այսուհետ՝ ՎԻՎՕ): Ընդ որում՝ Սահմանադրությունը նախատեսում է նույն արարքի համար կրկին դատվելու արգելքի սկզբունքը (**non bis in idem**), իսկ Սահմանադրական դատարանն իր թիվ ՄԴՈ-1139 որոշմամբ սահմանում է, որ պատասխանատվության միջոցներ սահմանելիս օրենսդիրն իր իրավակարգավորումներով պետք է բացառի հարկային և վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտի՝ **կրկնակի պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը**:

Բայցևայնպես, non bis in idem սկզբունքի խախտում առկա չի լինի, եթե անձի նկատմամբ կիրառվեն տարբեր նպատակներ հետապնդող իրավական պատասխանատվության միջոցներ: Մասնավորապես՝ դրանցից մեկն ուղղված լինի անձի պատճառած վնասը հատուցելուն, իսկ մյուսը՝ հակաիրավական արարքի համար անձին պատժելուն: Հետևապես, անդրադառնալով վարչական պատասխանատվության և իրավական պատասխանատվության առանձին տեսակ կազմող հարկային պատասխանատվության տարբերակիչ հատկություններին՝ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1139 որոշմամբ արձանագրում է.

«վարչական պատասխանատվության նպատակը ոչ թե խախտված իրավունքների վերականգնումն է, այլ «վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակել ... օրենքները պահպանելու, ... համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը»,

- հարկային պատասխանատվության նպատակը պետությանը և հասարակությանը հասցված **գույքային վնասի հատուցումն է**, այն գույքային (ֆինանսական) բնույթի իրավական պատասխանատվություն է: (...) Այդ վնասը ենթակա է լրիվ հատուցման՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ հարկատուն ենթակա՞ է, արդյոք, վարչական կամ քրեական պատասխանատվության, թե՛ ոչ»:

Այսինքն՝ վերոնշյալ բնորոշումից հետևում է, որ վարչական պատասխանատվությունն ունի պատժիչ և կանխարգելիչ բնույթ, այնինչ հարկային

¹ Վարչական իրավունք, ուսումնական ձեռնարկ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Դանիելյան Գ.**, Երևան, ԵՊՀ հրատարակություն, 2012, էջ 455:

պատասխանատվության նպատակը պատճառված վնասի հատուցումն է: Հետևապես դրանց միաժամանակյա կիրառումն իրավաչափ է: *Սակայն արդյո՞ք << հարկային օրենսգրքի կարգավորումներից հետևում է, որ հարկային պատասխանատվության միջոցներն ուղղված են միայն պետությանը (համայնքին) պատճառված վնասի հատուցմանը:* Տվյալ հարցին հնարավոր չէ դրական պատասխան տալ, քանի որ նախ՝ հարկային պատասխանատվություն սահմանող նորմի ներկայումս գործող բովանդակությունից հետևում է, որ այն պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցումից բացի նախատեսում է նաև հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ հնարավոր այլ անբարենպաստ հետևանքներ: Այսպես՝ << հարկային օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ *հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարսբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհսպաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:*

Այսինքն՝ նախ, օրենսդիրը հարկային պատասխանատվության կիրառման նպատակը դիտարկում է ավելի լայն, քան ուղղակի պետությանը պատճառված վնասի հատուցումն է: Մասնավորապես, << հարկային օրենսգրքով հարկային պատասխանատվության նպատակ է սահմանվում պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովումը, ինչին կարելի է հասնել ոչ միայն պատճառված վնասի հատուցմամբ, այլ նաև մի շարք տարբերվող այլ միջոցներով (այդ թվում՝ պատժիչ բնույթ կրող):

Երկրորդ, վերոնշյալ նպատակին հասնելու միջոցների թվում պետությանը պատճառված նյութական վնասից բացի օրենսդիրը սահմանում է նաև հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու հնարավորությունը, ինչն ակնհայտորեն դուրս է գալիս վնասների հատուցման շրջանակներից: Այսինքն՝ հարկ վճարողը, լրիվ ծավալով վնասերի հատուցում վճարելուց բացի, զուգահեռ կրում է նաև լրացուցիչ անբարենպաստ հետևանք, որը դուրս է << Սահմանադրական դատարանի կողմից հարկային պատասխանատվությանը տրված բնորոշումից: Եթե անձը վնասերի լրիվ հատուցումից բացի պարտավոր է կատարել նաև պետության կողմից սահմանված այլ վճարումներ (ինչպիսի անվանում էլ դրանք չունենան), ապա դրանց վճարումն ակնհայտորեն չունի պետության համար վերականգնող

բնույթ, և նման պայմաններում պետությունը կստանա նաև լրացուցիչ գույք, որը չէր ստանա, եթե իր իրավունքը չխախտվեր:

Երրորդ, օրենսդիրը հարկային պատասխանատվությունն ուղղակիորեն դիտարկում է նաև որպես **հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոց**: Սակայն պատժիչ և կանխարգելիչ մեթոդները բնորոշ են հենց վարչական պատասխանատվությանը:

Վերոնշյալից կարելի է եզրահանգել, որ հարկային պատասխանատվության ներկայիս օրենսդրական ձևակերպումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից սահմանված բնորոշիչներին, և նման բովանդակությամբ հարկային պատասխանատվությունը չի կարող կիրառվել վարչական պատասխանատվությանը գուզահեռ: Այն կհանգեցնի non bis in idem սկզբունքի խախտման:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ վնաս պատճառելու արդյունքում ծագած իրավահարաբերություններում վնասի հատուցման համար անհրաժեշտ է նախ որոշել պատճառված վնասի չափը: Այսինքն՝ **վնասը պետք է լինի չափելի**: Սակայն հարկային իրավախախտումների համար վրա հասնող հարկային պատասխանատվություն սահմանող առանձին նորմեր սահմանում են վճարվող տուգանքի¹ ֆիքսված չափ:

Օրինակ՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանվում է տուգանք հարկ վճարողի նկատմամբ յուրաքանչյուր չգրանցված վարձու աշխատողի համար **250,000 ՀՀ դրամի չափով**: Սակայն տվյալ իրավախախտմամբ պետությանը կարող է տարբեր չափերի վնաս պատճառվել՝ կախված չվճարված եկամտային հարկի չափից: Այնինչ՝ վերոնշյալ հոդվածը սահմանում է **տուգանքի վճարման ֆիքսված գումար**, որը կարող է առանձին դեպքերում բարձր կամ ցածր լինել իրականում պատճառված վնասի չափից: Հետևապես, այստեղ խոսքը չի վերաբերում պատճառված վնասի հատուցմանը, այլ տվյալ պատասխանատվության միջոցն իրականում կրում է պատժիչ և կանխարգելիչ բնույթ:

Միևնույն ժամանակ ՎԻՎՕ-ն նախատեսում է **վարչական պատասխանատվություն** առանց աշխատանքային պայմանագրի աշխատող պահելու համար տուգանքի տեսքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար: Իսկ պրակտիկայում հարկային մարմինը տվյալ հանգամանքների առկայության դեպքում անձի նկատմամբ կիրառում է և՛ ՀՀ հարկային օրենսգրքով, և՛ ՎԻՎՕ-ով նախատեսված պատասխանատվություն: Այսինքն՝ անձի նկատմամբ միևնույն իրավախախտման համար նախատեսվում է 2 պատժիչ բնույթի իրավական

¹Ընդ որում՝ «տուգանք» եզրույթն իրենից արդեն իսկ ենթադրում է վճարման պարտականության պատժիչ և կանխարգելիչ բնույթը:

պատասխանատվություն, ինչն անմիջականորեն խախտում է վերջինիս սեփականության իրավունքը:

Ավելին՝ իրավական տեխնիկայի տեսանկյունից նույնպես անտրամաբանական է նույն իրավախախտման համար տարբեր օրենքներում նույնաբնույթ պատասխանատվության միջոցների նախատեսումը: Իսկ եթե օրենսդիրը գտնում է, որ սահմանված 2 կամ ավելի տուգանքների հանրագումարն է հանդիսանում պատասխանատվության արդար չափ, ապա կարող է օրենքներից մեկով նախատեսված տուգանքի չափը բարձրացնել՝ հանելով մյուս օրենքով նախատեսված պատասխանատվությունը:

Հարկային պատասխանատվության վերաբերյալ երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ վերջինս պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Հարկային պատասխանատվության համաչափությունը կարելի է գնահատել ՀՀ հողային օրենսգրքով սահմանված սեփականության իրավունքի հարկադիր դադարման դեպքերից մեկով: Այսպես՝ ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետը նախկինում սահմանում էր, որ *հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարում են դատական կարգով, հետևյալ հիմքերով (...)* **հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելը և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չվճարելը:**

Այսինքն՝ օրենքով ուղղակիորեն նախատեսվում էր սեփականությունից զրկում այն հողի նկատմամբ, որի հարկը օրենքով սահմանված ժամկետում չէր վճարվել: Ընդ որում՝ տվյալ նորմն ընդհանրապես կարևորություն չէր տալիս ոչ հողամասի արժեքին և ոչ էլ չվճաչված հարկի չափին:

Սակայն կիրառելիք հարկային պատասխանատվության միջոցի (միջամտության) և հետապնդվող նպատակի (հանրային շահ) միջև պետք է առկա լինի արդարացի հավասարակշռություն, ինչից հետևում է, որ հարկային պատասխանատվության միջոցը պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին: Իսկ համաչափությունը որոշելիս յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատել իրավունքի սահմանափակմանն ուղղված միջոցի **այիտանիությունը, անհրաժեշտությունը և համարժեքությունը** հետապնդվող նպատակի հանդեպ:

Սահմանադրական դատարանն իր թիվ ՍԴՆ-1432 որոշմամբ արձանագրեց, որ ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետով *ստրագրված սեփականության իրավունքի դադարման հիմքը չի բխում պետության և հասարակության՝ անձի սեփականության իրավունքի հանդեպ գերակայող շահերի սպասովման անհրաժեշտությունից և անհրաժեշտ միջոց չէ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված նպատակին հասնելու համար, համարժեք չէ սահմանափակվող իրավունքի*

նշանակությամբ, արդարացի միջոց չէ հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռությունն ապահովելու տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը դիտարկում է որպես ծայրահեղ միջոց՝ նշելով, որ հողի հարկը չվճարելը չի կարող հանգեցնել այդ հողի նկատմամբ սեփականությունից զրկման: Այդ հողի նկատմամբ բռնագանձում կարող է իրականացվել պարտավորությունները չկատարելու համար նախատեսված ընդհանուր կարգով: Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետը ճանաչեց Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Մինևույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ թեև հարկերի կամ հարկային պատասխանատվության գումարի բռնագանձումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ պարբերության իմաստով հանդիսանում է **վերահսկողություն սեփականության օգտագործման նկատմամբ**, Սահմանադրական դատարանը թիվ ՄԴՈ-1432 որոշմամբ ուղղակիորեն նշում է, որ անձն օրենքով սահմանված, ներառյալ՝ հարկային պարտավորությունների հարկադիր կատարումն ապահովելու դեպքերում, **սեփականությունից կարող է զրկվել բացառապես դատական կարգով:**

Ամփոփելով սույն հոդվածում ներկայացված վերլուծությունները՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումներին.

- 1) հարկերը, այդ թվում նաև՝ հարկային պատասխանատվությունը, հանդիսանում են սեփականության իրավունքի սահմանափակում,
- 2) հարկային պատասխանատվությունը հանդիսանում է իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակ, որն ունի իր առանձնահատկությունները, որոնք, հատկապես ըստ իրենց նպատակի, էականորեն տարբերակում են դրան վարչական պատասխանատվությունից,
- 3) եթե ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված հարկային պատասխանատվության միջոցը պատճառված վնասի լրիվ հատուցումից բացի հարկ վճարողի համար նախատեսում է այլ անբարենպաստ լրացուցիչ հետևանք, ապա հարկ վճարողի նկատմամբ դրան զուգահեռ չպետք է կիրառվի նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ և
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ. փոփոխություններով):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (ընդունված՝ 04.11.1950թ.):

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա (ընդունված՝ 15.10.1985թ.):

ՀՀ հարկային օրենսգիրք (ընդունված՝ 04.10.2016թ.):

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունված՝ 06.12.1985թ.):

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1436 որոշումը:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1139 որոշումը:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1432 որոշումը:

Թամազյան Ա. Հարկային օրենսդրության հիմունքներ, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան 2003, 81 էջ:

Մուրադյան Ս. Ֆինանսական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ» հր., 2003, 285 էջ:

Վարչական իրավունք, ուսումնական ձեռնարկ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Դանիելյան Գ.**, Երևան, ԵՊՀ հրատարակություն, 2012, 704 էջ:

**НАЛОГОВАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ КАК ОГРАНИЧЕНИЕ
ПРАВА СОБСТВЕННОСТИ**

Аннотация

В статье рассматриваются соотношение налоговой ответственности и защиты права собственности, особенности налоговой ответственности как отдельного вида юридической ответственности, а также представляются пределы применимости налоговой ответственности. На практике налоговый орган применяет к налогоплательщику меры налоговой и административной ответственности одновременно, что в некоторых случаях может быть проблематичным с точки зрения недопустимости двойной ответственности за одно и то же правонарушение.

Ключевые слова: право собственности, ограничение права, налоговая ответственность, административная ответственность, материальный ущерб.

TAX LIABILITY AS A RESTRICTION OF THE RIGHT OF OWNERSHIP

Annotation

This article discusses the relationship between tax liability and the protection of the right of ownership, characteristics of tax liability as a separate type of legal liability, as well as the limits of applicability of tax liability. In practice, the tax body imposes both tax and administrative liability measures on the taxpayer, which in some cases can be controversial in terms of the inadmissibility of double liability for the same act.

Keywords: right of ownership, restriction of right, tax liability, administrative liability, material damage.



ՆԱԶԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*ՀՊՏՀ հասարակագիտության
ամբիոնի դոցենտ, իրավաբանական
գիտությունների դոկտոր*

**ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

Ամփոփագիր. Ֆինանսաիրավական հարկադրանքի տեսակների և միջոցների իրավական առանձնահատկությունները բացահայտված չեն:

Հոդվածում իրավական-համեմատական մեթոդների կիրառմամբ առաջին անգամ լուսաբանվում է ֆինանսաիրավական հարկադրանքի հասկացությունը, գործնականում կիրառվող հարկադրանքի միջոցների և դրանց, ըստ ֆինանսական իրավունքի ենթաճյուղերի, օրենսդրական ամրագրումների հիմնահարցերը:

Իրավական հարկադրանքի և կիրառվող միջոցների միասնականացման չափանիշ է համարվում անձնական գույքը և ոչ գույքային պատասխանատվությունը, որոնց դրսևորումները հեղինակն առաջարկում է սահմանազատել պատասխանատվության տեսակներից՝ այն համարելով հարկադրանքի միջոցներ:

Հիմնաբառեր. ֆինանսական հարկադրանք, հարկադրանքի միջոց, հարկադրանքի տեսակ, ֆինանսաիրավական պատասխանատվություն, ֆինանսական տուգանք, ֆինանսական տույժ, ֆինանսական ներգործության միջոց:

Ֆինանսական իրավախախտումների համար կիրառվող հարկադրանքի միջոցները նպատակ ունեն ապահովել իրավախախտի նկատմամբ պատժի կիրառման անխուսափելիության սկզբունքը ՀՀ ֆինանսական համակարգի տարբեր ոլորտների իրավական կարգավորումն ապահովող առանձին իրավական ակտերով, որոնք դեռևս պատշաճ կարգով համակարգված չեն:

Ֆինանսական իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվությունը ըստ բնույթի առաջարկվում է դասակարգել:

1. Ըստ կիրառման ոլորտների, որպիսիք ընդգրկում են պետական և համայնքային բյուջետային օրենսդրության խախտումների, հարկային, արժույթային, բանկային, ինչպես նաև արժեթղթերի շուկայի իրավական

կարգավորումը: Հիշատակված ոլորտներում ֆինանսական պատասխանատվության ենթակա են կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:

2. Ըստ հարկադրանքի բովանդակության ֆինանսական իրավախախտման վարույթում կարող են կիրառվել **անձնական ոչ գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված հարկադրանքի միջոցներ**, ինչպիսիք կարող են համարվել ա) անձին բերման ենթարկելը, բ) անձի զննումը, գ) քննումը և այլն: **Գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված միջոցներ՝** ա) գույք վերցնելը, բ) զննելը, գ) դրա վրա կալանք դնելը, դ) արգելադրումները, ե) փաստաթղթեր և փորձանմուշներ վերցնելը և այլն:

Ֆինանսաիրավական պատասխանատվությունն այլ իրավունքի ճյուղերից սահմանազատման հիմնական չափանիշը պայմանավորված է ֆինանսական համակարգի տարբեր ոլորտներում կիրառվող հարկադրանքի միջոցների համակարգի տեսակներով, որոնք կոնկրետ դրսևորվում են ֆինանսական իրավախախտումների կարգավորմանն ուղղված սանկցիաներով:

Ֆինանսական հարկադրանքի միջոցների տեսակների առանձնահատկությունները բացահայտելու նպատակով անհրաժեշտ ենք համարում իրավական-համեմատական մեթոդների օգնությամբ մատչելի դարձնել «պատասխանատվության», «հարկադրանքի» և դրանց միջոցների սահմանազատման հիմքերը:

Համեմատության կարգով ընդգծենք, որ Հանրապետության քրեական օրենսդրությամբ չեն լուսաբանված քրեաիրավական պատասխանատվություն, պատասխանատվության միջոցների հիմնահարցերը, որոնց բովանդակությունը թե՛ Քրեական օրենսգրքում և թե՛ ուսումնական դասագրքերում հանգեցվում է «պատիժ» հասկացությանը:

Մայրենի լեզվով հրատարակված քրեական իրավունքի (դասագիրք բուհերի համար) ընդհանուր մասում հեղինակներն այն կարծիքին են, որ քրեական պատասխանատվությունն իրավական պատասխանատվության առավել խիստ տեսակն է, որը սահմանվում է հանցագործության համար: Հանցանքի կատարումը ենթադրում է մեղավորի ոչ միայն քրեական պատասխանատվություն, այլև նրա բարոյական դատապարտում: Ընդհանուր առմամբ քրեական պատասխանատվությունը կարելի է բնորոշել որպես անբարենպաստ հետևանքներ, որոնք առաջ են գալիս հանցագործության մեջ մեղավոր անձի համար¹: Այնուհետև, ուսումնական դասագրքի հեղինակները, անդրադառնալով «քրեական պատժի հասկացության և տարրերի» լուսաբանմանը, ընդգծում են, որ «պատիժը» քրեական պատասխանատվության ձևերից է², որի տեսական զարգացումների արդյունքում հանգում ենք այն եզրակա-

¹ Տե՛ս մանրամասն՝ ՀՀ քրեական իրավունք (ընդհանուր մաս), Ե., ԵՊՀ, 2003, էջ 235-240:

² Տե՛ս նույն տեղում, էջ 369:

ցության, որ պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որի հիմնավորման համար վկայակոչում են ՀՀ քր.օր.-ի 48-րդ հոդվածը, որտեղ սահմանված է պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտասահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ¹:

Գրեթե հավասարության նշան դնելով «պատիժ», «պատասխանատվություն», «հարկադրանք» եզրույթների միջև՝ նույնացվել են հիշատակված հասկացությունները, որի հետևանքով գործող Քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածում սահմանվում է 10 պատժատեսակ, որոնք ըստ էության ոչ թե «տեսակ» են, այլ «պատժամիջոցներ»:

Կարծում ենք՝ քրեական այս պատժամիջոցները նույնպես անհրաժեշտ է դասակարգել ա) նյութական, բ) անձնական և գ) բարոյական պատասխանատվության տեսակների և յուրաքանչյուրը սահմանազատել ըստ պատասխանատվության առարկայի, որի հիմնավորումը հիշարկած ուսումնական դասագրքում ընդգծում են հեղինակները՝ քրեական պատասխանատվություն համարելով մեղավոր ճանաչված անձին իրավունքներից և ազատությունից զրկումը, դրանց սահմանափակումները, ինչպես նաև բարոյական ներգործության միջոցներով կիրառվող պատասխանատվությունը:

Քրեաիրավական պատասխանատվության և պատժամիջոցների հստակեցման նպատակով ընդգծենք, որ, օրինակ, «կալանքը», «ազատագրվումը որոշակի ժամկետով» կամ «ցմահ ազատագրվումը» անձնական իրավունքների սահմանափակման պատասխանատվության միջոցներ են, իսկ «տուգանքը», «գույքի բռնագրավումը»՝ նյութական պատասխանատվության միջոցներ: Ինչ վերաբերում է բարոյական պատասխանատվության միջոցներին, ապա վերջինիս օրինակ կարելի է համարել «հանրային աշխատանքների» դատապարտման դատավճիռը:

Հիմախնդրի բացահայտումից չհեռանալու նպատակով անդրադառնանք պետության ֆինանսական գործունեության ոլորտները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում ամրագրված հարկադրանքի միջոցների տեսակներին, լուսաբանենք դրանցից յուրաքանչյուրի իրավական առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան մի շարք երկրների ֆինանսական օրենսդրության վերլուծությունների հիման վրա ֆինանսական հարկադրանքի միջոցները կարելի է ներկայացնել հետևյալ համակարգով.

¹ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք (ընդհանուր մաս), էջ 370:

- 1) տուգանք,
- 2) տույժեր,
- 3) բյուջետային ֆինանսավորման դադարեցում,
- 4) իրավախախտի բանկային հաշիվներից դրամական միջոցների դուրս գրում,
- 5) բյուջետային վարկավորման դադարեցում,
- 6) ֆինանսական օգնության կարգով տրվող փոխհատուցման, դոտացիայի, սուբսիդիայի և սուբվենցիայի գումարների դադարեցում,
- 7) բյուջետային վարկավորման և փոխատվությունների դադարեցում,
- 8) ֆինանսական շուկաներում գործունեության առանձին տեսակների համար տրվող արտոնագրերի դադարեցում,
- 9) ֆինանսապլանային ակտերի կատարման մասին հաշվետվությունների մերժել (չընդունել)¹:

Ֆինանսական տուգանքը դրամական բնույթի ֆինանսական տույժ է, որը կիրառվում է ֆինանսական խախտում կատարողի նկատմամբ օրենքով նախատեսված դեպքերում և չափերով:

Ֆինանսական կարգով տուգանք նախատեսող նորմեր սահմանում են միայն չ՛ պետական իշխանության ու կառավարման բարձրագույն մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Այսօր, ֆինանսական տուգանքը քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվում է միայն այն դեպքերում, երբ անարդյունավետ են կարգապահական ներգործության միջոցները:

Ինչպես հայտնի է, տուգանքը կիրառվում է նաև որպես քրեական պատժամիջոց (սանկցիա): Չխոսելով դրանց իրավական հետևանքների և կիրառման հիմքերի տարբերությունների մասին՝ նկատենք, որ ի տարբերություն ֆինանսական տուգանքի, որը գլխավորապես կիրառվում է որպես տույժի հիմնական միջոց, քրեական տուգանքը կարող է հանդիսանալ և՛ որպես հիմնական պատիժ, և՛ որպես լրացուցիչ պատիժ:

Տուգանքը ֆինանսական հարկադրանքի ամենատարածված և բավականաչափ արդյունավետ միջոցներից մեկն է, որի դրական կողմը հենց այդ տույժի նյութական բնույթն է: Ֆինանսական տուգանքը՝ ի տարբերություն քրեական և վարչական կարգով նշանակվող տուգանքների, նպատակ չունի դաստիարակչական անհրաժեշտ ներգործություն ունենալ իրավախախտողի

¹ Տե՛ս մանրամասն՝ չ՛ օրենք «Չ՛ Բյուջետային համակարգի մասին»՝ ընդունված 1997թ. հուլիսի 24-ին; չ՛ օրենք «Չ՛ Կենտրոնական բանկի մասին»՝ ընդունված 1996թ. հունիսի 30-ին; չ՛ օրենք «Բանկերի և բանկային գործունեության մասին»՝ ընդունված 1996 թ. հունիսի 30-ին; չ՛ «Հարկային օրենսգիրքը»՝ ընդունված 2016թ; “Бюджетный кодекс” РФ, часть 4. - М., 2008. - С. 281-306:

վրա: Հետևաբար, ֆինանսական տուգանքի նպատակը հասցված վնասի վերականգնումն է, որն արտահայտվում է ֆինանսական հարկադրանքի գործադրման ընթացքում, մինչդեռ **թե՛ վարչական և թե՛ քրեական իրավախախտումների համար կիրառվող տուգանքներն ունեն պատժիչ և դաստիարակչական բնույթ և զուրկ են իրավախախտման համար վճարվող միանվագ վարձ լինելուց:**

Գործնականում տուգանք կիրառվում է և՛ վարչական, և՛ քրեական, և թե՛ ֆինանսական օրենսդրությամբ սահմանված կարգով¹:

Վարչական, քրեական և ֆինանսաիրավական կարգով կիրառվող տուգանքների միջև գլխավոր տարբերությունն այն է, որ առաջին դեպքում այն հիմնականում նշանակվում է վարչական մարմնի կողմից՝ վարչական զանցանքի համար, իսկ երկրորդ դեպքում՝ դատարանի կողմից՝ հանցագործության համար, մինչդեռ ֆինանսական տուգանքն այսօր «ՀՀ ֆինանսական օրենսդրությամբ հստակեցված է ըստ պետության ֆինանսական համակարգի առանձին օղակների կարգավորման առանձնահատկությունների՝ հիմք ընդունելով պետության կենտրոնացված և տեղական ինքնակառավարման (համայնքների) դրամական ֆոնդերի ձևավորման գործընթացում թույլ տրված ֆինանսական իրավախախտումները:

Ֆինանսական տուգանքը՝ որպես դրամական տույժ, որպես կանոն կիրառվում է լիազորված մարմնի կամ նրա ներկայացուցչի կողմից միայն Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից ընդունված ակտերում նախատեսված դեպքերում և սահմաններում, որտեղ ուղղակի ընդգրկված են ֆինանսական տուգանքները և այլ հարկադրանքի միջոցներ կիրառող մարմինները, սահմանված է վերջիններիս լիազորությունների շրջանակը: Այսպիսի կատեգորիկ պահանջների հանդիպում ենք «ՀՀ Բյուջետային համակարգի մասին», «Արժույթային կարգավորման և արժույթի վերահսկողության մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» և մի շարք այլ օրենքներում և ՀՀ «Հարկային օրենսգրքում»:

Առավել հստակ ընդգծումների ենք հանդիպում, օրինակ, ՌԴ «Բյուջետային օրենսգրքի» 284 և 284¹ հոդվածներում, որտեղ կոնկրետացված են ոչ միայն տուգանք կիրառող սուբյեկտները, այլև դրանց լիազորությունները ըստ ֆինանսական իրավախախտման բնույթի²:

Ֆինանսական տուգանքի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն կիրառվում է ոչ միայն քաղաքացիների ու պաշտոնատար ան-

¹Տե՛ս մանրամասն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2004թ. փետրվարի 18-ին, հոդվ. 82: **Գ. Դանիելյան**, Վարչական պատասխանատվություն, Ե., «Լույս» հրատ., 2002, էջ 108: Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքների վերաբերյալ, Ե., «Հարդ ընդ Սոֆի» հրատ., 2007, էջ 159:

²Տե՛ս մանրամասն՝ Бюджетный кодекс Российской Федерации. - М.: «Прспект», 2008.

ձանց, այլ հիմնականում կազմակերպությունների, հիմնարկների (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) նկատմամբ՝ անկախ վերջիններիս իրավական կարգավիճակից:

Համեմատական կարգով նկատենք, որ ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» գործող օրենսգիրքը չնայած չի կարգավորում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, այնուամենայնիվ գործնականում **երբեմն կազմակերպությունների նկատմամբ կիրառում է վարչական տուգանք, որն ըստ էության հակասում է նույն օրենսգրքի 22-րդ հոդվածի պահանջներին, ըստ որի վարչական տույժի նպատակը վարչական իրավախախտում կատարած անձի դաստիարակումն է օրենքները պահպանելու, համակեցության կանոնները հարգելու ոգով:** Մի հանգամանք, որ բացառում է կազմակերպությունների նկատմամբ վարչական տույժեր կիրառելու հնարավորությունը¹:

Ի տարբերություն վարչական տուգանքի, ֆինանսական տուգանքը կիրառվում է կազմակերպության դրամական ֆոնդերի, դրանց բյուջետային և արտաբյուջետային միջոցների նկատմամբ, որոնք կազմում են ֆինանսական իրավախախտման օբյեկտներ և ենթարկվում են հանրային հարկադրման՝ անկախ պաշտոնատար անձանց մեղքից: Ֆինանսական տուգանքները մուտքագրվում են համապատասխան մակարդակի բյուջեներ կամ արտաբյուջետային ֆոնդեր:

Ֆինանսաիրավական սանկցիաների համակարգում յուրահատուկ բովանդակություն ունի տույժը: Կարծում ենք՝ տույժի, որպես պատասխանատվության միջոցի գաղափարը ծնունդ է առել քաղաքացիական իրավունքում, որպես գույքային պարտավորությունների կատարումն ապահովելու միջոց և այսօր իր գանձման չափերի մեծությամբ աչքի է ընկնում հատկապես պետության ֆինանսական համակարգի կարգավորմանն ուղղված իրավական ակտերի սանկցիաներում:

ՀՀ գործող «Քաղաքացիական օրենսգրքի» 369-րդ հոդվածում տուգանքը (տուգանք, տույժ) համարվում է օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում:

Տուգանքը գույքային հարաբերություններում կարող է սահմանվել ինչպես օրենքով, այնպես էլ կողմերի համաձայնությամբ՝ պայմանագրով:

Հետևաբար, քաղաքացիական իրավունքում տուգանքը դասակարգվում է երկու իրավական հիմքով՝ ա) օրենսդրական և բ) պայմանագրային:

¹ Տե՛ս մանրամասն՝ **Мосин Е.Ф.** Административная ответственность за правонарушения в сфере бизнеса. - Санкт-Петербург, 1998, էջ 41:

«Քաղաքացիական օրենսգրքի» 371-րդ հոդվածի բովանդակությունից պարզ երևում է, որ տուգանքը կիրառվում է պարտավորական իրավահարաբերությունների մասնակիցների կամքից անկախ, այսինքն՝ անկախ այն բանից, կողմերի համաձայնությամբ նախատեսված է տուգանք վճարելու պարտավորություն, թե ոչ:

Ինչ մնում է պայմանագրային տուգանքի իրավական բովանդակությանը, ապա այն նախատեսված է կողմերի համաձայնությամբ:

Համեմատության նպատակով անդրադառնալով ֆինանսական իրավա-նորմերում ամրագրված տուգանքի հասկացությանը՝ նկատենք, որ վերջինս առաջին անգամ իրավաբանորեն հստակեցված ամրագրվել է ՀՀ «Հարկային օրենսգրքի» 401-րդ հոդվածում, որտեղ պարզորոշ ասված էր, որ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) **վճարում է տույժ ժամանակին** չմուծված հարկի գումարի 0.75 տոկոսի չափով:

Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետանց ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի քան 365 օրվա համար:

Ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցների առանձին տեսակները համեմատելով արտասահմանյան երկրների ֆինանսական օրենսդրությամբ սահմանված հարկադրանքի միջոցների հետ՝ դժվար չէ նկատել, թե իրավական տեխնիկայի իմաստով որքան պարզ և մատչելի են շարադրված համապատասխան հարկադրանքի միջոցները վերջիններիս ֆինանսական օրենսդրության համակարգի իրավական ակտերում: Օրինակ, ՌԴ «Հարկային օրենսգրքի» 75-րդ հոդվածում ասված է, որ **տույժը դրամական գումար է**, որը հարկատուն կամ հարկային գործակալը պարտավոր է վճարել այն դեպքերում, երբ հարկերը կամ զանձույթները սահմանված ժամկետներում չի վճարել:

Տույժի, որպես ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցի գործառնական նշանակությունը արտահայտվում է նրանում, որ վերջինս որպես կանոն կիրառվում է այն դեպքերում, երբ պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող հարկերը կամ զանձույթները ժամանակին չեն վճարվում: Այլ խոսքով ֆինանսական օրենսդրությամբ ամրագրված տույժը հանդես է գալիս

որպես պետական և տեղական բյուջեներ սահմանված ժամկետներում չմուծված հարկերի և գանձույթների փոխհատուցման միջոց, որը, որպես կանոն, գանձվում է հարկատեսակից և հարկ վճարող գործակալներից:

Անդրադառնալով տույժի՝ որպես ֆինանսական հարկադրանքի միջոցի բնութագրերին՝ նկատենք, որ այս հարցում ֆինանսաիրավական գրականության մեջ մեկ միասնական կարծիք չկա: Հեղինակների մի մասն այն կարծիքին է, որ ֆինանսական տույժը, ըստ էության, լրացուցիչ վճար է, որը չի կարելի համարել ֆինանսաիրավական պատասխանատվության միջոց¹:

Կարծում ենք՝ պետք է համաձայնել այն իրավագետների հետ, որոնք ֆինանսական տույժը դասում են ֆինանսաիրավական վերականգնողական հարկադրանքի միջոցների շարքին, որոնց նպատակը պետության ֆինանսական գործունեության տարբեր ոլորտներում կատարված ֆինանսական իրավախախտումների հետևանքով հասցված վնասի վերականգնումն է, որն ըստ էության ձեռք է բերվում միայն պետական հարկադրանքի կիրառմամբ²:

Քանի որ գործնականում տույժ կիրառվում է քաղաքացիական և ֆինանսաիրավական հարաբերությունների մասնակիցների խախտված իրավունքների պաշտպանության նպատակով, նկատենք որ վերջիններս միմյանցից խիստ տարբեր են: Այսպես՝

1. Տույժ սահմանող ֆինանսաիրավական ակտերը, որպես կանոն, չեն կարող սահմանվել իրավահարաբերությունների **կողմերի համաձայնությամբ**:

- Այն գումարները, որոնք գանձվում են որպես տույժ մուտքագրվում են պետական կամ համայնքների բյուջեներ:

2. Էապես տարբեր են նաև ֆինանսական իրավախախտման դեպքում տույժը գանձող մարմինները: Ֆինանսական օրենսդրությամբ ամրագրված է, որ ֆինանսական խախտումների դեպքում կազմակերպություններից տույժերը անվիճելի կարգով կարող են գանձել միայն լիազորված պետական մարմինները:

Ինչ վերաբերում է տույժերի գանձման քաղաքացիաիրավական կարգին, ապա որպես կանոն այն գանձվում է միայն դատարանների կողմից:

Համեմատության կարգով նկատենք, որ ՀՀ ֆինանսական օրենսդրությամբ սահմանված է տույժերի գանձման պարզեցված կարգ, որի լուսաբանումը բերված է ՀՀ հարկային գործող օրենսգրքում: Այլ է վիճակը օրինակ ՌԴ-ում: Այսպես, ՌԴ «Հարկային» և «Բյուջետային» օրենսգրքերում տույժերի հաշ-

¹ Տե՛ս մանրամասն՝ Финансовое право. Под ред. Киясханова И.Ш., Эриашвили Н.Д. 2-ое издание. Закон и право. - М., 2007, էջ 463-464:

² Տե՛ս մանրամասն, Карасева М.В. Финансовое право (Общая часть). - М.: «ЮРИСТ», 2000, էջ 191:

վարկման բարձր տոկոսադրույքներ են սահմանված:

Ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցները ըստ ՀՀ ֆինանսական համակարգի առանձին ոլորտների բազմազան են և մեծաքանակ, որոնց հասկացության, իրավական բովանդակության առանձնահատկությունները դյուրին ընկալման նպատակով գիտական խորը հետազոտման կարիք ունեն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀ օրենք «ՀՀ Բյուջետային համակարգի մասին»՝ ընդունված 1997թ. հունիսի 24-ին:

ՀՀ օրենք «ՀՀ Կենտրոնական բանկի մասին»՝ ընդունված 1996թ. հունիսի 30-ի:

ՀՀ օրենք «Բանկերի և բանկային գործունեության մասին»՝ ընդունված 1996թ. հունիսի 30-ին:

ՀՀ «Հարկային օրենսգիրքը»՝ ընդունված 2016թ.:

ՀՀ օրենք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»՝ ընդունված 2004թ. փետրվարի 18-ին:

“Бюджетный кодекс” РФ. Часть 4. - М., 2008. - С. 281-306.

ՀՀ քրեական իրավունք (ընդհանուր մաս), Ե., ԵՊՀ, 2003թ.:

Դանիելյան Գ. Վարչական պատասխանատվություն, Ե., «Լույս» հրատ., 2002: Հարցեր պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքների վերաբերյալ, Ե., «Հարդ ընդ Սոֆի» հրատ., 2007:

Финансовое право/Под ред. **Киясханова И. Ш., Эриашвили Н. Д.**, 2-ое издание. Закон и право. - М., 2007.

Карасева М.В. Финансовое право (общая часть). - М., “ЮРИСТ”, 2000, էջ 191:

Мосин Е.Ф. Административная ответственность за правонарушения в сфере бизнеса. - Санкт-Петербург, 1998.

КЛАССИФИКАЦИЯ МЕР ФИНАНСОВО-ПРАВОВОГО ПРИНУЖДЕНИЯ

Аннотация

Правовые особенности видов и мер финансово-правового принуждения в научной литературе не раскрыты.

В статье посредством сравнительно-правовых методов впервые раскрывается понятие финансово-правового принуждения, а также рассматриваются вопросы законодательного закрепления применяемых на практике мер финансового принуждения согласно отраслям финансового права.

Критерием унификации применяемых мер правового принуждения считается личная имущественная и неимущественная ответственность, которую автор предлагает отличать от видов ответственности, рассматривая ее как меру принуждения.

Ключевые слова: финансовое принуждение, мера принуждения, вид принуждения, финансово-правовая ответственность, денежный штраф, финансовое взыскание, меры финансового воздействия.

ON CLASSIFICATION OF THE MEANS OF FINANCIAL-LEGAL COMPULSION

Annotation

The legal peculiarities of the types and the means of financial-legal compulsion are not yet disclosed.

The notion of the financial-legal coercion, as well as the issues related to the legislative stipulation of the means of financial compulsion exercised in practice in accordance with the financial law are discussed for the first time in the given article by means of the legal-comparative methods.

The personal material and non-material responsibility is considered as the criteria for the unification of the legal compulsion, which the author suggests to distinguish from the types of responsibility and consider it as the means of compulsion.

Keywords: financial compulsion, means of compulsion, type of compulsion, financial-legal responsibility, financial penalty, financial punishment, means of financial impact.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ



ԱՐՄԵՆ ՍԱՐԱՏՅԱՆ

*Կենտրոնական ընտրական
հանձնաժողովի քարտուղար*



ԼԻԼԻԹ ՎԱՐԱԳՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցող,
Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
իրավաբանական վարչության
ծրագրամեթոդական բաժնի իրավաբան*

**ԲԱՅԱՐԿԻ ԵՎ ԻՆՔՆԱԲԱՅԱՐԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ
ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑՈՎ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ամփոփագիր. Հոդվածում ուսումնասիրվել են բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտների ընտրական օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները, հիմնախնդիրները և ներկայացվել են ինչպես դրանց թերությունները, այնպես էլ բարելավման ուղիները: Նշված առանձնահատկությունների առավելություններն ու բացերը ուսումնասիրելու համար, նախ, վեր են հանվել ընտրական գործընթացի բնույթը պարզաբանող մի շարք գործոններ: Գործոնների շարքում այս առանձնահատկությունների սահմանման համար հիմք հանդիսացող՝ որպես առաջնային գործոն առանձնացվել է ընտրական գործընթացի իրավաբաղաքական բնույթը, որի շրջանակներում էլ կառուցվել է հոդվածի բուն հետազոտությունը: Կատարված հետազոտության արդյունքների վերլուծությամբ տրվել են հեղինակային դիրքորոշումներ, ներկայացվել են այս հարցին վերաբերող ընտրական օրենսդրության նոր փոփոխություններ և առաջարկություններ՝ առկա հիմնահարցերի լուծման և ողջամիտ հստակեցման նպատակով:

Հիմնաբառեր. ընտրական, բացարկ, ինքնաբացարկ, քաղաքական, հանձնաժողով, կոլեգիալ, օրենսգիրք:

Ընտրությունների միջոցով հանրային իշխանության մարմինների ձևավորումը կարևոր նշանակություն ունի պետության զարգացման համար, քանզի հանդիսանում է քաղաքական իշխանության լեգիտիմացման առավել արդյունավետ միջոց: Ժողովրդավարության այս ինստիտուտի առանձնահատուկ կարևորությամբ պայմանավորված՝ քաղաքացիների ընտրական իրավունքներն առանձնահատուկ «կշիռ» են ձեռք բերում քաղաքական իրավունքների և ազատությունների համակարգում: Ընտրությունների այս կարևոր առաքելության արդյունավետ իրականացման համար մեծ դերակատարում ունի այն կազմակերպող մարմինը, ինչով էլ պայմանավորված, չափազանց կարևորվում են վերջինիս ձևավորմանը, կարգավիճակին և հանրության, ընտրական գործընթացի մասնակիցների համար վստահելի ընտրությունների կազմակերպմանը, անցկացմանը նպաստող կառուցակարգերին առնչվող հարցերը:

Ընտրական գործընթացը կարգավորող միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր դեպքերում ընտրությունների արդյունավետ կազմակերպման համար առաջնայնություն է տրվում (հատկապես ժողովրդավարության կայացման ճանապարհին գտնվող երկրների դեպքում) անկողմնակալ և կոլեգիալ մարմնի ստեղծմանը, որը պետք է գործի մշտական հիմունքներով: Այսպես, Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» 3.1 կետում ամրագրված է. «Միայն թափանցիկությունը, անկողմնակալությունն ու քաղաքականորեն պատճառաբանված մանիպուլյացիայից անկախությունը կապահովեն ընտրական գործընթացի ճիշտ վարչարարություն՝ նախընտրական փուլից մինչև արդյունքների ստացումը: Ահա թե ինչու պետք է կազմավորվեն անկախ, անկողմնակալ ընտրական հանձնաժողովներ՝ ազգային մակարդակից մինչև ընտրատեղամասի մակարդակ»¹:

Հայաստանի Հանրապետությունում այդպիսի մարմիններ են Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և տարածքային ընտրական հանձնաժողովները, որոնք անկախ և կոլեգիալ մարմիններ են՝ կազմված 7 անդամից և գործում են մշտական հիմունքներով, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովները, որոնք ձևավորվում են յուրաքանչյուր քվեարկություն սպասարկելու համար:

¹ Տե՛ս Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք: Ցուցումներ և բացատրական գեկույց, (ընդունված ԵԽ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) կողմից 52-րդ լիազումար նստաշրջանի ընթացքում, 2002թ. հուլիսի 5-6 և հոկտեմբերի 18-19), Ստրասբուրգ, 30.10.02թ., կարծիք N190/2002:

- Մշտական հիմունքներով գործող հանձնաժողովները կազմավորվում են՝
- ✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով՝ 6 տարի ժամկետով,
 - ✓ տարածքային ընտրական հանձնաժողովներ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ 6 տարի ժամկետով:

Ընտրական գործընթացի՝ *կոլեգիալ մարմնի* կողմից իրականացման նման պահանջը հանդիսանում է ժողովրդավարական և լեգիտիմ ընտրություններ ունենալու հիմնական գրավականներից մեկը, քանի որ կոլեգիալ մարմնի պարագայում որակյալ որոշումներ ունենալու հնարավորությունն առավել մեծ է, ընդունվում է ոչ թե մեկ անձի կողմից, այլ տարբեր անձանց կարծիքներն ու առաջարկությունները քննարկելու և մեկ ընդհանուր, առավել ողջամիտ, կոլեկտիվ համաձայնության արդյունքում:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման առանձնահատուկ ընթացակարգով պայմանավորված՝ ընտրական օրենսդրությունում ամրագրվել են գործընթացի արդյունավետությունն ապահովող մի շարք առանձնահատկություններ, որոնց թվում է բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտների սահմանումը:

Որպես կանոն, վարչական վարույթ իրականացնող մարմնին բացարկ հայտնելու կամ վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձի ինքնաբացարկի հիմքերը սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք)¹:

Մասնավորապես, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են բացարկ հայտնելու հիմքերը, համաձայն որի՝ վարույթի մասնակիցները կարող են գրավոր բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնելիս՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամի, եթե՝

- 1) վարչական մարմնի պաշտոնատար անձը վարույթի մասնակից է.
- 2) վարչական մարմնի պաշտոնատար անձը վարույթի մասնակիցներից որևէ մեկի ներկայացուցիչն է.
- 3) վարչական մարմնի պաշտոնատար անձն աշխատում է վարույթի մասնակիցներից որևէ մեկի մոտ.
- 4) վարչական մարմնի պաշտոնատար անձը վարույթի մասնակիցներից որևէ մեկի կամ նրա ներկայացուցչի ազգականն է՝ զավակը, ծնողը, հարազատ հայրը կամ մայրը, եղբայրը կամ քույրը կամ նրանց զավակը, հորեղբայրը կամ

¹ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին, ՀՀՊՏ 2004.03.31/18(317):

հորաքույրը կամ նրանց զավակը, մորեղբայրը կամ մորաքույրը կամ նրանց զավակը, ամուսինը (ընդ որում, ամուսնալուծության փաստը սույն կետով նախատեսված հիմքը բացառող հանգամանք չէ), փեսան, հարսը, ամուսնու ծնողները կամ նրանց զավակը կամ եղբայրը կամ քույրն է.

5) վարչական մարմնի պաշտոնատար անձը նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը.

6) մինչև գործի քննարկման ավարտը, տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը հրապարակայնորեն արտահայտվել է գործի հնարավոր ելքի մասին կամ գնահատական է տվել գործի փաստական հանգամանքներին կամ, մինչև ապացույցների հետազոտումը, կանխավ գնահատական է տվել դրանցից որևէ մեկին.

7) տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը երբևէ գործել է ի շահ վարույթի մասնակիցներից որևէ մեկի.

8) առկա են այլ հանգամանքներ, որոնք վկայում են գործի ելքով՝ տվյալ պաշտոնատար անձի կամ կոլեգիալ կազմի անդամի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված լինելու մասին կամ կասկած են հարուցում տվյալ գործի առնչությամբ նրա անաչառության նկատմամբ:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ սահմանված է, որ վերը թվարկված որևէ հիմքի առկայության դեպքում վարչական մարմնի ղեկավարը, վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը (եթե վարչական վարույթն իրականացնում է կոլեգիալ մարմինը, ապա կոլեգիալ մարմնի անդամը) պարտավոր է անհապաղ ինքնաբացարկ հայտնել: Այսինքն, բացարկի վերոնշյալ հիմքերը տարածվում են նաև ինքնաբացարկի վրա և եթե առկա է վերոնշյալ հիմքերից որևէ մեկը, ապա վարույթ իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել: Այս կարգավորումներն ընդհանուր բնույթ են կրում և տարածվում են վարչական վարույթ իրականացնող բոլոր մարմինների և պաշտոնատար անձանց վրա, սակայն Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Այսինքն, օրենքը հնարավորություն է տալիս ընդհանուր կանոնից անել «բացառություն», եթե դա են պահանջում տվյալ ոլորտի հատուկ կարգավորումները, ինչը կարևոր երաշխիք է վարչական վարույթի արդյունավետ իրականացման համար:

Այսպես, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 47-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ «Վարչական վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովի կազմին կամ հանձնաժողովի անդամին վարույթի մասնա-

կիցները չեն կարող բացարկ հայտնել»¹: Վարչական վարույթն իրականացնող հանձնաժողովի կազմին կամ անդամներին վարույթի մասնակիցների կողմից բացարկ հայտնել չկարողանալու առանձնահատկության սահմանումը, առաջին հայացքից, միգուցե, անտրամաբանական և անհասկանալի է թվում, սակայն ընտրական գործընթացի առավել խորն ուսումնասիրությունը կարող է միայն թույլ տալ այս կարգավորման մեջ տեսնել հստակություն և որոշակի «զուշուրություն»՝ ընտրական գործընթացը «խոցելիությունից» և հայեցողական լիազորությունների չարաշահման ռիսկերից պաշտպանելու համար:

Վարույթի մասնակիցների համար բացարկ հայտնել չկարողանալու նման առանձնահատկության սահմանումը պայմանավորված է նրանով, որ ընտրական գործընթացում առկա են այնպիսի գործոններ, որոնք, ընտրական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար պետք է հաշվի առնել, այլապես, ինչպես արդեն նշել ենք, ընտրական գործընթացը կդառնա «խոցելի» և «ռիսկային»: Օրինակ, այդպիսի գործոններ կարելի է համարել՝

- ✓ գործընթացի քաղաքական բնույթը,
- ✓ ընտրական գործընթացի մասնակիցների բազմաքանակությունը,
- ✓ մասնակիցների բազմակարծությունը,
- ✓ հաղթելու շահագրգռվածությամբ պայմանավորված շահերի բախումը,
- ✓ գործընթացի կարճ ժամկետները:

Ընտրական գործընթացն իրենում առկա իրավական խնդիրներով հանդերձ, ինչպես արդեն նշվեց, հանդիսանում է ոչ միայն իրավական, այլ մեծապես քաղաքական գործընթաց, որն էլ հանդիսանում է քաղաքական բոլոր սուբյեկտների համալիր գործունեություն՝ ի շնորհիվ որի, տեղի է ունենում հասարակության քաղաքական համակարգի ձևավորումն ու զարգացումը²: Այսինքն, քաղաքական գործընթացի մասնակիցների մեջ են մտնում նաև քաղաքական գործիչները, ընտրողները, որոնց միջոցով էլ ձևավորվում և իրականացվում է հանրային իշխանությունը: Այս պարագայում պարզ է, որ կա կոնկրետ շահ՝ պայքարելու և հաղթելու՝ իշխանություն ձեռք բերելու համար, որտեղ, ի տարբերություն մասնավոր ոլորտի, կարևորվում է ոչ թե շահույթը, այլ հեղինակությունը: Այդ է պատճառը, որ ընտրական գործընթացը սերտորեն փոխկապակցված է քաղաքական գործընթացի հետ, որն էլ ընտրական գործընթացը դարձնում է «խոցելի»:

Գտնում ենք, որ ընտրական գործընթացի քաղաքական բնույթով է պայմանավորված Օրենսգրքում հանձնաժողովի անդամին բացարկ հայտնելու արգելքի սահմանումը: Առհասարակ որևէ ոլորտում գործող կարգավոր-

¹ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքը» սահմանադրական օրենք, ընդունվել է 2016թ. մայիսի 25-ին, ՀՀՊՏ 2016.05.30/42(1222):

² Тавадов Г.Т. Политология: Учебник /2-ое изд. стер. - М.: Издательство "Омега ЛТ", 2011. - С. 148.

րումների համար առանձնահատկություն սահմանելիս, պետք է ուսումնասիրել նաև գործընթացի բնույթը և այդ բնույթին հատուկ հատկանիշները, քանզի այս կերպ միայն հնարավոր կլինի հասնել ցանկալի արդյունքի: Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ նման առանձնահատկության սահմանումը ոչ թե պայմանավորված է ընտրական հանձնաժողովների անդամների անփոխարինելիությամբ, այլ կողմերի կողմից կամայականությունների արգելքի և հանձնաժողովների աշխատանքն ու ընտրական գործընթացը կազմալուծելու հնարավորությունն արգելելու անհրաժեշտությամբ: Ինչու՞ է անհրաժեշտ այս առանձնահատկության սահմանումը հենց ընտրական գործընթացում, քանի որ առկա կարճ ժամկետների պարագայում ցանկացած ձախողում կարող է լինել «ճակատագրական»:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործերի միանձնյա քննության դեպքում բացարկի ինստիտուտն անգամ խրախուսվում է՝ որպես գործերի օբյեկտիվ և արդար դատաքննության ապահովման միջոց, որի մասին նշել են Յու. Ե. Եսևան՝ գրելով, որ առաջին ատյանի դատարաններում դատավորի կողմից գործերի միանձնյա քննության դեպքում դատարանի օբյեկտիվությանն ու անկողմնակալությանը, ինչպես նաև արդար դատաքննության ապահովմանը կարող է և պետք նպաստի դատավորների բացարկի ինստիտուտը¹, և Գ. Լ. Օսոկինան՝ նշելով, որ բացարկի ինստիտուտը կոչված է դատարանի կողմից ապահովելու գործերի ճիշտ, այսինքն, օբյեկտիվ և անկողմնակալ քննություն և լուծում, և այդպիսով հասնել արդարության վերջնական նպատակին՝ իրապես խախտված կամ վիճելի սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրենքով պաշտպանված հետաքրքրությունների պաշտպանությանը²:

Վերոգրյալից եզրակացնում ենք, որ բացարկի ինստիտուտի կիրառումը այն ժամանակ, երբ գործի քննությամբ զբաղվում է մեկ անձ, նպատակահարմար է և արդյունավետ, քանզի այն կլինի զսպող միջոց գործը քննող անձի համար, որպեսզի իրականացնի արդար և օբյեկտիվ քննություն և կայացնի համապատասխան իրավական ակտ:

Կոլեգիալ մարմնի դեպքում բացարկի կիրառումը հնարավոր է միայն կոլեգիալ մարմնի առանձին անդամի, և ոչ թե հենց կոլեգիալ մարմնի կազմի նկատմամբ:

Բացի ընդհանուր կանոնակարգումներից, որոնք սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, առանձին օրենքներ և ս անդրադարձ են կատարում

¹ **Есева Е.Ю.** Отвод судьи в гражданском процессе: реальность или фикция? // Администратор суда. 2012. № 1. - С. 7.

² **Осокина Г.Л.** Гражданский процесс. Особенная часть. - М.: "Норма", 2010. - С. 120.

կոնկրետ վարչական մարմիններում վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին կամ կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնելիս՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամին բացարկ հայտնելու հետ կապված իրավակարգավորումներին: Այսպես, օրինակ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի¹ 24-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանձնաժողովի նիստում քննարկվող որևէ հարցի վերաբերյալ անձնական շահագրգռվածություն ունեցող Հանձնաժողովի անդամը պարտավոր է քննարկումից առաջ տեղեկացնել մյուս անդամներին իր շահագրգռվածության փաստի և բնույթի մասին, ինչը պետք է արձանագրվի նիստի արձանագրության մեջ: Այդ տեղեկացումից հետո նշված անդամը՝

ա) պարտավոր է հրաժարվել տվյալ հարցի վերաբերյալ նիստին մասնակցելուց.

բ) չպետք է հաշվառվի այդ նիստի իրավագորության ապահովման նպատակով:

2. Անձը, որի հարցը քննվում է, կարող է բացարկ հայտնել Հանձնաժողովի անդամին, եթե վերջինս քննարկվող հարցի վերաբերյալ ունի անձնական շահագրգռվածություն»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի² 33-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

«6. Գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել գնահատող հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստին պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ:

7. Եթե առկա է սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից: Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հրապարակվում է տեղեկագրում:»:

¹ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 2000թ. նոյեմբերի 6-ին, ՀՀՊՏ 2000.12.15/30(128):

² «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 16-ին, ՀՀՊՏ 2017.01.25/5(1280):

Ակնհայտ է, որ բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտի կիրառումը միտված է նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը կամ վերացմանը:

Սակայն որոշ դեպքերում նշված ինստիտուտի կիրառումն ուղղակի սահմանափակվում է օրենքով հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Նշված կանոնակարգումն է նախատեսված նաև Ընտրական օրենսգրքով, որի համաձայն՝ վարչական վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովի կազմին կամ հանձնաժողովի անդամին վարույթի մասնակիցները չեն կարող բացարկ հայտնել: Եվ այս կարգավորումը նախատեսվել է՝ հաշվի առնելով մի շարք գործոններ, որոնց վերը անդրադարձ է կատարվել, քանզի ընտրական հանձնաժողովի կազմի կամ հանձնաժողովի անդամի նկատմամբ բացարկ հայտնելու հնարավորություն ընձեռելը ընտրական գործընթացի մասնակիցներին կարող է հնարավորություն տալ այս ինստիտուտի կիրառմամբ ուղղակիորեն «կաթվածահար» անել հանձնաժողովների աշխատանքը:

Ինքնաբացարկի ինստիտուտի ուսումնասիրությամբ կարող ենք եզրակացնել, որ ինքնաբացարկի ինստիտուտն ամբողջացնում է բացարկի ինստիտուտը, ինքնաբացարկն ու բացարկը փոխըացնում են իրար և կարող են արդյունավետ գործածվել համակցված: Վերոգրյալը նշանակում է, որ ինքնաբացարկի և բացարկի ինստիտուտների նկատմամբ կիրառվող օրենսդրական կարգավորումները պետք է հիմնված լինեն նույն տրամաբանության վրա, ինչն էլ դրված է ՀՀ օրենսդրական կարգավորման հիմքում:

Այսպես, ինքնաբացարկի ինստիտուտի մասով Օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանել է. «Վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի անդամը ինքնաբացարկ հայտնելու իրավունք չունի», ինչը համահունչ է Օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմին, ըստ որի վարչական վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովի կազմին կամ հանձնաժողովի անդամին վարույթի մասնակիցները չեն կարող բացարկ հայտնել:

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» Քիչնևի կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Ընտրական մարմնի անդամների լիազորությունների՝ օրենքով նախատեսված հիմքերով, վաղաժամկետ դադարեցման կարգը և ժամկետները, ինչպես նաև դուրս եկած անդամի փոխարեն ընտրական մարմնի նոր անդամի նշանակումը դրա համար լիազորված մարմնի կողմից չպետք է խոչընդոտեն ընտրական մարմնի վրա դրված լիազորությունների իրականացմանը, խախտեն ընտրական գործընթացի ամբողջականությունը, հանգեցնեն ընտրական գործառնությունների կատարման ժամկետների, քաղաքացիների ընտրական իրավունքների և ազատությունների

խախտման»¹: Նշված դրույթի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ազգային օրենսդրությամբ սահմանել արդյունավետ կառուցակարգեր, որպեսզի չվտանգվի պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող ընտրական գործընթացը: Ազգային օրենսդրությամբ նախատեսված կանոնակարգումները կարող են սահմանել նաև որոշակի առանձնահատկություններ, որոնք կնպաստեն մասնագիտական պատշաճ և արդյունավետ գործունեություն իրականացնելուն և կարող են «զսպաշապիկ» հանդիսանալ հանձնաժողովների համար իրենց գործունեությունն արդար և անաչառ իրականացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով ընտրական գործընթացի քաղաքական բնույթը՝ գտնում ենք, որ քաղաքական պայքարում գործող շահերի բախման հսկայական ալիքի պարագայում, որտեղ մեծ է սուբյեկտիվիզմի գործոնը և որտեղ ցանկացած գնահատական հայտնվում է սուբյեկտիվ ընկալումների դաշտում, այնտեղ իրավական կողմը մնում է սուվերում, ուստի, բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտների մասով ընտրական օրենսդրությունում առկա կարգավորումներով սահմանված առանձնահատկությունը կարևոր իրավական երաշխիք է հանդիսանում անկախ և կոլեգիալ հիմունքներով գործող հանձնաժողովի կազմի համար՝ քաղաքական և կամայական զանազան դրսևորումները զսպելու տեսանկյունից:

Ինքնաբացարկի ինստիտուտի վերը ներկայացված առանձնահատկության սահմանումը, իհարկե, ընտրական գործընթացի արդյունավետ իրականացման տեսանկյունից, մեր կարծիքով, կարևոր է և ճիշտ, սակայն այս ինստիտուտի կարգավորումների ուսումնասիրությունից մեկ այլ խնդիր է առաջ գալիս:

Այսպես, Օրենսգրքի ուսումնասիրությունը թույլ է տալիս վերհանել նաև «ինքնաբացարկի» ինստիտուտի մեկ այլ ընկալում, ինչը որոշակի տարրնթերցումների տեղիք է տալիս:

Մասնավորապես, Օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի ուսումնասիրությամբ փաստվում է, որ օրենսդիրը հնարավորություն և իրավունք է տալիս հանձնաժողովի անդամին ներկայացնելու *ինքնաբացարկի մասին դիմում*:

Առաջին հայացքից, թվում է, որ այստեղ կոլիզիոն նորմերի հետ գործ ունենք, այսինքն՝ հակասություն կա տարբեր հոդվածներում առկա կարգավորումների միջև, սակայն, առավել խորը ուսումնասիրությունը ցույց է տալիս,

¹ Տե՛ս «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» Քիշնևի կոնվենցիան, ընդունվել է 07.10.2002թ., ուժի մեջ է մտել՝ 17.03.2005թ. (հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24616>):

որ խնդիրն օրենսդրական եզրութաբանության դաշտում է, ինչը հանգեցրել է Օրենսգրքի նշված դրույթների ոչ հստակ և տարաբնույթ ընկալման:

Ընտրական օրենսդրության այս մասի կարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ ինքնաբացարկի՝ օրենսդրությամբ ներկայացված ինստիտուտը բնավ կապ չունի դասական ինքնաբացարկի հետ: Խնդիրը, ավելի շուտ, եզրութաբանական է, քանզի նշված կարգավորումները վերաբերում են լիազորությունների վաղաժամկետ դադարեցմանը, այլ ոչ թե «ինքնաբացարկին» դասական առումով, և նշված դեպքում տրվում է լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմում, այլ ոչ թե ինքնաբացարկի մասին: Բերենք մի քանի այդպիսի դրույթների օրինակներ՝

- ✓ ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե Կենտրոնական կամ տարածքային ընտրական հանձնաժողովի անդամը ներկայացրել է հանձնաժողովի անդամի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում (ԸՕ, հ. 45, մաս 6, կետ 2).
- ✓ ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամը ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում (ԸՕ, հ. 45, մաս 6, կետ 3).
- ✓ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուի գրանցումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին (ԸՕ, հ. 45, մաս 6, կետ 3):

Օրինակներում ներկայացված դրույթներից ակնհայտ է, որ դասական ինքնաբացարկի մասին խոսք լինել չի կարող: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ «ինքնաբացարկ» եզրույթն այս դեպքերում չպետք է կիրառվի, այլ «լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմում» կամ «թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում» եզրույթներն են այս դրույթների բովանդակությանը համապատասխանող ճիշտ օրենսդրական կարգավորումները: Որպես հիմնավորում հարկ ենք համարում նշել, որ դասական իմաստով ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնելով՝ դիմումատուն իրեն ժամանակավոր հեռացնում է բացառապես կոնկրետ վարչական վարույթի գործընթացից, սակայն իր լիազորությունները չեն դադարում, նա պարզապես մասնակցություն չի ունենում կոնկրետ վարչական վարույթի իրականացմանը: Օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ մասերի իրավադրույթները կարգավորում են, ըստ էության, պաշտոնից հեռանալու ինստիտուտը, որը Ընտրական օրենսգրքում անվանվել է «պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ անթույլատրելի է նորմատիվ իրավական ակտում միևնույն եզրույթի կիրառումը՝ տարաբնույթ իմաստներով, միևնույն եզրույթով տարբեր իրավական ռեժիմներն անվանելով, որոնց կիրառումն առաջացնում է տարբեր իրավական հետևանքներ, մեր համոզմամբ, անհրաժեշտ է վերանայել Ընտրական օրենսգրքի ձևակերպումները, «բացարկ» և «ինքնաբացարկ» եզրույթները կիրառել իրենց դասական դրսևորումների տիրույթում, իսկ «պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում»-ը փոխարինել այլ եզրույթով (օրինակ՝ «պաշտոնից հրաժարվելու մասին դիմում» կամ «լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմում» և այլն):

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք. ընդունվել է 2016թ. մայիսի 25-ին. ՀՀՊՏ 2016.05.30/42(1222), հոդվ. 456:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք. ՀՀՊՏ 2004.03.31/18(317), հոդվ. 413:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք. ընդունվել է 2016 թ. դեկտեմբերի 16-ին. ՀՀՊՏ 2017.01.25/5(1280):

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք. ընդունվել է 2000 թ. նոյեմբերի 6-ին. ՀՀՊՏ 2000.12.15/30(128):

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» Քիչնևի կոնվենցիան, ընդունվել է 07.10.2002թ., ուժի մեջ է մտել՝ 17.03.2005թ. (հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24616>):

Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք: Ցուցումներ և բացատրական զեկույց (ընդունված ԵԽ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) կողմից 52-րդ լիազումար նստաշրջանի ընթացքում, 2002թ. հուլիսի 5-6 և հոկտեմբերի 18-19), Ստրասբուրգ, 30.10.02թ., կարծիք N 190/2002:

Есева Е.Ю. Отвод судьи в гражданском процессе: реальность или фикция? // Администратор суда. 2012. № 1.

Осокина Г.Л. Гражданский процесс. Особенная часть. - М.: "Норма", 2010. - 958 с.

Тавадов Г.Т. Политология: Учебник /2-ое изд. стер. - М.: Издательство "Омега Л", 2011. - 371 с.

ОСОБЕННОСТИ ИНСТИТУТОВ ОТВОДА И САМООТВОДА, ЗАКРЕПЛЕННЫЕ ИЗБИРАТЕЛЬНЫМ ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ, И ОБУСЛОВЛЕННЫЕ ИМИ ПРОБЛЕМЫ

Аннотация

В статье рассмотрены особенности, проблемы институтов отвода и самоотвода, предусмотренные избирательным законодательством, и представлены как их недостатки, так и пути их усовершенствования. Для изучения преимуществ и пробелов указанных особенностей, прежде всего, выявлен ряд факторов, разъясняющих природу избирательного процесса. В числе факторов, послуживших основанием для закрепления указанных особенностей, в качестве первичной обозначена политико-правовая природа избирательного процесса, вокруг чего и построено исследование в рамках данной статьи. В рамках анализа результатов исследования даны авторские позиции, представлены новые изменения избирательного законодательства и предложения по рассматриваемому вопросу с целью решения и разумного уточнения имеющихся проблем.

Ключевые слова: избирательный, отвод, самоотвод, политический, комиссия, коллегиальный, кодекс.

PECULIARITIES OF WITHDRAWAL AND SELF-WITHDRAWAL INSTITUTIONS PRESCRIBED BY THE ELECTORAL LEGISLATION AND THE PROBLEMS CAUSED BY THEM

Annotation

The article examines the problems and the peculiarities of withdrawal and self-withdrawal institutions prescribed by the electoral legislation, as well as presents both their shortcomings and the ways to improve them. In order to study the advantages and gaps of the mentioned peculiarities, first of all a number of factors clarifying the nature of the electoral process were identified. Among the factors, the legal-political nature of the electoral process, which is the basis for defining these peculiarities, was singled out as a primary factor, within the framework of which the original research of the article was built. Authorial positions were provided by the analysis of the results of the research, new amendments to the electoral legislation on this issue and suggestions for the solution of the existing problems for a reasonable clarification were presented.

Keywords: electoral, withdrawal, self-withdrawal, political, commission, collegial, code.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ
ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԱՐՅԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՅՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ
ԱԺՈ-014-Ա ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 ապրիլի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ Ս. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում) Ազգային ժողովի կողմից ընդունվել և Ազգային ժողովի նախագահի կողմից ստորագրվել է 2020 թվականի դեկտեմբերի 29-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի դեկտեմբերի 30-ին:

Որոշմամբ սահմանված է.

«Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածը՝

Ազգային ժողովը **որոշում է.**

Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի լիազորությունները՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ»:

Գործի քննության առիթը Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2021 թվականի հունվարի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով սույն գործին առնչվող իրավական ակտերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողի պնդմամբ՝ Ազգային ժողովի «Եմ քայլը» խմբակցության կողմից մեկ այլ խմբակցությանը վերապահված՝ հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման հարց նախաձեռնելը հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության և «Ազգային

ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 150-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին: Ըստ այդմ՝ դիմողը պնդում է, որ Որոշումը հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին, քանի որ այն ընդունվել է Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտմամբ:

Դիմողը գտնում է, որ հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման հարցը նախաձեռնելիս «Իմ քայլը» խմբակցությունը սխալ է մեկնաբանել Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթն առ այն, որ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը:

Դիմողը, ըստ էության, բարձրացնելով Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի՝ իրավական որոշակիության պահանջներին համապատասխանության հարց, առաջ է քաշում հարցադրում՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի ցանկացած խմբակցություն, թե՛ միայն այն խմբակցությունը, որին վերապահվել է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Դիմողի համոզմամբ հիշյալ նախագիծը ներկայացնելու իրավունք ունի միայն այն խմբակցությունը, որին վերապահվել է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Իր այդ դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է նաև Կանոնակարգի 11-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ: Դրանով իսկ դիմողն ընդգծում է խմբակցության կամքի առաջնայնությունը:

Դիմողը վկայակոչում է նաև Կանոնակարգի 8-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ ընդդիմադիր խմբակցությունն ունի Կանոնակարգով սահմանված գործունեության երաշխիքներ: Ըստ դիմողի՝ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի ցանկացած այլ մեկնաբանություն, որի պայմաններում դիտարկվող իրավունքը կվերապահվի ցանկացած խմբակցության, կարժեգրկի Կանոնակարգի 8-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված երաշխիքը:

Դիմողը նաև փաստարկում է, որ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասում «խմբակցություն» եզրույթը գործածված է եզակի թվով, ինչը ևս վկայում է օրենսդրի մտադրությունը՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի

որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք վերապահել այն խմբակցությունները, որին վերապահվել է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի՝ մշտական հանձնաժողովի նախագահի և անդամի պաշտոններում, համապատասխանաբար՝ ընտրվելու և նշանակվելու, ինչպես նաև այդ պաշտոններում լիազորությունների ավարտման կառուցակարգերի համեմատությունը ոչ միայն չի հիմնավորում դիմողի հիմնական պնդումը, այլ ընդհակառակը՝ առավել ակներև է դարձնում դրա անհիմն լինելը:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

Վերոնշյալ դրույթից բխում է, որ Սահմանադրությամբ երաշխավորվում է.

- խմբակցությունների՝ ըստ դրանցում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության ներկայացվածությունը մշտական հանձնաժողովներում.
- խմբակցությունների՝ ըստ դրանցում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության ներկայացվածությունը մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում:

Միաժամանակ, Սահմանադրությամբ չեն ամրագրվում ընթացակարգային դրույթներ, որոնց միջոցով պետք է ապահովվեն Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ խմբակցությունների ներկայացվածության երաշխիքները. նշված ընթացակարգերն ամրագրված են Կանոնակարգով:

Կանոնակարգի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ օրենսդրի կողմից հստակ տարբերակվել են Ազգային ժողովի մարմիններում նշանակումները և ընտրությունները:

Պատասխանողը նշում է, որ ի տարբերություն մշտական հանձնաժողովի անդամի տեղում նշանակման դեպքի, մշտական հանձնաժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների պաշտոններում ընտրվելու դեպքում պատգամավորն այդ պաշտոնները կարող է ստանձնել Ազգային ժողովի կամահայտնության արդյունքում, այլ ոչ թե սոսկ այն

խմբակցության կամահայտնության արդյունքում, որի կազմում նա ընդգրկված է: Ըստ պատասխանողի՝ մշտական հանձնաժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների պաշտոններում Ազգային ժողովի կողմից ընտրվելու և ոչ թե մեկ խմբակցության կողմից նշանակվելու կառուցակարգի ամրագրումը, թերևս, պայմանավորված է դրանց գործառույթներով, մասնավորապես, այն հանգամանքով, որ մշտական հանձնաժողովի նախագահը, Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները այդ կարգավիճակում գործելիս ներկայացնում են (համակարգում են) ոչ միայն այն խմբակցությունը և իրենց խմբակցության պատգամավորներին, այլ նաև այլ խմբակցություններում ընդգրկված պատգամավորներին, իսկ որոշ դեպքերում նաև ամբողջ Ազգային ժողովը: Եվ հենց այս հանգամանքով է պայմանավորված, որ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասով՝ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքը վերապահված է ցանկացած խմբակցության:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անդրադառնում է, մասնավորապես,

-Որոշման (անհատական իրավական ակտի) սահմանադրականության հարցին, որն ընդունվել է Կանոնակարգի 150-րդ հոդվածի հիման վրա: Վերջինիս առնչությամբ, պարզման ենթակա է, մասնավորապես, Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունն այն իմաստով՝ օրենսդիրն Ազգային ժողովի ցանկացած, թե՛ միայն այն խմբակցությանն է օժտել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքով, որին վերապահված է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

4.Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Ըստ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների՝ խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու հանգամանքով պայմանավորված՝ բարձրացվեց խորհրդարանական փոքրամասնության դերակատարությունը: Այդ առնչությամբ, սահմանադրական մակարդակում ամրագրում ստացան նաև Ազգային ժողովի մարմիններում խորհրդարանական ընդդիմության ներկայացուցչության վերաբերյալ մի շարք դրույթներ (մասնավորապես՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկի պաշտոնը վերապահվեց խորհրդարանական փոքրամասնությանը (տվյալ

պաշտոնը զբաղեցնող անձն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից), նախատեսվեց պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով իրավունքի ուժով Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի ստեղծում, որում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, և որում նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը, ամրագրվեց Ազգային ժողովի խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների բաշխման վերաբերյալ դրույթ՝ ելնելով խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությունից, որը Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում ընդդիմադիր խմբակցությունների ներկայացվածության կարևոր երաշխիք է): Խորհրդարանական փոքրամասնությանը վերապահվեցին նոր լիազորություններ (ընդլայնվեց դրանց շրջանակը)՝ խորհրդարանական վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում՝ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ տեղերի բաշխման հարցի առնչությամբ հարկ է նշել, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունն արտացոլված է Կանոնակարգի 11-րդ հոդվածի 2-րդ մասում: Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան՝ խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու: Կանոնակարգի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ, իսկ 5-րդ մասի համաձայն՝ խմբակցությունն իրավունք ունի թափուր թողնելու հանձնաժողովում իրեն վերապահված տեղը, ինչպես նաև փոխելու հանձնաժողովի կազմում ընդգրկված իր անդամին:

Վերոնշյալից բխում է, որ վերը հիշատակված սահմանադրական և օրենսդրական կարգավորումները, մասնավորապես, վերաբերում են *Ազգային*

ժողովի մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխմանը, Ազգային ժողովի խմբակցությանը վերապահված մշտական հանձնաժողովի անդամի տեղում տվյալ խմբակցության անդամին նշանակելուն, նրան փոխելուն, հանձնաժողովի կազմից դուրս գալուն՝ տվյալ խմբակցության որոշմամբ:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը վերաբերում է *Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների խմբակցությունների միջև բաշխմանը*՝ խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Այդ առնչությամբ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու: Կանոնակարգի 138-րդ հոդվածը սահմանում է մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունների ընթացակարգը, համաձայն որի՝ նախ և առաջ, նույն հոդվածով սահմանված կարգով որոշվում է այն խմբակցությունը, որին վերապահվում է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը: Ընդ որում, Կանոնակարգի 138-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ թեկնածուների առաջադրման իրավունքը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը: Սահմանված կարգի համաձայն՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների առաջադրման իրավունքը խմբակցությունների միջև բաշխվում է Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը՝ ըստ յուրաքանչյուր պաշտոնի համար ստացված գործակցի, որը հաշվարկվում է Կանոնակարգի հիշյալ հոդվածով ամրագրված բանաձևով: Գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը վերապահվում է մշտական հանձնաժողովների նախագահներից կամ նրանց տեղակալներից մեկի թեկնածուին առաջադրելու իրավունքը: Հաջորդ պաշտոնում առաջադրելու իրավունքը վերապահվում է մյուս խմբակցությունների համեմատ առավել մեծ գործակից ունեցող խմբակցությանը: Գործակիցների հաշվարկը կրկնվում է մինչև մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ վերջին պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը որոշելը:

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել

մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը:

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 10-րդ մասին համապատասխան՝ եթե մշտական հանձնաժողովի նախագահը չի ընտրվում, ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնի համար առաջադրում է նոր թեկնածու, իսկ 12-րդ մասին համապատասխան՝ եթե խմբակցությունը Կանոնակարգով սահմանված ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է Կանոնակարգի 138-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը:

Վերոնշյալից բխում է, որ վերը հիշատակված սահմանադրական և օրենսդրական կարգավորումները, մասնավորապես, վերաբերում են *Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների՝ խմբակցությունների միջև բաշխմանը*: Հատկանշական է, որ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված է Ազգային ժողովի խմբակցության՝ մշտական հանձնաժողովի նախագահի իրեն վերապահված պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը, իսկ Կանոնակարգի 138-րդ հոդվածում գործածված են «սահմանված կարգով որոշված խմբակցությունը», «խմբակցությանը վերապահված մշտական հանձնաժողովների նախագահների (...) պաշտոնների», «իրավասու խմբակցությունը», «իրեն վերապահված թափուր պաշտոնում» բառակապակցությունները:

Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում արտացոլված երկու նախադասություններից յուրաքանչյուրն ունի ինքնավար բովանդակություն (թեև երկու դեպքում էլ պետք է հաշվի առնվի խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությունը). առաջինը վերաբերում է *Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխմանը՝ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ*, որի առնչությամբ Կանոնակարգին համապատասխան՝ Ազգային ժողովի համապատասխան խմբակցությունն իրեն վերապահված մշտական հանձնաժողովի անդամի տեղում *նշանակում է* տվյալ խմբակցության անդամին և փոխում նրան, իսկ երկրորդը՝ *խմբակցությունների միջև Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների բաշխմանը՝ խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ*, որի առնչությամբ օրենսդիրը

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունների գործընթացում այդ պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքով օժտել է Ազգային ժողովի ոչ թե ցանկացած, այլ կոնկրետ խմբակցությանը՝ գործածելով հիշյալ բառակապակցությունները: Միաժամանակ, օրենսդիրը երաշխավորել է Ազգային ժողովի համապատասխան խմբակցության՝ նշված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու իրավունքի պահպանումը մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը՝ Կանոնակարգով սահմանելով նաև. «Եթե խմբակցությունը Կանոնակարգով սահմանված ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է (...) ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը՝ որպես ընդդիմադիր խմբակցություն, Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ունի Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրելու սահմանադրական իրավունք, և տվյալ դեպքում նույնիսկ վիճարկվող անհատական իրավական ակտով Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցումը չի հանգեցնում մշտական հանձնաժողովները ձևավորելիս տվյալ խմբակցության համար Սահմանադրությամբ երաշխավորված համամասնության կանոնների խախտման: Ընդ որում՝ Ազգային ժողովի խմբակցությունն իր կամահայտնությունը դրսևորում է մշտական հանձնաժողովի նախագահի՝ իրեն վերապահված պաշտոնում թեկնածու առաջադրելով (Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ): Մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի ստանձնումը պայմանավորված է Ազգային ժողովի կամահայտնության (ընտրության) արդյունքով (Կանոնակարգի 138-րդ հոդված):

4.2. Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ, կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից: Այդ

առնչությամբ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, հետևաբար՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի ուժով՝ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված «խմբակցությունը» բառը տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա:

Տվյալ դեպքում հարկ է պարզել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված՝ «կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից» պայմանի առկայությունը կամ բացակայությունը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Կանոնակարգի ուսումնասիրությունից բխում է, որ վերջինիս 24, 38, 40, 96, 146-րդ և այլ հոդվածներում գործածված են «ընդդիմադիր խմբակցություն», 7, 24, 58, 146-րդ և այլ հոդվածներում՝ «կառավարող խմբակցություն», 137-րդ հոդվածում՝ «միայն ընդդիմադիր խմբակցություն», 3-րդ հոդվածում՝ «իր խմբակցությանը» արտահայտությունները, իսկ վերաբերելի մնացած հոդվածներում՝ «խմբակցություն» բառը՝ եզակիով/հոգնակիով:

Վերոգրյալից բխում է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ՝ օրենսդիրը Կանոնակարգում միևնույն միտքն արտահայտելիս կիրառել է միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները: Այսինքն՝ եթե օրենսդիրը նպատակ հետապնդեր Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք վերապահել միայն տվյալ անձին՝ որպես հանձնաժողովի նախագահի թեկնածու առաջադրած խմբակցությանը, ապա հատուկ կնշեր հենց այդ խմբակցությանը:

Հարկ է նշել, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածուի առաջադրման/ընտրության գործընթացում Ազգային ժողովի խմբակցության դերակատարության (ներգրավվածության) հարցի համատեքստում օրենսդիրը որոշակիացրել է, թե կոնկրետ դեպքում/իրավիճակում ո՞ր խմբակցության մասին է խոսքը՝ Կանոնակարգում գործածելով համապատասխան բառակապակցություններ: Մինչդեռ, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքով օժտված սուբյեկտին նշելիս օրենսդիրը գործածել է «խմբակցություն» եզրույթը:

Հատկանշական է, որ Ազգային ժողովի նախագահին կամ նրա տեղակալին հետ կանչելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքը ևս, Կանոնակարգի 149-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, վերապահված է Ազգային ժողովի խմբակցությանը, թեև Կանոնակարգի 137-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկի թեկնածուն կարող է առաջադրվել միայն ընդդիմադիր խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորների թվից (Ազգային ժողովի կազմից Ազգային ժողովի նախագահի տեղակալի մեկական թեկնածու առաջադրելու իրավունք ունեն խմբակցությունները):

Ելնելով վերոնշյալից՝ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրն Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքով օժտել է բոլոր խմբակցություններին: Հետևաբար՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի **ցանկացած խմբակցություն**, այլ ոչ թե միայն այն խմբակցությունը, որին վերապահված է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

4.3. Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև Ազգային ժողովի՝ 29.12.2020 թ. թիվ ԱԺՈ-014-Ա որոշումն ընդունելու և գործողության մեջ դնելու՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածության հարցին:

19.04.2019 թ. ՍԴՈ-1454 որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Չնայած այն հանգամանքին, որ «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թվականի հունիսի 1-ի ՀՕ-58-Ն օրենքն այլևս չի գործում, և նոր՝ համաճարան սահմանադրական օրենքը նման հատուկ կարգավորում չի պարունակում, այդուհանդերձ, հարկ է նշել, որ ՀՕ-58-Ն օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ի շարս այլ չափանիշների, վիճարկվող իրավական ակտի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը հաշվի էր առնում նաև իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ դնելու՝ **Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը**, իսկ նույն հոդվածի նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց **լիազորությունների թույլատրելի սահմանները (...):**

Թեև հիշյալ դրույթը չի վերարտադրվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում, քանի որ այն սահմանադրականության գնահատման մասնավոր դեպքերի թվարկում էր, և օրենսդիրն

այդ հիմքով այլևս անհրաժեշտություն չի տեսել ոչ սպառիչ եղանակով թվարկելու առանձին մասնավոր դեպքեր, ակնհայտ է, որ նաև ներկայում, ի թիվս այնի, որևէ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման կամ գործողության մեջ դնելու՝ **միայն Սահմանադրությամբ նախատեսված կարգն է** սահմանադրականության գնահատման մասշտաբը, ինչպես նաև **Ազգային ժողովի** (Սահմանադրությամբ սպառիչ ամրագրված) **լիազորությունների թույլատրելի սահմանները**: Ուստի ակնհայտ է նաև, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէ գնահատել սահմանադրական կամ սովորական օրենքների և իր ընդդատությունը վերապահված այլ իրավական ակտերի ցանկացած խախտումներ կամ դրանց համապատասխանությունը ոչ թե Սահմանադրությանը, այլ դրանց նկատմամբ գերակայող այլ իրավական ակտերին: Այդպիսի վերահսկողությունը հանրային իշխանության այլ մարմինների, հատկապես՝ այլ դատարանների իրավասության մեջ է: Հակառակ դեպքում՝ Սահմանադրական դատարանը կարող է ծանրաբեռնվել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի ցանկացած խախտումով կամ, օրինակ՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ այլ նորմատիվ իրավական ակտերի՝ իրենց հանդեպ գերակայող նորմատիվ իրավական ակտին համապատասխանությունը որոշելու վերաբերյալ վեճերով, որոնք դուրս են Սահմանադրական դատարանի սահմանադրական գործառնության շրջանակներից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի՝ իր կանոնակարգի համաձայն գործելու սահմանադրական պահանջի խախտումները կարող են Սահմանադրական դատարանում վեճի առարկա դառնալ միայն այդ խախտումների արդյունքում Սահմանադրության որևէ պահանջ խախտվելու դեպքերում:

Օրենքի (վիճարկվող այլ իրավական ակտի) սահմանադրականության գնահատման համար այդ օրենքը (իրավական ակտը) ընդունելու և գործողության մեջ դնելու՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածության նշանակության խնդրին Սահմանադրական դատարանն իր որոշումներում ևս անդրադարձել է: Այսպես՝ 07.07.2015թ. ՄԴՈ-1224 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշված խնդրի վերաբերյալ հետևյալ դիրքորոշումն է արտահայտել. «...օրենքների ընդունման խորհրդարանական կամ ինչպես հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջի տեսանկյունից՝ արտախորհրդարանական ընթացակարգերի ցանկացած խախտում անթույլատրելի է օրենսդրական գործընթացի շրջանակներում, անհամատեղելի է օրենսդրական գործունեության կանոնների հետ, սակայն այդ խախտումներից ոչ բոլորն են, որ սահմանադրականության տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունեն: **Վերջիններիս թվին են դասվում**

միայն այն կանոնների խախտումները, որոնք ուղղակիորեն հիմնված են Սահմանադրության պահանջների վրա, օրենքի ընդունման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար որոշիչ նշանակություն ունեն և/կամ այնքան էական են, որ առանց այդ կանոնների պահպանման անհնար է արժանահավատորեն որոշել օրենսդրի իրական կամքը, հետևաբար՝ նաև օրենսդրի կողմից ներկայացվող ՀՀ ժողովրդի կամքը»:

Սահմանադրությամբ իրենց ամրագրումն են ստացել օրենսդրական գործունեության (Ազգային ժողովում օրենքների (որոշումների) ընդունման ընթացակարգին առնչվող) միայն հիմնական՝ առանցքային պահանջները: Դրանք առնչակցվում են, մասնավորապես, Ազգային ժողովի նիստերի հրապարակայնության (Սահմանադրության 101-րդ հոդված), իրավագործության (Սահմանադրության 102-րդ հոդված), օրենքների, այդ թվում՝ սահմանադրական օրենքների ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակի, քվեարկություններին մասնակցող պատգամավորների անհրաժեշտ նվազագույն քանակի (Սահմանադրության 103-րդ հոդված), օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների (Սահմանադրության 109-րդ հոդված), ինչպես նաև Հանրապետության նախագահի կողմից օրենքը ստորագրելու և հրապարակելու (Սահմանադրության 129-րդ հոդված) հետ կապված հարցերին, և իրենց էության մեջ կոչված են երաշխավորելու Ազգային ժողովի գործունեության լեգիտիմությունը»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի 07.07.2015թ. ՍԴՈ-1224 և 19.04.2019թ. ՍԴՈ-1454 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա չեն վիճարկվող Որոշումն ընդունելու՝ Սահմանադրության պահանջների այնպիսի խախտումներ, որոնք նշանակություն ունեն կամ կարող են ունենալ Որոշման ընդունման սահմանադրականության առումով, և որոնք հանգեցրել են այնպիսի իրավիճակի, երբ անհնար է արժանահավատորեն որոշել օրենսդրի իրական կամքը: Հետևաբար՝ վիճարկվող Որոշումը, նաև վերջինիս ընդունման՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածության տեսանկյունից խնդրահարույց չէ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

13 ապրիլի 2021 թվականի
ՍԴՈ-1587



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ
ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԳԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ ԱԺՈ-014-Ա ՈՐՈՇՄԱՆ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
13-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԳՈ-1587 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ
ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻԶ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացա-
կարգով քննելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի
առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապե-
տության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես
Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական
հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին»
Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշման՝
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբեր-
յալ» գործը, 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԳՈ-1587 որոշմամբ (հրապարակվել
է 2021 թվականի ապրիլի 16-ին) որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոիրաքյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը համապատասխանում է Սահմանադրությանը: (...)»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԳՈ-1587 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Նախ հարկ եմ համարում նշել, որ Սահմանադրական դատարանը ՍԳՈ-1587 որոշմամբ, արձանագրել է, որ «Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը՝ որպես ընդդիմադիր խմբակցություն, Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ունի Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրելու սահմանադրական իրավունք, և տվյալ դեպքում նույնիսկ վիճարկվող անհատական իրավական ակտով Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցումը չի հանգեցնում մշտական հանձնաժողովները ձևավորելիս տվյալ խմբակցության համար Սահմանադրությամբ երաշխավորված համամասնության կանոնների խախտման»: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը քննարկման առարկա է դարձրել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես՝ այն հարցը, թե ըստ այդ իրավանորմի՝ օրենսդիրը որ խմբակցություններին է օժտել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքով:

Փաստորեն, ՍԳՈ-1587 որոշման 4.1-րդ կետից կարելի է եզրակացնել, որ Սահմանադրական դատարանը կարևորություն է տվել այն հանգամանքին, թե Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցումից հետո ում է պատկանում համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը: Մինչդեռ կարծում եմ, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունն առնչվում է ինչպես Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության, այնպես էլ նրա լիազորությունները դադարեցնելու գործընթացներին, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանի ՍԳՈ-1587 որոշման 4.2-րդ կետում նշված վերլուծությունները որոշման մեջ չէին կարող տեղ գտնել:

Բացի այդ, Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1587 որոշման մեջ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «խմբակցությունը» բառի մեկնաբանման վերաբերյալ պատճառաբանությունները **կառուցված են բազառապես օրենքի դրույթների վերլուծության վրա, մինչդեռ կարծում են, որ նման եղանակով հնարավոր չէ բազահայտել որևէ իրավադրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը** (ՄԴՈ-1587 որոշման 3-րդ կետ): Տվյալ դեպքում Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1587 որոշումից պարզ չէ, թե որն է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «խմբակցությունը» բառին Սահմանադրական դատարանի տված մեկնաբանության և Սահմանադրության 106-րդ հոդվածի կապը, այսինքն՝ ինչի հիման վրա է Սահմանադրական դատարանը եկել այն եզրահանգման, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «խմբակցությունը» բառն ունի այն սահմանադրաիրավական բովանդակությունը, համաձայն որի՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի ցանկացած խմբակցություն, այլ ոչ թե միայն այն խմբակցությունը, որին վերապահված է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը, այն դեպքում, երբ այս կապակցությամբ Սահմանադրական դատարանի վերլուծությունները սահմանափակվում են օրենքի դրույթների վերլուծությամբ, մասնավորապես՝ թե օրենսդիրը տարբեր իրավանորմերում ինչ բառեր և բառակապակցություններ է գործածել: Կարծում են, որ օրենքի նման՝ սահմանադրական կարգավորումների հետ չկապված, դրանցից կտրված մեկնաբանում կատարելով Սահմանադրական դատարանը տվյալ դեպքում ստանձնում է մասնագիտացված՝ վարչական դատարանի գործառույթ, ինչի իրավասությունը Սահմանադրական դատարանը չունի: Իմ կարծիքով՝ Սահմանադրական դատարանի կողմից նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման հիմքում պետք է ընկած լինեն սահմանադրական կարգավորումներ և դրանց վերաբերյալ վերլուծություններ (որոնցից կբխի նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը), որպիսիք տվյալ դեպքում Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1587 որոշման մեջ առկա չեն:

Իմ գնահատմամբ Սահմանադրական դատարանի՝ օրենքի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող որոշման առանցքում պետք է լինի սահմանադրի կամքը, որը վերհանելիս և վերուձելիս անընդունելի են համարում միայն օրենսդրի կողմից կոնկրետ հարցի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումները հիմք ընդունելը: Այսինքն՝ օրենսդրի

կամքը երբեք չի կարող կաշկանդող լինել Սահմանադրական դատարանի համար սահմանադրի կամքը վերհանելիս և վերածելիս:

Որպես ուղենիշ հիմք ընդունելով վերը նշված մտացումը՝ սույն հատուկ կարծիքում շարադրվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունեցող «խմբակցություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը:

2. Կարծում եմ, որ «Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հետևյալ հիմնավորմամբ.

2.1. Խորհրդարանում և դրանից դուրս քաղաքական ընդդիմության առկայությունը լավ գործող ժողովրդավարության կարևոր բաղադրիչ է¹: Արդյունավետ քաղաքական ընդդիմության առկայությունը հակադրվում է «հաղթողը ստանում է ամեն ինչ» գաղափարին՝ առաջարկելով մեծամասնությունից տարբերվող դիրքորոշումներ և լուծումներ, այդպիսով նպաստելով տեսակետների մրցակցությանը, ինչն արդյունավետ կառավարման նախապայման է:

Արդյունավետ քաղաքական ընդդիմության կարևորությունն ընդգծվել է նաև միջազգային բազմաթիվ փաստաթղթերում: Օրինակ՝ 2012 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի ընդունած բանաձևում արձանագրվել է ժողովրդավարության պատշաճ գործողության մեջ քաղաքական ընդդիմության և քաղաքացիական հասարակության կարևոր դերը²: Խորհրդարանների նախագահների եվրոպական խորհրդաժողովի շրջանակներում արձանագրվել է, որ ժողովրդավարության և ավտորիտար ռեժիմի էական տարբերությունն այն է, որ ժողովրդավարությունը հավասար հիմքերով ճանաչում է քաղաքական ընդդիմությունը³:

¹ St'u Council of Europe Parliamentary Assembly, Procedural guidelines on the rights and responsibilities of the opposition in a democratic parliament, Resolution 1601 (2008), 3.
² St'u United Nations Human Rights Council, Human rights, democracy and the rule of law, Resolution 19/36 (2012), 6.
³ St'u European Conference of Presidents of Parliament, Rights and responsibilities of the opposition in a Parliament: Background document prepared by the Secretariat upon the instruction of the President of the Parliamentary Assembly of the Council of Europe (2010), 1.

Միաժամանակ, խորհրդարանական ընդդիմությունը⁴ կարող է արդյունավետորեն իրականացնել իր առջև դրված խնդիրները միայն այն դեպքում, եթե վերջինս օժտված է անհրաժեշտ գործիքակազմով: Այս հանգամանքով պայմանավորված՝ ժողովրդավարության որակը չափվում է ընդդիմության կամ խորհրդարանական փոքրամասնության գործառույթներն իրականացնելու համար նրա տրամադրությանը հանձնված միջոցներով⁵:

Խորհրդարանական ընդդիմության արդյունավետ գործունեության առավել կարևոր երաշխիքներն ամրագրում են ստացել Սահմանադրության տարբեր դրույթներում: Այն թեև ուղղակիորեն չի բնորոշում ընդդիմության դերը, սակայն ճանաչում և երաշխավորում է դրա մի շարք իրավունքներ: Ընդ որում, այդ իրավունքները և երաշխիքները Սահմանադրության դրույթներում տեղ են գտել տարբեր ձևակերպումների միջոցով, ինչի արդյունքում կարելի է առանձնացնել խորհրդարանական ընդդիմության ուղղակի և անուղղակի իրավունքներ: Եթե ուղղակի իրավունքները սահմանող դրույթներն ուղղակի նշում են պարունակում ընդդիմության մասին (օրինակ՝ Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից), ապա անուղղակի իրավունքները նման նշում չեն պարունակում: Օրինակ՝ Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ պատգամավորի անձեռնմխելիությունը պաշտպանում է Ազգային ժողովի բոլոր պատգամավորներին՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից, կամ Ազգային ժողովի կողմից մի շարք պաշտոնատար անձանց ընտրությունը պատգամավորների թվի ձայների որակյալ մեծամասնությամբ կատարելու պահանջը (օրինակ՝ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր, 192-րդ հոդվածի 2-րդ մաս, 195-րդ հոդվածի 2-րդ մաս, 197-րդ հոդվածի 2-րդ մաս, 199-րդ հոդվածի 2-րդ մաս, 201-րդ հոդվածի 1-ին մաս) որոշակի երաշխիք է խորհրդարանական փոքրամասնության համար:

Խորհրդարանական ընդդիմության արդյունավետ գործունեության անուղղակի երաշխիքներ են սահմանված նաև Սահմանադրության 106-րդ հոդվածով, որը վերաբերում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների ձևավորմանը և դրանցում տեղերի բաշխմանը:

Մշտական հանձնաժողովները պատգամավորներից կազմված մշտապես գործող խմբեր են, որոնց ստեղծման նպատակներն են օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական

⁴ Սույն հատուկ կարծիքում «խորհրդարանական ընդդիմություն» և «խորհրդարանական փոքրամասնություն» արտահայտություններն օգտագործվում են նույն իմաստով և վերաբերում են խորհրդարանական քաղաքական փոքրամասնությանը:

⁵ St'u Council of Europe Parliamentary Assembly, Procedural guidelines on the rights and responsibilities of the opposition in a democratic parliament, Resolution 1601 (2008), 2.

քննարկումը և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացությունների ներկայացումը, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողության իրականացումը: Մշտական հանձնաժողովների առկայությունը խորհրդարանին հնարավորություն է տալիս միաժամանակ քննարկել իր իրավասությանը վերապահված տարբեր հարցեր, ինչի արդյունավետությանն է նպաստում նաև այն հանգամանքը, որ, որպես կանոն, մշտական հանձնաժողովները խորհրդարանի համեմատությամբ ունենում են գործունեության առավել պարզ կարգ, իսկ դրանց անդամների առավել փոքր թիվը բարձրացնում է քննարկումների արդյունավետությունը: Ընդ որում, պատգամավորներից կազմված այս խմբերում ապահովվում է կարծիքների բազմազանությունը և դրանց փոխանակման միջոցով Ազգային ժողովում երկխոսությունը՝ հաշվի առնելով խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխումը:

Խորհրդարանի պատասխանատու պաշտոններում խորհրդարանական փոքրամասնության ներկայացվածությունն ընդդիմության իրավունքների ապահովման կարևոր գործիք է⁶: Մշտական հանձնաժողովներում խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության միջև հավասարակշռության ապահովման և դրանց աշխատանքներում տարբեր քաղաքական հայացքներ ունեցող պատգամավորների ներառման նպատակով սահմանադիրն ամրագրել է, որ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Միաժամանակ, Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով հատուկ անդրադարձ է կատարվել մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների բաշխմանը՝ սահմանելով, որ դրանք խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ⁷:

Այս իրավանորմի մեկնաբանության հարցում իմ դիրքորոշումն է՝ ապես տարբերվում է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1587 որոշման մեջ արտահայտված դիրքորոշումից: Այսպես՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները համամասնորեն բաշխելու պահանջը կապել է բացառապես այդ

⁶ Տե՛ս նաև Council of Europe, European Commission for Democracy through Law (Venice Commission), Parameters on the relationship between the parliamentary majority and the opposition in a democracy: a Checklist, CDL-AD(2019)015 (2019), 86.

⁷ Խորհրդարանի հանձնաժողովների նախագահների պաշտոններում խորհրդարանական ընդդիմության ներկայացվածության մասին տե՛ս նաև Council of Europe Parliamentary Assembly, Procedural guidelines on the rights and responsibilities of the opposition in a democratic parliament, Resolution 1601 (2008), 2.5.1; European Conference of Presidents of Parliament, Rights and responsibilities of the opposition in a Parliament: Background document prepared by the Secretariat upon the instruction of the President of the Parliamentary Assembly of the Council of Europe (2010), Appendix.

պաշտոններում պատգամավորների ընտրության հետ, այսինքն՝ ըստ Սահմանադրական դատարանի՝ այդ իրավանորմը վերաբերում է այն հարցին, թե ինչպես են պատգամավորներն ընտրվում մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում: Մինչդեռ իմ կարծիքով՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները համամասնորեն բաշխելու պահանջը սերտորեն կապված է նաև այդ պաշտոնում ընտրված պատգամավորի՝ որպես մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարման և դադարեցման կարգի հետ, քանի որ **քաղաքական փոքրամասնությունը պետք է արդյունավետորեն ներկայացված լինի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում**, ինչը ենթադրում է, որ այն պետք է որոշակի ազդեցություն ունենա այն հարցում, թե իր ո՞ր ներկայացուցիչն է (հաշվի առնելով նաև նրա մասնագիտությունը, փորձառությունը) ընդգրկվում մշտական հանձնաժողովում՝ որպես դրա նախագահ: Հակառակ դեպքում, կարող է թույլատրելի համարվել առանց խորհրդարանական փոքրամասնության մասնակցության մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից այն պատգամավորի հեռացումը, որն առավել խիստ քննադատության է ենթարկում խորհրդարանական մեծամասնությանը կամ գործող կառավարությանը, ինչը համատեղելի չէ ընդդիմության արդյունավետ գործունեության երաշխիքների ապահովման անհրաժեշտության հետ և չի նպաստում ժողովրդավարության ամրապնդմանը և գործողությանը: Հետևաբար, կարծում եմ, որ **մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում պատգամավորների ընտրությանը, ինչպես նաև այդ պաշտոններում նրանց լիազորությունների դադարմանը և դադարեցմանը վերաբերող իրավակարգավորումները պետք է ապահովեն այդ գործընթացներում խորհրդարանական ընդդիմության մասնակցությունը և խորհրդարանական մեծամասնության ու խորհրդարանական փոքրամասնության միջև փոխզսպումների առկայությունը:**

2.2. Ի ապահովումն Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավանորմի պահանջի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածը սահմանում է մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունների ընթացակարգը: Այդ հոդվածով նախատեսված բանաձևի կիրառմամբ նախ որոշվում է մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածուին առաջադրելու իրավունք ունեցող խմբակցությունը, իսկ մշտական հանձնաժողովի նախագահն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցող պատգամավոր-

ների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածը կարգավորում է մշտական հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի լիազորությունների դադարմանը և դադարեցմանն առնչվող հարցերը: Ըստ այդ հոդվածի՝ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման **նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը (մաս 2)**, իսկ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (մաս 4):

Վերոգրյալից հետևում է, որ մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության գործընթացում խորհրդարանական փոքրամասնության մասնակցությունն արտահայտվում է նաև համապատասխան խմբակցության կողմից որոշ դեպքերում մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածու առաջադրելու իրավունքի իրացմամբ: Ինչ վերաբերում է խորհրդարանական ընդդիմության առաջադրմամբ ընտրված մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցմանը, ապա օրենսդիրը, մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքը վերապահելով խմբակցությանը, շեշտադրում չի կատարել, թե խոսքը որ խմբակցությանն է վերաբերում, ինչով էլ պայմանավորված՝ անհրաժեշտ է վերհանել այդ արտահայտության սահմանադրաիրավական բովանդակությունը:

Հիմք ընդունելով սույն հատուկ կարծիքում ներկայացված դիրքորոշումները և հաշվի առնելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածով սահմանված՝ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարեցնելու մասին որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակը (քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին)՝ կայուն խորհրդարանական մեծամասնության առկայության պահանջի (Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մաս) պայմաններում այդ գործընթացում խորհրդարանական փոքրամասնության մասնակցությունը և խորհրդարանական մեծամասնության ու խորհրդարանական փոքրամասնության միջև փոխզսպումների առկայությունն ապահովելու միակ գործուն երաշխիքը կարող է լինել մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման առաջարկ ներկայացնելու բացառիկ հնարավորության առկայությունը: Հակառակ

դեպքում խորհրդարանական մեծամասնությունը (կառավարող խմբակցություն) հնարավորություն կունենա մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից առանց որևէ խոչընդոտի հեռացնելու իր գործունեությունն առավել խիստ քննադատության ենթարկող ընդդիմադիր պատգամավորներին, որպիսի պայմաններում կարող է չապահովվել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ ներկայացվածությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ դրանում օգտագործված «խմբակցությունը» բառը վերաբերում է ոչ թե գանկազած խմբակցության, այլ միայն այն խմբակցությանը, որին վերապահված է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը, և այդ նորմի՝ միայն այդպիսի մեկնաբանությունը կարող է համահունչ լինել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

2.3. Տվյալ դեպքում Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարեցնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ է ներկայացրել Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցությունը, և Ազգային ժողովի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունվել է սույն գործով վիճարկվող՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը: Ընդ որում, Ազգային ժողովի 132 պատգամավորներից նշված որոշումը կայացնելիս քվեարկությանը մասնակցել են 84 պատգամավորներ, 2 քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր, իսկ ձայները բաշխվել են հետևյալ կերպ. դադարեցմանը կողմ է քվեարկել 78 պատգամավոր, դադարեցմանը դեմ է քվեարկել 4 պատգամավոր⁸:

Փաստորեն, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցության պատգամավորի՝ որպես մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարեցվել են Ազգային ժողովի մեկ այլ՝ կառավարող խմբակցության նախա-

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, յոթերորդ գումարում, արտահերթ նստաշրջան, սղագրություն թիվ 2, 29 դեկտեմբերի 2020 (հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.parliament.am/transcript.php?lang=arm&month=12&year=2020>):

ձեռնությամբ, ինչը, իմ կարծիքով, վերը նշված դիրքորոշումների հաշվառմամբ չի համապատասխանում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին՝ խախտելով նաև Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը, ինչպես նաև Ազգային ժողովի՝ իր կանոնակարգին համապատասխան գործելու՝ Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված պահանջը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանի կողմից 2015 թվականի հուլիսի 7-ի ՄԴՈ-1224 որոշմամբ և 2019 թվականի ապրիլի 19-ի ՄԴՈ-1454 որոշմամբ արտահայտված դիրքորոշումների համատեքստում հարկ եմ համարում արձանագրել, որ տվյալ դեպքում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն ուղղակիորեն հիմնված է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի վրա, կոչված է ապահովելու մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ ներկայացվածությունը և մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար ունի որոշիչ նշանակություն, ուստի այդ պահանջի խախտումն «Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշման սահմանադրականության տեսանկյունից ունի սկզբունքային նշանակություն: Ասվածից բխում է նաև տվյալ դեպքում Ազգային ժողովի՝ իր կանոնակարգի համաձայն գործելու սահմանադրական պահանջի խախտումը Սահմանադրական դատարանում վեճի առարկա դառնալու հնարավորությունը՝ հաշվի առնելով, որ այդ խախտման արդյունքում խախտվել է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Միաժամանակ, հաշվի առնելով Ազգային ժողովի խմբակցությունների կողմից այլ խմբակցությանը վերապահված մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրված պատգամավորի՝ որպես մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավական հնարավորության բացակայությունը՝ հարկ եմ համարում անդրադառնալ նաև սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ այն իրավիճակներին, երբ, որևէ խմբակցության գնահատմամբ, մշտական հանձնաժողովի նախագահի կողմից թույլ է տրվել պատգամավորական էթիկայի կանոնների խախտում, սակայն նրա լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունեցող խմբակցությունն այդպիսի նախաձեռնությամբ հանդես չի գալիս:

Նման իրավիճակներում կարող է գործադրվել մյուս խմբակցության (խմբակցությունների) կողմից **պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ ժամանակավոր հանձնաժողով** ստեղծելու նախագծով հանդես գալու, Ազգային ժողովի որոշմամբ այդպիսի հանձնաժողով ձևավորելու գործիքակազմը (Սահմանադրության 107-րդ հոդված, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 6-րդ գլուխ): Ընդ որում, հատկանշական է, որ այդ հանձնաժողովը ոչ միայն իր իրավասության շրջանակում քննարկում է պատգամավորական էթիկային առնչվող հարցեր և դրանց վերաբերյալ եզրակացություններ է ներկայացնում Ազգային ժողովին («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), այլև այդ **եզրակացությունները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում**, ինչի միջոցով մշտական հանձնաժողովի նախագահի կողմից պատգամավորական էթիկայի կանոնների ենթադրյալ խախտում թույլ տրված լինելու կապակցությամբ պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ ժամանակավոր հանձնաժողովի եզրահանգումները հասանելի են դառնում հանրությանը: Վերը նշվածն իր հերթին կարող է ազդակ հանդիսանալ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունեցող խմբակցության կողմից այդպիսի նախաձեռնությամբ հանդես գալու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ անհրաժեշտ էր «Ազգային ժողովի պատգամավոր Նախրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը ճանաչել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

22 ապրիլի 2021 թվականի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԳԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԱՐՅԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ
ԱԺՈ-014-Ա ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1587 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ԵԶՐԱՓՄԱԿԻԶ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դանբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումնի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազ-

գային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԳՈ-1587 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը համապատասխանում է Սահմանադրությանը»:

Հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԳՈ-1587 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումից տարբերվող հետևյալ դիրքորոշումը.

1. Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԳՈ-1587 որոշման 3-րդ կետում գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքների համատեքստում Սահմանադրական դատարանը անհրաժեշտ է համարել անդրադառնալ, «(...) Որոշման (անհատական իրավական ակտի) սահմանադրականության հարցին, որն ընդունվել է Կանոնակարգի 150-րդ հոդվածի հիման վրա: Վերջինիս առնչությամբ, պարզման ենթակա է, մասնավորապես, Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունն այն իմաստով՝ օրենսդիրն Ազգային ժողովի ցանկացա՞ծ, թե՞ միայն այն խմբակցությանն է օժտել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքով, որին վերապահված է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը»:

Նշվածի տրամաբանությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանը վիճարկվող որոշման՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցի լուծումը պայմանավորում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ազգային ժողովի կանոնակարգ) 150-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների վերլուծություններով, հետևաբար՝ վերջիններիս պահանջների պահպանման համատեքստում:

Սակայն հաշվի առնելով քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ կողմերի ներկայացրած դիրքորոշումները, ինչպես նաև միջազգային

իրավական կարգավորումների նշանակությունը՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում համակարգային մոտեցմամբ պետք է պարզեր.

ա) որքանո՞վ է Սահմանադրությունը հստակ ամրագրել օրենսդիր մարմնի իրավագործության շրջանակները,

բ) սահմանադրորեն ի՞նչ երաշխիքներ են նախատեսված պատգամավորական խմբակցությունների, այդ թվում՝ խորհրդարանական ընդդիմության իրավունքների իրացման, խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության միջև գործառնական հավասարակշռություն ապահովելու համար,

գ) որքանո՞վ են Ազգային ժողովի վեճի առարկա որոշման նորմերը համահունչ սահմանադրական լուծումներին՝ անկախ այն հանգամանքից, թե Ազգային ժողովի կանոնակարգում ինչպիսի օրենսդրական կարգավորումների մասին կարող է խոսք լինել:

2. Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորման տրամաբանությունից հետևում է, որ Ազգային ժողովի որոշումները Սահմանադրական դատարանի վերահսկողության ինքնուրույն օբյեկտ են, ինչը նշանակում է, որ Սահմանադրական դատարանը վիճարկվող որոշման սահմանադրականությունը պետք է գնահատեր բացառապես Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխանության տեսանկյունից:

Դրա փոխարեն, Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1587 որոշման պատճառաբանական մասի իրավավերլուծական շարադրանքը (4.1-4.2 կետեր), կարծում եմ, հանգեցրել է այն մտքին, որ վիճարկվող որոշման սահմանադրականության հարցի որոշումը հիմնվել է Ազգային ժողովի կանոնակարգի 150-րդ հոդվածի և նույն կանոնակարգի այլ հոդվածների վերլուծության վրա, այդ թվում՝ օրենքում գործածվող տարբեր եզրույթների իրավական բովանդակության բացահայտման համատեքստում:

3. Սահմանադրական նորմի մեկնաբանությունը յուրաքանչյուր դեպքում պահանջում է ելնել ոչ միայն դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, այլ նաև հաշվի առնել սահմանադրի կամքը, այդ նորմի նպատակը՝ վերլուծելով վերջինիս բովանդակությունն ու իմաստը: Այսպես, Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակության համակարգային վերլուծությունից բխում է.

ա) մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները բաշխվում են միայն խմբակցությունների միջև, իսկ հանձնաժողովների անդամների տեղերը՝ բոլոր խմբակցություններում ընդգրկված պատգամավորների միջև,

բ) մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների բաշխման դեպքում խմբակցությունների ներկայացվածությունը Ազգային ժողովում պայմանավորված է տվյալ խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ,

գ) մշտական հանձնաժողովների անդամների տեղերի բաշխման դեպքում խմբակցությունների ներկայացվածությունը Ազգային ժողովում պայմանավորված է բոլոր խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ,

դ) մշտական հանձնաժողովներում անդամների տեղերի և նախագահների պաշտոնների բաշխումը պայմանավորված չէ խորհրդարանական կայուն մեծամասնություն ունեցող խմբակցության և պատգամավորական ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների թվաքանակի հարաբերակցությամբ,

ե) մշտական հանձնաժողովներում՝ հանձնաժողովի անդամի տեղերը և նախագահի պաշտոնները հավասարապես հասանելի են պատգամավորական խմբակցություններում ընդգրկված բոլոր պատգամավորների համար,

զ) մշտական հանձնաժողովներում՝ հանձնաժողովի անդամի տեղերում և նախագահի պաշտոններում պատգամավորի նշանակումը կամ ընտրությունը չի ենթադրում պատգամավորական խմբակցությունների միջև որևէ ձևով քաղաքական համաձայնության առկայություն,

է) մշտական հանձնաժողովներում՝ հանձնաժողովի անդամի տեղերում կամ հանձնաժողովի նախագահի պաշտոնում պատգամավորի նշանակումը կամ ընտրությունը իրականացվում է տվյալ պատգամավորական խմբակցության որոշման հիման վրա,

ը) մշտական հանձնաժողովների միջև նախագահների պաշտոնների բաշխվածության ամրագրմամբ կանխատեսելի են դառնում ոչ միայն խմբակցությունների, այլև վերջիններիս կողմից մշտական հանձնաժողովներում առաջադրված և ընտրված նախագահների իրավաչափ սպասելիքները:

Այսինքն՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի նորմերի համատեքստում, կարծում են, որ խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների բաշխումը՝ պայմա-

նավորված խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, վկայում է, որ այդ խմբակցությունների ուղղակի ներկայացվածությունն ու հասանելիությունը անժխտելի են ինչպես մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում իրենց կողմից առաջադրված թեկնածուին նշանակելու կամ ընտրելու դեպքում, այնպես էլ մշտական հանձնաժողովի նախագահների լիազորությունները դադարեցնելու համար՝ առանց որևէ նախապայմանների մատնանշմամբ և անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի ընթացակարգ է նախատեսված մշտական հանձնաժողովների նախագահի ընտրությունների համար (Ազգային ժողովի կանոնակարգ, հոդվ. 138), կամ կառավարող և ընդդիմադիր խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվակազմի ինչպիսի հարաբերակցություն է առկա (Ազգային ժողովի կանոնակարգ, հոդվ. 7):

Վերոգրյալի լույսի ներքո, կարծում եմ, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներով ուղղակիորեն սահմանվում է պատգամավորական խմբակցությունների՝ լիազորությունների շրջանակը, ինչը թույլ է տալիս վիճարկվող որոշման սահմանադրականության հարցի շրջանակում կատարելու հետևյալ եզրահանգումները.

1) Ազգային ժողովի կանոնակարգի հիման վրա ընդունված Ազգային ժողովի որոշումների՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության ապահովումը ենթադրում է մշտական հանձնաժողովի և՛ անդամի, և՛ նախագահի պաշտոններում ընտրության կայունության, այդ թվում՝ ընդդիմադիր խմբակցությունների՝ այդ գործընթացում անկաշկանդ գործունեության երաշխավորում,

2) կոնկրետ խմբակցության կողմից առաջադրված մշտական հանձնաժողովի նախագահն ունի օրինական սպասելիք, որ իր՝ այդ պաշտոնում լիազորությունները կարող են դադարեցվել միայն այն ընթացակարգով և այն խմբակցության որոշմամբ, որի կողմից նա առաջադրվել է տվյալ պաշտոնում,

3) Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության ապահովման շրջանակում՝ Ազգային ժողովի կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի «խմբակցություն» եզրույթը, ելնելով այդ կանոնակարգի իրավակարգավորման առանձնահատկությունից, կարծում եմ՝ չպետք է ընկալվի լայն իմաստով և այդ եզրույթի եզակիությունը տարածելով նույն բառի հոգնակիի վրա, այսինքն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքով օժտելով բոլոր խմբակցություններին, այլ ոչ թե միայն այն խմբակցությանը, որին

վերապահված է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածուի առաջադրումը:

4. Զննության առարկա հարցի կապակցությամբ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում պատգամավորական խմբակցությունների ներկայացվածության պահպանումը կարող է ունենալ որոշ շեղումներ հատկապես Սահմանադրությամբ ամրագրված կայուն մեծամասնության և ընդդիմադիր խմբակցությունների գործունեության հարաբերակցության համատեքստում:

Ուստի Սահմանադրական դատարանի ՍԳՈ-1587 որոշման տեսանկյունից անհրաժեշտ է նաև անդրադառնալ միջազգային իրավական պրակտիկային: Մասնավորապես, անդրադառնալով խորհրդարանական (պատգամավորական) փոքրամասնության իրավունքների պաշտպանության հիմնախնդրին՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 2008 թվականի հունվարի 23-ի թիվ 1601 բանաձևով արձանագրել է, որ Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների ազգային խորհրդարանները ճանաչում են խորհրդարանական ընդդիմության կամ փոքրամասնության իրավունքները, մասնավորապես. (...) ընդդիմության ներկայացուցիչներն իրավունք ունեն մասնակցելու խորհրդարանի աշխատանքների կառավարմանը, նրանք ունեն հասանելիություն՝ զբաղեցնելու խորհրդարանի պատասխանատու պաշտոններ (կետ 2.3.1), մշտական հանձնաժողովներում նախագահի պաշտոնները պետք է բաշխվեն խորհրդարանական խմբերի միջև համամասնական ներկայացվածության հիման վրա (կետ 2.5.1), ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր հանձնաժողովները պետք է ձևավորվեն համամասնական ներկայացվածության հիման վրա (կետ 2.5.2):

Միաժամանակ, Եվրոպայի խորհրդի՝ ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2019 թվականի հունիսի 24-ի թիվ 845/2016 (CDL-AD(2019)015) գեկույցով հաստատված՝ «Խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության հարաբերությունների պարամետրերը» եզրակացության դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Վենետիկի հանձնաժողովը ժողովրդավարական խորհրդարանում ընդդիմության դերի վերաբերյալ կարևորել է իր եզրակացություններում արված հետևյալ մոտեցումները, մասնավորապես.

ա) (...) երիտասարդ ժողովրդավարության երկրներում ընդդիմության իրավունքները Սահմանադրությամբ ամրագրվելն սկզբունքորեն ողջունելի է (CDL-AD(2014)037, § 19), բայց միևնույն ժամանակ պետք է հնարա-

վոր լինի ընթացակարգային նորմերը համապատասխանեցնել հանգամանքների փոփոխություններին, այդ թվում՝ Սահմանադրությամբ կամ օրգանական օրենքով պետք է ամրագրել միայն ամենահիմնարար սկզբունքները (CDL- AD(2011)016, կետ 24), մասնավորապես՝ հանձնաժողովներում համամասնական ներկայացվածության սկզբունքը (կետ 31),

բ) խորհրդարանական ընդդիմության և փոքրամասնության իրավունքների վերաբերյալ ամենահիմնարար կանոնները ցանկալի է կարգավորել այնպես, որ մեծամասնությունը չկարողանա բացառապես իր հայեցողությամբ փոփոխել դրանք (կետ 33),

գ) եթե խորհրդարանում պատասխանատու պաշտոնների (խոսնակ, մշտական հանձնաժողովների ղեկավարներ և անդամներ և այլն) բոլոր նշանակումները կարող են կատարվել մեծամասնության կողմից միանձնյա, ապա առկա է ռիսկ, որ ընդդիմությունն իսպառ դուրս կթողնվի խորհրդարանի կառավարման մարմիններից (կետ 83) և այլն:

Կարծում եմ, որ վերոգրյալ եզրահանգումները համահունչ են Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների տրամաբանությանը:

5. Ուսումնասիրելով Սահմանադրական դատարանի քննության առարկա՝ Ազգային ժողովի որոշման իրավական բովանդակությունն ու նշանակությունը, գտնում եմ, որ Սահմանադրական դատարանը պետք է գնահատեր նաև վիճարկվող որոշման սահմանադրականությունը՝ կարևորելով Ազգային ժողովի կանոնակարգի վրա հիմնված մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագծի ընդունման հիմնավորումների նշանակությունը: Մասնավորապես, նախաձեռնող պատգամավորական խմբակցությունը այդ հիմնավորման մեջ կատարում է ամփոփիչ եզրահանգում առ այն, որ՝ «(...) Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ վերը հիշատակված գրառումներից և հրապարակային խոսքից պարզ է դառնում, որ պատգամավորի կողմից արվում են Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու՝ որպես բարձրագույն արժեք, անօտարելի արժանապատվությունը ոտնահարող, նվաստացնող և վիրավորանք պարունակող հայտարարություններ, ինչպես նաև Սահմանադրությանը ուղղակիորեն հակասող դասակարգումներ մարդկանց միջև, ավելին՝ այդ դասակարգմամբ պայմանավորելով վերջիններիս՝ Սահմանադրությամբ ամրագրված՝ ընտրելու հիմնարար իրավունքի իրացումը:

Վերոնշյալն ակնբախ է դարձնում, որ պատգամավոր Նաիրա Չոհրաբյանը չի կարող լինել մի հանձնաժողովի նախագահ, որի գործունեության առանցքը մարդու իրավունքների պաշտպանությունն է»:

Ներկայացվածի շրջանակում անհրաժեշտ է նշել, որ այդ հիմնավորումներն առավելապես պայմանավորված են պատգամավորի հայտնած կարծիքների գնահատման անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համատեքստում՝ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը պատգամավորի կարգավիճակով պայմանավորված պաշտոն է, հետևաբար՝ դա ենթադրում էր պատգամավորական էթիկայի կանոնների պահպանման տեսանկյունից իրավական գործընթացի նախաձեռնում:

Ամփոփելով կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը ճանաչելու Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին և 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

22 ապրիլի 2021 թվականի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
13-Ի «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԱՐՅԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ ԱԺՈ-014-Ա ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1587 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱ-
ԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓՎԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը՝ Սահմանադրական դատարանը որոշել է, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկ-

տեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը համապատասխանում է Սահմանադրությանը (2021 թվականի ապրիլի 13-ի ՍԴՈ-1587 որոշում):

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ հատուկ կարծիք՝ հիշյալ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Խորհրդարանական փոքրամասնության իրավունքների սահմանադրական պաշտպանությունն ածանցվում է Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված ժողովրդավարական և իրավական պետության, ինչպես նաև Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքներից:

Խորհրդարանական վերահսկողություն իրականացնելիս հատկապես կարևոր դեր ունեն խորհրդարանի այն անդամները կամ խմբերը, որոնք չեն աջակցում Կառավարությանը: **Որպես խորհրդարանական ընդդիմություն նրանք Կառավարության և խորհրդարանական մեծամասնության «բնական հակառակորդներ» են:**

Որպեսզի խորհրդարանական ընդդիմությունը հնարավորություն ունենա իրականացնել խորհրդարանական վերահսկողական իր գործառույթը, նրա՝ որպես **խորհրդարանական փոքրամասնության՝** Սահմանադրությամբ ամրագրված **իրավունքները պետք է մեկնաբանվեն դրանց արդյունավետ իրացման տեսանկյունից:** Նշվածը վերաբերում է նաև ընդդիմադիր խմբակցությունների կողմից ըստ իրենց տեղերի համամասնության՝ խորհրդարանի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները զբաղեցնելու իրավունքին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող պետությունում խորհրդարանական մեծամասնությունն է ձևավորում գործադիր իշխանություն՝ խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունն առավելապես կախված է խորհրդարանական փոքրամասնության իրավունքների բնույթից ու ծավալից, ինչպես նաև դրանց իրացման արդյունավետ կառուցակարգերից:

1.1. Սահմանադրության 105-րդ հոդվածի համաձայն՝ **խմբակցությունները նպաստում են Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը:** Խմբակցության մեջ ընդգրկվում են միայն միևնույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի պատգամավորները:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությունը խորհրդարանական փոքրամասնությանը վերապահել է լայն իրավունքներ:

Դրանք իրենց արտացոլումն են գտել պետական մարմինների ձևավորման, Ազգային ժողովում օրենսդրական գործընթացի, արտահերթ նիստեր և նստաշրջաններ հրավիրելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողության կարևորագույն գործիք հանդիսացող քննիչ հանձնաժողովների ձևավորման և գործունեության վերաբերյալ կանոնակարգումներում:

Ազգային ժողովի մարմիններում, ինչպես նաև մշտական հանձնաժողովների ղեկավար կազմում խորհրդարանական փոքրամասնության ներկայացվածության պահանջը նրանց իրավունքների կարևորագույն բաղկացուցիչ մասն է:

Խորհրդարանական փոքրամասնությանը կարևոր դեր է վերապահված խորհրդարանի արդյունավետ գործունեության համար առանցքային նշանակություն ունեցող Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում: Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով: Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: **Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:**

Օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև **խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու** համար ստեղծված՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում ընդդիմության կողմից հանձնաժողովի անդամի ու նախագահի մակարդակով ներկայացվածությունը խորհրդարանական ընդդիմությանը տրամադրված կարևոր գործիքակազմ է:

Խորհրդարանական ընդդիմության դերի և նշանակության, նրա գործառնությունների իրացման համար պատշաճ գործիքակազմի անհրաժեշտությունը պայմանավորում է այն հանգամանքը, որ ընդդիմության կողմից խորհրդարանական վերահսկողության գործառնության իրականացումը չպետք է կախված լինի խորհրդարանական մեծամասնության բարի կամքից: Ընդդիմությանն այդ լիազորությունները վերապահված են առավելապես ոչ թե ի շահ իրեն, այլ ի շահ ժողովրդավարական պետության:

1.2. Դիմողի կողմից ներկայացված փաստերի շրջանակներում Սահմանադրական դատարանը պետք է պարզեր, թե ընդդիմադիր խմբակցության կողմից Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջադրված և Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուի լիազորությունների դադարեցումը մեկ այլ, տվյալ դեպքում՝ կառավարող խմբակցության

նախաձեռնությամբ կարո՞ղ է արդյոք խաթարել Սահմանադրությամբ ամրագրված այն կանոնը, որ **Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:**

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված կանոնը պահանջում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանվեն այնպիսի կառուցակարգեր, որոնք կերաշխավորեն կոնկրետ խմբակցության համար կոնկրետ մշտական հանձնաժողովներում **կոնկրետ թվով տեղեր՝** իր ստացած մանդատների թվի համամասնությանը համապատասխան: Իսկ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանված կանոնը պահանջում է, որ Կանոնակարգով սահմանվեն այնպիսի կառուցակարգեր, որոնք **կերաշխավորեն կոնկրետ խմբակցության համար իր ստացած մանդատների թվի համամասնությանը համապատասխան՝ կոնկրետ մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններ:**

Սահմանադրության նշված պահանջների ապահովումը Կանոնակարգում գնահատելու համար Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնար Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի առաջադրման, ընտրության, լիազորությունների դադարման և դադարեցմանն առնչվող վերաբերելի կարգավորումներին:

Ըստ այդմ՝ խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի **նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու** (Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրություններն անցկացվում են **Ազգային ժողովի առաջին նստաշրջանում**, ինչպես նաև **նրանց պաշտոնը թափուր մնալու դեպքում:**

Մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կանոնակարգի 138-րդ հոդվածի 3-րդ մասով **սահմանված կարգով որոշված խմբակցությունը: Թեկնածուների առաջադրման իրավունքը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:**

Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների առաջադրման իրավունքը խմբակցությունների միջև բաշխվում է Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը՝ **ըստ յուրաքանչյուր պաշտոնի համար ստացված գործակցի** (Կանոնակարգի 138-րդ հոդվածի 1-3-րդ մասեր):

Մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում նրա ընտրության հարցը քննարկվում է թեկնածուի առաջադրման ժամկետը **լրանալուց հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում:**

Մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցը քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով:

Մշտական հանձնաժողովի նախագահին ընտրվում է **գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:**

Եթե մշտական հանձնաժողովի նախագահը չի ընտրվում, **ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնի համար առաջադրում է նոր թեկնածու** (Կանոնակարգի 138-րդ հոդվածի 8-10 մասեր):

Մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածուներն առաջադրվում են Ազգային ժողովի առաջին նստաշրջանում՝ յուրաքանչյուր մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցի քննարկման սկզբում, **մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում** (Կանոնակարգի 138-րդ հոդվածի 6-րդ մաս):

Մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի լիազորությունները դադարում են, եթե դադարել կամ դադարեցվել են նրա պատգամավորական լիազորությունները, նա հրաժարական է տվել, կամ նա դուրս է եկել կամ հեռացվել խմբակցությունից:

Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը: Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (Կանոնակարգի 150-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասեր):

Վերոգրյալ իրավանորմերի բովանդակությունից պարզ է դառնում, որ թեև մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում թեկնածու առաջադրելու իրավունքը կրկին պատկանում է տվյալ խմբակցությանը մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը, սակայն այդ իրավունքը, չուղեկցվելով բավարար երաշխիքներով, մշտապես չի ապահովում ստացած մանդատների թվի համամասնությամբ մշտական հանձնաժողովների նախագահներ ունենալու ընդդիմադիր խմբակցության իրավունքը: Այլ

կերպ՝ Կանոնակարգը չի ընտրել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանված կանոնով ընդդիմադիր խմբակցությունների համար երաշխավորված իրավունքի ապահովման կառուցակարգ: Արդյունքում՝ **խորհրդարանական վերահսկողություն իրականացնող և Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորման հարցում կարևոր դերակատարում ունեցող խորհրդարանական ընդդիմությունը գրկվում է իր գործառույթների իրականացման համար էական նշանակություն ունեցող գործիքակազմից:**

Այդ մասին է վկայում կառավարող խմբակցության կողմից ընդդիմադիր խմբակցության մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման հարցով կամայականորեն նախագիծ շրջանառելու հանգամանքը (սահմանված չեն չափանիշներ, որոնց դեպքում կամրագրվի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցումը նախաձեռնելու իրավունք) և ձայների բավարար քանակով պայմանավորված՝ նշված պաշտոնատար անձի լիազորությունների դադարեցման հնարավորությունը խորհրդարանական մեծամասնության կողմից:

Զնայած Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածուի առաջադրման և ընտրության ժամկետների կանոնակարգումների՝ առաջադրված նոր թեկնածուի ընտրվելու երաշխիքները բացակայում են, իսկ ընտրության գործընթացը կարող է այնչափ երկարաձգվել, որ իմաստազրկվի նշված պաշտոնի ստանձնումը:

Կամայական պաշտոնանկություններով պայմանավորված գործընթացների արդյունքում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ ընդդիմադիր որևէ խմբակցություն չի ունենա մշտական որևէ հանձնաժողովի նախագահ այն պարագայում, երբ Ազգային ժողովի քաղաքական մեծամասնությունը քաղաքական դրդապատճառներով կամ, քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, առանց որևէ հիմքի պաշտոնանկ կանի մշտական հանձնաժողովների ընդդիմադիր խմբակցությունները ներկայացնող բոլոր նախագահներին:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների ընտրության կառուցակարգը, հաշվի առնելով Սահմանադրության 94-րդ հոդվածը, ըստ որի «պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով», չի կարող խմբակցություններին երաշխավորել իրենց վերապահված թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու և մշտական հանձնաժողովների նախագահներ ունենալու իրավունքը:

Վերոնշյալի համատեքստում պարզ է դառնում, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես

Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը չի համապատասխանում Սահմանադրությանը, քանի որ այն չի ապահովել Սահմանադրությամբ սահմանված՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվելու կանոնը:

Ի հակադրություն նշված դիրքորոշման՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ **մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվելու կանոնը պահպանվել է, քանի որ ընդդիմադիր խմբակցությունը պահպանել է թեկնածու առաջադրելու իր իրավունքը, նշելով.** «Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը՝ որպես ընդդիմադիր խմբակցություն, Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ունի Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրելու սահմանադրական իրավունք, և տվյալ դեպքում նույնիսկ վիճարկվող անհատական իրավական ակտով Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցումը չի հանգեցնում մշտական հանձնաժողովները ձևավորելիս տվյալ խմբակցության համար Սահմանադրությամբ երաշխավորված համամասնության կանոնների խախտման»:

Դրանով Սահմանադրական դատարանը Սահմանադրության համապատասխան նորմին տվել է **չափազանց նեղ մեկնաբանություն, որում չի անդրադարձել ընդդիմադիր խմբակցությունների դերին, նրանց վերապահված իրավունքի իրացման իրական երաշխիքներին, խորհրդարանական փոքրամասնության իրավունքը չի մեկնաբանվել դրա արդյունավետության տեսանկյունից, Սահմանադրության համապատասխան նորմը դիտարկել է բացառապես որպես ընդդիմադիր խմբակցության թեկնածու առաջադրելու իրավունք, այլ ոչ թե իրենց ստացած մանդատների համամասնորեն մշտական հանձնաժողովի նախագահ ունենալու իրավունք:** Նեղ մեկնաբանության պարագայում այս նորմը իրականության մեջ որևէ բան չի տալիս ընդդիմադիր խմբակցություններին, հետևաբար՝ այն չի կարող ծառայել խորհրդարանական փոքրամասնությունների դերին համարժեք՝ վերջիններիս վերապահված գործառնությունների արդյունավետ իրականացմանը:

2. Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրության 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ **Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:** Ազգային ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան:

«Էտևապես՝ Ազգային ժողովը չի կարող ունենալ լիազորություններ, որոնք սահմանված չեն Սահմանադրությամբ: Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունները իրենց մանրամասն կարգավորումը կարող են ստանալ Կանոնակարգով՝ պահպանելով իրենց անձնային բնույթը, ինչպես նաև չխաթարելով Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների էությունը:

Սահմանադրությամբ Ազգային ժողովին չի վերապահվում Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնում **թեկնածուների ընտրության կամ նախագահների լիազորությունների դադարեցման իրավասություն:**

Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Օրենքները, Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին»: Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ **«Սահմանադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ»:** Սակայն այս կանոնն ընդհանուր բնույթ ունի և չի կարող տարածվել այն դեպքերի վրա, երբ Սահմանադրությունն ուղղակիորեն այլ բան է նախատեսել:

Ինչպես նշվեց, **Սահմանադրությամբ սահմանված չէ** Ազգային ժողովի կողմից Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնում թեկնածուների ընտրության կամ նախագահների լիազորությունների դադարեցման հարցով որոշում ընդունելու լիազորություն:

Հարկ է նշել նաև, որ խորհրդարանական կառավարման համակարգում ընդդիմադիր խմբակցությունների դերի ուժեղացման պայմաններում նշված խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջադրված թեկնածուի ընտրության և/կամ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման հարցով որոշում ընդունելը չի բխում Ազգային ժողովի՝ Սահմանադրությամբ սահմանված լիազորություններից՝ հաշվի առնելով խորհրդարանական կառավարման համակարգ

ունեցող պետությունում ընդդիմադիր խմբակցություններին վերապահված դերն ու նշանակությունը:

Հատկանշական է, որ, ի տարբերություն մշտական հանձնաժողովների նախագահների, որոնց դեպքում Կանոնակարգը ներդրել է ընտրության կառուցակարգ, մշտական հանձնաժողովների անդամների կազմը որոշելու իրավասությունը պատկանում է կոնկրետ խմբակցությանը:

Այդուհանդերձ՝ Կանոնակարգի կարգավորումները, որևէ կերպով չեն կարող կաշկանդել Սահմանադրական դատարանին, և Սահմանադրական դատարանը սահմանադրականության հարցը լուծում է ոչ թե որևէ օրենքի, այլ բացառապես Սահմանադրության հիման վրա (Սահմանադրության 167-րդ հոդվածի 2-րդ մաս):

3. Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետևյալ տեղեկությունները. **դատարանի ընդունած որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող իրավական դիրքորոշումները, այդ թվում՝ այն փաստարկները, որոնք հաստատում կամ հերքում են կողմերի պնդումները:**

Սահմանադրական արդարադատության առնչությամբ Սահմանադրական դատարանը բազմիցս է արտահայտել դիրքորոշում առ այն, որ, ի տարբերություն իրավական նորմի սահմանադրականության հարցի, այդ նորմի կիրառման իրավաչափության հարցերը Սահմանադրական դատարանի քննության առարկա չեն հանդիսանում:

Տվյալ դեպքում Սահմանադրական դատարանը փաստել է, որ վիճարկվող անհատական իրավական ակտով Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցումը չի հանգեցնում մշտական հանձնաժողովները ձևավորելիս տվյալ խմբակցության համար Սահմանադրությամբ երաշխավորված համամասնության կանոնների խախտման՝ հաշվի առնելով, որ Ազգային ժողովի խմբակցությունն իր կամահայտնությունը դրսևորում է մշտական հանձնաժողովի նախագահի՝ իրեն վերապահված պաշտոնում թեկնածու առաջադրելով:

Այնուհետև Սահմանադրական դատարանն անդրադառնալով Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությանը՝ եզրահանգել է, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների

դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի ցանկացած խմբակցություն, այլ ոչ թե միայն այն խմբակցությունը, որին վերապահված է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Սահմանադրական դատարանի հայտնած առաջին դիրքորոշումից, ինչպես նաև Սահմանադրական դատարանի որոշման հետագա շարադրանքից ակնհայտ է դառնում, որ Սահմանադրությանը համապատասխանությունը գնահատելիս որպես էական նշանակություն ունեցող հանգամանք չի դիտարկվել այն, թե արդյոք մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարեցվել են իրավասու խմբակցության առաջարկի հիման վրա:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Սահմանադրական դատարանը, հետագայում անդրադառնալով այդ հարցին, փաստացի ստանձնել է սովորական դատարանի դեր՝ իրականացնելով նորմի կիրառման իրավաչափությունը գնահատելու գործառույթ, անդրադառնալով այնպիսի նորմի բովանդակությանը, որը որևէ կերպ չի փոխկապակցվում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելու հետ: Ընդ որում՝ այս առումով էական չէ այն հանգամանքը, թե արդյոք դիմողի փաստարկները վերաբերել են նաև օրենքի սխալ կիրառմանը: Հարկ է ընդգծել նաև, որ օրենքի խախտման փաստը ինքնին չի կարող վկայել Սահմանադրության հետ հակասության մասին:

4. Վկայակոչելով իր ՄԴՈ-1224 և ՄԴՈ-1454 որոշումները՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ դրանցում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով: Նման եզրահանգում անելու համար Սահմանադրական դատարանը պետք է գնահատեր ընդունման կարգի ենթադրյալ խախտումների հարցը, մինչդեռ որևէ նման խախտման Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ չի անդրադարձել:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշումը հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված Սահմանադրության 105-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթներին և Սահմանադրական դատարանի կողմից պետք է ճանաչվեր Սահմանադրությանը հակասող և անվավեր:

ԴԱՏԱՎՈՐ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

23 ապրիլի 2021 թվականի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ (ՀԱՄԸՆԿՆՈՂ) ԿԱՐԾԻՔԸ

**2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի ՍԴՈ-1587
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2021 թվականի ապրիլի 13-ին Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Չոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1587 որոշմամբ եզրահանգել է, որ Ազգային ժողովի վիճարկվող որոշումը համապատասխանում է Սահմանադրությանը: Համաձայն լինելով որոշման եզրափակիչ մասի հետ, կարծում եմ, որ որոշման պատճառարանական մասն ունի ներքոշարադրյալ բացթողումները:

1. Սույն գործի լուծմամբ, ըստ էության, առաջնահերթությամբ պետք է ստանար այն հարցի պատասխանը, թե արդյոք Սահմանադրությամբ Ազգային ժողովն ունի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարեցնելու իրավասություն՝ հաշվի առնելով Ազգային ժողովի լիազորությունների՝ Սահմանադրության 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումը, համաձայն որի՝ «*Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ*»: Սահմանադրական դատարանն այս խնդրին պարտավոր էր անդրադառնալ՝ անկախ դիմողների կողմից այս հարցը բարձրացնելուց:

2. Այս կապակցությամբ կարծում եմ, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահ նշանակելու և նրա լիազորությունը դադարեցնելու իրավասությունը բխում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողով ստեղծելու իր՝ օրենսդիր վարչարարության (որն իրականացվում է նաև, օրինակ, Սահմանադրության 104-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովի նախագահ և նրա տեղակալներ ընտրելիս) մաս կազմող լիազորությունից, որի իրականացման պայման է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության համաձայն՝ տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնն Ազգային ժողովի իրավասու խմբակցության առաջարկությամբ համալրելը: Ազգային ժողովի այս լիազորությունը բխում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասից, քանի որ հանձնաժողովի ստեղծմամբ, անդամների և դրա նախագահի ընտրությամբ իրականացվում է օրենսդիր վարչարարություն: Իմ կարծիքով այս լիազորության իրականացումն է, որ մանրամասնեցվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 8, 11, 138 և 150-րդ հոդվածներով:

3. Կարծում եմ, որ առաջին իսկ համապատասխան առիթի դեպքում Սահմանադրական դատարանը պարտավոր է անդրադառնալ օրենսդիր վարչարարության համար կարևոր և Ազգային ժողովում ընդդիմադիր խմբակցությունների համար այս զգայուն խնդրին՝ տալով Սահմանադրության 106 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սահմանադրաիրավական բացվածքը՝ օրենսդիր և դրանում ներկայացված քաղաքական ուժերի համար կանխատեսելի և որոշակի դարձնելու համար Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների «ստեղծման», դրանում խմբակցությունների պատգամավորների «տեղերի» և «պաշտոնների» բաշխման սահմանադրական սկզբունքները, ինչը, ցավոք, տեղ չի գտել սույն որոշման մեջ՝ հնարավոր է, անհատական իրավական ակտը քննության առնելու սահմանափակումներից ելնելով:

4. Սույն որոշման պատճառաբանական մասի հետ իմ հաջորդ անհամաձայնությունը որոշման 4.2 կետով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների նորմատիվ պահանջների վկայակոչումն է Կանոնակարգի և դրանում հղվող սահմանադրաիրավական հասկացությունների բովանդակությունը մեկնաբանելիս:

5. Հաստատապես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավական նորմերի մեկնաբանման ընդհանուր, ինչպես նաև իրավական հակասությունների (իրա-

վական կողմերի) և օրենսդրական բացերի դեպքում իրավական ակտերի նորմերի կիրառման, մեկնաբանման, պարզաբանման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերում գերակշռաբար արտացոլված են իրավական նորմերի մեկնաբանման ընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքները, որոնք կիրառելի են նաև ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական նորմերի մեկնաբանման դեպքում: Սակայն վերջիններիս նկատմամբ այդ սկզբունքները կիրառվում են ոչ թե հիշյալ օրենքի նորմատիվ թելադրանքով, այլ մեկնաբանողական սկզբունքների և գործիքակազմի՝ մեկնաբանելու իրավասություն ունեցող հանրային իշխանության մարմնի, դիցուք՝ Սահմանադրական դատարանի կողմից, որպես իրավական նորմի կամընտրային մեկնաբանման գործիք՝ իրավական հերմենևտիկայի ընդհանուր սկզբունքներին համապատասխան: Սա հայկական իրավունքում նույնպես պարզաբանման ենթակա ընդարձակ ոլորտ է, որի զարգացումը, հուսով եմ, մոտ ապագայում կարող է ապահովվել Սահմանադրական դատարանի կողմից՝ առաջին իսկ պատեհ առիթի դեպքում:

ԴԱՏԱՎՈՐ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

23 ապրիլի 2021 թվականի



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՇԱԿՄԱՆ
ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱ-
ԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 ապրիլի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Զ. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան

փոփոխող արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2021 թվականի հունվարի 14-ի N 30-Ա որոշմամբ 2018 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի հունվարի 20-ին:

Սույն գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2021 թվականի հունվարի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) փոփոխող արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի հոկտեմբերի 10-ին՝ 1981 թվականի հունվարի 28-ին Ստրասբուրգում ստորագրման համար բացված՝ Կոնվենցիայում փոփոխություններ կատարելու և Կոնվենցիան ներկայիս իրողություններին համապատասխանեցնելու նպատակով:

Հիշյալ Կոնվենցիան, իր հերթին, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային Ժողովի 2012 թվականի փետրվարի 27-ի ԱԺՈ-315-Ն որոշմամբ, որի սահմանադրականությունը նախապես ստուգվել էր Սահմանադրական դատարանի կողմից ՍԴՈ- 1001 որոշմամբ:

2. Արձանագրությամբ նախատեսվում է, մասնավորապես, նոր խմբագրությամբ շարադրել Կոնվենցիայի նախաբանի 1-ին, 3-րդ և 4-րդ ներածական դրույթները, 1-ին հոդվածը, 2-րդ հոդվածի «բ» «գ» և «դ» կետերը, 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, 2-րդ գլխի վերնագիրը, 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, 5-րդ հոդվածի վերնագիրը և տեքստը, 6-րդ և 7-րդ հոդվածները, ավելացնել 8-րդ հոդված, նոր խմբագրությամբ շարադրել նախկին 8-րդ (նոր 9-րդ) հոդվածի վերնագիրը և տեքստը, նոր 9-րդ հոդվածից

հետո ավելացնել նոր 10-րդ հոդված, նախկին 9-12-րդ հոդվածները համարել 11-14-րդ հոդվածներ, նոր խմբագրությամբ շարադրել նոր 11-րդ և 12-րդ հոդվածները, 3-րդ գլխի վերնագիրը, նոր 14-րդ հոդվածի վերնագիրը և տեքստը, ավելացնել նոր 4-րդ գլուխ, նոր խմբագրությամբ շարադրել նոր 15-րդ հոդվածը, 4-7-րդ գլուխները վերահամարակալել որպես 5-8-րդ գլուխներ, նոր խմբագրությամբ շարադրել 5-րդ գլխի վերնագիրը, նոր 16-րդ հոդվածի վերնագիրը և նույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, ավելացնել նոր 17-րդ հոդված, նոր խմբագրությամբ շարադրել նոր 18-րդ հոդվածի վերնագիրը և տեքստը, նոր 19-րդ հոդվածի վերնագիրը և տեքստը, նոր 20-րդ հոդվածի վերնագիրը և ներածական դրույթը և նույն հոդվածի «ա» և «գ» կետերը, նոր 21-րդ հոդվածի վերնագիրը և նույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, նոր 6-րդ գլխի վերնագիրը, նոր 22-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերությունները, նոր 23-րդ հոդվածի ներածական դրույթը, «ա», «բ», «գ» և «դ» կետերը, նոր 24-րդ հոդվածը, նոր 25-րդ հոդվածի 1-4-րդ պարբերությունները, նոր 26-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերությունները, նոր 27-րդ հոդվածի վերնագիրը և տեքստը, նոր 28-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, նոր 31-րդ հոդվածի ներածական դրույթը և «գ» կետը:

Արձանագրությամբ նախատեսվում է Կոնվենցիայում՝ Արձանագրությամբ սահմանված բովանդակությամբ ավելացնել նախաբանի նոր 5-րդ, 6-րդ և 7-րդ ներածական դրույթներ, 2-րդ հոդվածի նոր «ե» և «զ» կետեր, 4-րդ հոդվածի նոր 3-րդ պարբերություն, նոր 22-րդ հոդվածի 3-րդ պարբերությունից հետո՝ նոր 4-րդ պարբերություն, նոր 23-րդ հոդվածի նոր «ե», «զ», «է», «ը» և «թ» կետեր, նոր 25-րդ հոդվածի նոր 7-րդ պարբերություն:

Արձանագրությամբ նախատեսվում է հանել Կոնվենցիայի նախաբանի 5-րդ ներածական դրույթը, 3-րդ հոդվածի 3-6-րդ պարբերությունները, նոր 16-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը:

3. Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա Արձանագրությամբ ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

– Կոնվենցիան կիրառել տվյալների մշակման առնչությամբ Հայաստանի Հանրապետության իրավագործության տակ գտնվող պետական և մասնավոր ոլորտներում՝ դրանով իսկ ապահովելով յուրաքանչյուր անհատի՝ իր անձնական տվյալների պաշտպանության իրավունքը (Արձանագրության հոդված 4, պարբերություն 1, Կոնվենցիայի հոդված 3, պարբերություն 1),

– երաշխավորել, որ Կոնվենցիան չի կիրառվելու անհատի կողմից բացառապես անձնական կամ կենցաղային գործունեության ընթացքում իրա-

կանացվող տվյալների մշակման առնչությամբ (Արձանագրության հոդված 4, պարբերություն 2, Կոնվենցիայի հոդված 3, պարբերություն 2),

– Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու և դրանց արդյունավետ կիրառումն ապահովելու համար, որոնք ուժի մեջ են մտնում Կոնվենցիան վավերացնելու կամ դրան միանալու պահից (Արձանագրության հոդված 6, պարբերություններ 1 և 2, Կոնվենցիայի հոդված 4, պարբերություններ 1 և 2),

– հնարավորություն տալ VI գլխում սահմանված Կոնվենցիայի կոմիտեին գնահատելու Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու համար Հայաստանի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ձեռնարկված միջոցների արդյունավետությունը, ինչպես նաև ակտիվորեն նպաստել գնահատման այս գործընթացին (Արձանագրության հոդված 6, պարբերություն 3, Կոնվենցիայի հոդված 4, պարբերություն 3),

– ապահովել, որ տվյալների մշակումը համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին և մշակման բոլոր փուլերում արտացոլի արդար հավասարակշռություն՝ համապատասխան բոլոր շահերի (լինեն դրանք հանրային, թե մասնավոր) և նժարին դրված իրավունքների ու ազատությունների միջև (Արձանագրության հոդված 7, պարբերություն 2, Կոնվենցիայի հոդված 5, պարբերություն 1),

– ապահովել, որ տվյալների մշակումը հնարավոր լինի իրականացնել տվյալների սուբյեկտի ազատ, կոնկրետ, տեղեկացված և հստակ համաձայնության հիման վրա կամ օրենքով սահմանված որևէ այլ իրավաչափ հիմքով (Արձանագրության հոդված 7, պարբերություն 2, Կոնվենցիայի հոդված 5, պարբերություն 2),

– երաշխավորել մշակման ենթարկվող անձնական տվյալների օրինական ճանապարհով մշակումը (Արձանագրության հոդված 7, պարբերություն 2, Կոնվենցիայի հոդված 5, պարբերություն 3),

– ապահովել, որ մշակման ենթարկվող անձնական տվյալները մշակվեն արդար և թափանցիկ եղանակով, հավաքվեն հստակ արտահայտված, կոնկրետ և իրավաչափ նպատակներով և չմշակվեն այդ նպատակների հետ անհամատեղելի եղանակով, ինչպես նաև ապահովել, որ հանրային շահերից ելնելով՝ արխիվացման նպատակներով, գիտական կամ պատմական հետազոտություններ կատարելու նպատակներով կամ վիճակագրական նպատակներով հետագա մշակումը համապատասխան երաշխիքների առկայության դեպքում լինի համատեղելի այդ նպատակների հետ (Արձանագրության

հոդված 7, պարբերություն 2, Կոնվենցիայի հոդված 5, պարբերություն 4, կետեր «ա» և «բ»),

– ապահովել, որ մշակման ենթարկվող անձնական տվյալները լինեն համապատասխան, վերաբերելի և դրանց մշակման նպատակների սահմանները չգերազանցող, լինեն ճշգրիտ և անհրաժեշտության դեպքում պահվեն թարմացված վիճակում, ինչպես նաև պահպանվեն այնպիսի եղանակով, որը թույլ է տալիս նույնականացնել տվյալների սուբյեկտներին ոչ ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է այդ տվյալները մշակելու նպատակների համար (Արձանագրության հոդված 7, պարբերություն 2, Կոնվենցիայի հոդված 5, պարբերություն 4, կետեր «գ», «դ» և «ե»),

– գենետիկ տվյալների, իրավախախտումներին, քրեական վարույթներին և դատվածություններին ու հարակից անվտանգության միջոցներին վերաբերող անձնական տվյալների, կենսաչափական տվյալների, որոնցով անձը միանշանակորեն նույնականացվում է, ռասայական կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, արհեստակցական միություններին անդամակցությանը, կրոնական կամ այլ համոզմունքների, առողջությանը կամ սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ բացահայտող անձնական տվյալների մշակումը թույլատրել միայն Կոնվենցիայի երաշխիքները լրացնող պատշաճ երաշխիքներ Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված լինելու դեպքում (Արձանագրության հոդված 8, պարբերություն 1, Կոնվենցիայի հոդված 6, պարբերություն 1),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակողը, անվտանգության համապատասխան միջոցներ ձեռնարկի այնպիսի ռիսկերի դեմ, ինչպիսիք են, օրինակ՝ անձնական տվյալների պատահական կամ չթույլատրված մուտքը, ոչնչացումը, կորուստը, օգտագործումը, փոփոխումը կամ բացահայտումը (Արձանագրության հոդված 9, պարբերություն 1, Կոնվենցիայի հոդված 7, պարբերություն 1),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչն անհապաղ ծանուցի առնվազն Կոնվենցիայի 15-րդ հոդվածի իմաստով իրավասու վերահսկիչ մարմնին տվյալների մշակմանն առնչվող այն խախտումների մասին, որոնք կարող են լրջորեն խախտել տվյալների սուբյեկտների իրավունքները և հիմնարար ազատությունները (Արձանագրության հոդված 9, պարբերություն 2, Կոնվենցիայի հոդված 7, պարբերություն 2),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչը տեղեկացնի տվյալների սուբյեկտներին իր ինքնության և մշտական բնակության կամ գտնվելու վայրի մասին, նախատեսված մշակման իրավական հիմքի և նպատակների մասին, մշակվող անձնական տվյալների կատեգորիաների մասին, անձնական տվյալներն ստացողների կամ ստացողների կատեգորիաների

մասին, եթե այդպիսիք կան, և Կոնվենցիայի 9-րդ հոդվածում սահմանված իրավունքներն իրականացնելու միջոցների մասին, ինչպես նաև ցանկացած այլ անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություն՝ անձնական տվյալների արդար և թափանցիկ մշակումն ապահովելու համար (Արձանագրության հոդված 10, պարբերություն 1, Կոնվենցիայի (նոր) 8-րդ հոդված, պարբերություն 1),

– երաշխավորել Կոնվենցիայի (նոր) 9-րդ հոդվածով սահմանված տվյալների սուբյեկտի՝ անձի, վերոհիշյալ հոդվածով սահմանված իրավունքների իրացումը (Արձանագրության հոդված 11, Կոնվենցիայի (նոր) 9-րդ հոդված),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակողները, ձեռնարկեն համապատասխան բոլոր միջոցները՝ Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները կատարելու համար, և կարողանան ապացուցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն ընդունված ներպետական օրենսդրության համապատասխան, մասնավորապես՝ Կոնվենցիայի 15-րդ հոդվածով սահմանված իրավասու վերահսկիչ մարմնին, որ իրենց հսկողության տակ իրականացվող տվյալների մշակումը համապատասխանում է Կոնվենցիայի դրույթներին (Արձանագրության հոդված 12, պարբերություն 1, Կոնվենցիայի (նոր) 10-րդ հոդված, պարբերություն 1),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակողները, նախքան այդպիսի մշակում սկսելն ուսումնասիրեն տվյալների նախատեսված մշակման հավանական ազդեցությունը տվյալների սուբյեկտների իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և կազմակերպեն տվյալների մշակումն այնպես, որ հնարավոր լինի կանխել կամ նվազագույնի հասցնել այդ իրավունքներին և հիմնարար ազատություններին միջամտության ռիսկը (Արձանագրության հոդված 12, պարբերություն 2, Կոնվենցիայի (նոր) 10-րդ հոդված, պարբերություն 2),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակողները, կիրարկեն տեխնիկական և կազմակերպչական այնպիսի միջոցներ, որոնցով հաշվի են առնվում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հետևանքները տվյալների մշակման բոլոր փուլերում (Արձանագրության հոդված 12, պարբերություն 3, Կոնվենցիայի (նոր) 10-րդ հոդված, պարբերություն 3),

– չթույլատրել Կոնվենցիայի 2-րդ գլխում սահմանված դրույթների մասով բացառություն՝ բացառությամբ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարբերության, 7-րդ հոդվածի 2-րդ պարբերության, 8-րդ հոդվածի 1-ին պարբերության և 9-րդ հոդվածի դրույթների, երբ այդպիսի բացառություն նախատեսված է օրենքով, դրանով հարգվում է հիմնարար իրավունքների և ազատություններ-

րի էությունը, և այն ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ ու համաչափ միջոց է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» կետով սահմանված նպատակների իրականացման համար (Արձանագրության հոդված 14, պարբերություն 1, Կոնվենցիայի (նոր) 11-րդ հոդված, պարբերություն 1),

– սահմանել պատշաճ դատական և ոչ դատական պատասխանատվության միջոցներ և իրավական պաշտպանության միջոցներ՝ Կոնվենցիայի դրույթները խախտելու համար (Արձանագրության հոդված 15, Կոնվենցիայի (նոր) 12-րդ հոդված),

– բացառապես անձնական տվյալների պաշտպանության նպատակով չարգելել կամ այն ստացողից հատուկ թույլտվություն չպահանջել այնպիսի տվյալների փոխանցման համար, որոնք գտնվում են Կոնվենցիայի մեկ այլ Կողմի իրավագրության ներքո (Արձանագրության հոդված 17, պարբերություն 2, Կոնվենցիայի (նոր) 14-րդ հոդված, պարբերություն 1),

– ապահովել, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի իմաստով իրավասու վերահսկիչ մարմինն տրամադրվի համապատասխան ամբողջ տեղեկատվությունը, որը վերաբերում է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 3-րդ պարբերության «բ» կետում և, ըստ պահանջի, 4-րդ պարբերության «բ» և «գ» կետերում նշված տվյալների փոխանցմանը (Արձանագրության հոդված 17, պարբերություն 2, Կոնվենցիայի (նոր) 14-րդ հոդված, պարբերություն 5),

– ապահովել, որ վերահսկիչ մարմինն իրավունք ունենա տվյալները փոխանցող անձից պահանջելու ներկայացնել երաշխիքների արդյունավետությունը կամ գերակա իրավաչափ շահերի առկայությունը հաստատող ապացույցներ, և որ վերահսկիչ մարմինը տվյալների սուբյեկտների իրավունքները և հիմնարար ազատությունները պաշտպանելու համար կարողանա այդպիսի փոխանցումներն արգելել, կասեցնել կամ որոշակի պայմանների ենթարկել (Արձանագրության հոդված 17, պարբերություն 2, Կոնվենցիայի (նոր) 14-րդ հոդված, պարբերություն 6),

– ապահովել Կոնվենցիայի (նոր) 15-րդ հոդվածով նախատեսված մեկ կամ մի քանի՝ վերահսկիչ մարմինների գոյությունը՝ Կոնվենցիայի նոր 15-րդ հոդվածով սահմանված իրավունքներով և պարտականություններով, որոնք պատասխանատու կլինեն Կոնվենցիայի դրույթների համապատասխանությունն ապահովելու համար (Արձանագրության հոդված 19, Կոնվենցիայի (նոր) 15-րդ հոդված),

– վերահսկիչ մարմիններին ապահովել իրենց գործառույթների արդյունավետ կատարման և իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով (Արձանագրության հոդված 19, Կոնվենցիայի (նոր) 15-րդ հոդված, պարբերություն 6),

– երաշխավորել, որ վերահսկիչ մարմնի անդամներն ու աշխատակազմը իրենց պարտականությունները կատարելիս և իրենց լիազորություններն իրականացնելիս պահպանեն իրենց համար հասանելի կամ հասանելի եղած գաղտնի տեղեկությունների մասով գաղտնիությունը (Արձանագրության հոդված 19, Կոնվենցիայի (նոր) 15-րդ հոդված, պարբերություն 8),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ մարմինները մյուս կողմերի վերահսկիչ մարմինների հետ համագործակցեն այնքանով, որքանով անհրաժեշտ է իրենց պարտականությունները կատարելու և իրենց լիազորություններն իրականացնելու համար, մասնավորապես՝ Կոնվենցիայի նոր 17-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա», «բ» և «գ» կետերով սահմանված կարգով (Արձանագրության հոդված 22, Կոնվենցիայի (նոր) 17-րդ հոդված, պարբերություն 1),

– ապահովել, որ Կոնվենցիայի նոր 17-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված տեղեկատվությունը չպարունակի մշակման ենթարկվող անձնական տվյալներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի տվյալներն էական նշանակություն ունեն համագործակցության համար, կամ համապատասխան տվյալների սուբյեկտը միանշանակ, կոնկրետ, ինքնակամ և տեղեկացված համաձայնություն է տվել դրանք տրամադրելու համար (Արձանագրության հոդված 22, Կոնվենցիայի (նոր) 17-րդ հոդված, պարբերություն 2),

– օժանդակել տվյալների ցանկացած սուբյեկտի՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված իր իրավունքներն իրականացնելու հարցում՝ անկախ նրա ազգությունից կամ բնակության վայրից (Արձանագրության հոդված 23, պարբերություն 2, Կոնվենցիայի (նոր) 18-րդ հոդված, պարբերություն 1):

4. Արձանագրությամբ սահմանվում է, որ վերջինիս ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ուժը կորցրած է համարվում 2001 թվականի նոյեմբերի 8-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ վերահսկիչ մարմինների և տվյալների անդրսահմանային հոսքերի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը» (ԵՊՇ թիվ 181), որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Ազգային ժողովի 2012 թվականի փետրվարի 27-ի ԱԺՈ-317-Ն որոշմամբ (ՍԴՈ-1002):

Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից դադարում է գործողության մեջ լինել 1999 թվականի հունիսի 15-ին Ստրասբուրգում Նախարարների կոմիտեի հաստատած՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի մեջ կատարված փոփոխությունները, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել

է Ազգային ժողովի 2012 թվականի փետրվարի 27-ի ԱԺՈ-316-Ն որոշմամբ (ՄԴՈ-1003):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԿՆՅԱՆ

13 ապրիլի 2021 թվականի
ՄԴՈ-1588



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

**«2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՇԱԿՄԱՆ
ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝**

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
13-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1588 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2018 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԴՈ-1588 որոշմամբ (հրապարակվել է 16.04.2021 թվականին) որոշել է.

«1. 2018 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը: (...):»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԴՈ-1588 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1588 որոշմամբ 2018 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի

համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձր:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմա-

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

նադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության

խկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարանն ղիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարանն ղիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարանն ղիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանն

րան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով

ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտ-

պանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում են, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում են, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **հետոյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագրվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը,

ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպեսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարատարություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

16 ապրիլի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՅԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 ապրիլի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրված՝ «Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին» համաշխարհային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2021 թվականի հունվարի 27-ի N 88-Ա որոշմամբ 2019 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրված «Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին» համաշխարհային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի փետրվարի 2-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2021 թվականի փետրվարի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Չ Ե Ց**.

1. «Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին» համաշխարհային կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 25-ին Փարիզում՝ բարձրագույն կրթության ոլորտում միջազգային համագործակցությունը խթանելու և ամրապնդելու, ինչպես նաև բարձրագույն կրթության որակավորման ճանաչման համար արդար, թափանցիկ և համապարփակ միջոցներ ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Կոնվենցիայով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- բարձրագույն կրթության համակարգի մատչելիության ապահովման նպատակներով ճանաչել մյուս Կողմ պետություններում ձեռք բերված որակավորումները և փաստաթղթով կամ վկայականով հաստատված նախորդ ուսուցումը, որոնք համապատասխանում են Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության մատչելիության ընդհանուր պահանջներին, եթե չի հաստատվում էական տարբերություններ մյուս Կողմ պետություններում մատչելիության ընդհանուր պահանջների և Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր պահանջների միջև: Հակառակ դեպքում մեկ այլ Կողմի պետությունում ձեռք բերված որակավորում ունեցողին ընձեռել այդ որակավորման գնահատում ստանալու հնարավորություն (Հոդված IV, մաս 1),

– եթե որակավորմամբ ապահովվում է այն Կողմ պետության բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ բարձրագույն կրթության ծրագրերի միայն կոնկրետ տեսակների մատչելիություն, որտեղ ձեռք է բերվել

որակավորումը, ապա այդպիսի որակավորում ունեցողների համար ապահովել ՀՀ բարձրագույն կրթության համակարգի մաս կազմող հաստատությունների կամ ծրագրերի համանման կոնկրետ տեսակների մատչելիություն՝ առկայության դեպքում, եթե չի հաստատվում էական տարբերություններ (Հոդված IV, մաս 3),

– ճանաչել մեկ այլ Կողմ պետությունում տրված բարձրագույն կրթության որակավորումը, եթե չի հաստատվում այդ որակավորման և Հայաստանի Հանրապետության համապատասխան որակավորման միջև էական տարբերություններ: Հակառակ դեպքում մեկ այլ Կողմ պետությունում տրված բարձրագույն կրթության որակավորում ունեցողին նրա հարցման հիման վրա ընձեռել այդ որակավորման գնահատում ստանալու հնարավորություն (Հոդված V, մաս 1),

– ՀՀ կրթական համակարգի շրջանակներում և ՀՀ սահմանադրական, օրենսդրական և կարգավորող դրույթներին համապատասխան՝ ձեռնարկել անհրաժեշտ և իրագործելի քայլեր փախստականների և տեղահանված անձանց՝ բարձրագույն կրթության մատչելիության, բարձրագույն կրթության ծրագրերով կրթությունը շարունակելու կամ աշխատանքի տեղավորման հնարավորություններ փնտրելու համապատասխան պահանջները բավարարելու հանգամանքի արդարացի և արդյունավետ գնահատման ողջամիտ ընթացակարգեր մշակելու համար, այդ թվում՝ այն դեպքերում, երբ մեկ այլ երկրում անցած մասնակի ուսումնառությունը, ստացած նախորդ ուսուցումը կամ որակավորումները չեն կարող ապացուցվել փաստաթղթային եղանակով (Հոդված VII),

– Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված որակավորումների և ուսուցման արդյունքների ամբողջական նկարագրության համար ստեղծել թափանցիկ համակարգեր (Հոդված VIII, մաս 1),

– ՀՀ բարձրագույն կրթության համակարգի նկատմամբ հավատն ու վստահությունը խթանելու նպատակով ՀՀ սահմանադրական, օրենսդրական և նորմատիվ կարգավիճակի և կառուցվածքի հիման վրա հնարավոր իրագործելի սահմաններում գործարկել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հաստատման, ճանաչման և որակի ապահովման օբյեկտիվ և հուսալի համակարգ (Հոդված VIII, մաս 2),

– ՀՀ բարձրագույն կրթության համակարգի վերաբերյալ համապատասխան, ճշգրիտ և թարմացված տեղեկությունների հասանելիությունն ապահովելու համար ստեղծել ազգային տեղեկատվական կենտրոն կամ համանման սուբյեկտներ և աջակցել դրանց (Հոդված VIII, մաս 3),

– տեղեկությունների հեշտ հասանելիությունն ապահովելու համար խրախուսել տեխնոլոգիաների կիրառումը (Հոդված VIII, մաս 4),

– անհրաժեշտության դեպքում ապահովել ՀՀ բարձրագույն կրթության համակարգերի, որակավորումների, որակի ապահովման և որակավորման շրջանակների վերաբերյալ պաշտոնական և ճշգրիտ տեղեկությունների հասանելիությունը, դյուրացնել այլ Կողմ պետությունների բարձրագույն կրթության համակարգերի, որակավորումների և բարձրագույն կրթության մատչելիությունն ապահովող որակավորումների վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների տարածումը և հասանելիության ապահովումը, անհրաժեշտության դեպքում տրամադրել խորհրդատվություն և տեղեկություններ ճանաչման հետ կապված հարցերի, այդ թվում՝ որակավորումների գնահատման չափորոշիչների և ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ օրենքներին, կարգավորումներին և քաղաքականություններին համապատասխան՝ ճանաչման ուղորտում առկա լավագույն գործելակերպերին առնչվող նյութերի մշակման վերաբերյալ, ապահովել ՀՀ բարձրագույն կրթության համակարգի մաս կազմող ցանկացած հաստատության և այդպիսի հաստատություններում իրականացվող ցանկացած ծրագրի վերաբերյալ պատշաճ տեղեկությունների ողջամիտ ժամկետում տրամադրումը (Հոդված VIII, մաս 5),

– ապահովել, որ ՀՀ կրթական համակարգի մաս կազմող հաստատությունները հնարավորության սահմաններում, հարցման հիման վրա, ողջամիտ ժամկետներում և անվճար հիմունքներով համապատասխան տեղեկություններ տրամադրեն որակավորում ունեցողին կամ այն Կողմ պետության հաստատությանը կամ ճանաչման հարցերով իրավասու մարմիններին, որտեղ հայցվում է ճանաչումը (Հոդված IX, մաս 2),

– ապահովել, որ ճանաչման նպատակով գնահատում իրականացնող մարմինը ներկայացնի դիմումի՝ պահանջներին անհամապատասխանության պատճառները և էական տարբերությունները (Հոդված IX, մաս 3),

– Կոնվենցիայի ավանդապահին ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչման հետ կապված հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնող իրավասու մարմինների վերաբերյալ պաշտոնական ծանուցումը (Հոդված X, մաս 1),

– Հայաստանի Հանրապետությունում ճանաչման հարցերով կենտրոնական իրավասու մարմինների առկայության դեպքում երաշխավորել նրանց համար Կոնվենցիայի դրույթների անմիջականորեն պարտադիր լինելը, ՀՀ իրավագործության սահմաններում Կոնվենցիայի դրույթների կիրարկումն ապահովելու համար նրանց կողմից անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելը (Հոդված X, մաս 2),

– ճանաչման հետ կապված հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասությունն առանձին բարձրագույն ուսումնական հաստատություններին կամ այլ սուբյեկտներին վերապահված լինելու դեպքում Կոնվեն-

ցիայի տեքստը փոխանցել այդ հաստատություններին կամ սուբյեկտներին և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ դրա դրույթների արդյունավետ դիտարկումը և կիրառումը խրախուսելու համար (Հոդված X, մաս 4),

– ՀՀ բարձրագույն ուսումնական տվյալ հաստատություն կամ այդ հաստատության կոնկրետ ծրագրով ընդունելության ընթացակարգերը մշակել այնպես, որ օտարերկրյա որակավորումների գնահատումն ապահովվի Կոնվենցիայի 3-րդ հոդվածում ներկայացված թափանցիկության, արդարացիության և խտրականության բացառման սկզբունքների համաձայն (Հոդված XI, մաս 4),

– Կողմ պետությունների միջկառավարական խորհրդատողովի քարտուղարությանը ծանուցել կիրարկումն ապահովող ՀՀ կառույցների կամ այդ առնչությամբ տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին, ինչպես նաև երաշխավորել, որ այդ կառույցները ստեղծեն ցանցեր և ակտիվ մասնակցություն ունենան դրանցում (Հոդված XIII, մասեր 2 և 3),

– խթանել Կոնվենցիայի և միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների, որոնց Կողմ է Հայաստանի Հանրապետությունը, միջև փոխօգնությունը (Հոդված XIX, մաս 2),

– ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաները, որոնց Կողմ է Հայաստանի Հանրապետությունը, մեկնաբանելիս և կիրառելիս, ինչպես նաև այլ միջազգային պարտավորություններ ստանձնելիս հաշվի առնել Կոնվենցիայի համապատասխան դրույթները (Հոդված XIX, մաս 2):

3. Կոնվենցիայով սահմանվում են նաև դրա կիրարկումն ապահովող ազգային կառույցների ցանցերի և միջկառավարական խորհրդատողովի ստեղծման կարգը և գործառույթները:

4. Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին քսաներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո, բայց միայն այն Կողմ պետությունների համար, որոնք վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ են հանձնել այդ օրը կամ մինչև այդ օրը (Հոդված XVIII, մաս 1):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրված՝ «Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին» համաշխարհային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳ-ԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

13 ապրիլի 2021 թվականի
ՍԴՈ-1589



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ
ԿԱՅՁՅՎԱԾ ՍԴՈ-1589 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2019 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրված՝ «Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին» համաշխարհային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԴՈ-1589 որոշմամբ (հրապարակվել է 16.04.2021 թվականին) որոշել է.

«1. 2019 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրված «Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին» համաշխարհային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը: (...):»:

Համաձայն ջիներելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 13-ի ՍԴՈ-1589 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1589 որոշմամբ 2019 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրված՝ «Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին» համաշխարհային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ են համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեն համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է

դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը,

որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հատակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ

անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն` էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ` ստորագրող անձ)` ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ` ստուգման տվյալներ)` պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ` ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը` օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն` էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն` էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն` պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագրվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ սույն դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անվտիկելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ սույն դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ սույն դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

16 ապրիլի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021
122



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ
ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱՎ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԵՐԻ,
5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4.2-ՐԴ ԿԵՏԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 ապրիլի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչներ Ս. Գրիգորյանի, Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Հովակիմյանի և Ա. Ջուլիակյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 68-րդ հոդվածների՝

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 2(102)2021

առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ նաև Կանոնակարգ) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի մայիսի 18-ին:

Կանոնակարգի՝ «Սահմանադրության փոփոխությունների նախագծի քննարկման և ընդունման կարգը» վերտառությամբ 86-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է.

«2. Մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը քվեարկության է դրվում Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարանի դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը: Եթե որոշումն ընդունվում է, ապա Ազգային ժողովի նախագահը այդ որոշումը երկրորդ ընթերցմամբ քննարկված Սահմանադրության փոփոխությունների նախագծի հետ երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և ուղարկում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը Սահմանադրության անփոփոխելի հոդվածներին համապատասխանության տեսանկյունից գնահատելու համար, իսկ հարցի քննարկումն ընդհատվում է մինչև Սահմանադրական դատարանի որոշումը ստանալը»:

Կանոնակարգի վերոնշյալ դրույթը լրացվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-304-Ն սահմանադրական օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2020 թվականի հունիսի 3-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2020 թվականի հունիսի 24-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի հունիսի 25-ին, հետևյալ բառերով. «Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը Սահմանադրության անփոփոխելի հոդվածներին համապատասխանության տեսանկյունից գնահատելու համար» բառերով:

Կանոնակարգի 86-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է.

«7. Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները մեկ շաբաթվա ընթացքում հրապարակում է»:

Կանոնակարգի 86-րդ հոդվածի 7-րդ մասը փոփոխվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրա-

ցումներ կատարելու մասին» ՀՕ-309-Ն սահմանադրական օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2020 թվականի հունիսի 22-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2020 թվականի հունիսի 24-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի հունիսի 25-ին:

Կանոնակարգի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետով սահմանված է.

«Ազգային ժողովի նախագահը՝ Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում հրապարակում է Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները»:

Սույն դրույթը Կանոնակարգում լրացվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-309-Ն սահմանադրական օրենքով:

Գործի քննության առիթը Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, դիմողի և պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերաբերելի իրավադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումը

Դիմողը գտնում է, որ Սահմանադրությունը նախատեսում է իմպերատիվ (այլ ոչ՝ դիսպոզիտիվ) կարգավորումներ՝ մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ընդունելը Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ:

Կանոնակարգի 86-րդ հոդվածն այն իմաստով, որ սահմանում է Սահմանադրական դատարան դիմելու Ազգային ժողովի հայեցողական լիազորությունը, «սկնհայտորեն հակասության մեջ է գտնվում Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև 169-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, քանի որ վերջիններս նախատեսում են Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ պարտադիր դրույթներ, մինչդեռ Ազգային ժողովի կանոնակարգի նշյալ դրույթը նախատեսում է Ազգային ժողովի կողմից այդ հարցով առանձին որոշման ընդունում: Այսինքն, Ազգային ժողովի կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է Սահմանադրությանը, քանի որ խախտում է դրանում տեղ գտած պահանջի իմպերատիվությունը»:

Դիմողը գտնում է նաև, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասն իշխանության մի ճյուղին՝ օրենսդիր մարմնին, հնարավորություն է տալիս քվեարկության դնել իշխա-

նության մյուս ճյուղին և իրեն հակակշռող մարմնին դիմելու հարցը, այսինքն՝ հայեցողություն սահմանում Ազգային ժողովի համար, ինչը բնականաբար հակառակվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին և, ըստ այդմ, հակասում նաև Սահմանադրության 4-րդ հոդվածին»:

Ամփոփելով այս առնչությամբ իր փաստարկները՝ դիմողը գտնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այն իմաստով, որ սահմանում է Սահմանադրական դատարանի դիմելու Ազգային ժողովի հայեցողական իրավունքը (Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարանի դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության դնելը), հակասում է Սահմանադրության 4-րդ և 5-րդ հոդվածներին, 168-րդ հոդվածի 2-րդ կետին և 169-րդ հոդվածի 2-րդ մասին ու հակասահմանադրական է»:

Կանոնակարգի 86-րդ հոդվածի 7-րդ մասի և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի սահմանադրականության վերաբերյալ դիմողը նշում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 7-րդ մասով 2020 թվականի հունիսի 22-ի գործող խմբագրությամբ սահմանվում էր հետևյալը. «Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները մեկ շաբաթվա ընթացքում ուղարկում է Հանրապետության նախագահին, որն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն», մինչդեռ վիճարկվող խմբագրությամբ նույն դրույթը սահմանում է. «Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները մեկ շաբաթվա ընթացքում հրապարակում է»:

Ըստ դիմողի՝ նշված փոփոխությունը գրկել է Հանրապետության նախագահին Սահմանադրության փոփոխությունները ստորագրելու և հրապարակելու լիազորությունից:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը գտնում է, որ Կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն պատճառաբանությամբ, որ նախ՝ 2020 թվականի հունիսի 22-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ Սահմանադրության փոփոխությունների՝ (այսուհետ՝ Սահմանադրության 2020 թվականի փոփոխություններ) Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար Ազգային ժողովը չէր կարող դիմել Սահմանադրական դատարան, քանի որ փոփոխությունների ընդունման պահին Սահմանադրական դատարանի գործող ինը դատավորներից (անդամներից) յոթին Սահմանադրության փոփոխությունները վերաբերում էին անմի-

ջականորեն: Պատասխանողը նաև շեշտում է, որ Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով չի նախատեսվում իմպերատիվ պահանջ՝ մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը երկրորդ ընթերցմամբ ընդունելը դիմել Սահմանադրական դատարան վերջինիս կողմից նախագծի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

Ըստ պատասխանողի՝ Սահմանադրության 168-րդ հոդվածում Սահմանադրական դատարանի լիազորությունները շարադրելիս առհասարակ չեն օգտագործվում «կարող է», «կարելի է» և այլ բառեր, անգամ այն դեպքում, երբ դիմող սուբյեկտն ունի հայեցողական լիազորություն դիմել կամ չդիմել Սահմանադրական դատարան, օրինակ՝ 168-րդ հոդվածի 1-ին կետում նշված օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու դեպքում: Սահմանադրության 169-րդ հոդվածի առնչությամբ պատասխանողը գտնում է, որ այն առհասարակ չի կարգավորում որևէ սուբյեկտի դիմելու լիազորության իմպերատիվ կամ դիսպոզիտիվ բնույթը, փոխարենը նշված հոդվածի նպատակը սահմանափակվում է բացառապես դիմող սուբյեկտների դիմելու լիազորության ամրագրմամբ՝ չանդրադառնալով դրանց իմպերատիվությանը կամ դիսպոզիտիվությանը: Պատասխանողը նաև ընդգծում է, որ եթե նույնիսկ ընդունելի լինի այն, որ դիմելու լիազորության իմպերատիվությունը կամ դիսպոզիտիվությունը ներառված է տվյալ հոդվածի կարգավորման տիրույթի մեջ, ապա ո՛չ իմպերատիվության, ո՛չ դիսպոզիտիվության ամրագրում կատարված չէ սահմանադրի կողմից, մասնավորապես՝ 169-րդ հոդվածի 2-րդ մասով, նշված մասի կարգավորման առարկայից առհասարակ դուրս է այն հարցը, թե արդյոք Ազգային ժողովը պարտավոր է դիմել Սահմանադրական դատարան բոլոր այն դեպքերում, երբ ընդունում է Սահմանադրական փոփոխություններ: Սահմանադրության 169-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից բխում է միայն, որ 168-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված՝ Սահմանադրական դատարանի լիազորության իրականացման առիթ հանդիսացող դիմումը պետք է ներկայացվի Ազգային ժողովի կողմից:

Կանոնակարգի 86-րդ հոդվածի 7-րդ մասի և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի սահմանադրականության վերաբերյալ պատասխանողը գտնում է, որ դիմողի այն դիրքորոշումը, որ Հանրապետության նախագահը գրկվել է լիազորությունից, անհիմն է, քանի որ Հանրապետության նախագահը նման լիազորություն չի էլ ունեցել: Սահմանադրության որևէ հոդվածով ամրագրված չէ Հանրապետության նախագահի կողմից Ազգային ժողովի ընդունված Սահմանադրության փոփոխությունների ստորագրման և հրապարակման լիազորություն: Որպես այդպիսի լիազորություն չի կարող ընկալվել Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ Հանրապետության

նախագահի՝ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքը ստորագրելու և հրապարակելու լիազորությունը, քանի որ այս դեպքում խոսքը օրենքների և ոչ Սահմանադրության փոփոխության մասին է:

3. Գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

3.1. 2020 թվականի հունիսի 19-ին պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ շրջանառության մեջ է դրվել Սահմանադրության փոփոխությունների նախագիծ, որը 2020 թվականի հունիսի 22-ին ընդգրկվել է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգ: Ազգային ժողովն այս նախագիծը քննարկել, քվեարկել և ընդունել է առաջին ընթերցմամբ, ապա քննարկել երկրորդ ընթերցմամբ, այնուհետև քվեարկության է դրվել այդ հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը, որը քվեարկության արդյունքներով չի ընդունվել: Դրանից հետո երկրորդ ընթերցմամբ քննարկված Սահմանադրության փոփոխությունների նախագիծը դրվել է քվեարկության և ընդունվել:

3.2. 2020 թվականի հունիսի 22-ին Ազգային ժողովում քվեարկության է դրվել նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծը, որը նույնպես ընդունվել է: «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-309-Ն սահմանադրական օրենքով փոփոխվել է Կանոնակարգի 86-րդ հոդվածի 7-րդ մասը և լրացվել 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետը: «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-309-Ն սահմանադրական օրենքը ստորագրվել է 2020 թվականի հունիսի 24-ին:

3.3. Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունները Ազգային ժողովի նախագահի կողմից հրապարակվել են 2020 թվականի հունիսի 25-ին:

3.4. Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 11-ի ՍԴԱՈ-27 աշխատակարգային որոշմամբ *Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից իր լիազորությունների իրականացման, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ* գործի վարույթը ներքոնշյալ պահանջների մասով կարճվել է.

«3.1. ճանաչել և հայտարարել, որ Ազգային ժողովը դուրս է եկել իր սահմանադրական լիազորությունների շրջանակից և խախտել Սահմանադրությունը, երբ Սահմանադրության 2020թ. հունիսի 22-ի փոփոխությունները մինչև երկրորդ ընթերցում չի ուղարկել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով և ընդունել դրանք երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ առանց Սահմանադրական դատարանի եզրակացության:

3.2. ճանաչել և հայտարարել, որ Ազգային ժողովը դուրս է եկել իր սահմանադրական լիազորությունների շրջանակից և խախտել Սահմանադրությունը, երբ փոփոխության է ենթարկել Սահմանադրության 213-րդ հոդվածի բովանդակությունն այնպես, որ այդ փոփոխությամբ ըստ էության փոփոխության են ենթարկվել Սահմանադրության 7-րդ գլխի կարգավորման ներքո գտնվող դրույթները:

3.3. ճանաչել Սահմանադրությանը հակասող Ազգային ժողովի կողմից 2020թ. հունիսի 22-ին ընդունված Սահմանադրության փոփոխությունների ընդունման ընթացքում մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը Սահմանադրության փոփոխությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան չդիմելն ու առանց Սահմանադրական դատարանի որոշման Սահմանադրության փոփոխությունների նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը, իսկ Սահմանադրության 2020թ. հունիսի 22-ի ընդունված փոփոխությունները՝ ամբողջությամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

3.5. ճանաչել և հայտարարել, որ Ազգային ժողովը և Հանրապետության նախագահը դուրս են եկել իրենց սահմանադրական լիազորությունների շրջանակից և խախտել Սահմանադրությունը, երբ, ընդունելով և ստորագրելով Ազգային ժողովի կանոնակարգի փոփոխությունները, զրկել են Հանրապետության նախագահին Սահմանադրության փոփոխություններն ստորագրելու և հրապարակելու լիազորությունից»:

4. Գործի համար էական նշանակություն ունեցող հարցադրումները

4.1. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման համար Սահմանադրական դատարանը կարևորում է հետևյալ հարցադրումները:

1. արդյո՞ք Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ենթակա է պարտադիր նախնական սահմանադրական վերահսկողության և, արդյո՞ք Ազգային ժողովի կողմից Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 2(102)2021

Սահմանադրական դատարանն ղիմելու մասին որոշման ընդունումը նշված գործընթացն ապահովելու առումով անհրաժեշտ և արդյունավետ միակ իրավական ընթացակարգն է:

2. Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության փոփոխությունների՝ ստորագրման և հրապարակման կառուցակարգ չնախատեսելը համահունչ է արդյոք Հանրապետության նախագահին Սահմանադրությամբ վերապահված լիազորություններին:

4.2. Սահմանադրական դատարանը սույն գործը քննության է առնում **վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում**՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Դիմողի կողմից, ըստ էության, վիճարկվում է Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուն ուղղված՝ Կանոնակարգի համապատասխան ընթացակարգային դրույթների սահմանադրականությունը: Հաշվի առնելով վիճարկվող դրույթների ուղղակի առնչությունը Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության վերահսկողության ինստիտուտին՝ նախքան դրանց սահմանադրականության գնահատումը Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծել Սահմանադրությունում փոփոխություններ ընդունելուն ուղղված կարգավորումները:

Մինչև Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների ուժի մեջ մտնելը Սահմանադրության նորմերի ցանկացած փոփոխություն ընդունվում էր բացառապես համապետական հանրաքվեի միջոցով: 2015 թվականի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հոդվածներում փոփոխություններ ընդունելու լիազորություն ունի նաև Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Սահմանադրության կայունությունը ժամանակակից սահմանադրական համակարգերի կարևորագույն հատկանիշներից է, որը նաև սահմանադրականության ամրապնդման ու զարգացման կարևոր գրավական է: Ընդ որում, Սահմանադրության կայունությունն ապահովվում է Սահմանադրության հիմքում ընկած հիմնարար սկզբունքների ու արժեքների անփոփոխությունն ապահովող նորմերի կայունությամբ՝ անկախ Սահմանադրության տեստում փոփոխությունների կատարման հաճախականությունից:

Սահմանադրության հիմքում ընկած հիմնարար սկզբունքների ու արժեքների արդյունավետ պահպանության և պաշտպանության նկատառում-

ներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անկախ Սահմանադրության տեքստի փոփոխությունների ծավալից, փոփոխության իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակից, զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններում Սահմանադրության՝ որպես հիմնարար կարգավորչի դիմամիկ կայունությունը հնարավոր է ապահովել դրա նորմերի աստիճանակարգության կանոնների պահպանմամբ:

5.2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Սահմանադրությամբ ամրագրված դրույթներն ըստ դրանց ընդունող սուբյեկտների իրավասության դասակարգել հետևյալ խմբերի.

ա) Սահմանադրության նախաբանը, 1-3-րդ և 203-րդ հոդվածները՝ որպես Սահմանադրության անփոփոխելի դրույթներ,

բ) Սահմանադրության՝ միայն հանրաքվեի միջոցով փոփոխվող դրույթները՝ որպես Հայաստանի Հանրապետության ժողովրդի բացառիկ իրավագործության ներքո գտնվող սահմանադրական դրույթներ, որոնք թվարկված են Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասում,

գ) Սահմանադրության՝ նաև Ազգային ժողովի կողմից փոփոխվող դրույթներ:

Սահմանադրական դրույթների փոփոխման կարգերի տարբերակման նպատակներն են ապահովել Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ հայ ժողովրդի սահմանած անփոփոխ դրույթներում ամրագրված արժեքների և սկզբունքների գերակայությունը, Սահմանադրության ներքին կայունությունը, Սահմանադրության դրույթների մեկնաբանությունների կանխատեսելիությունը, հնարավոր ներքին կոլիզիաների կանխումը, իսկ դրանց բացահայտման դեպքում՝ լուծումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության անփոփոխելի դրույթներն այն հիմնարար և կենտրոնական առանցքն են, որի հիման վրա և շուրջ ձևավորվել և զարգանալու է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը:

5.3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության անփոփոխելի դրույթներով նախատեսված սկզբունքների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական որակների, ժողովրդի՝ որպես Հայաստանի Հանրապետությունում իշխանության բացառիկ և միակ սուբյեկտի կարգավիճակի, մարդու՝ որպես բարձրագույն արժեքի սահմանադրաիրավական բովանդակության, և Սահմանադրության փոփոխություններն ընդունելու հարաբերությունները կարգավորող հատուկ նորմի՝ 202-րդ հոդվածի դրույթների համալիր վերլուծությունից բխում է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը պետք է համապատասխանի՝

ա) Սահմանադրության փոփոխություններն Ազգային ժողովի կողմից ընդունվելու դեպքում՝ Սահմանադրության անփոփոխելի դրույթներին, Սահմանադրության՝ միայն հանրաքվեի միջոցով փոփոխվող դրույթներին և Սահմանադրության այն դրույթներին, որոնք այդ նախագծով չեն փոփոխվում,

բ) Սահմանադրության փոփոխությունները հանրաքվեի միջոցով ընդունվելու դեպքում՝ Սահմանադրության անփոփոխելի դրույթներին և Սահմանադրության միայն հանրաքվեի միջոցով փոփոխվող այն դրույթներին, որոնք այդ նախագծով չեն փոփոխվում:

5.4. Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք Սահմանադրությամբ նախատեսված Սահմանադրության փոփոխությունների նախագծի նախնական սահմանադրական վերահսկողությունը կրում է պարտադիր բնույթ:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն ունեցող սուբյեկտը նշված է Սահմանադրության 169-րդ հոդվածի 2-րդ մասում՝ ի դեմս Ազգային ժողովի: Որևէ այլ պետական մարմին Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության որոշման հարցով Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն չունի:

Սահմանադրության՝ Սահմանադրական դատարանի լիազորությունները (168-րդ հոդված) և Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկը սահմանող (169-րդ հոդված) հոդվածներով, ի թիվս այլնի, նախատեսված է. «Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝ մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը» (168-րդ հոդվածի 2-րդ կետ), և «Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմում է Ազգային ժողովը՝ Սահմանադրության փոփոխությանը (...) վերաբերող հարցերով» (169-րդ հոդվածի 2-րդ մաս):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծերի նկատմամբ նախնական վերահսկողություն իրականացնելու նպատակներն են՝

ա) Սահմանադրության գերակայության ապահովման նպատակներից ելնելով՝ կանխել Սահմանադրության փոփոխությունների արդյունքում Սահմանադրության տեքստում հնարավոր ներքին կոլիզիաների առաջացումը,

բ) Սահմանադրության գերակայության նպատակին հասնելու համար Սահմանադրական դատարանի՝ որպես սահմանադրականության անկախ և

անկողմնակալ պահապանի դիրքորոշմամբ կանխել Սահմանադրության՝ հատվածական շահերի սպասարկման նպատակով կատարվող փոփոխությունները, որոնք հակասության մեջ կարող են լինել Սահմանադրությամբ ամրագրված արժեքների և սկզբունքների հետ,

զ) հնարավորություն ընձեռել Ազգային ժողովի պատգամավորներին և Սահմանադրության փոփոխությունը հանրաքվեով ընդունվելու դեպքում՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիներին Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ տեղեկացված որոշում կայացնել:

Անդրադառնալով Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության վերահսկողության վերաբերյալ դիմողի և պատասխանողի դիրքորոշումներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ի տարբերություն Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքերի, որոնց առնչությամբ սահմանադիրը գործածել է *«կարող են դիմել»* ձևակերպումը, նույն հոդվածի 2-րդ մասում գործածված *«դիմում է»* եզրույթը պետք է հասկանալ ոչ թե Սահմանադրական դատարան դիմելու հայեցողության, այլ պարտականության իմաստով: Ուստի Սահմանադրության 168 և 169-րդ հոդվածների բովանդակությունից և սահմանադրի կողմից կիրառված իրավական ձևակերպումներից բխում է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ենթակա է պարտադիր նախնական վերահսկողության:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության ստուգումը Սահմանադրությամբ նախատեսված կանոն է, որին հետևելը սահմանադրական կարգի կայունության երաշխիք է, հնարավորություն է ընձեռում կանխել Սահմանադրության հիմքում ընկած սկզբունքներին և արժեքներին հակասող նորմերի ընդունումը և կարող է ծառայել որպես արդյունավետ միջոց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու և Ազգային ժողովի կողմից Սահմանադրության փոփոխություն ընդունելիս տեղեկացված և հիմնավոր որոշում կայացնելու համար:

5.5. Ազգային ժողովի՝ որպես սահմանադիր հանդես գալու վերաբերյալ դրույթներն արտացոլված են Սահմանադրության 202-րդ հոդվածում, իսկ մանրամասները սահմանված են Կանոնակարգի 84-86-րդ հոդվածներում:

Անդրադառնալով Կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված նորմին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն կանոնակարգում է Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարան դիմելու ընթացակարգային հարաբերությունները, որի շրջանակներում, ըստ էության,

ի կիրարկումն Սահմանադրության 169-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը սահմանող նորմերի, նախատեսված է, որ մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը քվեարկության է դրվում Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը: Ըստ այդմ, Կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է նշված հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման նախագիծը քվեարկության դնելու ոչ թե հայեցողություն, այլ պարտականություն:

Սահմանադրության 103-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ Սահմանադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ: Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Ազգային ժողովի որոշումները, ինչպես նաև Ազգային ժողովի այլ ակտերը (օրենքներ, հայտարարություններ, ուղերձներ), բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության 103-րդ հոդվածը կոչված է ապահովելու Ազգային ժողովի՝ որպես օրենսդիր և ժողովրդի ներկայացուցչական մարմնի, սահմանադրական առաքելությամբ պայմանավորված լիազորությունների արդյունավետ իրականացումը: Յուրաքանչյուր պետական մարմնի լիազորության իրացումն ստանում է իր արտաքին դրսևորումը, որը, որպես կանոն, ավարտվում է համապատասխան ձև ունեցող իրավական փաստաթղթի ընդունմամբ: Սահմանադիրը, կախված պետական մարմնի իրավասությունից, նախատեսում է համապատասխան իրավական ակտերի ընդունման հնարավորություն: Այդ համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադիրը նախատեսել է Ազգային ժողովի կողմից ընդունվող երկու խումբ որոշումներ՝ Սահմանադրությամբ կոնկրետ նախատեսված դեպքերում Ազգային ժողովի կողմից ընդունվող որոշումներ և Ազգային ժողովի գործունեության կազմակերպման հարցերով ընդունվող որոշումներ: Առաջին խումբ որոշումների թվին են դասվում, օրինակ՝ Սահմանադրության 115-րդ հոդվածով, 118-րդ հոդվածով, 202-րդ հոդվածով, 205-րդ հոդվածով նախատեսված որոշումները: Ազգային ժողովի գործունեության կազմակերպման հարցերով ևս Սահմանադրությունը նախատեսում է որոշումների ընդունում, սակայն այդ գործունեության կազմակերպման համատեքստում ընդունման ենթակա որոշումներն ամրա-

գրված են Կանոնակարգով: Վերջինիս 97-րդ հոդվածի 1-ին մասում արտացոլված է Սահմանադրության 103-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, իսկ 2-րդ մասին համապատասխան՝ Ազգային ժողովի աշխատակարգը, ինչպես նաև Ազգային ժողովի գործունեության կազմակերպման հարցերով այլ որոշումներն ընդունվում են Կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով: Նման որոշումների թվին են դասվում, օրինակ՝ Կանոնակարգի 36-րդ հոդվածի 4-րդ մասով, 37-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որոշումները:

Ի կատարումն Սահմանադրության 103-րդ հոդվածի՝ Կանոնակարգով սահմանված են նաև Ազգային ժողովի ուղերձների և հայտարարությունների բնույթը, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից օրենքների, որոշումների, ուղերձների և հայտարարությունների նախագծերը ներկայացնելու, դրանք շրջանառության մեջ դնելու, քննարկելու և ընդունելու կարգը:

Վերոնշյալի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ազգային ժողովի լիազորությունների իրացման համար Սահմանադրության 103-րդ հոդվածում թվարկված են Ազգային ժողովի կողմից ընդունվող ակտերը, որոնց առնչվող մանրամասները սահմանված են Կանոնակարգով: Սահմանադրության 103-րդ հոդվածով ամրագրված կառուցակարգերից գատ որևէ այլ ձևով Ազգային ժողովը չի կարող իրացնել իր իրավասությունը՝ հիմք ընդունելով Սահմանադրության 103-րդ հոդվածը և Սահմանադրության 6-րդ հոդվածը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումն ուղղված է Ազգային ժողովի՝ Սահմանադրական դատարան դիմելու լիազորության իրացման գործընթացը կազմակերպելուն: Հատկանշական է, որ Կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշումն ընդունելու դեպքում Ազգային ժողովի նախագահն այդ որոշումը երկրորդ ընթերցմամբ քննարկված Սահմանադրության փոփոխությունների նախագծի հետ երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և ուղարկում է Սահմանադրական դատարան:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը փաստում է, որ Ազգային ժողովի՝ որպես կոլեգիալ մարմնի համար իր լիազորությունների շրջանակներում և դրանց իրացմանն ուղղված գործընթացը կազմակերպելու առնչությամբ Սահմանադրությամբ սահմանված ձայների մեծամասնությամբ որոշումներ ընդունելուց գատ, որևէ այլ կառուցակարգ սահմանված չէ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնակարգումը վերաբերում է Սահմանադրական դատարան դիմելու Ազգային ժողովի լիազորության իրացման ընթացակարգին, որի շրջանակներում Ազգային ժողովի որոշման տեսքով ձևակերպվում է Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը: Նույն ընթացակարգով է գործում նաև Կառավարությունը՝ ի կատարումն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների, համաձայն որոնց՝ մինչև միջազգային պայմանագրի վավերացումը Սահմանադրական դատարանը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, և այս դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը: Կառավարությունը և ս Սահմանադրական դատարան դիմում է համապատասխան որոշում ընդունելու միջոցով: Ուստի օրենսդրի կողմից Սահմանադրական դատարան դիմելիս համապատասխան որոշում ընդունելը Սահմանադրությամբ նախատեսված լիազորության իրացման ընթացակարգային փուլ է:

Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի կողմից վիճարկվող՝ Կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնակարգումները համահունչ են Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթներին:

5.6. Կանոնակարգի 86-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դրանով կարգավորվում են բոլոր այն հնարավոր իրավիճակները, որոնք կարող են արձանագրվել Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունման ընթացքում: Մասնավորապես, դրանով կանխատեսվում են այնպիսի իրավիճակներ, երբ՝

- ա) Սահմանադրական դատարանը Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը հակասող,
- բ) Սահմանադրական դատարանը Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող, և Ազգային ժողովը նախագիծն ընդունում է կամ չի ընդունում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ Կանոնակարգում Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման չընդունման հետևանքների հստակեցումն օրենսդրական մակարդակում կբացառի հիշյալ հարցի առնչությամբ հնարավոր տարրնկալումները:

5.7. Թեպետ սույն գործով դիմումի քննության առարկա մասը քննվում է վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում, որի պայմաններում ստուգվում է դիմողի կողմից վիճարկվող նորմերի համապա-

տասխանությունը Սահմանադրությանը՝ անկախ կոնկրետ իրավիճակներում տվյալ նորմերի կիրառման կամ կիրառման հավանականության, ինչպես նաև կիրառման իրավաչափության հանգամանքից, Սահմանադրական դատարանը հատուկ կարևորություն է տալիս այն իրողությանը, որ սույն գործով դիմողն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդն է, և դիմումի բովանդակությունը հիմնականում վերաբերում է Սահմանադրության 213-րդ հոդվածի՝ 2020 թվականի փոփոխությունների նախագիծը Սահմանադրական դատարան չուղարկելուն:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի փետրվարի 11-ի ՍԴԱՌ-27 աշխատակարգային որոշմամբ արդեն անդրադարձել է սույն գործով դիմումի նշված հատվածին: Այդուհանդերձ, խորհրդարանական հանրապետությունում ընդդիմության հանդեպ հարգանքը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կազմավորման և համալրման սահմանադրականության վերաբերյալ բարձրացվող հարցերի զգայուն բովանդակությունն ընդգծում են Սահմանադրական դատարանի կողմից բարձրացված հարցերին անդրադառնալու կարևորությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծերի պարտադիր նախնական սահմանադրական վերահսկողության ինստիտուտը բնորոշ է երիտասարդ ժողովրդավարություններին: Համեմատական սահմանադրական իրավունքի հետազոտություններում Սահմանադրության փոփոխությունների նախագծի պարտադիր նախնական վերահսկողությունը սահմանադրական արդարադատության աստիճանների հազվադեպ հանդիպող լիազորություններից է («Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով, «Սահմանադրական փոփոխությունների մասին» CDL-AD(2010)001 2010 թվականի հունվարի 19-ի զեկույց, 194-196-րդ կետեր), որը բնորոշ է համեմատաբար երիտասարդ ժողովրդավարություններին (մասնավորապես՝ Ուկրաինա, Դրոզդատան, Մոլդովա):

Սահմանադրության փոփոխությունների նախագծի պարտադիր *ex ante* վերահսկողության ինստիտուտը ոչ միայն նորություն է Հայաստանի սահմանադրական իրավունքում, այլ նաև գործնական կիրառության առումով սահմանադրական փոփոխությունների նախագծերի ոչ պարտադիր ստուգման ինստիտուտի համեմատ խորությամբ չուսումնասիրված: Համեմատական սահմանադրական իրավունքի միջազգային փորձագիտական մակարդակում վերհանված են այս ինստիտուտի միայն որոշ խնդրահարույց կողմեր, միաժամանակ, արձանագրված է, որ գործնական կիրառության ընթացքում չեն բացառվում նաև ժողովրդավարական գործընթացների համար այլ խնդրահարույց հանգամանքներ («Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրո-

պական հանձնաժողովի «Սահմանադրական փոփոխությունների մասին» CDL-AD(2010)001 2010 թվականի հունվարի 19-ի զեկույց, 195-րդ կետ և «Ալբանիայի դատական իշխանության վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների նախագծի մասին» CDL-AD(2015)045 միջանկյալ զեկույց, 20-21-րդ կետեր):

Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով նշված մտահոգությունները, արձանագրում է, որ սահմանադրականության պահպանման և ամրապնդման առնչությամբ սույն որոշման 5.4-րդ կետում նշված բարենպաստ ազդեցությունից բացի Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական ստուգման խնդրահարույց կողմն այս կառուցակարգը նախատեսող կանոնի խստությունն է, եթե այն օժտված չէ այս ինստիտուտի հիմնադրման նպատակի իրականացման խոչընդոտները հաղթահարելու անհրաժեշտ ճկունությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողությունը սահմանված է Սահմանադրությամբ, Սահմանադրական դատարանն այս կանոնը համարում է պարտադիր կատարման ենթակա, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ կանոնի կիրառումը կարող է հանգեցնել Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության ինստիտուտի ներդրման նպատակներին հակառակ արդյունքի:

5.8. Այն իրավիճակում, երբ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության նպատակին այդ ինստիտուտի կիրառմամբ հնարավոր չէ հասնել, նշված սահմանադրական կանոնից հնարավոր է ողջամիտ բացառություն, որը բացառիկ միջոց է և կիրառելի է միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի կողմից նախագծի սահմանադրականության ստուգումը սահմանադրական արդարադատության առանցքային ընթացակարգային երաշխիքների և սկզբունքների պահպանմամբ անհնար է:

Միաժամանակ, Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության կանոնից որևէ բացառություն չի կարող համարվել ողջամիտ, եթե ստուգման ենթակա նախագիծը վերաբերում է Սահմանադրական դատարանի դատավորներից բացի այլ անձանց իրավունքներին և ազատություններին: Այս դեպքում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրականության պարտադիր նախնական ստուգման չենթարկելը չի կարող գնահատվել որպես ողջամիտ բացառություն՝ անկախ Սահմանադրական դատարանի դատավորների՝ նախագծի սահմա-

նադրականության ստուգման առնչությամբ շահերի փաստացի կամ հնարավոր բախման իրավիճակում գտնվելու հանգամանքից:

Հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանում քննության ընդունվող գործերի գերակշիռ մասը վերաբերում է իրավական նորմերի սահմանադրականության ստուգմանը. այդ նորմերը հնարավոր է վերաբերեն նաև Սահմանադրական դատարանի դատավորներին: Այդուհանդերձ, ստուգվող նորմերի՝ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերին վերաբերելիությունը բավարար հիմք չէ Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության իրականացման համար դատարանի ունակության և իրավագործության բացակայության (*non liquet*) մասին եզրահանգման համար: Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական վերահսկողության համար Սահմանադրական դատարանի ունակության և իրավագործության բացակայությունն իրավիճակ է, երբ ստուգման ենթակա նախագիծն առնչվում է բացառապես Սահմանադրական դատարանի գործող դատավորների (անդամների) շահերին, որոնց կողմից տվյալ գործին մասնակցության անհնարինության պայմաններում Սահմանադրական դատարանի նիստը չի կարող իրավագործ լինել: Այս իրավիճակի նկատմամբ «ողջամիտ բացառության» կանոնը կարող է կիրառվել այն նպատակով, որ չխոչընդոտվի սահմանադրի ինքնիշխան կամքի իրագործումը՝ Սահմանադրության փոփոխություններ ընդունելու իրավասության իրացմամբ:

Հակառակ պարագայում Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր վերահսկողության լիազորության իրականացման դեպքում ողջամիտ բացառության անտեսումն ի գորու է ոչ միայն վտանգել Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության՝ վերը թվարկված նպատակները, այլ նաև հարուցել իրավիճակ, երբ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերի և սահմանադրի՝ տվյալ նախագծի ընդունմամբ հետապնդվող շահի միջև բախումը կարող է հանգեցնել սահմանադրի (Հայաստանի Հանրապետության ժողովրդի կամ Ազգային ժողովի) Սահմանադրության փոփոխություններ ընդունելու իրավասության սահմանափակման՝ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերը վեր դասելով սահմանադրի ինքնիշխան կամքի արտահայտման բարձր հանրային շահից: Սահմանադրական դատարանը Սահմանադրության գերակայության դիտանկյունից այսպիսի իրողությունն անհանդուրժելի է համարում:

5.9. Անդրադառնալով դիմողի վկայակոչած կոնկրետ հանգամանքներին՝ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Սահմանադրության

2020 թվականի փոփոխությունների նախագիծը երկրորդ ընթերցմամբ քննարկվելուց հետո Ազգային ժողովում քվեարկության է դրվել Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարանի դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ, որը չի ընդունվել, ինչից հետո Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ: Վերջին հանգամանքը պատասխանողը, ի թիվս այլնի, հիմնավորում է նրանով, որ Սահմանադրության փոփոխությունների ընդունման պահին Սահմանադրական դատարանի գործող ինը դատավորներից (անդամներից) յոթին Սահմանադրության փոփոխությունները վերաբերում էին անմիջականորեն:

Սահմանադրության փոփոխությունների հիշյալ նախագծով նախատեսված էր Սահմանադրական դատարանի պաշտոնավարող անդամների պաշտոնավարման ժամկետների կրճատում մինչև Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 12 տարի ժամկետը և Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման դադարում: Նախագծի ընդունմամբ Սահմանադրության 213-րդ հոդվածի կիրառման արդյունքում Սահմանադրական դատարանի՝ մինչև 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված 3 անդամների լիազորությունների ժամկետը համարվել է ավարտված, և պաշտոնավարումը դադարել է, Սահմանադրական դատարանի 4 անդամների պաշտոնավարման ժամկետները կրճատվել են, Սահմանադրական դատարանի՝ Ազգային ժողովի կողմից նշանակված նախագահի պաշտոնավարումը դադարել է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության հիշյալ փոփոխությունները Սահմանադրական դատարանի վերոնշյալ 7 անդամներից բացի որևէ այլ անձի չեն վերաբերել և որևէ այլ անձի համար ուղղակի իրավական հետևանք չեն առաջացրել:

Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների նախագծի հիմնավորումներում դրա հեղինակները նշել են. «... դատարանի ներկայիս կազմի պահպանման դեպքում 2015 թվականի Սահմանադրությամբ ընտրված դատավորների և մինչ այդ նշանակված անդամների պաշտոնավարման ժամկետների միջև առկա է էական տարբերություն: ... Սահմանադրության փոփոխությունների նախագծով սկսնկալվում է լուծել Սահմանադրական դատարանի կազմի սահմանադրականության և դրա նկատմամբ հանրային վստահության բացակայության շուրջ առկա խնդիրները և երաշխավորել 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 7-րդ գլխի կանոններով նախատեսված՝ Սահմանադրական դատարանի ձևավորման մոդելի ամբողջական կիրառկումը: Արդյունքում կյանքի կկոչվեն 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ նախատես-

ված՝ Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության նոր մակարդակի ժողովրդավարական չափանիշները» (Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների նախագծի հիմնավորումներ):

Վերլուծելով կոնկրետ դեպքում Ազգային ժողովի՝ որպես սահմանադրի՝ Սահմանադրության անցումային դրույթներում կատարած փոփոխությունները և դրանց հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կատարված փոփոխությունները որևէ կերպ չեն միջամտել և փոփոխել Սահմանադրության անփոփոխելի դրույթների և այն դրույթների բովանդակությունը, որոնք ենթակա են փոփոխության բացառապես հանրաքվեով: Արդյունքում՝ 2020 թվականի Սահմանադրության փոփոխությամբ Ազգային ժողովն ամբողջ ծավալով կյանքի է կոչել Սահմանադրական դատարանի կազմավորման վերաբերյալ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝

ա) հավասարեցնելով Սահմանադրական դատարանի դատավորների կարգավիճակները և նրանց պաշտոնավարման ժամկետները (Սահմանադրության 213-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր),

բ) հնարավորություն ընձեռելով իրականացնել Սահմանադրական դատարանի կազմից Սահմանադրական դատարանի նախագահի ընտրությունը՝ որպես Սահմանադրական դատարանի անկախության օժանդակ երաշխիք (Սահմանադրության 213-րդ հոդվածի 4-րդ մաս),

գ) ապահովելով Սահմանադրությամբ նախատեսված Սահմանադրական դատարանի կազմի համալրմանը մասնակից բոլոր մարմինների ներգրավվածությունը՝ որպես Սահմանադրական դատարանի ժողովրդավարական լեգիտիմության բարձրացման գործոն:

Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխության կիրառմամբ Սահմանադրական դատարանը դուրս է եկել Սահմանադրության անցումային դրույթների գործողությունից, և Սահմանադրական դատարանի բոլոր դատավորների կարգավիճակի և պաշտոնավարման ժամկետի նկատմամբ կիրառելի են Սահմանադրության բացառապես 7-րդ գլխի կանոնները, որոնցում Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոփոխությունները կարող են ընդունվել բացառապես հանրաքվեով:

5.10. Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր վերահսկողության նպատակով սահմանադրական կանոնից բացառության ողջամտության գնահատման համար առաջնային նշանակություն ունի Սահմանադրական դատարանի կողմից նման վերահսկողության վարույթում սահմանադրական ընթացակարգային երաշխիքների և պահանջների պահպանման հնարավորության հարցը:

Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «... Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից ...»: Սահմանադրության 167-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: 2. Արդարադատություն իրականացնելիս Սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: 3. Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով»:

Սահմանադրական դատարանի դատավորի կողմից իր լիազորություններն իրականացնելիս անկողմնակալության սահմանադրական պահանջի ապահովման նպատակով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված են գործի քննությանը մասնակցելու անհնարինության դեպքերը, որոնցից է նաև դատավարության մասնակցի կամ նրա ներկայացուցչի նկատմամբ կանխակալ վերաբերմունքը: Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ ընդգծում է, որ քննարկվող իրավիճակի բացառիկությունը վկայող հանգամանք է այն, որ օրենսդրական կարգավորումներով նույնիսկ դատավարության կողմի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունենալը գործի քննությանը մասնակցելու անհնարինության հիմք համարելով՝ օրենսդիրը անհնարինության հիմք չի համարել Սահմանադրական դատարանի դատավորի՝ գործի ելքով ուղղակիորեն շահագրգռված լինելու հնարավորության հանգամանքը, այսինքն՝ իր գործով լինել դատավոր:

Սակայն օրենսդրի կողմից նման իրավիճակի կարգավորված չլինելը չի կարող ծառայել որպես թույլտվություն Սահմանադրական դատարանի դատավորի սահմանադրական առաքելության իրականացման ընթացքում շահերի այնպիսի հնարավոր բախումների կենտրոնում հայտնվելու համար, որը սասանում է սահմանադրական արդարադատության նկատմամբ հանրային վստահությունը՝ հանրության մոտ հիմնավոր կասկած հարուցելով սահմանադրական արդարադատությունը Սահմանադրական դատարանի դատավորների անհատական շահերին ծառայեցնելու մտահոգությամբ: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը շեշտում է, որ սահմանադրական արդարադատությունը չի կարող պայմանավորվել և կախվածության մեջ դրվել Սահմանադրական դատարանի դատավորների՝ քննության առարկա հարցի նկատմամբ անձնական վերաբերմունքից և գործի ելքով սուբյեկտիվ շահագրգռվածությունից, քանզի Սահմանադրական դատարանը, հանդես գալով որպես սահմանադրական արդարադատության մասնագիտացված և միակ մարմինը Հայաստանի Հանրապետությունում, սահմանափակված է բացա-

ռապես Սահմանադրությամբ և կոչված է երաշխավորելու Սահմանադրության գերակայությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է *«յինև ղ անաչառ և գերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խոտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտողի մոտ նման տպավորություն ստեղծելուց»*, իսկ նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ *«գոյլ չստալ շահերի բախում, բացառել ընտանեկան, հասարակական կամ այլ քնույթի հարաբերությունների՝ իր ի պաշտոնե լիազորությունների իրականացման վրա որևէ ազդեցություն»*: Այնուամենայնիվ, ունենալով անաչառության պահպանման և շահերի բախումից խուսափելու դատավորների համընդհանուր ճանաչում ունեցող պարտականություն՝ քննարկվող դեպքն այն իրավիճակն է, որտեղ շահերի բախումն օբյեկտիվորեն առաջանում էր Սահմանադրության 213-րդ հոդվածում փոփոխություններ կատարելիս սույն որոշմամբ թվարկված հանրային շահի և Սահմանադրական դատարանի անդամների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ նախատեսված ժամկետում պաշտոնավարելու հնարավոր նախընտրությունների և անձնական սպասելիքների միջև՝ վտանգելով Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնման և բնականոն իրագործման՝ սահմանադրի կամքի անխոչընդոտ իրականացումը:

5.11. Սահմանադրության 2020 թվականի փոփոխություններով Սահմանադրական դատարանի անկախության ինստիտուցիոնալ երաշխիքների ամրապնդման մասով Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել հետևյալը.

2018 թվականի ապրիլի 9-ից՝ Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելու պահից, Սահմանադրական դատարանում պաշտոնավարող բոլոր 8 անդամների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման սահմանադրական հիմքը եղել է Սահմանադրության 213-րդ հոդվածը, քանի որ այս հոդվածով էր նախատեսված մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամների և նախագահի պաշտոնավարումը:

Մինչև Սահմանադրության 213-րդ հոդվածի 2020 թվականի փոփոխությունը Սահմանադրական դատարանի՝ մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված անդամները շարունակել են պաշտոնավարել Սահմանադրության 213-րդ հոդվածի հիման վրա, այսինքն՝ Սահմանադրության այնպիսի դրույթի, որը դասվում էր Ազգային ժողովի կողմից փոփոխվող դրույթների շարքին: Այսինքն՝ Սահմանադրության 213-րդ հոդվածի հիմքով պաշտոնա-

վարող Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման սահմանադրական հիմքը նախատեսված էր Սահմանադրության այնպիսի հոդվածով, որը կարող էր փոփոխվել Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մինչև Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխությունը գործող Սահմանադրությամբ նախատեսված իրավակարգավորումը չէր կարող ապահովել Սահմանադրական դատարանի անհրաժեշտ անկախությունը քաղաքական իշխանությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման խորհրդարանական ձևի պայմաններում օրենսդիր և գործադիր իշխանությունները իրականացվում են նույն՝ Ազգային ժողովում մեծամասնություն ստացած քաղաքական ուժի ղեկավարությամբ: Այս պայմաններում Սահմանադրական դատարանը՝ որպես սահմանադրական ժողովրդավարության համար անհրաժեշտ օրենսդիր և գործադիր իշխանությունների սահմանադրական հակակշիռ, ուներ ինստիտուցիոնալ, ներառյալ՝ կազմավորման, արտաքին միջամտություններից պաշտպանության և անկախության երաշխիքների առավել կայուն սահմանադրական հիմքերի անհրաժեշտություն:

Մինչև Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխությունը Սահմանադրական դատարանի մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված բոլոր անդամների, որոնք 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների պահին կազմում էին Սահմանադրական դատարանի ընդհանուր կազմի յոթ իններորդը, Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնավարման 12 տարի ժամկետից ավել պաշտոնավարումը պայմանավորված էր Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի հայեցողությամբ: Ավելին, Սահմանադրական դատարանի նախագահը, նշանակված լինելով 2005 թվականի Սահմանադրության համաձայն, այլ ոչ չ'ընտրված Սահմանադրության 166-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա, որպես Սահմանադրական դատարանի նախագահ պաշտոնավարում էր Սահմանադրության նույն՝ նախկին խմբագրությամբ 213-րդ հոդվածի հիմքով:

Սահմանադրական դատարանի անդամի կամ դատավորի կարգավիճակի և պաշտոնավարման կայուն սահմանադրական հիմքը նրա, ինչպես և Սահմանադրական դատարանի անկախության անկյունաքարային գործոն է: Սահմանադրության նախկին խմբագրությամբ 213-րդ հոդվածով նախատեսված և Սահմանադրության 7-րդ գլխի կանոններով նախատեսված Սահմանադրական դատարանի անդամի և նախագահի պաշտոնավարման ժամկետից ավել ժամկետ նախատեսող դրույթը միաժամանակ եղել է Ազգային ժողովի իրավասության տիրույթում գտնվող հարց, ինչը չէր կարող ապահովել Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ անկախությունն այն աստիճան,

որը Սահմանադրական դատարանը ձեռք է բերել Սահմանադրության 2020 թվականի փոփոխությամբ:

2020 թվականի Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխություններով Սահմանադրական դատարանի մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված բոլոր այն անդամները, որոնց պաշտոնավարման 12 տարվա ժամկետը չէր լրացել, Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարման չլրացած ժամկետի, իսկ Սահմանադրական դատարանի նախագահը՝ իր պաշտոնավարման ողջ ժամկետի մասով պաշտոնավարելու են Սահմանադրության 7-րդ գլխի կանոններով նախատեսված ժամկետով, որի փոփոխությունն այլևս դուրս է Ազգային ժողովի իրավասությունից և վերապահված է բացառապես Հայաստանի Հանրապետության ժողովրդին՝ ինչպես և հարիր է սահմանադրական ժողովրդավարությունում Սահմանադրության գերակայությունն ապահովելու առաքելություն ունեցող Սահմանադրական դատարանին:

Այսպիսով, Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունները համակարգային իմաստով հանգեցրել են արդյունքի, որով՝

ա) Սահմանադրական դատարանում պաշտոնավարող բոլոր դատավորները պաշտոնավարում են հավասար ժամկետով և կարգավիճակով,

բ) Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետի սահմանադրական հիմքը՝ 166-րդ հոդվածի 1-ին մասը, դուրս է Ազգային ժողովի փոփոխելու իրավասությունից և կարող է փոփոխվել բացառապես Հայաստանի Հանրապետության ժողովրդի կողմից՝ հանրաքվեի միջոցով,

գ) Սահմանադրական դատարանի նախագահի ընտրության լիազորությունը՝ որպես Սահմանադրական դատարանի անկախության լրացուցիչ երաշխիք, իրականացվել է Սահմանադրական դատարանի կողմից՝ համեմատ նախկինում Ազգային ժողովի կողմից նշանակվելու տարբերակի,

դ) Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետի սահմանադրական հիմքը՝ 166-րդ հոդվածի 2-րդ մասը, դուրս է Ազգային ժողովի իրավասությունից և կարող է փոփոխվել բացառապես Հայաստանի Հանրապետության ժողովրդի կողմից՝ հանրաքվեի միջոցով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 2020 թվականի փոփոխություններով Ազգային ժողովն ամբողջությամբ սպառել է Սահմանադրական դատարանի մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված և պաշտոնավարող անդամների և նախագահի պաշտոնավարման ժամկետների նկատմամբ իր սահմանադրական լիազորությունը՝ Սահմանադրական դատարանի դատավորների և Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետների կարգավորումը տեղափոխելով բացառապես Սահմանադրության 166-րդ հոդվածով նախատեսված առավել

կայուն սահմանադրական իրավադրույթների գործողության տիրույթ, որոնք կարող են փոփոխվել բացառապես Հայաստանի Հանրապետության ժողովրդի կողմից:

5.12. Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ Սահմանադրության 213-րդ հոդվածի՝ 2020 թվականի հունիսի 22-ին Ազգային ժողովի ընդունած փոփոխությամբ դրույթները դրա կիրառման համար պատասխանատու հանրային իշխանության բոլոր մարմինների կողմից ի կատար են ածվել ամբողջությամբ: Մասնավորապես, ի կատարումն Սահմանադրության 2020 թվականի փոփոխություններով ընդունված 213-րդ հոդվածի՝

ա) 3-րդ մասի՝ Կառավարությունը, Հանրապետության նախագահը և դատավորների ընդհանուր ժողովն առաջադրել են Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուներ,

բ) 3-րդ մասի՝ Կառավարության, Հանրապետության նախագահի և դատավորների ընդհանուր ժողովի առաջադրած թեկնածուներին Ազգային ժողովն ընտրել է Սահմանադրական դատարանի դատավորներ, որոնք Ազգային ժողովի նիստի ընթացքում իրենց երդումները տալով՝ անցել են իրենց սահմանադրական լիազորությունների կատարմանը,

գ) 4-րդ մասի՝ Սահմանադրական դատարանն ընտրել է Սահմանադրական դատարանի նախագահ:

5.13. Ամփոփելով Սահմանադրական դատարանը Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունը գնահատում է որպես Սահմանադրական դատարանի դատավորների և Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ անկախությունն ամրապնդելու, Սահմանադրական դատարանի անդամների և դատավորների միջև միայն հանրաքվեով փոփոխության ենթակա սահմանադրական դրույթների հիմքով կարգավիճակների և պաշտոնավարման հավասարությունն ապահովելու, Սահմանադրական դատարանի դատավորների կողմից Սահմանադրական դատարանի նախագահին ընտրելու միջոցով անկախության և ինքնավարության ամրապնդմանն ուղղված և Սահմանադրական դատարանի՝ իշխանության բոլոր ճյուղերի կողմից ուղղակի մասնակցությամբ ձևավորված լինելու բերումով իր ժողովրդավարական լեգիտիմության և իր նկատմամբ հանրային վստահության աստիճանն ամրապնդելու անհրաժեշտ միջոց:

Միաժամանակ, այս անհրաժեշտ փոփոխություններն Ազգային ժողովի կողմից ընդունվելու առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների նախագիծը Սահմանադրական դատարանի նախնական վերահսկողությանը չներկայացնելու պայմանները բավարարում են Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր վերահսկո-

դության կանոնից ողջամիտ բացառության՝ Սահմանադրական դատարանի կողմից վերը սահմանված պայմանները:

5.14. Դիմողի կողմից բարձրացված՝ Կանոնակարգում կատարված փոփոխությունների արդյունքում Հանրապետության նախագահին լիազորություններից զրկելու առնչությամբ Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա: Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնարար երաշխիք է, որը թույլ է տալիս կյանքի կոչել Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված Հայաստանի Հանրապետության՝ ժողովրդավարական և իրավական պետություն հանդիսանալու սահմանադրի հրամայականը:

Սահմանադրական դատարանը, ընդգծելով, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը խորհրդարանական հանրապետությունում սահմանադրական կարգի հիմնաքարային սկզբունքներից է, այդուհանդերձ արձանագրում է, որ այն իրացվում է նախագահական և կիսանախագահական հանրապետությունների կառավարման ձևերից տարբերվող մոդելով:

Սահմանադրությամբ նախատեսված մարմինների շարքում պետության գլխի լիազորությունների ծավալը պայմանավորված է տվյալ պետության կառավարման ձևով: Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով խորհրդարանական կառավարման մոդելի անցում կատարելու արդյունքում Հանրապետության նախագահին օժտվեց սահմանադրական նոր կարգավիճակով:

Սահմանադրական դատարանը 2020 թվականի ապրիլի 1-ի ՄԳՈ-1518 որոշմամբ բացահայտել է խորհրդարանական կառավարման մոդելի պայմաններում Հանրապետության նախագահի կարգավիճակի բնութագիրը՝ արձանագրելով, մասնավորապես. «Հանրապետության նախագահը, Սահմանադրության «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը» վերտառությամբ 4-րդ հոդվածի ուժով գործառնությանին առումով դասվելով գործադիր իշխանությանը, այդուհանդերձ, ամբողջովին դուրս դրվեց գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգից, և, ի տարբերություն գործառնությանին առումով գործադիր իշխանությանը պատկանող այլ անկախ կամ ինքնավար մարմինների, պետության գլուխն է և ունի այդ կարգավիճակին բնորոշ գործառնություններ և դրանցից աժանցվող լիազորություններ: Ըստ այդմ՝

Հանրապետության նախագահը՝ որպես պետության գլուխ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին մաս), **հանրությանը և պետությանն ինտեգրող, ազգային միասնությունը խորհրդանշող սահմանադրական մարմինն է:**

Ըստ էության, գերծ լինելով պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակմանը, ինչպես նաև կառավարմանը բովանդակային առումով մասնակցելու գործառնությունը և չկրելով դրանց պատասխանատվությունը՝ Հանրապետության նախագահին սահմանադրորեն պատվիրակվել է **լինել անաչառ և առաջնորդվել բացառապես համապետական և համազգային շահերով** (Սահմանադրության 123-րդ հոդվածի 3-րդ մաս): Ըստ այդմ՝ Հանրապետության նախագահին սահմանադրորեն վերապահվել է **վերկուսակցական արբիտրի դեր**, որն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ (Սահմանադրության 124-րդ հոդվածի 5-րդ մաս): Միևնույն ժամանակ վերկուսակցական (սպակուսակցական) արբիտրի դերը, որը հիմնված է թե՛ Հանրապետության նախագահի՝ որպես պետության գլխի, ինտեգրող գործառնության, թե՛ նրա անաչառության վրա, ենթադրում է **Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառնության իրականացում**, ինչը ևս ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրությամբ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ մաս): Բացի դրանից, Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառնությունը, իր հերթին, ենթադրում է, որ **Հանրապետության նախագահը պետք է ունենա զսպումների և հակակշիռների միջոցով այդ գործառնությունն արդյունավետորեն իրականացնելու հնարավորություն**, ուստի նա պետք է ոչ միայն կարողանա կատարված փաստերից հետո գնահատել ենթադրյալ հակասահմանադրական գործողությունները (անգործությունը) կամ որոշումները, այլև պետք է կարողանա, նախևառաջ, **կանխել դրանց ի հայտ գալը՝ օժտված լինելով կանխարգելիչ սահմանադրական վերահսկողության որոշակի լիազորություններով:**

4.2. Հանրապետության նախագահի սահմանադրական գործառնությունների իրականացումն սպահովելու նպատակով սահմանադիրը նրան վերապահել է համարժեք լիազորություններ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 4-րդ մաս), որոնք նրա վրա ազդելու հնարավորությունները բացառելու համար սպառնիչ ամրագրել է Սահմանադրությամբ՝ օրենսդրին թողնելով Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում դրանց իրականացումը կանոնակարգելը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խորհրդարանի կողմից ընդունված որևէ իրավական ակտի ստորագրումն ու հրապարակումը պետության գլխի կողմից ինքնանպատակ չէ: Այն ուղղված է Հանրապետության նախագահին Սահմանադրությամբ վերապահված գործառնությունների

իրականացման ապահովմանը և ուղեկցվում է Սահմանադրությամբ ամրագրված համապատասխան այլ լիազորություններով: Խորհրդարանի կողմից ընդունված իրավական ակտն ստորագրելու և հրապարակելու գործընթացում պետության գլխի ներգրավումը կարող է տեղավորվել մասնավորապես Սահմանադրության պահպանմանը հետևելու՝ վերջինիս գործառույթի իրականացման շրջանակում, եթե Հանրապետության նախագահը Սահմանադրությամբ միաժամանակ օժտված է այնպիսի լիազորություններով, որոնց համակցությունը գործնականում հնարավորություն է տալիս օրենսդիր մարմնի նկատմամբ գործադրել զսպումների և հակակշիռների համակարգը:

Այսպես՝ Սահմանադրության 129-րդ հոդվածը նախատեսում է Հանրապետության նախագահի մասնակցությունն Ազգային ժողովի ընդունած օրենքը գործողության մեջ դնելու գործընթացում: Այդ հոդվածով ամրագրված իրավակարգավորումից հետևում է, որ Ազգային ժողովի կողմից որևէ օրենք ընդունվելուց հետո այն պետք է ուղարկվի Հանրապետության նախագահին, որին սահմանադիրը վերապահել է հայեցողական լիազորություն. վերջինս կարող է Ազգային ժողովի ընդունած օրենքն ստորագրել և հրապարակել կամ Ազգային ժողովի ընդունած օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով դիմել Սահմանադրական դատարան կամ որևէ գործողություն չկատարել: Այսինքն՝ վերկուսակցական (ապակուսակցական) արբիտրի դերով օժտված Հանրապետության նախագահը նաև իրավասու է նախքան Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի ստորագրելը և հրապարակելն անհրաժեշտության դեպքում այդ օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով դիմել Սահմանադրական դատարան՝ առաջնորդվելով բացառապես համապետական և համազգային շահերով նպատակ ունենալով կանխել հակասահմանադրական օրենքների գործողության մեջ դրվելը: Այսինքն՝ սահմանադիրը նախատեսել է օրենքները Հանրապետության նախագահի կողմից ստորագրելու լիազորությունը՝ միաժամանակ նախատեսելով նաև տրամաբանորեն դրա հետ համակարգային առումով փոխկապակցված մեկ այլ լիազորություն՝ Սահմանադրական դատարան դիմելը: Փաստորեն, Ազգային ժողովի ընդունած օրենքի ստորագրումը և հրապարակումը Հանրապետության նախագահի կողմից չի կրում սոսկ արարողակարգային բնույթ. այն Հանրապետության նախագահին վերապահված՝ կանխարգելիչ սահմանադրական վերահսկողության լիազորություններից է՝ կոչված ապահովելու Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրականացումը:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով Սահմանադրության փոփոխություններն ստորագրելու Հանրապետության նախագահի սահմանադրական լիազորության առկայության հարցին՝ Սահմանադրական դա-

տարանն առաջին հերթին արձանագրում է, որ այն ներառված չէ Սահմանադրության 129-րդ հոդվածի կարգավորման առարկայում, և Հանրապետության նախագահի կողմից օրենքներն ստորագրելու լիազորությունը չի ենթադրում վերջինիս կողմից նաև Սահմանադրության փոփոխությունները ստորագրելու լիազորության առկայություն: Սահմանադրական դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սահմանադիրը հստակ տարբերակել է «Սահմանադրության փոփոխություններ» և «օրենք» հասկացությունները: Մասնավորապես՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետում, 169-րդ հոդվածի 2-րդ մասում, 202-րդ հոդվածի 3-րդ մասում, 209-րդ հոդվածի 1-ին մասում, 210-րդ հոդվածի վերնագրում («Օրենքների համապատասխանեցումը Սահմանադրության փոփոխություններին») սահմանադիրը գործածել է «Սահմանադրության փոփոխություններ» բառակապակցությունը՝ անգամ որոշ դեպքերում մինևույն դրույթում զուգահեռաբար գործածելով նաև «օրենք» բառը: Հետևաբար՝ այդ հասկացությունները բովանդակային առումով չեն կարող նույնացվել, դրանցից որևէ մեկն իմաստային առումով չի կլանում մյուսին, ուստի Սահմանադրության փոփոխությունները չեն տեղավորվում Սահմանադրության իմաստով «օրենք» հասկացության իմաստային ծավալի մեջ, որպիսի հիմքով և չեն տեղավորվում Սահմանադրության 129-րդ հոդվածով՝ Հանրապետության նախագահին վերապահված լիազորությունների շրջանակի մեջ:

Մյուս կողմից, Սահմանադրական դատարանը 2020 թվականի ապրիլի 1-ի ՍԳՈ-1518 որոշմամբ վերլուծել է կառավարման խորհրդարանական ձևի շրջանակներում Հանրապետության նախագահի լիազորությունների շրջանակը՝ մասնավորապես արձանագրելով, որ. «Հանրապետության նախագահի լիազորությունները, կախված սահմանադրորեն կանխորոշված նպատակներից, իրենց բնույթով ինչպես պարտադիր են, այնպես էլ հայեցողական: Հանրապետության նախագահի պարտադիր և հայեցողական լիազորությունները ինքնուրույն կամ ոչ ինքնուրույն (կաշկանդված) են: Ոչ ինքնուրույն լիազորություններն իրականացվում են կա՛մ Սահմանադրությամբ սահմանված նախադրյալների առկայությամբ, կա՛մ սահմանադրական այլ մարմնի (իրավասու սուբյեկտի) լիազորությունների իրականացման հիմքով: Այսպես՝

Սահմանադրությամբ սահմանված հիմքերով (կարգով) Հանրապետության նախագահն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

ա) Ազգային ժողովի հերթական և արտահերթ ընտրությունները նշանակելը (Սահմանադրության 93-րդ հոդված),

բ) Կառավարության հրաժարականն ընդունելը (Սահմանադրության 130-րդ հոդված),

զ) պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակումը (Սահմանադրության 138-րդ հոդված),

դ) Հանրապետության նախագահի աշխատակազմի պաշտոններում նշանակումներ կատարելը (Սահմանադրության 145-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասություն),

ե) վարչապետ նշանակելը (Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասեր),

զ) Սահմանադրական դատարանի երեք դատավորների թափուր տեղերի համար Ազգային ժողովին թեկնածուներ առաջադրելը (Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասություն),

է) հանրաքվե նշանակելը (Սահմանադրության 206-րդ հոդվածի առաջին նախադասություն):

Սահմանադրությամբ սահմանված հիմքերով (կարգով) Հանրապետության նախագահին իրականացնում է հետևյալ հայեցողական լիազորությունները.

ա) իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ Ազգային ժողովին ուղերձ հղելը (Սահմանադրության 128-րդ հոդված),

բ) Ազգային ժողովի ընդունած օրենքը ստորագրելը և հրապարակելը կամ Ազգային ժողովի ընդունած օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելը կամ որևէ գործողություն չկատարելը (Սահմանադրության 129-րդ հոդված),

գ) Կառավարության կազմում փոփոխություններ կատարելը (Սահմանադրության 131-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

դ) արտաքին քաղաքականության բնագավառում՝ միջազգային պայմանագրեր կնքելը, օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին նշանակելը և հետ կանչելը, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերն ընդունելը, վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը հաստատելը, կասեցնելը կամ չեղյալ հայտարարելը, բարձրագույն դիվանագիտական աստիճաններ շնորհելը (Սահմանադրության 132-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ե) զինված ուժերի բնագավառում՝ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը նշանակելը և ազատելը, բարձրագույն զինվորական կոչումներ շնորհելը (Սահմանադրության 133-րդ հոդված) կամ

Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

զ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը լուծելը (Սահմանադրության 134-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

է) դատապարտյալներին ներում շնորհելը (Սահմանադրության 135-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ը) Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով պարգևատրելը և պատվավոր կոչումներ շնորհելը (Սահմանադրության 136-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

թ) բարձրագույն դասային աստիճաններ շնորհելը (Սահմանադրության 137-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ժ) զինված ուժերի գլխավոր շտաբի պետին նշանակելը (Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասություն) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ժա) Վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների դատավորներին, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակելը (Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասություն, 4-րդ մասի առաջին նախադասություն, 6-րդ մաս և 7-րդ մասի առաջին նախադասություն) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ժբ) փոխվարչապետներին և նախարարներին նշանակելը (Սահմանադրության 150-րդ հոդվածի երրորդ նախադասություն) կամ Սահմանադրության 150-րդ հոդվածի հինգերորդ նախադասությամբ սահմանված այլընտրանքային լիազորությունը»:

Հանրապետության նախագահի լիազորությունները սահմանող վերը նշված սահմանադրական նորմերի վերլուծության հիման վրա Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության փոփոխություններն ստորագրելու լիազորությամբ Հանրապետության նախագահին օժտված չէ: Ընդ որում, նման իրավակարգավորման հիմքում սահմանադիրը դրել է որոշակի տրամաբանություն: Սահմանադրական դատարանն այս համատեքստում

արձանագրում է, որ ի տարբերություն Ազգային ժողովի ընդունած օրենքները ստորագրելու Հանրապետության նախագահի լիազորության՝ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ որևէ ուղեկցող լիազորությամբ Հանրապետության նախագահն օժտված չէ: Սահմանադրական փոփոխությունների կապակցությամբ նախնական սահմանադրական վերահսկողության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությամբ օժտված է այլ սուբյեկտ, այն է՝ Ազգային ժողովը, այն էլ միայն Սահմանադրության փոփոխությունից առաջ (Սահմանադրության 169-րդ հոդվածի 2-րդ մաս՝ փոխկապակցված 168-րդ հոդվածի 2-րդ կետի հետ): Նման պայմաններում Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության փոփոխություններն ստորագրելու լիազորությունը կրելու էր միայն արարողակարգային բնույթ, և սահմանադիրը հրաժարվել է այդ լիազորությունը սահմանադրորեն ամրագրելուց:

Փաստորեն սահմանադիրը Սահմանադրության փոփոխությունները գործողության մեջ դրվելու հանգամանքը չի պայմանավորել ընդունվելուց հետո այդ փոփոխությունների՝ հանրային իշխանության որևէ այլ մարմնի կողմից հավանության արժանանալու կամ որևէ պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու գործընթաց անցնելու հանգամանքով: Ընդ որում, նշված մոտեցումը պայմանավորված չէ Սահմանադրությունում փոփոխությունների ընդունման այս կամ այն եղանակով: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ եղանակով են ընդունվում Սահմանադրության փոփոխությունները (ժողովրդի կողմից՝ հանրաքվեի միջոցով, թե՞ Սահմանադրությունում որոշ փոփոխություններ կատարելու իրավասությամբ օժտված Ազգային ժողովի կողմից), դրանք ընդունվելուց հետո չեն անցնում որևէ անձի, այդ թվում՝ Հանրապետության նախագահի կողմից ստորագրման գործընթաց:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ այս ուղղությամբ են զարգացել նաև օրենսդրական կարգավորումները: Այսպես՝ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու կապակցությամբ անցկացվող հանրաքվեի արդյունքներն ամփոփվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, և եթե վերջինս ընդունում է հանրաքվեի դրված Սահմանադրության փոփոխությունների ընդունման մասին որոշում, որով ըստ էության միայն փաստագրում է հանրաքվեի արդյունքները («Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս), ապա այդ որոշման հրապարակմանը հաջորդում է Սահմանադրության փոփոխությունների հրապարակումը «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» (եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը չի բողոքարկվել Սահմանադրական դատարան), որից հետո Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ են մտնում («Հանրաքվեի մասին» սահմանադրական

օրենքի 36-րդ հոդված): Համանման կարգավորում էլ սահմանվել է Կանոնակարգում կատարված փոփոխությունների արդյունքում՝ վերացնելով Սահմանադրությունում որոշ փոփոխություններ ընդունելու իրավասությամբ օժտված Ազգային ժողովի կողմից ընդունված Սահմանադրության փոփոխությունները (որն ըստ էության սահմանադիր գործառույթի իրականացում է) Հանրապետության նախագահի կողմից ստորագրելու և հրապարակելու պահանջը: Ընդ որում, հատկանշական է, որ կատարված փոփոխությունների արդյունքում Ազգային ժողովի նախագահը ոչ թե ստորագրում, այլ միայն հրապարակում է Սահմանադրության փոփոխությունները՝ ընդամենը ապահովելով Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ըստ էության սահմանադիր գործառույթ իրականացնող Ազգային ժողովի կողմից ընդունված Սահմանադրության փոփոխությունների՝ հանրությանը հասանելի դառնալը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կանոնակարգի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետը, ինչպես նաև 86-րդ հոդվածի 7-րդ մասն այն մասով, որ չի նախատեսում Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության փոփոխություններն ստորագրելու և հրապարակելու լիազորություն, համապատասխանում են Սահմանադրությանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ, 64-րդ և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետը, 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

29 ապրիլի 2021 թվականի
ՄԴՈ-1590



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ (ՀԱՄԸՆԿՆՈՂ) ԿԱՐԾԻՔԸ

**2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ՍԴՈ-1590
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

I. Ներածություն

2021 թվականի ապրիլի 29-ին Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1590 որոշմամբ (այսուհետ սույն հատուկ կարծիքում՝ Որոշում) եզրահանգել է, որ վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը:

Լիովին համաձայն լինելով Որոշման եզրափակիչ մասի հետ՝ կարծում են, որ դրա պատճառաբանական մասը, պահպանելով Սահմանադրական դատարանի որոշումներին ներհատուկ պահպանողական և իրավական փաստարկների հակիրճ շարադրանքի ոճը, ունի իրավական որոշ հանգամանքների և սկզբունքների սահմանադրաիրավական բովանդակության առավել մանրամասն բացահայտման կարիք, ինչը և կփորձեն ներկայացնել սույն կարծիքով:

II. Սահմանադրության դրույթների աստիճանակարգությունը

Ա. Աստիճանակարգության ընդհանուր սկզբունքը

1. Դիմողի բարձրացրած խնդիրն ուղղակիորեն առնչվում է Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխությունների ընդունմանը: Ան-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՍԳԻՐ ♦ 2(102)2021

կախ այն հանգամանքից, որ դիմողի բարձրացրած հարցերը քննության առարկա չեն դարձել Սահմանադրական դատարանի կողմից¹, խնդիրն ընդհանուր առմամբ Սահմանադրության փոփոխություններ ընդունելուն վերաբերելու պատճառով արժանացել է առավել լայն շրջանակով քննության՝ այն սկսելով Սահմանադրությամբ ամրագրված դրույթների փոփոխման կարգերի տարբերակմամբ՝ նպատակ հետապնդելով «սպաստովել Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ հայ ժողովրդի սահմանած անփոփոխ դրույթներում ամրագրված արժեքների և սկզբունքների գերակայությունը, Սահմանադրության ներքին կայունությունը, Սահմանադրության դրույթների մեկնաբանությունների կանխատեսելիությունը, հնարավոր ներքին կոլիզիաների կանխումը, իսկ դրանց բացահայտման դեպքում՝ լուծումը»²:

2. Այս նպատակների համար և ըստ Սահմանադրության դրույթներն ընդունող սուբյեկտների իրավասությունների աստիճանակարգության՝ Սահմանադրական դատարանն արձանագրել էր³, որ Սահմանադրության դրույթները ենթակա են դասակարգման հետևյալ կերպ.

ա) Սահմանադրության նախաբանը, 1-3-րդ և 203-րդ հոդվածները՝ որպես Սահմանադրության անփոփոխելի դրույթներ,

բ) Սահմանադրության՝ միայն հանրաքվեի միջոցով փոփոխվող դրույթները՝ որպես Հայաստանի Հանրապետության ժողովրդի բացառիկ իրավագործության ներքո գտնվող սահմանադրական դրույթներ, որոնք թվարկված են Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասում,

գ) Սահմանադրության՝ նաև Ազգային ժողովի կողմից փոփոխվող դրույթներ:

3. Սահմանադրության դրույթների վերոհիշյալ աստիճանակարգությունը սահմանելով՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության նախնական ստուգման շրջանակները հաստատել է, պայմանականորեն նշված, ավելի ցածր աստիճանի սահմանադրական նորմերի փոփոխության նախագծի բարձր աստիճանի նորմերին համապատասխանության կարգը հաստատելու նպատակով (ուղղահայաց համապատասխանության ստուգում)⁴:

4. Միաժամանակ, Սահմանադրական դատարանը սահմանել էր, որ Սահմանադրության անփոփոխելի դրույթներին համապատասխանությունը ստուգելուց բացի, Սահմանադրության փոփոխությունների նախագիծը պետք է համապատասխանի նաև նույն աստիճանի, սակայն Սահմանադրության

¹ Տես՝ 2021 թվականի փետրվարի 11-ի ՄԳԱՌ-27 որոշում:

² Որոշում, կետ 5.2:

³ Նույն տեղում:

⁴ Որոշում, կետ 5.3:

փոփոխությունների տվյալ նախագծով չփոփոխվող նորմերին (հորիզոնական համապատասխանության ստուգում)⁵:

5. Հորիզոնական համապատասխանության ստուգման նպատակը նույնաստիճան սահմանադրական դրույթների միջև հնարավոր կոլիզիաների կանխումն է: Մինչդեռ ուղղահայաց համապատասխանության ստուգման նպատակը սահմանադրական դրույթների և դրանցից բարձր աստիճանի վրա գտնվող դրույթների հնարավոր հակասություններից խուսափելուց բացի, նաև՝ Սահմանադրության փոփոխությունների նախնական ստուգման կարգի սահմանմամբ Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված ժողովրդաիշխանության սկզբունքների ամրապնդումն է Սահմանադրության փոփոխությունների բարդ ընթացակարգում: Սահմանադրության՝ Ազգային ժողովի կողմից ընդունվող փոփոխությունների նախագիծը պետք է համապատասխանի Սահմանադրության անփոփոխելի, ինչպես նաև միայն հանրաքվեով փոփոխվող դրույթներին՝ որպես Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ինքնիշխան սահմանադրի կամքի:

Բ. Սահմանադրության նախաբանը՝ անփոփոխելի դրույթ

6. Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության ստուգման կարգում Որոշմամբ Սահմանադրական դատարանի կողմից առանցքային կարևորության հաջորդ արձանագրումը վերաբերում է Սահմանադրության նախաբանն անփոփոխելի դրույթների կարգին դասելուն:

7. Սահմանադրության նախաբանն արտահայտում է Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ Հայ ժողովրդի իղձերը, նպատակները (հայրենիքի հզորացումը և բարգավաճումը, սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը և քաղաքացիական համերաշխումությունը), սկզբունքները և այն արժեքները, որոնք ընկած են Սահմանադրության ընդունման նպատակների և շարժառիթների հիմքում⁶: Այս նպատակները և սկզբունքները Սահմանադրության նորմերի մեկնաբանման համար ունեն ուղեցուցային նշանակություն, ինչպիսին ճանաչվել է Սահմանադրական դատարանի կողմից իր գործունեության դեռևս վաղ ժամանակահատվածից:

8. Մասնավորապես, Սահմանադրության նախաբանը որպես Սահմանադրության նորմերի մեկնաբանման նպատակով Սահմանադրի նպատակի ուղենիշ, վկայակոչվել է Սահմանադրական դատարանի որոշումներում սկսած 1999 թ. միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝

⁵ Նույն տեղում:
⁶ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, Եր., «Իրավունք», էջեր 36-39:

Սահմանադրությանը համապատասխանության նախնական ստուգման գործերով⁷:

9. Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության նախաբանում ամրագրված նպատակներին և սկզբունքներին հղումով առավել ուշագրավ որոշումներից են 2003 թվականի ՄԴՈ-412 որոշումը, որով Սահմանադրական դատարանն ընդգծել էր Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի ամրապնդման և Սահմանադրության նախաբանում ամրագրված՝ քաղաքացիական համերաշխության հաստատման անհրաժեշտությունը⁸ և 2010 թվականի ՄԴՈ-850 որոշումը, որով Սահմանադրական դատարանը վկայակոչել էր Սահմանադրության նախաբանը և Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետը, որպես նույն որոշմամբ քննարկված «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները՝ Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում մեկնաբանման ու կիրառման ուղենիշ⁹:

10. Այս ամենով հանդերձ, Սահմանադրության նախաբանը մինչ Որոշումը չէր դասվել Սահմանադրության անփոփոխելի դրույթների շարքին, իսկ դրա անփոփոխելի բնույթի հիմնավորումները մնում էին տեսական հիմնավոր մոտեցումների տիրույթում, սակայն՝ առանց նորմատիվ ձևակերպման: Որոշմամբ Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով Սահմանադրության նախաբանը՝ որպես Սահմանադրության արժեքանական առանցքի և Սահմանադրությունն ընդունելիս առաջին սահմանադրի՝ Հայ ժողովրդի նպատակների գլխավոր աղբյուր, հստակորեն արձանագրեց դրա անփոփոխելի բնույթը:

11. Ինքս, լիովին համաձայնելով Որոշմամբ արձանագրված այս մոտեցմանը, կարծում եմ, որ դրա հիմքում վերը նշված արժեքանական և պատմաիրավական հիմնավորումներից գերծ ընկած էր նաև Սահմանադրության 1-3 և 203-րդ հոդվածների անփոփոխելիության նորմատիվ-սահմանադրական ամրագրման այն մեկնաբանությունը, որ այդ անփոփոխելի դրույթների ընդունման նպատակները, իրավաքաղաքական և պատմական հիմնավորումները փոփոխելի չեն: Այլ խոսքով, եթե որևէ իրավական դրույթ անփոփոխելի է,

⁷ Տես՝ օրինակ, 1999 թվականի հոկտեմբերի 8-ի ՄԴՈ-175, 1999 թվականի հոկտեմբերի 12-ի ՄԴՈ-176, 1999 թվականի դեկտեմբերի 26-ի ՄԴՈ-271, 2004 թվականի օգոստոսի 13-ի ՄԴՈ-502, 2010 թվականի հունվարի 12-ի ՄԴՈ-850, 2014 թվականի նոյեմբերի 14-ի ՄԴՈ-1175, 2017 թվականի հոկտեմբերի 10-ի ՄԴՈ-1381, 2018 թվականի մարտի 16-ի ՄԴՈ-1407:

⁸ 2003 թվականի ապրիլի 16-ի ՄԴՈ-412, կետ 6:

⁹ 2010 թվականի հունվարի 12-ի ՄԴՈ-850, կետ 5:

ապա առավել ևս չի կարող փոփոխելի լինել դրա հիմքը և ընդունման նպատակները:

12. Իմ համոզմամբ՝ Սահմանադրության նախաբանի առանցքային կարևորության վրա կատարված շեշտադրումը և Սահմանադրության անփոփոխելի դրույթների շարքին դասելու հարցերում Որոշման իմպերատիվությունը Սահմանադրության նորմերի մեկնաբանման գործում մեծապես ընդլայնելու են Սահմանադրության նախաբանում շարադրված նպատակների և նորմ-սկզբունքների կիրառման պրակտիկան:

13. Սահմանադրության նախաբանը Սահմանադրության անփոփոխելի դրույթների դասին պատկանելու Որոշման արձանագրումը, իմ խորին համոզմամբ, **առաջին հերթին** Սահմանադրական դատարանի՝ որպես սահմանադրական արդարադատության միջոցով Սահմանադրության գերակայությունն ապահովող ատյանի, հավատարմության հավաստիքն է Սահմանադրության ընդունմամբ դրա նախաբանում Հայ ժողովրդի իղծերի, նպատակների և արժեհամակարգի նկատմամբ:

14. Երկրորդ, Սահմանադրության նախաբանը Սահմանադրության անփոփոխելի դրույթների դասին պատկանելու Որոշման արձանագրումն ուղղակիորեն նշանակում է, որ Հայաստանի համար ծանր իրավաքաղաքական մերօրյա իրավիճակում Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումից 30 տարի անց և Հայաստանի անկախության հռչակման 30-րդ ամյակին ընդառաջ, Սահմանադրական դատարանը, շարունակելով իր գործունեության ընթացքում Հայաստանի անկախության հռչակագրի դրույթների սահմանադրականացման (դրանք Սահմանադրության դրույթների իրավաբանական ուժով օժտված լինելու վարկածով դիտարկելը) ընթացքը¹⁰, **Սահմանադրության նախաբանի անփոփոխելիության արձանագրմամբ սահմանադրական արդարադատության տիրույթում Սահմանադրության դրույթների անփոփոխելիության կամ հավերժության որակով դիտարկելու է նաև «Հայաստանի անկախության հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները եւ համազգային նպատակները»՝ Սահմանադրության նորմերի մեկնաբանման և սահմանադրաիրավական վեճերի լուծման ընթացքում:**

III. Որոշմամբ քննարկված հարցերի շրջանակը

15. Թեպետ, ինչպես Սահմանադրական դատարանն արձանագրել է Որոշման 4.2 կետում, «սույն գործը քննության է առնում վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի

¹⁰ Տե՛ս սույն հատուկ կարծիքի 7-9 կետերը:

1-ին կետով և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով», այն անդրադարձել է նաև (1) Սահմանադրության դրույթների փոփոխման կարգերի տարբերակմանն ու դրանց նպատակներին¹¹, (2) Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական ստուգման մասշտաբին¹², (3) Սահմանադրության փոփոխությունների նախագծի ստուգման մասին սահմանադրական դրույթների բովանդակությանը (արդյոք նախագիծը ստուգման ներկայացնելը պարտականություն է, թե հայեցողություն)¹³, (4) Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական ստուգման կանոնից հնարավոր բացառության դեպքին¹⁴, և (5) թե արդյոք Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների նախագիծը սահմանադրականության նախնական ստուգման չներկայացնելը համապատասխանել է Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական ստուգման սահմանադրական պատվիրանին¹⁵:

16. Իմ կարծիքով դիմողի բարձրացրած հարցերից մեկի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության ստուգման շրջանակներում Սահմանադրական դատարանի կողմից վերը թվարկված խնդիրների պարզաբանումը և դրանց սահմանադրաիրավական բովանդակության վերհանումը անհրաժեշտություն էր: Այսպես՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «Մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը քվեարկության է դրվում Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը»: Դիմողի կողմից սույն նորմի սահմանադրականության առնչությամբ Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հիմնական հարցի պատասխանն ուղղակիորեն կախված է նրանից, թե արդյոք Սահմանադրությամբ սահմանված է Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր, թե հայեցողաբար իրականացվող ստուգման ընթացակարգ: Եթե Սահմանադրությամբ նախատեսված լիներ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության ստուգման պարտադիր և առանց հնարավոր բացառությունների մոդելը, ապա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ

¹¹ Որոշում, կետ 5.2:

¹² Որոշում, կետ 5.3:

¹³ Որոշում, կետ 5.4:

¹⁴ Որոշում, կետեր 5.7-5.8:

¹⁵ Որոշում, կետեր 5.9-5.13:

մասով նախատեսված Սահմանադրական դատարան դիմելու կարգը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարան դիմելը թողնվում էր պատգամավորների հայեցողությանը, որն արտահայտվելու էր քվեարկությամբ, Սահմանադրության համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց կլիներ:

17. Միաժամանակ, եթե Սահմանադրությամբ նախատեսված լիներ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության ստուգման պարտադիր, սակայն հնարավոր բացառություններով կամ հայեցողական ստուգման մոդելը, ապա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Սահմանադրական դատարան դիմելու կարգը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարան դիմելը թողնվում էր պատգամավորների հայեցողությանը, չի կարող ունենալ պատգամավորների կողմից քվեարկությամբ որոշում կայացնելուն այլընտրանք:

18. Անկախ նրանից, թե ո՞ր մոդելի մասին է խոսքը, Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության ստուգումը պետք է իրականացվի հստակորեն նախանշված շրջանակում: Նման շրջանակի որոշումն ուղղակիորեն թելադրում է Սահմանադրության դրույթների փոփոխությունների ստուգման տարբերակված կարգերի սահմանումը, ինչը, լինելով բացառապես Սահմանադրական դատարանի սահմանադրական լիազորության տիրույթում, պետք է և սահմանվել է Որոշմամբ:

19. Եվ վերջապես, Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների Սահմանադրական դատարան չուղարկելու դեպքի՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական պարտադիր ստուգման կանոնից բացառության պայմաններին համապատասխանության հարցին¹⁶: Սահմանադրական դատարանն այս հարցին անդրադառնալը հիմնավորել է խորհրդարանական հանրապետությունում ընդդիմության հանդեպ հարգանքի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կազմավորման և համալրման սահմանադրականության վերաբերյալ բարձրացվող հարցերի զգայուն բովանդակությամբ, ինչը չէր կարող անտեսվել Սահմանադրական դատարանի կողմից:

20. Ես լիովին արդարացված եմ համարում խորհրդարանական ընդդիմության պատգամավորների կողմից Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների վերաբերյալ բարձրացված մտահոգություններին Որոշմամբ անդրադառնալու Սահմանադրական դատարանի մոտեցումը, քանի որ 2021 թվականի ՄԳԱՌ-27 աշխատակարգային որոշմամբ այս հարցադրումների

¹⁶Նույն տեղում:

գերակշիռ մեծամասնությունը դիմումի ընդունելիության պայմաններին չհամապատասխանելու հիմքով, քննության չենթարկվելու դեպքում, բարձրացված հարցադրումների կարևորությունը սահմանադրական արդարադատության և հայկական ժողովրդավարության ապագայի նկատմամբ ուղղակիորեն թելադրում էին Սահմանադրական դատարանի կողմից դրանց արձագանքը՝ Ազգային ժողովի և Սահմանադրության փոփոխություններ նախաձեռնելու իրավասու այլ անձանց կողմից այդ փոփոխությունների նախագծի սահմանադրականության ստուգման կանոնները հստակեցնելու նպատակով:

IV. «Ողջամիտ բացառության» բանաձևը և դրա սահմանադրաիրավական հիմնավորումները

Ա. Սահմանադրական ժողովրդավարության արժեքանական հիմնասյունները

21. Սահմանադրական ժողովրդավարության գլխավոր արժեքանական հիմնասյունները, ինչպես իրավագիտական և քաղաքագիտական, այնպես էլ իրավակիրառ փորձագիտության շրջանակներում, դիտարկվել են ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքները¹⁷: Արդյունավետ և կենսունակ սահմանադրական ժողովրդավարությունն այս երեք արժեքային համակարգերի ոչ միայն ներդաշնակ և խաղաղ կենսագործունեության, այլ նաև դրանց միջև լարվածության դեպքում՝ արդարացի հավասարակշռության հաստատմամբ լուծումներ առաջարկող պետություն է:

22. Հատկանշական է, որ ժամանակակից սահմանադրական ժողովրդավարություններում թվարկված երեք արժեքային համակարգերի միջև լարվածության առաջացման դեպքում, միջազգային փորձագիտական շրջանակների կողմից լայնորեն ընդունված մոտեցումն այն է, որ սահմանադրական դատարաններն են, որ սահմանադրական նորմերի մեկնաբանությամբ ի վիճակի են արդյունավետորեն ապահովել նման արժեքանական բախումներում անհրաժեշտ և արդյունավետ լուծումներ¹⁸:

23. Սահմանադրական դատարանի առջև դիմողների բարձրացրած խընդիրն իր հիմքում՝ Սահմանադրական դատարանի ճգնաժամի լուծման այս տարբերակի գործարկման պահից ունեցել է վերը թվարկված երեք արժեքանական համակարգերից երկուսի (ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն) միջև լարվածությունը լուծելու անհրաժեշտություն: Այսինքն՝ ապահովել ժողովրդավարական գործընթացների, մասնավորապես՝ Սահմանադրության փոփոխություններ ընդունելու Ազգային ժողովի սահմանադրական լիազորության իրացման հնարավորությունն այն պայմաններում,

¹⁷ CDL-AD(2010)044 Opinion on the Constitutional Situation in Ukraine, paragraph 52.

¹⁸ Նույն տեղում:

երբ այդ փոփոխությունների նախագիծը Սահմանադրության դրույթների տառացի մեկնաբանության արդյունքում ենթակա է սահմանադրականության պարտադիր ստուգման Սահմանադրական դատարանի կողմից, որի անդամներին այն ուղղակիորեն վերաբերում է (Սահմանադրական դատարանի կազմի 7-9-ին)՝ էականորեն կրճատելով նրանցից 4-ի պաշտոնավարման ժամկետը և դադարեցնելով նրանցից 3-ի պաշտոնավարումը:

24. Ի տարբերություն այնպիսի ստանդարտ իրավիճակների, երբ ճգնաժամերի լուծումները սահմանադրական կարգավորումների մեկնաբանման և կիրառման միջոցով են իրականացվում, Սահմանադրական դատարանը «զինված» է անհրաժեշտ գործիքակազմով նման ճգնաժամերը լուծելու համար և հանդես է գալիս որպես նման լուծումներ առաջարկող մասնագիտացված ել լիազոր ատյան: Մինչդեռ այն իրավիճակներում, երբ հակադրվածությունն առաջանում է Սահմանադրական դատարանի կազմի 7/9-ի անհատական շահերի և սահմանադրական մարմնի կողմից իր սահմանադրական լիազորության իրացման շահի միջև, խնդիրը դուրս է գալիս ստանդարտ սահմանադրաիրավական արդարադատության շրջանակից, որում Սահմանադրական դատարանը անկախ և անաչառ ատյանից վեր է ածվում հակադրության կողմի:

Բ. Սահմանադրական դատարանի ճգնաժամի մասին.

25. Սահմանադրական դատարանի ճգնաժամին և դրա առանձին կողմերին ժամանակին անդրադարձել են հրապարակայնորեն¹⁹ և դրանց մանրամասներով այս հատուկ կարծիքը ծանրաբեռնելու կարիք չեմ տեսնում, եթե միայն՝ հակիրճ անդրադառնալով ճգնաժամածին պատճառներին և դրանում լուծման ենթակա հանգամանքներին:

26. Մասնավորապես, մինչև Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների ուժի մեջ մտնելու դրությամբ Սահմանադրության 213 հոդվածի համաձայն՝

(1) Սահմանադրական դատարանի պաշտոնավարող անդամները, որոնք նշանակվել էին մինչև 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը, շարունակելու էին պաշտոնավարել Սահմանադրական դատարանի անդամի կարգավիճակով՝ առանց հստակեցման Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակի ստանձնման լիազորությունների իրականացման հետ կապված հարցերը:

¹⁹ Հանրապետության նախագահին, Ազգային ժողովին, Կառավարությանը, Դատավորների ընդհանուր ժողովին, Սահմանադրական դատարանի պաշտոնավարող անդամներին և դատավոր Ա. Դիլանյանին ուղղված 26/06/2019 թվականի նամակ «ՄԴ ճգնաժամի մասին», Ընտրողների ստորագրած ցուցակների գաղտնիացման մասին:

(2) Սահմանադրական դատարանի անդամները, որոնք նշանակվել էին մինչև 2015 թվականի Սահմանադրության 7-րդ գլխի դրույթների ուժի մեջ մտնելը, շարունակելու էին պաշտոնավարել մինչև Սահմանադրության 2005 թվականի փոփոխություններով նախատեսված իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտը, որի արդյունքում Սահմանադրական դատարանի 2 անդամներ (պարոնայք Ֆ. Թոխյանը և Հ. Նազարյանը) շարունակելու էին պաշտոնավարել մինչև 70 տարեկանը, իսկ Սահմանադրական դատարանի մյուս 5 անդամները (տիկնայք Ա. Գյուլումյանը և Ա. Պետրոսյանը, պարոնայք Ա. Խաչատրյանը, Ա. Թունյանը և Հ. Թովմասյանը) մինչև իրենց 65 տարեկանը լրանալը: Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության 7-րդ գլխի կանոններով ընտրված 2 դատավորներ (պարոն Ա. Դիլանյանը և ինքս) պաշտոնավարում ենք մինչև 12-ամյա ժամկետի ավարտը:

(3) Սահմանադրական դատարանի նշանակված նախագահի պաշտոնավարման ժամկետը, ըստ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության համապատասխան դրույթների մեկնաբանության, համընկնում էր այն զբաղեցնող Սահմանադրական դատարանի անդամի (պարոն Հ. Թովմասյան) պաշտոնում պաշտոնավարման ժամկետին, այսինքն՝ մինչև նրա 65 տարին լրանալը (նշանակման պահից ի վեր 17 տարի), որից հետո միայն Սահմանադրական դատարանը կարող էր ընտրել նախագահ, ինպես նախատեսված է Սահմանադրության 166-րդ հոդվածով:

9. Սահմանադրական դատարանի անկախության սպառնալիքը

27. Վերը թվարկված՝ Սահմանադրական դատարանի անդամի և դատավորի կարգավիճակների տարբերության և դրա կարգավորումների բացակայության, պաշտոնավարման ժամկետների իմաստով Սահմանադրական դատարանի անդամների և դատավորների միջև ներդատարանական հավասարության խախտման և Սահմանադրական դատարանի կողմից իր անկախության և ինքնավարության կարևոր տարրերից մեկի՝ Սահմանադրական դատարանի նախագահ ընտրելու նորընծա լիազորության իրականացման հնարավորությունից տևական ժամանակով զրկված լինելու հետ մեկտեղ Սահմանադրական դատարանն ունեցել է դեմոկրատական լեգիտիմության լրջագույն բաց, որի առնչությամբ և դրանից բխող քննադատությունն ուղեկցել է Սահմանադրական դատարանին սկսած 2003 թվականի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումից:

28. Սակայն, բացի թվարկված հանգամանքներից, կա ևս մեկը, որը, թեպետ ակնհայտորեն առկա էր, սակայն դրանում Սահմանադրական դատարանի անկախության համար վտանգն ինձ համար զգալի է եղել միայն Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնավարման փորձառություն ունենա-

լիս: Իսնդրո առարկան Սահմանադրական դատարանի անդամների և Ազգային ժողովի կողմից նշանակված նախագահի պաշտոնավարման ժամկետները կարգավորող սահմանադրական նորմը փոփոխելու Ազգային ժողովի լիազորությունն է, որին Սահմանադրական դատարանը Որոշմամբ հակիրճ անդրադարձել և գնահատականի է արժանացրել նման կարգավորման ազդեցությունը Սահմանադրական դատարանի անկախության նկատմամբ²⁰: Այդուհանդերձ, կարծում եմ, որ այս խնդիրը լրացուցիչ մանրամասնելու կարիք ունի:

29. Սահմանադրական դատարանի անկախությունը հիմնվում է երկու հավասարաարժեք կողմի վրա. դատարանի ինստիտուցիոնալ և դատավորի անհատական անկախությունը: Ինստիտուցիոնալ անկախության սահմանադրաիրավական բովանդակությունը պետական իշխանության ճյուղերի արդյունավետ բաժանման և հավասարակշռման միջոցով Սահմանադրական դատարանի՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների՝ որոշիչ ազդեցություններից և ճնշումներից զերծ մնալու երաշխիքների համակարգն է: Դատավորների անհատական անկախության բովանդակությունը արդարադատություն իրականացնելիս քաղաքական կամ այլ տեսակի ճնշումներից ազատ գործելու հնարավորությունն է²¹:

30. Սահմանադրական դատարանի և այդ առյանի դատավորների անկախությունը պետք է երաշխավորված լինի Սահմանադրության կայուն՝ առնվազն միայն հանրաքվեով փոփոխվող դրույթներով, այլապես այդ անկախության անկյունաքարային գործոնների նկատմամբ օրենսդիր իշխանության իրավագործության նախատեսումը համար (օրինակ՝ դատավորների պաշտոնավարման ժամկետների վերաբերյալ դրույթներում փոփոխություններ կատարելու լիազորությունը) ոչ միայն հակադրվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման, այլ նաև Սահմանադրական դատարանի անկախության սկզբունքին: Այս մոտեցումը լայնորեն ճանաչված է նաև դատական իշխանության անկախության վերաբերյալ միջազգային ակտերում²²:

31. Առհասարակ, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի՝ որպես Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության պահապանի և իշխանության առանցքային դերակտարի կարգավիճակը՝ Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ և դրա դատավորների անհատական անկախության երաշխիքները անհրաժեշտաբար պետք է գտնվեն բացառապես Հայաստանի ժողովրդի իրավասությունների ներքո՝ դուրս լինելով քաղաքական

²⁰ Որոշում, կետ 5.11:

²¹ Այս մասին տե՛ս նաև՝ CDL-AD(2016)025, Joint Opinion on the Draft Law “On Introduction of Amendments and Changes to the Constitution” of the Kyrgyz Republic, paragraph 47.

²² UN Basic Principles on the Independence of the Judiciary of 1985.

ուժերի դասավորությամբ ժամանակավորապես ձևավորվող ներկայացուցչական-քաղաքական մարմնի իրավասությունների տիրույթից²³:

32. Այս առնչությամբ Որոշման վերաբերելի հատվածում Սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ «*մինչև Սահմանադրության 213-րդ հոդվածի 2020 թվականի փոփոխությունը Սահմանադրական դատարանի՝ մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված անդամները շարունակել են պաշտոնավարել Սահմանադրության 213-րդ հոդվածի հիման վրա, այսինքն՝ Սահմանադրության այնպիսի դրույթի, որը դասվում էր Ազգային ժողովի կողմից փոփոխվող դրույթների շարքին: Այսինքն՝ Սահմանադրության 213-րդ հոդվածի հիմքով պաշտոնավարող Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման սահմանադրական հիմքը նախատեսված էր Սահմանադրության այնպիսի հոդվածով, որը կարող էր փոփոխվել Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մինչև Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխությունը գործող Սահմանադրությամբ նախատեսված իրավակարգավորումը չէր կարող ապահովել Սահմանադրական դատարանի անհրաժեշտ անկախությունը քաղաքական իշխանությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման խորհրդարանական ձևի պայմաններում օրենսդիր և գործադիր իշխանությունները իրականացվում են նույն՝ Ազգային ժողովում մեծամասնությունն ստացած քաղաքական ուժի ղեկավարությամբ: Այս պայմաններում Սահմանադրական դատարանը՝ որպես սահմանադրական ժողովրդավարության համար անհրաժեշտ օրենսդիր և գործադիր իշխանությունների սահմանադրական հսկակշիռ, ուներ ինստիտուցիոնալ, ներառյալ՝ կազմավորման, արտաքին միջամտություններից պաշտպանության և անկախության երաշխիքների առավել կայուն սահմանադրական հիմքերի անհրաժեշտությունը»²⁴:*

33. Սահմանադրական դատարանի գնահատմամբ Սահմանադրական դատարանի անդամի կամ դատավորի կարգավիճակի և պաշտոնավարման կայուն սահմանադրական հիմքը նրա, ինչպես և Սահմանադրական դատարանի անկախության անկյունաքարային գործոն է: Սահմանադրության նախկին խմբագրությամբ 213-րդ հոդվածով և Սահմանադրության 7-րդ գլխի կանոններով նախատեսված Սահմանադրական դատարանի անդամի և նախագահի պաշտոնավարման ժամկետից ավել ժամկետ նախատեսող դրույթի փոփոխություններն Ազգային ժողովի իրավասությանը վերապահելը Սահմանադրական դատարանի անկախության նկատմամբ ունի այն հնարավոր վտանգավոր ազդեցությունը, որ Սահմանադրական դատարանի

²³ Այս մասին տես նաև՝ CDL-AD(2016)025, Joint Opinion on the Draft Law “On Introduction of Amendments and Changes to the Constitution” of the Kyrgyz Republic, paragraphs 47-48.

²⁴ Նույն տեղում:

անդամներին կամ դատավորներին՝ նրանց (Սահմանադրության 7-րդ գլխի կանոններով նախատեսված ժամկետից ավել) պաշտոնավարման անձնական ակնկալիքի և շահերի թելադրանքով հղի է սուբյեկտիվ կախվածություն ձևավորելու վտանգով:

34. Ընդ որում՝ խնդրահարույց է ոչ միայն Ազգային ժողովի կողմից Սահմանադրության միայն հանրաքվեով փոփոխման ենթակա դրույթներով նախատեսված պաշտոնավարման ժամկետից ավել ժամկետի կրճատման դեպքը, այլ նաև՝ պաշտոնավարման ժամկետները անհավասարաբար ավելացնելու իրավիճակը, քանի որ նման ժամկետների ավելացման հնարավոր ակնկալիքը նույն ազդեցությունը կարող է ունենալ Սահմանադրական դատարանի անկախության նկատմամբ, ինչ այդ ժամկետների կրճատման սպառնալիքը:

35. Հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի նախագահի դերակատարությունը Սահմանադրական դատարանի բնականոն գործունեության ապահովման գործում՝ կարծում եմ, որ նույն հիմնավորմամբ, որպես Սահմանադրական դատարանի անկախության ամուր ինստիտուցիոնալ երաշխիք²⁵, Սահմանադրական դատարանի նախագահի ընտրությունը և նրա պաշտոնավարման ժամկետները, կրկին, պետք է կարգավորված լինեն Սահմանադրության առնվազն միայն հանրաքվեով փոփոխվող դրույթներով²⁶:

36. Սրանք միայն տեսական դատողություններ չեն: Նման մտահոգության համար Հայաստանի սահմանադրաիրավական իրողության մեջ եղել է նաև քաղաքական իշխանության կողմից Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման ժամկետներն օրենքով կարգավորելու փորձի նախադեպ: Մասնավորապես, 2017 թվականին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ փորձագիտական կարծիք ստանալու նպատակով Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» հանձնաժողովի կողմից փորձագիտական կարծիքի նախագծման ընթացքում Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման ժամկետները՝ Սահմանադրության 213 հոդվածից տարբերվող

²⁵ Տես նաև միջազգային փորձագիտական շրջանակների կարծիքները սահմանադրական դատարանների նախագահների՝ դատարանների կողմից ընտրվելու տարբերակը որպես սահմանադրական դատարանների անկախության ամուր ինստիտուցիոնալ երաշխիք՝ CDL-AD(2008)029 Opinion on the Draft Laws amending and supplementing (1) the Law on Constitutional Proceedings and (2) the Law on the Constitutional Court of Kyrgyzstan, paragraph 8, CDL-AD(2011)016 Opinion on the new Constitution of Hungary, paragraph 94, CDL-AD(2014)017 Opinion on the Draft Constitutional Law on the Constitutional Court of Tajikistan, paragraph 12, CDL-AD(2016)026, Opinion on the Act on the Constitutional Tribunal of Poland, paragraph 27:

²⁶ Ինչպես Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների արդյունքում եղել է. Սահմանադրական դատարանի նորընտրի եւ հետագա բոլոր նախագահների ընտրությունն ընտրության եւ նրանց պաշտոնավարման լիազորությունը սահմանված է Սահմանադրության 7-րդ գլխի դրույթներով, որոնք ենթակա են փոփոխման բացառապես Հայաստանի ժողովրդի կողմից՝ համապետական հանրաքվեով:

կարգավորումներով փոփոխությունների են ենթարկվել²⁷: Պետք է նկատել, որ Սահմանադրության՝ նախկին խմբագրությամբ 213-րդ հոդվածի պայմաններում, քաղաքական իշխանության կողմից քննարկվել է Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման ժամկետն օրենքով կարգավորելու հարցը, որը, թերևս, քննարկումից դուրս է եկել միայն այն բանից հետո, երբ «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը հավանություն չի տվել նման գաղափարին՝ Սահմանադրության 213 հոդվածին անհամապատասխանության պատճառաբանությամբ:

37. Այսինքն՝ Սահմանադրական դատարանի անկախության համար անկյունաքարային նշանակություն ունեցող՝ Սահմանադրական դատարանի անդամների (դատավորների) պաշտոնավարման ժամկետներին վերաբերող կարգավորումներն Ազգային ժողովի կողմից հնարավոր են համարվել, և նման փոփոխությունների փորձ է կատարվել ավելի ցածր ձայներ պահանջող և իրավաբանական ավելի ցածր ուժ ունեցող ակտով՝ սահմանադրական օրենքով:

Գ. Փոփոխությունների նպատակն ու արդյունքը

38. Ի լրումն Որոշման 5.11-րդ կետի, որտեղ Սահմանադրական դատարանը նկարագրել է այն համակարգային արդյունքը, որը ձեռք է բերվել Սահմանադրության 2020 թվականի փոփոխության արդյունքում, և լիովին համաձայնելով այս արձանագրմանը, անհրաժեշտ եմ համարում առանձնացնել Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ և դատավորների անհատական անկախության համար առանցքային կարևորության հետևյալ 2 հանգամանքները:

39. **Նախ**, Որոշման հիշյալ հատվածում, Սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ Սահմանադրության 2020 թվականի փոփոխություններով Ազգային ժողովն ամբողջությամբ սպառել է Սահմանադրական դատարանի մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված և պաշտոնավարող անդամների և նախագահի պաշտոնավարման ժամկետների նկատմամբ իր սահմանադրական լիազորությունը՝ Սահմանադրական դատարանի դատավորների և Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետների կարգավորումը տեղափոխելով բացառապես Սահմանադրության 166-րդ հոդվածով նախատեսված առավել կայուն սահմանադրական իրավադրույթների գործողության տիրույթ, որոնք կարող են փոփոխվել բացառապես Հայաստանի Հանրապետության ժողովրդի կողմից: Այս առնչությամբ Սահմանա-

²⁷ «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի CDL-AD(2017)011 կարծիքը, կետեր 32-34: Ի դեպ, ուշագրավ է, որ այս կարծիքում պաշտոնապես արձանագրված փաստերի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի փոփոխությունների վերաբերյալ հիշատակումները բացակայում են պաշտոնական աղբյուրներում:

դրական դատարանի ինստիտուցիոնալ և դրա դատավորների անհատական անկախության առաջնային բարենպաստ հետևանքն այն է, որ Սահմանադրական դատարանը հստակ և ուղղակի արձանագրմամբ Սահմանադրական դատարանի նշանակված անդամների կարգավիճակը հավասարեցնելով Սահմանադրական դատարանի դատավորների կարգավիճակին, նրանց պաշտոնավարման ժամկետի կարգավորումները դուրս է բերել Ազգային ժողովի իրավասության տարածքից:

40. Երկրորդ, Սահմանադրական դատարանը հիշյալ հատվածով նաև արձանագրել է, որ Սահմանադրական դատարանն այլևս դուրս է եկել անցումային կարգավորումների տիրույթից, ինքնին գործում է ոչ որպես անցումային, այլ՝ որպես Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով նախատեսված սահմանադրի նպատակադրած Սահմանադրական դատարան:

41. Փաստացի, Սահմանադրության 2020 թվականի փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո, Սահմանադրական դատարանի արձանագրմամբ, **դրանց դրույթների պահանջներն այլևս ամբողջությամբ ի կատար են ածվել Հայաստանի պետական իշխանության բոլոր 3 ճյուղերի կողմից՝ միաձայնությամբ,** իսկ իր կազմավորման և դատավորների կարգավիճակների և նրանց պաշտոնավարման ժամկետների համահավասարեցման և Սահմանադրական դատարանի կողմից իր նախագահին ընտրելու գործընթացներն ավարտվել են Սահմանադրական դատարանի նախագահի ընտրությամբ՝ դրանով իսկ արձանագրելով **Սահմանադրական դատարանի անցումային կարգավիճակի ավարտը և Սահմանադրության 7-րդ գլխի կանոններով ամբողջությամբ կազմավորված դատարանի գործունեության մեկնարկը:**

42. Սույն հատուկ կարծիքի վերջին հատվածի վրա աշխատելիս այսօր՝ 2021 թվականի մայիսի 10-ին հայտնի դարձավ, որ Ազգային ժողովը չի ընտրել Հանրապետության վարչապետ 2-րդ անգամ, ինչի սահմանադրաիրավական հետևանքը Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Ազգային ժողովի արձակումն է իրավունքի ուժով: Հուսով եմ, որ Սահմանադրության 2020 թվականի փոփոխություններով Սահմանադրական դատարանի ճգնաժամի լուծման տարբերակի ընդդիմախոսների հնչեցրած այն մտահոգությունը, որ Սահմանադրական դատարանի վերաբերյալ բարեփոխումները կարող են հանգեցնել նույն քաղաքական ուժի՝ նույն գումարման Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության ընտրությանը, որով և նույն քաղաքական ուժի կողմից Սահմանադրական դատարանում որոշիչ ձայների ձևավորմանն իր հայեցողյամբ, այլևս փարատվեցին:

43. Փաստացի, այս հատուկ կարծիքը հրապարակելու պահի դրությամբ Սահմանադրական դատարանի՝

(1) 2 դատավոր՝ տիկին Ա. Պետրոսյանը և պարոն Ա. Թունյանը, նշանակվել են Հանրապետության 3-րդ նախագահի կողմից՝ համապատասխանաբար 2010 և 2014 թվականներին,

(2) 2 դատավոր՝ պարոնայք Ա. Խաչատրյանը և Հ. Թովմասյանը նշանակվել են համապատասխանաբար 2010 թվականին 4-րդ գումարման և 2018 թվականին 6-րդ գումարման Ազգային ժողովի կողմից,

(3) 1 դատավոր՝ պարոն Ա. Դիլանյանը, ընտրվել է 6-րդ գումարման Ազգային ժողովի կողմից 2018 թվականին՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ,

(4) 4 դատավոր՝ պարոնայք Ա. Վաղարշյանը (Հանրապետության 4-րդ նախագահի առաջարկությամբ), Ե. Խունդկարյանը (դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ), Է. Շաթիրյանը (Կառավարության առաջարկությամբ) 2020 թվականին և ինքս (Հանրապետության 4-րդ նախագահի առաջարկությամբ)՝ 2019 թվականին, ընտրվել են 7-րդ գումարման Ազգային ժողովի կողմից:

44. Սա Սահմանադրական դատարանի ձևավորման հարցում դատավորների և նրանց առաջադրող, նշանակող և ընտրող մարմինների տպավորիչ բազմազանություն է, որով մեկ քաղաքական ուժի վերահսկողությամբ Սահմանադրական դատարան ձևավորվելու մտահոգություններն այլևս անէացնում են:

V. Սահմանադրության փոփոխությունների նախագծի ex ante պարտադիր նախնական ստուգման սահմանադրական կանոնից սահմանված բացառության բանաձևի մասին.

45. Սահմանադրական դատարանը, Որոշման 5.7-5.10 կետերում շարադրել է Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր նախնական ստուգման կանոնից հնարավոր բացառության պայմանները, որոնց հակիրճ շարադրանքը հանգում է նրան, որ հիշյալ կանոնից բացառությունը հնարավոր է միայն, եթե Սահմանադրության փոփոխությունների տվյալ նախագիծը՝

(1) վերաբերում է Սահմանադրական դատարանի գործող դատավորներին, և

(2) չի վերաբերում նախորդ կետում նշված շրջանակից դուրս որևէ այլ անձի, և

(3) պարունակում է Սահմանադրական դատարանի դատավորների և տվյալ նախագծով դրա հեղինակների կողմից հետապնդվող շահերի բախման ռիսկ Սահմանադրական դատարանի դատավորների այն մեծամասնության համար, որի՝ տվյալ գործով ստուգմանը շահերի բախումից խուսափելու նպա-

տակով մասնակցության անհնարինության պայմաններում, Սահմանադրական դատարանը հայտնվում է իրավագործության բացակայության պայմաններում:

46. Որոշմամբ սահմանված «*ողջամիտ բացառության*» կանոնի առնչությամբ Սահմանադրական դատարանի հակիրճ և պահպանողական ոճի բերումով, դուրս են մնացել մի շարք հանգամանքներ, որոնք, իմ կարծիքով, հատուկ ընդգծման կարիք ունեն:

47. Նախ, ինչպես արդեն երևում է, Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր նախնական ստուգման կանոնից հնարավոր բացառության պայմանները վերաբերում են բացառապես Սահմանադրական դատարանի դատավորների շահերի այնպիսի բախման հնարավոր իրավիճակին, որը Սահմանադրական դատարանում կհանգեցնի *non liquet* վիճակի, այսինքն՝ դատարանի իրավագործության բացառման:

48. Մանրամասն ուսումնասիրելով հայաստանյան սահմանադրական իրողությունը՝ Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունել նաև արդի համեմատական սահմանադրական իրավունքի և միջազգային իրավակիրառ և փորձագիտական մոտեցումները: Մասնավորապես, միջազգային փորձագիտական շրջանակների կողմից հետևողականորեն պաշտպանվող այն դիրքորոշումը, որ սահմանադրական դատարանները պետք է բոլոր հնարավոր իրավական միջոցներով խուսափեն *non liquet* իրավիճակներում հայտնվելուց, վերաբերում են բացառապես իրավիճակների, երբ սահմանադրական դատարանի դատավորների անհատական շահերը, ունենալով սահմանադրականության ստուգման ենթակա ակտով հետապնդվող հանրային շահերի հետ բախման իրական վտանգ, այդուհանդերձ չեն բացառում տվյալ դատավորի գործի քննության մասնակցությունը: Սակայն բոլոր հնարավոր դեպքերի քննարկումից ու ուսումնասիրությունից ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է դեպքերին, երբ ստուգման ենթակա ակտն առնչվում է նաև սահմանադրական դատարանի դատավորներից բացի այլ անձանց իրավունքներին, ազատություններին և շահերին²⁸:

49. Հիրավի, դատավորների մոտ անաչառության կամ անկողմնակալության բացակայությունը որոշ իրավիճակներում չի կարող հիմք ծառայել այդ դատավորների կողմից գործերի մասնակցության անհնարինության՝ անկախ շահերի բախման բնույթից և դրա՝ գործի ելքի վրա հնարավոր ազդեցության

²⁸ Տե՛ս, օրինակ՝ CDL-AD(2006)006 Opinion on the Two Draft Laws amending Law No. 47/1992 on the organisation and functioning of the Constitutional Court of Romania, paragraph 7, CDL-AD(2016)036 Amicus Curiae Brief for the Albanian Constitutional Court on the Law on the Transitional Re-Evaluation of Judges and Prosecutors, paragraphs 20-22, 24-25, CDL-AD(2016)001, Opinion on Amendments to the Act of 25 June 2015 on the Constitutional Tribunal of Poland, paragraphs 37-38:

աստիճանից: Ավելին, իրավասու մասնագիտացված միջազգային մարմինների կողմից խնամքով մշակվել և գործողության մեջ է դրվել նույնիսկ «անհրաժեշտության դրկտրինը», որի էությունն այն է, որ դատավորը չի կարող բացառվել գործի քննությունից, անգամ շահերի ընգծված բախման պայմաններում, այլապես նման իրավիճակը կարող է հանգեցնել **արդարադատության մերժման**²⁹: Ահա ուրեմն, արդարադատության մերժման վիճակից խուսափելու հրամայականն է, որ լինելով իրավական պետության և մարդու իրավունքների դիտանկյունից անհանդուրժելի մի իրողության, *non liquet* իրավիճակներից խուսափելու համար պատճառն է:

50. Սահմանադրական դատարանը լիովին ընդունել է այս մոտեցումը, որի արտահայտությունը Ռոշմամբ նախատեսված բացառության կանոնի պարտադիր այն պայմանն է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի ստուգման կանոնից բացառությունը որևէ դեպքում թույլատրելի և ողջամիտ համարվել չի կարող, եթե այն կիրառվում է Սահմանադրության փոփոխությունների մի նախագծի նկատմամբ, որը վերաբերում է այլոց իրավունքներին: Այսինքն, Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր նախնական ստուգման կանոնից բացառությունը ողջամիտ և թույլատրելի համարելով բացառապես Սահմանադրական դատարանի դատավորներին վերաբերող նախագծերի համար, և, համապատասխանաբար, բացառելով բացառության այդ կանոնի կիրառումը որևէ 3-րդ անձի շահերի և իրավունքների առնչությամբ նախագծի նկատմամբ՝ Սահմանադրական դատարանը հանդես է եկել վերը նշված իր՝ սահմանադրական ժողովրդավարության համար առանցքային նշանակություն ունեցող մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության նկատառումներով:

51. Երկրորդ, Սահմանադրական դատարանի դատավորների անհատական և Սահմանադրության փոփոխությունները նախաձեռնող սուբյեկտի կողմից Սահմանադրության փոփոխությունների նախագծով հետապնդվող շահերի միջև բախման պայմաններում տվյալ նախագծի սահմանադրականության ստուգման կանոնից բացառություն սահմանելով՝ Սահմանադրական դատարանը մերժել է սույն գործով դիմող կողմի այն պնդումը, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական ստուգման ներկայացնելը Ազգային ժողովի համար բացարձակ պարտականություն է: Սահմանադրական դատարանն այս հարցում հանդես է եկել վերը նշված իր՝ սահմանադրական ժողովրդավարության համար առանցքային նշանակություն ունեցող ժողովրդավարության պաշտպանությամբ:

²⁹ St' u Bangalore Principles of Judicial Conduct, ինչպես նաև՝ The Commentary on the Bangalore Principles by the UN Office of Drugs and Crime, para. 100:

յան և ժողովրդավարական գործընթացների (ինչպիսին է Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնման և ընդունման գործընթացը) արդյունավետության պաշտպանության նկատառումներով:

52. Երրորդ, Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական ստուգման կանոնը բխեցնելով՝ Սահմանադրության համապատասխան դրույթների համալիր վերլուծությունից՝ Սահմանադրական դատարանը մերժել է նաև Ազգային ժողովի դիրքորոշումն առ այն, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական ստուգման ուղարկելն Ազգային ժողովի անսահմանափակ հայեցողությունն է: Սահմանադրական դատարանն այս հարցում հանդես է եկել վերը նշված իր՝ սահմանադրական ժողովրդավարության համար առանցքային նշանակություն ունեցող իրավունքի գերակայության ապահովման նկատառումներով:

53. Եվ, ի վերջո, Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական ստուգման կանոնից բացառության սահմանումն այն սահմանող դատավորներին համար, որոնք հստակորեն գիտակցում են, որ այս կանոնը հավասարապես կիրառվելու է նաև բոլորիս նկատմամբ, եթե այն բավարարի վերը նշված չափանիշներին, ամբողջությամբ բխում է արդարադատություն իրականացնող դատավորի (1) **ժողովրդավարական հասարակությունում ունեցած դերից** և (2) **սահմանադրի և Սահմանադրական դատարանի դատավորի հարաբերությունների բնույթից**.

(1) Որոշելով Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության նախնական ստուգումից բացառության կանոնը՝ թույլատրելու համար միայն Սահմանադրական դատարանի դատավորների իրավունքների, ազատությունների և շահերին վերաբերող նախագծերի առնչությամբ, Սահմանադրական դատարանը հավաստում է արդարադատության, առհասարակ, և սահմանադրական արդարադատության, մասնավորապես, առաջնային այն բնույթը դատավորի համար, որի համաձայն արդարադատություն իրականացնելիս դատավորը գործում և տնօրինում է իր իշխանական լիազորությունները բացառապես այլոց իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանության և իրավարարության նպատակներով: Նա որևէ դեպքում իր իշխանական լիազորությունների իրականացումը չի կարող դիտարկել իր անհատական շահերի և իրավունքների պաշտպանության շրջանակում:

(2) Սահմանադրի և Սահմանադրական դատարանի դատավորի հարաբերությունները բնութագրվում են որպես **սահմանադրի կողմից Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ հատուկ վստահության և Սահմանադրական դատարանի դատավորի կողմից սահմանադրի նկատ-**

մամբ հատուկ հավատարմության փոխադարձ հարաբերություններ³⁰: Սահմանադրի կողմից հատուկ վստահության վերաբերմունքը Սահմանադրական դատարանին Սահմանադրությամբ շնորհված ընդարձակ լիազորություններն են, Սահմանադրության նորմերի վերջնական և պարտադիր կատարման ենթակա մեկնաբանությունների իշխանությունը, որն իրագործում են Սահմանադրական դատարանի դատավորները: Փոխադարձաբար, Սահմանադրական դատարանի դատավորի հատուկ հավատարմության վերաբերմունքը դրսևորովում է սահմանադրի կամքին համակ հավատարմությամբ ծառայելով, իսկ անձնական շահերի հետ բախման պայմաններում՝ դրանց անտեսմամբ:

10 մայիսի 2021 թվականի

Ծանոթագրություն. *Մոյն հատուկ կարծիքի 43-րդ կետում 2021 թվականի մայիսի 20-ին կատարվել է փաստական տվյալի նշումը՝ Սահմանադրական դատարանի դատավոր պրն. Ա. Թունյանի նշանակման մարմնի մասով:*

ԴԱՏԱՎՈՐ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

20 մայիսի 2021 թվականի
(*Ծանոթագրությամբ խմբագրված տեսքով*)

³⁰ Այս կառուցակարգն իր նախադեպն ունի Pellegrin v. France [GC], no. 28541/95, § 65, Vilho Eskelinen and Others v. Finland [GC], no. 63235/00, § 62 գործերում ՄԻԵԿ իրավունքի զարգացման ՄԻԵԿ վճիռներում քաղաքացիական ծառայողի եւ պետության հարաբերությունների վերաբերությամբ, իհարկե, էականորեն նվազ սերտությամբ եւ փոխադարձությամբ, ինչպես նշված է Սահմանադրական դատարանի դատավորի եւ սահմանադրի հարաբերությունների մասով:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ
ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 86-ՐԴ
ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 5-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ
ՄԱՍԻ 4.2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱ-
ՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ» ՍԴՈ-1590 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2021 թվականի ապրիլի 29-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը՝ Սահմանադրական դատարանը որոշել է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետը, 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը (ՍԴՈ-1590):

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1590 որոշման վերաբերյալ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021 թվականի մայիսի 3-ին Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնող Արման Դիլանյանի ստորագրությամբ հրապարակված ՄԴՈ-1590 որոշման տեքստը¹ բովանդակային առումով տարբերվում է 2021 թվականի ապրիլի 29-ին Սահմանադրական դատարանի կողմից ընդունված ՄԴՈ-1590 որոշման տեքստից (2021 թվականի ապրիլի 29-ին Սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշման նախագծի տեքստը կցվում է՝ Հավելված N 2)² սույն հատուկ կարծիքը ներկայացնում ենք՝ հիմք ընդունելով 2021 թվականի ապրիլի 29-ին Սահմանադրական դատարանի դատավորների կողմից քվեարկված և ընդունված ՄԴՈ-1590 որոշման տեքստը²:

1. Դիմումի ընդունելիության և գործի դատաքննության նախապատրաստելու ընթացքում թույլ տրված խախտումները

Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի դիմումը (այսուհետ՝ նաև դիմում) Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի օգոստոսի 18-ին:

Դիմումի ընդունելիության և գործի դատաքննության նախապատրաստելու ընթացքում թույլ են տրվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և Սահմանադրական դատարանի աշխատակարգի խախտումներ:

2020 թվականի օգոստոսի 19-ին Սահմանադրական դատարանի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարող Աշոտ Խաչատրյանը նախնական ուսումնասիրման նպատակով *դիմումը մակագրել է Սահմանադրական դատարանի դատավորներ Արաիկ Թունյանին, Վահե Գրիգորյանին և Արման Դիլանյանին:*

Սահմանադրական դատարանի աշխատակարգի 27-րդ կետի համաձայն՝ «դիմումի նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի դիմումը մուտքագրելուց հետո ոչ ուշ, քան հետևյալ ժամկետներում.

- 1) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ... նշված գործերով դիմումներինը՝ **30-օրյա ժամկետում,**

¹<https://www.concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1590.pdf>

² Հարկ ենք համարում նշել, որ մեր կողմից (Հ. Թովմայան, Ա. Դեղրոսյան) հատուկ քննարկվել է Սահմանադրական դատարանի դատավորների կողմից քվեարկված և ընդունված ՄԴՈ-1590 որոշման տեքստը ստորագրելիս չի կարող փոփոխվել, բացի քերականական շտկումների, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորների կողմից ներկայացված և ընդունված երկու առաջարկության՝ տեքստի պատճառաբանական մասից հանել Սահմանադրական դատարանի դատավորների անուն ազգանունները, ինչպես նաև կատարել ժխտական մեկ մասնիկի վրիպման ուղղում:

2) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի ... 75-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործերով դիմումներինը՝ **20-օրյա ժամկետում**»:

Իսկ Սահմանադրական դատարանի աշխատակարգի 29-րդ կետի համաձայն՝ «դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետները երկարաձգելու նպատակով մինչև սահմանված ժամկետները լրանալը Սահմանադրական դատարանի՝ դիմումի նախնական ուսումնասիրումն իրականացնող դատավորը միջնորդություն է ներկայացնում Սահմանադրական դատարանի նախագահին՝ դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ: Դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշում ընդունելիս Սահմանադրական դատարանի նախագահը հաշվի է առնում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով տվյալ գործի քննության համար նախատեսված ժամկետը»:

2020 թվականի սեպտեմբերի 7-ին դիմումի նախնական ուսումնասիրում իրականացնող Սահմանադրական դատարանի դատավորներ Վահե Գրիգորյանը և Արման Դիլանյանը համատեղ միջնորդություն են ներկայացրել՝ անհրաժեշտությունից ելնելով դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգել **մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը**: Սակայն Վահե Գրիգորյանը և Արման Դիլանյանը որոշակի չեն նշել, թե այդ անհրաժեշտությունն ինչո՞վ է պայմանավորված:

Հիմք ընդունելով հիշյալ միջնորդությունը՝ Սահմանադրական դատարանի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարող Աշոտ Խաչատրյանը 2020 թվականի սեպտեմբերի 7-ի ՍԳՆՈ-82 որոշմամբ դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգել է **մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը**: Աշոտ Խաչատրյանը ՍԳՆՈ-82 որոշմամբ փաստել է, որ ժամկետը երկարաձգում է՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

2020 թվականի սեպտեմբերի 29-ին դիմումի նախնական ուսումնասիրում իրականացնող Սահմանադրական դատարանի դատավոր Արման Դիլանյանը կրկին միջնորդություն է ներկայացրել՝ անհրաժեշտությունից ելնելով դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 12-ը ներառյալ: Արման Դիլանյանը կրկին որոշակի չի նշել, թե այդ անհրաժեշտությունն ինչո՞վ է պայմանավորված:

Հիմք ընդունելով վերոհիշյալ միջնորդությունը՝ Սահմանադրական դատարանի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարող Աշոտ Խաչատրյանը 2020 թվականի սեպտեմբերի 29-ի ՍԳՆՈ-88 որոշմամբ դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգել է **մինչև 2020**

թվականի հոկտեմբերի 12-ը ներառյալ³: Աշոտ Խաչատրյանը ՄԳՆՈ-88 որոշմամբ նշել է, որ ժամկետը երկարաձգում է՝ ելնելով անհրաժեշտությունից: Այսինքն, ի տարբերություն ՄԳՆՈ-82 որոշման, այս դեպքում չի որոշակիացրել, թե այդ անհրաժեշտությունն ինչո՞վ է պայմանավորված:

Սահմանադրական դատարանի աշխատակարգի 30-րդ կետի համաձայն՝ «դիմումի նախնական ուսումնասիրումն իրականացնող Սահմանադրական դատարանի դատավորը դիմումի նախնական ուսումնասիրման արդյունքներով կազմում է հաղորդում գործը քննության ընդունելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջների պահպանվածության վերաբերյալ»:

2020 թվականի հոկտեմբերի 12-ին դիմումի նախնական ուսումնասիրում իրականացնող Սահմանադրական դատարանի դատավորներ Արաիկ Թունյանը և Վահե Գրիգորյանը ներկայացրել են գործը քննության ընդունելու հարցի վերաբերյալ հաղորդումներ: Արաիկ Թունյանը նշել է, որ դիմումը համապատասխանում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի պահանջներին, իսկ այն քննության ընդունելու հարցն առաջարկել է քննարկել Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստում: Իսկ Վահե Գրիգորյանը նշել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կարգով ուսումնասիրել է դիմումը և հայտնել, որ այն բավարարում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների պահանջները և գործը կարող է մասամբ ընդունվել քննության: Վահե Գրիգորյանը, սակայն, չի որոշակիացրել, թե գործը ո՞ր մասով կարող է ընդունվել քննության:

Երկու անգամ ներկայացնելով միջնորդություն՝ դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, որի արդյունքում սույն գործի քննության ընդհանուր ժամկետից սպառվում է գրեթե երկու ամիս, **դիմումի նախնական ուսումնասիրում իրականացնող Սահմանադրական դատարանի դատավոր Արման Դիլանյանը, մինչև 2020 թվականի հոկտեմբերի 12-ը ներառյալ, այդպես էլ գործը քննության ընդունելու հարցի վերաբերյալ հաղորդում չի ներկայացրել:**

Սահմանադրական դատարանի աշխատակարգի 31-րդ կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի նախագահը գործը քննության ընդուն-

³Սահմանադրական դատարանի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարող Աշոտ Խաչատրյանը նույն օրը՝ 2020 թվականի հոկտեմբերի 12-ին, հրավիրել է Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ՝ օրակարգում ներառելով նաև Սահմանադրական դատարանի նախագահի ընտրության հարցը: Հիշյալ աշխատակարգային նիստը հրավիրելու մասին Սահմանադրական դատարանի դատավորները ծանուցվել են 2020 թվականի սեպտեմբերի 29-ին, այսինքն՝ նույն օրը, երբ ստորագրվել է ՄԳՆՈ-88 որոշումը:

ներու հարցի վերաբերյալ հաղորդումն ստանալուց հետո գործը քննության ընդունելու հարցը լուծելու նպատակով ողջամիտ ժամկետում հրավիրում է Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ»:

Սահմանադրական դատարանի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարող Աշոտ Խաչատրյանը դիմումի ընդունելիության հարցն ընդգրկել է Սահմանադրական դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի աշխատակարգային նիստի օրակարգում (որպես նախավերջին՝ 19-րդ հարց)⁴, որի քննությունը, սակայն, այդ նիստում չի իրականացվել և հետագա աշխատակարգային նիստերում ևս անընդհատ հետաձգվել է:

Դիմումը, ի վերջո, քննության է առնվել Սահմանադրական դատարանի **2020 թվականի դեկտեմբերի 2-ի** աշխատակարգային նիստում, որի արդյունքում կայացվել է հետևյալ աշխատակարգային որոշումը (ՄԴԱՈ-231).

«1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից իր լիազորությունների իրականացման, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ գործի դատաքննությունն սկսել 2021 թվականի փետրվարի 9-ին՝ ժամը 11.00-ին:

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ գործով զեկուցողներ նշանակել Սահմանադրական դատարանի դատավորներ Ա. Թունյանին, Ա. Խաչատրյանին, Ե. Խունդկարյանին, Է. Շաթիրյանին, Ա. Վաղարշյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի, 68-րդ հոդվածի 7-րդ մասի, 75-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

5. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի և 75-րդ հոդվածի 3-րդ մասի՝ սույն գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել Հանրապետության նախագահին, Ազգային ժողովին ու Կառավարությանը»:

⁴ Հիշյալ աշխատակարգային նիստը հրավիրելու մասին Սահմանադրական դատարանի դատավորները ծանուցվել են 2020 թվականի հոկտեմբերի 14-ին:

Սահմանադրական դատարանի հիշյալ աշխատակարգային որոշման նախագիծը Սահմանադրական դատարանի դատավորներին **չի տրամադրվել:**

Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնող Արման Դիվանյանի կողմից ՄԳԱՈ-231 աշխատակարգային որոշումը ստորագրելուց և Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակելուց հետո ակնհայտ է դարձել, որ այդ որոշումը ձևակերպվել է **«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի մի շարք պահանջների խախտմամբ:**

Նախ՝ հարկ է նշել, որ դիմումը ներկայացվել է՝ հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ և 75-րդ հոդվածները: Այսինքն՝ դիմումը ներկայացվել է վերացական սահմանադրական վերահսկողության և սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի հարցերով: ՄԳԱՈ-231 աշխատակարգային որոշմամբ գործը քննության է ընդունվել ամբողջությամբ:

ՄԳԱՈ-231 աշխատակարգային որոշումը, համապատասխան ձևակերպումներով, պետք է ընդունվեր՝ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածով և 75-րդ հոդվածով նշված գործերի քննության և լուծման առանձնահատկությունները:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, **բայց ոչ ավելի, քան երեք ամսով:**»

ՄԳԱՈ-231 աշխատակարգային որոշման 2-րդ կետից հետևում է, որ Սահմանադրական դատարանը, գործը քննության ընդունելով 2020 թվականի դեկտեմբերի 2-ին, այսինքն՝ **դիմումը Սահմանադրական դատարան մուտքագրվելուց (18.08.2020 թ.) երեք ամիս հետո**, չի պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված՝ **գործով որոշում ընդունելու** եռամսյա ժամկետը: Բացի այդ, հիշյալ **եռամսյա ժամկետի սպառված լինելու** պայմաններում, Սահմանադրական դատարանը գործի դատաքննությունը սկսելու ժամկետ է սահմանել 2021 թվականի փետրվարի 9-ը՝ աշխատակարգային որոշմամբ որևէ կերպ չպատճառաբանելով գործի դատաքննությունն

սկսելու ժամկետը գործի քննության եռամսյա ժամկետի սպառումից հետո սահմանելը:

Այսինքն՝ առանց որևէ պատճառաբանության գործի քննության ժամկետը երկարաձգվել է: Դրանով չի պահպանվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանված պատճառաբանված որոշում ընդունելու պահանջը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը լուծում է նաև գործով պատասխանող կողմ ներգրավելու ... հարցերը»:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավվում է վիճարկվող ակտն ընդունած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը», իսկ նույն օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ կարող է հանդես գալ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը և Կառավարությունը»:

ՄԴԱՌ-231 աշխատակարգային որոշման 5-րդ կետից հետևում է, որ ամբողջությամբ չի պահպանվել գործով պատասխանող կողմ ներգրավելու մասով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

ՄԴԱՌ-231 աշխատակարգային որոշման 5-րդ կետում չի վկայակոչվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 5-րդ մասը: Այսինքն՝ դրա արդյունքում ստացվում է, որ վերացական սահմանադրական վերահսկողության հարցով, այն է՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածով նշված գործի մասով, Սահմանադրական դատարանը պատասխանող կողմ չի ներգրավել:

ՄԴԱՌ-231 աշխատակարգային որոշման 5-րդ կետում վկայակոչվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը: Այսինքն՝ դրա արդյունքում ստացվում է, որ Սահմանադրական դատարանը գործով պատասխանող կողմ է ներգրավել միայն սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի հարցով, այն է՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածով նշված գործի մասով: Սակայն, այդ մասով ևս առկա է խնդիր:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասից չի բխում, որ հիշյալ հոդվածով նշված բոլոր գոր-

ծերով որպես պատասխանող կողմ կարող են միաժամանակ հանդես գալ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը և Կառավարությունը: Ասվածը բխում է նաև նույն՝ 75-րդ հոդվածի 1-ին մասից, համաձայն որի՝ «սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան կարող են դիմել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը՝ Ազգային ժողովի և Ազգային ժողովի մարմինների սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով, Հանրապետության նախագահը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով»:

Այսինքն՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է նույն հոդվածի 1-ին մասով նշված գործերի համար ընդհանուր իրավակարգավորում: Սահմանադրական դատարանը **յուրաքանչյուր կոնկրետ գործով** պետք է որպես պատասխանող կողմ ներգրավի հիշյալ օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կոնկրետ սուբյեկտի՝ հարցը փոխկապակցելով նույն հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման հետ:

Սույն գործով դիմողը պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդն է, ով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել Ազգային ժողովի և Ազգային ժողովի մարմինների սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով: ՍԴԱՌ-231 աշխատակարգային որոշմամբ առնվազն պետք է պատճառաբանվեր, թե ինչո՞ւ է սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավվել նաև Հանրապետության նախագահը և Կառավարությունը: Ինչը չի կատարվել:

2020 թվականի դեկտեմբերի 18-ին Սահմանադրական դատարանի դատավորներին Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից էլեկտրոնային փոստով տրամադրվել է դիմող կողմի միջնորդությունը՝ սույն գործով անցնել բանավոր դատաքննության: Այդ միջնորդությունը, սակայն, Սահմանադրական դատարանում **մուտքագրվել է 2020 թվականի դեկտեմբերի 22-ի ամսաթվով**: Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնող Արման Դիլանյանը հիշյալ միջնորդությունը քննության առնելու հարցը ներառել է Սահմանադրական դատարանի՝ միայն **2021 թվականի փետրվարի 1-ին** իր կողմից հրավիրված աշխատակարգային նիստի օրակարգում⁵: Եվ դա այն դեպքում, երբ մինչև այդ նիստը հրավիրվել են աշխատակար-

⁵ Հիշյալ աշխատակարգային նիստը հրավիրելու մասին Սահմանադրական դատարանի դատավորները ծանուցվել են 2021 թվականի հունվարի 29-ին:

գային այլ նիստեր, սակայն, հիշյալ միջնորդությունը քննության առարկա չի դարձել:

2021 թվականի փետրվարի 1-ին Սահմանադրական դատարանն ընդունել է հետևյալ աշխատակարգային որոշումը (ՄԴԱՌ-20).

«1. Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 5-րդ մասը և Սահմանադրական դատարանի աշխատակարգի 67-րդ կետը՝ բավարարել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից իր լիազորությունների իրականացման, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դիմող կողմի միջնորդությունը և անցնել բանավոր ընթացակարգով դատաքննության:

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 2-ի ՄԴԱՌ-231 աշխատակարգային որոշման 4-րդ կետը»:

Սահմանադրական դատարանի հիշյալ աշխատակարգային որոշման նախագիծը Սահմանադրական դատարանի դատավորներին **չի տրամադրվել:**

Գործով բանավոր ընթացակարգով դատաքննության անցնելու, և ըստ այդմ՝ դիմող կողմի ներկայացրած միջնորդությունը բավարարելու պնդումներ կատարվել են մեր կողմից (Հ. Թովմասյան, Ա. Պետրոսյան)՝ ի թիվս այլնի ընդգծելով, որ այդ ընթացակարգով դատաքննությունը, հաշվի առնելով, նախևառաջ, գործի առանձնահատկությունները, մեծապես կնպաստի գործի հանգամանքների հրապարակային, բազմակողմանի և օբյեկտիվ բացահայտմանը: Բացի այդ, Սահմանադրական դատարանի դատավոր Հրայր Թովմասյանը նաև նշել է, որ ներկայացնելու է միջնորդություն՝ սույն գործով վկաներ հրավիրելու և փորձագետներ ներգրավելու վերաբերյալ և առկա է վերջիններիս հարցեր ուղղելու անհրաժեշտություն:

Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնող Արման Դիլանյանի կողմից ՄԴԱՌ-20 աշխատակարգային որոշումը ստորագրելուց և Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակելուց հետո սկսնայտ է դարձել, որ այդ որոշումը ձևակերպվել է՝ չպահպանելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի, մասնավորապես, 68-րդ հոդվածի 7-րդ մասի և 75-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերը Սահմանադրական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը Սահմանադրական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտմանը», իսկ նույն օրենքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «սույն հոդվածում նշված գործերով դատաքննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը կարող է իրականացվել բանավոր ընթացակարգով»:

ԱԴԱՌ-20 աշխատակարգային որոշման մեջ չի վկայակոչվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասը՝ այն դեպքում, երբ **գործը քննության է ընդունվել ամբողջությամբ**, այդ թվում՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի հիմքով: Իսկ այդ հոդվածով նշված գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու կանոնները սահմանված են նույն հոդվածի 7-րդ մասով, ինչը չի պահպանվել⁶:

ԱԴԱՌ-20 աշխատակարգային որոշման մեջ, թեև վկայակոչվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 5-րդ մասը, սակայն չի պահպանվել հիշյալ դրույթի այն պահանջը, համաձայն որի՝ տվյալ աշխատակարգային որոշմամբ պետք է պատճառաբանվեր գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելը: ՍԴԱՌ-20 աշխատակարգային որոշման 1-ին կետի միայն «... բավարարել ... դիմող կողմի միջնորդությունը» ձևակերպումը, առավել ևս առանց այդ միջնորդության հիմնավորումները վկայակոչելու, Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանություն չէ:

2021 թվականի փետրվարի 3-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի միջնորդությունը՝ գործով բանավոր դատաքննությունը հետաձգելու վերաբերյալ: Այս դեպքում Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնող Արման Դիլանյանը հիշյալ միջնորդությունը քննության առնելու հարցը ներառող օրակարգով Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ է հրավիրել 2021 թվականի փետրվարի 5-ին: Այդ նիստի մասին Սահմանադրական դատարանի դատավորները ծանուցվել են հիշյալ միջնորդությունը

⁶ Հարկ է նշել, որ անգամ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովն էր դիմող կողմի միջնորդության վերաբերյալ գրավոր հայտնել, որ **առկա են բանավոր դատաքննություն անցկացնելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերը:**

Սահմանադրական դատարան մուտքագրվելու նույն օրը՝ 2021 թվականի փետրվարի 3-ին:

2021 թվականի փետրվարի 5-ին Սահմանադրական դատարանն ընդունել է հետևյալ աշխատակարգային որոշումը (ՄԴԱՌ-25).

«1. Բավարարել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից իր լիազորությունների իրականացման, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով պատասխանող կողմի միջնորդությունը և գործի դատաքննությունն սկսելու ժամկետը 2021 թվականի փետրվարի 9-ի ժամը 11.00-ից հետաձգել 2021 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 11.00-ին:

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 2-ի ՄԴԱՌ-231 աշխատակարգային որոշման 2-րդ կետը»:

Սահմանադրական դատարանի հիշյալ աշխատակարգային որոշման նախագիծը Սահմանադրական դատարանի դատավորներին **չի տրամադրվել:**

Հարկ է նշել, որ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի հիշյալ միջնորդության հիմնավորումն առ այն, որ 2021 թվականի փետրվարի 9-ից մինչև փետրվարի 12-ը հրավիրված են Ազգային ժողովի հերթական նիստեր, որոնց պետք է մասնակցեն թե դիմող կողմի ներկայացուցիչ պատգամավորները, թե պատասխանող կողմի ներկայացուցիչ պատգամավորները, ուստի միջնորդվում է Սահմանադրական դատարանում գործով 2021 թվականի փետրվարի 9-ին հրավիրված դատաքննությունը հետաձգել, ընդունելի չի համարվել մեր կողմից (Հ. Թովմասյան, Ա. Պետրոսյան), քանի որ (ա) **պատասխանող կողմը չէր կարող ներկայացնել**, ըստ էության, նաև **դիմող կողմի ներկայացուցիչների՝ Սահմանադրական դատարանի նիստին չմասնակցելու հիմնավորումներ**՝ առանց դիմող կողմի ներկայացուցիչների դիրքորոշման մասին փաստող հիմքի վկայակոչման, (բ) Սահմանադրական դատարանը մինչև հիշյալ միջնորդության քննությունը **պետք է ճշտեր նաև թե դիմող կողմի և թե գործում ներգրավված մյուս պատասխանող կողմերի դիրքորոշումները**, ինչը չէր կատարվել, (գ) եթե անգամ պատասխանող կողմի և դիմող կողմի ներկայացուցիչ հինգ պատգամավորները ներկա չլինեին Ազգային ժողովի հերթական նիստին, ապա այդ **բացակայությունը չէր կարող անհարգելի համարվել**, իսկ Սահմանադրական դատարանի

կողմից սույն գործի քննության և որոշում ընդունելու վեցամսյա ժամկետն արդեն մոտ էր սպառվելուն:

Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնող Արման Դիլանյանի կողմից ՄԳԱՌ-25 աշխատակարգային որոշումը ստորագրելուց և Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակելուց հետո ակնհայտ է դարձել, որ այդ որոշման 1-ին կետի՝ «բավարարել... պատասխանող կողմի միջնորդությունը...» ձևակերպման ընդհանրական բնույթը ստեղծում է տպավորություն, որ գործով ներգրավված բոլոր պատասխանող կողմերի միջնորդության մասին է խոսքը կամ որոշակի չէ և առնվազն առաջացնում է հարց, թե սույն գործով ներգրավված ո՞ր պատասխանող կողմի միջնորդությունն է բավարարվել:

Գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի բացատրությունը, ըստ էության, այն եզրահանգումներով, որ վիճարկվող հարցերի սահմանադրականության վերաբերյալ դիմող կողմի պնդումներն անհիմն են, Սահմանադրական դատարան է մուտքագրվել է 2021 թվականի հունվարի 8-ին⁷:

Գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Կառավարության բացատրությունը՝ այն եզրահանգմամբ, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ, 7-րդ մասերը և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետը համապատասխանում են Սահմանադրության պահանջներին, իսկ գործի վարույթը մնացած մասով ենթակա է կարճման, Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հունվարի 8-ին: Հարկ է նշել, որ Կառավարության բացատրությունը չի եղել ստորագրված, այն եղել է կցված վարչապետ Նիկոլ Փաշինյանի ստորագրությամբ Սահմանադրական դատարան ներկայացված գրությանը: Գործով պատասխանող կողմ ներգրավված Կառավարությունը ներկայացուցիչ չէր նշանակել:

Գործում առկա է Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի գրությունը, որով Սահմանադրական դատարան է ներկայացվել Սահմանադրական դատարանում Հանրապետության նախագահի ներկայացուցիչ Լիլիթ Երեմյանի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 24-ին ստորագրած բացատրությունը⁸: Հիշյալ բացատրությամբ, մասնավորապես, նշվել է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունիսի 22-ի ՀՕ-309-Ն

⁷ Սույն գործով պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչներ են նշանակվել Ազգային ժողովի պատգամավորներ Սուրեն Գրիգորյանը, Վահագն Հովակիմյանը և Արուսյակ Ջուհակյանը:

⁸ Այդ բացատրությունը Սահմանադրական դատարանի դատավորներին չի տրամադրվել, սակայն այն տրամադրվել է դատավարության կողմերին:

սահմանադրական օրենքը Հանրապետության նախագահը 2020 թվականի հունիսի 24-ին ստորագրելով, իրացրել է իր հայեցողական լիազորությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Ներկայացուցչությունը Սահմանադրական դատարանում» վերտառությամբ 46-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կողմերը Սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով:

2. Որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

3. Սահմանադրական դատարանում որպես կողմի ներկայացուցիչ կարող են հանդես գալ նրա լիազորած անձինք՝ պաշտոնատար անձը կամ այն փաստաբանը կամ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձը, որի լիազորությունները հավաստված են օրենքով սահմանված կարգով:

4. Սահմանադրության 168-րդ հոդվածի 11-րդ կետով նախատեսված գործերով Սահմանադրական դատարանում որպես գլխավոր դատախազի ներկայացուցիչ հանդես է գալիս նրա տեղակալը:

5. Յուրաքանչյուր կողմ Սահմանադրական դատարանում կարող է ունենալ ոչ ավելի, քան երեք ներկայացուցիչ»:

Հարկ է նշել, որ հիշյալ հոդվածով սահմանված՝ Սահմանադրական դատարանում ներկայացուցչության հետ կապված կարգավորումները Հանրապետության նախագահը, բացի սույն գործից, հիմք է ընդունել որպես դիմող կողմ Սահմանադրական դատարանում հանդես գալու ժամանակ: Ինչպես և վերոհիշյալ հոդվածով սահմանված է՝ կարգավորումները վերաբերում են կողմերին, այսինքն՝ հավասարապես վերաբերում են Սահմանադրական դատարանում թե որպես դիմող և թե որպես պատասխանող կողմ հանդես գալուն՝ առանց բացառության:

Գործում **առկա չէ** Հանրապետության նախագահի կողմից Լիլիթ Երեմյանին սույն գործով Հանրապետության նախագահի ներկայացուցիչ նշանակելու մասին համապատասխան ակտը: Գործում առկա է Հանրապետության նախագահի կողմից Հանրապետության նախագահի օգնական Լիլիթ Երեմյանին Սահմանադրական դատարանում՝ որպես Հանրապետության նախագահի ներկայացուցիչ նշանակելու լիազորագրի պատճենը՝ տրված 2020 թվականի մարտի 16-ին⁹: Պարզ չէ, թե այդ լիազորագրի պատճենը ի՞նչ հիմքով

⁹ Ի դեպ՝ Հանրապետության նախագահը 2020 թվականի հունիսի 11-ին համանման լիազորագիր է տվել նաև Ալեքսանդր Խաչատրյանին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

կամ ո՞ւմ նախաձեռնությամբ է դրվել գործում: Համենայնդեպս, **գործում առկա չէ Հանրապետության նախագահի համապատասխան գրությունը:** Բացի այդ, Լիլիթ Երեմյանին տրված լիազորագիրն ունի ընդհանրական բնույթ, չի վերաբերում Հանրապետության նախագահի կողմից կոնկրետ գործով որպես կողմ հանդես գալուն, այսինքն՝ դրանով իրացվում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը: Այդ իրավակարգավորման դեպքում Սահմանադրական դատարանում Հանրապետության նախագահի ներկայացուցիչը կարող է դիմել Սահմանադրական դատարան և նախապես ստանալ քննվող գործին առնչվող նյութերը, իսկ դատաքննության ընթացքում նա կարող է միայն **հրավիրյալի կարգավիճակով** պարզաբանումներ տալ Սահմանադրական դատարանի՝ իրեն ուղղած հարցերի վերաբերյալ, մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածով սահմանված ներկայացուցչության դեպքում կողմի **ներկայացուցչի իրավունքների և պարտականությունների ծավալը լրիվ այլ է:**

Այսինքն՝ Լիլիթ Երեմյանի ներկայացրած բացատրությունը չէր կարող Սահմանադրական դատարանի կողմից ընդունվել դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավված Հանրապետության նախագահի բացատրություն, դրվեր գործում և Լիլիթ Երեմյանին ուղարկվեր գործի նյութ համարվող գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի, Կառավարության բացատրությունները, այլ նյութեր: Լիլիթ Երեմյանի բացատրությունը, սակայն, հիմք է ընդունվել:

Սահմանադրական դատարանի աշխատակարգի 47-րդ կետի համաձայն՝ «զեկուցողի կողմից տվյալ գործով Սահմանադրական դատարանի ըստ էության **որոշման** կամ եզրակացության **նախագիծն ուղարկվում է Սահմանադրական դատարանի նախագահին և Սահմանադրական դատարանի մյուս դատավորներին՝** գործը զեկուցողին մակագրվելու պահից՝ սույն կետի 1-7-րդ ենթակետերում նշված ժամկետներում, եթե Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ կամ զեկուցողի միջնորդությամբ Սահմանադրական դատարանի նախագահի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով տվյալ գործի քննության համար նախատեսված ժամկետի շրջանակներում այլ ժամկետ սահմանված չէ.

1) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ ... հոդվածներում նշված գործերով՝ ոչ ուշ, քան 90 օր հետո,

2) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի ... 75-րդ ... հոդվածներում նշված գործերով՝ ոչ ուշ, քան 30 օր հետո»:

Սույն գործով զեկուցողներ՝ Սահմանադրական դատարանի դատավորներ Արաիկ Թունյանի, Աշոտ Խաչատրյանի, Երվանդ Խունդկարյանի, Էդգար

Շաթիրյանի և Արթուր Վաղարշյանի կողմից Սահմանադրական դատարանի աշխատակարգի 47-րդ կետով **սահմանված ժամկետներում Սահմանադրական դատարանի դատավորներին Սահմանադրական դատարանի որոշման նախագիծ չի ուղարկվել:**

Սահմանադրական դատարանի դատավորներին 2021 թվականի փետրվարի 8-ին ժամը 21.06-ին էլեկտրոնային փոստով ուղարկվել է Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստի ծանուցում, որ 2021 թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 11.00-ին հրավիրվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ՝ գործի վարույթը մասամբ կարճելու հարցով:

Գործի վարույթը մասամբ կարճելու մասին Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշման նախագիծը Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնող Արման Դիլանյանի կողմից էլեկտրոնային փոստով Սահմանադրական դատարանի դատավորներին է ուղարկվել 2021 թվականի փետրվարի 9-ին՝ ժամը 18.56-ին՝ նշելով, որ ուղարկում է իրավախորհրդատվական վարչության կողմից նախապատրաստված աշխատակարգային որոշման նախագիծը, որում իրացված են տվյալ գործով առանձին զեկուցողների կողմից ներկայացված գաղափարները:

Հարկ է նշել, որ **աշխատակարգային որոշման նախագիծ նախապատրաստելու և ուղարկելու այսպիսի ընթացակարգ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով և Սահմանադրական դատարանի աշխատակարգով նախատեսված չէ:**

Սահմանադրական դատարանն իր 2021 թվականի փետրվարի 11-ի աշխատակարգային նիստում՝ նկատի ունենալով, որ գործի քննությունը մասամբ կարճվել է, կայացրել է հետևյալ աշխատակարգային որոշումը (ՄԳԱՈ-29).

«1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով:

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 1-ի ՄԳԱՈ-20 աշխատակարգային որոշման 1-ին կետը»:

Նախ՝ **Սահմանադրական դատարանի հիշյալ աշխատակարգային որոշման նախագիծը Սահմանադրական դատարանի դատավորներին ոչ միայն չի տրամադրվել, այլև նախապես չի ծանուցվել, որ աշխատակարգային նիստում քննարկվելու է գործով բանավոր ընթացակարգից կրկին գրավոր ընթացակարգով դատաքննության անցնելու հարց:**

Գործով բանավոր ընթացակարգով դատաքննությունից կրկին գրավոր ընթացակարգով դատաքննության անցնելու վերաբերյալ մեր կողմից (Հ. Թովմասյան, Ա. Պետրոսյան) ներկայացվել են առարկություններ՝ նշելով, որ ընդամենն օրեր առաջ՝ փետրվարի 1-ին, Սահմանադրական դատարանը որոշել է գործով գրավոր ընթացակարգով դատաքննությունից անցնել բանավոր ընթացակարգով դատաքննության, ուստի անընդունելի է փետրվարի 11-ին ընդունել հակառակ որոշումը՝ դրանով ստեղծվում են Սահմանադրական դատարանի հեղինակագրկման նախադրյալներ, անտեսվում են բանավոր ընթացակարգով դատաքննության անցնելու հիմնավորումները, իսկ գործի սոսկ մասամբ կարճումը չի կարող համարվել գործի քննության ընթացակարգը փոփոխելու պատճառաբանություն: Բացի այդ, նշել ենք, որ հարցի վերաբերյալ փորձ չի կատարվում լսել կամ ստանալ դատավարության կողմերի դիրքորոշումները և կարծիքները, և դա այն դեպքում, երբ գործով գրավոր ընթացակարգով դատաքննությունից բանավոր ընթացակարգով դատաքննության Սահմանադրական դատարանն անցել է դիմող կողմի միջնորդության հիման վրա:

2021 թվականի փետրվարի 11-ի աշխատակարգային նիստից մեկ օր հետո Սահմանադրական դատարանի դատավորները ծանուցվել են, որ 2021 թվականի փետրվարի 15-ին հրավիրվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ, որի օրակարգում ներառված է նաև արդեն մասամբ կարճված գործի դատաքննությունը սկսելու ժամկետը հետաձգելու հարցը:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի փետրվարի 15-ի աշխատակարգային նիստում կայացրել է հետևյալ աշխատակարգային որոշումը (ՄԴԱՌ-30).

«1. Ելնելով լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունից՝ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննության ժամկետը երեք ամսով երկարաձգել և դատաքննությունն սկսելու ժամկետը 2021 թվականի փետրվարի 17-ի ժամը 11.00-ից հետաձգել 2021 թվականի ապրիլի 20-ին՝ ժամը 11.00-ին:

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 5-ի ՄԴԱՌ-25 աշխատակարգային որոշման 1-ին կետը»:

Սահմանադրական դատարանի հիշյալ աշխատակարգային որոշման նախագիծը Սահմանադրական դատարանի դատավորներին **չի տրամադրվել:**

Հիշյալ աշխատակարգային նիստի ընթացքում չեն ներկայացվել բավարար հիմնավորումներ, թե գործի մասամբ կարճման, այսինքն, գործի քննության ծավալների նվազման պայմաններում ինչո՞վ է պայմանավորված առավել քան երկու ամսով գործի դատաքննությունը սկսելու ժամկետը հետաձգելը: Կրկին ընդգծել ենք, որ ընդամենն օրեր առաջ է՝ փետրվարին 5-ին, Սահմանադրական դատարանը գործով դատաքննությունը սկսելու ժամկետը հետաձգել և անընդհատ, այն էլ՝ չհիմնավորված փոփոխություններով ստեղծվում են Սահմանադրական դատարանի առնվազն հեղինակագրկման նախադրյալներ:

Հարկ ենք համարում ընդգծել, որ վերը նշված արձանագրումները և դիրքորոշումները բարձրաձայնել ենք Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստերի ընթացքում, որոնք մեր առաջարկությունների (Հ. Թով-մասյան, Ա. Պետրոսյան) հիման վրա նաև ձայնագրվում են:

2. Սահմանադրական դատարանի դատավորների՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինությունը

Փաստ է, որ սույն գործի ելքը, հատկապես 2021 թվականի փետրվարի 11-ի ՍԳԱՌ-27 (այսուհետ՝ ՍԳԱՌ-27) աշխատակարգային որոշմամբ¹⁰ կարճված մասով, շոշափում է Սահմանադրական դատարանի գործող կազմի բոլոր դատավորների շահերը:

Այսպես, եթե 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունները ճանաչվեին Սահմանադրությանը հակասող և անվավեր, ապա պետք է վերականգնվեր դրանց ընդունմանը նախորդած իրավական վիճակը, այսինքն՝ Սահմանադրական դատարանի՝ այդ փոփոխությունների արդյունքում ընտրված երեք դատավորների հետագա պաշտոնավարումը պետք է դադարեցվեր, Սահմանադրական դատարանի նախկին երեք դատավորներից առնվազն երկուսի լիազորությունները պետք է վերականգնվեին, Սահմանադրական դատարանի՝ մինչև 2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների վերաբերելի հողվածների ուժի մեջ մտնելն ընտրված դատավորները պետք է շարունակեին պաշտոնավարել 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետներով, Սահմանադրական դատարանի դատավոր Հրայր Թովմասյանը պետք է վերականգնվեր Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնում, որով դադարեցվելու էր այդ

¹⁰ <https://www.concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-27.pdf>

պաշտոնը Սահմանադրական դատարանի դատավոր Արման Դիլանյանի կողմից գրադեցնելը:

Սույն գործով Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանն ակնհայտորեն կանխակալ վերաբերմունք ունի, քանի որ իշխող քաղաքական ուժի քաղաքական օրակարգ է դարձել Ազգային ժողովում Սահմանադրական դատարանի դատավորի երդման արարողության ժամանակ նրա հնչեցրած «Սահմանադրական դատարանի ճգնաժամ» թեզը, գործադիր և օրենսդիր մարմինների ներկայացուցիչներին իր նամակների միջոցով ներկայացրել է «Սահմանադրական դատարանի ճգնաժամի» լուծման առաջարկներ, այդ թվում՝ սահմանադրական փոփոխություններով իրացվող, իշխող քաղաքական ուժի հետ համախոհությամբ, Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության ձայների ուժով այդ հարցին տրվել է այն լուծումը, որը հանգեցրել է 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների, նա հրապարակայնորեն ողջունել է այդ փոփոխությունների ընդունումը, իսկ Սահմանադրության հիշյալ փոփոխությունների արդյունքում փոփոխվել է Սահմանադրական դատարանի կազմը, ընտրվել են Սահմանադրական դատարանի նոր դատավորներ և նոր կազմով Սահմանադրական դատարանը կայացրել է սույն գործով որոշումներ (ՍԴԱՌ-27, ՍԴՈ-1590):

Ըստ էության, հիմք ընդունելով 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների հիմնավորումները՝ ՍԴՈ-1590 որոշմամբ Սահմանադրական դատարանը սահմանել է Սահմանադրության փոփոխությունների նախնական սահմանադրական պարտադիր վերահսկողությունից «ողջամիտ բացառությունների» հնարավորություն, որով, ի թիվս այլնի, ոչ միայն իմաստագրվել է նախնական սահմանադրական պարտադիր վերահսկողության ինստիտուտը, այլև ստեղծել է այդ որոշումն ընդունած Սահմանադրական դատարանի դատավորների հետագա պաշտոնավարման ապալեզիտիմացման նախադրյալներ, քանի որ **հենց այն հիմքով**, որով Սահմանադրական դատարանի նախորդ կազմի դատավորները պետք է չմասնակցեին իրենց շահերին վերաբերող գործի քննությանը, այդ նույն հիմքով Սահմանադրական դատարանի գործող կազմը չպետք է մասնակցեր այդ գործի քննությանը: Եթե Սահմանադրական դատարանի դատավորների շահագրգռվածությունը՝ որպես հիմնավորում, որոշիչ է եղել Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի չդիմելու համար, ապա այն որոշիչ է նաև սույն գործով որոշումը կայացնելիս:

Հարկ է նշել, որ չենք կիսում այն մոտեցումը, որ Սահմանադրական դատարանի դատավորները չպետք է մասնակցեն իրենց վերաբերող հարցերի քննությանը, առավել ևս չենք կիսում՝ ՍԴՈ-1590 որոշման հիմքում դրված այն մոտեցումը, որ այդ հարցն իրավասու են որոշելու Սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտները: Ակնհայտ է, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա չէ

Սահմանադրական դատարանի դատավորներին գործին մասնակցելու անհնարինության մասին որոշում կայացնելու փաստական հնարավորություն, քանի որ այդ եղանակով դատարանը կկորցնի որոշում կայացնելու իրավագործությունը, նախապատվությունը պետք է տրվի արդարադատության իրականացման, այլ ոչ թե՛ բացարկ հայտնելու կառուցակարգերին:

Սահմանադրության փոփոխությունների լեգիտիմությունը շատ ավելի բարձր հանրային շահ է, քան օրենսդիր կամ գործադիր մարմինների ներկայացուցիչների՝ մասնավորապես, Սահմանադրական դատարանի կազմի կամ առանձին դատավորների նկատմամբ սուբյեկտիվ ընկալումները և անվստահությունը, առավել ևս այն դեպքերում, երբ այդ մարմինները տվյալ փոփոխությունների անմիջական շահառուն են:

Միևնույն ժամանակ, հիմնավոր չէ այն մոտեցումը, որ Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն (իրավունք) ունեցող հանրային իշխանության մարմինները, դրանց պաշտոնատար անձինք կամ մասնավոր անձինք պետք է որոշեն, թե Սահմանադրական դատարանը կարո՞ղ է անաչառ լինել որևէ հարցով, թե՛ ոչ: Իսկ գործող կառուցակարգերը հրնթացս փոփոխելը՝ ենթադրյալ անաչառությունն ապահովելու նպատակով՝ անընդունելի է:

Եթե խնդիրն անաչառությունն էր, ապա Սահմանադրական դատարանի որոշման ընդունումը միանշանակ և աներկբա ժխտում է անաչառությունը նաև Սահմանադրական դատարանի գործող կազմի կողմից: Եթե դատավորների անաչառության հանրային շահը սույն գործով որոշում ընդունած դատավորների համար գերակա է Սահմանադրության այլ արժեքների, օրինակ՝ իրավական պետության հիմնարար սկզբունքից ածանցվող՝ դատավորների անփոփոխելիության նկատմամբ, ինչն անընդունելի ենք համարում, քանի որ կնշանակի Սահմանադրության արժեհամակարգի և դրա նորմերի աստիճանակարգության նենգափոխում, ապա Սահմանադրական դատարանի այն դատավորները, ովքեր ընդունել են ՍԳՈ-1590 որոշումը, պարտավոր էին գործը քննության ընդունելու ժամանակ հայտարարել գործի քննությանն իրենց մասնակցության անհնարինության մասին: Ճիշտ այնպես, ինչպես այն Սահմանադրական դատարանի նախորդ կազմը կարող էր շահագրգիռ լինել իր պաշտոնավարման շարունակականության ապահովման հարցում, այդպես էլ 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների արդյունքում ընտրված դատավորները և դատարանի նախագահի պաշտոն զբաղեցնողը շահագրգռված են այդ հարցում, առավել ևս՝ պաշտոնագրկման անմիջական վտանգի առկայությամբ: Եվ հենց նույն տրամաբանությամբ դա վերաբերում է իրենց սուբյեկտիվ, անձնական շահերին, ինչպես որ նախորդ կազմի դեպքում, քանի որ որևէ բովանդակային տարբերություն առկա չէ:

Կարծում ենք, որ Սահմանադրական դատարանի ենթադրյալ անաչառության հարցը ոչ իրավաչափ կերպով վեր դասելով Սահմանադրության փոփոխությունների լեգիտիմությունից՝ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումն ընդունած դատավորները, ըստ էության, իրենք իրենց ապալեգիտիմացրել են: Սա ոչ այլ ինչ է, քան ինքնաապալեգիտիմացում, որը նշանակում է, որ Սահմանադրական դատարանի գործող դատավորների զգալի մասն անաչառ չեն այն նույն փաստարկների ուժով, որով հիմնավորել են իրենց պաշտոնավարումը շարունակող Սահմանադրական դատարանի նախկին կազմի դատավորների ոչ անաչառությունը, և **այդ հիմքով**, ըստ էության, սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չհամարելով 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունները:

Հիշյալ հարցին ստորև դեռ անդրադարձ կկատարվի:

3. Սահմանադրական դատարանի կողմից 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների մասով գործի վարույթը կարճելու հիմքերը և դատավարական հետևանքները

3.1. Սահմանադրական դատարանի կողմից գործի վարույթը կարճելու ոչ իրավաչափությունը

ՄԴԱՈ-27 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը կարճել է սույն գործի վարույթը՝ 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների մասով, առավելապես հիմնվելով այն փաստարկների վրա, որ Սահմանադրության՝ ուժի մեջ մտած փոփոխությունները չեն կարող քննվել Սահմանադրական դատարանի կողմից, քանի որ Սահմանադրական դատարանն իրավասու է քննել միայն Սահմանադրության փոփոխությունների նախագիծ, և որ սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճը սուբսիդիար է վերացական վերահսկողության համեմատ, և եթե դիմող կողմը՝ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդն իրավասու էր վերացական վերահսկողության կարգով դիմել Սահմանադրական դատարան, ապա չպետք է դիմեր սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճով:

Երկու հիշյալ հիմնական փաստարկներն էլ, մեր գնահատմամբ՝ հիմնավոր չեն: Այսպես՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը: Սահմանադրության 169-րդ հոդվածի համաձայն՝ այս հարցով Սահմանադրական դատարան կարող է դիմել, ի թիվս այլոց, Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը: Ընդամին՝ Սահմանադրությո-

յունը ոչ Սահմանադրական դատարանի լիազորությունների, ոչ էլ Սահմանադրական դատարան դիմելու համար որևէ սուբսիդիարություն չի սահմանում: Սահմանադրական դատարան դիմելու կարգը, սակայն, ընդհանուր հիմունքների մասով է սահմանվում Սահմանադրությամբ: Սահմանադրության 169-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարան դիմելու կարգի մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով: Բացի այդ՝ Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով: Հետևապես՝ Սահմանադրությունից բացի, որը ոչ սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի, ոչ էլ Սահմանադրական դատարան դիմելու ենթադրյալ սուբսիդիարության վերաբերյալ մանրամասներ, այսինքն, այլ կարգավորումներ չի նախատեսում, **միայն և բացառապես** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով պետք է կանոնակարգվեին այդ հարցերը և ոչ այլ կերպ: Իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը կարող է դիմել Սահմանադրական դատարան՝ **Ազգային ժողովի և Ազգային ժողովի մարմինների** սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով: Վեճի առարկան այդ սահմանադրական լիազորությունների իրականացման ցանկացած արդյունքը կարող է լինել, լինի դա գործողություն, անգործություն, թե **իրավական ակտ** («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մաս): Սահմանադրության փոփոխությունները, նույնիսկ Սահմանադրական դատարանի կողմից իրականացված մեկնաբանության դեպքում, ըստ որի՝ այդ փոփոխություններն իրավական ակտի հատուկ տեսակ են, հանրային իշխանության որևէ մարմնի սահմանադրական լիազորության իրականացման արդյունքում ընդունված իրավական ակտ են, և Սահմանադրության և այն Սահմանադրական դատարանի գործունեության կարգի մասով կոնկրետացնող միակ իրավական ակտի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի ուժով ենթակա են Սահմանադրական դատարանի դատազորությանը:

Ավելին, եթե Սահմանադրական դատարանի շրջանցմամբ Սահմանադրության փոփոխություններ կատարվեն պարբերաբար, ապա դա կնշանակի, որ իրավական պետությունում առկա չէ որևէ իրավական հակակշիռ, որով հնարավոր կլինի կանխել Ազգային ժողովի կողմից Սահմանադրության բոլոր, այդ թվում՝ անփոփոխելի և հանրաքվեով փոփոխության ենթակա իրավադրությունների փոփոխությունը:

Ազգային ժողովի և նրա մարմինների հնարավոր հակասահմանադրական որոշումներից Ազգային ժողովում ներկայացված քաղաքական փոքրամասնությանը սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճի շրջանակներում պաշտպանելու կառուցակարգը հիմնարար նշանակություն ունի ժողովրդավարական և իրավական պետությունում, հատկապես կարևորվում է խորհրդարանական կառավարման համակարգում, ընդամին՝ միտված է ոչ միայն քաղաքական ընդդիմության իրավունքների և հակակշռող դերի ապահովմանը, այլև նպատակ է հետապնդում ընդդիմությանը վերապահել հսկողական գործառնություն իր իրավունքները վերականգնելու եղանակով պաշտպանելու և ապահովելու Սահմանադրության աստիճանակարգության մեջ առավել մեծ կարևորություն ունեցող՝ ժողովրդավարական իրավական պետության զսպումների և հակակշիռների սկզբունքները, որոնց խաթարումն անխուսափելիորեն կհանգեցնի սահմանադրական կարգի տապալման, կիմաստագրկի իրավական պետության հիմնարար սկզբունքն ընդհանրապես:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանն իրավասու է նաև որոշում ընդունել **վիճարկվող լիազորության իրականացմամբ ընդունված իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:**

Աներկբա է նույնիսկ Սահմանադրական դատարանի սույն գործով որոշում ընդունած դատավորների համար, որ Սահմանադրության փոփոխություններն իրավական ակտ են: Հակառակը՝ ենթադրում է հրաժարում արդարադատությունից: Այսպես, եթե Սահմանադրական դատարանը հրաժարվում է Սահմանադրության փոփոխությունների սահմանադրականությունը որոշելուց՝ այն հիմնավորմամբ, որ դրանք ուժի մեջ են մտել, ապա թույլ է տալիս Սահմանադրության անվերահսկելի փոփոխության, ժողովրդի կողմից անմիջական ժողովրդավարության տեսքով իր ներքին ինքնորոշման իրավունքի նենգափոխման կամ արգելափակման իրավական հնարավորություն, իսկ Ազգային ժողովում սահմանադրական մեծամասնության առկայությամբ՝ սահմանադրի փոխարինում սոսկ մեկ քաղաքական ուժի քաղաքական նպատակներն առաջ մղելուն: Նշվածի և դրա արդյունքում, ըստ էության, սահմանադրական կարգի տապալումը Սահմանադրական դատարանի կողմից չի կարող «արտոնվել»: Սա նշանակում է, որ Սահմանադրական դատարանը հրաժարվում է իր սահմանադրական գործառնությունից, և Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրությունն այլևս պաշտպանված չէ հատուկ դրա համար կոչված դատական իշխանության բարձրագույն մարմնի կողմից:

ՄԴԱՌ-27 աշխատակարգային որոշմամբ խախտվել է նաև իրավական պետության բաղադրիչ հանդիսացող, ժողովրդավարության առանցքը կազ-

մող օրինականության հիմնարար սահմանադրական սկզբունքը (Սահմանադրության 6-րդ հոդված):

Լիազորված չլինելով Սահմանադրությամբ և խախտելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի վերը նշված պահանջները, որոնք պարտավորեցնում էին Սահմանադրական դատարանին քննել և լուծել ցանկացած իրավական ակտի առնչությամբ ծագած՝ սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճ՝ Սահմանադրական դատարանը սահմանել է ոչ Սահմանադրությամբ, ոչ էլ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված սուբսիդիարության կանոն՝ Սահմանադրական դատարանի լիազորությունների միջև՝ հիմնվելով մինչև 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության ընդունումը և Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի ինստիտուտի ներդրումը Սահմանադրական դատարանի արտահայտած որոշ իրավական դիրքորոշումների կամայական մեկնաբանության վրա:

3.2. Սահմանադրական դատարանի կողմից կարճված մասով գործի քննության շարունակությունը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի վիճարկվող դրույթների շրջանակներում

Մեր կարծիքով, ոչ իրավաչափ կերպով կարճելով սույն գործի վարույթը, մասնավորապես, Սահմանադրության փոփոխությունների մասով, և շարունակելով այն վերացական սահմանադրական վերահսկողության ընթացակարգի շրջանակներում՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի մի շարք դրույթների մասով՝ Սահմանադրական դատարանը հանգել է ՍԴՈ-1590 որոշմանը, որում անդրադարձել է 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների բովանդակությանը և որոշման պատճառաբանական մասում գնահատել է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը՝ եզրափակիչ մասում չարտացոլելով իր որոշման առավել ծավալուն հատվածից բխող եզրահանգումներ:

Նախ՝ նշենք, որ 2020 թվականի Սահմանադրության փոփոխություններին անդրադառնալը *Սահմանադրական դատարանը պայմանավորել է խորհրդարանական հանրապետությունում ընդդիմության նկատմամբ հարգանքով, սակայն հարկ չի համարել անդրադառնալ հենց այդ ընդդիմության կողմից սույն գործի հիմք համարվող դիմումում բարձրացված առանցքային նշանակություն ունեցող հարցադրումներին: Մտացվում է, որ կիսանախագահական կամ նախագահական կառավարման համակարգում սահմանադրական դատարանները կարող են իրենց թույլ տալ չհարգել ընդդիմությանը:*

Սահմանադրական դատարանը, մի կողմից, ՍԴԱՈ-27 աշխատակարգային որոշմամբ ամրագրել է, որ ինքն **իրավասու չէ քննել Սահմանադրությամբ**

յան՝ ուժի մեջ մտած փոփոխությունների սահմանադրականությունը, այդ մասով կարճել է գործի վարույթը և շարունակել է գործի քննությունը միայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի վիճարկվող դրույթների շրջանակներում, մյուս կողմից՝ ըստ էության որոշում է ընդունել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ՝ այդ որոշման մեջ **անդրադառնալով գործի կարճված մասի առարկային** և Սահմանադրության փոփոխությունները, ըստ էության, գնահատել է որպես Սահմանադրությանը համապատասխանող:

3.3. Գործը մասամբ կարճելու դատավարական հետևանքները և կարճված մասով գործը քննելու իրավական հետևանքները

Ինչպես նշվեց, Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի գործունեության կարգը սահմանվում է բացառապես Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով: Սահմանադրությունը, բնականաբար, չի անդրադարձել գործի վարույթը կարճելու հիմքերին և կարգին՝ այն թողելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորմանը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածում սպառիչ սահմանվում են գործի վարույթը կարճելու հիմքերը, որոնք էական մասով համընկնում են դիմումի թույլատրելիության չափանիշների հետ:

ՄԳԱՌ-27 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը, մասնավորապես, Սահմանադրության փոփոխությունների մասով, **կարճվել է դիմումի անթույլատրելիության հիմքով**, այսինքն, ըստ Սահմանադրական դատարանի՝ այն հիմքով, որ ինքն իրավասու չէ քննել ուժի մեջ մտած Սահմանադրության փոփոխությունների համապատասխանությունը Սահմանադրությանը: Դա նշանակում է, որ այդ գործով որևէ այլ որոշում, հատկապես՝ ըստ էության, Սահմանադրական դատարանն իրավասու չէր ընդունել, քանի դեռ չէր վերանայել ՄԳԱՌ-27 աշխատակարգային որոշումը: Մինչդեռ Սահմանադրական դատարանը հենց այդպիսի որոշում է ընդունել՝ ընդամենը դրա եզրափակիչ մասում չարտացոլելով գործի կարճված մասով ընդունված որոշման բովանդակությունը:

Գործի կարճված մասով՝ ՄԳԱՌ-27 աշխատակարգային որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները չեն ամրագրվել ՄԳՌ-1590 որոշման եզրափակիչ մասում, սակայն, և դրանք per definitionem չէին կարող դրվել ըստ էության որոշման հիմքում՝ խաթարելով սահմանադրական կայունությունը:

4. 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նախնական սահմանադրական վերահսկողության պարտադիրությունը

Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով, մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը:

Սահմանադրության 169-րդ հոդվածում սահմանվում են Սահմանադրական դատարանի կազմի հիմունքները, իսկ մանրամասները, համաձայն Սահմանադրության 169-րդ հոդվածի 6-րդ մասի, սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

Սահմանադրության 169-րդ հոդվածի թե քերականական, թե ծագումնաբանական, թե համակարգային և թե նպատակային մեկնաբանման արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ **Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը առանց որևէ բացառության ենթադրում է պարտադիր սահմանադրական վերահսկողություն Սահմանադրական դատարանի կողմից:** Այսպես՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրվում է դիմելու հայեցողական լիազորություն (իրավունք) հանրային իշխանության մի շարք մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և մասնավոր անձանց համար, իսկ նույն հոդվածի 2-4-րդ մասերում՝ Սահմանադրական դատարանի դիմելու պարտականություն՝ այդ իրավադրույթներում ուղղակիորեն նախատեսված պետական մարմինների համար:

Ի տարբերություն Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի, որում սահմանադրի կողմից գործածվել է «Սահմանադրական դատարան կարող են դիմել» ձևակերպումը՝ նույն հոդվածի 2-4-րդ մասերում գործածվում են «Սահմանադրական դատարանի դիմում է», «Սահմանադրական դատարան է դիմում» ձևակերպումները, որոնք նույնական են: Ընդամին՝ Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի դիմելու պարտադիր լիազորությունը (պարտականությունը) վերաբերում է ոչ միայն Սահմանադրության փոփոխությանը, այլև վերաբերական միջազգային կազմակերպություններին անդամակցությանը կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերին: Ուստի, եթե թույլատրելի են բացառություններ Սահմանադրական դատարանի դիմելու պարտադիրության կանոնից, ապա դրանք թույլատրելի են ոչ միայն Սահմանադրության փոփոխությունների, այլև վերաբերական միջազգային կազմակերպություններին անդամակցությանը կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերին:

րաբերող հարցերով: Ավելին, Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասում նույն ձևակերպումն է («Սահմանադրական դատարան դիմում է») գործածվում մինչև վավերացումը միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու՝ Կառավարության լիազորության պարտադիր բնույթն ամրագրելու համար: Ուստի, եթե հետևենք ՄԴՈ-1590 որոշման տրամաբանությանը, ապա այստեղ ևս Կառավարությունը կարող է բացառիկ դեպքերում հայեցողություն ունենալ, օրինակ, նաև երբ վավերացման ենթակա որևէ միջազգային պայմանագրով սահմանվեն Սահմանադրական դատարանի դատավորների վերաբերող պարտավորություններ:

Նույնը կարող է վերաբերել դատարանների պարտադիր լիազորությանը՝ Սահմանադրական դատարան դիմելու հարցում (Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մաս): ՄԴՈ-1590 որոշման տրամաբանության ներքո ի՞նչն է խոչընդոտելու որևէ դատարանի՝ եզրահանգման գալով, օրինակ, Սահմանադրական դատարանի որևէ դատավորի հայցադիմումի կամ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի շրջանակներում կիրառման ենթակա օրենքի՝ սահմանադրականության հարցով չդիմել Սահմանադրական դատարան՝ նրա կազմի մեծամասնության անաչառության առումով իր մոտ առաջացած կասկածների պատճառով:

ՄԴՈ-1590 որոշմամբ Սահմանադրական դատարանն էապես արժեզրկել է Սահմանադրական դատարան դիմելու պարտադիր լիազորության իմաստը՝ այն վերածելով առանձին դեպքերում հայեցողական լիազորության, թեև այդ որոշմամբ փորձ է կատարել «փրկել իրավիճակը» Սահմանադրական դատարան դիմելու պարտադիր լիազորությունից «ողջամիտ բացառության» բացառություններ սահմանելու միջոցով:

Այս առնչությամբ ևս հարկ է կրկին նշել, որ Սահմանադրության 168-րդ հոդվածի, ինչպես նաև 169-րդ հոդվածի 1-ին և 2-4-րդ մասերի պարզ համադրումն անգամ վկայում է Սահմանադրության մեջ հստակ համակարգային տրամաբանության մասին: Ըստ այդմ՝ սահմանադրի կողմից առանձնապես կարևորված հարցերում, այն է՝ Սահմանադրության փոփոխությանը, վերաբերող միջազգային կազմակերպություններին անդամակցությանը կամ տարածքի փոփոխությանը վերաբերող, քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվեի դրվող օրենքի նախագծի, վավերացման ենթակա միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների, ինչպես նաև դատարանների վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցերով, առանց որևէ բացառության, սահմանվել է պարտադիր սահմանադրա-

կան դատական վերահսկողության ընթացակարգ, ինչը նշանակում է, որ առանց Սահմանադրական դատարանի նախնական **որոշիչ** մասնակցության այդ հարցերին չի թույլատրվում հետագա ընթացք տալ: Դա առավել ակնառու է Ազգային ժողովի դեպքում, որի լիազորություններն սպառիչ ամրագրվում են Սահմանադրությամբ (Սահմանադրության 88-րդ հոդվածի 4-րդ մաս), ինչը նշանակում է, որ այդ լիազորությունների ձևակերպումները վերջնական տեսքով ամրագրված են հենց Սահմանադրությամբ:

Ազգային ժողովի համար Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, ի հակադրություն նրա պարտադիր լիազորությունների (Սահմանադրության 169-րդ հոդվածի 2-րդ մաս), *expressis verbis* սահմանվել է հայեցողական լիազորություն («կարող է դիմել») Սահմանադրության 168-րդ հոդվածի 7-րդ, 10-րդ և 12-րդ կետերով նախատեսված դեպքերում: Օրինաչափ հարց է առաջանում, թե այդ ինչո՞ւ է սահմանադիրը նույն պետական մարմնի համար մի շարք դեպքերում սահմանել հայեցողական, իսկ այլ դեպքերում՝ պարտադիր լիազորություններ: Սահմանադրական դատարանի կողմից իր մեկնաբանություններով պարտադիր լիազորություններն առանձին դեպքերում հայեցողական/ֆակուլտատիվ լիազորությունների վերածելը, մասնավորապես՝ առանձին դեպքերում միայն Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը պարտադիր չհամարելը, սահմանադրական չէ, քանի որ անտեսվում է Սահմանադրության մեջ առկա համակարգային կապը միևնույն նպատակով և լեզվական դարձվածքով միմյանց փոխկապակցված կարգավորումների միջև:

Ըստ այդմ՝ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողության նպատակը շատ հստակ է, այն է՝ ապահովել Սահմանադրության նորմերի աստիճանակարգությունը, Սահմանադրության կայունությունը և միասնականությունը, որոնք հնարավորություն կտան ապահովել նաև Սահմանադրական դատարանի գործառույթը՝ Սահմանադրության գերակայությունը, ինչպես նաև զերծ պահել Սահմանադրությունը ներքին հակասություններից:

Հակահամակարգային, կոնյուկտուրային կամ ոչ իրավական այլ նկատառումներով Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելը կարող է վտանգել ամբողջ սահմանադրական կարգը, խաթարել Սահմանադրության միասնականությունը, ինքնաբավությունը և կայունությունը, վտանգել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության համակարգը՝ վերջնարդյունքում կասկածի տակ դնելով իրավունքի գերակայությունը, իրավական և ժողովրդավարական պետության հիմնարար սկզբունքները,

ուստի և՛ պետության ներքին անվտանգությունը, դրանով նաև՛ արտաքին անվտանգությունը և ինքնիշխանությունը:

Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշմամբ տրված լուծումները, մեր կարծիքով, նախ՝ հակասում են Սահմանադրությանը, բացի այդ՝ պարունակում են ներքին հակասություններ, ավելին՝ կիրառելի են հենց այդ որոշումն ընդունած կազմի նկատմամբ:

Այսպես՝ ՄԴՈ-1590 որոշման 5.8-րդ և 5.9-րդ կետերում Սահմանադրական դատարանը սահմանում է սահմանադրական փոփոխությունների պարտադիր վերահսկողության կանոնից «ողջամիտ բացառության» հնարավորությունը՝ այն կիրառելի համարելով «իրավիճակում, երբ Սահմանադրության փոփոխությունների նախագծի պարտադիր նախնական վերահսկողության նպատակին այդ կառուցակարգի կիրառմամբ հնարավոր չէ հասնել...»: Այդ ժամանակ, ըստ Սահմանադրական դատարանի՝ «նշված սահմանադրական կանոնից հնարավոր է ողջամիտ բացառություն, որը բացառիկ միջոց է և կիրառելի է միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի կողմից նախագծի վերահսկողությունը սահմանադրական արդարադատության առանցքային ընթացակարգային երաշխիքների պահպանմամբ անհնար է և Սահմանադրական դատարանն ի գորու չէ հաղթահարել այդ անհնարինությունը»:

Սահմանադրական դատարանի կարծիքով՝ «հակառակ պարագայում՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծերի պարտադիր վերահսկողության լիազորության իրականացման դեպքում ողջամիտ բացառությունների անտեսումն ի գորու է ոչ միայն վտանգել Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության վերը թվարկված նպատակները, այլ նաև հարուցել իրավիճակ, երբ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերի և սահմանադրի՝ տվյալ նախագծի ընդունմամբ հետապնդվող շահի միջև բախումը կարող է հանգեցնել սահմանադրի (Ազգային ժողովի կամ ժողովրդի)՝ Սահմանադրության փոփոխություններ ընդունելու լիազորության սահմանափակման՝ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերը վերադասվելով Սահմանադրի ինքնիշխան կամքի արտահայտման բարձր հանրային շահի նկատմամբ: Սահմանադրական դատարանն այսպիսի իրողությունն անհանդուրժելի է համարում Սահմանադրության գերակայության դիտանկյունից»: *Ի դեպ, համանման դիրքորոշում արտահայտել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազգային ժողովում Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնության հարցի քննարկման ժամանակ: Ըստ էության, Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումն ընդունած դատավորներն այս եզրահանգման հիմքում դրել են այն «հիմնարար» կանխա-*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

վարկածը, որ եթե խնդիրը վերաբերում է Սահմանադրական դատարանի դատավորին, ապա Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող լինել անաչառ: Այս վտանգավոր եզրահանգումը չի պատասխանում մեկ կարևոր հարցի, իսկ ո՞վ է որոշելու, թե այդ հարցը վերաբերում է Սահմանադրական դատարանի դատավորներին, թե ոչ: Կամ արդյո՞ք Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիության, անձեռնմխելիության կամ սոցիալական երաշխիքներին վերաբերող հարցերը բացառապես Սահմանադրական դատարանի դատավորներին վերաբերվող հարցեր են:

Սակայն, իր իսկ սահմանած «ողջամիտ բացառության» կանոնից Սահմանադրական դատարանը սահմանում է երեք բացառություն: Ըստ այդմ՝ «... «ողջամիտ բացառության» կանոնը չի կարող կիրառվել Ազգային ժողովի կողմից, եթե՝

- ա) չի վերաբերում Սահմանադրության անփոփոխ դրույթներին, և
- բ) չի փոփոխում Ազգային ժողովի լիազորությունների շրջանակը, և
- դ) չի առնչվում որևէ անձի հիմնական իրավունքի»¹¹:

Այս իրավական դիրքորոշումներով, մեր կարծիքով, Սահմանադրական դատարանը շրջանցել է սահմանադրի կամքը և, ըստ էության, հանդես գալով սահմանադրի դեբում, Սահմանադրության դրույթների մեկնաբանման ներքո սահմանել է Սահմանադրության փոփոխությունների մասով բացառություն նախնական սահմանադրական վերահսկողության պարտադիրության հրամայականից, որը, ինչպես վերը նշեցինք, որևէ կերպ չի կարող բխեցվել Սահմանադրությունից, իր էությամբ նենգափոխում է պարտադիր սահմանադրական վերահսկողության էությունը և խախտում Սահմանադրության կառուցվածքին բնորոշ հիմնարար սկզբունքներ՝ իրավական պետության, դատավորների անկախության և անփոփոխելիության:

Ավելին, Սահմանադրական դատարանը սահմանադրի փոխարեն իր իսկ սահմանած կանոնից սահմանում է բացառություններ, որոնք ամրագրված չեն ոչ Սահմանադրությամբ, ոչ էլ Սահմանադրական դատարանի գործունեության և Սահմանադրական դատարանի դիմելու կարգը սահմանող հատուկ իրավական ակտով՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով: Ընդամին՝ Սահմանադրական դատարանի ՄԳՈ-1590 որոշումն ընդունած դատավորների կարծիքով, Սահմանադրական դատարանի դատավորների անաչառության հարցը, նրանց կողմից որևէ գործ քննելու անհնարինության հարցը պետք է որոշի դիմողը:

¹¹ Նախ՝ հարկ է նշել, որ բվեարկության դրված և ընդունված ՄԳՈ-1590 որոշման նախագծի տեքստում այս բացառությունները եղել են, ավելին՝ «չի կարող կիրառվել» բառերը Սահմանադրական դատարանի դատավորի կողմից առաջարկվել է փոխարինել «կարող է կիրառվել» բառերով, քանի որ վրիպել է նշելով ժխտական, սակայն, ստորագրված և հրապարակված ՄԳՈ-1590 որոշման տեքստում այդ բացառությունները բացակայում են:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

Մեր կարծիքով, բոլոր այն դեպքերում, երբ գործի քննության անհնարինության նկատառումները կարող են հանգեցնել սահմանադրական արդարադատության մերժման, որով կարող է վտանգվել Սահմանադրական դատարանի գործառույթը՝ Սահմանադրության գերակայության ապահովումը, անգամ հիմնավոր դեպքերում նախապատվությունը պետք է տրվի սահմանադրական գործառույթի իրականացմանը: Այդ իմաստով բացառիկության կանոնը ոչ միայն հակադրվում է պոզիտիվ սահմանադրական իրավունքին, այլև իմաստագրվում է սահմանադրական արդարադատության բովանդակությունն ընդհանրապես, խաթարում է Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունը:

Եթե սովորական դատարաններում, բացառությամբ բարձրագույն դատական ատյանի, անհամեմատ ավելի մեծ են դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջոցով գործի հնարավոր անաչառ քննությունն ապահովելու հնարավորությունները, ապա վերջնական որոշումներ ընդունող ատյաններում կամ մարմիններում, ինչպիսին են, օրինակ, սահմանադրական և գերագույն դատարանները, դատավորների անաչառության հարցը չպետք է խոչընդոտ դառնա արդարադատության իրականացման համար:

Դատավորներին, ներառյալ՝ Սահմանադրական դատարանի դատավորներին ներկայացվող պահանջները, նրանց վարքագծի կանոններն այնպիսին են, որ չեն կարող և չպետք է խոչընդոտեն նրանց՝ անգամ շահերի ենթադրյալ բախման իրավիճակում գործել անկախ և կայացնել իրավաչափ որոշումներ:

Ընդհակառակը՝ հենց այդպիսի ինքնահաղթահարման միջոցով է նաև դատավորների մոտ առաջանում իրենց բարձր առաքելությանը համապատասխանելու կարողություն, որը հետագայում էականորեն նպաստում է դատավորների փաստացի անկախության ամրապնդմանը:

Այս առումով հատկանշական է Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը, համաձայն որի՝ պետք է երաշխավորվի, որ Սահմանադրության երաշխավոր սահմանադրական դատարանը, որպես ժողովրդավարական ինստիտուտ, մնա ֆունկցիոնալ: Դատավորներին գործի քննությունից հեռացնելը չպետք է հանգեցնի դատարանի կողմից որոշում կայացնելու անհնարինության: Եթե դատավորին բացարկ հայտնելն անհրաժեշտություն է, պետք է դիմել սահմանադրական դատարան՝ բացառելու համար սահմանադրական դատարանի ոչ իրավագործությունը, որպես Սահմանադրության գերակայության երաշխավորի: Այն դեպքում, երբ դատարանը պետք է որոշում կայացնի մի գործով, որի վերաբերյալ դատավորն ունի շահեր՝ դա դատարանին չի ազատում այդ հարցով որոշում կայացնելու պարտականությունից: Սահմանադրական դատարանը պարտավոր է կայացնել որոշումներ ցանկացած օրենքի

վերաբերյալ, որը գտնվում է իր վարույթում: Անհրաժեշտության դոկտրինը հնարավորություն է տալիս դատավորին, ով այլ պարագաներում իրավասու չէր քննելու գործը և կայացնելու որոշում, եթե հակառակը կհանգեցնի արդարադատության չիրականացմանը: Նշված դեպքերը հազվադեպ են պատահում, այդուհանդերձ, դրանք կարող են առաջանալ բարձր դատարանների դեպքում, որոնց կազմը սահմանափակ է և նրանց վերապահված գործառնությոը չի կարող փոխանցվել այլ դատավորների: Համանման իրավիճակ կարող է առաջանալ, երբ վիճարկվում է այնպիսի նորմի սահմանադրականություն, որը կարգավորում է սահմանադրական դատարանի ընթացակարգերը, սահմանադրական դատարանի դատավորներին ներկայացվող պահանջները, պաշտոնանկության կամ կարգապահական վարույթի հիմքերը: Նման դեպքերում սահմանադրական դատարանի դատավորների մասնակցությունը գործերի քննությանը չի բացառվում (Վենետիկի հանձնաժողովի ղեկոտնմբերի 12-ի CDL-AD(2016)036 կարծիք, պարագրաֆ 7, 20-22, 24):

Ակնհայտ է, որ Սահմանադրության փոփոխությունները, որոնց միջոցով նախատեսվում է դատավորների լիազորությունների դադարեցում իրենց կամքին հակառակ, այսինքն, ուղղակի միջամտություն իրենց անկախությանը, անգամ եթե վերաբերում են կոնկրետ դատարանների կոնկրետ դատավորներին, չեն կարող չունենալ հիմնարար նշանակություն և չանդրադառնալ իրավական պետության հիմնարար սկզբունքի պահպանվածությանը, ուստի հենց Սահմանադրական դատարանն է, որ պետք է ստուգի դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը:

Արդյո՞ք Սահմանադրական դատարանի դատավորներն իրենց վերաբերող սահմանադրական փոփոխությունների հարցում կլինեն անաչառ, թե՞ ոչ, պետք է որոշվի ոչ թե դիմողի կամ սահմանադրական դատավարության այլ մասնակիցների՝ անգամ ողջամիտ թվացող ենթադրությունների հիման վրա, այլ **միայն և բացառապես** Սահմանադրական դատարանի դատավորների կողմից: Սակայն հենց սահմանադիրը, կշռելով Սահմանադրական դատարանի դատավորների անաչառության և Սահմանադրական դատարանի լիազորությունների արդյունավետ կատարման հանրային շահերը, նախապատվությունն արդեն իսկ միանշանակորեն տվել է սահմանադրական արդարադատության իրականացման հանրային շահին:

Սահմանադրական դատարանի դատավորի կողմից անաչառության կանոնների խախտումը կարող է դառնալ ընդամենը կարգապահական պատասխանատվության հիմք, ինչն ինքնին անհամատեղելի չէ դատավորի պաշտոնի հետ, և անգամ, եթե անհամատեղելի լինի, ապա այդ հարցով որոշում կայացնելու առանձնաշնորհը որևէ կերպ վերապահված չէ ոչ օրենսդիր, ոչ էլ գործադիր իշխանությանը: Սահմանադրական դատարանի դատավորների

առնչությամբ այդ առանձնաշնորհը հենց Սահմանադրական դատարանին է: Հենց Սահմանադրական դատարանն է որոշում ընդունում Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնի հետ համատեղելի կամ անհամատեղելի կարգապահական խախտումների վերաբերյալ (Սահմանադրության 168-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ կետեր): Ընդամին, եթե մի դեպքում խոսքը ծայրահեղ դեպքում դատավորի լիազորությունների դադարեցման մասին է էական կարգապահական խախտման հիմքով, ապա մյուս դեպքում՝ Սահմանադրության ոչ իրավաչափ փոփոխությունների միջոցով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգը կանխելու և չեզոքացնելու մասին: Այս երկու հանրային շահերը համադրելի չեն և պարզ է, որ **գերակայում է** Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նախնական պարտադիր վերահսկողության ապահովման հանրային շահը:

Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի կոնկրետ դատավորի կամ դատավորների վարքագիծը պետք է իր արտահայտությունը գտնի նրանց գործողություններում, անգործությունում կամ որոշումներում, որպեսզի հնարավոր լինի դատողություններ անել նրանց կողմից անաչառության կանոնի պահպանման վերաբերյալ: Այն հարցը, թե արդյոք դատավորն իր գործով է դատավոր, թե ոչ, ինչպես նաև՝ արդյո՞ք կարող է անաչառ լինել նաև իր գործով, որոշվում է **հստակ սահմանված դատավարական ընթացակարգերի շրջանակներում**՝ այդ դատավորների կամ այլ դատավորների կողմից, բայց ոչ երբեք կանխակալ մոտեցմամբ՝ սահմանադրի, օրենսդրի կամ գործադիրի, կամ առավել ևս՝ դատարան դիմելու պարտականություն կրող սուբյեկտի կողմից: Եթե դատավորի փոխարեն դիմողը կամ հանրային իշխանության մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք կամ մասնավոր անձինք են լուծում նրա անաչառության հարցը, ապա ուղղակիորեն միջամտում են դատավորի առարկայական անկախությանը, մտնում նրա բացառիկ լիազորությունների տիրույթ: Դա առավել ակնառու է այն դեպքերում, երբ խոսքը քաղաքական շարժառիթներով առաջնորդվող մարմիններում քաղաքական մեծամասնության մասին է: Նաև իրենք՝ որպես սահմանադիր, անգամ ժողովուրդը՝ որպես սահմանադիր, ժամանակակից իրավական պետությունում **սահմանափակված են Սահմանադրությամբ**: Այդ սահմանափակվածությունը քաղաքակիրթ համարվող պետություններում դրսևորվում է անգամ նոր Սահմանադրություն ընդունելիս, երբ սահմանադրական սովորույթների կամ միջազգային սովորույթային և պայմանագրային իրավունքի ուժով առնվազն անհրաժեշտ է հարգել և պաշտպանել մարդու արժանապատվությունը և նրա բնական իրավունքները և ազատությունները: Սահմանադրական դատարանի կողմից իր լիազորություններից հրաժարվելը հակասում է Սահմանադրության գերակայության ապահովման սահմանադրական առաքելությանը:

Ըստ էության, Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում Ազգային ժողովի այն մոտեցումը, որով ինքն իրեն, հակադրվելով Սահմանադրությանը, լիազորել է գնահատել և լուծել Սահմանադրական դատարանի դատավորների անաչառության հարցը: Դրանով խախտվել է Սահմանադրական դատարանի անկախության հրամայական պահանջը, նաև իրավական պետության հիմնարար սկզբունքը, և արդյունքում Սահմանադրական դատարանի փոխարեն Ազգային ժողովը, ըստ էության, որոշում է կոնկրետ գործերով դատավորների մասնակցության անհնարինության հարցերը:

Սիաժամանակ, հարկ է նշել, որ Սահմանադրության ոչ միայն անփոփոխ դրույթների, այլև ցանկացած այլ դրույթի փոփոխություն, որը խաթարում է Սահմանադրության միասնականությունը, հակահամակարգային է, ունակ է խաթարելու իրավունքի գերակայությունը, Սահմանադրությունը վերածելու հակասական, հակահամակարգային դրույթների ամբողջության: Այսպես, օրինակ, Սահմանադրության անփոփոխելի չհանդիսացող 13-րդ հոդվածում ամրագրված՝ միջազգային իրավունքի հիմքի կամ արտաքին քաղաքականության հիմնական նպատակների փոփոխությունն արդեն իսկ կարող է հանգեցնել շատ լուրջ հետևանքների՝ փաստացի փոփոխելով, ի թիվս այլնի, Սահմանադրության 5-րդ հոդվածում սահմանված նորմերի աստիճանակարգությունը՝ վերանայելով կամ վերացնելով վավերացված միջազգային պայմանագրերի կիրառման նախապատվության սկզբունքը: Դա էլ, իր հերթին, պետք է հանգեցնի իրավանորմերի ամբողջ աստիճանակարգության վերաիմաստավորման: Նույնը կարող է վերաբերել, օրինակ, զինված ուժերի սահմանադրական գործառույթների փոփոխությանը, եթե նրանց, օրինակ, վերապահվի սովորական իրավիճակներում հասարակական կարգի ապահովման գործառույթ և այլն: Այս կարգի մոտեցումները, որոնք հիմնված են սոսկ Սահմանադրության դրույթների փոփոխության բարդության աստիճանի վրա, անտեսում են ժողովրդավարական, իրավական պետության արժեհամակարգային հիմքերը:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի լիազորությունների շրջանակը փոփոխելու արգելքին, ապա սա անհասկանալի ձևակերպում է: Եթե, Սահմանադրական դատարանի տրամաբանությամբ, փոփոխվի ոչ թե Ազգային ժողովի լիազորությունների շրջանակը, այլ, օրինակ, Հանրապետության նախագահի և (կամ) Կառավարության, կամ, օրինակ, վերացվի Հայաստանի Հանրապետության դատախազությունը կամ կամայականորեն կրճատվեն դատական իշխանության լիազորությունները, ապա դա թույլատրելի՞ է «ողջամիտ բացառության» կանոնի շրջանակներում: Այսինքն, եթե Սահմանադրական դատարանի շրջանցմամբ և Ազգային ժողովի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունը վերածվի կիսանախագահական կամ նախագահական հանրապետության, դա, ըստ Սահմանադրական դատարանի, խնդիր չէ, բայց խնդիր է, եթե

Ազգային ժողովի լիազորությունները, որոնք առանց այդ էլ սպառիչ ամրագրված են Սահմանադրությամբ, փոփոխվեն, անգամ եթե Սահմանադրական դատարանի դատավորները «կանխակալ են»:

Ինչ վերաբերում է «ողջամիտ բացառության»՝ որևէ անձի հիմնական իրավունքին առնչվելու արգելքին, ապա բազում հարցեր են առաջանում, օրինակ՝ իսկ որևէ անձի ազատությանը, պարտականությանը կարո՞ղ են առնչվել, իսկ արդյո՞ք դատավորները, հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք նաև հիմնական իրավունքների և ազատությունների կրող են, թե՞ ոչ: Վերջին հարցի դեպքում պատասխանը միանշանակ դրական է: Իսկ եթե դրական է, ապա առնչությունը Սահմանադրական դատարանի դատավորների իրավունքներին, մասնավորապես, հանրային ծառայության իրավունքից ածանցվող իրենց պաշտոնավարման անվտանգությանը դիտվու՞մ է որպես բացառություն բացառությունից, թե՞ ոչ: Եթե ոչ, ինչը փաստում է Սահմանադրական դատարանն իր որոշմամբ, ապա դա ակնհայտ խտրական մոտեցում է և դեմ է իրավական պետության սկզբունքին, եթե այո, ապա Սահմանադրական դատարանը պարտավոր էր Սահմանադրության փոփոխությունները գնահատել որպես առնվազն այդ մասով Սահմանադրությանը հակասող:

Ավելին, ինչպես արդեն նշեցինք, Սահմանադրական դատարանի կողմից սահմանված երեք բացառություններն էլ բացառությունից կիրառելի են հենց քննարկվող որոշմամբ լուծված գործով, եթե թույլատրելի էր գնահատել 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունները: Այսպես՝ այդ փոփոխություններն ուղղակիորեն ներգործել են Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիության վրա, խախտվել է դատավորների անկախության առանցքային սկզբունքը, որը Սահմանադրության անփոփոխելի՝ 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչ է: Երկրորդ՝ ինչպես վերևում փաստվեց, Ազգային ժողովը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից՝ մտել Սահմանադրական դատարանի լիազորությունների տիրույթ թե՛ Սահմանադրության փոփոխության հարցում, թե՛ ակնհայտորեն Սահմանադրական դատարանի փոխարեն նրա դատավորների՝ գործի քննությանը մասնակցության անհնարինությունը որոշելու հարցում, որով խախտվել է օրինականության հիմնարար սահմանադրական սկզբունքը, որը սահմանադրական կարգի առանցքային բաղադրիչ է: 2020 թվականի Սահմանադրության փոփոխություններն ուղղակիորեն ազդել են Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման լեգիտիմ ակնկալիքների և պաշտոնավարման շարունակականության վրա խախտել դրանք, այսինքն՝ շոշափել են Սահմանադրական դատարանի դատավորների՝ որպես մասնավոր անձանց հիմնական իրավունքները:

Իսկ Սահմանադրական դատարանի այն դատողությունը, որ դա չի կարող վերաբերել հենց Սահմանադրական դատարանի դատավորների հիմնական իրավունքներին, խտրական է, և խախտում է ընդհուպ նաև նրանց դատական պաշտպանության հիմնական իրավունքը, քանի որ Սահմանադրության փոփոխություններից պաշտպանվելու որևէ արդյունավետ միջոց նրանց համար Հայաստանի Հանրապետությունում առկա չէ: Այդ նպատակով է սահմանադիրը Սահմանադրական դատարանի դատավորների լիազորությունների դադարեցման բացառիկ լիազորությունը վերապահել Սահմանադրական դատարանին, այլ ոչ թե որևէ այլ դատարանի, առավել ևս՝ Ազգային ժողովին կամ Կառավարությանը:

Այսպիսով, թե՛ ըստ ընթացակարգի, թե՛ բովանդակային տեսանկյունից Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումը իրավաչափ չէ և խաթարում է օրինականության հիմնարար սահմանադրական սկզբունքը թե՛ Ազգային ժողովի, թե՛ հենց Սահմանադրական դատարանի լիազորությունների մասով:

5. Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիությունը՝ որպես իրավական պետության բաղադրիչ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, մեր կարծիքով, Սահմանադրական դատարանը ոչ իրավաչափ կերպով անդրադարձել է ՄԴՈ-27 աշխատակարգային որոշմամբ կարճված մասի էությանը և ՄԴՈ-1590 որոշման մեջ իրավական դիրքորոշումներ է հայտնել դրա վերաբերյալ՝ հարկ ենք համարում, ըստ էության, անդրադառնալ նաև 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների սահմանադրականության հարցին:

Մինչև հիշյալ հարցին անդրադառնալը, նախ՝ անհրաժեշտ է նշել, որ դատավորների անկախության երաշխիքներն իրենց արտացոլումն են գտել մի շարք միջազգային փաստաթղթերում:

Այսպես՝ Վենետիկի հանձնաժողովի կարծիքով՝ դատական իշխանության անկախությունը խնդիր է, որը վերաբերում է բոլոր երկրներին: Այն իրավունքի գերակայության, ժողովրդավարության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի հիմնարար երաշխիք է: Այն ապահովում է, որ արդարադատությունը իրականացվի (երևա որպես այդպիսին) առանց իշխանության այլ ճյուղերի, դատական իշխանության մեջ գտնվող մարմինների, դատավորների, դերակատարների անհարկի միջամտության: Դատավորների անկախությունը երկու ասպեկտ ունի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ, ընդ որում, օբյեկտիվ տարրը դատական իշխանության անբաժանելի հատկանիշ է, իսկ սուբյեկտիվ տարրը ենթադրում է անձի իրավունքն առ այն, որ իր գործը քննվի անկախ դա-

տավորի կողմից: Դատական իշխանության անկախությունը տարանջատվում է երկու տեսակի՝ ինստիտուցիոնալ և անհատական անկախություն: Ինստիտուցիոնալ անկախությունը վերաբերում է իշխանությունների տարանջատման սկզբունքին և դատական իշխանության ունակությանը՝ գործելու ազատ օրենսդիր կամ գործադիր մարմինների ճնշումներից: Անհատական անկախությունը վերաբերում է դատավորի ունակությանը՝ իրականացնելու արդարադատություն քաղաքական կամ այլ ճնշումների բացակայությամբ (CDL-AD (2012)014, պարագրաֆներ 74,75):

Դատավորների անկախության չափանիշներին է անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որի իրավական դիրքորոշումների համաձայն՝ դատարանի անկախության համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները. դատավորների նշանակման իրավասություն ունեցող սուբյեկտը և նշանակման ընթացակարգը, դատավորի պաշտոնավարման տևողությունը, դատարանի վրա արտաքին ներգործությունը և ճնշումները չեզոքացնելու կամ էապես նվազեցնելու նորմատիվ և ինստիտուցիոնալ երաշխիքների առկայությունը (Campbell and Fell v The United Kingdom, 1984 թ, գանգատեր N 7819/77, 7878/77, կետ 78):

Դատարանների անկախության սկզբունքի վերաբերյալ բազմակողմանի մեկնաբանություններ է կատարել Եվրոպայի խորհրդի համակարգում գործող Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, որը, հիմնավորելով դատական իշխանության անկախության սկզբունքը խստորեն պահպանելու անհրաժեշտությունը, շեշտել է, որ դա անհրաժեշտ պահանջ է՝ իրավունքի գերակայությունն ապահովելու և արդար դատավարություն երաշխավորելու համար: Ըստ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ դատավորների անկախության արտոնությունը կոչված է ապահովել ոչ թե նրանց սեփական շահերը, այլ իրավունքի գերակայության շահը, արդարադատություն որոնողների ու ակնկալողների շահերը (Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, կարծիք թիվ 1(2001), 2001 թ. նոյեմբերի 23, կետ 10):

Թեև դատարանների անկախության համար հիմնական պահանջները նույնն են թե՛ սովորական դատարանների, և թե՛ Սահմանադրական դատարանի դատավորների դեպքում, վերջինները պետք է պաշտպանվեն քաղաքական ազդեցության ցանկացած փորձից՝ պայմանավորված իրենց դիրքով, որը սովորաբար ենթարկվում է քննադատության և ճնշումների իշխանության այլ ճյուղերի կողմից: Հետևաբար, Սահմանադրական դատարանի դատավորները կարիք ունեն հատուկ երաշխիքների իրենց անկախության հարցում (CDL-AD(2008)029, պարագրաֆ 14):

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» թիվ 1 կարծիքում նշվում է. «Դատական իշխանության անկախությունը ենթադրում է դատավորների լիակատար անաչառության նախապայման (պարագրաֆ 12): Դատական իշխանության անկախության հիմնավորումն առանցքային գործոն է, որով կարելի է գնահատել դրա գործնական հետևանքները (պարագրաֆ 13): Դատական իշխանության անկախությունը պետք է երաշխավորվի ներպետական չափանիշներով՝ հնարավորինս բարձր մակարդակում (պարագրաֆ 14):

Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետը, այն է՝ 12 տարին: Այս դրույթը՝ համակցված Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ (դատավորի լիազորությունների դադարման հիմքերը) և 9-րդ (դատավորի լիազորությունների դադարեցման հիմքերը և կարգը) մասերի հետ՝ Սահմանադրության մակարդակով ամրագրում է Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիության սկզբունքը, որը, իր հերթին, դատավորների անկախության հիմնարար սկզբունքի (Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մաս) մաս է, **դատավորի անձնական անկախության հիմքը: Իր հերթին, դատավորների անկախությունը, ուստիև՝ անփոփոխելիությունը, Սահմանադրության անփոփոխելի՝ 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչ է:** Այն Սահմանադրությանը բնորոշ կառուցվածքային սկզբունք է, որի խախտումը ենթադրում է իրավական պետության հիմնարար սկզբունքի խախտում:

Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիությունը տարածվում է ոչ միայն Սահմանադրության՝ անփոփոխելիությունը կանոնակարգող դրույթների ուժի մեջ մտնելու օրվանից (Սահմանադրության 209-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, դա 2018 թվականի ապրիլի 9-ն է), այլև՝ մինչև Սահմանադրության այդ դրույթների ուժի մեջ մտնելը պաշտոնավարող Սահմանադրական դատարանի դատավորների (անդամների) վրա: Սահմանադիրն այդ հարցին լուծում էր տվել 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության անցումային դրույթների միջոցով, երբ սահմանել էր, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

Սահմանադրության անցումային դրույթները, ինչպես և ցանկացած այլ իրավական ակտի անցումային դրույթներ, ինքնուրույն նշանակություն չունեն, և չեն կարող գործել հիմնական դրույթներից անկախ: Այդ դրույթների ան-

վանումն իսկ դրա մասին է վկայում. դրանք կոչված են ապահովելու անցումը նախորդ իրավակարգավորումներից գործող իրավակարգավորումներին: Դա ուղղակիորեն շեշտվում է 2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների պաշտոնական հիմնավորման մեջ. «Սահմանադրության անցումային դրույթները մի կողմից ապահովում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման **նոր համակարգի փուլային անցումը**, մյուս կողմից՝ նախատեսում են **կոնկրետ ժամկետներ՝ դրանց իրականացման համար**: Ի տարբերություն եզրափակիչ դրույթների՝ **անցումային դրույթներն ունեն ժամանակավոր կարգավորիչ բնույթ և իրացումից հետո կորցնում են իրենց կարգավորիչ նշանակությունը**» (ընդգծումները մերն են):

Այսպիսով, Սահմանադրության 213-րդ հոդվածի առաջին նախադասությունն ինքնուրույն նշանակություն չունի և ապահովում էր անցումը Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումներին՝ երաշխավորելով Սահմանադրական դատարանի՝ նախորդ խմբագրությամբ Սահմանադրության հիման վրա և դրանով սահմանված ժամկետով նշանակված **Սահմանադրական դատարանի անդամների անփոփոխելիությունը և պաշտոնավարման հաջորդայնությունը՝ փոփոխված Սահմանադրության գործողության շրջանակներում՝ Սահմանադրական դատարանի դատավորների և նախագահի պաշտոններում**: Հետևապես՝ Սահմանադրության անցումային դրույթների փոփոխությունը ոչ միայն վերաբերում էր հենց այդ անցումային դրույթներին, **այլև Սահմանադրության** (միայն հանրաքվեով փոփոխության ենթակա) **7-րդ գլխում ամրագրված՝ Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիության սահմանադրական երաշխիքներին**: Այսպիսով, Սահմանադրական դատարանի դատավորների, ինչպես և ցանկացած այլ դատավորի անփոփոխելիությունը և դրանից ածանցվող պաշտոնավարման անվտանգությունը խախտելը՝ լինի դա սահմանադրի, օրենսդրի, գործադիրի, թե անգամ հենց Սահմանադրական դատարանի կամ այլ դատարանների կողմից, **Սահմանադրության անփոփոխելի՝ 1-ին հոդվածի խախտում է** և անմիջականորեն դեմ է դատավորների անկախությանը:

Սահմանադրության կատարված, կատարմամբ սպառված անցումային դրույթների փոփոխությունը, որով հետադարձ ուժով կասեցվում է անցումը նոր կարգավորումների, ուղղակի միջամտություն է Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի դրությամբ պաշտոնավարող դատավորների անփոփոխելիությանը: Այդ միջամտությունը, նույնիսկ երբ քողարկվում է Սահմանադրության անցումային դրույթների փոփոխություններով, ակնհայտ հակասահմանադրական է:

Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1590 որոշման մեջ ուղղակիորեն հակադրվել է 2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների՝ վերը հիշատակված պաշտոնական հիմնավորմանը, և առանց որևէ հիմնավորման նշել է. «Սահմանադրության 213-րդ հոդվածը դասվում է Սահմանադրության այն դրույթների շարքին, որոնցում փոփոխությունները կարող են ընդունվել Ազգային ժողովի կողմից: Այսինքն՝ Սահմանադրության 213-րդ հոդվածի հիմքով պաշտոնավարող Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման սահմանադրական հիմքը նախատեսված էր Սահմանադրության այնպիսի հոդվածով, որը կարող էր փոփոխվել Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով»:

Այնուհետև Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1590 որոշմամբ արձանագրել է, որ «2020 թվականի Սահմանադրության փոփոխություններով Ազգային ժողովն ամբողջությամբ սպառել է Սահմանադրական դատարանի մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված և մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելու պահը պաշտոնավարող անդամների և նախագահի պաշտոնավարման ժամկետների նկատմամբ իր սահմանադրական լիազորությունը՝ Սահմանադրական դատարանի դատավորների և Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետների կարգավորումը տեղափոխելով բացառապես Սահմանադրության 166-րդ հոդվածով նախատեսված առավել «կայուն» իրավադրույթների գործողության տիրույթ, որոնք կարող են փոփոխվել բացառապես Հայաստանի Հանրապետության ժողովրդի կողմից՝ առանց անտեսելու Սահմանադրության անփոփոխ հոդվածների դրույթները և սահմանադրական համապատասխան ընթացակարգերի և երաշխիքների պահպանմամբ»:

Վերոգրյալից հետևում է, որ Սահմանադրության անցումային դրույթների փոփոխելիության հարցում Սահմանադրական դատարանը կատարել է տրամագծորեն միմյանց հակասող վերլուծություններ՝ առանց որևէ հիմնավորման և հակադրվելով 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության պաշտոնական հիմնավորումներին՝ իրավաչափ է գնահատել 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունները, այսինքն՝ արդեն կենսագործված, կատարմամբ սպառված դրույթների փոփոխությունը, մինևույն ժամանակ արձանագրելով, որ Ազգային ժողովը դրանով «սպառել է» անցումային դրույթների հետագա փոփոխության «իրավասությունը»: Այս դիրքորոշմամբ, ըստ էության, Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումն ընդունած դատավորներն անհաջող կերպով փորձ են կատարել ապահովագրել իրենց, հետագայում համանման փոփոխությունների արդյունքում իրենց լիազորությունների դադարեցումից:

Դատավորների անկախությունը բոլոր արտաքին միջամտություններից ու ճնշումներից՝ որպես կարևորագույն երաշխիք, պահանջում է արդարադատության իրականացման գործառույթ իրականացնող անձանց պաշտպանության երաշխիքներ, այդ թվում՝ ընդդեմ պաշտոնավարման դադարեցման:

Դատավորների անփոփոխելիության սկզբունքը, մասնավորապես, պահանջում է, որ ընտրված դատավորները պաշտոնավարեն սահմանված ժամկետով: Թեև նշվածը բացարձակ կանոն չէ, այդուհանդերձ նշված կանոնից չի կարող սահմանվել բացառություններ, քանի դեռ առկա չեն իրավաչափ և համոզիչ հիմքեր, որոնք կհամապատասխանեն համաչափության սկզբունքին:

Տվյալ դեպքում, չնայած 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների հիմքում ընկած հիմնավորումներին, նշված փոփոխություններին նախորդող և հաջորդող իրադարձություններից պարզ է դառնում, որ բուն նպատակը հանդիսացել է իշխող քաղաքական ուժի կողմից ձևավորված Սահմանադրական դատարանի նոր կազմ ունենալը:

Հատկանշական է, որ 2015 թվականի Սահմանադրության փոփոխություններով նույն երաշխիքը նախատեսված է եղել նաև սովորական դատավորների համար, որոնք նշանակվել են մինչև Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելը, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի դատավորների համար, որոնց նշանակման ընթացակարգը համապատասխան փոփոխությունների արդյունքում կարևոր փոփոխությունների է ենթարկվել, մինչդեռ նրանց պաշտոնավարման ժամկետը (մինչև կենսաթոշակի անցնելը) նույնն է մնացել, այլ կերպ ասած՝ չի իրականացվել նշված դատարանների նոր մոդելի կյանքի կոչում: Նշված տարբերակումը չունի որևէ օբյեկտիվ հիմք:

2020 թվականի Սահմանադրության փոփոխությունները իրականացվել են հրատապ կերպով, ընդ որում՝ նշվածով դադարեցվել են Սահմանադրական դատարանի ինը դատավորից երեքի լիազորությունները: Արդյունքում չի ապահովվել դատավորների պաշտոնավարման շարունակականությունը՝ սահմանադրական արդարադատության արդյունավետության պահպանման նպատակով, հետևաբար՝ դատարանի ինստիտուցիոնալ կայունությունը, նշվածը ազդել է դատարանի կազմի վրա: Նշվածը ևս կասկածներ է հարուցում իրականացվածի՝ բարեփոխում լինելու և դրա հետապնդած նպատակների հարցում:

Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման հարցում չի դրսևորվել նույն մոտեցումը, ինչ դատավորների դեպքում, մասնավորապես՝ նրա լիազորությունները դադարեցվել են, այլ ոչ թե կրճատվել լիազորությունների ժամկետի առումով: Եթե այս փոփոխությունների բուն նպատակը Սահմանադրական դատարանի գործող կազմը Սահմանադրության 7-րդ գլխին համապատասխանեցնելն էր, ապա ակնհայտ է, որ դա այդպես

չէ, քանի որ դադարեցվել են Սահմանադրական դատարանի նախագահի լիազորությունները, ում պաշտոնավարման վեց տարվա ժամկետը դեռ չէր լրացել, ինչպես սահմանված է Սահմանադրության 7-րդ գլխում:

Տարբեր պետական մարմինների ներգրավվածությունը Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության գործընթացում ինքնին նպատակ չէ, այլ միջոց՝ կազմի անկախության հարցում՝ այդ ընտրությունն ապաքաղաքականացնելու միջոցով: Այդ առումով հատկանշական է, որ, թեև Սահմանադրական դատարանի նոր դատավորների ընտրության համար պահանջվում է որակյալ մեծամասնություն, այդուհանդերձ, ներկա իրողության պայմաններում նշված ձայները կարող են ապահովվել Ազգային ժողովի կառավարող խմբակցության կողմից միայնակ, ինչը նշանակում է, որ ընտրության գործընթացը հնարավոր էր իրականացնել առանց ընդդիմադիր խմբակցությունների ներգրավվածության: Թեև սահմանադիրը նախատեսել է առաջադրող երեք տարբեր սուբյեկտներ, այդուհանդերձ, առկա չէ որևէ երաշխիք կամ ձևավորված մշակույթ, որ նրանց առաջադրումները սոսկ քաղաքական նախապատվությամբ պայմանավորված շարունակաբար չընդունվեն: Մեկ հանգամանք ևս՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 213-րդ հոդվածը, Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիության, Սահմանադրական դատարանի գործունեության շարունակականության հետ միասին, միաժամանակ նպատակ էր հետապնդում ունենալ հավասարակշռված կազմ, այն է՝ Սահմանադրական դատարանի դատավորներն ընտրված կլինեին տարբեր քաղաքական մեծամասնությունների կողմից, տարբեր ժամանակներում, որևէ քաղաքական ուժ ժամանակի կոնկրետ հատվածում չէր ունենա իր կողմից ընտրված Սահմանադրական դատարանի կազմի մեծամասնություն: 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների արդյունքում, արձանագրում ենք, որ Սահմանադրական դատարանի գործող կազմի չորս դատավորներ ընտրվել են ներկա Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության ձայների ուժով և այս կարգավորումների պայմաններում առավելազույնը երկու տարի հետո, այդ նույն մեծամասնությունը կարող է Սահմանադրական դատարանում ունենալ իր կողմից ընտրված մեծամասնություն (6 դատավոր): Դրա արդյունքում Սահմանադրական դատարանը մոտ 9-10 տարի կգործի մի կազմով, որի մեծամասնությունն ընտրվել է նույն քաղաքական մեծամասնության կողմից:

Սահմանադրական դատարանն առհասարակ չի անդրադարձել վերը նշված հարցերին, փոխարենն արձանագրել է հետևյալը.

«2020 թվականի Սահմանադրության փոփոխությունները համակարգային իմաստով հանգեցրել են արդյունքի, որով՝

ա) Սահմանադրական դատարանում պաշտոնավարող բոլոր դատավորները պաշտոնավարում են հավասար ժամկետով և կարգավիճակով,

բ) Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետի սահմանադրական հիմքը՝ 166-րդ հոդվածի 1-ին մասը, դուրս է Ազգային ժողովի իրավագործությունից և կարող է փոփոխվել բացառապես հանրաքվեի միջոցով,

գ) Սահմանադրական դատարանի նախագահի ընտրության լիազորությունը, որպես Սահմանադրական դատարանի անկախության լրացուցիչ երաշխիք, իրականացվել է Սահմանադրական դատարանի կողմից՝ համեմատ նախկինում Ազգային ժողովի կողմից նշանակվելու տարբերակի,

դ) Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետի սահմանադրական հիմքը՝ 166-րդ հոդվածի 1-ին մասը, դուրս է Ազգային ժողովի իրավագործությունից և կարող է փոփոխվել բացառապես հանրաքվեի միջոցով...

Ամփոփելով, Սահմանադրական դատարանը 2020 թվականի սահմանադրական փոփոխությունը գնահատում է, որպես Սահմանադրական դատարանի դատավորների և Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ անկախությունն ամրապնդելու, Սահմանադրական դատարանի անդամների և դատավորների միջև միայն հանրաքվեով փոփոխության ենթակա սահմանադրական դրույթների հիմքով կարգավիճակների հավասարությունն ապահովելու, Սահմանադրական դատարանի կողմից իր նախագահին ընտրելու նոր միջոցով անկախության և ինքնավարության ամրապնդմանն ուղղված, և Սահմանադրական դատարանի՝ դատարանակազմական բոլոր մարմինների՝ իշխանության բոլոր ճյուղերի կողմից ուղղակի մասնակցությամբ ձևավորված լինելու բերումով իր ժողովրդավարական լեգիտիմության և իր նկատմամբ հանրային վստահության աստիճանն ամրապնդելու անհրաժեշտ միջոց»:

Վերոգրյալի համատեքստում, կարծում ենք, որ 2020 թվականի Սահմանադրության փոփոխություններն արդարացված չեն համաչափության սկզբունքի համատեքստում: Նշվածն անդրադառնում է Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիության վրա, որը դատավորների անկախության առումով էական նշանակություն ունի:

Հանրային և իրավական ոլորտի բազմաթիվ ներկայացուցիչներ արտահայտել են տեսակետներ, որ 2018 թվականի իշխանափոխությունից հետո քաղաքական մեծամասնության կողմից ձեռնարկվել են համակարգային քայլեր՝ ուղղված սահմանադրական արդարադատության դեմ՝ Սահմանադրական դատարանի նկատմամբ քաղաքական վերահսկողություն ձեռք բերելու, ներառյալ՝ Սահմանադրական դատարանի վարույթում գտնվող գործերով որոշումների կայացման վրա ներազդելու, Սահմանադրական դատարանի դատա-

վորների գործառնական և անձնական երաշխիքները խաթարելու, գործող Սահմանադրական դատարանի դատավորներին «նախկիններին սպասարկելու» անհիմն պատճառաբանություններով «օրվա իշխանություններին սպասարկող» Սահմանադրական դատարանի նոր դատավորներով փոխարինելու համար:

Վեր հանելով Սահմանադրական դատարանի վերաբերյալ քաղաքական մեծամասնության ներկայացուցիչների տարբեր հայտարարությունները, քայլերը, դրանց, այդ թվում՝ միջազգային կառույցների կողմից տրված գնահատականները՝ (տես՝ Հավելված N 1) **կարող ենք եզրահանգել, որ Սահմանադրական դատարանի կազմի փոփոխությունը որևէ լեգիտիմ նպատակ չի հետապնդել:**

Ավելին, **2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հուլիսի 22-ի ՀՕ-376-Ն օրենքի իրավակարգավորումների արդյունքներով պայմանավորված նաև Սահմանադրական դատարանի բնականոն գործունեության ապահովման խնդիրներով, 2020 թվականի հունիսի 26-ից Սահմանադրական դատարանում գործերը հիմնականում քննվում և որոշումները կայացվում են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված Սահմանադրական դատարանի գործունեության կարգի, այդ թվում՝ ժամկետների բազմաթիվ խախտումներով: Այսինքն՝ «Սահմանադրական դատարանի ճգնաժամ» քաղաքական օրակարգը Սահմանադրական դատարանում առաջացրեց իրական ճգնաժամ՝ իր հնարավոր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ:**

Ամփոփելով կարող ենք նշել, որ, Ազգային ժողովը՝ հակառակ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշման, չի փոփոխել բացառապես Սահմանադրության անցումային դրույթները, այլ հակասահմանադրական, այն է՝ Սահմանադրությամբ չնախատեսված հիմքով և կարգով միջամտել է Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարմանը՝ խախտելով թե՛ Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիության, թե՛ նրանց անձնական անկախության, և թե՛ իրավական պետության սկզբունքները: Ըստ էության՝ Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիության կանոնի խախտումը այդ մասով հանգեցրել է Սահմանադրության անփոփոխելի՝ 1-ին հոդվածի խախտման:

6. Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման անվտանգությունը և դրա կապը նրանց հիմնական իրավունքի հետ

Իրավական պետությունում դատավորների անփոփոխելիությունը պահանջում է նրանց պաշտոնավարման անվտանգության իրավական և փաստացի երաշխիքներ: Միայն այդ դեպքում կարող է ապահովվել նրանց անձնական անկախությունը:

Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման անվտանգությունը ոչ միայն Սահմանադրության մեջ և Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքում ամրագրված օբյեկտիվ իրավական պատվիրան է, այլև պաշտպանվում և ապահովվում է հիմնական իրավունքով, այն է՝ Սահմանադրության 49-րդ հոդվածում ամրագրված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքը, որը հանրային և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող բոլոր անձանց պաշտպանում է կամայական ազատումից: Դատավորների դեպքում նրանց սուբյեկտիվ հանրային իրավունքը համակցվում է Սահմանադրության անփոփոխելի՝ 1-ին հոդվածից անձանցվող իրավական պետության հիմնարար սկզբունքի և դատավորների անկախության, ներառյալ՝ անփոփոխելիության սկզբունքների հետ: Անգամ եթե այն ամրագրված չլինեք որպես սուբյեկտիվ հանրային իրավունք՝ հիմնական իրավունքի մակարդակում, այն ուղղակիորեն կրիսեր հիշյալ օբյեկտիվ իրավական պատվիրաններից՝ որպես Սահմանադրության կառուցվածքային սկզբունքներ:

Իրավական պետությունում հիմնարար այս պահանջները Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշման մեջ անտեսվել են: Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումն ընդունած դատավորները, որպես ելակետ են ընդունել Ազգային ժողովի կողմից Սահմանադրության անցումային դրույթները փոփոխելու լիազորությունը՝ չանդրադառնալով դատավորներին վերաբերող օբյեկտիվ և սուբյեկտիվ պատվիրանների էությանը: Դրանով Սահմանադրական դատարանն ինքն իրեն ազատել է թե ի պաշտոնե քննության սկզբունքի (փաստերի մասով), թե *iura novit curia* սկզբունքի (իրավական հանգամանքների մասով) գործողությունից, որոնք պահանջում են, որ գործի թե փաստական, թե իրավական բոլոր հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզի ի պաշտոնե: Այս հարցում ևս ՄԴՈ-1590 որոշման մեջ առկա են ներքին հակասություններ: Նախնական սահմանադրական վերահսկողության պարտադիրության համար բացառություններ սահմանելով, Սահմանադրական դատարանը, ինչպես նշվեց, սահմանում է նաև բացառություններ իր իսկ սահմանած «ողջամիտ բացառության» կանոնից: Սահմանադրական դատարանը, ի թիվս այլնի, նշում է, որ Սահմանադրության փոփո-

խությունների նախնական վերահսկողությունը, անգամ եթե վերաբերում է Սահմանադրական դատարանի դատավորների անձնական շահերին, պարտադիր է, եթե առնչվում է նրանց հիմնական իրավունքներին: Այս հարցում Սահմանադրական դատարանի որոշումը կայացրած դատավորները հակադրվում են իրենց իսկ արտահայտած դիրքորոշմանը, քանի որ ակնհայտ է, որ դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման անվտանգությունը երաշխավորվում է նաև հիմնական իրավունքներով: Այսպես, 2019 թվականի նոյեմբերի 15-ի իր ՍԳՈ-1488 որոշման մեջ Սահմանադրական դատարանն անդրադարձել է Սահմանադրության 49-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքի բովանդակությանը և դրա վերաբերելիությանը նաև դատավորներին: ՍԳՈ-1488 որոշման համաձայն՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված **հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը**, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք:

ՍԳՈ-1488 որոշման մեջ Սահմանադրական դատարանը շեշտել է, որ դատավորի պաշտոնն զբաղեցնող անձանց համար՝ այնքանով, որքանով որ դա վերաբերում է դատավորի՝ որպես հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի կրողին, առկա է լրացուցիչ՝ **իրավական պետության հիմնարար սկզբունքից ածանցվող անփոփոխելիության սահմանադրական երաշխիք**, որի ապահովման մանրամասները պետք է սահմանվեն բացառապես սահմանադրական օրենքով՝ Դատական օրենսգրքով (Սահմանադրության 166-րդ հոդվածի 8-րդ մաս՝ փոխկապակցված Սահմանադրության 164-րդ հոդվածի 11-րդ մասի հետ): Դատավորի պաշտոնավարման հաջորդայնության առանցքային երաշխիքները սահմանված են սահմանադրական մակարդակով. **դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերը սպառիչ սահմանվել են Սահմանադրությամբ**, Սահմանադրությամբ սահմանվել են նաև **դատավորի լիազորությունների դադարեցման հարցով իրավասու մարմինները** (Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մաս):

Սահմանադրական դատարանն այդ որոշմամբ գտել է, որ Սահմանադրությամբ սահմանված հիշյալ կարգավորումների ընդհանուր բովանդակությունը հանգում է հետևյալին.

1) Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, ընդհանուր հիմունքներով անցնելով հանրային ծառայության, ունի նաև **պաշտոնավարման և կամայական հիմքերով պաշտոնից չազատվելու իրավունք**,

2) դատավորի պաշտոնը զբաղեցնող քաղաքացին, ի լրումն պաշտոնավարման ընդհանուր իրավունքի, ձեռք է բերում հատուկ երաշխիք՝ պաշտոնավարման հաջորդայնությունը երաշխավորող անփոփոխելիության տեսքով,

3) դատավորի պաշտոնից քաղաքացին կարող է հեռանալ կամ հեռացվել բացառապես Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով, Սահմանադրությամբ կանխորոշված կարգով՝ սահմանադրական օրենքով ամրագրված հատուկ ընթացակարգի գործադրմամբ,

4) դատավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման՝ Սահմանադրությամբ ամրագրված այն հիմքերի մեկնաբանության ժամանակ, որոնք ենթակա են կոնկրետացման սահմանադրական օրենքում, օրենսդիրը պետք է դրսևորի զսպվածություն և օրենսդրական կարգավորումների միջոցով չնենգափոխի Սահմանադրության համակարգային տրամաբանությունը, այն է՝ անհարկի չընդլայնի այդ հիմքերի կիրառման օրենսդրական հնարավորությունը, թույլ չտա դրանց կամայական մեկնաբանություն, երաշխավորի դրանց կիրառման ժամանակ արդարության բոլոր պահանջների պահպանումը, այդ թվում՝ պատշաճ ընթացակարգային երաշխիքներ դատավորի լիազորությունները դադարեցնելու ժամանակ:

Սահմանադրական դատարանը փաստել է, որ բոլոր դեպքերում, երբ դադարեցվում են դատավորի լիազորությունները, դա վերաբերում է ոչ միայն դատավորի կարգավիճակին, այլ նաև նրա՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքին. նա զրկվում է հետագա պաշտոնավարման իր իրավունքից, ուստի նրա այդ իրավունքը սահմանափակվում է:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումն ընդունած դատավորներն ուղղակիորեն անտեսել են Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1488 որոշումը, որը որոշիչ նշանակություն ուներ նաև 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար:

Սահմանադրական դատարանի գործող որոշումները, ինչպես նշվել է, կաշկանդում են նաև Սահմանադրական դատարանի դատավորներին, և չեն կարող «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով չնախատեսված եղանակով, առանց վերանայվելու, պարզապես անտեսվել:

Ավելին՝ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշման բովանդակությունը հանգում է նրան, որ 2020 թվականի Սահմանադրության փոփոխություններով Ազգային ժողովն իրավասու չէր դադարեցնելու Սահմանադրական դատարանի երեք դատավորների և նախագահի լիազորությունները, քանի որ ուղղակիորեն միջամտել է նրանց հիմնական իրավունքներին,

իսկ այդ դեպքում, ի բացառություն Սահմանադրության փոփոխությունների նախնական վերահսկողության պարտադիրությունից «ողջամիտ բացառության» կանոնի, Ազգային ժողովն իրավասու չէր առանց Սահմանադրական դատարան դիմելու Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարել:

Ակնհայտ է նաև, որ 2020 թվականի Սահմանադրության փոփոխություններով խախտվել են Սահմանադրական դատարանի հետագա պաշտոնավարման մասով դատավորների և Սահմանադրական դատարանի նախագահի լեգիտիմ ակնկալիքները, որոնք նույնպես փոխկապակցված են իրավական պետության բաղադրիչ հանդիսացող վստահության պաշտպանության սկզբունքի հետ: Մա ևս մեկ կապ է սուբյեկտիվ հանրային իրավունքների և Սահմանադրության անցումային դրույթների միջև: Այս ակնառու փաստը ևս ամբողջությամբ անտեսվել է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումն ընդունած դատավորների կողմից, թեև այն ուղղակիորեն տեղավորվում էր իրենց իսկ կողմից մշակված, մեր համոզմամբ՝ անհիմն, սակայն, այդ որոշմամբ արձանագրված «ողջամիտ բացառության» կանոնից բացառությունների շրջանակի մեջ:

7. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի վիճարկվող դրույթները՝ անկախ որոշ տեխնիկական բնույթի անհստակություններից, մեր գնահատմամբ՝ Սահմանադրական դատարան դիմելու ընթացակարգի տեսանկյունից համապատասխանում են Սահմանադրությանը: Այս տեսանկյունից Սահմանադրական դատարանի եզրահանգման հետ միայն այդ մասով համաձայն ենք: Սակայն, մեր կարծիքով, այդ դրույթները նախատեսում են պարտադիր կարգով Սահմանադրական դատարան դիմելու պահանջ՝ այլ ձևակերպումներով և, ըստ էության, վերարտադրելով Սահմանադրության համապատասխան դրույթների բովանդակությունը: Սահմանադրական դատարանը՝ գործի կարճված մասով խուսափել է գնահատել այդ դրույթների համապատասխանությունը իր իսկ սահմանած չափանիշներին: Ցանկացած անաչառ դիտորդի համար ակնհայտ է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի վիճարկվող դրույթները չեն պարունակում ո՛չ «ողջամիտ բացառության» կանոնը, ո՛չ էլ այդ կանոնից բացառությունները: Դրանք ո՛չ տառացի, ո՛չ էլ որևէ այլ մեկնաբանության դեպքում չեն կարող բխեցվել վիճարկվող դրույթներից, ո՛չ էլ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի այլ դրույթներից: Հետևապես՝ թեև, մեր կարծիքով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի՝ Սահմանա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

դրական դատարան դիմելու պարտադիրությանը վերաբերող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը, սակայն, ըստ Սահմանադրական դատարանի զարգացրած «բացառությունների տեսության»՝ դրանք Սահմանադրական դատարանի որոշման մեջ նշված կարգավորումների բացակայության մասով հակասահմանադրական են, այսինքն, պարունակում են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի մեկնաբանությամբ չհաղթահարվող իրավական բաց, քանի որ չեն ապահովում սահմանադրի կամքի պատշաճ կենսագործումը՝ նրան հնարավորություն չտալով բացառիկ դեպքերում չդիմելու Սահմանադրական դատարան: Եթե անգամ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումն ընդունած դատավորները ելել են այն կանխավարկածից, որ «ողջամիտ բացառության» կանոնն անուղակիորեն ամրագրված է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում, ապա ակնհայտ է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում չեն ամրագրվել այդ կանոնից «երեք բացառությունները», որոնց չամրագրումը նույնպես «հակասահմանադրական է», քանի որ կարող է հանգեցնել այդ բացառություններով կանխվելիք խախտումների: Սրանով Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումն ընդունած դատավորները հակադրվել են իրենց իսկ դիրքորոշմանը:

ՄԴՈ-1590 որոշմամբ, ըստ էության, շրջանցվել են գործի քննության առարկա համարվող և լուծում պահանջող առանցքային հարցերը: Այսպես, շրջանցվել են Սահմանադրական դատարանի դատավորների անփոփոխելիության, նրանց անկախության առանցքային սկզբունքները, իրավական պետության հիմնարար սկզբունքը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ հանրային իրավունքների խախտման հարցը:

ՄԴՈ-1590 որոշման մեջ անտեսվել է այն հանգամանքը, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերով սահմանափակվել է պարտադիր նախնական սահմանադրական վերահսկողության ծավալը, որը, մեր կարծիքով, հակասում է Սահմանադրությանը: Բայց անտեսվել է նաև Ազգային ժողովի կողմից Սահմանադրության այն ակնհայտ խախտումը, երբ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով են սահմանվել, ի թիվս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումների, Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակին և գործունեության կարգին վերաբերող դրույթներ, որոնցով սահմանափակվում է գործի քննության ծավալը: Այդ դրույթներն ուղղակիորեն հակասում են Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանի *լիազորությունները և գործունեության կարգը* սահմանվում են *Սահմանադրությամբ* և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

8. Ազգային ժողովի նախագահին Սահմանադրության փոփոխությունները հրապարակելու լիազորություն վերապահող իրավադրույթի հակասությունը Սահմանադրությանը

Սահմանադրության 129-րդ հոդվածը Հանրապետության նախագահին վերապահել է օրենքների ստորագրման և հրապարակման լիազորություն: Օրենքների ստորագրումը Հանրապետության նախագահի՝ որպես պետության գլխի, բնորոշ լիազորությունն է և ունի համընդհանուր տարածում՝ անկախ այն հանգամանքից, թե Հանրապետության նախագահը պետության կառավարման որ համակարգում է գործում: Եթե Հանրապետության նախագահը գտնում է, որ իրեն ներկայացված օրենքը հակասում է Սահմանադրությանը, ապա նա պարտավոր է դիմել Սահմանադրական դատարան: Հանրապետության նախագահը քաղաքական դրդապատճառներով օրենքի ստորագրումից հրաժարվելու լիազորություն սկզբունքորեն չունի: Եթե նա, այդուհանդերձ, հրաժարվում է ստորագրել և հրապարակել օրենքը Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դեպքերում, ապա նույն հոդվածի 3-րդ մասն այս պարագայում նախատեսում է լուծում՝ այդ լիազորությունը փոխանցելով Ազգային ժողովի նախագահին: Հարկ է նշել, որ Սահմանադրությունը ելնում է այն հանգամանքից, որ օրենքը կարող է ուժի մեջ մտնել **միայն** այն դեպքում, երբ այն **ստորագրվել և հրապարակվել է իրավասու պաշտոնատար անձի կողմից:**

Սահմանադրության փոփոխությունների մասով Սահմանադրությունը չի նախատեսել դրանք օրենքի տեսքով ընդունելու պահանջ: Եթե Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու իրավասությունը պատկանում է Ազգային ժողովին (Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մաս), ապա Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ընդունվում է որպես իրավական ակտի ինքնուրույն տեսակ: Սահմանադրությունն ուղղակիորեն չի կարգավորում ընդունված սահմանադրական փոփոխությունների ստորագրման և հրապարակման հետ կապված հարաբերությունները:

Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով սահմանադրական փոփոխությունների գործընթացը պետք է ունենա ավարտ, ինչը կարող է արձանագրվել միայն Ազգային ժողովի կողմից ընդունված Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ստորագրվելուց հետո: Ստորագրման միջոցով ստեղծվում է սահմանադրական փոփոխությունների փաստաթուղթը, դրա բնօրինակը, մինչև ստորագրումն այն միայն նախագիծ է: Ստորագրման արդյունքում նախագիծը վերածվում է սահմանադրական փոփոխությունների ակտի: Ակտի ստորագրմամբ, նախ՝ հավաստվում է, որ ստորագրված փաստաթղթի տեքստը համապատաս-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021

խանում է Ազգային ժողովի ընդունած նախագծի տեքստին: Միաժամանակ ստորագրությամբ հաստատվում է, որ ակտի ընդունման համար սահմանված սահմանադրական ընթացակարգերը պահպանվել են: Այսպիսով, սահմանադրական փոփոխությունների ակտի ստորագրմամբ հավաստում է ընդունված փաստաթղթի իրավաչափությունը, դրա համապատասխանությունը Ազգային ժողովի կողմից ընդունված նախագծին:

Սահմանադրական փոփոխությունների ակտի ստորագրման լիազորությունը մինչև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի՝ 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխությունը պատկանում էր Հանրապետության նախագահին, քանի որ Հանրապետության նախագահը՝ որպես պետության գլուխ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին մաս), **հանրությանը և պետությանն ինտեգրող, ազգային միասնությունը խորհրդանշող, սահմանադրության պահպանմանը հետևող սահմանադրական մարմինն է:** Հանրապետության նախագահի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված այդ լիազորությունը բխում էր Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պետության գլխի կարգավիճակից և որևէ կերպ հակասության մեջ չէր մտնում նույն հոդվածի 4-րդ մասի հետ, ըստ որի՝ «Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով»: Հակառակ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշումն ընդունած դատավորների պնդման՝ այս մասով չի սահմանվում, որ Հանրապետության նախագահի լիազորությունները սպառիչ կերպով սահմանված են Սահմանադրությամբ: Սահմանադրության 123-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ Հանրապետության նախագահի գործառույթները (Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթը (Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ մաս), վերկուսակցական, համապետական և համազգային շահերով առաջնորդվող արբիտրի գործառույթը (Սահմանադրության 123-րդ հոդվածի 3-րդ մաս)) իրագործվում են Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով և չեն կարող ընդլայնվել օրենքների միջոցով, սակայն, այդ սահմանափակումը չի վերաբերում այն լիազորություններին, որոնք բխում են Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պետության գլխի կարգավիճակից: Հանրապետության նախագահի կարգավիճակի և գործառույթների տարբերակումն ակնառու է արդեն իսկ Սահմանադրության 123-րդ հոդվածի վերտառությունից:

Սահմանադրությունը մի քանի դեպքում է սահմանել սահմանադրական մարմնի լիազորությունների սահմանումը բացառապես Սահմանադրությամբ, և դա վերաբերում է Ազգային ժողովին, Սահմանադրական դա-

տարանին: Ըստ Սահմանադրության 88-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ», իսկ 167-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ: Այս նորմի և Սահմանադրության 123-րդ հոդվածի 4-րդ մասի համեմատությունը ակնառու է դարձնում, թե սահմանադիրը որ մարմնի լիազորություններն է սահմանափակել բացառապես Սահմանադրությամբ: Եթե Հանրապետության նախագահի պարագայում սահմանափակումը վերաբերում է միայն Հանրապետության նախագահի գործառույթներին, ապա Ազգային ժողովի և Սահմանադրական դատարանի դեպքերում այդ սահմանափակումը *համապարփակ է*: Ազգային ժողովն իրավունք չունի օրենք ընդունելու միջոցով իրեն վերապահել որևէ նոր լիազորություն կամ Սահմանադրական դատարանին վերապահել Սահմանադրությամբ չնախատեսված լիազորություն: Այս արգելքը վերաբերում է ինչպես Ազգային ժողովին, այնպես էլ նրա մարմիններին:

Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է այն ակտերը, որոնք ստորագրելու և հրապարակելու իրավունք ունի Ազգային ժողովի նախագահը: Դրանք են՝ Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները: Ինչպես տեսնում ենք, Սահմանադրական փոփոխությունները հրապարակելու լիազորություն Ազգային ժողովի նախագահին վերապահված չէ: 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխություններով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով Ազգային ժողովի նախագահին սահմանադրական փոփոխությունները հրապարակելու լիազորություն վերապահելն ակնհայտորեն դուրս է գալիս նշված ակտերի շրջանակից և հակասում է ինչպես Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ, այնպես էլ Սահմանադրության 88-րդ հոդվածի 4-րդ մասին:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի՝ 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխությունները չեն նախատեսում սահմանադրական փոփոխությունները ստորագրելու որևէ պահանջ: Սահմանադրական դատարանի ՍԳՈ-1590 որոշումն ընդունած դատավորներն որևէ կերպ անդրադարձ չեն կատարում այն հարցին, թե ինչու օրենքի պարագայում ստորագրման պահանջը պարտադիր է, իսկ Սահմանադրության, այսինքն՝ օրենքից ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի պարագայում դրա կարիքը չկա: Ինչպես արդեն նշվեց, ստորագրման ինստիտուտը զուտ ձևականություն չէ, չունի միայն արարողակարգային բնույթ, այլ ունի ընդունված ակտի իրավաչափության հաստատման կարևորագույն և անփոխարինելի գործառույթ:

Պետության բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթի՝ Սահմանադրության մեջ Ազգային ժողովի կողմից փոփոխություններ

կատարելու գործընթացից Հանրապետության նախագահին իսպառ բացառելը գործնականում հանգեցրել է այնպիսի իրավիճակի, երբ սահմանադրական փոփոխություններն ընդունվում և հրապարակվում են բացառապես Ազգային ժողովի մեծամասնության և այդ մեծամասնության ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի նախագահի կամքով:

Ըստ Սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-1590 որոշումն ընդունած դատավորների դիրքորոշման՝ լիովին սահմանադրական է, երբ Սահմանադրության փոփոխությունները հրապարակվում են Ազգային ժողովի նախագահի կողմից, ով մեծամասնության ներկայացուցիչն է և, բնականաբար, շահագրգռված է այդ փոփոխություններով, իսկ նման լիազորությունից զրկվում է այն միակ պաշտոնատար անձը, ով, ըստ Սահմանադրության, պետության գլուխն է, ով սահմանադրական պատվիրանով պետք է լինի անաչառ և առաջնորդվի բացառապես համապետական և համազգային շահերով: Ընդ որում, Սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-1590 որոշումն ընդունած դատավորները որևէ փորձ անգամ չեն ձեռնարկում հիմնավորելու, թե ինչն է Ազգային ժողովի նախագահին սահմանադրական փոփոխությունների հրապարակման լիազորություն վերապահելու սահմանադրական հիմքը:

Այլ կերպ՝ Սահմանադրական փոփոխությունները ստորագրելու ինստիտուտի բացակայությունը, սահմանադրական փոփոխությունների հրապարակման լիազորությունը Ազգային ժողովի նախագահին վերապահելը հակասում է Սահմանադրությանը:

9. 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների նպատակի իրացման «հիմնական արդյունքները»

Դատավորների անկախությունը բոլոր արտաքին միջամտություններից ու ճնշումներից՝ որպես կարևորագույն երաշխիք, պահանջում է արդարադատության իրականացման գործառույթ իրականացնող անձանց պաշտպանության հատուկ երաշխիքներ, այդ թվում՝ **ընդդեմ պաշտոնավարման դադարեցման:**

2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների նպատակի իրացման արդյունքների մասով կարող ենք, մասնավորապես, նշել.

1) Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով պաշտոնավարման հաջորդայնության միևնույն երաշխիքը նախատեսված է նաև մինչև Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելը նշանակված Վճռաբեկ դատարանի դատավորների համար, մինչդեռ նրանց մասով Սահմա-

նադրության 7-րդ գլխով նախատեսված «մոդելը» մինչ օրս «կյանքի չի կոչվել», ինչը փաստում է նաև տարբերակման օբյեկտիվ հիմքի բացակայությունը.

2) 2020 թվականի Սահմանադրության փոփոխություններն իրակա-նացվել են հրատապ կարգով, դրանցով դադարեցվել են Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի մեկ երրորդի լիազորությունները: Արդյունքում չի ապահովվել դատավորների պաշտոնավարման հաջորդա-նությունը, հետևաբար՝ Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ կա-յունությունը: Միայն այս փաստն արդեն իսկ լուրջ կասկածներ է հարուցում փոփոխությունների իրավաչափ նպատակի հարցում՝ ի ցույց դնելով Սահմա-նադրական դատարանի կազմի մեծամասնությունը շուտափույթ փոխելու նկրտումը.

3) Սահմանադրական դատարանի դատավոր Ալվինա Գյուլումյանի պաշտոնավարման 12 տարին չէր լրացել անգամ համաձայն 2020 թվականի սահմանադրական փոփոխությունների, ինչն արձանագրվել է նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից, սակայն նրա լիազորությունները ևս դադարեցվեցին.

4) թեև 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների պաշ-տոնական հիմնավորումը Սահմանադրական դատարանի կազմավորման «նոր մոդելի» ներդրումն էր, Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի պաշտոնավարման հարցում ընտրվեց նրա պաշտոնավարումն անհապաղ դադարեցնելու կարգավորումը, այլ ոչ թե՝ նրա լիազորությունների ժամկետը կրճատելու, ինչը փաստում է գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների քաղաքական նպատակադրումները: Ձեռնարկված այլ քայլերը, փաստացի, նրա պաշտոնավարման դադարեցմանը հասնելու առումով ան-արդյունք էին,

5) թեև Սահմանադրությունը Սահմանադրական դատարանի նոր դատավորների ընտրության համար սահմանել է Ազգային ժողովի պատ-գամավորների առնվազն երեք հինգերորդի մեծամասնության պահանջ, որով հակակշիռ է ստեղծել քաղաքական մեծամասնության համար, այդուհանդերձ, ներկա իրողության պայմաններում նշված մեծամասնությունը կարող է ապա-հովվել և ապահովվել է միայն կառավարող խմբակցության ձայներով, ինչը նշանակում է, որ ընտրություն կարող է կատարել բացառապես ընթացիկ քա-ղաքական նպատակահարմարությամբ, առանց ընդդիմության հակակշռող ներազդեցության, ինչն էական բացասական ազդեցություն է ունենում և ունենալու Սահմանադրական դատարանի կազմի հավասարակշռվածության վրա և նվազեցնում է վստահությունը թեկնածուներ առաջադրող մարմինների ինքնուրույնության նկատմամբ, ինչպես նաև թույլ է տալիս կարճատև ժամա-նակահատվածում փոփոխել Սահմանադրական դատարանի դատավորների

մեծամասնությանը՝ մեծացնելով նրանց կախվածությունը ներկա Ազգային ժողովի քաղաքական մեծամասնությունից:

Սույն հատուկ կարծիքով մեր իրավական դիրքորոշումները՝ փաստական արձանագրումներով, արտահայտել ենք Հանուն Հայաստանի Հանրապետության, Հանուն Սահմանադրական կարգի պահպանման:

**ԴԱՏԱՎՈՐ
ԴԱՏԱՎՈՐ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

10 մայիսի 2021 թվականի

Սահմանադրական դատարանի դատավորներ Հրայր Թովմասյանի և Արևիկ Պետրոսյանի 10.05.2021թ. հատուկ կարծիքի ՀԱՎԵԼՎԱԾ N 1 և ՀԱՎԵԼՎԱԾ N 2 տե՛ս

<https://www.concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1590-tovmasyan-petrosyan.pdf>



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի
ՄԴՈ-1590 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2021 թվականի ապրիլի 29-ին Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՄԴՈ-1590 որոշմամբ եզրահանգել է.

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետը, 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում են հատուկ կարծիք հիշյալ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Անդրադառնալով Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության վերահսկողության վերաբերյալ դիմողի և պատասխանողի դիրքորոշումներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «... ի տարբերություն Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքերի, որոնց առնչությամբ սահմանադիրը գործածել է «կարող են դիմել» ձևակերպումը, նույն հոդվածի 2-րդ մասում գործածված «դիմում է» եզրույթը պետք է հասկանալ ոչ թե Սահմանադրական դատարան դիմելու հայեցողության, այլ պարտականության իմաստով: Ուստի Սահմանադրության 168 և 169-րդ հոդվածների բովանդակությունից և սահմանադրի կողմից կիրառված իրավական ձևակերպումներից բխում է, որ Սահմանա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

դրության փոփոխությունների նախագիծը ենթակա է պարտադիր նախնական վերահսկողության»:

Մյուս կողմից, անդրադառնալով դիմողի մատնանշած կոնկրետ իրավիճակին՝ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 213-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու նախագծի՝ առանց սահմանադրականությունը ստուգելու ընդունմանը, Սահմանադրական դատարանը նշել է. «... Սահմանադրական փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողությունը սահմանված է Սահմանադրությամբ, Սահմանադրական դատարանն այս կանոնը համարում է պարտադիր կատարման ենթակա, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ կանոնի կիրառումը կարող է հանգեցնել Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության ինստիտուտի ներդրման նպատակներին հակառակ արդյունքի»:

Սահմանադրական իմպերատիվ նորմից բացառության հնարավորությունը Սահմանադրական դատարանը փաստացի հիմնավորում է նրանով, որ «Սահմանադրության փոփոխությունների նախագծի պարտադիր ex ante վերահսկողության ինստիտուտը ոչ միայն նորություն է Հայաստանի սահմանադրական իրավունքում, այլ նաև գործնական կիրառության առումով՝ սահմանադրական փոփոխությունների նախագծերի ոչ պարտադիր ստուգման ինստիտուտի համեմատ խորությամբ չուսումնասիրված»:

Բացի դրանից, ըստ Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական ստուգման խնդրահարույց կողմն այս կառուցակարգը նախատեսող կանոնի խստությունն է, եթե այն օժտված չէ այս ինստիտուտի հիմնադրման նպատակի իրականացման խոչընդոտները հաղթահարելու անհրաժեշտ ճկունությամբ:

Այս առումով հարկ է նշել, որ Սահմանադրությունը՝ սահմանելով Սահմանադրության փոփոխությունների նախագծերի պարտադիր նախնական վերահսկողության կանոնը, դրանից որևէ բացառության հնարավորություն չի նախատեսել: Սահմանադրական դատարանի խնդիրն է ոչ թե գնահատել Սահմանադրության այս կամ այն նորմի արդյունավետությունը կամ ճկունությունը, այլ ապահովել սահմանադրական դրույթների գերակայությունը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծերի պարտադիր նախնական վերահսկողության ինստիտուտը հատկապես կարևորվում է «ճկուն» սահմանադրությունների պարագայում, երբ Ազգային ժողովին վերապահվում է իրավասություն որոշակի դեպքերում հանդես գալու որպես սահմանադիր:

2. Սահմանադրական դատարանը մի կողմից նշում է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրականության պարտադիր նախնական ստուգման չենթարկելը չի կարող գնահատվել որպես ողջամիտ բացառություն՝ անկախ Սահմանադրական դատարանի դատավորների՝ նախագծի սահմանադրականության ստուգման առնչությամբ շահերի փաստացի կամ հնարավոր բախման իրավիճակում գտնվելու հանգամանքից:

Մյուս կողմից Սահմանադրական դատարանն արտահայտում է հակառակ դիրքորոշում առ այն, որ «ողջամիտ բացառության» կանոնը կարող է կիրառվել այն նպատակով, որ չխոչընդոտվի սահմանադրի ինքնիշխան կամքի իրագործումը՝ Սահմանադրության փոփոխություններ ընդունելու իրավասության իրացմամբ»: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը նշում է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր վերահսկողության լիազորության իրականացման դեպքում ողջամիտ բացառության անտեսումն ի գորու է հարուցել մի իրավիճակ, «երբ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերի և սահմանադրի՝ տվյալ նախագծի ընդունմամբ հետապնդվող շահի միջև բախումը կարող է հանգեցնել սահմանադրի (Հայաստանի Հանրապետության ժողովրդի կամ Ազգային ժողովի)՝ Սահմանադրության փոփոխություններ ընդունելու իրավասության սահմանափակման՝ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերը վեր դասելով սահմանադրի ինքնիշխան կամքի արտահայտման բարձր հանրային շահից»:

Գտնում են, որ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերի և սահմանադրի՝ տվյալ նախագծի ընդունմամբ հետապնդվող շահի միջև բախում տեղի չի կարող ունենալ, եթե փոփոխություններ նախատեսող նախագիծը համապատասխանի Սահմանադրության պահանջներին: Դա պայմանավորված է նրանով, որ՝

նախ, Սահմանադրական դատարանի դատավորը (անդամը) տալիս է երդում՝ ապահովելու Սահմանադրության գերակայությունը և անկախ անձնական շահագրգռվածությունից իրավաբանորեն և բարոյապես պարտավոր է լինել անկախ և անաչառ,

երկրորդ, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը պետք է պարունակի հիմնավորող իրավական դիրքորոշումներ, որոնք բացառապես անձնական շահերից բխեցնելն անհնար է և կարող է Սահմանադրական դատարանի որոշումների հանդեպ անվստահության լուրջ առիթ հանդիսանալ:

Մյուս կողմից, հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծերի պարտադիր նախնական վերահսկողության պահանջը շրջանցելը կարող է հանգեցնել Սահմանադրական դատարանի դատավորների (անդամների) սահմանադրական իրավունքների խախտումների, ինչն անթույլատրելի է Սահմանադրության գերակայության սկզբունքի տեսանկյունից:

3. Սահմանադրության փոփոխություններն ընդունելու հարաբերությունները կարգավորող հատուկ նորմի՝ 202-րդ հոդվածի դրույթների համալիր վերլուծությունից Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ «Ազգային ժողովի կողմից ընդունվող Սահմանադրության փոփոխության նախագիծը պետք է համապատասխանի Սահմանադրության անփոփոխ դրույթներին, Սահմանադրության՝ միայն հանրաքվեի միջոցով փոփոխվող դրույթներին և Սահմանադրության այն դրույթներին, որոնք խնդրո առարկա փոփոխությունների նախագծով չեն փոփոխվում»:

Սահմանադրական դատարանի նման եզրահանգման պարագայում խնդրահարույց են դառնում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթները, համաձայն որոնց՝ Ազգային ժողովի նախագահը երկրորդ ընթերցմամբ քննարկված Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ուղարկում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը Սահմանադրության միայն անփոփոխելի հոդվածներին համապատասխանության տեսանկյունից գնահատելու համար:

Ինչ վերաբերում է Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագծի ընդունմանը, ապա վերջինիս ընդունման համար բավարար ձայն չհավաքելն արդեն իսկ պետք է ենթադրի Սահմանադրության համապատասխան փոփոխությունների կատարումից հրաժարում:

4. Անդրադառնալով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 7-րդ մասի և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետին՝ Սահմանադրական դատարանը փաստել է, որ Սահմանադրության փոփոխությունները ստորագրելու լիազորությամբ Հանրապետության նախագահն օժտված չէ:

Համեմատական վերլուծություն կատարելով Ազգային ժողովի ընդունած օրենքները ստորագրելու՝ Հանրապետության նախագահի լիազորության հետ՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ «Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ որևէ ուղեկցող լիազորությամբ Հանրապետության նախագահն օժտված չէ» և «Նման պայմաններում Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության փոփոխություններն ստորագրելու

լիազորությունը կրելու էր միայն արարողակարգային բնույթ, և սահմանադիրը հրաժարվել է այդ լիազորությունը սահմանադրորեն ամրագրելուց»:

Չանդրադառնալով հանրաքվեով ընդունվող Սահմանադրության փոփոխություններում Հանրապետության նախագահի դերակատարությանը՝ հարկ է նշել, որ Ազգային ժողովի կողմից Սահմանադրությունում փոփոխություն կատարելու դեպքում Հանրապետության նախագահը Սահմանադրությամբ օժտված է կարևորագույն առաքելությամբ: Սահմանադրության 123-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահը որպես պետության գլուխ հետևում է Սահմանադրության պահպանմանը, ինչը ենթադրում է ոչ միայն Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով իր գործառնությունների իրականացումը, այլ նաև Ազգային ժողովի կողմից Սահմանադրությունում փոփոխություններ կատարելուն հետևելը՝ ապահովելով նման փոփոխությունների իրականացման սահմանադրականությանը: Այդ առաքելությունը Հանրապետության նախագահը կարող է իրականացնել ինչպես Սահմանադրության փոփոխությունների տեքստն ստորագրելով, այնպես էլ այդ փոփոխությունները միայն հրապարակելով՝ հաշվի առնելով, որ միայն հրապարակելուց հետո համապատասխան փոփոխությունները կարող են իրավաբանական ուժ ստանալ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում են, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետը, 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց դրույթներ են:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԹՈՒՆՅԱՆ

29 ապրիլի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
29-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ
ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԵՐԻ,
5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4.2-ՐԴ ԿԵՏԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ
ՄԴՈ-1590 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ԵԶՐԱՓՈՎԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի ապրիլի 29-ի ՄԴՈ-1590 որոշմամբ որոշել է. «1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետը, 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում են Սահմա-

նադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 29-ի ՄԴՈ-1590 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումից տարբերվող հետևյալ դիրքորոշումները.

1. Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 29-ի ՄԴՈ-1590 որոշման 3-րդ կետում գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքների տրամաբանությունից և գործում առկա նյութերի վերլուծությունից, մասնավորապես, հետևում է, որ Ազգային ժողովը Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխությունների ընդունման և գործողության մեջ դնելու հարցի լուծումը պայմանավորել է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ազգային ժողովի կանոնակարգ) 86-րդ հոդվածի 7-րդ մասում և 5-րդ հոդվածի 2-րդ մասում համապատասխան փոփոխություններ ու լրացում կատարելու մասին օրինագծի ընդունման և ուժի մեջ մտնելու պայմանով: Ընդ որում՝ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունիսի 22-ին քննարկվել, քվեարկվել և ընդունվել է առաջին ընթերցմամբ, ապա քննարկվել երկրորդ ընթերցմամբ, այնուհետև քվեարկության է դրվել այդ հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը, որը քվեարկության արդյունքներով չի ընդունվել, և դրանից հետո երկրորդ ընթերցմամբ քննարկված Սահմանադրության փոփոխությունների նախագիծը դրվել է քվեարկության և ընդունվել է:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-309-Ն սահմանադրական օրենքը 2020 թվականի հունիսի 24-ին ստորագրելուց և հրապարակվելուց հետո Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխությունները Ազգային ժողովի նախագահի կողմից հրապարակվել են 2020 թվականի հունիսի 26-ին և ուժի մեջ են մտել հրապարակման պահից:

Սակայն հաշվի առնելով քննության առարկա հիմնախնդրի էությունն ու բովանդակային նշանակությունը՝ կարծում են, որ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում պետք է պարզեր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ, ինչպիսիք են՝

Ա. Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետի և 169-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

ստուգման հարցով Սահմանադրական դատարան դիմելը Ազգային ժողովի կողմից իրականացվող օրենսդրական գործընթացի բաղկացուցիչ մասն է կազմում: Դա նշանակում է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը պարտադիր և նախնական սահմանադրական վերահսկողության ենթակա օբյեկտ է, որը բխում է Սահմանադրության հիշյալ հոդվածների իրավակարգավորումների պահանջներից:

Ազգային ժողովում Սահմանադրության փոփոխությունների նախագծի քննարկման և ընդունման համար սահմանված ընթացակարգերը, այդ թվում՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության ստուգման հարցով Սահմանադրական դատարան դիմելը կարգավորվում են **Ազգային ժողովի կանոնակարգով, որը Սահմանադրության նորմերի հիման վրա և դրանց պահանջների պահպանմամբ միավորում ու համակարգում է խորհրդարանի ներքին կառուցվածքը և գործունեության ընթացակարգերը սահմանող նորմերն ու կանոնները:**

Հետևաբար՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագծի քվեարկության արդյունքներով չընդունվելու դեպքում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը Ազգային ժողովի կանոնակարգի 68-րդ և 85-րդ հոդվածների պահանջների տրամաբանության շրջանակում շրջանառությունից պետք է հանվեր և ոչ թե քննության առարկա դիտարկվեր օրենսդրական հաջորդ գործընթացի՝ երկրորդ ընթերցմամբ քննարկվելու ընթացակարգում:

Բ. Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխություններն ընդունվել են այն ընթացակարգով, որը պետք է նախատեսվեր 2020 թվականի հունիսի 24-ին ստորագրված և ուժի մեջ մտած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-309-Ն սահմանադրական օրենքով:

Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխություններն ուժի մեջ են մտել Ազգային ժողովի նախագահի կողմից հրապարակման օրվանից՝ 2020 թվականի հունիսի 26-ից, այդուհանդերձ այդ փոփոխություններն ուժի մեջ են մտել միայն Ազգային ժողովի կողմից ՀՕ-309-Ն սահմանադրական օրենքի ընդունման և ուժի մեջ մտնելու պահից հետո:

Սակայն ձևական առումով կարելի է հիշյալ գործընթացը իրավաչափ համարել օրենսդրական նախագծերի փաթեթի շրջանակում, բայց Սահմա-

նադրության փոփոխությունների ընդունումը պայմանավորել Ազգային ժողովի կանոնակարգում կատարված փոփոխություններն ընդունելու պայմանով, կարծում եմ, անհամատեղելի է հենց քննարկվող իրավական նորմերի աստիճանակարգության տեսանկյունից:

Գ. Սահմանադրական գործընթացի շրջանակում Սահմանադրության փոփոխությունների ընդունումը ենթադրում է նման ակտերին ներկայացվող առնվազն այնպիսի տարրի առկայություն, ինչպիսին է այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելու վերաբերյալ անցումային դրույթների նախատեսումը, որը հնարավորություն է տալիս օրենքները համակարգային առումով համապատասխանեցնելու Սահմանադրության փոփոխություններին:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել սահմանադրական և օրենսդրական առանձին կարգավորումների միջև տրամաբանական կապի բացակայությունը: Այսպես՝ որպես կանոն Սահմանադրության նորմերը որոշակիացվում են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը բացառիկ է իր իրավակարգավորումների նշանակությամբ, ինչպես նաև Սահմանադրության 167-րդ հոդվածի շրջանակում, որի 3-րդ մասով նախատեսվում է, որ Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխություններով՝ 213-րդ հոդված 1-ին մասի ուժով՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը Սահմանադրական դատարանի անդամներ նշանակված և Սահմանադրական դատարանի անդամի կամ դատավորի պաշտոնում ընդհանուր տևողությամբ ոչ պակաս, քան 12 տարի պաշտոնավարած Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ժամկետը համարվել է ավարտված և պաշտոնավարումը՝ դադարած՝ այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 2020 թվականի հունիսի 26-ից:

Բայց Սահմանադրության նույն 167-րդ հոդվածի տրամաբանության շրջանակում՝ եթե Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխություններն ուժի մեջ են մտել հրապարակման պահից՝ 2020 թվականի հունիսի 26-ից, ապա Սահմանադրության այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու պահին գործող «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մինչև 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները 12 տարվա ժամկետը լրանալուց հետո շարունակում են պաշտոնավարել մինչև

իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի հիշյալ դրույթն ուժը կորցրած է ճանաչվել Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունիսի 30-ի ՀՕ-376-Ն սահմանադրական օրենքով, որն ուժի մեջ է մտել 2020 թվականի հուլիսի 22-ին հրապարակման պահից:

Այսինքն՝ Սահմանադրության փոփոխությունների և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի համապատասխան կարգավորումների միջև բովանդակային անհամապատասխանությունն ինքնին ենթադրում էր որոշակի անցումային դրույթների սահմանում, այդ թվում՝ դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալու կամ լիազորությունների ժամկետը ավարտվելու կապակցությամբ Սահմանադրական դատարանի լիազորությունների դադարման հիմքերի միջև սահմանադրորեն որոշակի երաշխիքներ նախատեսելու և գործառնական հավասարակշռություն ապահովելու տեսանկյունից:

2. Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 29-ի ՄԳՈ-1590 որոշման 4-րդ կետում սահմանադրաիրավական վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող հարցադրումների շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևորել է մասնավորապես հետևյալը. «(...) արդյո՞ք Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ենթակա է պարտադիր նախնական սահմանադրական վերահսկողության և, արդյո՞ք Ազգային ժողովի կողմից Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման ընդունումը նշված գործընթացն ապահովելու առումով անհրաժեշտ և արդյունավետ միակ իրավական ընթացակարգն է»:

Անհրաժեշտ է նկատել, որ նշված հարցադրման առաջին մասի տրամաբանությունից բխում է, որ Սահմանադրական դատարանը սահմանադրաիրավական վեճի լուծումը պայմանավորում է այնպիսի հարցի առաջադրմամբ, որի պատասխանը ամրագրված է հենց Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետում, այն է, որ մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը Սահմանադրական դատարանը որոշում է դրա համապատասխանությունը Սահմանադրությանը:

Ավելին, գործի համար էական նշանակություն ունեցող՝ ներկայացված հարցադրման երկրորդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմա-

նադրական դատարանը կասկածի տակ է դնում Ազգային ժողովի կողմից մինչև Սահմանադրության փոփոխության նախագիծը Սահմանադրական դատարան ներկայացնելու հանգամանքը՝ որպես «անհրաժեշտ և արդյունավետ միակ իրավական ընթացակարգ», ինչը՝ նշված տրամաբանությամբ պայմանավորված, նշանակում է, որ կարող է նաև լինել այլ ընթացակարգ, որը սակայն, ուղղակիորեն չի բխում հենց Սահմանադրության 169-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԳՈ-1590 որոշման 4-րդ կետում սահմանադրաիրավական վեճի լուծման համար Սահմանադրական դատարանը կարևորել է գործի համար էական նշանակություն ունեցող հաջորդ հարցադրումը, որ՝ «Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության փոփոխությունների՝ ստորագրման և հրապարակման կառուցակարգ չնախատեսելը համահունչ է արդյոք Հանրապետության նախագահին Սահմանադրությամբ վերապահված լիազորություններին» այն դեպքում, երբ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-309-Ն սահմանադրական օրենքով Հանրապետության նախագահի նման լիազորություն սահմանող նորմերն ուժը կորցրած են ճանաչվել:

Ներկայացված հարցադրման նշանակությունից և քննության առարկա նորմերի բովանդակությունից անհրաժեշտ է ենթադրել, որ գործի համար էական նշանակություն պետք է ունենար հետևյալ հարցադրումը, որ Ազգային ժողովի նախագահի կողմից Սահմանադրության փոփոխությունների հրապարակումը համահունչ է արդյոք Ազգային ժողովի՝ Սահմանադրությամբ սահմանված լիազորություններին: Դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ գործի քննության շրջանակում վիճարկվել էր Ազգային ժողովի կանոնակարգի 86-րդ հոդվածի 7-րդ մասի հետևյալ դրույթը. «Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները մեկ շաբաթվա ընթացքում հրապարակում է»:

Այսինքն՝ հաշվի առնելով քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ Սահմանադրության տրամաբանությանը հակասող հարցադրումների նշանակությունը՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը սույն գործի էական նշանակություն ունեցող հարցադրումների շրջանակում առաջնորդվել է **ոչ թե Ազգային ժողովի կանոնակարգի նորմերի սահմանադրականության որոշման սկզբունքով, այլ Ազգային ժողովի կանոնակարգի վիճարկվող նորմերի հիմնավորվածության կանխավարկածով:**

Ելնելով նշվածից՝ կարծում եմ, որ բովանդակային առումով և նշանակությամբ հենց այս խնդրահարույց հարցադրումների հիման վրա է կառուցվել Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշման իրավավերլուծական շարադրանքը (5.1-5.14 կետեր), ինչը հանգեցրել է այն մտքին, որ 2020 թվականի Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության հարցով պարտադիր նախնական վերահսկողություն չիրականացնելը և Սահմանադրությամբ Ազգային ժողովի համապատասխան լիազորության բացակայության պարագայում՝ Ազգային ժողովի նախագահի կողմից Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունների հրապարակումը իրավաչափ են, և այդ հիմնավորմամբ պայմանավորված՝ Ազգային ժողովի կանոնակարգի՝ քննության առարկա նորմերը ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող:

3. Անդրադառնալով վիճելի իրավակարգավորումների սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին՝ անհրաժեշտ է նկատել, որ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշման 5.1-5.13 կետերում բերված գնահատականները առավելապես վերաբերում են ոչ թե Ազգային ժողովի կանոնակարգի՝ քննության առարկա նորմերի սահմանադրականության հարցի որոշմանը, այլ Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխություններին, և տպավորությունն այնպիսին է, որ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշման իրավավերլուծական շարադրանքը վերաբերում է այդ փոփոխությունների ընդունման անհրաժեշտությանը և հիմնավորումների կարևորությանը: Մասնավորապես, խոսքն այնպիսի արձանագրումների մասին է, ինչպիսիք են՝

ա) «կատարված փոփոխությունները որևէ կերպ չեն միջամտել և փոփոխել Սահմանադրության անփոփոխելի դրույթների և «...» դրույթների բովանդակությունը» (կետ 5.9),

բ) կատարված փոփոխությունները «ապահովելով Սահմանադրությամբ նախատեսված Սահմանադրական դատարանի կազմի համալրմանը մասնակից բոլոր մարմինների ներգրավվածությունը՝ որպես Սահմանադրական դատարանի ժողովրդավարական լեգիտիմության բարձրացման գործոն» (կետ 5.9),

գ) «մինչև Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխությունը գործող Սահմանադրությամբ նախատեսված իրավակարգավորումը չէր կարող ապահովել Սահմանադրական դատարանի անհրաժեշտ անկախությունը քաղաքական իշխանությունից» (կետ 5.11),

դ) «Սահմանադրության նախկին խմբագրությամբ 213-րդ հոդվածով նախատեսված և Սահմանադրության 7-րդ գլխի կանոններով նախատեսված՝ Սահմանադրական դատարանի անդամի և նախագահի պաշտոնավարման ժամկետից ավել ժամկետ նախատեսող դրույթը միաժամանակ եղել է Ազգային ժողովի իրավասության տիրույթում գտնվող հարց, ինչը չէր կարող ապահովել Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ անկախությունն այն աստիճան, որը Սահմանադրական դատարանը ձեռք է բերել Սահմանադրության 2020 թվականի փոփոխությամբ» (կետ 5.11),

ե) «Սահմանադրական դատարանը Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունը գնահատում է որպես Սահմանադրական դատարանի դատավորների և Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ անկախությունն ամրապնդելու, Սահմանադրական դատարանի անդամների և դատավորների միջև միայն հանրաքվեով փոփոխության ենթակա սահմանադրական դրույթների հիմքով կարգավիճակների և պաշտոնավարման հավասարությունն ապահովելու, Սահմանադրական դատարանի դատավորների կողմից Սահմանադրական դատարանի նախագահին ընտրելու միջոցով անկախության և ինքնավարության ամրապնդմանն ուղղված և Սահմանադրական դատարանի՝ իշխանության բոլոր ճյուղերի կողմից ուղղակի մասնակցությամբ ձևավորված լինելու բերումով իր ժողովրդավարական լեգիտիմության և իր նկատմամբ հանրային վստահության աստիճանն ամրապնդելու անհրաժեշտ միջոց» (կետ 5.13) և այլն:

Այս հիմնավորումներով պայմանավորված՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշման պատճառաբանական մասի կարգավորումների հիմքում չեն պահպանվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված՝ Սահմանադրական դատարանի որոշումներին ներկայացվող պահանջները:

4. Միաժամանակ, Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշման 5-րդ բաժնում Սահմանադրական դատարանի դիրքորոշումների տրամաբանությունից և գործում առկա նյութերի վերլուծությունից, մասնավորապես, հետևում է, որ որոշման պատճառաբանական մասում օգտագործվել են այնպիսի եզրույթներ կամ բառակապակցություններ, որոնք առնվազն գնահատման կարիք ունեն՝ նշելով գնահատման իրավական պարամետրերը (չափացույցները), կամ պետք է բացահայտվի դրանց իրավական բովանդակությունն ու նշանակությունը: Դրանցից են, օրինակ՝ ա) «(...) Սահմանադրական դատարանի ժողովրդավարական լեգիտիմության

բարձրացման գործոն», բ) «(...) Սահմանադրական դատարանի նկատմամբ հանրային վստահության աստիճան», գ) «(...) սահմանադրական արդարադատությունը Սահմանադրական դատարանի դատավորների անհատական շահերին ծառայեցնելու մտահոգությամբ», դ) «Սահմանադրական դատարանի անկախությունը քաղաքական իշխանությունից», ղ) «Սահմանադրական դատարանը՝ որպես սահմանադրականության անկախ և անկողմնակալ պահապան» և այլն:

Իսկ առանձին նույնաբովանդակ հասկացություններ օգտագործվել են Ազգային ժողովում 2020 թվականի հունիսի 19-ին շրջանառության մեջ դրված Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունման հիմնավորումների և հարակից փաստաթղթերի տեքստում: Մասնավորապես՝ 1) «Սահմանադրական դատարանի ժողովրդավարական լեգիտիմություն», 2) «Սահմանադրական դատարանի նկատմամբ հանրային վստահություն», 3) «Սահմանադրական դատարանի դատավորի անհատական շահ», 4) «Սահմանադրական դատարանի անկախությունը քաղաքական իշխանությունից» և այլն:

5. Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշման 5.3-րդ կետում անդրադառնալով Սահմանադրության անփոփոխելի հոդվածների և Սահմանադրության 202-րդ հոդվածի իրավակարգավորումների համալիր վերլուծությանը՝ Սահմանադրական դատարանը կատարել է եզրահանգում, որ՝ «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը պետք է համապատասխանի՝ ա) Սահմանադրության փոփոխություններն Ազգային ժողովի կողմից ընդունվելու դեպքում՝ Սահմանադրության անփոփոխելի դրույթներին (...), բ) Սահմանադրության փոփոխությունները հանրաքվեի միջոցով ընդունվելու դեպքում՝ Սահմանադրության անփոփոխելի դրույթներին (...):»:

Մինչդեռ անհրաժեշտ է արձանագրել, որ՝

1) Սահմանադրության 203-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ «Սահմանադրության անփոփոխելի դրույթ» եզրույթի փոխարեն անհրաժեշտ էր օգտագործել «Սահմանադրության անփոփոխելի հոդվածներ կամ հոդվածների դրույթներ» բառակապակցությունն այն հիմնավորմամբ, որ Սահմանադրության 203-րդ հոդվածով անփոփոխելի են Սահմանադրության համապատասխան հոդվածները, և անփոփոխելիությունը վերաբերում է փոփոխման ոչ ենթակա հոդվածներին և ոչ թե այդ հոդվածների դրույթներին,

2) Սահմանադրության 1-ին, 2-րդ, 202-րդ և 203-րդ հոդվածների բովանդակությունից որևէ ձևով չի հետևում, որ Սահմանադրության փոփոխությունները պետք է համապատասխանեն միայն Սահմանադրության անփոփոխելի հոդվածների դրույթներին:

Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել, որ Ազգային ժողովի կանոնակարգի վիճելի իրավակարգավորումների (հոդվ. 86) հիմքում նույնպես ընկած է այն գաղափարը, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը գնահատվում է Սահմանադրության անփոփոխելի հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Այդուհանդերձ, սույն գործի էական նշանակություն ունեցող հարցադրումների շրջանակում կարծում եմ, որ **Սահմանադրական դատարանը նույնպես առաջնորդվել է ոչ թե Ազգային ժողովի կանոնակարգի նորմերի սահմանադրականության որոշման սկզբունքով, այլ Ազգային ժողովի կանոնակարգի վիճարկվող նորմերի հիմնավորվածության կանխավարկածով:**

6. Սահմանադրական դատարանը, իր՝ ՄԴՈ-1590 որոշման 5.4-րդ կետում անդրադառնալով Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետի և 169-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների վերլուծությանը, արտահայտում է հետևյալ իրավական դիրքորոշումները, որ՝ «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ենթակա է պարտադիր նախնական վերահսկողության», և «(...) Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության ստուգումը Սահմանադրությամբ նախատեսված կանոն է, որին հետևելը սահմանադրական կարգի կայունության երաշխիք է, հնարավորություն է ընձեռում կանխել Սահմանադրության հիմքում ընկած սկզբունքներին և արժեքներին հակասող նորմերի ընդունումը և կարող է ծառայել որպես արդյունավետ միջոց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու և Ազգային ժողովի կողմից Սահմանադրության փոփոխություն ընդունելիս տեղեկացված և հիմնավոր որոշում կայացնելու համար»:

Սակայն Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1590 որոշման 5.7-րդ և 5.8 կետերում արտահայտել է այլ իրավական դիրքորոշումներ, որոնք և՛ բովանդակային առումով, և՛ իրավական նշանակությամբ տարբերվում են որոշման 5.4-րդ կետում կատարված եզրահանգումներից: Մասնավորապես՝ ՄԴՈ-1590 որոշման 5.7-րդ կետում վերահաստատելով սահմանադրական փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության կանոնի անհրաժեշտությունը,

սակայն բացառելով այն դեպքերի մասով, «(...) երբ այդ կանոնի կիրառումը կարող է հանգեցնել Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության ինստիտուտի ներդրման նպատակներին հակառակ արդյունքի»:

Իսկ ՄԴՈ-1590 որոշման 5.8-րդ կետում Սահմանադրական դատարանը նշում է Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության «ողջամիտ բացառության» կանոնի վերաբերյալ, որը «(...) կարող է կիրառվել այն նպատակով, որ չխոչընդոտվի սահմանադրի ինքնիշխան կամքի իրագործումը՝ Սահմանադրության փոփոխություններ ընդունելու իրավասության իրացմամբ»:

Ներկայացված իրարամերժ դիրքորոշումների հիմնավորումները Սահմանադրական դատարանը պայմանավորել է այն մտահոգությամբ, որ՝ «(...) ողջամիտ բացառության անտեսումն ի գորու է (...) հարուցել իրավիճակ, երբ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերի և սահմանադրի՝ տվյալ նախագծի ընդունմամբ հետապնդվող շահի միջև բախումը կարող է հանգեցնել սահմանադրի (Հայաստանի Հանրապետության ժողովրդի կամ Ազգային ժողովի)՝ Սահմանադրության փոփոխություններ ընդունելու իրավասության սահմանափակման՝ Սահմանադրական դատարանի դատավորների սուբյեկտիվ շահերը վեր դասելով սահմանադրի ինքնիշխան կամքի արտահայտման բարձր հանրային շահից» (կետ 5.8):

Սահմանադրական դատարանի հիշյալ դիրքորոշումների կապակցությամբ անհրաժեշտ է նկատել, որ նույն տրամաբանությամբ անտեսելով Սահմանադրական դատարանի դատավորի սահմանադրական բարձր կարգավիճակը և առաքելությունը, և նույն տրամաբանությամբ կարող էր հարուցվել այնպիսի իրավիճակ, երբ Սահմանադրության 2020 թվականի փոփոխություններից հետո ձևավորված Սահմանադրական դատարանի նոր կազմի սուբյեկտիվ շահերը և ս բախվեին սույն որոշման ընդունմամբ հետապնդվող շահի հետ, և արդյունքում դա կհանգեցնեք Ազգային ժողովի՝ Սահմանադրության փոփոխությունների ընդունմամբ պայմանավորված Ազգային ժողովի կանոնակարգի համապատասխան իրավակարգավորումներ ընդունելու իրավասության ենթադրյալ սահմանափակմանը:

Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1590 որոշմամբ՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության «ողջամիտ բացառության» կանոնի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները չեն բխում Սահ-

ՍԱՀՄԱՆԱԿՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021

մանադրության 6-րդ («Օրինականության սկզբունքը»), 162-րդ («Արդարադատության իրականացումը»), 164-րդ («Դատավորի կարգավիճակը») և 167-րդ («Սահմանադրական դատարանը») հոդվածների բովանդակությունից և Սահմանադրական դատարանի դատավորի բարձր կարգավիճակն ու առաքելությունը սահմանող սահմանադրական նորմերի ու «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի համապատասխան իրավակարգավորումների արժեքանական նշանակությունից:

7. Սահմանադրական դատարանը, ՄԴՈ-1590 որոշման 5.10-րդ կետում անդրադառնալով Սահմանադրության 2020 թվականի փոփոխությունների նախագծի սահմանադրականության վերահսկողության պարտադիրության բացառման անհրաժեշտության հարցին, արձանագրում է, որ «(...) օրենսդրի կողմից նման իրավիճակի կարգավորված չլինելը չի կարող ծառայել որպես թույլտվություն Սահմանադրական դատարանի դատավորի սահմանադրական առաքելության իրականացման ընթացքում շահերի այնպիսի հնարավոր բախումների կենտրոնում հայտնվելու համար, որը սասանում է սահմանադրական արդարադատության նկատմամբ հանրային վստահությունը՝ հանրության մոտ հիմնավոր կասկած հարուցելով սահմանադրական արդարադատությունը Սահմանադրական դատարանի դատավորների անհատական շահերին ծառայեցնելու մտահոգությամբ»: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը շեշտադրում է, որ «(...) սահմանադրական արդարադատությունը չի կարող պայմանավորվել և կախվածության մեջ դրվել Սահմանադրական դատարանի դատավորների՝ քննության առարկա հարցի նկատմամբ անձնական վերաբերմունքից և գործի ելքով սուբյեկտիվ շահագրգռվածությունից, քանզի Սահմանադրական դատարանը, հանդես գալով որպես սահմանադրական արդարադատության մասնագիտացված և միակ մարմինը Հայաստանի Հանրապետությունում, սահմանափակված է բացառապես Սահմանադրությամբ և կոչված է երաշխավորելու Սահմանադրության գերակայությունը»:

Հիշյալի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրական դատարանի նման սահմանադրական առաքելության սահմաններում կասկածի տակ առնելով Սահմանադրական դատարանի դատավորի՝ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված պարտականությունների կատարման առաքելությունը՝ այդուհանդերձ, հիշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում իմաստագրվում են դատավորի սահմանադրաիրավական կարգավիճակը և դրա տարրերը, մասնավորապես, «(...) Սահմանադրական

դատարանի դատավորը պարտավոր է լինել անաչառ և զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց» («Սահմանադրական դատարանի մասին») սահմանադրական օրենք, հոդվ. 14, մաս 2, կետ 3), կամ «(...) թույլ չտալ շահերի բախում, բացառել ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունների՝ իր ի պաշտոնե լիազորությունների իրականացման վրա որևէ ազդեցություն» («Սահմանադրական դատարանի մասին») սահմանադրական օրենք, հոդվ. 14, մաս 2, կետ 5) և այլն:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանի հիշյալ դիրքորոշումների պարագայում անհրաժեշտություն է առաջանում նաև սահմանելու իրավական նոր չափորոշիչներ՝ սահմանադրական արդարադատության նկատմամբ հանրային վստահության և Սահմանադրական դատարանի դատավորների անհատական շահերին ծառայեցնելու մտահոգությամբ պայմանավորված հանրության կասկածները գնահատելու տեսանկյունից: Հակառակ դեպքում այդ իրավական մոտեցումները կրելու են հոշակագրային բնույթ:

8. Սահմանադրական դատարանը, անդրադառնալով Ազգային ժողովի կանոնակարգի վիճելի իրավակարգավորումների՝ 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի և 86-րդ հոդվածի 7-րդ մասի սահմանադրականության հարցին, կատարել է եզրահանգում, որ. «Սահմանադրության փոփոխություններն ստորագրելու լիազորությամբ Հանրապետության նախագահին օժտված չէ» (կետ 5.14):

Սահմանադրական դատարանը, 2020 թվականի ապրիլի 1-ի ՄԴՈ-1518 որոշմամբ անդրադառնալով Հանրապետության նախագահի կարգավիճակի հիմնախնդիրներին, արձանագրել է, մասնավորապես. «Հանրապետության նախագահի սահմանադրական գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով սահմանադիրը նրան վերապահել է համարժեք լիազորություններ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 4-րդ մաս), որոնք նրա վրա ազդելու հնարավորությունները բացառելու համար սպառիչ ամրագրել է Սահմանադրությամբ՝ օրենսդրին թողնելով Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում դրանց իրականացումը կանոնակարգելը»:

Միաժամանակ, նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով Հանրապետության նախագահի՝ որպես վերկուսակցական (ապակուսակցական) արբիտրի դերակատարությանը, արձանագրել է,

որ այդ դերը «(...) հիմնված է թե՛ Հանրապետության նախագահի՝ որպես պետության գլխի, ինտեգրող գործառույթի, թե՛ նրա անաչառության վրա, ենթադրում է Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրականացում, ինչը ևս ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրությամբ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ մաս): Բացի դրանից, Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթը, իր հերթին, ենթադրում է, որ Հանրապետության նախագահը պետք է ունենա զսպումների և հակակշիռների միջոցով այդ գործառույթն արդյունավետորեն իրականացնելու հնարավորություն, ուստի նա պետք է ոչ միայն կարողանա կատարված փաստերից հետո գնահատել ենթադրյալ հակասահմանադրական գործողությունները (անգործությունը) կամ որոշումները, այլև պետք է կարողանա, նախևառաջ, կանխել դրանց ի հայտ գալը՝ օժտված լինելով կանխարգելիչ սահմանադրական վերահսկողության որոշակի լիազորություններով»:

Սահմանադրական դատարանը, ՍԳՈ-1590 որոշման 5.14-րդ կետում արձանագրել է, որ՝ «(...) խորհրդարանի կողմից ընդունված որևէ իրավական ակտի ստորագրումն ու հրապարակումը պետության գլխի կողմից ինքնանպատակ չէ: Այն ուղղված է Հանրապետության նախագահին Սահմանադրությամբ վերապահված գործառույթների իրականացման ապահովմանը և ուղեկցվում է Սահմանադրությամբ ամրագրված համապատասխան այլ լիազորություններով: Խորհրդարանի կողմից ընդունված իրավական ակտն ստորագրելու և հրապարակելու գործընթացում պետության գլխի ներգրավումը կարող է տեղավորվել մասնավորապես Սահմանադրության պահպանմանը հետևելու՝ վերջինիս գործառույթի իրականացման շրջանակում, եթե Հանրապետության նախագահը Սահմանադրությամբ միաժամանակ օժտված է այնպիսի լիազորություններով, որոնց համակցությունը գործնականում հնարավորություն է տալիս օրենսդիր մարմնի նկատմամբ գործադրել զսպումների և հակակշիռների համակարգը»:

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը, անդրադառնալով Սահմանադրության փոփոխություններն ստորագրելու Հանրապետության նախագահի սահմանադրական լիազորության հարցին, կատարում է հետևյալ եզրահանգումը, որ՝ «(...) այն ներառված չէ Սահմանադրության 129-րդ հոդվածի կարգավորման առարկայում, և Հանրապետության նախագահի կողմից օրենքներն ստորագրելու լիազորությունը չի ենթադրում վերջինիս կողմից նաև Սահմանադրության փոփոխությունները ստորագրելու լիազորության առկայությունը»:

Հիշյալ հարցադրման շրջանակում անհրաժեշտ է նկատել, որ Սահմանադրության 88-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման համաձայն՝ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ: Իսկ Սահմանադրության 123-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով:

Վիճելի իրավակարգավորումների և Սահմանադրական դատարանի 2020 թվականի ապրիլի 1-ի ՄԴՈ-1518 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Սահմանադրության 88-րդ հոդվածի 4-րդ մասի և 123-րդ հոդվածի 4-րդ մասի համակարգային վերլուծությունից կարելի է առանձնացնել հետևյալ մոտեցումները.

1) եթե Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են միայն Սահմանադրությամբ, ապա Հանրապետության նախագահն Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով իրականացնում է իր գործառույթները,

2) եթե Ազգային ժողովի լիազորությունների համատեքստում Ազգային ժողովի նախագահին Սահմանադրությամբ՝ Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունների և օրենքի ստորագրման և հրապարակման լիազորություն վերապահված չի (բացառությամբ Սահմանադրության 129-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի), ապա Հանրապետության նախագահն Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի ընդունած օրենքը,

3) Սահմանադրությամբ Հանրապետության նախագահը Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթն իրականացնում է պետության գլխի սահմանադրական կարգավիճակին բնորոշ տարրերի համակցությամբ,

4) Սահմանադրության պահպանումն ենթադրում է նաև Սահմանադրության 202-րդ հոդվածի իրավակարգավորումների պահանջների պահպանմամբ Սահմանադրության ընդունման և Սահմանադրության փոփոխությունների կատարմանը հետևելը,

5) Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթն ենթադրում է, որ Հանրապետության նախագահը պետք է ունենա զսպումների և հակակշիռների միջոցով այդ գործառույթն արդյունավետորեն իրականացնելու հնարավորություն՝ մասնակից դառնալով սահմանադրական գործո-

ղություններին, այդ թվում՝ ենթադրյալ հակասահմանադրական գործողությունները (անգործությունը) գնահատելու միջոցով,

6) Սահմանադրության փոփոխությունների նախագծի նախաձեռնումը, քննարկումը և ընդունումը Սահմանադրությամբ Ազգային ժողովին վերապահված լիազորություն է,

7) Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունների հրապարակումը Սահմանադրության 202-րդ հոդվածի իրավակարգավորումների պահանջների պահպանման համատեքստում ենթադրում է Սահմանադրության պահպանում, որին հետևելու գործառնությունը Սահմանադրությամբ վերապահված է Հանրապետության նախագահին:

Այսպիսով ընդհանրացնելով՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը, որ Ազգային ժողովի կողմից ընդունված Սահմանադրության փոփոխությունների հրապարակումը չի կարող վերապահվել Ազգային ժողովի նախագահին, քանի որ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են միայն Սահմանադրությամբ, իսկ Սահմանադրությամբ Ազգային ժողովի լիազորությունների համատեքստում Ազգային ժողովի նախագահին Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունների և օրենքի ստորագրման և հրապարակման լիազորություն վերապահված չէ, բացառությամբ Սահմանադրության 129-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

Ամփոփելով կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետը, 86-րդ հոդվածի 2-րդ մասը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 86-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 86-րդ հոդվածի 7-րդ մասը ճանաչելու Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասին, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 88-րդ հոդվածի 4-րդ մասին, 168-րդ հոդվածի 2-րդ կետին, 169-րդ հոդվածի 2-րդ մասին, 202-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29 ապրիլի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 մայիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Գ. Սիմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի փետրվարի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հիվանդությունների կան-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

խարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2021 թվականի մարտի 25-ի թիվ 406-Ա որոշմամբ 2021 թվականի փետրվարի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի մարտի 29-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2021 թվականի մարտի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի փետրվարի 18-ին՝ մարզային առողջապահական համակարգի արդիականացման, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի ազգաբնակչությանը բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների բարելավման և դեռևս 2013 թվականի մայիսի 17-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ֆինանսավորման համաձայնագրով (ՀՀ կողմից վավերացվել է 2013 թվականի հունիսի 20-ի Ազգային Ժողովի ԱԺՌ-072-Ն որոշմամբ (ՄԴՌ-1100) նախատեսված Վարկային ծրագրի արդյունավետ շարունակականության ապահովման նպատակով):

2. Քննության առարկա Վարկային համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է յոթ միլիոն չորս հարյուր հազար դոլար (7,400,000 ԱՄՆ դոլար), որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել

Արժույթի փոխարկման միջոցով («Վարկ»), Վարկային համաձայնագրի Լրացում 1-ում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու նպատակով, որի մարումն սկսվում է 2035թ. նոյեմբերի 15-ից և ավարտվում է 2045թ. նոյեմբերի 15-ին: Վարկի փակման ամսաթիվը 2023թ.փետրվարի 28-ն է:

3. Վարկային համաձայնագիրն ունի երեք Լրացում. Լրացում 1՝ «Ծրագրի նկարագրությունը», Լրացում 2՝ «Ծրագրի իրականացումը», Լրացում 3՝ «Պարտավորության հետ կապված մարման ժամանակացույց», ինչպես նաև Հավելված, որով բացահայտվում է Վարկային համաձայնագրում օգտագործված որոշ բառերի, արտահայտությունների բովանդակությունը:

4. Ծրագրի նպատակն է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) մակարդակում և հղի մայրերի շրջանում ավելացնել ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) հայտնաբերումը, ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավումը, COVID-19-ով պայմանավորված վտանգի հայտնաբերումը, կանխարգելումը և դրան արձագանքելը:

5. Ծրագիրը կազմված է չորս մասերից. Մաս 1՝ «Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում» ԱԱՊ հաստատություններում ՄՄԱ («ՄՄԱ»՝ մոր և մանկան առողջություն) ծառայությունները և ՈՎՀ ծառայությունները բարելավելու նպատակով», Մաս 2՝ «Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում», Մաս 3՝ «Ծրագրի կառավարումը» և Մաս 4՝ «Անհետաձգելի արձագանք COVID-19-ին»:

6. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վճարել միանվագ կոմիսիոն վճար, որը կազմում է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ չորրորդը (0.25%) (հոդված II, կետ 2.03),
- վճարել պարտավորության վճար, որը տարեկան կազմում է Վարկի չառհանված մնացորդի մեկ տոկոսի մեկ չորրորդը (0.25%) (հոդված II, կետ 2.04),
- յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին՝ մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին, վճարել տոկոսագումար, որը հավասար է Կողմնորոշիչ դրույքաչափին գումարած Փոփոխական սպրեդը կամ այնպիսի դրույքաչափ, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ Ընդհանուր պայմանների 3.02(ե) բաժնի համաձայն (հոդված II, կետեր 2.05 և 2.06, Լրացում 3),

– յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին՝ սկսած 2035 թ. նոյեմբերի 15-ից մինչև 2045 թ. մայիսի 15-ը մարել Վարկի մայր գումարը՝ 4.76% մասնաբաժնով, իսկ 2045 թ. նոյեմբերի 15-ին՝ 4.80% մասնաբաժնով (հոդված II, կետ 2.07 և Բանկի 2021 թվականի մարտի 3-ով թվագրված գրություն),

– հայտնել Ծրագրի նպատակի առնչությամբ ՀՀ հանձնառության մասին և այդ նպատակով ԱՆ-ի և վերջինիս ԱԾԻԳ-ի («ԱԾԻԳ») Առողջապահության նախարարի 1996 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 764 հրամանով ստեղծված Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակը) միջոցով ՊԱԳ-ի («ՊԱԳ»՝ Վարկառուի պետական առողջապահական գործակալությունը) օգնությամբ իրականացնել Ծրագիրը՝ Ծրագրի Մաս 1 (ա) մասով Ընդհանուր պայմանների IV հոդվածի դրույթներին և Վարկային համաձայնագրի Լրացում 2-ին համապատասխան (հոդված III, կետ 3.01),

– մինչև Ծրագրի ավարտը գործարկել և պահպանել ծրագրի իրականացման գրասենյակ՝ ԱՆ-ի ենթակայության ներքո, որը պատասխանատու է Ծրագրի ընդհանուր համակարգման համար (ԱԾԻԳ) և ապահովել, որ այդ գրասենյակը ունենա բավարար թվով աշխատողներից կազմված անձնակազմ՝ Բանկին բավարարող որակավորմամբ և փորձով, այդ թվում, ի թիվս այլոց՝ տնօրեն, մոնիթորինգի և գնահատման համակարգող, գնումների մասնագետներ, ֆինանսական կառավարման մասնագետ և Ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ այլ աշխատակազմ, ինչպես սահմանված է Գործառնական ձեռնարկում (Լրացում 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 1),

– Ծրագիրն իրականացնել ԿՀՖ ձեռնարկին («ԿՀՖ ձեռնարկ»՝ 2013 թվականի փետրվարի 12-ով թվագրված՝ կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ձեռնարկը) և Բանկին բավարարող Գործառնական ձեռնարկին համապատասխան, որը կներառի Ծրագրի համապատասխան Մասերի իրականացման կանոնները, մեթոդները, ուղենիշները, ստանդարտ փաստաթղթերը և ընթացակարգերը, ներառյալ հետևյալը. Ծրագրի իրականացման միջոցառումների մանրամասն նկարագրություն և Ծրագրի մանրամասն ինստիտուցիոնալ մեխանիզմներ, Ծրագրի շրջանակներում մշակված կիրառելի բոլոր միջոցառումներում բժշկական թափոնների կառավարման ինտեգրված մոտեցում ներդնելու ուղենիշներ, և Ծրագրի վարչական, հաշվապահական հաշվառման, աուդիտի, հաշվետվությունների ներկայացման, ֆինանսական, գնումների և մասհանման ընթացակարգեր (Լրացում 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 2),

– այն դեպքում, երբ Գործառնական ձեռնարկի կամ ԿՀՖ ձեռնարկի որևէ դրույթ հակասում է Վարկային համաձայնագրին, գերակայում են Վարկային Համաձայնագրի պայմանները, և եթե ՀՀ և Բանկի միջև այլ բան գրավոր

համաձայնեցված չէ, ապա չհեղարկել, չփոփոխել, չկասեցնել, չհրաժարվել կամ այլ կերպ չկիրառել Գործառնական ձեռնարկը, ԿՀՖ ձեռնարկը կամ դրանց դրույթներից որևէ մեկը (Լրացում 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 3),

– Ծրագիրն Առողջապահության նախարարության միջոցով իրականացնել՝ համաձայն Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրերի (ԲՄԿԾ) և Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակների (ԲՄԿԾ) և հաջորդիվ իրականացնել ԲՄԿԾ-ները՝ վերջիններիս պայմաններին համապատասխան և Բանկի համար ընդունելի եղանակով՝ ապահովելով, որ շինարարական աշխատանքները Ծրագրի որևէ մասի համար չմեկնարկեն, քանի դեռ Հայաստանի Հանրապետությունը համապատասխան տեղանքի համար չի մշակել ԲՄԿԾ-ն, և վերջինս չի հաստատվել Բանկի կողմից (Լրացում 2, Բաժին I, կետ «Բ», ենթակետ 1),

– ապահովել, որ Ծրագրի շրջանակներում իրականացվելիք ոչ մի աշխատանք չառաջացնի վերաբնակեցման անհրաժեշտություն (Լրացում 2, Բաժին I, կետ «Բ», ենթակետ 2),

– Ծրագրի՝ տվյալ օրացուցային կիսամյակին վերաբերող յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին ներկայացնել ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո քառասունհինգ (45) օրվա ընթացքում (Լրացում 2, Բաժին II),

– չիրականացնել որևէ առհանում ստորագրման օրվանից առաջ կատարված վճարումների համար, բացառությամբ այն առհանումների, որոնց համախառն գումարը չի գերազանցում 1,250,000 ԱՄՆ դոլար գումարը, որոնք կարող են կատարվել Կատեգորիա (1)-ի ներքո Թույլատրելի ծախսերի շրջանակներում այն վճարումների համար, որոնք կատարվել են մինչ ստորագրման ամսաթիվը՝ 2021թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո (Լրացում 2, Բաժին III, կետ «Բ», ենթակետ 1),

– նախապատրաստել և ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից քառասունհինգ (45) օր հետո Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ Բանկին ներկայացնել աուդիտ չանցած, միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (ՄՖՀ) Ծրագրի համար, որոնք վերաբերում են այդ կիսամյակին (2021 թվականի փետրվարի 18-ով թվագրված Բանկի գրություն, կետ II, մաս «i»),

– Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկել՝ Ընդհանուր պայմանների 5.09(բ) բաժնի դրույթներին համապատասխան, որը՝ յուրաքանչյուր աուդիտը, կընդգրկի մեկ ֆիսկալ տարվա ժամանակահատվածը, և նման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար Ծրագրի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան այդ ժամանակահատվածի ավարտից վեց (6) ամիս հետո ներկայացնել Բանկին և ժամանակին ու

Բանկի համար ընդունելի ձևով դարձնել այն հանրորեն հասանելի (2021 թվականի փետրվարի 18-ով թվագրված Բանկի գրություն, կետ II, մաս «ii»):

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ իր որոշումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Համաձայնագիրը և սպահանջում է պատշաճ վերահսկողություն վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման և Ծրագրի իրականացման ու կառավարման առումով Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2021 թվականի փետրվարի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԳԻՆԱՆՅԱՆ

4 մայիսի 2021 թվականի
ՍԴՈ-1591

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 2(102)2021



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
«ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ
ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
4-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1591 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2021 թվականի փետրվարի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-1591 որոշմամբ որոշել է, որ 2021 թվականի փետրվարի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 4-ի ՍԳՈ-1591 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1591 որոշմամբ 2021 թվականի փետրվարի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմա-

նադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված:** Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով:** Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ավստրիայի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանի դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում են, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար սպացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԿԻՐ ♦ 2(102)2021

վարման մարմինները, Ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Մահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Մահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագվեր դիմումի՝ «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021

24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անիտիկելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

4 մայիսի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ
ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1586-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ 9.1-ԻՆ ԵՎ 9.2-ՐԴ ԿԵՏԵՐԻ,
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 182.5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-7-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ԴՐԱՆՑ
ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՅՎԱԾ 13-ՐԴ ԵՎ 14-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 մայիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետ Գ. Աթանեսյանի, իրավական ապահովման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Մ. Մոսինյանի, Կառավարության,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7-րդ մասերի, դրանց հետ փոխկապակցված 13-րդ և 14-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարության՝ «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում) ընդունվել, ստորագրվել և ուժի մեջ է մտել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին:

Որոշման հավելվածը լրացվել է 9.1-ին և 9.2-րդ կետերով Կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հոկտեմբերի 8-ի N 1655-Ն որոշմամբ: Որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերով սահմանված էր.

«9.1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց՝ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը և պետական անվտանգության ապահովմանն առնչվող գործողությունները (այդ թվում՝ ելույթները, հրապարակումները) քննադատող, հերքող, դրանց արդյունավետությունը կասկածի տակ դնող կամ որևէ այլ կերպ արժեզրկող հաղորդումների հրապարակումն արգելվում է:

9.2. Արգելվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանունակության ու անվտանգության դեմ ուղղված քարոզչությունը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանունակությունը կասկածի տակ դնող հաղորդումների հրապարակումը»:

Սահմանադրական դատարանի 2020 թվականի նոյեմբերի 20-ի ՍԴԱՌ-209 աշխատակարգային որոշմամբ «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերի գործողությունը կասեցվել է մինչև գործի դատաքննության ավարտը:

Կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշման մեջ փոփոխություն-

ներ կատարելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 2-ի N 1917-Ն որոշմամբ Որոշման հավելվածի 4-րդ գլուխն ուժը կորցրած է ճանաչվել: Ըստ այդմ՝ ուժը կորցրած են ճանաչվել վերջինում արտացոլված Որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերը:

Ազգային ժողովի՝ «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրությունը վերացնելու մասին» 2021 թվականի մարտի 24-ի ԱԺՈ-001-Ն որոշմամբ Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրությունը վերացվել է:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՄՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

2020 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունվել է և հաջորդ օրն ուժի մեջ է մտել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-456-Ն օրենքը, որով Օրենսգիրքը լրացվել է 182.5-րդ հոդվածով: Օրենսգրքի՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող կանոնները խախտելը» վերտառությամբ 182.5-րդ հոդվածի 5-7, 13 և 14-րդ մասերով սահմանված է:

«5. Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը, լրագրողի կողմից հավատարմագրման հատուկ կարգը չպահպանելը, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնները խախտելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

6. Լրատվական գործունեություն չիրականացնող անձանց կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը կամ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

7. Մույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված տույժերին ենթարկվելուց հետո՝ անհապաղ, ռազմական դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ լրատվական գործունեություն չիրականացնող անձանց նկատմամբ՝ յոթհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

(...)

13. Սույն հոդվածով սահմանված արարքներից որևէ մեկը (բացառությամբ սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված արարքների) վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նախկինում նույն արարքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով:

14. Կազմակերպության կողմից սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ և 11-րդ մասերով նախատեսված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը՝

առաջացնում է տնտեսական գործունեության կասեցում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով, սակայն ոչ ավելի, քան մինչև ռազմական դրության իրավական ռեժիմի ավարտը»:

Գործի քննության առիթը՝ Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2020 թվականի նոյեմբերի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողների գրավոր բացատրությունները, վերլուծելով սույն գործին առնչվող իրավական ակտերը և այլ փաստաթղթեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը վիճարկում է «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7, 13 և 14-րդ մասերի համապատասխանությունը Սահմանադրության 42, 76, 78, 79 և 81-րդ հոդվածներին՝ այն առումով, որ առկա իրավակարգավորումների ընդհանրական և իրավական որոշակիությունից զուրկ ձևակերպումները հանգեցնում են կարծիքի արտահայտման ազատության անհամաչափ սահմանափակման:

Դիմողը փաստարկում է, որ իրավունքների կամ ազատությունների սահմանափակումներ նախատեսող օրենքը պետք է ունենա առավելագույն հստակություն՝ բացառելով դրա կիրառության ընթացքում կամայական մեկնաբանության կամ անորոշ ընկալման տեղիք տվող դրույթներ: Արտակարգ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021

կամ ռազմական դրությունը բնույթով այնպիսի իրավիճակներ են, որ հատկապես պահանջում են իրավական կանոնների հստակություն ու ճշգրիտ կարգավորումներ, ինչն առաջին հերթին անհրաժեշտ է հանրային իշխանության մարմինների համար՝ արտակարգ կամ ռազմական դրության լարված իրավիճակում ակտերի հստակությունը, անխափան պրակտիկա ապահովելու համար: Դա կարևոր է մարդու, քաղաքացու համար՝ հստակ պատկերացնելու համար իր իրավունքները և պետության արարքները, իր պատասխանատվության և պարտականությունների շրջանակը:

Դիմողը գտնում է, որ Կառավարության որոշման վիճարկվող դրույթների առանձին ձևակերպումներ՝ («քննադատող», «հերքող», «արդյունավետությունը կասկածի տակ դնող», «արժեզրկող», «պաշտպանունակությունը կասկածի տակ դնող») որպես հաղորդումների և հրապարակումների սահմանափակման հիմք, գնահատողական են և խնդրահարույց իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից: Առկա չեն չափանիշներ, որոնք հնարավորություն կտան իրավակիրառողին հաղորդումը «քննադատող», «հերքող» կամ այլ կերպ որակելու: Դա լայն հայեցողություն է տալիս իրավակիրառողներին անձանց ենթարկելու վարչական պատասխանատվության, ինչը կարող է հանգեցնել կարծիքի արտահայտման ազատության անհիմն սահմանափակման:

Ըստ դիմողի՝ Կառավարության վերոնշյալ որոշման դրույթների իրավական որոշակիության, համաչափության, միջազգային պրակտիկային և Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին խիստ համապատասխանության և կարծիքի արտահայտման ազատության նկատմամբ միջամտության սահմանադրական պահանջները չբավարարելը որպես անխուսափելի հետևանք առաջ է բերում նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի՝ նշված խնդրահարույց կարգավորումների գործադրման իրավական հետևանքները սահմանող դրույթների սահմանադրականության հարց: Դիմողը գտնում է, որ հիշյալ օրենսգրքի մակարդակում ամրագրված վարչաիրավական նորմերը, չամրագրելով արարքը որպես վարչական իրավախախտում դիտարկելու, զանցակազմի հատկանիշների առկայությունը հավաստելու ինքնուրույն պայմաններ, բովանդակային ամբողջ ծավալով կախվածության մեջ են դրված Կառավարության որոշման վիճարկվող դրույթներից:

Դիմողի համոզմամբ վիճարկվող դրույթների անհամապատասխանությունը սահմանադրական պահանջներին նաև դրանց մշակման և ընդունման ընթացակարգային կոպիտ խախտումների արդյունք է: Այդ կապակցությամբ դիմողն իր մտահոգությունն է հայտնում այն պրակտիկայի առնչությամբ, երբ, իր բնորոշմամբ, զգայուն կամ իրավունքների սահմանա-

փակումներ բովանդակող նախագծերը Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի չեն ներկայացվում կամ ներկայացնելը ձևական բնույթ է կրում՝ կոնկրետ դեպքում նկատի ունենալով համապատասխան ակտերի նախագծերը: Դիմողը նշում է նաև, որ վիճարկվող դրույթներն ամրագրող նախագծերը հանրային քննարկման առարկա չեն դարձել:

Դիմողը բարձրացնում է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված տուգանքների խստության չափի հարցը՝ կարծիքի արտահայտման ազատությանն անհամաչափ միջամտության առումով՝ նշելով, որ հիշյալ օրենսգրքի վիճարկվող դրույթների սանկցիաները (տուգանքների մեծ գումարները, խախտման շարունակականության կամ կրկին կատարման դեպքում այդ գումարների ընդհուպ կրկնապատկումը կամ տնտեսական գործունեության կասեցումը) արդեն իսկ վկայում են լրատվական գործունեության նկատմամբ դրանց ոչ իրավաչափ զսպող ազդեցության մասին:

Դիմողն իր փաստարկները ներկայացնելիս վկայակոչում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, ներպետական և միջազգային վերաբերելի ակտերի, փաստաթղթերի դրույթներ:

2. Պատասխանողների դիրքորոշումները

2.1. Ազգային ժողովի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի՝ որևէ իրավակարգավորման՝ որոշակիության չափանիշին համապատասխանության հարցը որոշելուց առաջ պետք է վեր հանվեն այն չափորոշիչները, որոնց միջոցով պետք է իրականացվի համապատասխան իրավակարգավորման գնահատումը: Այդ առնչությամբ վկայակոչելով մի շարք գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ պատասխանողը նշում է, որ ՄԻԵԴ-ն արձանագրել է.

- որոշ իրավակարգավորումների դեպքում գնահատողական և քիչ թե շատ անորոշ ձևակերպումների օգտագործումն այն դեպքերում, երբ կոնկրետ ցանկի (կոշտ և աներկբա ձևակերպումների) ամրագրումն անհնար է օրենսդրական կարգավորման ճկունության ապահովման հրամայականով պայմանավորված,

- իրավական որոշակիության առումով խնդրի բացակայություն, անգամ եթե իրավանորմը կարող է տարբեր ձևերով մեկնաբանվել,

- իրավական նորմի կանխատեսելիությունն անգամ այն դեպքերում, երբ հնարավոր հետևանքները հնարավոր է կանխատեսել ոչ միայն իրավաբա-

նական խորհրդատվություն ստանալու, այլև առողջ բանականության (common sense) միջոցով,

- իրավական նորմի կանխատեսելիության ապահովմանը նպաստում է այն անձի մասնագիտական կարգավիճակը, որին ուղղված է նորմը:

Վերոնշյալի վերաբերյալ պատասխանողն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ վերոնշյալ եզրահանգումները ՄԻԵԴ-ի կողմից արվել են քրեական օրենքների առնչությամբ այն պարագայում, երբ քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերի հանդեպ, ի համեմատ իրավունքի այլ ճյուղերի նորմերի, սահմանվում են որոշակիության ավելի բարձր պահանջներ:

Իրավական նորմերում գնահատողական և որոշակի չափով անորոշ հասկացությունների կիրառումը բխում է իրավական նորմերի՝ հասարակական հարաբերությունների «սպասարկող» բնույթից: Իրավանորմերը, լինելով հասարակական հարաբերությունները կարգավորող վարքագծի կանոններ, չեն կարող բացարձակապես որոշակի և պարզ ձևակերպված լինել, երբ այն հասարակական հարաբերությունները, որոնց կարգավորմանն են ուղղված այդ նորմերը, հաճախ շատ բարդ և բազմաշերտ են:

Պատասխանողը գտնում է, որ Որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերով ամրագրված կանոնակարգումները համապատասխանում են իրավական որոշակիության չափանիշին, քանի որ անհնար էր ի սկզբանե կանխորոշել և սպառնիչ սահմանել, թե պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց՝ ռազմական դրության իրավական ռեժիմի և պետական անվտանգության ապահովմանն առնչվող գործողությունները (այդ թվում՝ ելույթները, հրապարակումները) ինչպիսի եղանակներով կարող են քննադատվել, հերքվել, դրանց արդյունավետությունը կասկածի տակ դրվել կամ որևէ այլ կերպ արժեզրկվել: Անհնար էր նաև ի սկզբանե կանխատեսել և սահմանել բոլոր այն եղանակները, որոնցով կարող են արտահայտվել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանունակության ու անվտանգության դեմ ուղղված քարոզչությունը կամ երկու հանրապետությունների պաշտպանունակությունը կասկածի տակ դնելը:

Ժողովրդավարական հասարակությունում վիճարկվող դրույթների ընդունման անհրաժեշտության հարցի առնչությամբ պատասխանողը նշում է, որ դրանք ընդունվել են ռազմական դրության պայմաններում՝ բանակի մարտունակությունը և պետական անվտանգությունը վտանգող տեղեկատվության, ապատեղեկատվության, խուճապ առաջացնող տեղեկությունների տարածման կանխարգելման նպատակով: Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթների ընդունման և կարծիքի արտահայտման ազատության սահմանափակ-

ման նպատակը տվյալ դեպքում պետական անվտանգության պաշտպանությունն է:

Պատասխանողը գտնում է, որ ցանկացած արատավոր երևույթի դեմ պայքարը գրեթե միշտ միտված է ոչ թե այդ երևույթի իսպառ վերացմանը, այլ դրա ծավալների էական նվազեցմանը: Անգամ ամենախիստ սահմանափակումների դեպքում առկա տեղեկատվական հոսքերի պայմաններում հնարավոր չէ իսպառ բացառել այս կամ այն տեղեկատվության հրապարակայնացումը: Սակայն, միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ տեղեկատվության հոսքերը, որոնք ապահովվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող, մեծ լսարան ունեցող լրատվական գործունեություն իրականացնողների կողմից, մի ծավալ է և շատ դեպքերում անճանաչելի, իսկ Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող, մեծ լսարան չունեցող անձի հայտնած տեղեկատվությունը՝ մեկ այլ: Ըստ պատասխանողի՝ միանշանակ է, որ հայաստանյան լսարանի ներկայացուցչի կողմից երկրորդ տիպի տեղեկատվություն տարածողից ստացված տեղեկատվությանը չվստահելու հավանականությունը շատ ավելի մեծ է: Հետևաբար՝ այն սահմանափակող միջոցը, որը թեկուզ ոչ ամբողջությամբ, սակայն էականորեն կարող է կանխել անթույլատրելի տեղեկատվության տարածումն այն իսպառ բացառելու գործնական անհնարինության պայմաններում, պետք է դիտվի որպես պիտանի միջոց:

Պատասխանողը, չբացառելով, որ իրավակիրառ պրակտիկայում առկա են եղել խնդիրներ՝ կապված վիճարկվող նորմերի կիրառության հետ, միաժամանակ, համաձայն չէ, որ այդ խնդիրների պատճառ են հանդիսանում վիճարկվող դրույթները:

2.2. Կառավարության դիրքորոշումները

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող նորմերով նախատեսված կարգավորման որոշակիորեն արտահայտված իրավական կոնկրետ նպատակը ռազմական դրության պայմաններում պետական և տեղեկատվական անվտանգության ապահովումն է, որն ունի սահմանադրորեն կանխորոշված հանրային-իրավական նշանակություն, քանի որ կոչված է երաշխավորելու Սահմանադրությամբ նախանշված պատվիրանների կատարումը: Այդ նպատակի իրականացման՝ օրենքով թույլատրելի միջոցն ըստ վիճարկվող նորմերի իրավական բովանդակության՝ անձի կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումն է, որը դրսևորվում է Որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերում նախատեսված տեղեկությունների տարածման արգելքի ժամանակավոր սահմանմամբ և նշված տեղեկությունների տարածման դեպքում Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 13-րդ և 14-րդ մասերում նախատեսված և ռազմական դրությունից բխող խիստ սանկցիաների կի-

րառմամբ: Այս առումով դրանք առաջին հերթին կոչված են երաշխավորելու ռազմական դրության իրավական ռեժիմի արդյունավետ պահպանությունը: Որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերում (փոխկապակցված Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի հետ) օգտագործված հասկացությունները թեև գնահատողական են, սակայն հանրաձայնորեն են և չեն կարող տարատեսակ ընկալվել դատարանի (իրավակիրառող վարչական մարմնի) կողմից: Որոշման կարգավորման շրջանակներում դրանք հիմնականում արտացոլված են համակարգային օրգանական կապի մեջ և ռազմական դրության պայմաններում ապահովում են իրավաչափ հավասարակշռություն՝ արտահայտվելու իրավունքի ու գերակա հանրային շահի, այն է՝ պետական անվտանգության միջև:

Պատասխանողի գնահատմամբ Որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերում (փոխկապակցված Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի հետ) դրված չափորոշիչների նպատակը ռազմական դրության պայմաններում Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության դեմ ուղղված տեղեկատվության տարածման կանխումն է, իսկ դրանց համարժեք ընկալումը, իրավաչափ կիրառումը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ճշմարտության համակարգային բացահայտումն իրավակիրառ (դատական) պրակտիկայի խնդիրն է:

Այն հանգամանքի առնչությամբ, որ համապատասխան օրենսդրական փաթեթի վերաբերյալ ՄԻՊ գրասենյակի կարծիքն ստանալու համար տրվել է բավականին կարճ ժամանակահատված, ու այն չի անցել օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգերը, պատասխանողը նշում է, որ Որոշման հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը փոխադրվել է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի՝ սկսած 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ժամը 16.00-ից: Հետևաբար՝ յուրաքանչյուր պետական մարմին պարտավոր էր իր գործունեությունը կազմակերպել ու հարմարեցնել ռազմական դրության իրավական ռեժիմին, ապահովել նման պայմաններում իր արդյունավետ և արագ աշխատանքը: Ընդ որում՝ հրատապ անհրաժեշտ էր ապահովել ռազմական դրության իրավական ռեժիմով սահմանված սահմանափակումների իրացումը: Օրենսդրական փաթեթը սեղմ ժամկետներում շրջանառության մեջ դնելու և համապատասխան գործընթացն արագացված, ընթացակարգային նորմերի չպահպանմամբ իրականացնելու հարցի առնչությամբ պատասխանողը նշում է նաև, որ Եվրոպայի խորհրդի կողմից 2020 թվականի ապրիլի 7-ին հրապարակված զեկույցում արտակարգ դրության ժամանակ կիրառվող սահմանափակումների առնչությամբ շեշտվել է, որ նման իրավիճակներում առաջին հերթին պետության գործադիր մարմինները պետք է կարողանան արագ և արդ-

յունավետ գործել: Դա ենթադրում է որոշումների ընդունման ավելի պարզ ընթացակարգ, իսկ Սահմանադրությամբ թույլատրելի չափով՝ նաև պետական իրավասու մարմիններին վերապահված որոշ լիազորությունների շրջանցում:

Պատասխանողը նշում է, որ Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7, 13 և 14-րդ մասերով նախատեսված զանցանքների համար սանկցիայի չափ սահմանելիս օրենսդիրը նպատակ է ունեցել ընտրել սանկցիայի այնչափ խստություն, որը բավարար, անհրաժեշտ և պիտանի կլինի հետապնդվող իրավաչափ նպատակին, այն է՝ պետական անվտանգության պատշաճ ապահովմանը հասնելու համար, և հնարավորինս կրացառի տեղեկատվական դաշտից եկող վտանգներն ու սպառնալիքները ռազմական դրության պայմաններում: Նախատեսված արարքներն այնպիսին են, որ կարող են հանգեցնել պետության անվտանգության խաթարման, վտանգել հայրենիքը պաշտպանող զինվորի կյանքը և տեղեկատվություն հաղորդել թշնամուն: Հաշվի առնելով այդ վտանգավորությունը՝ սահմանվել են սանկցիաների չափերը, որոնք, ըստ պատասխանողի՝ համաչափության տեսանկյունից խնդրահարույց չեն:

Պատասխանողն արձանագրելով, որ դիմողի կողմից ներկայացված անբարենպաստ հետևանքները վարչական մարմնի կողմից կայացված համապատասխան վարչական ակտերի արդյունքն են, գտնում է, որ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով դա քողարկել խնդրո առարկա դրույթների սահմանադրականության վիճարկմամբ:

Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7, 13 և 14-րդ մասերը և Որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրությանը՝ միաժամանակ խնդրելով դիտարկել սույն գործի վարույթը կարճելու հարցը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

1) Որոշման հավելվածի վիճարկվող հաղորդումների, հրապարակումների տարածման սահմանափակումներ նախատեսող կարգավորումները համահունչ են արդյոք իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին՝ պայմանավորված դրանցում առկա գնահատողական բնույթի ձևակերպումներով.

2) Օրենսգրքի՝ վարչական պատասխանատվություն նախատեսող վիճարկվող դրույթները համապատասխանում են արդյոք կարծիքի արտա-

հայտման ազատության սահմանափակմանը ներկայացվող համաչափության, ինչպես նաև որոշակիության սահմանադրական սկզբունքներին:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատել Սահմանադրության 42, 76, 78 և 79-րդ հոդվածների հիման վրա:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «(...) լրագրողի կողմից հավատարմագրման հատուկ կարգը չպահպանելը, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնները խախտելը», 13-րդ մասի՝ «Սույն հոդվածով սահմանված արարքներից որևէ մեկը (...)» (այսինքն՝ Օրենսգրքի վերոնշյալ հոդվածով սահմանված յուրաքանչյուր արարք), 14-րդ մասի՝ « (...) սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, (...), 8-րդ և 11-րդ մասերով նախատեսված արարքներից որևէ մեկը (...)» դրույթների սահմանադրականության հարցի առնչությամբ դիմողը որևէ հիմնավորում չի ներկայացրել, քանի որ հարցը բարձրացրել է այլ համատեքստում:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ոչ միայն վերը թվարկված նորմատիվ իրավական ակտերի՝ վիճարկվող դրույթների, այլև այդ առնչությամբ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերաբերելի դրույթների համալիր վերլուծությունը, ինչից, մասնավորապես, հետևում է.

1) ռազմական դրությունը (...) թույլատրում է իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում («**Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին**» ՀՕ-258-Ն օրենքի (ընդունվել է 05.12.2006 թ., ուժի մեջ մտել՝ 27.01.2007 թ.) 1-ին հոդված),

2) ռազմական դրություն հայտարարելու մասին Կառավարության որոշմամբ պետք է սահմանվեն Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, կազմակերպությունների իրավունքների և ազատության ժամանակավոր սահմանափակումների, կիրառվող միջոցառումների, ինչպես նաև նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների ցանկը (Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետ),

3) ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ռազմական դրության ամբողջ ժամկետի ընթացքում կարող են իրականացվել օրենքով սահմանված կարգով կարծիքի արտահայտման ազատության սահմանափակում, ինչպես նաև տպագրող սարքերի, ռադիոհեռարձակող, ձայնաուժեղացնող տեխնիկական միջոցների, բազմացնող տեխնիկայի ժամանակավոր առգրավում կամ կալանք, լրագրողների հավատարմագրման հատուկ կարգի, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնների սահմանում (Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետ),

4) Կառավարությունը, Օրենքի համաձայն, սահմանում է ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները, ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմիններն ու ուժերը, ինչպես նաև վերահսկում է ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումների ու ժամանակավոր սահմանափակումների իրականացման գործընթացը (Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ),

5) ռազմական դրության պայմաններում (...) ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները (...) իրավաբանական անձանց առաջադրվող լրացուցիչ պարտավորությունները պետք է իրականացվեն այն սահմաններում, որոնք ապահովում են Մահմանադրության 76-րդ հոդվածի պահանջները և համարժեք են ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին, ինչպես նաև պետք է համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին և բխեն ռազմական դրության պայմաններում (արտակարգ իրավիճակներում) պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններից (Օրենքի 14-րդ հոդված),

6) Որոշման հավելվածի «**Հրապարակումների, հաղորդումների իրականացման սահմանափակումները**» վերտառությամբ 4-րդ գլխի ներքո արտացոլված 9-րդ կետով սահմանված էր. «Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում տեղի ունեցող մարտական գործողությունների, դրանց ուղղությունների, մարտական տեխնիկայի, զինված ուժերի և այլ զորքերի, մարտական գործողություններով պայմանավորված քաղաքացիական անձանց (խմբերի) շարժի, մարտական գործողությունների արդյունքում պատճառված կորուստների և վնասների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների և դրանց հետ անմիջականորեն առնչվող այլ տեղեկությունների (այսուհետ բոլորը միասին՝ հաղորդում) հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրա-

պարակումների ձևով (այսուհետ՝ հրապարակում) կատարվում է բացառապես պետական մարմինների կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության (այսուհետ՝ պաշտոնական տեղեկատվություն) հղումով ամբողջությամբ արտացոլելով պաշտոնական տեղեկատվությունը (առանց խմբագրման)»։ Մեջբերվածից հետևում է, որ «հաղորդում» և «հրապարակում» եզրույթների բովանդակությունը բացահայտված էր Որոշման հավելվածի 9-րդ կետում,

7) Որոշման հավելվածի 9.3-րդ կետով սահմանված էր. «Սույն հավելվածի 9-րդ, 9.1-ին և 9.2-րդ կետերով նախատեսված կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը: Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն իրավասու է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ապահովելու հրապարակված հաղորդումների և տեղեկությունների վերացումը, իրականացնելու տպագրող սարքերի, ռադիոհեռարձակող, ձայնաուժեղացնող տեխնիկական միջոցների, բազմացնող տեխնիկայի ժամանակավոր առգրավում կամ կալանք»,

8) Որոշման հավելվածի 10-րդ կետով սահմանված էր. «Սույն գլխով սահմանված սահմանափակումները չեն կիրառվում պետական պաշտոնատար անձանց կողմից կատարված հաղորդումների կամ նրանց հաղորդումներին կատարված հղումների նկատմամբ»:

4.2. Արտահայտվելու ազատությունը և այն իրացնելու հիմնական միջոցների երաշխավորումը՝ որպես ժողովրդավարական հասարակության գոյության և զարգացման կարևոր նախապայման, ունի ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային իրավական սկզբունքային նշանակություն:

Սահմանադրություն 42-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համ-

բավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Արտահայտվելու ազատությունը (ներառյալ՝ կարծիքի, առանց պետական մարմինների միջամտության տեղեկատվություն ու գաղափարներ փնտրելու, դրանք լրատվության ցանկացած միջոցով ստանալու և տարածելու ազատությունը) երաշխավորված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (19-րդ հոդված), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (10-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով՝ կից կամընտիր արձանագրությամբ (19-րդ հոդված):

Միջազգային պայմանագրային վերոհիշյալ պարտականություններից բացի՝ արտահայտվելու ազատության երաշխավորման միջազգային և տարածաշրջանային համապատասխան չափորոշիչներ են սահմանված ԵԱՀԿ շրջանակներում ստանձնված հանձնառություններում (օրինակ՝ ԵԱՀԿ Մարդկային չափանիշի խորհրդատվության Մոսկվայի և Կոպենհագենի խորհրդակցությունների համապատասխանաբար՝ 03.10.1991թ. և 29.06.1999թ. ընդունած փաստաթղթերը), Եվրոպայի խորհրդի քաղաքական մարմինների կողմից ընդունված հանձնարարականներում, խոսքի ազատության բնագավառում ընդունելի չափորոշիչների հեղինակային մեկնաբանություններ տրամադրող փորձագիտական մարմինների խորհրդատվություններում և մեկնաբանություններում:

Արտահայտվելու ազատության սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտված է Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում: Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 26-ի ՄԴՌ-1396 որոշման մեջ արձանագրված է. «(...) արտահայտվելու ազատությունը ոչ միայն մարդու իրավունքների ու ազատությունների, այլև հանրային շահերի համակարգում սկզբունքային կարևորության բաղադրիչ է, որի երաշխավորումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական պահանջ է»:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով կարևորել է այդ ազատության երաշխավորումը ոչ միայն անձի սուբյեկտիվ իրավունքների իրացման, այլև հանրային իրավական հարաբերությունների կարգավորման շրջանակներում: Մասնավորապես, Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի մարտի 6-ի ՄԴՌ-1010 որոշման մեջ արձանագրված է. «(...) Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների

թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը»:

Սահմանադրական դատարանի՝ 2001 թվականի հունվարի 11-ի ՄԳՈ-278 որոշման մեջ արձանագրված է. «(...) Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի դաշնագիրը և միջազգային մյուս համապատասխան փաստաթղթերը, յուրաքանչյուրի՝ ազատորեն արտահայտվելու, այդ թվում սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունն ամրագրելով, դրա իրականացման կարևոր երաշխիք են դիտում պետական մարմինների միջամտության բացառումը: Սակայն, դա չի խոչընդոտում այս ոլորտում (...) հասարակության և պետության օրինական շահերից ելնելով՝ օրենքով որոշ սահմանափակումներ նախատեսելը»:

Արտահայտվելու ազատությունը բացարձակ չէ և ինչպես միջազգային իրավական համապատասխան փաստաթղթերով, այնպես էլ Սահմանադրությանը նախատեսված հիմքերով և օրենքով սահմանված կարգով կարող է սահմանափակվել՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության (հանրային շահերի) կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՄԳՈ-997 որոշման մեջ արտահայտվել է իրավական դիրքորոշում, որի համաձայն՝ «(...) արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին և լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար»:

Արտահայտվելու ազատության բովանդակությանը և դրա սահմանափակումներին բազմիցս անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը, մասնավորապես՝ արձանագրելով. «Արտահայտվելու ազատությունն ընկած է ժողովրդավարական հասարակության հիմքում, հանդիսանում է ժողովրդավարական հասարակության և յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկը» (CASE OF HANDYSIDE V. THE UNITED KINGDOM, զանգատ թիվ 5493/72, 07.12.1976թ. վճիռ, կետ 49, CASE OF STOLL V. SWITZERLAND, զանգատ թիվ 69698/01, 10.12.2007թ. վճիռ, կետ 101, CASE OF MORICE V. FRANCE, զանգատ թիվ 29369/10, 23.04.2015թ. վճիռ, կետ 124):

Ըստ ՄԻԵԴ-ի՝ խոսքի ազատությունը, կազմելով ժողովրդավարական հասարակության էական հիմքերից մեկը, կարող է ենթարկվել սահմանափակումների, որոնք պետք է մեկնաբանվեն սահմանափակ, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտությունը պետք է հիմնավոր կերպով հաստատվի

(CASE OF OBSERVER AND GUARDIAN V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 13585/88, 26.11.1991թ. վճիռ, կետ 59, CASE OF HERTEL V. SWITZERLAND, 59/1997/843/1049, 25.08.1998թ. վճիռ, կետ 46):

4.3. Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջների բովանդակությանը՝ արձանագրելով, մասնավորապես, ներքոնշյալը.

ա) « (...) իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների**՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի» (ՄԴՈ-1270).

բ) « (...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՄԴՈ-630).

գ) «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (ՄԴՈ-753).

դ) « (...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՄԴՈ-1176).

ե) « (...) իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,

(...) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը» (ՄԴՈ-1488)։

զ) « (...) իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները։ Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՈ-1213)։

է) իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (ՄԴՈ-1357)։

ը) «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում։ Իրավադրությունների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է։ Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (ՄԴՈ-1270, ՄԴՈ-1488)։

ՄԻԵԴ-ն իր վճիռներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին։ Մասնավորապես, ՄԻԵԴ-ը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի։ Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն ընձեռի կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր համապատասխան գործողության հետևանքները։ Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ։ Թեև սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, այնուամենայնիվ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց, իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին։ Այդ իսկ պատճառով հաճախ

օրենքներում առկա են եզրույթներ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը պրակտիկայի խնդիրներ են (CASE OF THE SUNDAY TIMES V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 6538/74, 26.04.1979թ. վճիռ, կետ 49, CASE OF BUSUIOC V. MOLDOVA, գանգատ թիվ 61513/00, 21.03.2005թ. վճիռ, կետ 52):

Գործերից մեկով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ Քրեական օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «հասարակական կարգի խախտում» հասկացությունը ինչ-որ չափով անորոշ է: Սակայն հաշվի առնելով, որ բնականոն կյանքը կարող է խաթարվել անսահմանափակ ձևերով՝ անիրատեսական կյանք օրենսդրից ակնկալել, որ վերջինս կսահմանի գործողությունների սպառիչ ցանկ, որոնցով կարող է արտահայտվել քննարկվող հանցանքը: Այսպիսով, Դատարանը գտել է, որ նշված օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասն այն տեսքով, որով ձևակերպված է, բավարարում է Դատարանի նախադեպային պրակտիկայից բխող որակական պահանջները (CASE OF KUDREVIČIUS AND OTHERS V. LITHUANIA, գանգատ թիվ 37553/05, 15.10.2015թ. վճիռ, կետ 113):

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է արձանագրել, որ իրավական որոշակիության սկզբունքի ապահովման առումով ընդհանուր տրամաբանությունը, հանգում է այն գաղափարին, որ թեև իրավական որոշակիությունն անհրաժեշտ է, այնուամենայնիվ, այդ սկզբունքը չի բացառում իրավական ակտերում այնպիսի ձևակերպումների կամ եզրույթների առկայությունը, որոնք գնահատողական բնույթ ունեն և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առավել հստակեցվում են իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում:

Որոշման հավելվածով սահմանված վիճարկվող կարգավորումների ձևակերպումների («քննադատող», «հերքող», «արդյունավետությունը կասկածի տակ դնող», «պաշտպանունակությունը կասկածի տակ դնող», «որևէ այլ կերպ արժեզրկող»)՝ որոշակիության սահմանադրական սկզբունքին համահունչ լինելու հարցի առնչությամբ հարկ է նշել, որ իրավական ակտերում նման ձևակերպումների առկայությունն անխուսափելի է՝ պայմանավորված այն իրողությամբ, որ մի շարք դեպքերում հանգամանքների ամբողջական ներկայացման և արարքի համարժեք գնահատման համար հնարավոր չէ գերծմնալ այնպիսի ձևակերպումներ կիրառելուց, որոնց բովանդակությունը գլխավորապես պետք է բացահայտվի իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում: Այդ առումով, Որոշման հավելվածով սահմանված վիճարկվող կարգավորումների մի շարք ձևակերպումների սահմանումները սպառիչ և ամբողջական տեսքով ներկայացնելն օբյեկտիվորեն հնարավոր չէ, քանի որ դրանք գնահատողական բնույթ ունեն, և դրանց բովանդակությունը պետք է բացահայտվի նաև իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում: Այդ նորմերի առա-

վելագույն հստակությունը պետք է երաշխավորվի նաև դրանց կիրառման արդյունքում կայացվող ակտերի շրջանակներում, որպեսզի հասցեատիրոջ համար պարզ և հստակ լինի, թե, օրինակ, իր կատարած ո՞ր արարքն է քննադատող, հերքող, արդյունավետությունը/պաշտպանունակությունը կասկածի տակ դնող կամ այլ կերպ արժեզրկող:

Վերոնշյալը վերաբերում է նաև Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7-րդ մասերով սահմանված իրավակարգավորումներին՝ վերջիններին՝ որոշակիության սահմանադրական պահանջներին համապատասխանության հարցի համատեքստում:

Միաժամանակ Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթների մի շարք ձևակերպումների բովանդակությունն իրավակիրառ պրակտիկայում բացահայտելու հանգամանքի հետ մեկտեղ կարևորում է, տվյալ դեպքում՝ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումներ նախատեսող իրավական ակտերի դրույթների/ձևակերպումների առավելագույնս որոշակի, հստակ, կանխատեսելի և մատչելի լինելու հրամայականը՝ դրանց տարրնկալումները/կամայական մեկնաբանությունները բացառելու նպատակով: Հիշյալ հանգամանքը կարևորվում է, առաջին հերթին, այն սուբյեկտների համար, որոնց նկատմամբ համապատասխան կարգավորումները (դրույթները/ձևակերպումները) կիրառվում են, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան հնարավորինս հստակ ընկալելու դրանց էությունը/պահանջները, իրենց վարքագիծը համապատասխանեցնելու այդ պահանջներին և կանխատեսելու այդ առնչությամբ իրենց վարքագծի հնարավոր հետևանքները, ինչպես նաև դրանք կիրառող/մեկնաբանող սուբյեկտների համար:

Վերոնշյալի առնչությամբ Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշման մեջ արձանագրված է. «(...) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. **որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները**, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,

(...) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմատետժ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակ-

տերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՄԴՈ-1488 որոշման մեջ արտահայտված վերոնշյալ իրավական դիրքորոշումները կիրառելի է համարում նաև սույն գործով:

2021 թվականի մարտի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված Ոստիկանության պատասխան գրությանը կից նյութերի՝ Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-7-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունների և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների ուսումնասիրության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված արձանագրություններում և որոշումներում առավելապես հղում է կատարված Որոշման հավելվածի 9.1-ին կետին, որի սահմանադրականությունը ևս վիճարկվում է սույն գործով: Ընդ որում, հիմնականում կիրառվել են Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի կարգավորումները:

Այդ առնչությամբ, համապատասխան զանցանքները (վարչական իրավախախտումները) արձանագրելիս և գնահատելիս, թեև հղում է կատարված Որոշման հավելվածի 9.1-ին կետին, դրանում արտացոլված «քննադատող», «արդյունավետությունը կասկածի տակ դնող», «որևէ այլ կերպ արժեզրկող» ձևակերպումներին, այդուհանդերձ, դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը՝ համապատասխան արարքը որպես վարչական իրավախախտում որակելու համատեքստում, պատշաճ խորությամբ բացահայտված չէ: Այլ խոսքով՝ դրսևորվել է, ըստ էության, մեխանիկական մոտեցում՝ հղում կատարելով համապատասխան նորմին (նորմերին), ձևակերպմանը (ձևակերպումներին): Ընդ որում՝ եթե «քննադատող» ձևակերպումը բավականաչափ հստակ է, ապա նույնը չի կարելի ասել «արդյունավետությունը կասկածի տակ դնող», «որևէ այլ կերպ արժեզրկող» ձևակերպումների մասին, որոնք ունեն վերացականության բարձր աստիճան: Հետևաբար՝ դրանց հղումներ կատարող/դրանք կիրառող մարմնի հայեցողության սահմանները, ըստ էության, անսահմանափակ են: Բացի դրանից, «արդյունավետությունը կասկածի տակ դնելը», «որևէ այլ կերպ արժեզրկելը»՝ միասին կամ առանձին վերցված, կարող են դրսևորվել ինչպես քննադատության լույսի ներքո (այդ համատեքստում), այնպես էլ ունենալ ինքնավար բովանդակություն:

Հաշվի առնելով վերոնշյալը և արձանագրելով, որ Որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ «արդյունավետությունը կասկածի տակ դնող», «որևէ այլ կերպ արժեզրկող» բառակապակցությունները կարող են առաջ բերել երկիմաստություն մասնավոր անձանց համար արգելքների/սահմանափակումների

կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ «դրանց արդյունավետությունը կասկածի տակ դնող կամ որևէ այլ կերպ արժեզրկող» բառակապակցությունը համահունչ չէ որոշակիության սահմանադրական սկզբունքին:

Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7-րդ մասերի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք բովանդակային առումով կապի մեջ են Որոշման հավելվածի 9-9.2-րդ կետերում արտացոլված դրույթների հետ: Մասնավորապես, «հաղորդում» և «հրապարակում» եզրույթների բովանդակությունները բացահայտված էին Որոշման հավելվածի 9-րդ կետում («(...) վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների և դրանց հետ անմիջականորեն առնչվող այլ տեղեկությունների (այսուհետ բոլորը միասին՝ հաղորդում) հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով (այսուհետ՝ հրապարակում) (...))», իսկ Որոշման հավելվածի 9.1-ին և 9.2-րդ կետերում գործածված էր «հաղորդումների հրապարակում» բառակապակցությունը:

Որոշման հավելվածի 9.1-ին կետում գործածված էր «ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը» բառակապակցությունը, իսկ Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի վերտառությունն է «Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող կանոնները խախտելը»: Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում գործածված է «տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը», իսկ 6-րդ մասում նաև՝ «կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման կանոնները խախտելը» բառակապակցությունը: Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 7-րդ մասում գործածված է «տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը» բառակապակցությունը: Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ մասերում շեշտադրումը կատարված է նշված հոդվածով/վերջինիս համապատասխան մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելու վրա:

Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի վիճարկվող 5-7-րդ մասերի նորմերի դիսպոզիցիաները (ձևակերպումների մասով), ըստ էության, հենվող են (բլանկետային), ինչը տեղավորվում է օրենսդրական տեխնիկայի կանոնների տրամաբանության շրջանակներում:

4.4. Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ «Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունք-

ները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում»:

Սահմանադրություն 81-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

Այսպիսով՝ Սահմանադրության 76-րդ հոդվածին համապատասխան՝ արտահայտվելու ազատությունը կարող է օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ, սակայն միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա)՝ «Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում» վերտառությամբ 15-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ, որը սպառնում է ազգի կյանքին, յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ կարող է միջոցառումներ ձեռնարկել՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորություններից շեղվելով միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը, պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ: Այսինքն՝ Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետություն կարող է շեղվել Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից, բայց միայն այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը:

ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ պետություններն այդ ոլորտում չունեն անսահմանափակ հայեցողություն. դատարանն իրավասու է որոշել՝ արդյոք պետությունները գերազանցել են ճգնաժամի «պահանջների հստակ չափը, թե ոչ» (CASE OF IRELAND V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 5310/71, 18.01.1978թ. վճիռ, կետ 207): Դատարանն ուսումնասիրում է, inter alia, թե արդյոք սովորական օրենքները բավարա՞ր են եղել արտակարգ իրադրությունը հաղթահարելու համար (CASE OF IRELAND V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 5310/71, 18.01.1978թ. վճիռ, կետ 212), պարտավորություններից շեղումն ունի՞ սահմանափակ շրջանակներ, և որո՞նք են դրա հիմքերը, պարտադրված միջոցառումներին զուգահեռ ապահովվե՞լ են երաշխիքները, գործնականում հնարավո՞ր է եղել իրականացնել դատական վերահսկողություն այս գործողությունների նկատմամբ (CASE OF BRANNIGAN AND MCBRIDE V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 14553/89; 14554/89, 26.05.1993թ. վճիռ, կետեր 59, 61-66), ձեռնարկված միջոցառումները համաչափ են եղել հետապնդվող նպատակին, և արդյոք առկա՞ է եղել անհիմն խտրականություն (CASE OF A. AND OTHERS V. THE UNITED KINGDOM, գանգատ թիվ 3455/05, 19.02.2009թ. վճիռ, կետ 190):

Ստանձնած պարտավորություններից շեղումը ներպետական մարմիններից պահանջում է պահպանել խիստ անհրաժեշտության սկզբունքը, որի համաձայն՝ ցանկացած շեղման միջոցառման խստությունը, տևողությունը և աշխարհագրությունը որոշվում են ժողովրդի կյանքին սպառնացող վտանգը հաղթահարելու համար խիստ անհրաժեշտ շրջանակով և համաչափ այդ վտանգի բնույթին ու ծավալին: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի դրույթներից շեղվելու միջոցի կիրառումից պետք է խուսափել բոլոր այն իրավիճակներում, երբ Դաշնագրի համապատասխան սահմանափակող դրույթներով թույլատրելի սովորական միջոցները բավարար են ժողովրդի կյանքին սպառնացող վտանգը հաղթահարելու համար: Յուրաքանչյուր միջոց ուղղված է «իրական, հստակ, առկա կամ անխուսափելի վտանգի» հաղթահարմանը և չի կարող կիրառվել միայն հնարավոր վտանգ կանխագգալու պատճառով («Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝ սահմանափակումների և շեղումների դրույթների մասին» Սիրակուզայի սկզբունքներ, 28.09.1984թ., E/CN.4/1985/4, կետեր 51, 53, 54):

«Խոսքի կամ տեղեկատվության ազատության սահմանափակումներ չեն կարող դրվել ազգային անվտանգության նկատառումներից ելնելով, քանի դեռ Կառավարությունը չի ապացուցել, որ սահմանափակումները սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում

ազգային անվտանգության օրինական շահերը պաշտպանելու համար: Սահմանափակման վավերությունը ցույց տալու բեռը կրում է Կառավարությունը:

(...) Մասնավորապես, ազգային անվտանգության նկատառումներով արդարացված սահմանափակումն օրինական չէ, եթե դրա իրական նպատակը կամ շոշափելի ազդեցությունն ազգային անվտանգության հետ կապ չունեցող շահերը պաշտպանելն է, ներառյալ, օրինակ, կառավարությունը անհարմար վիճակից կամ օրինախախտման բացահայտումից պաշտպանելը, կամ հանրային հաստատությունների գործունեության մասին տեղեկատվությունը թաքցնելը կամ որոշակի գաղափարախոսություն արմատավորելը (...)» («Ազգային անվտանգության, արտահայտվելու ազատության և տեղեկատվության մատչելիության մասին» Յոհաննեսբուրգի սկզբունքներ, Արթիքը 19, Լոնդոն ISBN 1 870798 89 9.11.1996թ., սկզբունքներ 1 (d), 2 (b)):

4.5. Թեև իրավունքների սահմանափակումը և կոնվենցիոն դրույթներից շեղումը ենթադրում են իրավական ինքնավար ընթացակարգեր, անհրաժեշտ է, որ դրանք հիմնված լինեն նաև համաչափության սկզբունքի վրա:

Սահմանադրության 78-րդ հոդվածին համապատասխան՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, և տվյալ դեպքում օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջներն են.

1) սահմանափակման նպատակի իրավաչափությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) համարժեքությունը սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է համաչափության սկզբունքին: Մասնավորապես,

ա) « (...) Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների **սահմանափակումների սահմանափակումն է** մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի *առանձնահատուկ կարևորություն*» (ՄԴՈ 1546)։

բ) « (...) Ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանման (...) իր լիազորությունն իրականացնելիս օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է վարչական պատասխանատվության միջոցներն ու չափերը։ Նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները, և օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով։ (...) հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով։ Այս սկզբունքը հանդիսանում է ընդհանրապես իրավաբանական պատասխանատվության և, մասնավորապես՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը (...)» (ՄԴՈ-920)։

գ) « (...) համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև։

(...) Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից։ Ըստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորում, որը պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն ընձեռի

որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից և լրջությունից (...)» (ՄԴՈ-924).

դ) « (...) օրենսդիրը, իրացնելով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու իր իրավասությունը, պետք է այնպիսի համամասնությամբ դա կատարի, որ ընտրված սահմանափակումը համահունչ լինի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար (...)» (ՄԴՈ-1293).

ե) « (...) Անձի սեփականության իրավունքին միջամտությունը պետք է բխի տվյալ անձի կողմից տուգանքի և (...) վճարի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից, պետք է լինի բավարար և անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար, իրավասու մարմնի լիազորությունը և այդ լիազորության ընթացակարգը պետք է որոշակիորեն ամրագրված լինեն օրենսդրական մակարդակում՝ հաշվի առնելով (...) սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ ամրագրելու անհրաժեշտությունը (...)» (ՄԴՈ-1153).

զ) « (...) օրենսդրի կողմից ընտրված միջոցը պետք է նաև անհրաժեշտ լինի: Միջոցն անհրաժեշտ է, եթե չկա մեկ այլ՝ ավելի մեղմ միջամտող միջոց, որով նույն արդյունավետությամբ կարելի է հասնել նպատակին» (ՄԴՈ-1448):

Համաչափության սկզբունքին անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը՝ այն մեկնաբանելով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման թույլատրելիության սահմանների որոշման նպատակով: «Համաչափության սկզբունքն իրենից ներկայացնում է «արդարացի հավասարակշռության որոնում հասարակության շահերով թելադրված պահանջների և անձի հիմնական իրավունքների պաշտպանության պահանջների միջև» (CASE OF SOERING V. THE UNITED KINGDOM, զանգատ թիվ 14038/88, 07.07.1989թ. վճիռ, կետ 89): « (...) դատարանը պետք է որոշի, թե արդյո՞ք պահպանված է հասարակության շահերի և անհատի հիմնական իրավունքների պաշտպանության միջև համաչափությունը» (CASE OF THE FORMER KING OF GREECE & OTHERS V. GREECE, զանգատ թիվ 25701/94, 23.11.2000թ. վճիռ, կետ 89):

ՄԻԵԴ-ը կարևորել է նաև հետապնդվող նպատակի և կիրառվող միջոցի միջև համաչափության պահպանման հարցը (CASE OF PRESSOS COMPANIA NAVIERA S.A. AND OTHERS V. BELGIUM, զանգատ թիվ

17849/91, 20.11.1995թ. վճիռ, կետ 38): Միաժամանակ, ՄԻԵԳ-ը արտահայտել է դիրքորոշում առ այն, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հանգամանքներին, որպեսզի չտոնահարվեն սահմանադրական արժեքները (CASE OF GRIGORIADES V. GREECE, գանգատ թիվ 121/1996/740/939, 25.11.1997թ. վճիռ):

Դատարանը միջամտությունը պետք է դիտարկի գործի ողջ հանգամանքների լույսի ներքո: Մասնավորապես, պետք է որոշվի արդյոք կատարված միջամտությունը համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին (CASE BARFOD V. DENMARK, գանգատ թիվ 11508/85, 22.02.1989թ. վճիռ, § 28): Դատարանը պետք է համոզվի, որ ազգային իշխանությունները կիրառել են Կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին համապատասխան ստանդարտներ, ավելին, որ դրանք ընդունվել են համապատասխան փաստերի գնահատման հիմա վրա (CASE OF JERSILD V. DENMARK, գանգատ թիվ 15890/89, 23.09.1994թ. վճիռ, SERIES A no. 298, p. 24, § 31):

Համաչափության սկզբունքի տարրերից յուրաքանչյուրին՝ բովանդակային առումով, Սահմանադրական դատարանը մանրամասն անդրադարձել է իր՝ 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ: Ըստ այդմ՝ «Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի *սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է*, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում (...), օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա:

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու միջոցները: Հետևապես, *ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:*

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից միջոցների ընտրությանը՝ սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար, ապա, նախ՝

դրանք պետք է պիտանի լինեն հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով *օրենսդիրն ի գորու է հասնել հետապնդվող նպատակին*, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի *անհրաժեշտությունն է*, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված *պիտանի և անհրաժեշտ միջոցը* համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության *սահմանադրական նշանակության* հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնական իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ *չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի* նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ **որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն**, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդամին, **որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը**»:

Օրենսգրքի վիճարկվող կարգավորումները դիտարկելով վերոնշյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք տեղավորվում են Սահմանադրության 76-րդ հոդվածի տրամաբանության շրջանակներում և համահունչ են կարծիքի արտահայտման ազատության սահմանափակմանը ներկայացվող համաչափության սահմանադրական սկզբունքին: Միաժամանակ, 2021 թվականի մարտի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված Ոստիկանության պատասխան գրությանը կից նյութերի՝ Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկ-

վող 5-7-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունների և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների ուսումնասիրության արդյունքներով հարկ է նշել, որ Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի նշված մասերով նախատեսված իրավախախտումների համար վարչական մարմնի կողմից տուգանքը հիմնականում նշանակվել է սահմանված նվազագույն չափով:

Օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7-րդ մասերի հետ փոխկապակցված 13-րդ և 14-րդ մասերի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պատասխանատվության ենթարկվելուց հետո նույն արարքի կատարման համար առավել խիստ պատասխանատվություն նախատեսելը բավական լայն տարածում ունի վարչական պատասխանատվությանը վերաբերող օրենսդրական կարգավորումների պայմաններում: Այդ առնչությամբ առավել խիստ վարչական տույժերի տեսակների, տուգանքի դեպքում՝ վերջինիս ավելի մեծ չափերի սահմանումը (մինչև նույն իրավախախտումը կրկին կատարելու պայմաններում) օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում է: Ուստի՝ նշված դրույթները համաչափության սահմանադրական սկզբունքի պահպանման առումով խնդրահարույց չեն:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ **իրավակիրառ պրակտիկայում անձի/լրատվամիջոցի նկատմամբ վերը հիշատակված պատասխանատվությունը կիրառելիս իրավակիրառողը պետք է հաշվի առնի անձի/լրատվամիջոցի գույքային դրությունը և օրենքով թույլատրելի շրջանակներում կիրառի հնարավորինս մեղմ տուգանքի չափ բոլոր այն դեպքերում, երբ առկա է իրական վտանգ, որ առավել խիստ տուգանքի չափի կիրառմամբ անձի/լրատվամիջոցի վրա կդրվի անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության վրա, լրատվամիջոցի դեպքում՝ անխուսափելիորեն կհանգեցնի վերջինիս գործունեության դադարման (այդ թվում՝ փաստացի), ինչն անընդունելի է՝ պայմանավորված ժողովրդավարական հասարակությունում լրատվամիջոցների ունեցած կարևոր դերակատարությամբ:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 2(102)2021

1. Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ «դրանց արդյունավետությունը կասկածի տակ դնող կամ որևէ այլ կերպ արժեզրկող» բառակապակցությունը ճանաչել Սահմանադրության 42-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշման հավելվածի 9.2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7-րդ մասերը, դրանց հետ փոխկապակցված 13-րդ և 14-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԳԻՒՆՅԱՆ

4 մայիսի 2021 թվականի
ՍԴՈ-1592



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱԲՈՎՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԾԱՂԿԱԶՈՐ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ՀԱԾՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1.1-ԻՆ ՄԱՍԻ, 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

14 մայիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողներ Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի և Կոտայքի մարզի «Նոր Հանն» համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի ներկայացուցիչ Ա. Հովհաննիսյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի, Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետ Գ. Աթանեսյանի և

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 70-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի և Կոտայքի մարզի «Նոր Հանն» համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի հունիսի 13-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի հունիսի 28-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 14-ին:

Օրենքի՝ «Տեղական հանրաքվեի դրվող հարցերը» վերտառությամբ 4-րդ հոդվածի 1.1-ին մասը սահմանում է.

«1.1. Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համապատասխան համայնքների բնակիչները համայնքների միավորման կամ բաժանման հարցով կարող են նախաձեռնել տեղական հանրաքվե: Համայնքի միավորման կամ բաժանման հարցով անցկացված տեղական հանրաքվեի արդյունքները կրում են խորհրդատվական բնույթ»:

Օրենքի՝ «Տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության սուբյեկտները» վերտառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված դեպքում տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող մինչև նախաձեռնության գրանցման օրը տասնութ տարին լրացած անձինք»:

Օրենքի՝ «Տեղական հանրաքվեի նշանակումը և անցկացումը, տեղական հանրաքվեի դրվող հարցի հրապարակումը» վերտառությամբ 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Սույն օրենքի 7-րդ, 7.1-ին հոդվածով սահմանված կարգով նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, համայնքի ղեկավարը նշանակում է տեղական հանրաքվե կամ մերժում է տեղական հանրաքվեի նշանա-

կումը, եթե տեղական հանրաքվեի դրվող հարցը հակասում է օրենքին, կամ չեն տրամադրվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Համայնքի ղեկավարի՝ հանրաքվեի նշանակումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով»:

Օրենքի վիճարկվող դրույթները լրացվել են 2019 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-307-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 5-ին), որի համաձայն՝ Օրենքի 4-րդ հոդվածը լրացվել է 1.1-ին մասով, 6-րդ հոդվածը լրացվել է 2-րդ մասով, իսկ 8-րդ հոդվածի 1-ին մասը «7-րդ» բառից հետո լրացվել է «7.1-ին» բառով:

Գործի քննության առիթը Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի և Կոտայքի մարզի «Նոր Հաճն» համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի (ներկայացուցիչ Ա. Հովհաննիսյան)՝ 2021 թվականի հունվարի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. Դիմողների դիրքորոշումները

Դիմողները նշել են, որ համայնքի ղեկավարը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին և համայնքի բնակիչների շահերից ելնելով համայնքային նշանակության հանրային հարցերի լուծման շրջանակներում առանցքային դերակատարում ունեցող անձ, ունի նաև պետական մարմինների կողմից համայնքին վերաբերող հարցերի լուծմանն օրենսդրությամբ նախատեսված լծակների օգտագործմամբ մասնակցելու և համայնքի շահերը պաշտպանելու պարտականություն: Մինչդեռ Օրենքում Ազգային ժողովի կողմից կատարված փոփոխությունների արդյունքում համայնքի ղեկավարը գրկվել է այնպիսի կարևոր համայնքային նշանակություն ունեցող հարցի վերաբերյալ տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքից, ինչպիսին է համայնքների միավորումը կամ բաժանումը:

Նման պայմաններում Սահմանադրությամբ համայնքի կարծիքը լսելու սահմանադրական պարտականությունը և համայնքների միավորման և բաժանման շրջանակներում տեղական հանրաքվեի անցկացման վերաբերյալ օրենսդրական պարտադիր դրույթն առանց տեղական հանրաքվեի արդյունքների ստացման իրական հնարավորությունն ապահովող օրենսդրական երաշխիքների, վերաժվում է զուտ ձևական պահանջի: Այդպիսի պայմաններում

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021

առաջանում է պետական մարմինների առջև համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերից բխող հանրային հարցերի լուծման անկարողություն՝ առանց տեղի քաղաքացիական հասարակության կողմից խնդրո առարկայի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնելու իրական հնարավորության ապահովման:

Համայնքի ղեկավարն առանց տեղական հանրաքվեի նախաձեռնությամբ հանդես գալու լիազորության գրկված է համայնքի, այլ կերպ՝ տեղի քաղաքացիական հասարակության կարծիքի վերհանման իրական հնարավորությունից, հետևաբար՝ նա իր գրավոր կարծիքն Ազգային ժողովին ներկայացնելու իրավունքի շրջանակներում չի կարող արդյունավետ կերպով ներկայացնել համայնքի կարծիքն այն դեպքում, երբ համայնքների միավորման և բաժանման հարցի կապակցությամբ իմպերատիվ կերպով ամրագրված է համայնքի և ոչ համայնքի ղեկավարի կարծիքը լսելու պարտականությունը:

Բացի այդ, համայնքների միավորման և բաժանման հարցով պարտադիր անցկացման ենթակա տեղական հանրաքվեի՝ որպես պետության կողմից չպատվիրակված լիազորության իրականացման ֆինանսավորումը պետք է կատարվի համայնքային բյուջեից, իսկ համայնքի բյուջեում անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը հավաստող փաստաթղթերի բացակայությունը հիմք է համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե անցկացնելը մերժելու վերաբերյալ որոշման կայացման համար:

Փաստորեն, անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության հետևանքով Սահմանադրության 190-րդ հոդվածով նախատեսված՝ համայնքի կարծիքը լսելու պարտականության կատարումը երաշխավորված չէ:

Ավելին, Օրենքի փոփոխությամբ թեպետ նախատեսվեցին առանձնահատուկ կարգավորումներ համայնքի միավորման կամ բաժանման՝ Կառավարության օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական հանրաքվեի իրականացման ընթացակարգեր, սակայն չի նախատեսվել օրենսդրական կարգավորում առ այն, որ տեղական հանրաքվեի նախաձեռնման դեպքում Կառավարությունն առնվազն պետք է կասեցնի համայնքների միավորման կամ բաժանման օրենսդրական նախաձեռնության հետագա ընթացքը մինչև տեղական հանրաքվեի արդյունքները ստանալը: Արդյունքում Կառավարությունը, ծանուցելով համայնքին, որ նախաձեռնել է համայնքների միավորման կամ բաժանման օրենսդրական նախաձեռնություն, կարող է այդ իրավական ակտի նախագիծը սահմանված կարգով ներկայացնել Ազգային ժողով, նույնիսկ այն ճանաչել անհետաձգելի, Ազգային ժողովն էլ իր հերթին սահմանված կարգով այն քննարկել և ընդունել՝ առանց սպասելու տեղական հանրաքվեի արդյունքներին՝ փաստորեն, խախտելով համայնքներին լսելու պահանջը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը նշել է, որ գոյություն ունի համայնքների կարծիքը լսելու երկու եղանակ՝ ուղղակի, այսինքն՝ համայնքի բնակչության կարծիքի վերհանում տեղական հանրաքվեների, հանդիպումների, հանրային լսումների և այլ միջոցներով, և անուղղակի, այսինքն՝ մուլտիցիպալ մարմինների կողմից կարծիք ներկայացնելու միջոցով:

Անդրադառնալով համայնքների միավորման կամ բաժանման նախաձեռնության դեպքում համայնքի ղեկավարի՝ տեղական հանրաքվե նախաձեռնելու լիազորություն չունենալու վերաբերյալ դիմողների փաստարկներին՝ պատասխանողը նշել է, որ այդ իրավունքով միայն համայնքի բնակչությանն օժտելը չի հակասում Սահմանադրությանը, քանի որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա համայնքի ղեկավարն իրավունք ունի իր գրավոր կարծիքը ներկայացնելու Ազգային ժողով:

Ըստ պատասխանողի՝ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի այն կարգավորումը, ըստ որի՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվեի նշանակումը մերժվում է, չի հակասում Սահմանադրությանը, քանի որ տեղական հանրաքվեի անցկացումը համայնքի բնակիչների կարծիքի վերհանման օրենսդրորեն ամրագրված մեխանիզմներից միայն մեկն է, որի իրականացման անհնարինության դեպքում համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ համայնքի բնակիչների համաձայնությունը կամ անհամաձայնությունը կարող է արտահայտվել նաև հանրային լսումների ընթացքում առաջարկություններով և նախաձեռնություններով հանդես գալու միջոցով:

Պատասխանողը նշել է նաև, որ Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության մասին համայնքների ղեկավարներին պաշտոնապես ծանուցելու, իսկ վերջիններիս կողմից էլ համայնքի բնակիչներին իրազեկելու դեպքում նախաձեռնող խմբի ձևավորումը ենթադրում է համայնքի բնակիչների կողմից տվյալ հարցի կապակցությամբ տեղական հանրաքվե նախաձեռնելու մասին, և այդպիսի գործընթացի առկայությունն արդեն իսկ հիմք է տալիս Կառավարությանը նախագիծն Ազգային ժողովում շրջանառության մտցնելը կազմակերպել այնպես, որ հնարավոր լինի դրա քննարկման ժամանակ նախագծին կից ունենալ նաև հանրաքվեի արդյունքները:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը պարզելու համար Սահմանա-

դրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) արդյոք Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համապատասխան համայնքի տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կողմից տեղական հանրաքվե նախաձեռնելու հնարավորություն չնախատեսելը չի հանգեցնում Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու պահանջի խախտման.

2) արդյոք Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումը ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից մերժման ենթակա լինելու վերաբերյալ կարգավորումը չի հանգեցնում Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու պահանջի խախտման.

3) արդյոք համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսերի՝ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարում չնախատեսելը չի հանգեցնում Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու պահանջի խախտման:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Հայաստանի Հանրապետությունում հանրային իշխանությունն իրականացվում է նաև տեղական մակարդակում:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը: Նշված դրույթն առաջին անգամ Սահմանադրության մեջ ամրագրում է ստացել 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով (11.2-րդ հոդված)¹, իսկ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները ոչ միայն երաշխավորեցին տեղական ինքնակառավարումը, այլև

¹Սահմանադրական մակարդակում այս սկզբունքի ամրագրումը ողջունել էր նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը («Լենետիկի հանձնաժողով») (տե՛ս CDL-INF(2001)017, Report of the Venice Commission on the Revised Constitution of the Republic of Armenia, § 18):

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021

սահմանեցին, որ այն ժողովրդավարության էական հիմքերից մեկն է (9-րդ հոդված):

Տեղական ինքնակառավարմանն է նվիրված Սահմանադրության 9-րդ գլուխը, որը ոչ միայն սահմանում է տեղական ինքնակառավարման հասկացությունը, այլև ամրագրում է դրա իրականացման համար անհրաժեշտ մի շարք երաշխիքներ:

Այսպես՝ Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Վերոգրյալը հնարավորություն է տալիս վեր հանել տեղական ինքնակառավարմանն էությունը: Այսպես՝ տեղական ինքնակառավարումն իրավունք է, որի կրողները տեղական ինքնակառավարման մարմիններն են, այն է՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը (181-րդ հոդվածի 1-ին մաս): Որպես տեղական ինքնակառավարման **օբյեկտիվ-իրավական երաշխիք՝** պետությունն առաջին հերթին պարտավոր է որպես վարչատարածքային միավոր ստեղծել համայնքներ, որոնցում պետք է իրականացվի տեղական ինքնակառավարում: Նշված պահանջը բխում է Սահմանադրության 121-րդ հոդվածից, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները:

Սահմանադիրը, կարևորելով վարչատարածքային բաժանման խնդիրը, սահմանում է, որ վարչատարածքային բաժանումը, Կառավարության ներկայացմամբ, սահմանվում է օրենքով: Սա նշանակում է, որ բացառապես օրենքով կարող են վարչատարածքային միավորները, այդ թվում՝ համայնքները, միավորվել և բաժանվել, և որ նման օրենսդրական նախաձեռնության իրավունքը Կառավարության բացառիկ իրավունքն է:

Միաժամանակ, յուրաքանչյուր համայնքի գոյության ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն օժտված են **տեղական ինքնակառավարման իրավունքով**, որը վերաբերում է համայնքի բնակիչների շահերից ելնելով, համայնքային նշանակության հանրային հարցերը սեփական պատասխանատվությամբ լուծելուն: Ընդ որում, տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների ոչ միայն իրավունքն է, այլև **կարողությունը**, քանի որ նշված իրավունքն իրացնելու համար վերջիններս պետք է ունենան համապատասխան ռեսուրսների ձևավորման աղբյուրներ (օրինակ՝ ֆինանսական, կազմակերպական, մարդկային):

Տեղական ինքնակառավարումը դրսևորվում է համայնքային նշանակության հանրային հարցեր լուծելով: Ընդ որում, սահմանադիրը տեղական

ինքնակառավարման մարմիններին օժտել է **համընդհանուր իրավասության մը**, որը, սակայն, **վերաբերում է միայն համայնքային նշանակության հանրային հարցերին**: Այսինքն՝ քննարկվող դրույթով հստակորեն սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության ոլորտը: Ընդ որում, Սահմանադրությունը չի ամրագրում համայնքային նշանակության հանրային հարցերի սպառիչ ցանկ:

Համայնքային նշանակության հանրային հարցերի շրջանակը պայմանավորված է մի շարք գործոններով: Համայնքային նշանակության հանրային հարցերը կարող են դադարել այդպիսին լինելուց, իսկ մյուս կողմից՝ ժամանակի ընթացքում կարող են առաջանալ համայնքային նշանակության հանրային նոր հարցեր:

Սահմանադրական ամրագրում է ստացել նաև **տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը**, որի համաձայն՝ վերջիններս իրենց վերապահված լիազորություններն իրականացնում են սեփական պատասխանատվությամբ, ինչը պետությանն արգելում է տեղական ինքնակառավարման մարմիններին հրահանգել, թե նրանք իրենց իրավասությանը վերապահված ո՞ր հարցը լուծեն կամ ինչպե՞ս իրականացնեն իրենց լիազորությունները: Միաժամանակ, տեղական ինքնակառավարման մարմիններին հակակշռելու, նրանց կողմից օրենքների պահպանումն ապահովելու համար սահմանադիրը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ սահմանել է հսկողություն իրականացնելու իրավասություն, այն է՝ համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է **իրավական հսկողություն**, իսկ պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են **իրավական և մասնագիտական հսկողություն** (Սահմանադրության 188-րդ հոդված):

Տեղական ինքնակառավարման մարմիններն առաջնորդվում են **համայնքի բնակիչների շահերով**: Հարկ է նշել է, որ տեղական ինքնակառավարումը «սեփական պատասխանատվությամբ» և «համայնքի բնակիչների շահերից ելնելով» իրականացնելու հանգամանքին² անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը՝ նշելով, որ «(...) տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազոր

² Տե՛ս նաև 1985թ. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածի 1-ին կետը: Նշված խարտիան (կից հայտարարությամբ) Ազգային ժողովի կողմից վավերացվել է 04.12.2001թ. Ն-236-2 որոշմամբ (ուժի մեջ է մտել 04.01.2002թ.), և համապատասխան դրույթների, այդ թվում՝ 3-րդ հոդվածի 1-ին կետի մասով, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 01.05.2002թ.: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածն Ազգային ժողովի կողմից վավերացվել է 08.12.2015թ. ԱԺՈ-188-Ն որոշմամբ (որոշումն ուժի մեջ է մտել 26.12.2015թ.):

րությունները պետք է իրականացնեն «սեփական պատասխանատվությամբ» և «տեղական բնակչության շահերից ելնելով»: Հետևաբար, տեղական ինքնակառավարման մարմինները չպետք է սահմանափակվեն միայն բարձր իշխանության գործակալների դերում հանդես գալով: Նրանք կարող են որոշել իրենց քաղաքական առաջնահերթությունները, կազմել ռազմավարություններ և հանրային քաղաքականություններ՝ ի շահ տեղական բնակչության: Նրանք օրենքի սահմաններում իրենց որոշումների համար հաշվետու չեն բարձր մակարդակի իշխանություններին, բայց քաղաքականապես հաշվետու են համայնքի բնակիչների առջև: Ուստի տեղական ինքնակառավարման մարմինների կենտրոնական խնդիրն է պաշտպանել և խթանել տեղական հանրային շահը»³:

Քննարկվող իրավունքն իրացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, այսինքն՝ Սահմանադրությամբ և օրենքներով ուրվագծվում է այն շրջանակը, որում գործում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համայնքների միավորումը կամ բաժանումն անմիջական ազդեցություն է ունենում համապատասխան համայնքի, ինչպես նաև դրա տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության տարածքային շրջանակի վրա, և նման փոփոխությունների կատարումը ձևական տեսանկյունից պահանջում է **օրենքի առկայություն**, իսկ բովանդակային տեսանկյունից՝ **համապատասխան հիմնավորում**:

Հարկ է նշել, որ համայնքի գործերի կառավարմանը համայնքի բնակիչները մասնակցում են ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց միջոցով, այլև անմիջականորեն՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով և համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու այլ եղանակներով (Սահմանադրության 183-րդ հոդված):

Համայնքի գործերի կառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը խրախուսում է նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (այսուհետ՝ Խարտիա), որի նախաբանի համաձայն՝ պետական գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը կարող է անմիջականորեն իրականացվել հատկապես տեղական մակարդակով: Նշված իրավունքն առավել մանրամասն կարգավորում է ստացել Խարտիայի՝ Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերա-

³ Տե՛ս CG-FORUM(2020)02-05final, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government, § 31:

բերյալ լրացուցիչ արձանագրությամբ⁴, որում ամրագրվել է տեղական ինքնակառավարման մարմինների գործերին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը (1-ին հոդվածի 1-ին մաս), ինչպես նաև սահմանվել են այդ իրավունքի իրականացման միջոցները: Վերջիններս ենթադրում են նաև մարդկանց ներգրավման այնպիսի ընթացակարգերի սահմանման ապահովումը, որոնք «կարող են ներառել խորհրդատվական գործընթացներ, տեղական հանրաքվեներ և խնդրագրեր (...))» (2-րդ հոդվածի 2-րդ կետի ii. ենթակետ):

Հաշվի առնելով համայնքների միավորման կամ բաժանման դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների և համապատասխան համայնքի՝ որպես մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրության վրա ներգործության աստիճանը՝ Սահմանադրության առանձին հոդվածով ամրագրվել են այդ գործընթացի կարգավորման հիմնաքարային դրույթները:

4.2. Սահմանադրության 190-րդ հոդվածի համաձայն՝ հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը:

Վերոգրյալից հետևում է, որ Սահմանադրությունը հնարավոր է համարում համայնքների միավորումը կամ բաժանումը, որն իրականացվում է բացառապես Կառավարության նախաձեռնությամբ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով, որի հիմքում, ինչպես արդեն նշվեց, կարող են դրվել բացառապես հանրային շահերը: Այսինքն՝ համայնքների միավորման կամ բաժանման բոլոր դեպքերում անհրաժեշտ է պատշաճ ընթացակարգերի միջոցով վեր հանել այն հանրային շահերը, որոնք կպայմանավորեն նման փոփոխությունների կատարումը՝ բացառելով համայնքների միավորման կամ բաժանման հիմքում ցանկացած այլ շահ դնելը:

Միաժամանակ Սահմանադրությունը, հաշվի առնելով համայնքների միավորման կամ բաժանման կարևոր նշանակությունը համապատասխան համայնքների համար, ամրագրում է այդ գործընթացում վերջիններիս լավամ լինելու իրավունքը: Հատկանշական է, որ քննարկվող սահմանադրական դրույթով որպես համայնքների միավորման կամ բաժանման հարցի շրջանակներում լավամ լինելու իրավունքի կրող նշվել է համայնքը, ուստի Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ գործընթացում Ազգային ժողովը պետք է լսի համայնքի՝ որպես մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրության կարծիքը, որը, սակայն, ունի ոչ թե պարտադիր, այլ խորհրդատվական նշանակություն:

⁴ Նշված լրացուցիչ արձանագրությունն Ազգային ժողովի կողմից վավերացվել է 26.02.2013թ. ԱԺՈ-052-Ն որոշմամբ (որոշումն ուժի մեջ է մտել 23.03.2013թ.):

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության 190-րդ հոդվածի երկրորդ նախադասությամբ ամրագրված կարգավորումն ուղղված է համայնքների միավորման կամ բաժանման հարցը լուծելու իրավասություն ունեցող մարմնի և այդ գործընթացում անմիջական շահագրգռվածություն ունեցող համայնքների միջև երկխոսության ապահովմանը, ինչը հնարավորություն է տալիս համայնքների համար հիմնարար նշանակություն ունեցող այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնելիս ունենալ նաև նրանց կարծիքը:

Քննարկվող պահանջն ամրագրված է նաև Խարտիայում: Մասնավորապես՝ Խարտիայի 5-րդ հոդվածը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանազատումների ցանկացած փոփոխություն չպետք է կատարվի առանց նախապես խորհրդակցելու տեղական շահագրգռ համայնքների հետ, հնարավորության դեպքում, նաև հանրաքվե անցկացնելու միջոցով (եթե թույլատրված է օրենքով): Անդրադառնալով այդ դրույթի բովանդակությանը՝ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը նշել է, որ «(...) Խարտիան չի արգելում միավորումները կամ պարտադրում տարածքային կամ ինստիտուցիոնալ ձևի որոշակի տեսակ: 5-րդ հոդվածը նաև ձեռնպահ է մնում սահմանների փոփոխությունների ձևի և իրականացման հրամայական չափանիշներ մտցնելուց, ինչպիսիք են՝ ֆիզիկական պլանավորման մեջ կիրառվող՝ սոցիալական, ժողովրդագրական կամ տնտեսական չափանիշները: Այնուամենայնիվ, Խարտիան ներմուծում է տեղական ինքնակառավարման մարմինների սահմանների փոփոխման ընթացակարգային կանոններ: Պարտադիր ընթացակարգային պահանջ է, որ տեղական սահմաններում որևէ փոփոխություն չի կարող ընդունվել առանց խորհրդակցության, որը պետք է տեղի ունենա ժամանակին՝ նախքան հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը: Դա անհրաժեշտ է խորհրդակցության արդյունավետությունը խթանելու համար, այլ կերպ ասած, տեղական համայնքների՝ լավամ լինելու և իրենց տեսակետներն արտահայտելու իրական հնարավորությունն այն ժամանակ, երբ իրականում կարող է գործադրվել նրանց ազդեցությունը միավորման որոշումների և դրանց տարբեր ասպեկտների վրա, և խորհրդակցությունը չի լինի միայն ֆորմալ կամ խորհրդանշական: Հետևաբար՝ առանց տեղական համայնքի հետ խորհրդակցելու իրականացված սահմանների փոփոխությունը կխախտեր 5-րդ հոդվածը»⁵: Ավելին, Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը հատուկ անդրադարձ է կատարել նաև այն հարցին, թե տեղական սահմանների փոփոխման հարցում ում հետ է անհրաժեշտ խորհրդ-

⁵ St'u CG-FORUM(2020)02-05final, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government, § 90:

դակցել Խարտիայի 5-րդ հոդվածի հիման վրա: Վերջինս, մասնավորապես, ընդգծել է, որ Խարտիայի 5-րդ հոդվածը պետք է մեկնաբանել այնպես, որ դրանում ներառվեն նաև քաղաքացիները և տեղական քաղաքացիական հասարակությունն ընդհանրապես⁶:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչ եղանակներով պետք է ապահովվի համայնքների՝ լաված լինելու իրավունքի իրացումը: Այս հարցի վերաբերյալ սահմանադրական կարգավորումն էապես փոփոխվել է 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Եթե 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությունը պարտադիր էր համարում մինչև Կառավարության կողմից համայնքների միացման կամ առանձնացման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության ներկայացումը համապատասխան համայնքներում տեղական հանրաքվեների նշանակումը և ամրագրում էր, որ այդ հանրաքվեների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը՝ դրանով իսկ պարտադրելով համայնքների միացման կամ առանձնացման գործընթացում շահագրգիռ համայնքների կարծիքը լսելու կոնկրետ եղանակ (տեղական հանրաքվե), ապա 2015 թվականի փոփոխությունների արդյունքում համայնքների կարծիքն Ազգային ժողովի կողմից լավելու եղանակների այլընտրանքային ձևեր սահմանվեցին, ինչի արդյունքում Սահմանադրությունն այլևս որպես թույլատրելի միակ եղանակ չի պարտադրում ցանկացած իրավիճակում այդ հարցով տեղական հանրաքվեների անցկացումը՝ հնարավոր համարելով համապատասխան համայնքների լաված լինելու իրավունքի իրացումն ապահովել նաև այլ եղանակներով: Միաժամանակ, օրենսդրական կարգավորումները պետք է կառուցվեն այն տրամաբանությամբ, որ գործնականում ապահովեն Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված պահանջի կատարումը՝ շահագրգիռ համայնքներին հնարավորություն տալով առավել օբյեկտիվ ներկայացնել իրենց կարծիքը: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սահմանադրական վերը նշված կարգավորումները և տեղական հանրաքվեի՝ որպես համայնքների կարծիքը վեր հանելու եղանակի բացառիկ արդյունավետությունը, գտնում է, որ հաշվի առնելով առանձին իրավիճակների առանձնահատկությունները՝ կոնկրետ դեպքում համայնքների օբյեկտիվ կարծիքը վեր հանելու արդյունավետ այլ եղանակների բացակայության պայմաններում համայնքի կարծիքը պարզելու նպատակով պետք է ապահովվի տեղական հանրաքվեի անցկացումը: Ընդ որում, այդ գործընթացին վերաբերող կարգավորումները (այդ թվում՝ նման նախաձեռնության իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանող, հանրաքվեի նախապատ-

⁶ St'u CG-FORUM(2020)02-05final, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government, §§ 91-92:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 2(102)/2021

րաստումը և անցկացումը կարգավորող իրավանորմերը) պետք է ունենան այնպիսի բովանդակություն, որ Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական խորհրդատվական հանրաքվեն գործնականում հնարավոր լինի անցկացնել: Այս կապակցությամբ պետության պարտականությունն է համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրումը:

Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ Խարտիան և ս չի ամրագրում համայնքի հետ խորհրդակցության պարտադիր եղանակ՝ միաժամանակ նախապատվությունը տալով հանրաքվեի անցկացմանը, որը հնարավորություն է տալիս տեղի բնակիչներին անմիջականորեն արտահայտելու իրենց դիրքորոշումը նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ⁷:

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացը կարգավորող իրավանորմեր սահմանելիս օրենսդիրը պետք է առաջնորդվի սահմանադրական կարգավորումներից բխող հետևյալ իրավական մոտեցումներով.

1) համայնքների միավորման կամ բաժանման հիմքում պետք է ընկած լինեն **հանրային շահերը**.

2) համայնքների միավորման կամ բաժանման ժամանակ անհրաժեշտ է ապահովել շահագրգիռ **համայնքների բնակիչների կարծիքն Ազգային ժողովում լսելի դարձնելու մեխանիզմ**.

3) այն պետք է գործադրվի **ժամանակին**, այսինքն՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացի այն փուլում, երբ համայնքները կունենան իրենց համար հիմնարար նշանակություն ունեցող այդ հարցի վերաբերյալ իրենց կարծիքը ներկայացնելու և այդպիսով կայացվող վերջնական որոշման վրա ազդելու հնարավորություն.

4) այն պետք է գործադրվի այնպիսի եղանակով, որը կապահովի համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ շահագրգիռ **համայնքների կարծիքը վեր հանելու և ներկայացնելու իրական և արդյունավետ հնարավորություն**:

4.3. Համայնքների միավորման կամ բաժանման ժամանակ Ազգային ժողովում համայնքների լաված լինելու իրավունքի իրացումն ապահովելու համար օրենսդիրը սահմանել է հետևյալ մեխանիզմները.

⁷Տե՛ս նաև. CG-FORUM(2020)02-05final, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government, § 95:

մի կողմից՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքների միավորման կամ բաժանման դեպքում այդ համայնքների ղեկավարներն իրավունք ունեն Ազգային ժողով ներկայացնելու միավորման կամ բաժանման վերաբերյալ իրենց գրավոր կարծիքը, իսկ Ազգային ժողովում կամ գլխադասային հանձնաժողովում հարցի քննարկման ընթացքում՝ հանդես գալու հարակից զեկուցմամբ: Միաժամանակ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով որպես տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում համայնքի ղեկավարի լիազորություն սահմանվել է, որ վերջինս կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին:

Մյուս կողմից՝ Օրենքի վերաբերելի նորմերից հետևում է, որ առկա է համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե անցկացնելու հնարավորություն: Այսպես՝ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 19-ին ընդունված ՀՕ-307-Ն օրենքով փոփոխությունների կատարումը համայնքների միավորման կամ բաժանման հարցի՝ որպես համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցի կապակցությամբ տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեին տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, տվյալ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը և համայնքի ղեկավարը: Մինչդեռ 2019 թվականի դեկտեմբերի 19-ին ընդունված ՀՕ-307-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում օրենսդիրն առանձին դրույթով ամրագրեց Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համայնքների միավորման կամ բաժանման հարցով խորհրդատվական բնույթ կրող տեղական հանրաքվե նախաձեռնելու հնարավորությունը՝ այն վերապահելով միայն համայնքի բնակիչներին, մասնավորապես՝ տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող, մինչև նախաձեռնության գրանցման օրը տասնութ տարին լրացած անձանց: Փաստո-

րեն, 2019 թվականի դեկտեմբերի 19-ին ընդունված ՀՕ-307-Ն օրենքով կատարված փոփոխություններով, ի թիվս այլնի, օրենսդիրը նեղացրել է համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, և դրանից դուրս են մնացել տեղական ինքնակառավարման մարմինները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև համայնքի բնակիչները զրկված չեն խնդրո առարկա հարցով տեղական հանրաքվե անցկացնելու վերաբերյալ իրենց կամահայտնությունն արտահայտելու հնարավորությունից, սակայն օրենսդրական այդ կառուցակարգն առավել բարդ և ժամանակատար է ինչպես բնակիչների, այնպես էլ այդ գործընթացում ներգրավված իրավասու մարմինների համար (անհրաժեշտ է գրանցել նախաձեռնող խումբ, օրենքով սահմանված ժամկետներում հավաքել անհրաժեշտ թվով բնակիչների ստորագրություն, ստուգել դրանց վավերականությունը և այլն): Վերջին հանգամանքը գործնականում անխուսափելիորեն նվազեցնում է խնդրո առարկա հարցով տեղական հանրաքվե անցկացնելու հավանականությունը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում շահագրգիռ համայնքների բնակիչների կարծիքի լսելիությունն ապահովելու վրա:

Միաժամանակ, եթե համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց կողմից Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով նախաձեռնող խումբ չի ձևավորվում, ապա տեղական հանրաքվե չի կարող անցկացվել, որպիսի դեպքում համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում շահագրգիռ համայնքների բնակիչների կարծիքն Ազգային ժողովում լսելի դարձնելու նպատակով այն վեր հանելու օրենսդրական ամրագրում ստացած միակ եղանակը մնում է համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հանրային լուսմներ կամ քննարկումներ կազմակերպելը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանրային լուսմների և քննարկումների կազմակերպման կառուցակարգը կարող է արդյունավետ լինել համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում շահագրգիռ համայնքների բնակիչների կարծիքն Ազգային ժողովում լսելի դարձնելու նպատակով այն վեր հանելու համար հիմնականում այն դեպքում, երբ համայնքի բնակիչների թիվը համեմատաբար փոքր է: Սակայն մեծաթիվ բնակչություն ունեցող համայնքների պարագայում միայն հանրային լուսմները կամ քննարկումները չեն կարող տալ բնակիչների օբյեկտիվ կարծիքը վեր հանելու իրական հնարավորություն: Փաստորեն, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց կողմից նախաձեռնող խումբ չձևավորվելու պայմաններում (ընդ որում, Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված է նախաձեռնող

խումբ ձևավորվելու կապակցությամբ մի շարք գործողություններ կատարելու անհրաժեշտություն) առանձին դեպքերում առկա չէ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում համայնքների բնակիչների կարծիքը վեր հանելու իրական հնարավորություն, որպիսի պայմաններում Ազգային ժողովի կողմից համայնքների կարծիքը լսելը վերաձվում է սոսկ հռչակագրային բնույթ ունեցող պահանջի:

Տվյալ պարագայում Սահմանադրության 190-րդ հոդվածի իրացումն ապահովելու նկատառումներով որպես համայնքների կարծիքը լսելի լինելու իրական հնարավորության բարձրացման երաշխիք կարող էր դիտարկվել, օրինակ, համայնքի ղեկավարին կամ համայնքի ավագանուն տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքով օժտելու հնարավորությունը:

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքով միայն համապատասխան համայնքի բնակիչներին օժտելը Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից ինքնին խնդրահարույց չէր լինի, եթե ապահովված լինեին այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, քանի որ քննարկվող դեպքում բուն խնդիրը վերաբերում է համայնքների միավորման կամ բաժանման հարցը լուծելիս ոչ թե կոնկրետ հանրաքվեի ինստիտուտին կամ այն նախաձեռնելու սուբյեկտների կազմին, այլ առավելապես համայնքի կարծիքն իրապես լսելի դարձնող արդյունավետ մեթոդին և դրա կիրարկման արդյունավետությունն ապահովող կառուցակարգերին:

4.4. Անդրադառնալով համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվեի ֆինանսավորման հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

տեղական հանրաքվեների, այդ թվում՝ համայնքների միավորման կամ բաժանման հարցով հանրաքվեների նախաձեռնումը, նշանակումն ու անցկացումը տեղական ինքնակառավարման մարմինների՝ պետության կողմից պատվիրակված լիազորություններ չեն, ուստի պետության կողմից պատվիրակված լիազորությունների՝ պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման վերաբերյալ Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը դրանց նկատմամբ կիրառելի չէ:

Միաժամանակ, Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համայնքների կարծիքը լսելու վերաբերյալ դրույթին համապատասխան այդ գործընթացը կարգավորող իրավանորմերը պետք է ապահովեն շահագրգիռ համայնքների կարծիքը վեր հանելու և ներկայացնելու իրական և

արդյունավետ հնարավորություն, ինչը ենթադրում է ոչ միայն համապատասխան կառուցակարգերի առկայություն, այլև դրանք գործնականում իրականացնելու հնարավորություն: Այն, ի թիվս այլնի, պահանջում է անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայություն, քանի որ ակնհայտ է, որ դրանց բացակայության դեպքում համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում շահագրգիռ համայնքների կարծիքը վեր հանելու կառուցակարգերը չեն կարող կենսագործվել:

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող՝ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստանալով նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցը՝ համայնքի ղեկավարը մերժում է տեղական հանրաքվեի նշանակումը, եթե, ի թիվս այլ հիմքերի, չեն տրամադրվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Փաստորեն, անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում համայնքների միավորման կամ բաժանման հարցով հանրաքվե չի կարող անցկացվել, ընդ որում, նույնիսկ համայնքի բնակիչներից բխող նախաձեռնության առկայության դեպքում: Նման պայմաններում շահագրգիռ համայնքների կարծիքը վեր հանելու արդյունավետ այլ կառուցակարգերի բացակայության դեպքում այդ համայնքների կարծիքն Ազգային ժողովին, փաստորեն, կարող է լսելի չդառնալ:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ համայնքների միավորման կամ բաժանման նախաձեռնությունն առկա իրավակարգավորումներով բխում է ոչ թե համայնքից, այլ Կառավարությունից, գտնում է, որ այն դեպքում, երբ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնի գնահատմամբ առկա չեն այդ հարցի վերաբերյալ շահագրգիռ համայնքների կարծիքը վեր հանելու այլ արդյունավետ կառուցակարգեր, նախաձեռնվող տեղական հանրաքվեի ֆինանսավորումը պետք է կատարվի պետության կողմից այն դեպքում և այնքանով, որքանով համայնքի բյուջեում բացակայում են տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ կամ առկա միջոցները բավարար չեն համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար: Հետևաբար, Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումը ֆինանսական միջոցների բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից մերժման ենթակա լինելու մասով, չի համապատաս-

խանում Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասի և 190-րդ հոդվածի պահանջներին:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված է Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ տեղական հանրաքվեի կազմակերպման և անցկացման (ներառյալ՝ ցուցակների կազմման) ծախսերը կատարվում են համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ վերոգրյալ պատճառաբանությունները, որոնք ըստ էության կիրառելի է համարում նաև Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի նկատմամբ, գտնում է, որ այդ դրույթով պետք է նախատեսվեր համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարելու վերաբերյալ կարգավորում:

4.5. Ըստ դիմողների՝ Օրենքի վիճարկվող դրույթները չեն համապատասխանում Սահմանադրության 9-րդ, 179-րդ և 190-րդ հոդվածներին նաև այն մասով, որ չեն նախատեսում Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման օրենսդրական նախաձեռնության դեպքում մինչև տեղական հանրաքվեի արդյունքների ստացումն այդ գործընթացին հետագա ընթացք տալն արգելող դրույթներ:

Անդրադառնալով վիճարկվող դրույթների բովանդակությանը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ՝

- Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, թե ինչ հարցեր կարող են դրվել տեղական հանրաքվեի, իսկ այդ հոդվածի 1.1-ին մասն ամրագրում է Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական խորհրդատվական հանրաքվե նախաձեռնելու՝ համապատասխան համայնքների բնակիչների իրավունքը,

- Օրենքի 6-րդ հոդվածը վերաբերում է տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության սուբյեկտներին, իսկ դրա 2-րդ մասը Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունքը վերապահում է տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող, մինչև նախաձեռնության գրանցման օրը տասնութ տարին լրացած անձանց,

- Օրենքի 8-րդ հոդվածը կարգավորում է տեղական հանրաքվեի նշանակմանը և անցկացմանը, տեղական հանրաքվեի դրվող հարցի հրապարակմանն առնչվող հարցեր, իսկ նույն հոդվածի վիճարկվող 1-ին մասը սահմանում է նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո համայնքի ղեկավարի կողմից որոշումների կայացմանը, դրանց բողոքարկելիությանն առնչվող կարգավորումներ:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում մինչև տեղական հանրաքվեի արդյունքների ստացումն այդ գործընթացին հետագա ընթացք տալու արգելք չնախատեսելու առնչությամբ բարձրացված խնդիրը կապված չէ վիճարկվող դրույթների կարգավորման շրջանակի, հետևաբար՝ նաև այդ դրույթների սահմանադրականության հարցի հետ:

Ավելին, համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համապատասխան համայնքների կարծիքը վեր հանելու կառուցակարգի նպատակն այդ կարծիքն Ազգային ժողովում լսելի դարձնելն է, և այդ կարծիքը պարզելու նպատակով Ազգային ժողովում համայնքների միավորման կամ բաժանման գործընթացի կասեցումն առավելապես վերաբերում է Ազգային ժողովի գործունեության կազմակերպմանը, որը կարգավորվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով: Այսինքն՝ Ազգային ժողովում համայնքների միավորման կամ բաժանման գործընթացի կասեցման հարցը՝ որպես Ազգային ժողովի գործունեության կազմակերպմանը վերաբերող հարց, ներառվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի կարգավորման շրջանակում, իսկ նշված սահմանադրական օրենքի դրույթների սահմանադրականությանը սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն իրավասու չէ անդրադառնալ՝ հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված այն կարգավորումը, որ «որևէ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: (...):»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ օրենքները Սահմանադրությանը պետք է համապատասխանեն ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլև ընդունման կարգով, իսկ Սահմանադրությունն ամրագրում է օրենքների ընդունմանը վերաբերող սկզբունքային պահանջները: Մասնավորապես՝ նման պահանջներից է համայնքների միավորման կամ բաժանման հարցի լուծումից առաջ Ազգային ժողովի կողմից շահագրգիռ հա-

մայնքների կարծիքը լսելու պահանջը: Հետևաբար, անկախ Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման օրենսդրական նախաձեռնությանը մինչև տեղական հանրաքվեի արդյունքների ստացումը հետագա ընթացք տալն արգելող օրենսդրական դրույթի առկայությունից կամ բացակայությունից, շահագրգիռ համայնքների կարծիքը սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների հաշվառմամբ լսելու պայմանները չապահովելու պարագայում Ազգային ժողովի կողմից օրենքի ընդունումը կհանգեցնի Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված պահանջի խախտման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթները, չնախատեսելով Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համապատասխան համայնքի կարծիքը վեր հանելու նպատակով համայնքի բնակիչների՝ տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, սահմանելով Կառավարության կողմից նման նախաձեռնության դեպքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումը ֆինանսական միջոցների բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից մերժման ենթակա լինելու վերաբերյալ կարգավորում, ինչպես նաև չնախատեսելով, որ համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին, Սահմանադրության 1-ին, 9-րդ հոդվածներին, 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին համահունչ չեն ապահովում օրենսդրական կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք անհրաժեշտ են համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 70-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չեն ապահովում համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված կարգով նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումն անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից մերժման ենթակա լինելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

3. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը՝ համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարելը չնախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

14 մայիսի 2021 թվականի
ՍԴՈ-1593



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 14-Ի՝ «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱԲՈՎՅԱՆ»
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ «ԾԱՂԱԿԱԶՈՐ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ՀԱԾՆ»
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
1.1-ԻՆ ՄԱՍԻ, 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 8-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1593 ՈՐՈՇՄԱՆ
ՊԱՏՃԱՌ-ԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻԶ ՄԱՍԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի և Կոտայքի մարզի «Նոր Հանն» համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մայիսի 14-ի ՄԴՈ-1593 որոշմամբ որոշել է.

«1. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չեն սպահովում համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված կարգով նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումն անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից ներժման ենթակա լինելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

3. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը՝ համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարելը չնախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի ՄԴՈ-1593 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումից տարբերվող հետևյալ դիրքորոշումը.

1. Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի ՄԴՈ-1593 որոշման 3-րդ կետում գործի շրջանակներում պարզման ենթական հանգամանքների համատեքստում Սահմանադրական դատարանն անդրադարձել է հետևյալ հարցադրումներին, որ՝

համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղական հանրաքվե նախաձեռնելու հնարավորություն չնախատեսելը, և

համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ նախաձեռնող խմբի համար ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվեի նշանակումը մերժելը կամ պետական բյուջեի միջոցների հաշվին այդպիսի ծախսերի կատարման համար միջոցներ չնախատեսելը

արդյոք չեն հանգեցնում Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու պահանջի խախտման:

Նախ, Սահմանադրության 182-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով, իսկ Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:

Սահմանադրական հիշյալ նորմերի համատեքստում՝ «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող հարաբերությունները կարգավորող այլ օրենքների համապատասխան կարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական ինքնակառավարման մարմինները տեղական հանրաքվե նախաձեռնելու լիազորություն չունեն:

Միաժամանակ, տեղական հանրաքվեների, այդ թվում՝ համայնքների միավորման կամ բաժանման հարցով հանրաքվեների նախաձեռնումը, նշանակումն ու անցկացումը տեղական ինքնակառավարման մարմինների՝ պետության կողմից պատվիրակված լիազորություններ չեն, ինչը նշանակում է, որ պետության կողմից պատվիրակված լիազորությունների՝ պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման վերաբերյալ Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը դրանց նկատմամբ կիրառելի չէ:

Հաշվի առնելով հիշյալը՝ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքների համատեքստում պետք է անդրադառնար հետևյալ հարցադրումներին, թե՛

ՍԱՀՄԱՆԱԿՐՈՂՎԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒՄ ԴՆՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ 2(102)/2021

ա) վիճելի իրավակարգավորումներում առկա «օրենսդրական բացերն» առաջացրել են կամ կարող էին առաջացնել սահմանադրականության խնդիր՝ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների պաշտպանության առումով,

բ) արդյոք այդ բացերը հնարավոր չէր հաղթահարել և հաղթահարված չեն եղել Սահմանադրության համապատասխան դրույթների անմիջական կիրառման միջոցով, այնպես, որ այդ մարմինների, մասնավորապես՝ համայնքի ղեկավարի իրավունքների պաշտպանությունը երաշխավորված լիներ, այդ թվում՝ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական հանրաքվե նախաձեռնելու լիազորության բացակայության պարագայում:

Այլ կերպ ասած՝ «իրավունքի բացի» վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից ներկայացված դիմումը բավարարել է արդյոք Սահմանադրական դատարանում դրա հիման վրա գործը քննության ընդունելու համար անհրաժեշտ և պարտադիր այն նախապայմանները, որոնց բովանդակության վերաբերյալ իր իրավական դիրքորոշումներն է արտահայտել Սահմանադրական դատարանը:

Այսպես, «իրավունքի բաց» կամ «օրենսդրական բաց» իրավական երևույթների վերաբերյալ Սահմանադրական դատարանը հետևողականորեն ձևավորել և զարգացրել է բավական որոշակի, կայուն և համապարփակ դիրքորոշումներ:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն՝ իր 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԳՈ-864 որոշման մեջ արձանագրել է. «(...) Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Իսկ Սահմանադրական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 6-ի ՄԴՈ-1434 որոշմամբ ամրագրվել է այն իրավական դիրքորոշումը, որ՝ «(...) առկա չէ օրենսդրական բաց բոլոր այն դեպքերում, երբ ենթադրյալ օրենսդրական բացին վերաբերող հարցերն ուղղակիորեն կարգավորվում են Սահմանադրությամբ»:

Սահմանադրական դատարանի վերը նշված և այլ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն իրենց ամբողջության մեջ հստակ և կանխատեսելի սահմաններ են գծում «իրավունքի բացի» կամ «օրենքի բացի» նկատմամբ սահմանադրական վերահսկողության թույլատրելի շրջանակի համար, սահմանում են այդ բացերի սահմանադրականության ստուգման վերաբերյալ դիմումների թույլատրելիության որոշակի չափանիշներ:

Հաշվի առնելով պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման և համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ Ազգային ժողովի կողմից համապատասխան օրենք ընդունելիս համայնքների կարծիքը պարտադիր լսվելու վերաբերյալ Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասի և 190-րդ հոդվածի պահանջները՝ կարծում եմ՝ որևէ պարագայում չի կարող խոսք լինել օրենսդրական բացի մասին, երբ ենթադրյալ օրենսդրական բացին վերաբերող հարցերն ուղղակիորեն կարգավորվում են Սահմանադրությամբ:

Այս կապակցությամբ, միաժամանակ, գտնում եմ, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների մասով օրենքի այս կամ այն «բացի» սահմանադրականության հարցը Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող էր լինել, եթե՝

ա) վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող էր խախտել կոնկրետ տեղական ինքնակառավարման մարմնի իրավունք,

բ) իրավակարգավորման լիարժեքություն ապահովող նորմի բացակայության կամ այդ նորմի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվել էր տեղական ինքնակառավարման ոլորտում օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը,

գ) օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապատասխան

իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված էր հակասական իրավակիրառական պրակտիկա:

Վերոգրյալ դիրքորոշումների տրամաբանությունից հետևում է, որ գործի վարույթն ենթակա էր կարճման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե պարզելու և սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով ու իր նախաձեռնությամբ համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու վերաբերյալ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի պահանջները՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում կարող էր համակարգային մոտեցմամբ պարզել:

ա) որքանով է Սահմանադրությունը հստակ ամրագրել տեղական ինքնակառավարման մարմինների իրավագործության շրջանակները, այդ թվում՝ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղական հանրաքվե նախաձեռնելու հնարավորության պարագայում,

բ) Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու համար ի՞նչ ֆինանսական երաշխիքներ են նախատեսված, այդ թվում՝ նախաձեռնող խմբի՝ համայնքի բնակիչների նախաձեռնությամբ համայնքների միավորման կամ բաժանման հարցով համայնքային կամ պետական բյուջեների հաշվին տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսեր կատարելու առումով:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-1593 որոշման 3-րդ կետում սահմանադրաիրավական վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող հարցադրումների հիման վրա և, մասնավորապես, պատճառաբանական մասի 4.1-4.3 կետերի իրավակարգավորումների վերլուծության արդյունքում կատարել է հետևյալ եզրահանգումը, որ՝

ա) (...) Սահմանադրության 190-րդ հոդվածի իրացումն ապահովելու նկատառումներով որպես համայնքների կարծիքը լսելի լինելու իրական հնարավորության բարձրացման երաշխիք կարող էր դիտարկվել, օրինակ, համայնքի ղեկավարին կամ համայնքի ավագանուն տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքով օժտելու հնարավորությունը,

բ) (...) համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքով միայն համապատասխան համայնքի բնակիչներին օժտելը Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից ինքնին խնդրահարույց չէր լինի, եթե ապահովված լինեին այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, քանի որ քննարկվող դեպքում բուն խնդիրը վերաբերում է համայնքների միավորման կամ բաժանման հարցը լուծելիս ոչ թե կոնկրետ հանրաքվեի ինստիտուտին կամ այն նախաձեռնելու սուբյեկտների կազմին, այլ առավելապես համայնքի կարծիքն իրապես լսելի դարձնող արդյունավետ մեթոդին և դրա կիրարկման արդյունավետությունն ապահովող կառուցակարգերին (էջ 20):

Նման տարաբովանդակ դիրքորոշումների համատեքստում՝ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1593 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետին համապատասխան՝ վիճելի իրավակարգավորումները՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին և 6-րդ հոդվածի 2-րդ մասերը ճանաչել է Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր՝

ոչ թե տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղական հանրաքվե նախաձեռնելու մասով իրավակարգավորման լիարժեքություն ապահովող նորմի բացակայության կամ այդ նորմի թերի կանոնակարգման հիմքով, որը պետք է հանգեցնեք տեղական ինքնակառավարման ոլորտում օրենսդրական բացի հիմքով օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործմանը,

այլ այնքանով, որ այդ վիճելի կարգավորումները չեն ապահովել համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր,

ընդ որում՝ այդպես էլ չորոշակիացնելով, թե օրենսդրական ինչպիսի՞ անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի ու ընթացակարգերի մասին կարող է խոսք լինել:

3. Սահմանադրության 190-րդ հոդվածի իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ՝ ա) համայնքների միավորումը կամ բաժանումը պետք է պայմանավորված լինել միայն հանրային շահերով, բ) համայնքների միավորումը կամ բաժանումը իրականացվում է բացառապես օրենքով, գ) համայնքների միավորման կամ բաժանման ժամանակ համայնքների կարծիքը լսելը Ազգային ժողովի պարտականությունն է՝ վերջինիս օրենսդրական գործընթացի շրջանակում, դ) համայնքի կարծիքը՝ Սահմանադրության 180-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում, ընկալվում է որպես տվյալ համայնքի բնակիչների հանրության կարծիք:

Հիշյալ դիրքորոշումների համատեքստում, կարծում եմ, որ՝

առաջին, Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1593 որոշման եզրափակիչ մասում վիճելի իրավակարգավորումները չեն կարող հակասել կամ չունեն ադերս Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասի հետ, քանի որ համայնքների միավորման կամ բաժանման հիմքում ընկած է բացառապես հանրային շահը, և ոչ թե համայնքային նշանակության հանրային հարցերի լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված համայնքի բնակչի շահը,

երկրորդ, բացի դրանից, Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1593 որոշման պատճառաբանական մասի 4.3-րդ կետում և եզրափակիչ մասի 1-ին կետում՝ համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելը, կարծում եմ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի կարգավորման հարցն է՝ այն հիմնավորմամբ, որ օրենսդրական գործընթացի այդ փուլում համայնքների կարծիքը լսելը գտնվում է Ազգային ժողովի լիազորությունների իրականացման շրջանակում,

երրորդ, ինչ վերաբերում է ՄԴՈ-1593 որոշման պատճառաբանական մասի 4.2-րդ կետում Սահմանադրական դատարանի կողմից կատարված այն եզրահանգմանը, որ համայնքի բնակիչների հանրության կարծիքն ունի ոչ թե պարտադիր, այլ խորհրդատվական նշանակություն, ապա, կարծում եմ, որ Սահմանադրության 190-րդ հոդվածի իրավակարգավորումների բովանդակությունից բխում է, որ Ազգային ժողովը պարտավոր է լսել այդ կարծիքը՝ առանց վերջինիս խորհրդատվական բնույթ հաղորդելու:

4. Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1593 որոշման պատճառաբանական մասի 4.4-4.5-րդ կետերում և եզրափակիչ մասի 2-3-րդ կետերում

համայնքի բնակիչների նախաձեռնությամբ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ նախաձեռնող խմբի համար ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվեի նշանակումը մերժելուն կամ պետական բյուջեի միջոցների հաշվին այդպիսի ծախսերի կատարման համար միջոցներ չնախատեսելուն վերաբերող հարցերը, կարծում եմ, հանդիսանում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7.1-րդ հոդվածի կարգավորման առարկա:

Իսկ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները, իմ կարծիքով, բխում են Սահմանադրության 110-րդ և 186-րդ հոդվածների կարգավորումների բովանդակությունից, քանի որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների նպատակային օգտագործումը գտնվում է համայնքի ավագանու և Ազգային ժողովի՝ բյուջետային գործընթացների և առնչվող լիազորությունների իրականացման շրջանակում:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, «Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի և Կոտայքի մարզի «Նոր Հաճն» համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

24 մայիսի 2021 թվականի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ՍԴՈ-1593
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի և Կոտայքի մարզի «Նոր Հան» համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մայիսի 14-ին կայացրած ՍԴՈ-1593 որոշմամբ որոշեց.

«1. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չեն ապահովում համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված կարգով նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումն անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղե-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

կավարի կողմից մերժման ենթակա լինելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

3. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը՝ համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարելը չնախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի ՄԴՌ-1593 որոշմանը՝ ես՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանս, ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման վերաբերյալ:

Գիտողների կողմից բարձրացված հարցի էությունը հասկանալու համար անհրաժեշտ ենք համարում վեր հանել տեղական հանրաքվեի ժողովրդավարականության ու արդյունավետության իրավական չափանիշները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մակարդակում ժողովրդաիշխանության ձևերի և այդ համատեքստում տեղական հանրաքվեի սահմանադրական զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում: Միայն հիմնահարցի զարգացման սահմանադրական օրինաչափությունների պարզաբանման համատեքստում է հնարավոր իմաստավորել համայնքների միավորման կամ բաժանման տեղական հանրաքվեի սահմանադրականության խնդիրը:

1. Տեղական (տարածքային) հանրաքվեն կարևոր սոցիալ-քաղաքական նշանակություն ունի անմիջական ժողովրդաիշխանության կառուցակարգում: Կայացած ժողովրդավարության երկրներում նկատվում է հենց տեղական հանրաքվեների անցկացման աճի միտում, որովհետև այդպես լուծվող հարցերը շատ ավելի հասկանալի են ընտրողներին, քան համապետականները, որոնք, որպես կանոն, պահանջում են արհեստավարժություն և հատուկ տեղեկությի հասանելիություն:

Տեղական հանրաքվեներն ըստ տարածքի մակարդակի լինում են՝ վարչատարածքային, ինչպես նաև միջտարածքային (մի քանի վարչատարածքային միավորումներում անցկացվող): Հայաստանի Հանրապետությունում նախատեսված է միայն համայնքային հանրաքվեն՝ բացառելով ըստ տարածքի բոլոր հնարավոր այլ տարբերակները (մարզային, միջհամայնքային):

Հանրաքվեների կարևոր չափանիշ է անցկացման եղանակը, այսինքն՝

պարտադիրությունը: Այդ հատկանիշով հանրաքվեները լինում են պարտադիր և լրացուցիչ (ֆակուլտատիվ): Պարտադիրներն անցկացվում են հատուկ նախատեսված դեպքերում, հստակ որոշված հարցերի շրջանակով: Այդ հարցերը չեն կարող լուծվել այլ կերպ՝ բացի հանրաքվեով: Այդ հարցի լուծման իրավունքը պատկանում է միայն քվեարկողների զանգվածին, իսկ ներկայացուցչական կամ այլ մարմիններն այդ հանրաքվեի գործընթացում կատարում են միայն նախապատրաստող, առաջարկող դեր: Դրան հակառակ տեղական լրացուցիչ հանրաքվեով քվեարկվող հարցն ունի լուծման այլընտրանք. այն կարող են լուծել նաև հանրային մարմինները, սակայն իրավիճակից թելադրված՝ այն դրվում է տեղական հանրաքվեի՝ դա նախաձեռնելու իրավունք ունեցող սուբյեկտի որոշմամբ: Եթե տեղական հանրաքվեի իրավական կարգավորումը նախատեսում է միայն լրացուցիչ հանրաքվե, որի նախաձեռնության իրավունք ունեն միայն հանրային իշխանության մարմինները (այսինքն՝ քաղաքացիները, կամ դրանց խմբերը բացառված են հանրաքվե նախաձեռնելու սուբյեկտների շրջանակից), ուրեմն հանրաքվեի ինստիտուտն անարդյունավետ չէ. այն չի կարող համարվել ժողովրդաիշխանության գործուն միջոց, կատարել իր ժողովրդավարական առաքելությունը: Այս պարագայում հանրաքվեն վերաժվում է հանրային-իշխանական միջոցով տեղական կառավարումը լրացնող այլընտրանքային ձևի: Ուրեմն արդյունավետ կարող է լինել լրացուցիչ տեղական հանրաքվեի այն տեսականը, որը նախատեսում է նաև քաղաքացիական նախաձեռնություն:

Ըստ առարկայի հանրաքվեները բաժանվում են իրավաստեղծ և այլ հարցեր լուծող տեսակների: Տեղական իրավաստեղծ հանրաքվեներն անցկացվում են տեղական ինչ-որ նորմատիվ իրավական ակտի ընդունման համար: Տեղական մակարդակով կարող են անցկացվել պլեբիսցիտային հանրաքվեի հետևյալ տարատեսակները՝ տեղական պաշտոնատար անձին կամ հանրային մարմնին անվստահություն հայտնելու հարցերով, ինչպես նաև վարչաիրավական հանրաքվեներ, որոնցով լուծվում են կառավարչական բնույթի հարցեր (ներառյալ վարչական-տարածքային բաժանման կամ վարչական միավորների սահմանների փոփոխության, պաշտոնատար անձանց լիազորությունների դադարեցման, տեղական հարկերի և տուրքերի հարցերը): Լինում են նաև տեղական ներկայացուցչական մարմինների լիազորությունների դադարեցման հանրաքվեներ: Գործով քննարկման ենթակա հանրաքվեն այս չափանիշով ոչ իրավաստեղծ կամ այլ հարցերով հանրաքվե է:

Ընդունված որոշման իրավական ուժի հատկանիշով հանրաքվեները լինում են որոշիչ և խորհրդատվական: Որոշիչ կամ իմպերատիվ հանրաքվեով ընդունված ակտն ունի վերջնական ու պարտադիր իրավական ուժ, իսկ խորհրդատվականը ժողովրդի կարծիքը վեր հանելու միջոց է: Խորհրդատվա-

կան հանրաքվեի նկատմամբ և՛ տեսության, և՛ իրավական պրակտիկայի վերաբերմունքը միանշանակ դրական չէ: Երբեմն գործնական իրավակիրառական պրակտիկայում այն գնահատվում է բացասական, միջոցների և ջանքերի անիմաստ ծախս¹: Խորհրդատվական հանրաքվեի տեսական անընդունելիությունը շեշտադրել է «Ժողովրդի նախաձեռնությամբ անցկացվող համաուկրաինական հանրաքվեի վերաբերյալ» Ուկրաինայի սահմանադրական դատարանի 2000թ. մարտի 27-ի որոշումը, ըստ որի՝ «Ժողովրդի կամքը չի կարող կրել խորհրդատվական բնույթ: Ուստի, խորհրդատվական հանրաքվեները կորցրել են իրենց արդիականությունը Ուկրաինայում»²:

Հանրաքվեի ժողովրդավարականության կարևոր բնութագրերից է անցկացման նախաձեռնող-սուբյեկտի հիմնահարցը: Բնական է, որ հանրաքվեի անցկացման նախաձեռնության իրավունք ունենան և՛ հանրային իշխանության ներկայացուցչական (կամ գործադիր) մարմինները, և՛ քաղաքացիների խումբը: Քաղաքացիների նախաձեռնած հանրաքվեն անվանում են հանրագրային (պետիցիոն): Հանրաքվեի որևէ տեսակում, հատկապես տեղական, եթե չկա քաղաքացիների նախաձեռնությամբ անցկացման կարգ, ապա այն չի կարող լինել ժողովրդավարական, որովհետև հանրագրային հանրաքվեն կարևոր հակակշիռ է հանրային իշխանության քաղաքականությանը³: Հանրագրային հանրաքվեները միշտ լրացուցիչ են, այլ ոչ թե պարտադիր: Դրանք այլընտրանք են հանրային իշխանության մարմիններին այն դեպքում, երբ քաղաքացիներն ընդդիմանում են նրանց: Եթե հանրաքվեի, այն էլ տեղական, անցկացման կարգում նախատեսված չէ դրա նախաձեռնում քաղաքացիների կողմից, ուրեմն այն տեղական իշխանության քմահաճույքից կախված քաղաքական միջոց է, այլ ոչ թե ժողովրդաիշխանության արդյունավետ և գործուն ձև:

Հանրաքվեի կարևոր հիմնահարցերից է դրա քվորումի և որոշման ընդունման անհրաժեշտ ձայների քանակի հարցը: Հանրաքվեի չափից դուրս գաժը քվորումը քաղաքական ուժերի ձեռքին այն կարող է դարձնել ամբոխա-

¹ Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված է միայն որոշիչ հանրաքվե (տե՛ս Федеральный конституционный закон РФ от 28 июня 2004 года N 5-ФКЗ “О референдуме Российской Федерации” (С изменениями и дополнениями от 6 апреля 2015 г.), ч. 2, ст. 83): Դրան հակառակ՝ խորհրդատվական հանրաքվեն ամրագրված է Իսպանիայում (տե՛ս Spanish Constitution (Ratified by the spanish people in the referendum of December 7, 1978, http://www.congreso.es/portal/page/portal/Congreso/Congreso/Hist_Normas/Norm/const_espa_texto_ingles_0.pdf, 04. 04. 2014, 17:18), Շվեդիայում («Կառավարման ձևի մասին» 1974 թ. Ակտով (տե՛ս The Constitution of the Kingdom of Sweden. The Instrument of Government (SFS nr: 1974:152, <http://www.parliament.am/library/sahmanadrutyunner/Sweden.pdf>, 10. 06. 2016, 14:58):

²Տե՛ս http://www.uchebnikonline.com/pravo/referendne_pravo_ukrayini_-_pogorilko_vf/vid_i_referendumiv_ukrayini.htm (02. 02. 2015, 11:50)):

³Քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի ինստիտուտը կարևորում են նաև այլ հետազատողներ (տե՛ս Գ. Գանիբյան «Հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի վերանայման հիմնարար ուղղությունները», Պետության և իրավունք, ՀՀ իրավաբանների միություն, թիվ 3-4 (65-66), էջ 17-18):

վարական միջոց՝ իրենց նեղ կյանային հարցերին լեզավարություն ու լեզվատիրություն հաղորդելու համար: Ցածր քվորումով ընդունված որոշումն անշուշտ օրինական-լեզավ է ձևական առումով, սակայն դա չի նշանակում, որ այն ունի լեզվատիրության բարձր աստիճան: Հետևաբար՝ այս նուրբ հարցում անհրաժեշտ է ապահովել պատշաճ կարգավորում:

2. 1995թ. Սահմանադրությամբ ճանաչվում և կարգավորվում էր միայն համազգային հանրաքվեն: «Հանրաքվեի մասին» 1991թ. օրենքը, սահմանելով տեղական հանրաքվեի անցկացման հնարավորությունը, կարգավորում էր միայն համապետական հանրաքվեների անցկացման ընթացակարգը: Սակայն համապետական հանրաքվեի սահմանադրական կարգավորումը շատ ընդհանուր էր՝ առանց իրավական հիմունքները մանրամասնելու, ինչը ստեղծում էր գործող օրենսդրության մեջ օրենսդրական հակաժողովրդավարական նորամուծություններ կատարելու վտանգ:

2002թ. փետրվարի 6-ին ընդունվեց «Տեղական հանրաքվեի մասին» օրենքը, որով ժողովրդաիշխանության կենսագործման կառուցակարգում ի հայտ եկավ տեղական հանրաքվեն: Օրենքի 1-ին հոդվածը տեղական հանրաքվեն բնորոշում էր որպես «տվյալ համայնքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համայնքային նշանակության կարևոր հարցերով քվեարկություն»: Սակայն այդ օրենքով տեղական հանրաքվեն հնարավոր էր անցկացնել միայն համայնքներ կոչված վարչական միավորումներում՝ բացառելով այլ տարբերակներ:

«Տեղական հանրաքվեի մասին» 2002թ. օրենքն ըստ անցկացման պարտադիրության, սահմանում էր միայն լրացուցիչ (ֆակուլտատիվ) տեղական-համայնքային հանրաքվեի ինստիտուտը: Պարտադիր հանրաքվե նախատեսված չէր: Համայնքային հանրաքվեն վերաժվում էր հանրային-իշխանական մարմինների կառավարման հնարավոր այլընտրանքի, այդ կառավարումը լրացնող հարցի լուծման եղանակի, որը կանցկացվեր միայն նախաձեռնող սուբյեկտների դրական հայեցողության դեպքում:

«Տեղական հանրաքվեի մասին» 2002թ. օրենքի համաձայն՝ տեղական հանրաքվեն բացառող հանգամանք էր համարում տեղական հանրաքվեի անցակցումը մերժելու մասին համայնքի ավագանու որոշումը: Նման լուծումը մեր կարծիքով արդյունավետ չէր: «Տեղական հանրաքվեի մասին» 2002թ. օրենքը ճանաչում էր միայն իմպերատիվ հանրաքվեի ինստիտուտը:

Տեղական հանրաքվեի անցկացման նախաձեռնող սուբյեկտի հարցը «Տեղական հանրաքվեի մասին» 2002թ. օրենքում ուներ պատշաճ կարգավորում: Օրենքը (հոդված 7) նախաձեռնության իրավունք էր վերապահում համայնքի ավագանուն, ղեկավարին, ինչպես նաև հանրաքվեի մասնակցելու ի-

րավունք ունեցող անձանց (քաղաքացիական նախաձեռնություն): Օրենքը նախատեսում էր նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու որոշման դատական բողոքարկման կարգ: Սակայն մարզային հանձնաժողովի կողմից ստորագրությունների ստուգման արդյունքում տեղական հանրաքվեի անցկացումը մերժելու մասին որոշման, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից հանրաքվեի նշանակման որոշման չընդունման կամ նշանակումը մերժելու մասին որոշումների դատական բողոքարկում նախատեսված չէր:

Տեղական ինքնակառավարման հարցում 2005թ. Սահմանադրությունն ուներ ակնհայտ հայեցակարգային թերություն: Ի տարբերություն համազգային մասշտաբի՝ տեղական ինքնակառավարման համակարգում իշխանությունը չէր դիտարկվում երկու հավասարազոր ենթահամակարգերից կազմված ամբողջություն: Սահմանադրության 107-րդ հոդվածի 1-ին մասի բնորոշմամբ՝ համայնքը, որն ուներ ինքնակառավարման իրավունք, դա իրականացնում էր տեղական ինքնակառավարման ընտրովի մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով: Այդպիսով՝ տեղական ինքնակառավարման համակարգում իշխանության իրականացման հիմնական ձև էր ճանաչվում ներկայացուցչական ժողովրդաիշխանության կառուցակարգը՝ ավագանին և համայնքի ղեկավարը: 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությունը տեղական հանրաքվեն դիտարկում էր ընդամենը համայնքի գործերի կառավարմանը համայնքի անդամի ուղղակի մասնակցության իրավունք: Հայեցակարգային այս բացթողումը բերեց նրան, որ համապետականի նմանությամբ տեղական-համայնքային մակարդակում ևս իրենց գերիշխանությունը հաստատեցին տեղական ինքնակառավարման ներկայացուցչական-ընտրովի մարմինները, ինչը ժողովրդաիշխանությանն սպառնացող վտանգ էր:

Ինչևէ, 2005 թվականի բարեփոխված Սահմանադրության 107-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում էր, որ՝ «Համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: Տեղական հանրաքվեների անցկացման կարգը սահմանվում է օրենքով»: Սահմանադրության «Տեղական ինքնակառավարումը» վերտառությամբ 7-րդ գլխում ի հայտ եկան տեղական հանրաքվեին նվիրված իրավակարգավորումներ, որոնք կարևոր նշանակություն ունեցան այդ ինստիտուտի ժողովրդավարականացման գործում. 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունը բարելավեց տեղական հանրաքվեի ինստիտուտը մի քանի ուղղություններով. ինստիտուտի հիմքերի սահմանադրական ամրագրում, պարտադիր տեղական հանրաքվեի սահմանում, բացի իմպերատիվ տեղական հանրաքվեներից՝ խորհրդատվական հանրաքվեի մասնակի դեպքի (համայնքների միացման կամ առանձնացման) նախատեսում, Երևան քաղաքին համայնքի կարգավիճակի շնորհում և

այստեղ տեղական հանրաքվե անցկացնելու սահմանադրական հնարավորության ստեղծում:

2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը նախատեսեց տեղական պարտադիր, սակայն արդյունքների իրավական նշանակությամբ խորհրդատվական հանրաքվեն: Սահմանադրության 110-րդ հոդվածի համաձայն՝ մինչև համայնքների միացման կամ առանձնացման կառավարության օրենսդրական նախաձեռնության ներկայացումը, կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում էր տեղական հանրաքվեներ: Սակայն այդ հանրաքվեի արդյունքները խորհրդատվական նշանակություն ունեին⁴:

2015 թվականի սահմանադրական բարեփոխումների ընթացքում տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտը ենթարկվեց էական վերակառուցման: Այդ Սահմանադրության 183-րդ հոդվածը («Համայնքի գործերի կառավարման անմիջական մասնակցությունը») հատուկ կարգավորման է ենթարկում համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարման անմիջական եղանակների հարցը:

Գործող Սահմանադրությամբ ճանաչվում են համայնքային մակարդակում հասարակական գործերի կառավարման երկու ձևերը: Սահմանադրության 183-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն օգտագործում են «համայնքի գործերի անմիջական կառավարում» բանաձևը: Դա իր հերթին նշանակում է, որ Սահմանադրությունը համայնքային գործերի կառավարման կառուցակարգը տրոհում է երկու ձևի՝ ուղղակի-անմիջական և անուղղակի-միջնորդավորված (համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների): Որպես համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարման անմիջական մասնակցության ձևեր են ճանաչվում տեղական հանրաքվեն և օրենքով սահմանված այլ եղանակները:

2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 183-րդ հոդվածն ամրագրում է «համայնքի բնակիչների իրավունքն անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով»: Սահմանադրության 183-րդ հոդվածի 2-րդ մասը տեղական հանրաքվեի անցկացման կարգի, ինչպես նաև բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանը մասնակցելու այլ եղանակների սահմանումը թողել է օրգանական օրենքի վրա:

2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության հետ համեմատած՝ 2015 թվականի խմբագրությունը չի նախատեսում տեղական պարտա-

⁴ 2005թ. Սահմանադրության 110 հոդվածը սահմանում էր, որ տեղական հանրաքվեների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքներից:

դիր հանրաքվեի ինստիտուտը համայնքների միավորման կամ բաժանման դեպքում: Ըստ էության, 2005 թվականի խմբագրության իրավակարգավորման մեջ առկա լուծումը հակասական էր: Հակասականությունը դրսևորվում էր անցկացմամբ պարտադիր, սակայն արդյունքների իրավական ուժով խորհրդատվական բնույթում:

Սակայն, առաջընթացի հետ մեկտեղ, 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությանը բնութագրական են նաև որոշակի թերություններ և բացթողումներ: Ճանաչելով համայնքի գործերի լուծման անմիջական ձևերը՝ Սահմանադրության 179-րդ հոդվածը տեղական ինքնակառավարումը բնորոշում է որպես «տեղական ինքնակառավարման մարմինների իրավունք ու կարողություն ... լուծելու համայնքային նշանակության հարցերը»: Չուտ ձևական տրամաբանության դիրքերից բխում է, որ եթե համայնքային գործերի կառավարումն ունի անմիջական ձևեր, և Սահմանադրությունը ճանաչում է դրանց գոյության իրավունքը, ապա 179-րդ հոդվածը տեղական ինքնակառավարման բնորոշմանը պետք է ավելացներ նաև համայնքի բնակիչներին՝ որպես «իրավունք և կարողություն ունեցող» ինքնակառավարման մասնակիցներ: Դա բխում է ոչ միայն ձևական տրամաբանության պահանջներից, այլ նաև ժողովրդաիշխանության սկզբունքի ազատական բովանդակությունից:

2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը ճանաչում է տեղական հանրաքվեի միայն մեկ մակարդակ: Այլ տեսակներ սահմանված չեն ո՛չ Սահմանադրությամբ, ո՛չ էլ օրենքով: Հենց միայն այն հանգամանքը, որ Սահմանադրության 189-րդ հոդվածը միջհամայնքային միավորումը ճանաչում է հանրային իրավունքի իրավաբանական անձ, հուշում է, որ կարելի էր նախատեսել նաև միջհամայնքային հանրաքվե:

Տեղական հանրաքվեի սահմանադրական կարգավորման տեսլականը շատ ընդհանուր է: Այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, որովհետև չի կոնկրետացնում տեղական հանրաքվեի արդյունավետության բովանդակության հիմնական չափանիշները, որոնք են առարկան, նախաձեռնող սուբյեկտները, որոշման ընդունման ձայների քանակը: Այդպիսի կարգավորումը հղի է վտանգով՝ օրենսդրի կողմից չեզոքացնելու կամ վերացնելու տեղական հանրաքվեի ինստիտուտի այն ժողովրդավարական չափանիշները, որոնք քայլ առ քայլ ամրագրվել են օրենսդրությամբ: Որ դա հնարավոր է, ցույց է տալիս համազգային հանրաքվեի ինստիտուտի օրենսդրական վերակառուցումը 1995-2001 թվականներին, երբ ոչ պատշաճ սահմանադրական կարգավորումը հնարավորություն տվեց օրենսդրին հետ կանգնել անկախության առաջին տարիների որոշ ժողովրդավարական օրենսդրական լուծումներից:

2018 թվականի հունիսի 13-ին ընդունվեց «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը: Այդ օրենքը, ըստ տեղական մակարդակների, նախատեսում է միայն համայնքային հանրաքվեն: Օրենքով ամրագրված տեղական հանրաքվեն, ըստ անցկացման եղանակի, միայն լրացուցիչ է: Տեղական պարտադիր հանրաքվեի որևէ տարբերակ չի նախատեսված: Տեղական հանրաքվեի նախաձեռնության իրավունք վերապահվում է համայնքի ավագանուն, ղեկավարին, հանրաքվեի մասնակցելու իրավունք ունեցող անձանց: «Տեղական հանրաքվեի մասին» 2018 թվականի օրենքի 4-րդ հոդվածի նորմատիվ բովանդակության վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ հնարավոր է անցկացնել նաև տեղական վստահության հանրաքվե, որովհետև այն ուղղակիորեն չի արգելված: Օրենքով տեղական հանրաքվեի կարող են դրվել տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերը: Տեղական հանրաքվեի անցկացումը բացառող հանգամանքներ են միայն արտակարգ և ռազմական դրությունը: Քաղաքացիական նախաձեռնությամբ տեղական հանրաքվեն չի կարող մերժվել համայնքային մարմինների կողմից, եթե օրենքի խախտումներ չկան:

Անցկացման նախաձեռնող-սուբյեկտի հիմնահարցը «Տեղական հանրաքվեի մասին» 2018թ. օրենքը լուծում է պատշաճորեն: Նախաձեռնության իրավունք վերապահում է համայնքի ավագանուն, ղեկավարին, ինչպես նաև հանրաքվեի մասնակցելու իրավունք ունեցող անձանց (քաղաքացիական նախաձեռնություն): Վերջին կարգով տեղական հանրաքվեի նախաձեռնելու ընթացակարգը նոր օրենքով արձանագրել է առաջադիմություն, քանի որ գործընթացի մասնակից սուբյեկտ է դարձել կենտրոնական ընտրական հանձնաժողովը, նախատեսվել է տեղական հանրաքվեի նշանակումը մերժող համայնքի ղեկավարի որոշման դատական բողոքարկման կարգ:

Այս համատեքստում 2019 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-307-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 5-ին) «Տեղական հանրաքվեի մասին» օրենքի վիճարկվող դրույթները լրացվել են, որի համաձայն՝ այդ օրենքի 4-րդ հոդվածը լրացվել է 1.1-ին մասով, 6-րդ հոդվածը լրացվել է 2-րդ մասով, իսկ 8-րդ հոդվածի 1-ին մասը «7-րդ» բառից հետո լրացվել է «7.1-ին» բառով: Տեղական հանրաքվեի նախաձեռնման ու անցկացման հիմնական ընդհանուր կարգը լրացվել է հատուկ կարգավորմամբ՝ նվիրված համայնքների միավորման ու բաժանման հանրաքվեին: Հիմնական և էական տարբերությունն այն է, որ այս հանրաքվեն կարող է նախաձեռնվել միայն քաղաքացիական նախաձեռնության կարգով:

3. Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ Սահմանադրական դատարանը գնահատում է ըստ տարածքային մակարդակի՝ միայն համայնքային, ըստ անկացման եղանակի՝ լրացուցիչ (ֆակուլտատիվ), ըստ անցկացման առարկայի՝ ոչ թե իրավաստեղծ, այլ համայնքների միավորման կամ բաժանման հարցով ընդունված որոշման իրավական ուժի հատկանիշով խորհրդատվական, նախաձեռնման կարգով հանրագրային, քվորումի և որոշման ընդունման անհրաժեշտ ձայների քանակի տեսանկյունից լեգիտիմության ցածր աստիճան ունեցող հանրաքվեն, որի վերաբերյալ 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը չունի ուղղակի իրավակարգավորում: Սահմանադրության 190-րդ հոդվածը պարզ ու հասկանալի սահմանում է. «Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը»:

Արդի աշխարհում ինչպես համազգային, այնպես էլ տեղական մակարդակում տարածված են ժողովրդաիշխանության բազմաթիվ ձևեր, որոնց մի մասն ունի սահմանադրական, մյուսը՝ օրենսդրական ամրագրման ձև: Տեղական ինքնակառավարման մակարդակում անմիջական ժողովրդաիշխանության վճռական ինստիտուտներ են ընտրությունները, որոշիչ հանրաքվեն, բնակիչների ժողովի որոշումը (ընտրություն կամ որոշման ընդունում), ինչպես նաև նրանց քվեարկությունները տարբեր հարցերով: Բացի դրանից, կան նաև բազմաթիվ «մասնակցության ձևեր», որոնցից են՝ խորհրդատվական հանրաքվեն, ժողովրդական հարցումը, հանրագիրը (պետիցիան), իրավաստեղծ նախաձեռնությունը, տեղական քննարկումները և լումները, ընդհանուր ժողովները, տեղական ինքնակառավարումը, ինչպես նաև հանրային լումները խորհրդարանում, այլ մարմիններում, մունիցիպալ կազմավորումների ընդհանուր ժողովներում, հանրային մարմիններին կից գործող հասարակական խորհրդակցական խորհուրդները, սոցիոլոգիական հարցումները և այլն: Ի վերջո քաղաքացիական նախաձեռնություններ են քաղաքացիների դիմումները հանրային մարմիններին, հանրահավաքները, երթերը, ցույցերը, պիկետավորումը:

Ծիշտ է, Հայաստանի Հանրապետությունում վերը թվարկված բոլոր ձևերը չեն ամրագրված, սակայն դրանց մեծագույն մասի կիրառման իրավական հնարավորությունները կան, և ընդ որում դրանց մեծ մասը համայնքների կարծիքի վերհանման, օբյեկտիվ իրավիճակն արտահայտող, ավելի արդյունավետ ու խնայողական միջոցներ են, քան համայնքի ղեկավարի կողմից նախաձեռնվող, համայնքների միավորման համար միայն համայնքային, քվորումի և որոշման ընդունման ձայների քանակի տեսանկյունից լեգիտիմության ցածր աստիճան ունեցող խորհրդատվական հանրաքվեն:

4. Հիմք ընդունելով այս պատճառարանությունները՝ գտնում եմ, որ «Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի և Կոտայքի մարզի «Նոր Հանն» համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը ենթակա էր կարճման:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ՎԱԳԱՐՇՅԱՆ

24 մայիսի 2021 թվականի



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՀՌՈՄՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՔՐԵԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
1959 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մայիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թուլնյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արդարադատության նախարարի տեղակալ Ք. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի նոյեմբերի 22-ին Հռոմում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

Իտալիայի Հանրապետության միջև «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հունվարի 30-ի N 84-Ա որոշմամբ 2019 թվականի նոյեմբերի 22-ին Հռոմում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի մարտի 11-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. 2019 թվականի նոյեմբերի 22-ին Հռոմում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 22-ին Հռոմում՝ քրեական հարցերով փոխադարձ օգնության, ներառյալ՝ իրավական օգնության որոշակի ձևերի մասով երկու երկրների միջև համագործակցությունը բարելավելու նպատակով:

«Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2001 թվականի նոյեմբերի 21-ին՝ Ազգային ժողովի Ն-229-2 որոշմամբ՝ վերապահումներով և հայտարարություններով (ՄԴՈ-324):

2. Հայաստանի Հանրապետությունը և Իտալիայի Հանրապետությունը Համաձայնագրին և «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) դրույթներին համապատասխան՝ պարտավորվում են միմ-

յանց տրամադրել հնարավորինս լայնածավալ փոխադարձ օգնություն քրեական գործերով, որոնք ներառում են Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ կետում սահմանված գործողությունները:

Ըստ Համաձայնագրի՝ փոխադարձ օգնության մասին խնդրանքները կարող են ուղարկվել անմիջապես Հայցող կողմի դատական մարմինների կողմից Հայցվող կողմի դատական մարմիններին, և պատասխանը կարող է հետ ուղարկվել նույն ուղիներով՝ այդ խնդրանքների պատճենը փոխանցելով Եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետում նշված մարմիններին:

3. Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա Համաձայնագրով ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- որպես Հայցվող կողմ՝ օգնության մասին խնդրանքն ստանալուց հետո հետևել Հայցող իտալական կողմի կողմից նշված ընթացակարգերին, եթե այդ ընթացակարգերը չեն հակասում ՀՀ ներպետական իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին, և ապահովել խնդրանքի կատարումը հնարավորինս արագ՝ հաշվի առնելով Հայցող իտալական կողմի կողմից նշված ցանկացած պայման (Հոդված 2, կետ 1),

- հետախուզման կամ քրեական հետապնդման մեջ գտնվող անձի հարցաքննության նպատակով լուսմներ կատարելու խնդրանքը տեսակոնֆերանսի միջոցով կատարելու պարագայում երաշխավորել, որ այն կկատարվի տվյալ անձի համաձայնությամբ, եթե դա չի հակասում Պայմանավորվող կողմերի ներպետական օրենսդրությանը, և այդ դեպքում լսման ենթակա անձի պաշտպանին թույլատրել ներկայանալ նշված անձի գտնվելու վայր կամ Հայցող կողմի դատական մարմին՝ նրան նշված անձի հետ հեռակա գաղտնի հաղորդակցման հնարավորություն տալով (Հոդված 4, կետ 2),

- ապահովել, որ տեսակոնֆերանսի միջոցով լուսմները տեղի ունենան բոլոր դեպքերում, երբ լսման կամ հարցաքննման ենթակա անձը կալանքի տակ է գտնվում ՀՀ տարածքում (Հոդված 4, կետ 3),

ապահովել, որ տեսակոնֆերանսի միջոցով լուսմների մասով կիրառվեն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 7-րդ կետում շարադրված դրույթները (Հոդված 4, կետ 7),

- ապահովել, որ Հայցող իտալական կողմի խնդրանքով անհապաղ ստուգվի՝ արդյոք քրեական հետախուզման կամ հետապնդման ենթարկվող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը նույնականացվել է, Հայցվող հայկական կողմի տարածքում տեղակայված որևէ բանկում կամ որևէ այլ վարկային կամ ֆինանսական հաստատությունում չունի բանկային հաշիվ(ներ)՝ Հայցող իտալական կողմին տրամադրելով համապատասխան տեղեկություն, ներառյալ՝ այդ հաշիվներն օգտագործելու թույլտվություն ունեցող ցանկացած

անձի ինքնության, վերջինիս գտնվելու վայրի և դրանց առնչվող ցանկացած գործարքի մասին տեղեկությունը (Հոդված 5, կետ 1),

- ապահովել, որ Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսվող օգնության տրամադրումը չմերժվի բանկային գաղտնիք լինելու հիմքով (Հոդված 5, կետ 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի նոյեմբերի 22-ին Հռոմում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 մայիսի 2021 թվականի
ՍԴՈ-1594



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՀՌՈՍՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՔՐԵԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
1959 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՅԻԱՅԻ
ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ԿԱՅՑՅՎԱԾ
ՍԴՈ-1594 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2019 թվականի նոյեմբերի 22-ին Հռոմում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի Եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մայիսի 18-ի ՍԴՈ-1594 որոշմամբ որոշել է, որ 2019 թվականի նոյեմբերի 22-ին Հռոմում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի Եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 18-ի ՍԳՈ-1594 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1594 որոշմամբ 2019 թվականի նոյեմբերի 22-ին Հռոմում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի Եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանա-

դրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական

¹Համեմատ իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ավաճի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում են, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է 2021 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված՝ թղթային տարբերակով գրություն, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն, և որին կից, ի թիվս այլնի, ներկայացվել է Կառավարության՝ 2020 թվականի հունվարի 30-ի թիվ 84-Ա որոշման պատճենը: Միաժամանակ պարզվել է, որ դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակա-

ռավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում ներկայացված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդ-**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

վաճին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է ներկայացված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամիտիեղով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության դրոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարատյություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

18 մայիսի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԳՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մայիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդ-
կարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՐ ♦ 2(102)2021

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2020 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի մարտի 4-ի N 278-Ա որոշմամբ 2020 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Նշված որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի մարտի 11-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. «Անկախ պետությունների համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի մայիսի 29-ին՝ Համաձայնագրի մասնակից պետությունների կրթական կազմակերպությունների (հաստատությունների) (այսուհետ՝ կրթական կազմակերպություններ) ռեսուրսների օգտագործմամբ համատեղ բարձրագույն կրթության, լրացուցիչ մասնագիտական ծրագրերի/լրացուցիչ կրթության կրթական ծրագրերի իրագործման ցանցային ձևի ներդրման միջոցով կադրերի պատրաստման որակը բարձրացնելու նպատակով:

Քննության առարկա Համաձայնագրի կնքումը բխում է 1997 թվականի հունվարի 17-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության միասնական (ընդհանուր) կրթական տարածության ձևավորման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրով ստանձնած պարտավորություններից (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1999 թվականի նոյեմբերի 9-ին՝ Ազգային Ժողովի Ն-026-2 որոշմամբ (ՍԳՈ-128)՝ «Անկախ պետությունների համագործակցության միասնական (ընդհանուր) կրթական տարածքի կազմավորման ուղղությամբ համագործակցման մասին» վերտառությամբ):

2. Համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության, Բելառուսի Հանրապետության կառավարության, Ղազախստանի Հանրապետության կառավարության, Ղրղզստանի Հանրապետության կառավարության, Ռուսաստանի Դաշնության կառավարության, Տաջիկստանի Հանրապետության կառավարության և Ուզբեկստանի Հանրապետության կառավարության միջև: 2020 թվականի դեկտեմբերի 22-ի դրությամբ Համաձայնագիրն ուժի մեջ չի մտել, իսկ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված ընթացակարգերը կատարվել են միայն Ռուսաստանի Դաշնության կողմից:

Համաձայնագրով Կողմերը հիմնադրում են ԱՊՀ ցանցային համալսարան (այսուհետ՝ ԱՊՀ ՑՀ)՝ բարձրագույն կրթության, լրացուցիչ մասնագիտական ծրագրերի/ լրացուցիչ կրթության կրթական ծրագրերի մասնագիտությունների և (կամ) պատրաստման ուղղությունների գծով կադրերի պատրաստման, համատեղ գիտական ու գիտատեխնիկական նախագծերի իրագործման համար, որոնք առաջնահերթ նշանակություն ունեն Համաձայնագրի մասնակից պետությունների տնտեսական և սոցիալական զարգացման գործում:

ԱՊՀ ՑՀ-ն Համաձայնագրի մասնակից պետությունների բարձրագույն կրթության այն կրթական կազմակերպությունների (այսուհետ՝ գործընկեր կազմակերպություններ) ցանցն է, որոնք միավորվել են Համաձայնագրի նպատակների և բարձրագույն կրթության և լրացուցիչ մասնագիտական կրթության համատեղ կրթական ծրագրերի (այսուհետ՝ համատեղ կրթական ծրագրեր) իրագործման համար գործընկեր կազմակերպությունների ռեսուրսների օգտագործմամբ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում համատեղ կրթական ծրագրերով նախատեսվող՝ ուսուցում իրականացնելու, ուսումնական և արտադրական պրակտիկաներ և ուսումնական գործունեության այլ տեսակներ անցկացնելու համար ռեսուրսներ ունեցող՝ ԱՊՀ մասնակից պետությունների այլ կազմակերպությունների և հաստատությունների մասնակցությամբ:

ԱՊՀ ՑՀ-ի գործունեության հիմնական ուղղություններն են՝ գործընկեր կազմակերպությունների բազայի հիման վրա կրթական գործունեության իրականացումը՝ Համաձայնագրի մասնակից պետությունների սովորող քաղաքացիների ակադեմիական շարժունության հիման վրա, փոխհամաձայնեցված մասնագիտությունների և (կամ) պատրաստման դասընթացների ուղղությունների մասով համատեղ կրթական ծրագրերի ձևավորումը, համատեղ կրթական ծրագրերով ուսուցման գործընթացում նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրումը, ԱՊՀ ՑՀ-ի շրջանակներում համատեղ գիտական և գիտատեխնիկական նախագծերի իրագործումը, աջակցությունը Համաձայնագրի մասնակից պետություններում սպորտ ազգերի լեգուների, մշակույթների

և ավանդույթների ուսումնասիրմանը, ինչպես նաև ԱՊՀ ՑՀ-ի գործունեության՝ Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությանը շահակասող այլ ուղղություններ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- ապահովել ԱՊՀ ՑՀ-ի կողմից տրամադրվող կրթական ծառայություններին Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների հավասար հասանելիություն՝ անկախ ազգությունից, սեռից, տարիքից, դավանանքից, ռասայից, լեզվից, ծագումից, բնակության վայրից, առողջական վիճակից, սոցիալական և գույքային դրությունից (Հոդված 4, պարբերություն 1),

- Հայաստանի Հանրապետության գործընկեր կազմակերպություններում ուսուցման համար Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների ընդունելությունը և Հայաստանի Հանրապետության գործընկեր կազմակերպություններում նրանց ուսուցումը համատեղ կրթական ծրագրերի շրջանակներում կատարել Համաձայնագրին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և գործընկեր կազմակերպությունների միջև այն պայմանագրին համապատասխան, որում նշվում են համատեղ կրթական ծրագրի տեսակը, մակարդակը և (կամ) ուղղվածությունը (որոշակի մակարդակի, տեսակի և (կամ) ուղղվածության՝ համատեղ կրթական ծրագրի մասերը), սովորողների կարգավիճակը, համատեղ կրթական ծրագրով ուսուցման ընդունելության կանոնները, սովորողների ակադեմիական շարժունությունը կազմակերպելու կարգը, համատեղ կրթական ծրագրով կրթական գործունեություն իրականացնելու պայմանները և կարգը, այդ թվում՝ գործընկեր կազմակերպությունների միջև պարտավորությունների բաշխումը, համատեղ կրթական ծրագրի իրագործման կարգը, յուրաքանչյուր գործընկեր կազմակերպության կողմից օգտագործվող ռեսուրսների բնույթն ու ծավալը, կրթության և (կամ) որակավորման մասին վկայող՝ տրվող փաստաթուղթը կամ փաստաթղթերը, ինչպես նաև այն գործընկեր կազմակերպությունները, որոնց կողմից տրվում են նշված փաստաթղթերը, գործընկեր կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի գործողության ժամկետը, դրա փոփոխման և գործողության դադարեցման կարգը (Հոդված 4, պարբերություն 2),

- որպես ընդունող կողմ հանդես գալու պարագայում՝ Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների ուսուցումը գործընկեր կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի շրջանակներում իրականացնել Հայաստանի Հանրապետության բյուջեով կրթության զարգացման համար նախատեսված հատկացումների հաշվին՝ նշված անձանց վճարելով կրթաթոշակներ և գործընկեր կազմակերպությունների հանրակացարաններում

նրանց տրամադրելով բնակելի տարածքներ՝ Հայաստանի Հանրապետության բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին սովորող քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց միջոցների հաշվին՝ վճարովի կրթական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրին համապատասխան, ԱՊՀ մասնակից պետությունների կողմից ստեղծված հիմնադրամների հատկացումների հաշվին և ֆինանսավորման այլ աղբյուրներից ստացվող միջոցների հաշվին, որոնց գործունեությունը չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը (Հոդված 4, պարբերություն 3),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության գործընկեր կազմակերպություններում համատեղ կրթական ծրագրերի ուսուցումն իրականացվի ռուսերենով (Հոդված 4, պարբերություն 4),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և գործընկեր կազմակերպությունների միջև կնքված պայմանագրին համապատասխան ԱՊՀ ՑՀ-ի շրջանավարտներն ստանան կրթության մասին և (կամ) Հայաստանի Հանրապետության այն գործընկեր կազմակերպությունների կողմից տրված որակավորման մասին վկայող փաստաթղթեր, որոնցում ԱՊՀ ՑՀ-ի շրջանավարտներն անցել են ուսուցումը (Հոդված 4, պարբերություն 5),

- ԱՊՀ ՑՀ-ի գիտամանկավարժական աշխատողներին և սովորողներին տրամադրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ակադեմիական իրավունքներն ու ազատությունները (Հոդված 4, պարբերություն 6),

- Հայաստանի Հանրապետության գործընկեր կազմակերպությունների ուսումնամեթոդական, վարչատնտեսական և կազմակերպչական գործունեության ֆինանսավորումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան գործընկեր կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի հիման վրա, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից միջոցների ներգրավմամբ (Հոդված 6, պարբերություն 1),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության ուղարկող մարմինները՝ ԱՊՀ մասնակից պետությունների կազմակերպությունների հետ համատեղ, կրեն ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի անդամների, ԱՊՀ ՑՀ-ի գործընկեր կազմակերպությունների և գլխամասային կազմակերպության ներկայացուցիչների՝ ԱՊՀ ՑՀ-ի միջոցառումներին մասնակցելու մասով գործուղման հետ կապված բոլոր ծախսերը (Հոդված 6, պարբերություն 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2020 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 մայիսի 2021 թվականի
ՍԴՈ-1595



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2020 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1595 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2020 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մայիսի 18-ի ՍԴՈ-1595 որոշմամբ որոշել է, որ 2020 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 18-ի ՍԴՈ-1595 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱՎՈՐ ♦ 2(102)2021

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1595 որոշմամբ 2020 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանն դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահ-

մանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավոր

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

րությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի համարվոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ավաճի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանի դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղե-

կատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկույթյան ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող ղիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված ղիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով ղիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարանն ղիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարանն ղիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարանն ղիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով ղիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով ղիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առ-

կա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարանն դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանն դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարանն էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **ենթօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անիտիկելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

18 մայիսի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մայիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ոստիկանության պետի տեղակալ Ա. Ֆիդանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի սեպտեմբերի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի մարտի 4-ի N 270-Ա որոշմամբ 2018 թվականի սեպտեմբերի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի մարտի 11-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի սեպտեմբերի 28-ին Դուշանբեում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի ապահովման նպատակով:

2. Համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության կողմից (այսուհետ՝ Կողմեր):

3. Կողմերը՝ Համաձայնագրին, ազգային օրենսդրությանը և այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակիցն են իրենք, համագործակցում են՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործ-

ծությունների կանխարգելումը, հայտնաբերումը, կանխումը, բացահայտումն ու քննությունն ապահովելու նպատակներով:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2020թ. մարտի 12-ին. այն ուժի մեջ է Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության համար:

5. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպական և իրավական միջոցներ՝ Համաձայնագրի դրույթները կատարելու համար (հոդված 2, կետ 2),

- ձգտել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարի բնագավառում Հայաստանի Հանրապետության և Կողմերի օրենսդրության մոտարկմանը (հոդված 2, կետ 3),

- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում որպես քրեորեն պատժելի ճանաչել դիտավորությամբ կատարված հետևյալ արարքները՝ տեղեկատվության ոչնչացում, բլոկավորում, ձևափոխում կամ պատճենահանում, տեղեկատվական (համակարգչային) համակարգի աշխատանքի խախտում՝ օրենքով պահպանվող համակարգչային տեղեկատվությանը չարտոնված մուտքի միջոցով, վնասաբեր ծրագրերի ստեղծում, օգտագործում կամ տարածում, համակարգչային համակարգի շահագործման կանոնների խախտում դրան հասանելիություն ունեցող անձի կողմից, ինչը հանգեցրել է օրենքով պահպանվող համակարգչային տեղեկատվության ոչնչացման, բլոկավորման կամ ձևափոխման, եթե այդ արարքն էական վնաս կամ ծանր հետևանքներ է առաջացրել (հոդված 3, կետ 1, ենթակետեր «ա» , «բ» , «գ»),

- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում որպես քրեորեն պատժելի ճանաչել դիտավորությամբ կատարված նաև հետևյալ արարքները՝ գույքի հափշտակում՝ համակարգչային համակարգում մշակվող, մեքենայական կրիչներով պահվող կամ տվյալների փոխանցման ցանցերով փոխանցվող տեղեկատվությունը փոփոխելու միջոցով, կամ համակարգչային համակարգի մեջ կեղծ տեղեկատվություն ներմուծելու միջոցով, կամ օրենքով պահպանվող համակարգչային տեղեկատվությանը չարտոնված հասանելիության հետ գույքորդամբ, անչափահասի պատկերով պոռնկագրական նյութերի կամ պոռնկագրական առարկաների տարածում՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցի կամ էլեկտրոնային կապի այլ ուղիների օգտագործմամբ, պաշտպանված համակարգչային համակարգին կամ ցանցին չար-

տոնված հասանելիություն ստանալու հատուկ ծրագրային կամ ապարատային միջոցների պատրաստում՝ իրացման նպատակով, կամ իրացում (հոդված 3, կետ 1, ենթակետեր «դ», «ե» , «զ»),

- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում որպես քրեորեն պատժելի ճանաչել դիտավորությամբ կատարված նաև հետևյալ արարքները՝ հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող համակարգչային համակարգերի և տվյալների բազաների ապօրինի օգտագործում, ինչպես նաև հեղինակության յուրացում, եթե այդ արարքն էական վնաս է պատճառել, սահմանված կարգով ծայրահեղական ճանաչված կամ ահաբեկչական գործունեության իրականացման կամ ահաբեկչության արդարացման կոչեր պարունակող նյութերի տարածում՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցի կամ էլեկտրոնային կապի այլ ուղիների օգտագործմամբ (հոդված 3, կետ 1, ենթակետեր «ե», «ը»),

- ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում Կողմերի համագործակցությունն իրականացվի անմիջականորեն իրավասու մարմինների միջև, ինչպես նաև սահմանել և Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցագիրը հանձնելիս ավանդապահին փոխանցել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների ցանկը, ցանկի փոփոխությունների դեպքում այդ մասին անհապաղ ծանուցել ավանդապահին (հոդված 4, կետեր 1 և 2),

- ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մյուս Կողմերի իրավասու մարմինների հետ համագործակցեն հետևյալ ձևերով՝ տեղեկատվության փոխանակում, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունների և դրանց հետ կապ ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերյալ, նշված ոլորտում հանցագործությունների կանխարգելման, հայտնաբերման, կանխման, բացահայտման և քննության ձևերի ու մեթոդների վերաբերյալ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կատարման եղանակների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կանխարգելման, հայտնաբերման, կանխման, բացահայտման և քննության հետ կապված հարցերը կարգավորող՝ Կողմերի ազգային օրենսդրության կամ միջազգային պայմանագրերի վերաբերյալ (հոդված 5, կետ « ա»),

- ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մյուս Կողմերի իրավասու մարմինների հետ համագործակցեն նաև հետևյալ ձևերով՝ տեղեկատվության ստացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին հարցումների կատարում, օպե-

րատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին հարցումների կատարում, համակարգված միջոցառումների ու գործողությունների պլանավորում և անցկացում՝ ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կանխարգելմանը, հայտնաբերմանը, կանխմանը, բացահայտմանն ու քննությանը, ինչպես նաև աջակցության ցուցաբերում՝ կադրերի նախապատրաստման ու որակավորման բարձրացման գործում, այդ թվում՝ մասնագետների ստաժավորման անցկացման, համաժողովների, սեմինարների ու ուսումնական դասընթացների կազմակերպման միջոցով (հոդված 5, կետեր «բ», «գ», «դ»),

- ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մյուս Կողմերի իրավասու մարմինների հետ համագործակցեն նաև հետևյալ ձևերով՝ տեղեկատվական համակարգերի ու ծրագրային արտադրանքի ստեղծում, որոնք ապահովում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կանխարգելման, հայտնաբերման, կանխման, բացահայտման և քննության հետ կապված խնդիրների կատարումը, հրապարակումների ու գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակում, համատեղ գիտական հետազոտությունների անցկացում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարի՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ նորմատիվ-իրավական ակտերի, գիտատեխնիկական գրականության փոխանակում (հոդված 5, կետեր «ե», «գ», «է»),

- ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մյուս Կողմերի իրավասու մարմինների հետ համագործակցեն նաև հետևյալ ձևերով՝ ծրագրային արտադրանքի ու որոշումների փոխանակում, որոնք օգտագործվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կանխարգելման, հայտնաբերման, կանխման, բացահայտման և քննության գործում, ինչպես նաև տվյալների համակարգչային համակարգերում պահվող տեղեկությունների պահպանվածության անհապաղ ապահովման մասին հարցում և փոխադարձ ընդունելի այլ ձևեր (հոդված 5, կետեր «ը», «թ», «ժ»),

- որպես հարցում ստացող Կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմնի կողմից նշված ժամկետներում հարցման լիարժեք և որակյալ կատարումն ապահովելու համար (հոդված 7, կետ 1),

- որպես հարցում ստացող Կողմ՝ ապահովել, որ հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմինն անհապաղ ծանուցվի հարցման կատարումը խոչընդոտող կամ կատարումն էապես ուշացնող հանգամանքների մասին (հոդված 7, կետ 2),

- հարցման կատարումը հարցում ստացող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի լիազորությունների շրջանակներում չգտնվելու դեպքում ապահովել, որ հարցում ստացող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն այն անհապաղ փոխանցի Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավասու մարմնին և այդ մասին ծանուցի հարցման նախաձեռնողին (հոդված 7, կետ 3),

- ապահովել, որ հարցում ստացող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմնին հնարավորինս սեղմ ժամկետներում տեղեկացնի հարցման կատարման արդյունքների մասին (հոդված 7, կետ 7),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն ապահովեն Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկությունների, այդ թվում՝ հարցում ստանալու փաստի ու դրա բովանդակության գաղտնիությունը, եթե հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմինն անցանկալի է համարում դրա հրապարակումը (հոդված 8, կետ 1),

- ապահովել, որ հարցման կատարման ժամանակ գաղտնիության պահպանման անհնարիության դեպքում հարցում ստացող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն այդ մասին տեղեկացնի հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմնին՝ այդպիսի պայմաններում հարցման կատարման հնարավորության մասին որոշում ընդունելու համար (հոդված 8, կետ 2),

- ապահովել, որ հարցումը կատարելու արդյունքները չօգտագործվեն առանց հարցումը ստացող և դրանք տրամադրած Կողմի իրավասու մարմնի համաձայնության՝ դրանց հարցման և տրամադրման նպատակներից տարբեր այլ նպատակներով (հոդված 9, կետ 1),

- ապահովել, որ հարցում ուղարկող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը պահպանի հարցում ստացող Կողմի իրավասու մարմնի կողմից սահմանված՝ հարցման արդյունքների օգտագործման սահմանափակումները (հոդված 9, կետ 2),

- ապահովել, որ հարցում ուղարկող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից Համաձայնագրի հիման վրա ստացված տեղեկությունները երրորդ կողմին փոխանցելու դեպքում, առկա լինի տեղեկությունները տրամադրած՝ հարցում ստացող Կողմի իրավասու մարմնի նախնական գրավոր համաձայնությունը (հոդված 10):

Համաձայնագրով սահմանվում է, որ վերջինիս ուժի մեջ մտնելու օրվանից Համաձայնագրի մասնակից պետությունների միջև հարաբերություններում «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ համակարգչային տեղեկատվության ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» 2001 թվականի հունիսի 1-ի համաձայնագրի գործողությունը դադարում է (հոդված 17, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի սեպտեմբերի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 մայիսի 2021 թվականի
ՍԴՈ - 1596



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ» «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՏԵՂԵԿԱՑՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ԿԱՅՑՎԱԾ
ՍԴՈ-1596 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2018 թվականի սեպտեմբերի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մայիսի 18-ի ՍԴՈ-1596 որոշմամբ որոշել է, որ 2018 թվականի սեպտեմբերի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 18-ի ՍԴՈ-1596 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1596 որոշմամբ 2018 թվականի սեպտեմբերի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանա-

դրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական

¹Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը և ս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համա-

պատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն

ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է « Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային

ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանաձևանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանաձևանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար սպացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային

ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ « Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագրվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանա-**

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(102)/2021 ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦

որական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լինե՞ր Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անհուսիելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, « Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը « Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

18 մայիսի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 թվականի Հոկտեմբերի 23-ին ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԳՐԻ (ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ
ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ԱՆՁՆԱԳՐԻ) ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՑ
ՄԵՔԵՆԱՅԻ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ»**

**2014 թվականի Օգոստոսի 15-ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ
ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ
(ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մայիսի 2021թ.

Մահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

ՍԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Սիմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հունիսի 23-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությամբ (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հունվարի 16-ի N26-Ա որոշմամբ հավանություն է տվել 2018 թվականի հունիսի 23-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և այդ Արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Վերոնշյալ որոշման Հավելվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն Արձանագրությունը վավերացնում է հետևյալ վերապահումով՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, այլ զորքերի

տրանսպորտային միջոցների, ինքնագնաց մեքենաների ու տեխնիկայի այլ տեսակների և հատուկ ծառայությունների տրանսպորտային միջոցների վրա» :

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մարտի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ Արձանագրությունը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Չ Ե Ց**.

1. Արձանագրությունն ստորագրվել է 2018 թվականի հունիսի 23-ին Մոսկվա քաղաքում՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու համար՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների ազատ շրջանառության համար համապատասխան պայմաններ ապահովելու և տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի միասնական ձևի կազմման կարգ սահմանելու նպատակով:

2. «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կարգավորում է Կողմերի պետությունների տարածքներում արտադրված և գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և որպես տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակներ), ինքնագնաց մեքենաներ թողարկված տեխնիկայի այլ տեսակների համար անձնագրերի միասնական ձևի կիրառման հետ կապված հարցերը, ինչպես նաև Կողմերի պետությունների տարածքներում գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների համար՝ որոնք ձևակերպված են

ՍԱՀՄԱՆԱԿՐՈՂՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

որպես տրանսպորտային միջոցներ, ինքնագնաց մեքենաներ և տեխնիկայի այլ տեսակներ, էլեկտրոնային անձնագրերի կիրառման հետ կապված հարցերը:

3. Համաձայնագրի իրականացման նպատակով ձևավորվում է Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինների (կազմակերպությունների) և տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակներ), ինքնագնաց մեքենաներ և տեխնիկայի այլ տեսակներ արտադրող կազմակերպությունների Միասնական պաշտոնական գրանցամատյան, որոնք իրականացնում են տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի ձևակերպում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի ձևակերպում (այսուհետ՝ Միասնական գրանցամատյան):

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. մինչև տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգերի գործողությունը կիրառել տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի միասնական ձև (Համաձայնագրի հոդվ. 3, պարբերություն 3),

4.2. մինչև տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևի կիրառումը տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերը ձևակերպել Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն (Համաձայնագրի հոդվ. 3, պարբերություն 6),

4.3. ապահովել, որ մինչև տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրի կիրառումը՝ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների),

ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերը ձևակերպվեն տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների՝ Միասնական գրանցամատյանում գրանցված արտադրող կազմակերպությունների (այսուհետ՝ Արտադրող կազմակերպություններ) կողմից՝ որպես նրանց կողմից արտադրված տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակներ), ինքնագնաց մեքենաներ և տեխնիկայի այլ տեսակներ (Համաձայնագրի հոդվ. 5, պարբերություն 1),

4.4. ապահովել, որ մինչև տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրի կիրառումը՝ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ձևակերպվեն նաև Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների (կազմակերպությունների) կողմից (Համաձայնագրի հոդվ. 5, պարբերություն 2),

4.5. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կողմից հաստատված մարմինները (կազմակերպությունները) որոշեն տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի պաշտպանական տարբերին ուղղված պահանջները՝ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի միասնական ձևի պահանջներին համապատասխան, և ներկայացնեն այն Կողմերի պետությունների մարմիններին, որոնք իրականացնում են տրանսպորտային միջոցների պետական գրանցում, և Կողմերի պետությունների այն մարմիններին, որոնք իրականացնում են պետական գրանցում ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների համար (Համաձայնագրի հոդվ. 6) և այլն:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի հունիսի 23-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությամբ (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 մայիսի 2021 թվականի
ՍԴՈ-1597



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ « 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝
«ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԳՐԻ
(ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ԱՆՁՆԱԳՐԻ)
ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՑ ՄԵՔԵՆԱՅԻ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՅԼ
ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1597 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Մահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2018 թվականի հունիսի 23-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությամբ (կից վերապահումով) ամրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021

գրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մայիսի 18-ի ՄԴՈ-1597 որոշմամբ որոշել է, որ 2018 թվականի հունիսի 23-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությամբ (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 18-ի ՄԴՈ-1597 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում էմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1597 որոշմամբ 2018 թվականի հունիսի 23-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությամբ (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում,

քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախա-

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

տեսված **Էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. մյան եզրահանգման հիմքում

պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և

պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է 2021 թվականի մարտի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված՝ թղթային տարբերակով գրություն, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն, և որին կից, ի թիվս այլնի, ներկայացվել է Կառավարության՝ 2020 թվականի հունվարի 16-ի թիվ 26-Ա որոշման պատճենը: Միաժամանակ պարզվել է, որ դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմա-

նադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում ամկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և դիմումի վրա ամկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս

ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում են, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ըն-

դուների համարելու պայմաններում անգամ սույն դեպքում ներկայացված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է ներկայացված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անհիտիելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, « Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ սույլալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ սույլալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

18 մայիսի 2021 թվականի



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԿ ԵՐԵՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 94-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ
109-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 հունիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Հայկ Երեմյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի, Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետ Գ. Աթանեսյանի և Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

2(102)2021

ՍԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵԴԵԿՎԱԿԻՐ ♦

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայկ Երեմյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 5-րդ մասի և 109-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (ՀՕ-95-Ն, այսուհետ՝ Դատական օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 10-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Դատական օրենսգրքի՝ «Բարձրագույն դատական խորհրդի ակտերը և դրանց ընդունման կարգը» վերնագրով 94-րդ հոդվածի 5-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառված շարադրանքով սահմանում է.

«5. Դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների, ներստյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները կազմելու և հաստատելու, նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին Հանրապետության նախագահին առաջարկելու դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ գաղտնի քվեարկությամբ» :

Դատական օրենսգրքի՝ «Բարձրագույն դատական խորհրդի ակտերը և դրանց ընդունման կարգը» վերնագրով 94-րդ հոդվածի 5-րդ մասը փոփոխվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Ազգային ժողովի կողմից 2020 թվականի մարտի 25-ին ընդունված ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքով, որի 23-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն «Օրենքի 94-րդ հոդվածում՝ (...) 2) 5-րդ մասի «գաղտնի քվեարկությամբ» բառերը փոխարինել «խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ» բառերով.» :

Դատական օրենսգրքի՝ «Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի կազմումը և հաստատումը» վերնագրով 109-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկության արդյունքներով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմվում է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակ, որում ընդգրկվում են անհրաժեշտ քանակին հավասար քանակի առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած հավակնորդները» :

Գործի քննության առիթը Հայկ Երեմյանի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով Դատական օրենսգրքի վերաբերելի դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումը

Դիմումի առարկան Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ և 109-րդ հոդվածի 4-րդ մասերի՝ Բարձրագույն դատական խորհրդի, ինչպես նաև դատարանների կողմից իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, սահմանադրականության հարցն է:

Ըստ դիմողի՝ Բարձրագույն դատական խորհուրդը և դատարանները Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ և 109-րդ հոդվածի 4-րդ մասերին տվել են հակասահմանադրական մեկնաբանություն, որի արդյունքում խախտվել են դիմողի՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով ամրագրված՝ հանրային ծառայության անցնելու և 50-րդ հոդվածով ամրագրված՝ պատշան վարչարարության իրավունքները:

Դիմողի կարծիքով վիճարկվող դրույթներին դատարանների կողմից տրված մեկնաբանությունը, ըստ որի՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թիվը Սահմանադրության 174-րդ հոդվածով սահմանված թիվն է՝ տասը, և, հետևաբար, երբ օրենքը որոշումներ կայացնելու համար պահանջում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն, անհրաժեշտ է առնվազն վեց «կողմ» կամ «դեմ» ձայն, օրենքի դրույթների գուտ քերականական մեկնաբանություն է, որի պարագայում հաշվի չի առնվել Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու իրավունքները հարգելու և պաշտպանելու հանրային իշխանության պարտականությունը:

Դիմողը գտնում է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամի թափուր հաստիքին ձայնի իրավունք վերապահելը և այդ ձայնը քննարկվող դեպքում հավակնորդի դեմ մեկնաբանելն օրենքի հակասահմանադրական մեկնաբանություն է, քանի որ նման մեկնաբանությամբ ակնհայտ անհավասար պայմաններ են ստեղծվում այն հավակնորդների միջև, որոնք հարցազրույցի են մասնակցում մի դեպքում՝ Բարձրագույն դատական խորհրդի բոլոր տասն անդամների, մյուս դեպքում՝ չհամարված կազմի, իր դեպքում՝ ութ անդամների մասնակցությամբ, քանի որ առաջին դեպքում հարցազրույցի փուլն անցնելու համար անհրաժեշտ է ձայների 60%-ի, իսկ երկրորդ դեպքում՝ 75%-ի ապահովում:

Դիմողի կարծիքով՝ Բարձրագույն դատական խորհրդի ամբողջական, համարված կազմի բացակայության պայմաններում պետք է օրենսդրական այնպիսի կարգավորում նախատեսված լինի, որ քաղաքացու վերաբերյալ որո-

շում ընդունելիս այդ որոշման կայացմանը մասնակից չդարձած անդամների ձայներն ի սկզբանե չյիտվեն որպես դեմ, հակառակ դեպքում տեղ է գտնում անարդար մոտեցում, ինչն էլ բերում է Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի հիմնական իրավունքների և ազատությունների խախտման:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողի դիրքորոշմամբ վիճարկվող իրավադրույթները համապատասխանում են Սահմանադրությանը, քանի որ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար Դատական օրենսգրքի 97-րդ հոդվածում նախատեսված են ընդհանուր հիմքերը, իսկ դատավորի պաշտոնի առանձնահատկություններից ելնելով՝ նախատեսվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու հստակ կառուցակարգ՝ որակավորման գրավոր քննություն և հարցազրույց: Անձի՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ հաջորդ պայմանը տվյալ թեկնածուի օգտին Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնության «կողմ» ձայների առկայությունն է, ինչը համահունչ է Սահմանադրության 49-րդ հոդվածին և Սահմանադրական դատարանի կողմից այս սահմանադրական դրույթին տրված մեկնաբանություններին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն սահմանադրաիրավական վեճի բովանդակությունը ոչ ամբողջական կազմով Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումների ընդունման համար որպես մեծամասնության հաշվարկի հիմք Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թիվը (10 անդամ) ընդունելն է, որի արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի տվյալ նիստից բացակա անդամների ձայները չեն համարվում «կողմ» քվեարկած ձայներ:

Սույն գործի քննությամբ Սահմանադրական դատարանը գնահատում է վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը՝ Սահմանադրության 49-րդ հոդվածին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին և 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և նույն հոդվածի 4-րդ մասին համապատասխանության շրջանակում: Վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե՝

3.1. արդյոք Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ մասով և 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումները համապատասխանում են Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերի և 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և նույն հոդվածի 4-րդ մասի պահանջներին:

3.2. արդյոք Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ մասով և 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումները համապատասխանում են Սահմանադրության 49-րդ հոդվածով սահմանված «*ընդհանուր հիմունքներ*» -ին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ «*Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով*» :

Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ «*Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը*» :

Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից*» :

Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «*Բարձրագույն դատական խորհուրդը՝ կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները*» :

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով*» :

4.2. Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի շրջանակներին՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է.

«4.1. Սահմանադրության 49-րդ հոդվածի առաջին նախադասության համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Ընդ որում, այս հիմնական իրավունքը՝ իր սահմանադրական ձևակերպման շրջանակներում, որևէ սահմանափակման ենթակա չէ, սակայն այն կանոնակարգող մանրամասները պետք է սահմանվեն օրենքով (Սահմանադրության 49-րդ հոդվածի երկրորդ նախադասություն):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 49-րդ հոդվածի ձևակերպումներից հետևում է, որ հանրային ծառայության անցնելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորված է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, այս իրավունքի իրականացման համար օրենսդիրը պարտավոր է ապահովել ընդհանուր հիմքեր՝ բացառելով որևէ խտրականություն:

Մյուս կողմից՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի իրականացման կառուցակարգերը կարող են էսպես տար-

բերվել միմյանցից՝ կախված հանրային պաշտոնի առանձնահատկություններից և հանրային ծառայության տեսակից» :

4.3. Հանրային իշխանության կոլեգիալ մարմնի գործունեության առանձնահատկությունները 2017 թվականի նոյեմբերի 10-ի ՍԴՈ-1384 որոշմամբ քննարկելիս Սահմանադրական դատարանն արձանագրել է.

«6. ... վեճի առարկա իրավակարգավորումների առանձնահատկություններն առաջին հերթին պայմանավորված են ընդհանրապես հանրային իշխանության կոլեգիալ մարմնի և, մասնավորապես՝ համայնքի ավագանու իրավագործության որոշման հատկեցմամբ, ելնելով հատկապես այն մեկնակետից, որ» **քվորումը» հանրային իշխանության կոլեգիալ (ներկայացուցչական) մարմնի կամաարտահայտման իրացման (այս կամ այն լիազորության իրականացման) առաջնահերթ (պարտադիր) իրավական պայմանն է:**

Իրավագիտական առումով «կոլեգիալություն» եզրույթի բնորոշումը հիմնականում հանգում է հետևյալին. **կոլեգիալությունը կառավարման սկզբունք է, որի պայմաններում ղեկավարումն իրականացվում է մի խումբ լիազորված անձանց կողմից: Կոլեգիալության կարգով որոշումների կայացումը ենթադրում է կարծիքների նախնական քննարկում և կոլեկտիվ քննարկման արդյունքում պաշտոնական փաստաթղթի մշակում ու ընդունում:**

Հանրային իշխանության իրականացումն ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ սկզբունքներով սահմանադրաիրավական պայման է, որն անմիջականորեն բխում է ՀՀ Սահմանադրության անփոփոխելի 2-րդ հոդվածի իրավակարգավորումից և պայմանավորված է կառավարման ժողովրդավարական սկզբունքների շարունակական իրացման անհրաժեշտությամբ: Կոլեգիալ կառավարման անհրաժեշտությունը, մասնավորապես, նպատակ ունի բազմակարծության ասպեկտի մասին (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված), սուբյեկտիվիզմի և կամայականության հաղթահարման, ինչպես նաև հանրության օբյեկտիվ շահերի առավել արտահայտման միջոցներով երաշխավորել տվյալ մարմնի առջև Սահմանադրությամբ և օրենքներով առաջադրված հանրային կարևորություն ունեցող գործառնությունների արդյունավետ իրականացումը:

Ելնելով այս կամ այն մարմնի իրավական կարգավիճակի (գործառնությունների շրջանակի) առանձնահատկություններից՝ հանրային իշխանության բնագավառում կոլեգիալ և միանձնյա կառավարման տարանջատման չափանիշներից են հանրային իշխանության մարմինների կողմից ընդունվող պաշտոնական փաստաթղթերի (որոշումների) ընդունման պայմաններն ու կարգը: Կոլեգիալ մարմինների հանրային-իշխանական գործունեության կարգավորման հիմքում առաջնահերթ կարևորվում են որոշում (կամ պաշտոնական այլ փաստաթուղթ) ընդունելու իրավական անհրաժեշտությունը, իսկ որոշ դեպքերում՝ հրատապությունը, մյուս կողմից՝ օբյեկտիվ պատճառներով կոլեգիալ մարմնի նիստին տվյալ մարմնի բոլոր անդամ-

ների մասնակցությունն ապահովելու անհնարինության պայմաններում այդ մարմնի բնականոն գործունեությունն ապահովող նվազագույն պայմանների, այն է՝ կոլեգիալ մարմնի անհրաժեշտ նվազագույն թվով անդամների մասնակցությամբ որոշումների ընդունման երաշխավորումը: Ընդ որում, դեպքերից որևէ մեկին նախապատվություն չի կարող տրվել: Անհրաժեշտ է ողջամիտ հավասարակշռություն նշված դեպքերի միջև՝ այն հաշվով, որպեսզի չխաթարվի ժողովրդավարական պետության էությունը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ այդպիսի հավասարակշռությունը ենթադրում է կոլեգիալ մարմնի նիստերին տվյալ մարմնի անդամների անհրաժեշտ այնպիսի թվաքանակի ներկայություն, որը ճանաչելի կդարձնի տվյալ մարմինը որպես այդպիսին, կերաշխավորի նրա կողմից լեգիտիմ որոշումներ կայացնելու կարողունակությունը: Այսինքն՝ կոլեգիալ մարմնի նիստի իրավագործության առումով կոլեգիալ մարմնի նիստին տվյալ մարմնի անդամների ընդհանուր թվի առնվազն պարզ մեծամասնության ներկայությամբ է պայմանավորվում ժողովրդավարական պետությունում կոլեգիալ մարմնի լեգիտիմ գործունեությունը»:

4.4. Սահմանադրության 49-րդ հոդվածով հռչակվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքը, որի իրականացման մանրամասների սահմանումը նույն հոդվածով վերապահվել է օրենսդրին: Սահմանադրության նշված հոդվածով նախատեսված իրավունքը պաշտպանվում էր 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 30.2-րդ հոդվածով նախատեսված դրույթով, որի 2-րդ մասը Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված «*հանրամասնելու*»-ի կարգավորումը օրենսդրի հայեցողությանը թողնելու փոխարեն նախատեսում էր, որ օրենսդրի կողմից կարգավորման ենթակա էին այս իրավունքի շրջանակում «*հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը*»:

4.5. Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքի պաշտպանությունը նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևով ընդունած «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրով, որի 25-րդ հոդվածի գ) կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնել պետական ծառայություն» :

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 2(102)2021

Մեկնաբանելով հիշյալ դրույթը՝ Միացյալ ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեն հաստատել էր, որ սույն իրավունքը չի երաշխավորում հանրային ծառայության մեջ աշխատանք՝ որպես վերջնարդյունք, այլ նման աշխատանք ստանալու արդարացի հնարավորություն: Հիշյալ դրույթը վերաբերում է քաղաքացիների իրավունքին՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության պաշտոններին հավակնելու հարցում: Կոմիտեն այս առումով հաստատել է, որ հանրային ծառայությանն անցնելու հավասար հիմունքներն ապահովելու համար անհրաժեշտ է, որ հանրային ծառայության անցնելու, հանրային ծառայության մեջ առաջխաղացման, պաշտոնանկության համար նախատեսված չափորոշիչները և վարույթներն ապահովեն օբյեկտիվության և ողջամտության պահանջները: Այս իրավունքի պաշտպանության համար հատուկ կարևորություն ունի հիշյալ դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով խտրականության արգելքի ապահովումը բոլոր այն քաղաքացիների նկատմամբ, որոնք նույն դաշնագրի 25-րդ հոդվածի գ) կետի համաձայն հավակնում են հանրային ծառայության (General Comment No. 25: The right to participate in public affairs, voting rights and the right of equal access to public service (Art. 25): 12/07/96. CCPR/C/21/Rev.1/Add.7, General Comment No. 25. (General Comments), para. 23):

4.6. Սահմանադրության 49-րդ հոդվածի և Սահմանադրության 81-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումների հաշվառմամբ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի գ) կետի համալիր վերլուծությունից բխում է, որ Սահմանադրության 49-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված հանրային ծառայության անցնելու իրավունքով սահմանադրորեն երաշխավորված է՝

ա) հանրային ծառայության անցնելու համար օրենսդրի կողմից ընդհանուր հիմունքներ սահմանված լինելու դեպքում Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության բացառումը,

բ) հանրային ծառայության անցնելու կամ հանրային ծառայության մեջ առաջխաղացման սահմանափակման կամ պաշտոնանկության կամ լիազորությունների այլ կերպ դադարեցման հիմքերը «*օբյեկտիվ և ողջամիտ*» չափանիշներին համապատասխանելու անհրաժեշտությունը:

4.7. Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացման մանրամասների սահմանումը սահմանադրի կողմից վերապահվել է օրենսդրի հայեցողությանը: Այսինքն՝ հանրային ծառայության անցնելու, դրանում առաջխաղացման և այն դադարելու և դադարեցնելու պայմանները, հիմքերը և կարգը սահմանվում են օրենքով:

Հետևաբար՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի ընթացակարգային կողմը լիովին վերապահված է օրենսդրի հայեցողությանը, որը, միաժամանակ, կաշկանդված է խտրականության սահմանադրական արգելքով հանրային ծառայության անցնելու (տես՝ ՄԴՈ-1488, կետ 4.1) և հանրային ծառայությանը միջամտության (տես՝ ՄԴՈ-1224, կետ 22) հիմքեր և պայմաններ սահմանելիս:

Միաժամանակ, Սահմանադրության 49-րդ հոդվածով օրենսդրին վերապահված ընդարձակ հայեցողության վերապահման նպատակը հանրային ծառայության պաշտոններում գործառույթների բազմազանության պայմանում այդ պաշտոններից յուրաքանչյուրի առանձնահատկություններին հանրային ծառայության անցնելու կառուցակարգերի համապատասխանությունն ապահովելն է (տես՝ ՄԴՈ-1488, կետ 4.1):

4.8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից բարձրացված խնդիրը՝ վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը, գտնվում է մի կողմից հանրային ծառայության անցնելու անհատական իրավունքի, իսկ մյուս կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման և գործունեության վերաբերյալ սահմանադրական կարգավորումների տիրույթում:

Որպես Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված անհատական իրավունքի իրացմանը վերաբերող ընթացակարգային կանոններ՝ վիճարկվող իրավադրույթները օրինականության սկզբունքի թելադրանքով նախ և առաջ պետք է համապատասխանեն դիմողի կողմից բարձրաձայնված խընդրին վերաբերելի մասով Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման և դրա կողմից որոշումների կայացման վերաբերյալ Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերի և 175-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի և նույն հոդվածի 4-րդ մասի պահանջներին:

Մասնավորապես, սահմանելով Բարձրագույն դատական խորհրդի կազմը և դրանում Ազգային ժողովի և դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվող անդամների թիվը՝ հինգական անդամ (Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-3 մասեր), ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները՝ սահմանադիրն այդ լիազորությունների իրականացման ընթացակարգային մանրամասների սահմանումը, որպես Բարձրագույն դատական խորհրդի գործունեության կարգի բաղադրիչ, պատվիրակել է օրենսդրին (Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-րդ մաս):

Այսինքն՝ Բարձրագույն դատական խորհրդի կազմում հավասարապես ներկայացված են օրենսդիր և դատական իշխանությունների կողմից ընտրված անդամները, ինչով և շահեկանորեն ընդգծված է այս ատյանի ժողովրդավարական լեգիտիմությունը, որպես պետական իշխանության 2 ճյուղերի կողմից համատեղ ձևավորված ատյան, որի սահմանադրական լիազորություններ

րի իրականացումը ապահովվում է պետական իշխանության նշված երկու ճյուղերի կողմից Բարձրագույն դատական խորհրդում ընտրված անդամների համաձայնությամբ:

Սահմանադրական դատարանը նկատում է, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորի թեկնածուի հավակնորդին համապատասխան ցուցակ ներառելու մասին կայացվող որոշումներն այս ատյանի ձևավորման վերը նշված նպատակին համահունչ կայացնելու համար օրենսդրի կողմից իրավացիորեն ընտրվել է որոշումների կայացման ձայների այնպիսի քանակ, որն ապահովի պետական իշխանության երկու ճյուղերից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համաձայնությունը, ինչը, տվյալ դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունն է՝ առնվազն 6 ձայն: Մա բխում է դատական իշխանության ձևավորման՝ ներառյալ դատավորներ նշանակելու ընթացակարգի բաղադրիչ համարվող մասերին վերաբերող որոշումներին առաջադրվող ժողովրդավարական լեգիտիմության պահանջից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավադրույթներով նախատեսված կարգն առնչվում է քաղաքացու՝ հանրային ծառայության, տվյալ դեպքում՝ դատավորի պաշտոնի անցնելու իրավունքին, այն նախատեսում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից այս տեսակի որոշումների ընդունման ընդհանուր կարգ՝ առանց թույլատրելի բացառության: Հաշվի առնելով, որ վիճարկվող իրավադրույթներով կայացվող որոշումները դասվում են դատական իշխանության դատարանակազմական կարևոր գործառնությունի առանցքային որոշումների շարքին, Սահմանադրական դատարանն արդարացված է համարում նման որոշումները Բարձրագույն դատական խորհրդի առնվազն 6 անդամների «կողմ» ձայներով ընդունելու մասին օրենսդրի ընտրությունը: Տվյալ դեպքում նման իրավակարգավորման նպատակը դատական իշխանության ձևավորման ընթացքում դատավորի պաշտոնի համար այնպիսի թեկնածուի ընտրությունն է, որն արժանացել է Բարձրագույն դատական խորհրդի անդամներից առնվազն վեցի հավանությանը, այսինքն՝ Բարձրագույն դատական խորհրդի այնքան անդամների համաձայնությամբ, որը բացառում է միայն դատավորների ընդհանուր ժողովի կամ միայն Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից որոշումների կայացումը՝ ապահովելով, որ դատավորի նշանակման այս առանցքային ընթացակարգում ապահովվի որոշումների կայացումը պետական իշխանության երկու ճյուղերի կողմից ընտրված անդամների համաձայնությամբ:

Հետևաբար՝ վիճարկվող իրավադրույթները բխում են Բարձրագույն դատական խորհրդի ստեղծման և գործունեության հիմքում ընկած սահմանադրի նպատակներից:

4.9. Դիմողի կողմից Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված՝ իր՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի շրջանակում բարձրացված հարցադրումը վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի չհամալրված կազմի կողմից որոշման կայացման դեպքում բացակա անդամների ձայների չափով քվեարկության վերջնարդյունքի՝ հանրային ծառայության անցնելու հավակնություն ունեցող անձի համար հնարավոր անբարենպաստելքին:

Վերահաստատելով կոլեգիալ մարմինների գործունեության արդյունավետության վերաբերյալ ՄԴՈ-1384 որոշմամբ վերը մեջբերված դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Բարձրագույն դատական խորհրդի գործունեության կարգավորման հիմքում առաջնահերթ կարևորվում է որոշում (կամ պաշտոնական այլ փաստաթուղթ) ընդունելու իրավական անհրաժեշտությունը, իսկ որոշ դեպքերում՝ հրատապությունը և որոշման նկատմամբ վստահության բարձր աստիճանը:

Վիճարկվող իրավադրույթներով որոշումների ընդունման նախատեսված կարգը, ըստ էության, օրենսդրի կողմից ընտրված այն տարբերակն է, որն առավելագույն չափով է ապահովում մրցակցող շահերի հավասարակշռությունը: Սահմանադրի վերը թվարկված նպատակների իրականացման հանրային շահն անտեսված կլիներ այն պայմաններում, երբ Բարձրագույն դատական խորհրդի նիստերից բացակա անդամների ձայները հաշվարկվելին որպես «կողմ», քանի որ այս իրավիճակում հնարավոր է դառնում Բարձրագույն դատական խորհրդի նիստին ներկա ընդամենը 2 «կողմ» ձայնի պայմաններում և 4 բացակա անդամի դեպքում ունենալ Հայաստանի Հանրապետության դատավորների թեկնածուների կամ թեկնածուի հավակնորդների, ինչպես նաև առաջխաղացման հնարավորություն ունեցող դատավորների թեկնածուների հաստատված ցուցակներ:

Սահմանադրական դատարանը ողջամիտ է համարում օրենսդրի՝ վիճարկվող իրավադրույթներով նախատեսված կարգով որոշումներ կայացնելու կարգի ընտրությունը, հաշվի առնելով, որ Սահմանադրությամբ սահմանված տառը հնարավոր ձայներից չորս ձայն ստացող հավակնորդով դատարան կազմակերպելը չի ապահովում դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության՝ ժողովրդավարական պետության համար ընդունելի բարձր աստիճանի ձևավորումը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավադրույթներով՝ Բարձրագույն դատական խորհրդի կող-

մից որոշում կայացնելու համար նախատեսված անհրաժեշտ ձայների քանակը ընդհանուր բնույթի պայման է և հավասարապես վերաբերում է դատավորի բոլոր թեկնածուներին և թեկնածուների հավակնորդներին՝ այսպիսով բավարարելով նաև Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված «ընդհանուր հիմունքներ» եզրի պահանջը:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրաձայնաձայն հանրային ծառայության անցնելու իր իրավունքին Բարձրագույն դատական խորհրդի չհամարված կազմով որոշում կայացնելով միջամտության հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս առնչությամբ դիմողի փաստարկը հիմնված է իր հետ անցկացված հարցազրույցին Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի (10 անդամի) մասնակցության դեպքում 6 «կողմ» ձայն հավաքելու հավանականության վրա: Սահմանադրական դատարանը նման հավանականությունը չի համարում բավարար Բարձրագույն դատական խորհրդի կողմից վիճարկվող իրավադրույթներով սահմանված կարգով որոշումների կայացմամբ անձի հանրային ծառայության անցնելու իրավունքին միջամտությունը հաստատված համարելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 5-րդ մասը և 109-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻՆՆՅԱՆ

10 հունիսի 2021 թվականի
ՍԳՈ-1598

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ
ԽՈՒՍԱՓԵԼՆ ՈՒ ՇՐՋԱՆՑԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդ-
կարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հուլիսի 8-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի մարտի 18-ի N 360-Ա որոշմամբ 2019 թվականի հուլիսի 8-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մարտի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Չ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի հուլիսի 8-ին Սինգապուրում՝ պետություններից մեկում կամ երկուսում հարկման ենթակա անձանց ծավալած գործունեությունից ստացվող եկամուտներից գանձվող հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու նպատակով՝ առանց հնարավորություններ ստեղծելու հարկերից խուսափելու կամ դրանք շրջանցելու միջոցով հարկման բացառման կամ նվազեցված հարկման համար:

Համաձայնագրով սահմանվում են պայմանավորվող պետությունների ռեզիդենտ հանդիսացող անձանց՝ հարկման ենթակա գույքը և եկամուտների տեսակները, որոնց կապակցությամբ էլ պայմանավորվող պետությունները ձեռք են բերում համապատասխան իրավունքներ և պարտականություններ, որոնք դրսևորվում են նրանով, որ մի պայմանավորվող կողմը, տվյալ պարագայում՝ Հայաստանի Հանրապետությունը, պարտավորություն է ստանձնում ձեռնպահ մնալ Սինգապուրի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձանց ստացած այն եկամուտը կամ գույքը հարկելուց, որի հարկման իրավասությունը Համաձայնագրով վերապահված է մյուս պայմանավորվող կողմին և ընդհակառակը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

– Համաձայնագիրը կիրառել շահութահարկի և եկամտային հարկի նկատմամբ (Հոդված 2, կետ 3, ենթակետ «բ»),

– Համաձայնագիրը կիրառել նաև նմանատիպ կամ էապես համանման ցանկացած հարկի նկատմամբ, որը կսահմանվի Համաձայնագրի ստորագրման օրվանից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն, ինչպես նաև ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Սինգապուրի Հանրապետության իրավասու մարմիններին ծանուցեն Հայաստանի Հանրապետության հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին (Հոդված 2, կետ 4),

– Սինգապուրի Հանրապետության ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով իրականացվելու դեպքում ապահովել, որ այդ ձեռնարկության շահույթը Հայաստանի Հանրապետությունում հարկվի միայն այն չափով, որքանով վերագրելի է այդ մշտական հաստատությանը (Հոդված 7, կետ 1),

– չհարկել Սինգապուրի Հանրապետության ռեզիդենտ ընկերության կողմից վճարված շահաբաժիններն այն դեպքում, երբ Սինգապուրի Հանրապետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում Հայաստանի Հանրապետությունից, բացառությամբ Համաձայնագրի 10-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի (Հոդված 10, կետ 6),

– չհարկել Սինգապուրի Հանրապետության ռեզիդենտ ընկերության չբաշխված շահույթն ընկերության չբաշխված շահույթից զանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են Հայաստանի Հանրապետությունում առաջացող շահույթից կամ եկամտից (Հոդված 10, կետ 6),

– ապահովել, որ Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում զանձված հարկերը չգերազանցեն տոկոսի համախառն գումարի 5 տոկոսը. չնայած վերոհիշյալին՝ ազատել հարկումից տոկոսները, որոնք առաջանում են Հայաստանի Հանրապետությունում և վճարվում Սինգապուրի Հանրապետության կառավարությանը, կամ ստացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից երաշխավորված վարկերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից երաշխավորված վարկերի), կամ վճարվում են բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարությանը պատկանող ցանկացած ֆինանսական կազմակերպության (Հոդված 11, կետեր 1, 2 և 3-րդ կետի պարբերություն 1),

– ապահովել, որ Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում գանձվող հարկերը չգերազանցեն տոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը (Հոդված 12, կետեր 1 և 2),

– Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշվածից տարբեր ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելանը չհարկել, եթե գույքն օտարողը Սինգապուրի ռեզիդենտ է (Հոդված 13, կետ 4),

– հաշվի առնելով Համաձայնագրի 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը և համանման ենթակա այլ վարձատրությունները, հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում, եթե այդպիսի աշխատանքը չի իրականացվում Սինգապուրի Հանրապետությունում (Հոդված 14, կետ 1),

– Համաձայնագրի 14-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում, չնայած նույն հոդվածի 1-ին կետի դրույթներին, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կողմից Սինգապուրի Հանրապետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում (Հոդված 14, կետ 2),

– Համաձայնագրի 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չկիրառել այն եկամտի նկատմամբ, որը ստացվում է Սինգապուրի Հանրապետությունում արվեստի գործչի կամ մարզիկի իրականացրած գործունեությունից, այն դեպքում, երբ Սինգապուրի Հանրապետություն կատարած այցն ամբողջովին կամ հիմնականում ֆինանսավորվել է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի կամ վերջիններիս վարչատարածքային ստորաբաժանումների, իշխանության տեղական մարմինների կամ օրենքով սահմանված մարմինների պետական միջոցներից, կամ այդ գործունեությունը հաստատվել է երկու Պայմանավորվող պետությունների կողմից՝ նրանց միջև մշակութային կամ մարզական փոխանակման ծրագրերի շուրջ համաձայնության շրջանակներում. վերոհիշյալ դեպքում՝ եկամուտը Հայաստանի Հանրապետությունում ենթակա է հարկման արվեստի գործչի կամ մարզիկի Հայաստանի Հանրապետության ռեզիդենտության պարագայում (Հոդված 16, կետ 3),

– չհարկել Սինգապուրի Հանրապետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման, իշխանության տեղական մարմնի կամ օրենքով սահմանված մարմնի կողմից վճարված՝ այդ պետությանը կամ ստորաբաժանմանը կամ մարմնին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը և համանման այլ վարձատրությունները (Հոդված 18, կետ 1, ենթակետ «ա»),

– չնայած Համաձայնագրի 18-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ չհարկել Սինգապուրի Հանրապետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման, իշխանության տեղական մարմնի կամ օրենքով սահմանված մարմնի կողմից կամ նրանց ստեղծած հիմնադրամներից այդ պետությանը կամ ստորաբաժանմանը կամ մարմնին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրություններ, սակայն այդպիսի կենսաթոշակները և համանման այլ վարձատրություններ ենթակա են հարկման միայն Հայաստանի Հանրապետությունում, եթե ֆիզիկական անձն Հայաստանի Հանրապետության ռեզիդենտն ու քաղաքացին է (Հոդված 18, կետ 2),

– չհարկել ուսանողի կամ փորձնակի, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանելը հանդիսացել է Սինգապուրի Հանրապետության ռեզիդենտ, և որը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, Հայաստանի Հանրապետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջացել են այդ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից (Հոդված 19),

– ազատել հարկումից ֆիզիկական անձին, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Հայաստանի Հանրապետություն մեկնելը հանդիսացել է Սինգապուրի Հանրապետության ռեզիդենտ, և որը Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համալսարանի, քոլեջի, դպրոցի, թանգարանի կամ մշակութային այլ հաստատության հրավերով կամ մշակութային փոխանակման պաշտոնական ծրագրի շրջանակներում այդպիսի հաստատություններում դասավանդելու, դասախոսություններ կարդալու կամ հետազոտություններ կատարելու նպատակով գտնվում է Հայաստանի Հանրապետությունում իրար հաջորդող 2 տարին չգերազանցող ժամկետով՝ պայմանով, որ այդպիսի վարձատրությունն առաջացել է Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրից (Հոդված 20),

– եթե Հայաստանի Հանրապետության ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը, Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել Սինգապուրում, ապա թույլատրել այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից հանել Սինգապուրում վճարված եկամտահարկին հավասար գումար, սակայն այդպիսի մասհանումը չպետք է գերազանցի մասհանումը տրամադրելուց առաջ հաշվարկված եկամտահարկի այն մասը, որը վերագրվում է այն եկամտին, որը կարող է հարկվել Սինգապուրում (Հոդված 22, կետ 2, ենթակետ «ա»),

– Սինգապուրի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետությունում չենթարկել որևէ այլ կամ առավել ծանր հարկման կամ

դրա հետ կապված որևէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց միևնույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (Հոդված 23, կետ 1),

– ապահովել, որ Մինգապուրի Հանրապետության ձեռնարկության Հայաստանի Հանրապետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը Հայաստանի Հանրապետությունում չլինի պակաս բարենպաստ, քան միևնույն գործունեությունն իրականացնող Հայաստանի Հանրապետության ձեռնարկության հարկումը (Հոդված 23, կետ 2),

– ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով մասհանել տոկոսները, ժոյալթիները և Հայաստանի Հանրապետության ձեռնարկության Մինգապուրի Հանրապետության ռեզիդենտին կատարած մյուս վճարումներն այն նույն պայմաններով, որոնցով դրանք կվճարվեին Հայաստանի Հանրապետության ռեզիդենտին վճարելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 7-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետերի դրույթները. նույն կերպ մասհանել Հայաստանի Հանրապետության ձեռնարկության ցանկացած պարտք՝ Մինգապուրի Հանրապետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկվող գույքը որոշելու նպատակով, այն նույն պայմաններով, որոնցով այն կմասհանվեր Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի դեպքում (Հոդված 23, կետ 3),

– Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվում է Մինգապուրի Հանրապետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, Հայաստանի Հանրապետությունում չենթարկել որևէ այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության այլ նման ձեռնարկությունները (Հոդված 23, կետ 4),

– Համաձայնագրի 23-րդ հոդվածի դրույթները կիրառել Համաձայնագրի կարգավորման առարկա հանդիսացող հարկերի նկատմամբ (Հոդված 23, կետ 6),

– երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Մինգապուրի Հանրապետության իրավասու մարմինների հետ կփոխանակեն տեղեկություններ, որոնք պատշաճ կհամարվեն Հայաստանի Հանրապետության և Մինգապուրի Հանրապետության կամ նրանց վարչատարածքային ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից կիրառվող ցանկացած տեսակի և բնույթի հարկերի առնչությամբ Համաձայնագրի դրույթների իրականացման կամ ներպետական օրենքների

կիրառման կամ կատարման համար այնքանով, որքանով դրանց հիման վրա հարկումը չի հակասում Համաձայնագրին (Հոդված 25, կետ 1),

– երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն կդիտարկվի գաղտնի այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան ստացված տեղեկությունը, և կհաղորդվի միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են Համաձայնագրի 25-րդ հոդվածի 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ զանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, դրանց կապակցությամբ բողոքարկումների քննմանը կամ վերոնշյալի վերահսկմանը, ինչպես նաև երաշխավորել, որ այդ անձինք կամ մարմինները տեղեկությունը կօգտագործեն միայն այդպիսի նպատակների համար (Հոդված 25, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի հունիսի 8-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 հունիսի 2021 թվականի
ՄԴՈ-1599



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ
ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՆ ՈՒ
ՇՐՋԱՆՑԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ
ՄԴՈ-1599 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2019 թվականի հուլիսի 8-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մինգաչուրի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի հունիսի 15-ի ՄԴՈ-1599 որոշմամբ որոշել է, որ 2019 թվականի հուլիսի 8-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մինգաչուրի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)/2021

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 15-ի ՍԴՈ-1599 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1599 որոշմամբ 2019 թվականի հուլիսի 8-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021

դրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնն ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկույթյան ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչատոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակա-

ռավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագրվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օ-**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021

րենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անփոփեղով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի փարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

15 հունիսի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1994 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հունիսի 1-ին ստորագրված՝ «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հունվարի 30-ի N 87-Ա որոշմամբ 2018 թվականի հունիսի 1-ին ստորագրված՝ «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մարտի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը, Արձանագրության հավելվածը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ համապատասխանաբար՝ Համաձայնագիր և Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի հունիսի 1-ին Դուշանբե քաղաքում՝ Համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով:

2. Համաձայնագիրը վավերացվել է Հանրապետության Նախագահի 1995 թվականի դեկտեմբերի 9-ի ՆՀ-531 հրամանագրով (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996թ. փետրվարի 26-ին):

Արձանագրությունը Ադրբեջանի Հանրապետության կողմից ստորագրվել է վերապահումով, ըստ որի՝ բացառությամբ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 4-րդ կետի, Համաձայնագրում շարադրված ոչ մի իրավունք, պարտականություն և դրույթ Ադրբեջանի Հանրապետության կողմից չի կիրառվի Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

3. Արձանագրության վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության կողմից վերապահում ներկայացնելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է հատուկ կարծիք՝ նշելով, որ Համաձայնագրի ոչ մի իրավունք, պարտականություն և դրույթ Հայաստանի Հանրապետության կողմից չի կիրառվի Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ, քանի դեռ չի կարգավորվել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որը Ադրբեջանի

Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ էթնիկ զտումների քաղաքականության կիրառման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ռազմական ագրեսիայի սանձազերծման հետևանք է:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Համաձայնագրի տեքստը փոփոխել Արձանագրության անբաժանելի մաս կազմող հավելվածին (այսուհետ՝ Հավելված) համահունչ, որտեղ ներկայացված է Համաձայնագրի նոր խմբագրությամբ շարադրված տեքստը:

5. Հավելվածով սահմանված բովանդակությամբ փոփոխվում են Համաձայնագրի նախաբանը, վերջաբանը, Համաձայնագրի 1-ին հոդվածը, 2-րդ հոդվածի «ա», «բ», «գ» ենթակետերը, 3, 4, 5, 8, 9, 14, 15, 16 և 17-րդ հոդվածների վերնագրերն ու տեքստերը, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը (2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերը միավորվել են նոր խմբագրությամբ «դ» կետի ներքո), 7-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, 10-րդ հոդվածը, 11-րդ հոդվածի 1-ին կետը, 12-րդ հոդվածի 1-ին կետը, 12-րդ հոդվածի 2-րդ կետը ներառվել է նույն հոդվածի 10-րդ կետում, 3-րդ կետը՝ 11-րդ կետում, 13-րդ հոդվածը, 17-րդ հոդվածը (նոր 18-րդ հոդված):

6. Արձանագրությամբ Համաձայնագրում՝ Հավելվածով սահմանված բովանդակությամբ, ավելացվում են նոր դրույթներ՝ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետ, 2-րդ հոդվածի 2-րդ կետ, 2.1 և 2.2 հոդվածներ, 6-րդ հոդվածի 2-րդ կետի «ե», «գ», «է» ենթակետեր, 9.1, 9.2 և 9.3 հոդվածներ, 11-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «է», «ը» ենթակետեր, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր, 12-րդ հոդվածի 4, 5, 6, 7, 8, 9, 12, 13 և 14-րդ կետեր, 14-րդ հոդվածի 2 և 3-րդ կետեր, 16-րդ հոդվածի 4, 5 և 6-րդ կետեր և նոր 18-րդ հոդված:

7. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրի փոփոխության արդյունքում ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները (սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը չի անդրադառնում Համաձայնագրով ստանձնած այն պարտավորություններին, որոնք Արձանագրության ընդունման արդյունքում բովանդակային փոփոխության չեն ենթարկվել):

- ապահովել, որ Համաձայնագրի հիման վրա ՀՀ մաքսային մարմիններն իրենց իրավասության շրջանակներում և պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունը՝ փոխօգնություն ցուցաբերելու միջոցով համագործակցություն իրականացնեն Կողմերի պետությունների մաքսային մարմինների հետ՝ Հա-

մաճայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված նպատակներով (Հոդված 2, կետ 1),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության՝ հարցում ներկայացնող կենտրոնական մաքսային մարմինների հարցումներն ուղարկվեն Կողմերի պետությունների՝ հարցում ստացող կենտրոնական մաքսային մարմիններին (Հոդված 2.1, կետ 2),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության՝ հարցում ներկայացնող տարածքային մաքսային մարմինների հարցումներն ուղարկվեն անմիջականորեն Կողմերի պետությունների՝ հարցում ստացող տարածքային մաքսային մարմիններին (Հոդված 2.1, կետ 3),

– այն դեպքերում, երբ հնարավոր չէ որոշել, թե Կողմի պետության ո՞ր մաքսային մարմին պետք է ուղարկել հարցումը, ապա ապահովել, որ հարցումները Հայաստանի Հանրապետության կենտրոնական մաքսային մարմնի կողմից ուղարկվեն մյուս Կողմի պետության կենտրոնական մաքսային մարմնի հասցեով (Հոդված 2.1, կետ 4),

– ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում Կողմերի միջև նամակագրությունը վարվի ռուսերենով (Հոդված 2.1, կետ 5),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները՝ Կողմերի պետությունների մաքսային մարմինների հետ փոխադարձ համաձայնությամբ ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ուղղված մաքսային գործառնությունների (մաքսային ձևակերպման) իրականացման արագացմանը և մաքսային հսկողության արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգի կիրառման միջոցով (Հոդված 3, կետ «ա»),

– ապահովել, որ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության ցանկացած կենտրոնական մաքսային մարմնի ստացած տեղեկությունները, հաղորդումներն ու փաստաթղթերը, փոխանցվեն ՀՀ իրավապահ և այլ պետական մարմիններին, որոնք զբաղվում են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ու դրանց պրեկուրսորների, ինչպես նաև այլ առարկաների և նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարով, տվյալ տեղեկությունները տրամադրած Կողմի պետության մաքսային մարմնի գրավոր համաձայնության առկայության դեպքում (Հոդված 5, կետ 3),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները սեփական նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում մյուս Կողմերի մարմիններին անհապաղ փոխանցեն կատարված կամ նախապատրաստվող այն գործողությունների մասին անհրաժեշտ ամբողջ տեղեկությունը, որոնք հանդիսանում են կամ կարող են հանդիսանալ մաքսային օրենսդրության խախտում, ապրանքների դասակարգման, դրանց մաքսային արժեքի և ապ-

րանքների ծագման, մաքսային վճարների հաշվարկի ճշգրտության, ինչպես նաև ՀՀ մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների նկատմամբ արգելքների, սահմանափակումների և հսկողության պահպանման մասին տեղեկություններ (Հոդված 6, կետ 1),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները հնարավորինս կարճ ժամկետում, այդ թվում՝ առանց նախնական հարցման, մյուս Կողմերի մաքսային մարմիններին հաղորդեն տեղեկություններ հնարավոր այնպիսի մաքսային իրավախախտումների մասին, որոնց դեմ պայքարում հատկապես շահագրգռված են Համաձայնագրի մասնակից պետությունները, որոնք, նախևառաջ, վերաբերում են մաքսային իրավախախտումներին, երբ տեղափոխվում են հատուկ կարևոր նշանակություն ունեցող և մաքսային մարմինների միջև համաձայնեցված ցանկերում ներառված ապրանքներ, որոնք ենթարկվում են ոչ սակագնային սահմանափակումների կամ ենթակա են բարձր մաքսատուրքերով կամ հարկերով հարկման, ահաբեկչական և (կամ) ծայրահեղական ուղղվածության կամ ազգամիջյան և (կամ) միջկրոնական հիմքով թշնամանքի և երկպառակության հրահրման միտումներ պարունակող գրականություն, լսա- տեսա- և այլ նյութեր, պոռնոգրաֆիական բովանդակություն ունեցող տեսա- և այլ նյութեր, ապրանքներ, որոնց առնչությամբ հիմքեր կան ենթադրելու, որ դրանք նմանակված (կոնտրաֆակտ) են (Հոդված 6, կետ 2, ենթակետեր «դ», «ե», «զ», «է»),

– ապահովել, որ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի փոխանցումը կատարվի գաղտնիության պահպանման պայմաններով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (Հոդված 7, կետ 4),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները մաքսային գործի բնագավառում տրամադրեն փոխօգնություն՝ նաև իրականացնելով պաշտոնատար անձանց նախապատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում և մաքսային օրենսդրության խախտումների դեմ պայքարի գործում փորձի փոխանակում (Հոդված 8, կետեր «ա» և «դ»),

– երաշխավորել, որ մի Կողմի պետության կենտրոնական մաքսային մարմնի հարցումով Հայաստանի Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինն ապահովի ստուգման անցկացումը՝ Համաձայնագրի 2.2-րդ հոդվածի «ա», «ե» կետերով նախատեսված հիմքերով (Հոդված 9),

– ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում հարցում ստացող Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինն իրականացնի միայն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությամբ նախատեսված

Համաձայնագրի 9.1 հոդվածի 3-րդ կետում շարադրված ընթացակարգային գործողությունները (Հոդված 9.1, կետ 3),

– ապահովել, որ հարցման հիման վրա Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները, որպես հարցում ստացող, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող կամ հիմնադրված անձանց Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան ծանուցեն հարցում ներկայացնող մաքսային մարմնի կողմից ընդունված, հարցման մեջ թվարկված և դրան կցված բոլոր փաստաթղթերի և որոշումների մասին (Հոդված 9.2),

– ապահովել, որ Համաձայնագրի մասնակից պետությունների մաքսային մարմինների կողմից իրենց պետությունների մաքսային օրենսդրության դրույթներին համապատասխան ձևակերպված՝ մաքսային հսկողության անցկացման արդյունքները, ինչպես նաև ընթացակարգային գործողությունների իրականացման արդյունքները և հարցումների հիման վրա ստացված նյութերը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից ճանաչվեն որպես մաքսային իրավախախտումների վերաբերյալ գործերով ապացույցներ, և նշված գործերն այլ ապացույցների հետ մեկտեղ քննելիս ենթարկվեն գնահատման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն (Հոդված 9.3),

– երաշխավորել, որ Համաձայնագրի շրջանակներում ստացված ցանկացած տեղեկատվություն կօգտագործվի բացառապես Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից և միայն Համաձայնագրում նշված նպատակներով, և որ այլ նպատակներով այն կփոխանցվի կամ կօգտագործվի միայն այդպիսի տեղեկատվություն տրամադրած Կողմի պետության մաքսային մարմնի գրավոր համաձայնությամբ (Հոդված 14, կետ 1),

– երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկատվության մասով կապահովեն գաղտնիության նույնպիսի ռեժիմ, ինչպիսին համանման բնույթի և բովանդակության սեփական տեղեկատվության համար նախատեսված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (Հոդված 14, կետ 2),

– Համաձայնագրի շրջանակներում չիրականացնել պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) պարունակող տեղեկատվության փոխանակում (Հոդված 14, կետ 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի հունիսի 1-ին ստորագրված՝ «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԳԻՆԱՆՅԱՆ

15 հունիսի 2021 թվականի
ՍԴՈ-1600



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՄԱՔԱՍՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1994 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1600 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2018 թվականի հունիսի 1-ին ստորագրված՝ «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի հունիսի 15-ի ՍԴՈ-1600 որոշմամբ որոշել է, որ 2018 թվականի հունիսի 1-ին ստորագրված՝ «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 15-ի ՍԴՈ-1600 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-1600 որոշմամբ 2018 թվականի հունիսի 1-ին ստորագրված՝ «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահ-

մանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանն ղիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանն ղիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ղիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** ղիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանն ղիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարանն ներկայացվող ղիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով ղիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն առանց նախապայմանների.
- այդ հարցով ղիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

¹Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

րությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանը դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև

տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարանն ղիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարանն ղիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարանն ղիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առ-

կա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է 2021 թվականի մարտի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված՝ թղթային տարբերակով գրություն, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն, և որին կից, ի թիվս այլնի, ներկայացվել է Կառավարության՝ 2020 թվականի հունվարի 30-ի թիվ 87-Ա որոշման պատճենը: Միաժամանակ պարզվել է, որ դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում ներկայացված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնելին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է ներկայացված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անփոփոխելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

15 հունիսի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ՀԱՆՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի, (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հուլիսի 5-ին Հանդույն ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավար-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

րության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հունվարի 23-ի N 66-Ա որոշմամբ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մարտի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի հուլիսի 5-ին Հանոյում՝ կրթության և գիտության բնագավառում երկու երկրների համագործակցությունը խթանելու և զարգացնելու նպատակով:

2. ՀՀ կառավարության կողմից Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու նշանակված մարմինը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է, իսկ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության կողմից՝ Կրթության և վերապատրաստման նախարարությունը:

3. Համաձայնագրով նախատեսվում է իրականացնել փոխանակման ծրագրեր հետազոտողների, դասախոսների, դասավանդող անձնակազմի, ուսանողների և աշակերտների միջև: Նախատեսվում է, որ փոխանակման ծրագրերի հստակ ժամկետները և պայմանները, ինչպես նաև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության հստակ ժամկետները և ֆինանսական պայմանները կկարգավորվեն Հայաստանի և Վիետնամի շահագրգիռ հաստատությունների և կազմակերպությունների միջև կնքվելիք համապատասխան համաձայնագրերով:

4. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Համաձայնագրով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

1) ֆինանսական հնարավորությունների սահմաններում և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ տրամադրել կրթաթոշակներ Վիետնամի ուսումնական և հետազոտական հաստատությունների աշակերտներին, ուսանողներին, դասավանդող անձնակազմին, դասախոսներին և հետազոտողներին: Այդ նպատակով Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարությանն առաջարկել կրթաթոշակային 5 տեղ՝ ուսանողների, դասավանդող անձնակազմի, դասախոսների և հետազոտողների համար՝ Հայաստանի Հանրապետությունում բակալավրի, մագիստրոսի, դոկտորանտուրայի և ինտերնատուրայի ծրագրերով ուսում ստանալու նպատակով (Հոդված 6),

2) որպես ուղարկող Կողմ՝ վճարել կամ երաշխավորել, որ մասնակիցը վճարի հետադարձ ավիատոմսի արժեքը, իսկ որպես ընդունող Կողմ՝ մասնակիցներին առաջարկել ուսման վարձավճարից ազատում, ամսական կրթաթոշակ և բժշկական ապահովագրություն ՀՀ կառավարության կողմից տրվող կրթաթոշակի գումարի սահմաններում (ներառյալ, անհրաժեշտության դեպքում, մեկ տարվա տևողությամբ լեզվի վերապատրաստում) (Հոդված 6),

3) Վիետնամի հետ համագործակցել կրթությանն ու գիտությանն առնչվող հարցերում այն միջազգային կազմակերպություններում, որոնց անդամ են Հայաստանի Հանրապետությունը և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունը (Հոդված 7),

4) ֆինանսական հնարավորությունների սահմաններում խրախուսել և աջակցել բարձրագույն ուսումնական և հետազոտական, կրթական հաստատություններում Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզվի, գրականության, պատմության և մշակույթի ուսումնասիրմանը և դասավանդմանը, ինչպես նաև աջակցել աշակերտների, ուսանողների, դասավանդող անձնակազմի, դասախոսների և հետազոտողների փոխանակմանը, ինչպես նաև մեթոդաբանական ձեռնարկների և դասագրքերի փոխանակմանը (Հոդված 8),

5) ֆինանսական հնարավորությունների սահմաններում իրականացնել կրթության և գիտության ոլորտի փորձագետների պատվիրակությունների փոխանակում՝ երկկողմ հարաբերությունների ամրապնդման նպատակով, ինչպես նաև իրականացնել ընթացիկ նախագծերի և բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվության և աշխատանքային փորձի փոխանակում (Հոդված 9),

6) իրականացնել համապատասխան տեղեկատվության փոխանակում կողմերի հաստատությունների կողմից տրվող որակավորումների համարժեքությունը սահմանելու նպատակով, ինչպես նաև աջակցել դրանց փոխադարձաբար ճանաչմանը (Հոդված 10 կետ 1):

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի հունիսի 5-ին Հանոյում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 հունիսի 2021 թվականի
ՍԴՈ-1601

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

**«2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 5-ԻՆ ՀԱՆՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1601 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2019 թվականի հուլիսի 5-ին Հանդիման ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի հունիսի 15-ի ՄԴՈ-1601 որոշմամբ որոշել է, որ 2019 թվականի հուլիսի 5-ին Հանդիման ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 2(102)2021

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 15-ի ՍԳՈ-1601 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1601 որոշմամբ 2019 թվականի հուլիսի 5-ին Հանդյում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրա-

կան դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում են, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանն դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է 2021 թվականի մարտի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված՝ թղթային տարբերակով գրություն, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն, և որին կից, ի թիվս այլնի, ներկայացվել է Կառավարության՝ 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 66-Ա որոշման պատճենը: Միաժամանակ պարզվել է, որ դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչատոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակա-

ռավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում ներկայացված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագրեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին**

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021

անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լինե՞ր Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է ներկայացված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարատյալություն տալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվե՞ր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

15 հունիսի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 թվականի սեպտեմբերի 24-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԱԼԹԱՅՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ
ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿԵՐ ԶՎՃԱՐԵԼՆ ՈՒ ՀԱՐԿՈՒՄԻՑ
ԽՈՒՄԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդ-
կարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի
սեպտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավա-
րության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

ների կրկնակի հարկումը բացառելու և հարկեր չվճարելն ու հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի ապրիլի 1-ի N 454-Ա որոշմամբ 2019 թվականի սեպտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկեր չվճարելն ու հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի ապրիլի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկեր չվճարելն ու հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկման բացառման և այդպիսով եկամտային և գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների, միջազգային առևտրի և ներդրումների վրա բացասական ազդեցության նվազեցման, ինչպես նաև կանխատեսելի և կայուն հարկային դաշտի ստեղծման նպատակով:

2. Համաձայնագրով սահմանվում են Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ հանդիսացող անձանց՝ հարկման ենթակա գույքը և եկամուտների տեսակները, որոնց կապակցությամբ էլ Պայմանավորվող պետությունները ձեռք են բերում համապատասխան իրավունքներ և պարտականություններ, որոնք դրսևորվում են նրանով, որ մի Պայմանավորվող կողմը, տվյալ պարագայում՝ Հայաստանի Հանրապետությունը, պարտավորություն է ստանձնում ձեռնպահ մնալ Մալթայի Հանրապետության (այսուհետ՝ նաև Մալթա) ռեզիդենտ հանդիսացող անձանց ստացած այն եկամուտը կամ գույքը հարկելուց, որի հարկման իրավունքը Համաձայնագրով վերապահված է մյուս Պայմանավորվող կողմին և ընդհակառակը:

3. Բացի վերոհիշյալ պարտավորությունից, Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Համաձայնագրով ստանձնում է մի շարք այլ պարտավորություններ, մասնավորապես.

– Համաձայնագիրը կիրառել շահութահարկի և եկամտային հարկի նկատմամբ (Հոդված 2, կետ 3, ենթակետ «ա»),

– Համաձայնագիրը կիրառել նաև ցանկացած նույնական կամ էապես նման հարկատեսակների նկատմամբ, որոնք կսահմանվեն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկատեսակների կամ դրանց փոխարեն, ինչպես նաև ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մալթական կողմի իրավասու մարմիններին ծանուցեն Հայաստանի Հանրապետության համապատասխան հարկային օրենսդրությունում կատարված ցանկացած էական փոփոխության մասին (Հոդված 2, կետ 4),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության ձեռնարկության շահույթը հարկվի միայն Հայաստանի Հանրապետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում Մալթայում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով (Հոդված 7, կետ 1),

– մշտական հաստատությանը վերագրելի շահույթը որոշել այնպիսի համաչափ բաշխմամբ, որն ընդունելի կլինի, և այնպիսի եղանակով, որ արդյունքը համապատասխանի Համաձայնագրի 7-րդ հոդվածում ներառված սկզբունքներին (Հոդված 7, կետ 4),

– Համաձայնագրի 7-րդ հոդվածում թվարկված նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի որոշել նույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր և բավարար պատճառ (Հոդված 7, կետ 6),

– Մալթայի ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը չհարկել Հայաստանի Հանրապետությունում. վերոհիշյալ կարգը կիրառել նաև միավորումում, համատեղ գործունեությունում կամ միջազգային շահագործման գործակալությունում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ (Հոդված 8, կետեր 1 և 3),

– այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը ՀՀ ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի նկատմամբ Մալթայի Հանրապետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման Մալթայի Հանրապետությունում, և այդ ձևով ներառված շահույթը համարվում է շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ Հայաստանի Հանրապետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկույթ-

յունների միջև պայմանները լինեին այնպիսին, ինչպիսին ստեղծված կլինեին անկախ ձեռնարկությունների միջև, ապա կատարել շահույթից զանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, այն դեպքում, երբ Մալթայի Հանրապետությունը համարում է ճշգրտումը արդարացված, այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի առնել Համաձայնագրի մյուս դրույթները և ապահովել, որ Հայաստանի Հանրապետության և Մալթայի Հանրապետության իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում խորհրդակցեն միմյանց հետ (Հոդված 9, կետ 2),

– չսահմանել որևէ հարկ Մալթայի Հանրապետության ռեզիդենտ ընկերության կողմից վճարված շահաբաժինների նկատմամբ, եթե անգամ վճարված շահաբաժինները ամբողջությամբ կամ մասամբ կազմված են Հայաստանի Հանրապետությունում առաջացող շահույթից կամ եկամտից, բացառությամբ Համաձայնագրի 10-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերի (Հոդված 10, կետ 5),

– չհարկել Մալթայի Հանրապետության ռեզիդենտ ընկերության չբաշխված շահույթը ընկերության չբաշխված շահույթից զանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են Հայաստանի Հանրապետությունում առաջացող շահույթից կամ եկամտից (Հոդված 10, կետ 5), ապահովել, որ Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում զանձված հարկերը չգերազանցեն տոկոսի համախառն գումարի 5 տոկոսը (Հոդված 11, կետեր 1 և 2),

– Համաձայնագրի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերում չկիրառել Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դրույթները. այդ դեպքում կիրառել Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները (Հոդված 11, կետ 4),

– Համաձայնագրի 11-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքում վճարումների ավելցուկային մասը հարկել Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով Համաձայնագրի այլ դրույթները (Հոդված 11, կետ 6),

– ապահովել, որ Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում զանձվող հարկերը չգերազանցեն ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը (Հոդված 12, կետեր 1 և 2),

– Համաձայնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերում չկիրառել Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դրույթները. այդ դեպքում կիրառել Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները (Հոդված 12, կետ 4),

– չհարկել Մալթայի ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելանքը (Հոդված 13, կետ 3),

– հարկել Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից առաջացած արժեքի հավելանքը, միայն եթե գույքն օտարողը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ է (Հոդված 13, կետ 5),

– հաշվի առնելով Համաձայնագրի 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ չհարկել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի կատարվում Հայաստանի Հանրապետությունում (Հոդված 14, կետ 1),

– Համաձայնագրի 14-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ չնայած նույն հոդվածի 1-ին կետի դրույթներին, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կողմից Մալթայի Հանրապետությունում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը հարկել Հայաստանի Հանրապետությունում (Հոդված 14, կետ 2),

– անկախ Համաձայնագրի 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ չհարկել Մալթայի Հանրապետության ռեզիդենտի՝ որպես արվեստի գործիչ կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը, եթե այդ գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում մշակութային կամ սպորտային փոխանակման ծրագրերի շրջանակներում, որոնք հաստատված են Հայաստանի Հանրապետության և Մալթայի Հանրապետության կողմից (Հոդված 16, կետ 3),

– չհարկել Մալթայի Հանրապետության կողմից այդ պետությանը մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները (Հոդված 18, կետ 1, ենթակետ «ա»),

– չնայած Համաձայնագրի 18-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ չհարկել Մալթայի Հանրապետության կողմից կամ նրա ստեղծած հիմնադրամներից այդ պետությանը մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները, սակայն դրանք հարկել, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտն ու քաղաքացին (Հոդված 18, կետ 2),

– չհարկել ուսանողի կամ ստաժորի, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանելը հանդիսացել է Մալ-

թայի Հանրապետության ռեզիդենտ, և որը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, Հայաստանի Հանրապետությունում իր ապրելու, կրթության կամ մասնագիտանալու համար ստացած վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջանում են Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից (Հոդված 19),

– ազատել հարկումից ֆիզիկական անձին, որը ժամանել է Հայաստանի Հանրապետություն՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այլ հավատարմագրված ուսումնական հաստատությունում ուսուցանելու կամ հետազոտություն անցկացնելու նպատակով, և որը հանդիսանում կամ անմիջապես մինչև ժամանելը հանդիսացել է Մալթայի Հանրապետության ռեզիդենտ, Հայաստանի Հանրապետությունում այդպիսի ուսուցանման կամ հետազոտման համար վարձատրության առնչությամբ՝ այդ նպատակով իր առաջին ժամանման օրվանից երկու տարին չգերազանցող ժամանակահատվածում, պայմանով, որ այդ վարձատրությունն առաջանում է Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից (Հոդված 20, կետ 1),

– չկիրառել Համաձայնագրի 20-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները հետազոտությունից ստացվող վարձատրության նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունն իրականացվում է ոչ թե հանրային շահի, այլ հիմնականում հատուկ անձի կամ անձանց մասնավոր շահերի համար (Հոդված 20, կետ 2),

– երբ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել Մալթայի Հանրապետությունում, ապա թույլատրել այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից նվազեցնել Մալթայում վճարված եկամտահարկին հավասար գումարը, սակայն այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցնելը հաշվարկված եկամտահարկի այն մասը, որը վերագրելի է այն եկամտին, որը կարող է հարկվել Մալթայում (Հոդված 22, կետ 1),

– Մալթայի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միևնույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները. չնայած Համաձայնագրի 1-ին հոդվածի դրույթներին՝ վերոհիշյալ դրույթը կիրառել նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ (Հոդված 23, կետ 1),

– Մալթայի Հանրապետության ռեզիդենտ համարվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորության կատարումը, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները միևնույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ (Հոդված 23, կետ 2),

– երաշխավորել, որ Մալթայի Հանրապետության ձեռնարկության մշտական հաստատության հարկումը Հայաստանի Հանրապետությունում չի լինի պակաս բարենպաստ, քան համանման գործունեություն իրականացնող Հայաստանի Հանրապետության ձեռնարկության հարկումը (Հոդված 23, կետ 3),

– ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով հանել տոկոսները, ժոյաթիները և Հայաստանի Հանրապետության ձեռնարկության՝ Մալթայի Հանրապետության ռեզիդենտին կատարած այլ վճարումներն այն նույն պայմաններով, որով հանվում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտին վճարելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 6-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետերի դրույթները (Հոդված 23, կետ 4),

– Հայաստանի Հանրապետության այն ձեռնարկություններին, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է Մալթայի Հանրապետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է Մալթայի Հանրապետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարումն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետությունում այլ նման ձեռնարկությունները (Հոդված 23, կետ 5),

– չնայած Համաձայնագրի 2-րդ հոդվածի դրույթներին՝ Համաձայնագրի 23-րդ հոդվածի դրույթները կիրառել հարկերի ցանկացած տեսակի և ձևի նկատմամբ (Հոդված 23, կետ 6),

– երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Մալթայի Հանրապետության իրավասու մարմինների հետ կփոխանակեն Համաձայնագրի դրույթների իրականացման կամ ներպետական օրենքների իրականացման կամ կիրառման համար կանխատեսելի համապատասխան տեղեկություններ Հայաստանի Հանրապետության և Մալթայի Հանրապետության անունից կիրառվող ցանկացած տեսակի ու ձևի հարկի վերաբերյալ, այն չափով, որը չի հակասում Համաձայնագրին. վերոհիշյալ

տեղեկությունների փոխանակումը չսահմանափակել Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներով (Հոդված 25, կետ 1),

– երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն կհամարվի գաղտնի այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետության ներպետական օրենքներին համապատասխան ստացված տեղեկությունը, և կհաղորդվի միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են Համաձայնագրի 25-րդ հոդվածի 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, բողոքարկումների քննմանը կամ վերոնշյալի վերահսկողությանը, ինչպես նաև երաշխավորել, որ այդ անձինք կամ մարմինները տեղեկությունը կօգտագործեն միայն այդպիսի նպատակների համար (Հոդված 25, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2019 թվականի սեպտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկեր չվճարելն ու հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 հունիսի 2021 թվականի
ՄԴՈ-1602



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2019 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԼԹԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ
ՀԱՐԿԵՐ ԶՎՃԱՐԵԼՆ ՈՒ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ
ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ
ԿԱՅՄՑՎԱԾ ՍԴՈ-1602 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2019 թվականի սեպտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկեր չվճարելն ու հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի հունիսի 15-ի ՍԴՈ-1602 որոշմամբ որոշել է, որ 2019 թվականի սեպտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկեր չվճարելն ու հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՍԻՍ ♦ 2(102)2021

Համաձայն ջիներով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 15-ի ՄԳՈ-1602 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-1602 որոշմամբ 2019 թվականի սեպտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկեր չվճարելն ու հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ են համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեն համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրա-

կան դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանի դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկույթյան ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակա-

ռավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021

24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անփոփեղով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թեղությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

15 հունիսի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 2(102)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ ԵՎ «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող՝ Հանրապետության նախագահի ներկայացուցիչ՝ Հանրապետության նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Հովակիմյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչներ Կ. Մովսիսյանի, Գ. Աթանեսյանի, Մ. Մոսիսյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 73-րդ հոդվածների՝

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը (№ Կ-842-20.01.2021, 03.02.2021-ՊԻ-011/2ամբ.) (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը (№ Կ-842²-20.01.2021-ՊԻ-011/2ամբ.) (այսուհետ՝ նաև Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել են 2021 թվականի փետրվարի 3-ին, Հանրապետության նախագահի կողմից չեն ստորագրվել և ուժի մեջ չեն մտել:

Սահմանադրական օրենքը սահմանում է հետևյալը.

«Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև» բառերը.

2) 2.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները քննում են միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորները:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ և 2.3-րդ մասերով.

«2.2. Համապատասխան մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, բացառությամբ օպե-

րատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների, քննում են միայն տվյալ մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորները:

2.3. Սույն հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված դատավորները, ի լրումն նույն մասով նախատեսված գործերի, քննում են նաև սույն օրենսգրքով քրեական մասնագիտացման դատավորին վերապահված այլ գործեր:»:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Առաջին ատյանի դատարանի նախագահը Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով հաստատում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննությունն իրականացնող դատավորների հերթապահությունների ժամանակացույցը: Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում են միայն ժամանակացույցով հերթապահությանը ներգրավված դատավորների նստավայրերի վերաբերյալ տվյալները:»:

Հոդված 3. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող առանձին դատավորների միջև այլ գործեր չեն բաշխվում:»:

Հոդված 4. Օրենքի 43-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Վերաքննիչ քրեական դատարանում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հետ կապված գործերով կայացված ակտերի վերանայման գործերը բաշխվում են միայն վերաքննիչ քրեական դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հետ կապված գործերով վերանայումն իրականացնող առանձին դատավորների միջև:»:

Հոդված 5. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 45. Դատարանների, Վճռաբեկ դատարանի Պալատների նախագահներին, Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին, Ընդհանուր ժողովի հանձնաժողովների անդամներին, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր քննող դատավորներին և վերաքննիչ քրեական դատարանի դատավորներին գործերի բաշխման առանձնահատկությունները».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն օրենսգրքի 21-րդ հոդվածի 2.2-րդ մասով և 43-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատավորների համար Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել Հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ»:

Հոդված 6. Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30) սահմանում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունները և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորների հերթապահություն սահմանելու կարգը.»:

Հոդված 7. Օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետից հանել «և իրավագիտության մագիստրոսի» բառերը.

2) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) միայն իրավագիտության բակալավրի աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն ամնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն ամնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն.»:

Հոդված 8. Օրենքի 103-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գրավոր առաջադրանքները կարող են պարունակել իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրա-

վունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջով կամ կազմվել թեստային առաջադրանքների՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրների միջոցով դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու պահանջով, ինչպես նաև կարող են ներառել հիպոթետիկ գործի ամբողջական փաթեթի ուսումնասիրության հիման վրա՝ դատավարական գործողությունների վերլուծության, դատավարական փաստաթղթերի նախագծման և այլ պահանջներ:»:

Հոդված 9. Օրենքի 105-րդ հոդվածի 3-րդ մասը «ուղենիշային տիպային պատասխաններով» բառերից հետո լրացնել «, իսկ թեստային առաջադրանքների դեպքում՝ առաջադրանքների առաջարկվող ճիշտ լուծումներով» բառերով:

Հոդված 10. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը դատավորների թվակազմն ավելացնելու համաձայնություն ստանալու համար դիմում է Կառավարություն՝

1) մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող առանձին դատավորների հաստիքների նախատեսման համար՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առնվազն տասնյոթ դատավոր՝ ըստ դատարանների և հաստիքների, որից առնվազն ութը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

2) վերաքննիչ քրեական դատարանում՝ երեք դատավոր:

3. Կառավարության համաձայնությունն ստանալու պահից՝ մեկշաբաթյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդն ավելացնում է դատավորների թվակազմը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման միջոցով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ենթաբաժնի համալրման և վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման անհրաժեշտության և իրականացման կարգի մասին: Սույն մասով նախատեսված որոշմամբ Բարձրագույն դատական խորհուրդը սահ-

մանում է նաև թեկնածուների ցուցակի համալրման, այդ թվում՝ որակավորման ստուգման առանձին փուլերի և դրանց շրջանակներում իրականացվող գործողությունների հատուկ ժամկետներ՝ այն հաշվառմամբ, որ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով թեկնածուների որակավորման ստուգումը, ուսուցումը և դատավորների թեկնածուների ցուցակի հաստատումն իրականացվեն դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ենթաբաժնի համալրման նպատակով որակավորման գրավոր քննության առաջադրանքները կազմվում են թեստային առաջադրանքների՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրների միջոցով՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու պահանջով: Թեստային առաջադրանքները, քրեական մասնագիտացման ոլորտի ընդհանուր հարցերին վերաբերող հիպոթետիկ խնդիրներից բացի, պետք է առավելապես ներառեն նաև մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննությանը վերաբերող հիպոթետիկ խնդիրներ:

6. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, քրեական մասնագիտացման գործող դատավորները սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ առանձին դատավորների պաշտոնում ընտրվելու համար կարող են ներկայացնել դիմում՝ կցելով միայն Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 13.1-ին կետով սահմանված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը, որը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով տասնհինգ օրվա ընթացքում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված թափուր տեղերի համալրման նպատակով դատավորների առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար դիմում ներկայացնելիս դատավորները կցում են նաև Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 13.1-ին կետով սահմանված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը, որը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով տասնհինգ օրվա ընթացքում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

7. Գործող դատավորները սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ առանձին դատավորների պաշտոնում ընտրվելու համար դիմում ներկայացնելու դեպքում անցնում են հոգեբանական թեստավորում, ինչպես

նաև հարցազրույց՝ Օրենքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հարցերի շրջանակներում: Դատավորի ընտրության համար քվեարկություն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և դատավորի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դիմում ներկայացրած գործող դատավորները հոգեբանական թեստավորումը և հարցազրույցն անցնելու և Բարձրագույն դատական խորհրդի կողմից առաջարկություն ստանալու համար ընտրվելու դեպքում ստանում են առաջարկություն սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով, իսկ դատավորի թեկնածուների հավակնորդները հարցազրույցի փուլն անցնելու դեպքում ընդգրկվում են դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ենթաբաժնում, որը ներկայացվում է Արդարադատության ակադեմիա նրանց ուսուցումը կազմակերպելու նպատակով:

9. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դատավորի թեկնածուների հավակնորդների ուսուցումը և փորձաշրջանն իրականացվում են «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով և Ակադեմիայի կառավարման խորհրդի որոշմամբ սահմանված կարգով՝ մեկամսյա ժամկետում:

10. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ առաջին հերթին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, այնուհետև՝ մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում թափուր տեղերի համալրման կամ այդ տեղերում գործող դատավորներին որպես առանձին դատավոր ընտրելու համար Բարձրագույն դատական խորհուրդը սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված հավակնորդներին դատավորների թեկնածուների ցուցակում ներառելու պահից՝ եռօրյա ժամկետում, հաջորդաբար՝ գործող դատավոր, դատավորի թեկնածու հերթականությամբ առաջարկություն է ներկայացնում՝

1) սույն հոդվածի 8-րդ մասին համապատասխան՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված գործող դատավորին՝ սկսած այն դատավորից, որն ունի դատավորի ավելի երկար փորձառություն, իսկ հավասար փորձառության դեպքում՝ տարիքով ավագից, որը, առաջարկությունն ստանալով, եռօրյա ժամկետում այն ընդունելուց հետո Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ համարվում է ընտրված որպես առանձին դատավոր և շարունակում է պաշտոնավարել իր գործող պաշտոնում մինչև սույն հոդվածի՝

համապատասխանաբար 21-րդ կամ 22-րդ մասին համապատասխան որպես առանձին դատավոր պաշտոնավարումն սկսելը, և

2) դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ենթաբաժնում ընդգրկված թեկնածուին՝ ըստ Արդարադատության ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի՝ Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է տարիքով ավագ թեկնածուին: Սույն կետով նախատեսված թեկնածուները ներկայացված առաջարկությանն իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը ներկայացնում են առաջարկությունն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում: Առաջարկությունն ընդունած թեկնածուները Հանրապետության նախագահի նշանակմանը ներկայացվում են միաժամանակ և ներկայացվում են այն դեպքում, երբ տվյալ դատարանի տվյալ պաշտոնի թափուր տեղերի համալրման համար առաջարկությունն ընդունած թեկնածուների և որպես առանձին դատավոր ընտրվելու համար առաջարկությունն ընդունած գործող դատավորների ընդհանուր թիվը պակաս չէ տվյալ դատարանում տվյալ պաշտոնի թափուր տեղերի քանակի երեք քառորդից: Սույն մասով սահմանված առաջարկություն ներկայացնելու հերթականությունը չի պահպանվում, եթե թեկնածուների ցուցակի համապատասխան ենթաբաժնում թեկնածու ներառված չէ, կամ առաջարկություն ներկայացնելու համար գործող դատավորներ առկա չեն, կամ առաջարկություն ներկայացնելու համար ցուցակի համապատասխան ենթաբաժնում թեկնածուների թիվը կամ գործող դատավորների թիվը սպառվել է:

11. Համապատասխան դատարանի գործող դատավորները նույն դատարանում որպես առանձին դատավոր պաշտոնավարումն սկսելու դեպքում շարունակում են քննել իրենց վարույթում առկա բոլոր գործերը, իսկ այլ դատարանում որպես առանձին դատավոր պաշտոնավարումն սկսելու դեպքում նրանց վարույթում առկա գործերը ենթակա են վերաբաշխման պաշտոնավարումն սկսելու պահից՝ մեկ ամսվա ընթացքում:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված դատավորներից բացի, այլ դատավորների վարույթում առկա՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները ենթակա չեն վերաբաշխման:

13. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության համապատասխան դատարանի առանձին դատավորների պաշտոնավարումն սկսելու պահից՝

երկշաբաթյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է առանձին դատավորների՝ ըստ նստավայրերի բաշխումն ու թվակազմը:

14. Մարզերի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարաններում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը քննող առանձին դատավորների նոր ավելացված հաստիքները համալրող կամ այդ պաշտոնում ընտրվող դատավորներից բացի, Բարձրագույն դատական խորհուրդը մարզերի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների քրեական մասնագիտացման գործող դատավորներից սույն հոդվածով և իր սահմանած կարգով ընտրում է առնվազն մեկ դատավորի՝ որպես մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը քննող առանձին դատավոր:

15. Բարձրագույն դատական խորհուրդը սույն հոդվածով և իր սահմանած կարգով ընտրում է վերաքննիչ քրեական դատարանի՝ սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված թափուր պաշտոնում նոր նշանակված երեք դատավորներին և վերաքննիչ քրեական դատարանի գործող դատավորների թվից՝ երեք դատավորների՝ որպես մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերով և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին գործերով կայացված ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորներ, որոնք, ի լրումն տվյալ գործերի, իրականացնում են նաև քրեական այլ գործերով վերանայում:

16. Սույն հոդվածի 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված առանձին դատավոր ընտրվելու նպատակով մարզերի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների քրեական մասնագիտացման գործող դատավորները և վերաքննիչ քրեական դատարանի գործող դատավորները Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով և ժամկետներում կարող են ներկայացնել դիմում՝ համապատասխանաբար մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանում և վերաքննիչ քրեական դատարանում որպես առանձին դատավոր ընտրվելու համար՝ դիմումին կցելով Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 13.1-ին կետով սահմանված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը, որը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով տասնհինգ օրվա ընթացքում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

17. Սույն հոդվածի 16-րդ մասով սահմանված դիմում չներկայացվելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը մարզերի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների քրեական մասնագիտացման գործող դատավորների թվից ընտրում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր քննող առանձին դատավորների, իսկ վերաքննիչ քրեական դատարանի գործող դատավորների թվից՝

մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերով և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության գործերով կայացված ակտերի վերանայումն իրականացնող դատավորների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից մեկամյա ժամկետում ստանալով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով դատավորների հայտարարագրերի ստուգման և վերլուծության արդյունքները:

18. Սույն հոդվածի 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված առանձին դատավորների ընտրությունը կատարվում է սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ եռամյա ժամկետում: Ընտրության համար քվեարկություն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում նաև դատավորի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը կամ դատավորների հայտարարագրերի ստուգման և վերլուծության արդյունքները:

19. Բարձրագույն դատական խորհուրդը, Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը քննող առանձին դատավորներին, ինչպես նաև մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերով և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության գործերով կայացված ակտերի վերանայումն իրականացնող՝ վերաքննիչ քրեական դատարանի առանձին դատավորներին մակագրվող քրեական այլ գործերի համար սահմանում է հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ:

20. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված թափուր տեղերի առաջին համալրումն իրականացվում է բացառապես սույն հոդվածով սահմանված կարգով: Հետագայում նշված պաշտոններում թափուր տեղեր առաջանալու դեպքում համալրումն իրականացվում է սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված դատավորների թեկնածուների ցուցակի ենթաբաժնում առկա թեկնածուներից, իսկ ցուցակը սպառվելու դեպքում՝ Օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

21. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող առանձին դատավորները այդ պաշտոնում պաշտոնավարումն սկսում են Երևան քաղաքի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության դատարանում առանձին դատավորների տվյալ պաշտոնի թափուր տեղերի առնվազն երեք քառորդի համալրման պահից:

22. Համապատասխան մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր քննող առանձին դատավորները այդ պաշտոնում պաշտոնավարումն սկսում են տվյալ դատարանի առանձին դատավորների թափուր տեղերի համալրման և տվյալ դատարանի գործող դատավորներից սույն հոդվածի 14-րդ մասին համապատասխան առանձին դատավոր ընտրելու պահից:

23. Վերաքննիչ քրեական դատարանում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերով և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների գործերով կայացված ակտերի վերանայումն իրականացնող դատավորները այդ պաշտոնում պաշտոնավարումն սկսում են սույն հոդվածի 15-րդ մասով նախատեսված դատավորներին ընտրելու պահից:

24. Մինչև սույն հոդվածի 21-23-րդ մասերով նախատեսված դատավորների պաշտոնավարումն սկսելը համապատասխան դատարանում գործերի բաշխումը և քննությունն իրականացվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենքին համապատասխան:

25. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենքի պահանջների հաշվառմամբ սահմանում և հրապարակում է որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, այդ թվում՝ քննական նյութերի բաշխման, քննության ընթացքի, իրավական կամ այլ փաստաթղթերից կամ տեխնիկական միջոցներից օգտվելու, քննական աշխատանքները գնահատելու կարգը, գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը:

26. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը դատական իշխանության պաշտոնական կայքին ներկայացվող պահանջները, Բարձրագույն դատական խորհրդի՝ 2018 թվականի հուլիսի 9-ի «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը, գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի կոնկրետ տոկոսաչափեր սահմանելու մասին» ԲԴԽ-23-Ո-49 և 2018 թվականի հուլիսի 26-ի «Մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահության կարգը

սահմանելու մասին» ԲԴԽ-29-Ո-67 որոշումները համապատասխանեցնում է սույն օրենքի դրույթներին:

27. Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ընտրում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործեր քննող դատավորներ՝ Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան:»:

Օրենքը սահմանում է հետևյալը.

«**Հոդված 1.** «Արդարադատության ակադեմիայի մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-50-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասը «նախատեսված ուսուցման» բառերից հետո լրացնել «և օրենքով նախատեսված այլ դեպքերի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում «անձանց փորձաշրջանի, որի» բառերը փոխարինել «անձանց փորձաշրջանի և օրենքով նախատեսված այլ դեպքերի, որոնց» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի՝ 2021 թվականի փետրվարի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, դիմողի և պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Յ.**

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ նախատեսված կարգավորումներով ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որ մինչդատական քրեական վարույթի վերաբերյալ գործերը մշտապես և անորոշ երկար ժամանակի ընթացքում քննվելու են սահմանափակ թվով դատավորների կողմից, ինչպես նաև դատավորների նոր հաստիքների համալրման համար Սահմանադրական օրենքով նախատեսվում են արտոնյալ պայմաններ: Նախատեսվում է մինչդատական քրեական վարույթի վերաբերյալ դատական գործերով դատավորների թեկնածուների ցուցակի համալրման հատուկ՝ ընդհանուր կանոնների համեմատ էականորեն պարզեցված ընթացակարգ, և համալրման գործընթացի ընդհանուր կանոններից էապես տարբերվող՝ սեղմ ժամկետներ: Մասնավորապես՝ ուսուցման համար նախատեսված ժամկետը յոթ անգամ քիչ է ընդհանուր կանոնների համաձայն ուսուցման նվազագույն ժամկետից: Բացի այդ, մեղմացվում են դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար անձին ներկայացվող կրթական պահանջները, ինչպես նաև նվազեցվել են որակավորման գրա-

վոր քննության պահանջները՝ այն դարձնելով թեստային առաջադրանքների տեսքով քննություն:

Դիմողը գտնում է, որ առաջարկվող կարգավորումը Բարձրագույն դատական խորհրդի կողմից համապատասխան դատավորներ առանձնացնելու հայեցողական լիազորության սահմանափակման մասով առերևույթ խնդրահարույց է Սահմանադրության 173-րդ հոդվածով նախատեսված՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակի համատեքստում:

Դիմողը խնդրահարույց է համարում նաև առաջարկվող հատուկ ժամկետների և ընթացակարգի նախատեսումը՝ նշելով, որ Սահմանադրական օրենքի պաշտոնական հիմնավորմամբ ներկայացված չէ այդպիսի հապճեպության որևէ հիմնավորում, ինչպես նաև ներկայացված չէ այն հաշվարկը, որով նման բարդ գործընթացի համար նախատեսված ընդհանուր եռամսյա ժամկետը, ինչպես նաև ուսուցման և փորձաշրջանի իրականացման համար նախատեսված մեկամսյա ժամկետը որոշվել է որպես ողջամիտ և իրավաչափ, մասնավորապես, դատավորի սահմանադրական կարգավիճակի համատեքստում:

Դիմողի համոզմամբ՝ առաջարկվող կարգավորումներն անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն ոչ միայն առաջացնում են հիմնավոր կասկած՝ Սահմանադրական օրենքով նախատեսված մասնագիտացված դատարանների անկախ և անաչառ դատարան լինելու վերաբերյալ, այլև թույլ են տալիս ընկալելու Սահմանադրական օրենքով նախատեսված կարգավորումները՝ որպես հատուկ կամ արտակարգ դատարաններ ստեղծելու նպատակ հետապնդող:

Վերոգրյալի հիման վրա դիմողը գտնում է, որ՝

- Սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 4-րդ հոդվածը՝ համակցված 10-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 20-րդ մասերի հետ, առերևույթ չեն համապատասխանում Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին,

- Սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 4-րդ հոդվածը՝ համակցված 7-րդ, 8-րդ հոդվածների, 10-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 20-րդ մասերի հետ, ինչպես նաև Սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 27-րդ մասերն առերևույթ չեն համապատասխանում Սահմանադրության 163-րդ հոդվածի 2-րդ մասին,

- Սահմանադրական օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածները, 10-րդ հոդվածի 14-րդ, 15-րդ, 27-րդ մասերը չեն համապատասխանում Սահմանադրության 4-րդ և 173-րդ հոդվածներին:

Վերոգրյալ հիմքերով դիմողը գտնում է նաև, որ Օրենքը ևս չի համապատասխանում Սահմանադրության 4-րդ, 61-րդ, 63-րդ, 163-րդ և 173-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորումների՝ դատարանի անկախության սկզբունքին համապատասխանությանը՝ պատասխանողը նշում է, որ Սահմանադրական օրենքով չի նախատեսվում որևէ կառուցակարգ, որը կարող է «օբյեկտիվ դիտորդի» համար դառնալ մտահոգությունների պատճառ դատարանի անկախության համատեքստում: Վերոնշյալի հաշվառմամբ պատասխանողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին:

Վիճարկվող իրավակարգավորումները դիտարկելով Սահմանադրության 163-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում՝ պատասխանողը նշում է, որ հատուկ կամ արտակարգ դատարանները ստեղծվում են կոնկրետ որևէ դեպքի քննարկման համար, մինչդեռ նշված բացառիկ և հատուկ դեպքերից տարբերվում է առանձին դատավորների նեղ մասնագիտացումը:

Միաժամանակ պատասխանողը նշում է, որ Սահմանադրական օրենքի ուժով առանձին տեսակի գործեր կոնկրետ դատավորների կողմից քննելը խնդրահարույց չէ հատկապես այն պայմաններում, երբ դատավորներն ըստ էության ընտրվում են անմիջապես Բարձրագույն դատական խորհրդի կողմից, ունեն նույն կարգավիճակը, ինչ այլ դատավորները, և օգտվում են դատավորներին տրված բոլոր երաշխիքներից:

Ըստ պատասխանողի՝ դիմումից պարզ չէ, թե ինչպես է դիմումատուն փոխկապակցում դատավորների հավակնորդների որակավորման և ուսուցման հարցերը Սահմանադրությամբ ամրագրված համապատասխան դրույթների հետ, և որն է առաջարկվող կարգավորումների անհամապատասխանությունը Սահմանադրության համապատասխան հոդվածներին: Ավելին՝ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման կարգի և պայմանների, ինչպես նաև ուսուցման ժամկետների և շրջանակների առումով Սահմանադրությունը որևէ կարգավորում չի նախատեսում:

Անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորումների՝ Սահմանադրության 4-րդ և 173-րդ հոդվածներին համապատասխանությանը՝ պատասխանողը նշում է, որ, որպես կարևոր գործիք և լծակ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը մատնանշել է ինչպես դատավորների թվակազմի ավելացումը, այնպես էլ առանձին տեսակի գործերով քննությունն առանձին դատավորներին վերապահելու հնարավոր

րությունը և դատական գործերի բաշխման առանձնահատկությունների սահմանումը: Բացի այդ, ըստ պատասխանողի՝ պատահական չէ, որ Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-րդ մասը հնարավորություն է տալիս Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները սահմանել Դատական օրենսգրքով: Միևնույն ժամանակ, նման լիազորությամբ Բարձրագույն դատական խորհրդին օժտելը չի բացառում, որ օրենքով սահմանվեն առանձին տեսակի գործեր, որոնք պետք է քննվեն Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված դատավորների կողմից: Նման արգելք ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի նախատեսված չէ որևէ նորմատիվ ակտով: Պատասխանողը գտնում է, որ, ի վերջո պետք է հաշվի առնել, որ նման լիազորությամբ Բարձրագույն դատական խորհուրդը օժտվել է ոչ թե սահմանադրի, այլ օրենսդրի կամքով:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները, մասնավորապես՝ այն հանգամանքը, որ սույն գործով սահմանադրական վերահսկողության օբյեկտն Ազգային ժողովի կողմից ընդունված՝ դեռևս ուժի մեջ չնստած օրենքներն են, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն որոշման շրջանակներում Ազգային ժողովի ընդունած օրենքների սահմանադրականությանն անդրադարձ է կատարվում միայն այն հարցերի սահմաններում, որոնք բարձրացվում են դիմողի կողմից, այն է՝ Սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, 4-րդ հոդվածի՝ համակցված 10-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 20-րդ մասերի հետ, Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին համապատասխանության հարցի, Սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, 4-րդ հոդվածի՝ համակցված 7-րդ, 8-րդ հոդվածների, 10-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 20-րդ մասերի հետ, և Սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 27-րդ մասերի՝ Սահմանադրության 163-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցի, Սահմանադրական օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների, 10-րդ հոդվածի 14-րդ, 15-րդ, 27-րդ մասերի՝ Սահմանադրության 4-րդ և 173-րդ հոդվածներին համապատասխանության հարցի, ինչպես նաև Օրենքի՝ Սահմանադրության 4-րդ, 61-րդ, 63-րդ, 163-րդ և 173-րդ հոդվածներին համապատասխանության հարցի սահմաններում՝ դիմումում ներկայացված հիմնավորումներով:

Սույն գործով բարձրացված սահմանադրափրավական վեճի լուծման համար Սահմանադրական դատարանը կարևորում է հետևյալ հարցադրումները.

- մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցա-

ռումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորների առանձնացումն արդյոք համապատասխանում է Սահմանադրության 163-րդ հոդվածի կարգավորումներին:

- վիճարկվող իրավակարգավորումների արդյունքում առանձնացվող մասնագիտացված դատավորները՝ նրանց նշանակման կարգի հաշվառմամբ, բավարարում են արդյոք Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված՝ անկախության և անաչառության պահանջները:

- վիճարկվող իրավակարգավորումները համահունչ են արդյոք Սահմանադրության 173-րդ հոդվածով ամրագրված՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սույն գործով վիճարկվող՝ Օրենքով նախատեսված իրավակարգավորումների սահմանադրականության առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողն այդ օրենքի դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ չի ներկայացրել որևէ առանձին հիմնավորում: Մյուս կողմից, դրանք աժանցված են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում նախատեսված որոշ փոփոխությունների բովանդակությունից: Ուստի՝ Օրենքով նախատեսված իրավակարգավորումների սահմանադրականության հարցը սույն որոշմամբ դիտարկվում է ոչ թե առանձին, այլ Սահմանադրական օրենքով ամրագրված իրավակարգավորումների սահմանադրականության հարցի համատեքստում:

4.2. Սահմանադրության՝ «Դատարանները» վերտառությամբ 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ: Միաժամանակ սույն հոդվածի 2-րդ մասով արգելվում է արտակարգ դատարանների ստեղծումը:

Նշվածից հետևում է, որ Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետությունում գործող դատարանները նախատեսելուն գուգահեռ ամրագրել է նաև օրենքով նախատեսված դեպքերում մասնագիտացված դատարանների ստեղծման հնարավորություն, ինչպես նաև արտակարգ դատարանների ստեղծման արգելք: Ընդ որում՝ Սահմանադրությամբ օրենսդրի հայեցողությանն է թողնված մասնագիտացված դատարանների ստեղծման անհրաժեշտությունը գնահատելը, դատարանների մասնագիտացման ոլորտի ընտրություն կատարելը: Ընդ որում՝ մասնագիտացման ոլորտները չեն առանձնացվում բացառապես և անհրաժեշտաբար ըստ իրավունքի ճյուղերի, դրանց առանձ-

նացումը կարող է պայմանավորված լինել նաև այլ հանգամանքներով (օրինակ՝ ըստ հանցագործության սուբյեկտի): Միաժամանակ օրենսդիրն այս հայեցողությունն իրացնելիս պետք է առաջնորդվի բացառապես դատարանների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակներով:

Հատկանշական է, որ Սահմանադրությամբ միաժամանակ հստակորեն ամրագրվել է արտակարգ դատարանների ստեղծման արգելք: Անդրադառնալով արտակարգ դատարանների սահմանադրաիրավական բովանդակությանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արտակարգ դատարանների ստեղծումը շեղում է դատարանակազմական և դատարանների գործառնության սկզբունքներից, քանի որ դրանք կոչված են քննելու մեկ կամ մի քանի կոնկրետ, անհատականացված գործեր, հետևաբար՝ նման դատարանները չեն համապատասխանում արդար դատաքննության երաշխիքներին: Ի հակադրություն արտակարգ դատարանների՝ մասնագիտացված դատարանները ստեղծվում են որոշակի ոլորտներում նախապես չանհատականացված գործերով մասնագիտացված արդարադատություն իրականացնելու համար: Այսինքն՝ դրանք նպատակ ունեն քննելու ընդհանուր և վերացականորեն սահմանված շրջանակի բոլոր գործերը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, 2012 թվականի թիվ 15 կարծիքի 37-րդ պարբերությունում անդրադառնալով մասնագիտացված և արտակարգ դատարաններին, նշել է, որ նեղ մասնագետ դատավորներից իրավական հատուկ ոլորտների բարդ և առանձնահատուկ պահանջների բավարարում պահանջելն այլ խնդիր է և տարբերվում է հատուկ, ժամանակավոր (ad hoc) և բացառիկ իրավասությունների դատարաններ հիմնելուց, որոնց պահանջն առաջանում է կոնկրետ կամ հատուկ հանգամանքներում: Նման դատարանները պարունակում են պոտենցիալ վտանգ (Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին) եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների առումով:

Ողջ վերոնշյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա է հստակ տարանջատում մասնագիտացված դատարանների և արտակարգ դատարանների միջև, ուստի յուրաքանչյուր դեպքում դատարանի տեսակը բացահայտելու և դրա թույլատրելիությունը պարզելու համար պետք է հիմք ընդունել յուրաքանչյուրին բնորոշ՝ վերը նշված առանձնահատկությունները:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով մասնագիտացված արդարադատությանը, 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԳՈ-780 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: (...):»:

Մեկ այլ՝ 2008 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԳՈ-782 որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ «ՀՀ Սահմանադրությունը (...) հնարավոր է համարել այնպիսի իրավիճակի ձևավորում, որտեղ հասարակական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև դրանց առավել բարդ իրավական կարգավորվածության պայմաններում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջվի առավել խոր մասնագիտական մոտեցում և լուծումներ: ՀՀ Սահմանադրությունը, նման իրավիճակի գնահատման լիազորությունը վերապահելով օրենսդրին, նախատեսում է նաև օրենքով մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն»:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, 2012 թվականի թիվ 15 կարծիքում անդրադառնալով դատավորների մասնագիտացմանը, արտահայտել է հետևյալ դիրքորոշումները.

«8. Մասնագիտացումը հաճախ առաջանում է իրավունքի ոլորտում փոփոխություններին համապատասխանելու անհրաժեշտությունից և ոչ թե միտումնավոր ընտրության արդյունք է: Նոր օրենսդրական ակտերի մշտական ընդունումը, լինի դա միջազգային, եվրոպական թե ներպետական իրավունքի ոլորտներում, կամ փոփոխվող նախադեպը և տեսությունը իրավական գիտությունը դարձնում են չափազանց ընդգրկուն և բարդ: Դատավորի համար դժվար է տիրապետել բոլոր այդ ոլորտներին: Մինչդեռ հասարակությունը և դատավարության կողմերն ավելի ու ավելի մեծ պահանջներ են առաջադրում դատարանների պրոֆեսիոնալիզմի և արդյունավետության առումներով: Դատավորների մասնագիտացումը կարող է ապահովել, որ նրանք տիրապետեն

համապատասխան գիտելիքների և փորձառության իրենց իրավասության ոլորտում:

9. Իրավական ոլորտի խոր իմացությունը կարող է դրական անդրադառնալ դատավորի ընդունած որոշումների որակի վրա: Նեղ մասնագետ դատավորներն առավել շատ փորձ են ձեռք բերում կոնկրետ ոլորտներում, ինչը կարող է իր հերթին նպաստել դատարանի հեղինակության բարձրացմանը:

10. Առանձին գործերը վերապահելը նեղ մասնագետ դատավորների խմբին կարող է նպաստել դատական որոշումների հետևողականությանը, հետևաբար կարող է խթանել իրավական որոշակիությունը:

11. Մշտապես նույն տիպի գործերով զբաղվելու դեպքում մասնագիտացումը կարող է օգնել դատավորներին՝ առավել լավ հասկանալու իրենց ներկայացված գործերի էությունը, լինի դա տեխնիկական, սոցիալական թե տնտեսական ոլորտներում, ուստի գտնել լուծումներ, որոնք ավելի համապատասխան են այդ բնագավառների համար:

(...)

13. Որոշակի իրավական ոլորտներում առավել խոր փորձագիտության միջոցով մասնագիտացումը կարող է նպաստել դատարանի արդյունավետության բարձրացմանը և գործերի կառավարմանը՝ հաշվի առնելով, որ դատարան ներկայացվող գործերի թիվը մշտապես աճում է»:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մասնագիտացված դատարանների ձևավորման իրավական հնարավորությունը բխում է միջազգային մի շարք փաստաթղթերից և ուղղակիորեն նախատեսված է Սահմանադրությամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ յուրաքանչյուր դեպքում մասնագիտացված դատարանի ստեղծումը պետք է պայմանավորված լինի օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող հստակ անհրաժեշտությամբ, հետապնդի բացառապես դատարանների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակներ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը պետք է միտված լինի անձի՝ որոշակի ոլորտին վերաբերող խախտված իրավունքների արդյունավետ վերականգնման ապահովմանը և դրա մեխանիզմների մատչելի իրականացմանը: Մասնագիտացված դատարանի ստեղծումը չպետք է լինի արհեստական և հետապնդի արդարադատության իրականացման հետ չկապված նպատակներ:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մասնագիտացված դատարանների ստեղծումը կարող է դրսևորվել տարբեր եղանակներով, այն է՝ առանձնացված կառուցվածքային միավորի ստեղծում

դատական համակարգում, գոյություն ունեցող դատարանում առանձնացված միավորի ստեղծում (օրինակ՝ պալատի տեսքով) կամ գոյություն ունեցող դատարանում մասնագիտացված դատավորների առանձնացում, ուստիև մասնագիտացված դատարանին բնորոշ վերոգրյալ հատկանիշները հավասարապես վերաբերում են դրա բոլոր հնարավոր դրսևորումներին:

4.3. Սահմանադրական դատարանը փաստում է, որ սույն գործով վիճարկվող կարգավորումներով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունների քննությունը վերապահվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորներին, իսկ համապատասխան մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների, քննությունը՝ տվյալ մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորներին: Միաժամանակ սահմանվել է, որ վերաքննիչ քրեական դատարանում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հետ կապված գործերով կայացված ակտերի վերանայման գործերը բաշխվում են միայն վերաքննիչ քրեական դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հետ կապված գործերով վերանայումն իրականացնող առանձին դատավորների միջև:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դիմողի կողմից առաջ քաշված այն հարցին, որ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորների առանձնացումն անկողմնակալ դիտորդի կողմից կարող է ընկալվել որպես արտակարգ դատարանի ստեղծում, արձանագրում է հետևյալը.

մասնավորապես՝ Սահմանադրական օրենքով նախատեսված կարգավորումներով վերը նշված դատավորների առանձնացումը չի հետապնդում մեկ կամ մի քանի կոնկրետ, անհատականացված գործեր քննելու նպատակ: Ավելին՝ այն ենթադրում է օրենքի հիման վրա մասնագիտացված դատարանի

ստեղծում՝ դրան բնորոշ հատկանիշներով, այն է՝ վերը նշված դատավորների քննությանն են հանձնվելու մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության բոլոր գործերը, իսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորների դեպքում՝ ի լրումն վերը նշված գործերի, նաև Հայաստանի Հանրապետության տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները: Այս տեսանկյունից խնդրահարույց չէ նաև Հայաստանի Հանրապետության տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորների քննությանը, իսկ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հետ կապված գործերով կայացված ակտերի վերանայման գործերը՝ վերաքննիչ քրեական դատարանի առանձին դատավորների քննությանը հանձնելը, քանի որ այդ գործերն ունեն ընդհանուր և վերացականորեն սահմանված շրջանակ:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ մասնագիտացված դատավորների առանձնացման անհրաժեշտությունը որոշելն օրենսդրի գնահատման տիրույթում է: Վերջինս, սակայն, պետք է առաջնորդվի բացառապես դատարանների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակներով: Տվյալ դեպքում Սահմանադրական օրենքի ընդունման հիմնավորումներից պարզ է դառնում, որ այդ դատավորների առանձնացման անհրաժեշտությունն օրենսդիրը պայմանավորել է այն հանգամանքով, որ քրեական մասնագիտացման դատավորները, ի լրումն իրենց մակագրվող քրեական գործերի, քննում են նաև մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները, ինչը ոչ միայն առաջացնում է գերձանրաբեռնվածություն, այլև չի ապահովում տվյալ միջնորդությունների քննության արդյունավետությունը և նշված հարցերով մասնագիտացումը: Ուստի դրանց քննության ապահովումը քրեական մասնագիտացման առանձին դատավորների կողմից կբարձրացնի այդ գործերի քննության արդյունավետությունը, կապահովի ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը: Ընդ որում՝ Երևան քաղաքի (առանձին դատավորներ քննելու են միայն այդ գործերը) և մարզերի դատարանների (առանձին դատավորներ

քննելու են այդ գործերը և ի լրումն դրանց՝ նաև այլ քրեական գործեր) համար սահմանված առանձնահատկությունները պայմանավորվել են վերջիններիս ծանրաբեռնվածության և մարզերում դատավորների թվաքանակի հարաբերակցությամբ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող կարգավորումներով օրենսդրի կողմից հետապնդվող նպատակն իրավաչափ է. մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորներ առանձնացնելու՝ օրենսդրի հիմնական նպատակը դատարանների՝ քրեական մասնագիտացմամբ դատավորների գերծանրաբեռնվածության հաղթահարումն է՝ ուղղված լինելով ողջամիտ ժամկետում գործերի քննության, ինչպես նաև նշված հարցերով մասնագիտացման ապահովմանը:

Այսպիսով, վիճարկվող իրավակարգավորումներով նախատեսվող մասնագիտացված դատավորների առանձնացումը, հաշվի առնելով մասնագիտացված դատարանների ստեղծման անհրաժեշտությունը գնահատելու և դատարանների մասնագիտացման ոլորտի ընտրություն կատարելու հարցում օրենսդրին վերապահված հայեցողությունը, ինքնին համահունչ է սահմանադրական վերը նշված կարգավորումներին: Ավելին, Սահմանադրական դատարանը ոչ միայն սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չի համարում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորների առանձնացումը, այլև հրավիրում է օրենսդիր և գործադիր մարմինների ուշադրությունը՝ հետագայում նշված գործերը քննելու նպատակով առանձին մասնագիտացված դատարանի՝ որպես դատական համակարգում առանձնացված կառուցվածքային միավորի ստեղծման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը գնահատելու հարցին:

4.4. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում վիճարկվող կարգավորումները դիտարկել նաև Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքի համատեքստում:

Սահմանադրության՝ «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքն ամրագրում է ստացել նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: Այսպես՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի

1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Նշված իրավունքին վերաբերող դրույթներ են բովանդակում, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածը և (Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին) միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված պահանջներին պետք է համապատասխանեն ոչ միայն ընդհանուր իրավասության, այլև մասնագիտացված դատարանները: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև նշել, որ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2012 թվականի թիվ 15 կարծիքի 29-րդ պարբերության համաձայն՝ «նեղ մասնագետ դատավորները, ինչպես բոլոր դատավորները, պետք է բավարարեն [Կոնվենցիայի] 6-րդ հոդվածով սահմանված անկախության և անաչառության պահանջները: Մասնագիտացված դատարանները և դատավորները պետք է նաև բավարարեն Կոնվենցիայի այդ դրույթի այլ պահանջները՝ դատարանի հասանելիություն, պատշաճ իրավական ընթացակարգ, արդար դատաքննության իրավունք և ողջամիտ ժամկետում գործը լսելու իրավունք: Դատարանները պարտավոր են իրենց մասնագիտացված պալատները կազմակերպել այնպես, որ վերոնշյալ պահանջները բավարարվեն»:

Արդար դատաքննության իրավունքն առաջին հերթին ենթադրում է անկախ և անաչառ դատարանի առկայություն, քանի որ նշված հատկանիշներից գուրկ մարմինը չի կարող ապահովել իր իրավասությանը վերապահված գործերի արդարացի քննություն: Ավելին, նշված պահանջները չբավարարող մարմնի առկայությունը նվազեցնում է ինչպես գործին մասնակցող անձանց, այնպես էլ ընդհանրապես հասարակության վստահությունը դատական համակարգի նկատմամբ:

Քննարկվող պահանջների կարևորությունը և նշանակությունն ընդգծվել է մի շարք միջազգային փաստաթղթերում: Մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2010 թվականին ընդունված CM/Rec(2010)12 հանձնարարականի 4-րդ և 11-րդ կետերում նշվել է, որ առանձին դատավորների անկախությունն ապահովվում է ընդհանուր առմամբ դատական համակարգի անկախությամբ: Որպես այդպիսին, այն իրավական պետության հիմնարար տարր է: Դատավորների արտաքին անկախությունը ոչ թե արտոնություն է, որը տրված է դատավորների սեփական շահերի համար,

այլ բխում է իրավական պետության և այն անձանց շահերից, որոնք փնտրում և ակնկալում են անկողմնակալ արդարադատություն: Դատավորների անկախությունը պետք է դիտարկել որպես ազատության, մարդու իրավունքների հարգանքի և օրենքի անաչառ կիրառման երաշխիք: Միաժամանակ, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը 2015 թվականին ընդունված թիվ 18/2015 կարծիքի 10-րդ պարբերությունում նշել է, որ «դատական անկախությունը միջոց է, որով ապահովվում է դատավորների անաչառությունը: Ուստի այն բոլոր քաղաքացիների (և իշխանական մյուս թևերի) համար երաշխիքի նախապայման է, որ իրենք համահավասարություն կունենան դատարանում: Դատարանի անկախությունը գործերն անաչառ քննելու պարտավորության ներհատուկ տարր է: Միայն անկախ դատական իշխանությունը կարող է արդյունավետ իրականացնել հասարակության բոլոր անդամների իրավունքները, հատկապես այն խմբերի, որոնք խոցելի են և ընդունելիություն (հասարակությունում համակրանք) չունեն: Ուստի անկախությունը հիմնարար պահանջ է, որը հնարավորություն է տալիս դատական իշխանությանը՝ պաշտպանելու ժողովրդավարությունը և մարդու իրավունքները»:

Առաջնորդվելով Սահմանադրության՝ «Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան» վերտառությամբ 81-րդ հոդվածի կարգավորմամբ առ այն, որ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անկախ և անաչառ դատարանի առկայության պահանջի բովանդակությունը բացահայտել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) դիրքորոշումների համատեքստում:

Եվրոպական դատարանն իր վճիռներում արտահայտել է այն դիրքորոշումը, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով միայն այն մարմինն է ձեռք բերում «դատարանի» նշանակություն, որն ունի լիակատար իրավագործություն և բավարարում է մի շարք պահանջների, ինչպիսիք են գործադիրից և կողմերից անկախությունը (*case of Beaumartin v. France, app. no.15287/89, 24/11/1994, § 38*): «Դատարան» հասկացությանը բնորոշ է նաև այն, որ այն պետք է կազմված լինի արժանիքների հիման վրա ընտրված դատավորներից, այսինքն՝ դատավորներից, որոնք բավարարում են տեխնիկական հմտություններին ներկայացված, ինչպես նաև բարեվարքության պահանջները՝ իրավական պետությունում իրենցից պահանջվող դատական գործառույթներն իրականացնելու համար (*case of Guðmundur Andri Ástráðsson v.*

Iceland, app. no. 26374/18, 01/12/2020, § 220): Որոշելու համար, թե արդյոք դատարանը 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կարող է համարվել «անկախ», պետք է հաշվի առնել, *inter alia*, դրա անդամների նշանակման կարգը և նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայությունը և այն հարցը՝ արդյոք մարմինն ընկալվում է որպես անկախ: Ինչ վերաբերում է «անկողմնակալության» հարցին, ապա այս պահանջի մասով գոյություն ունի երկու ասպեկտ: Նախ՝ դատարանը պետք է սուբյեկտիվորեն ազատ լինի անձնական նախապաշարմունքից կամ կանխակալությունից: Երկրորդ՝ այն պետք է նաև օբյեկտիվորեն անկողմնակալ լինի, այն է՝ պետք է ապահովի բավարար երաշխիքներ՝ բացառելու ցանկացած օրինաչափ կասկած այդ առումով: Անկախության և օբյեկտիվ անաչառության հասկացությունները սերտորեն կապված են, և Դատարանը դրանք հաճախ միասին է դիտարկում (*case of Findlay v. the United Kingdom, app. no. 22107/93, 25/02/1997, § 38*):

4.5. Սույն գործով վիճարկվող կարգավորումներով, ի թիվս այլնի, փոփոխվել են դատավորի թեկնածուի հավակնորդին ներկայացվող որոշ պահանջներ, այն է՝ կրթության և մասնագիտական աշխատանքի փորձառության պահանջները, միաժամանակ փոփոխվել են որակավորման գրավոր քննության առաջադրանքներին, ինչպես նաև դատավորների թեկնածուների հավակնորդների ուսումնառության տևողությանը վերաբերող իրավակարգավորումները:

Անկախության պահանջի վերաբերյալ վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորների և դատական համակարգի մյուս դատավորների պաշտոնավարման ժամկետը նույնն է՝ այն պայմանավորված չէ մասնագիտացված դատավոր լինելու կամ չլինելու հանգամանքով:

Առաջին ատյանի դատարանների դատավորների նշանակման (այդ թվում՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող առանձին դատավորների նոր ավելացված հաստիքների համալրման) գործընթացում մասնակցություն ունեցող իրավասու մարմինների հարցում որևէ փոփոխություն չի ենթադրվում, այս մասնագիտացման դատավորների թեկնածուներն ընտրվում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից, իսկ դատավորներին Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ նշանակում է Հանրա-

պետության նախագահը, ուստի ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանության մարմիններից անկախ լինելու հանգամանքը դատավորի նշանակման տեսանկյունից որևէ խնդիր չի հարուցում: Իսկ դատավարության կողմերից անկախությունը պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում և տվյալ դեպքում չի կարող գնահատվել բացառապես օրենսդրական կարգավորման հիման վրա:

Ինչ վերաբերում է դատավորների թեկնածուների հավակնորդներին ներկայացվող պահանջներին, նրանց որակավորման ստուգման նպատակով անցկացվող քննության և Արդարադատության ակադեմիայում իրականացվող ուսումնառության կարգը սահմանող իրավական դրույթներին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող կարգավորումների գործարկումը կասկածի տակ չի դնում այդ կարգով նշանակված դատավորի անկախությունը: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության 165-րդ հոդվածով սահմանված են դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները: Նշված հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավոր կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատավորների թեկնածուների համար Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

Միաժամանակ Սահմանադրության 166-րդ հոդվածը վերաբերում է դատավորների ընտրությանը և նշանակմանը: Այսպես՝ նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, իսկ նույն հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:

Վերոգրյալից հետևում է, որ դատավորի թեկնածուներին ներկայացվող պահանջներին և դատավորների ընտրության և նշանակման կարգին վերաբերող նորմերի մի մասն ամրագրված են Սահմանադրությամբ, իսկ դատավորի թեկնածուներին ներկայացվող և դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասների սահմանումը թողնվում է օրենսդրի կարգավորմանը՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով:

Սահմանադրությամբ դատավորների թեկնածուների կրթությանը ներկայացվող միակ պահանջը բարձրագույն կրթությամբ իրավաբան լինելն է, դրանով չի նախատեսվում դատավորների թեկնածուների մասնագիտական աշխատանքային փորձառությանը, ինչպես նաև ուսումնառության պարտադիրությանը և/կամ տևողությանը, բովանդակությանը կամ այլ չափանիշին վերաբերող որևէ պահանջ: Հետևաբար՝ նշված հարցերի կապակցությամբ օրենսդրի կողմից սահմանվող կարգավորումները սահմանադրականության տեսանկյունից չեն կարող խնդրահարույց լինել որակյալ արդարադատության իրականացման ապահովման համար անբավարար լինելու հիմքով, քանի որ Սահմանադրական դատարանի կողմից որևէ նորմի սահմանադրականության գնահատման մասշտաբը միայն Սահմանադրության նորմերն են, մինչդեռ դրանք չեն սահմանում դատավորների թեկնածուների մասնագիտական աշխատանքային փորձառությանը և ուսումնառության պարտադիրությանը և/կամ տևողությանը վերաբերող պահանջներ:

Ինչ վերաբերում է դատավորների թեկնածուների հավակնորդների ուսումնառության մեկամսյա տևողությանը, Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 08.04.2021թ. ՍԳԴ-50 գրության՝ Արդարադատության ակադեմիայի ռեկտորը նշել է, որ «(...) նկատի ունենալով նշված մասնագիտացմամբ դատավորների գործունեության ոլորտի սահմանափակ բնույթը և այն, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հարցերին առնչվող թեմաներն ունեն ավելի սահմանափակ ծավալ, հնարավոր ենք համարում նշված մասնագիտացմամբ դատավորների մասնագիտական պատրաստման նպատակադիր կազմակերպումը մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրում կոնկրետ թիրախային առարկաներ ներառելու, յուրաքանչյուր ուսումնական օրվա և ունկնդիրների անհատական ծանրաբեռնվածության ծավալն ավելացնելու դեպքում (...): Նույն պատասխանով հայտնվել է, որ մասնագիտական պատրաստման մաս պետք է կազմի նաև դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանը, որը կարող է կազմակերպվել նաև լսարանային ուսուցմանը զուգահեռ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև դիմողի կողմից բարձրացված հարցին առ այն, որ Սահմանադրական օրենքով նախատեսված կարգավորումներով ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որ մինչդատական քրեական վարույթի վերաբերյալ գործերը մշտապես և անորոշ երկար ժամանակի ընթացքում քննվելու են սահմանափակ թվով դատավորների կողմից: Վերոնշյալ դիրքորոշման առնչությամբ Սահմանադրական դատարանը շեշտում է, որ եթե կոնկրետ մասնագիտացման մասով առկա է

դատավորների նեղ շրջանակ, այն չի կարող ինքնին հանգեցնել Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի խախտման, եթե առկա են դատավորի անկախության և անաչառության բավարար երաշխիքներ: Ավելին, հակառակ պարագայում՝ նույն խնդիրը հնարավոր է արձանագրել առհասարակ Հայաստանի Հանրապետության դատական համակարգի համատեքստում՝ համեմատելով հատկապես մարզերում քրեական մասնագիտացման դատավորների քանակի հետ: Մասնավորապես՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության որոշ դատարաններում ներկայումս առկա է քրեական մասնագիտացման դատավորի 2 կամ 3 հաստիք (Արագածոտնի, Տավուշի, մարզեր, *հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի գեկուցող դատավորի 06.04.2021թ. թիվ ՄԴԴ-46 գրության՝ ՀՀ դատական ղեկարտամենտի ղեկավարի 20.05.2021թ. թիվ ԴԴ-1 Ե-3850 գրությունը*): Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հնարավոր չէ յուրաքանչյուր մասնագիտացման մասով յուրաքանչյուր դատարանում ապահովել մեծ թվով դատավորների առկայություն, իսկ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումներով նախատեսված դատավորների թվաքանակը խնդիրներ չի հարուցում: Ավելին, դրանցով նախատեսվում է ավելացնել դատավորների հաստիքներ. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առնվազն տասնյոթ դատավորի հաստիք, որից առնվազն ութը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, իսկ վերաքննիչ քրեական դատարանում՝ երեք դատավորի հաստիք:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումները Սահմանադրության 63-րդ հոդվածի պահանջների տեսանկյունից խնդրահարույց չեն:

4.6. Անդրադառնալով Սահմանադրական օրենքով ամրագրված դրոյթների սահմանադրականությանը՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակի համատեքստում, Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական առաքելությունը, Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն, դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելն է: Այդ առաքելությունն իրականացնելու համար Բարձրագույն դատական խորհուրդը պետք է օժտված լինի համապատասխան լիազորություններով: Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի հետևյալ լիազորությունները.

1) դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների կազմում և հաստատում.

2) նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին Հանրապետության նախագահին առաջարկում.

3) նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին Հանրապետության նախագահին առաջարկում.

4) Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին Ազգային ժողովին առաջարկում.

5) դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցի լուծում.

6) իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցի լուծում.

7) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծում.

8) դատավորների լիազորությունների դադարեցման հարցի լուծում.

9) իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվների հաստատում և ներկայացում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

10) օրենքին համապատասխան իր աշխատակազմի ձևավորում:

Միաժամանակ Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվել է, որ Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում դատավորների մասնագիտացումը» վերտառությամբ 21-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ Բարձրագույն դատական խորհուրդը քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից կարող է ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննում են առանձին տեսակի (անչափահասների, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված և անօրինական պահվող երեխաների վերադարձի, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և այլն) գործեր:

Փաստորեն, օրենսդիրը Բարձրագույն դատական խորհրդին լիազորել է քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից ընտրել դատավորներ, որոնք կքննեն առանձին տեսակի գործեր, ինչը վկայում է, որ օրենսդիրը Բարձրագույն դատական խորհրդին թույլատրել է գնահատելու առանձին տեսակի գործերով դատավորներ ընտրելու անհրաժեշտությունը և ըստ այդմ՝ ընտրելու համապատասխան դատավորներ:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված սահմանադրական կարգավորումները հնարավորություն չեն տալիս եզրահանգելու, որ առանձին տեսակի գործեր քննող դատավորներ առանձնացնելու անհրաժեշտության գնահատումը բացառապես Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունն է: Ավելին՝ Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ հստակ ամրագրվում է օրենքով նախատեսված դեպքերում մասնագիտացված դատարանների ստեղծման իրավական հնարավորությունը: Այդ լիազորության շրջանակներում Ազգային ժողովի կողմից, օրինակ, 2018 թվականի փետրվարի 7-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով որպես մասնագիտացված դատարան ստեղծվել է Մանկության դատարանը: Ինչ վերաբերում է առանձին տեսակի գործեր քննող դատավորներին, ապա օրենսդիրն ինչպես 2018 թվականի փետրվարի 7-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով, այնպես էլ 2020 թվականի հունիսի 25-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքով արդեն իսկ ընդգծել է առանձին տեսակի այնպիսի գործեր քննող դատավորների առանձնացման հնարավորությունը, ինչպիսիք են, օրինակ, անչափահասների, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված և անօրինական պահվող երեխաների վերադարձի, ինչպես նաև սպորինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերը: Ընդ որում՝ նշված սահմանադրական օրենքները ստորագրվել են Հանրապետության նախագահի կողմից:

Վերոգրյալ պատճառաբանությունների հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիր իշխանությամբ օժտված մարմնին ևս տրված է առանձին տեսակի գործեր քննող կամ մասնագիտացված դատավորներ առանձնացնելու անհրաժեշտության գնահատման լիազորություն:

Ընդ որում՝ տվյալ դեպքում սպորինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործեր քննող դատավորների, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող առանձին դատավորների ընտրության, ինչպես նաև մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող առանձին դատավորների նոր ավելացված հաստիքների համալրման գործընթացում առանցքային դերակատարում է ունենալու Բարձրագույն դատական խորհուրդը, ինչն ապահովում է վերջինիս՝ դատա-

րանների և դատավորների անկախության երաշխավորի՝ սահմանադրական առաքելության իրականացումը, հետևաբար՝ վիճարկվող դրույթները խնդրահարույց չեն Բարձրագույն դատական խորհրդին տրված սահմանադրական կարգավիճակի տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ, 64-րդ և 73-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Ազգային ժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 հունիսի 2021 թվականի
ՍԴՈ-1603



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 15-Ի «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ ԵՎ «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ» ՍԴՈ-1603 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2021 թվականի հունիսի 15-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը՝ Սահմանադրական դատարանը որոշել է, որ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և «Արդարադատության ակադեմիայի մասին»

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը համապատասխանում են Սահմանադրությանը (ՄԴՈ-1603):

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1603 որոշման վերաբերյալ:

1. Սահմանադրության՝ «Դատարանները» վերտառությամբ 163-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Սահմանվում է նաև, որ օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ: Նույն հոդվածի 2-րդ մասն արգելում է արտակարգ դատարանների ստեղծումը:

Նախ՝ հարկ է նշել, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները վերաբերում են ոչ թե մասնագիտացված դատարանների ստեղծմանը, այլ առանձին դատավորների մասնագիտացմանը՝ ընդհանուր իրավասության դատարանների շրջանակներում: Ուստի սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելու հիմքում պետք է դրվեն Սահմանադրության 61, 63 և 164-րդ հոդվածները, հատկապես՝ դատավորների անաչառության հիմնարար սկզբունքը, ինչն իր հերթին ենթադրում է, որ առաջնային նշանակություն պետք է ունենան օրենսդրի շարժառիթները, նրա կողմից իրավաչափ նպատակներ հետապնդելու հարցը, ինչն անտեսվել է Սահմանադրական դատարանի կողմից կայացված ՄԴՈ-1603 որոշմամբ, ինչպես և անտեսվել է այն հապճեպությունը, որով ընդունվել են դատավորների մասնագիտացմանը վերաբերող սույն գործով վիճարկվող օրենքները: Ակնհայտ է, որ դատավորների մասնագիտացումը զուտ առարկայական, մասնագիտական մոտեցում պահանջող հարց է, և որևէ հապճեպություն այս հարցում առավելապես ընդգծում է քաղաքական շարժառիթների առկայությունը, ինչը համատեղելի չէ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ դատավորների անաչառության սկզբունքի հետ:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Դատարանի անաչառության սկզբունքը նաև որպես օբյեկտիվ իրավական պատվիրան ամրագրված է Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասում:

Դատավորների և դատարանների մասնագիտացումն օրինական դատավորի (դատարանի) սահմանադրական սկզբունքի արտացոլումն է, որն ա-

ծանցվում է Սահմանադրության 63-րդ հոդվածից և ենթադրում է, ի թիվս այլնի, որ միայն կոմպետենտ, անհրաժեշտ մասնագիտական որակներ և պատրաստվածություն ունեցող դատավորները կարող են դիտվել որպես օրինական դատավորներ (օրինական դատարան)՝ Սահմանադրության իմաստով:

Դատարանների և դատավորների մասնագիտացման սահմանադրական նպատակն ընդհանուր հիմքերով արդարադատություն իրականացնող դատավորների համեմատ ավելի նեղ ոլորտներում ավելի պատրաստված, հետևապես՝ ավելի բարձր մասնագիտական կարողություններով օժտված դատավորների միջոցով արդարադատության պատշաճ որակի ապահովումն է: Դա նշանակում է, որ կա՛մ առանձին իրավունքի ճյուղերի սահմաններում, կա՛մ առանձին հարցերով մասնագիտական ավելի բարձր կարողություններ ունեցող դատավորները կարող են ապահովել այդ ոլորտներում կամ հարցերում այն որակները, որոնք բավարար են դատական պաշտպանության արդյունավետության և արդար դատաքննության ապահովման համար: Այսինքն՝ որոշակի ոլորտներում կամ հարցերում մասնագիտացումը ենթադրում է որոշակիորեն տարբերվող, հատուկ պահանջներ դատավորների համապատասխան թեկնածուների նկատմամբ՝ այլ թեկնածուների համեմատ: Ընդսմին՝ դատավորների անաչառության սահմանադրական սկզբունքը պահանջում է, որ դատավորների մասնագիտացումը չփոխկապակցվի կոնկրետ գործերի կամ գործերի խմբի կամ քաղաքական շարժառիթների հետ: Բացի դրանից, դատավորների մասնագիտացումն ինքնին բացառում է պարզեցված ընթացակարգերի կիրառումը դատավորների ընտրության հարցում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի ընթացակարգերի կիրառումը հիմնավորվում է ծանրակշիռ փաստարկներով, մինչդեռ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումներում, նախ՝ պարզեցված կարգով դատավորների ընտրության հնարավորություն է նախատեսվում միայն մասնագիտացված դատավորների թափուր տեղերի առաջին համալրման համար, բացի դրանից, մարզերում դատավորների համար մասնագիտացումը խիստ պայմանական է, քանի որ նրանք՝ մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնելուց բացի, քննելու են նաև քրեական գործեր, և չեն քննելու օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերաբերյալ գործեր, որոնք բոլորը՝ իրավական տեսանկյունից անհասկանալի պատճառաբանությամբ քննելու են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մասնագիտացված դատավորները: Մանագիտացված դատավորների տարբերակումը՝ կախված տարածքային տեղաբաշխումից՝ զուգակցված դատական համակարգից դուրս դատավորների առաջին խմբին ընտրելու օրենսդրի ակնհայտ մտադրության հետ, փաստում է քաղաքական նպատակադրությունը և կապ չունի առարկա-

յական չափանիշների հետ, ինչն անհամատեղելի է դատավորների անաչառության սահմանադրական պահանջի հետ:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատարանների մասնագիտացմանը, ՄԳ-Ո-780 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետևաբար, այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործոնը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում» (ընդգծումները սույն հատուկ կարծիքի հեղինակներինն են):

Ըստ մեկ այլ՝ ՄԳ-Ո-782 որոշման. «Սահմանադրությունը, սահմանելով ՀՀ դատական համակարգի կառուցվածքը, միևնույն ժամանակ հնարավոր է համարել այնպիսի իրավիճակի ձևավորում, որտեղ հասարակական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև դրանց առավել բարդ իրավական կարգավորվածության պայմաններում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջվի *ստավել խոր մասնագիտական մոտեցում և լուծումներ*: ՀՀ Սահմանադրությունը, նման իրավիճակի գնահատման լիազորությունը վերապահելով օրենսդրին, նախատեսում է նաև օրենքով մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն: Սահմանադրական նորմի բովանդակության նորմատիվ տարրն է կազմում այն պահանջը, համաձայն որի՝ նման դատարանը պետք է իրականացնի արդարադատություն որոշակի իրավագործության շրջանակներում. դա այդ մարմնի բացառիկ իրավասությունն է, այլ դատարան իրավասու չէ քննել նման գործեր, ինչպես նաև մասնագիտացված դատարանն իրավասու չէ քննել այլ դատարանի իրավասությանը վերապահված գործեր: Նույն կերպ, մասնագիտացված դատարանի դատավորը, որն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, որպես մասնագիտացված դատարանում դատավորի պաշտոն զբաղեցնող անձ կոչված է իրականացնելու արդարադատություն՝ բացառապես իրա-

վունքի այդ կոնկրետ բնագավառում» (ընդգծումը սույն հատուկ կարծիքի հեղինակներինն է):

Վերոհիշյալ որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է նաև հետևյալ իրավական դիրքորոշումները.

«Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված դատարան ստեղծելու՝ սահմանադրական նորմի տված հնարավորության իմաստը *ոչ թե գործերի մեխանիկական բաժանումն է տարբեր դատարանների միջև, այլ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող համակարգի ստեղծումն է, որտեղ գործերի բաշխումը տարբեր իրավասությանը օժտված դատարանների միջև կիրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարաններն իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն» (ընդգծումները սույն հատուկ կարծիքի հեղինակներինն են):*

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումներն ունեն սկզբունքային նշանակություն և վերաբերելի են նաև մասնագիտացված դատավորների հետ կապված հարցերին: Այդ իրավական դիրքորոշումներով առանձնացվում են այն **առարկայական պահանջները**, որոնք **Սահմանադրության տեսանկյունից** պետք է ներկայացվեն և ներկայացվում են օրենսդրին և արդարադատության ոլորտում պետական քաղաքականություն մշակող և իրականացնող մարմինն՝ Կառավարությանը՝ դատարանների և դատավորների մասնագիտացման առնչությամբ:

Ամփոփելով և զարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ հարկ ենք համարում նշել, որ՝

1) մասնագիտացված դատարանների ստեղծումը (դատավորների մասնագիտացումը) բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից, և սա է դատարանների և դատավորների մասնագիտացման իրավաչափ նպատակը, որն ածանցվում է Սահմանադրությունից.

2) դատարանների (դատավորների) մասնագիտացումը պետք է հիմնվի բացառապես օբյեկտիվ անհրաժեշտության վրա, չհետապնդի դատարանակազմության ձևափոխմանն ուղղված և այդ միջոցով հետապնդվող քաղաքական, անձնային կամ այլ սուբյեկտիվ նպատակներ.

3) դատարանների (դատավորների) մասնագիտացումը չպետք է հանգեցնի դատավորների թեկնածուների կամայական կամ քաղաքական նպա-

տակադրությամբ պայմանավորված ընտրության, որը կարող է վտանգել նրանց անաչառությունը.

4) դատարանների (դատավորների) մասնագիտացումը չպետք է հանգեցնի կոնկրետ գործերի կամ գործերի որևէ խմբի մեխանիկական բաշխման կամ վերաբաշխման, գործերի բաշխումը պետք է իրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարանները (դատավորները) իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն.

5) դատարանների (դատավորների) մասնագիտացումն արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջի առավել խոր մասնագիտական մոտեցում և լուծումներ, քան ընդհանուր իրավասության դատարանների (դատավորների) պարագայում:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ հայեցակարգային մոտեցումները համահունչ են նաև միջազգային չափանիշներին:

Այսպես՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Դատավորների մասնագիտացման մասին» թիվ 15 (2012) կարծիքի 5-րդ կետի համաձայն՝ «նեղ մասնագետ դատավոր» է այն դատավորը, որը զբաղվում է իրավունքի սահմանափակ *ոլորտներով* (օրինակ՝ քրեական, հարկային, ընտանեկան, տնտեսական և ֆինանսական), և որը զբաղվում է որոշակի ոլորտներում հատուկ փաստական հանգամանքներին վերաբերող գործերով (օրինակ՝ սոցիալական, տնտեսական կամ ընտանեկան իրավունքի վերաբերյալ գործերով):

Ըստ վերոհիշյալ կարծիքի (8-10-րդ կետեր)՝

«Մասնագիտացումը հաճախ առաջանում է իրավունքի ոլորտում փոփոխություններին համապատասխանելու անհրաժեշտությունից և *ոչ թե միտումնավոր ընտրության պրոյունք է*: Նոր օրենսդրական ակտերի մշտական ընդունումը, լինի դա միջազգային, եվրոպական, թե ներպետական իրավունքի ոլորտներում, կամ փոփոխվող նախադեպը և տեսությունը իրավական գիտությունը դարձնում են չափազանց ընդգրկուն և բարդ: Դատավորի համար դժվար է տիրապետել բոլոր այդ ոլորտներին: Մինչդեռ հասարակությունը և դատավարության կողմերն ավելի ու ավելի մեծ պահանջներ են առաջադրում դատարանների պրոֆեսիոնալիզմի և արդյունավետության առումներով: *Դատավորների մասնագիտացումը կարող է սպասել, որ նրանք տիրապետեն համապատասխան գիտելիքների և փորձառության իրենց իրավասության ոլորտում*:

Իրավական ոլորտի խոր իմացությունը կարող է դրական անդրադաժնավ դատավորի ընդունած որոշումների որակի վրա: Նեղ մասնագետ դատավոր-

ներն առավել շատ փորձ են ձեռք բերում կոնկրետ ոլորտներում, ինչը կարող է, իր հերթին, նպաստել դատարանի հեղինակության բարձրացմանը:

Առանձին գործերը վերապահելը նեղ մասնագետ դատավորների խմբին կարող է նպաստել դատական որոշումների հետևողականությանը, հետևաբար կարող է խթանել իրավական որոշակիությունը:

Մշտապես նույն տիպի գործերով զբաղվելու դեպքում մասնագիտացումը կարող է օգնել դատավորներին՝ առավել լավ հասկանալու իրենց ներկայացված գործերի էությունը, լինի դա տեխնիկական, սոցիալական թե տնտեսական ոլորտներում, ուստի գտնել լուծումներ, որոնք ավելի համապատասխան են այդ բնագավառների համար» (ընդգծումները սույն հատուկ կարծիքի հեղինակներինն են):

Վերոհիշյալ կարծիքի 37-րդ կետում նշվում է նաև, որ նեղ մասնագետ դատավորներից իրավական հատուկ ոլորտների բարդ և առանձնահատուկ պահանջների բավարարում պահանջելն այլ խնդիր է և տարբերվում է հատուկ, ժամանակավոր (ad hoc) և *բացառիկ իրավասությունների դատարաններ* հիմնելուց, որոնց պահանջն առաջանում է կոնկրետ կամ հատուկ հանգամանքներում: **Նման դատարանները պարունակում են պոտենցիալ վտանգ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների առումով:**

Իսկ նույն կարծիքի 29-րդ կետում նշվում է, որ նեղ մասնագետ դատավորները, ինչպես բոլոր դատավորները, պետք է բավարարեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված անկախության և անաչառության պահանջները: Մասնագիտացված դատարանները և դատավորները պետք է նաև բավարարեն հիշյալ կոնվենցիայի այդ դրույթի այլ պահանջները՝ դատարանի հասանելիություն, պատշաճ իրավական ընթացակարգ, արդար դատաքննության իրավունք և ողջամիտ ժամկետում գործը լսելու իրավունք: Դատարանները պարտավոր են իրենց մասնագիտացված պալատները կազմակերպել այնպես, որ վերոնշյալ պահանջները բավարարվեն:

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումներով դատավորների առանձնացումը՝ առանց բավարար հիմնավորումների, չի բխում օբյեկտիվ չափանիշներից և հետապնդում է ոչ իրավաչափ նպատակներ, չի նպաստում անկախ ու անաչառ քննությանը:

Այսպես՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումներում բացակայում է համակարգային տրամաբանությունը, որը կխարսխավեր դատավորների մասնագիտացման օբյեկտիվ անհրաժեշտության և առարկայական չափանիշների վրա: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերա-

հսկողության գործերը քննվելու են թե՛ Երևանի, թե՛ մարզերի քրեական մասնագիտացման դատավորների, իսկ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները՝ միայն Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորների կողմից: Դրան զուգահեռ Երևան քաղաքում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող առանձին դատավորների միջև այլ գործեր չեն բաշխվելու, իսկ մարզերում մինչդատական քրեական վարույթին վերաբերող գործեր քննող դատավորները քննելու են նաև քրեական մասնագիտացման դատավորին վերապահված այլ գործեր: Երևանի և մարզերի միջև նման տարբերակումը որևէ օբյեկտիվ հիմք չի կարող ունենալ:

Ընդ որում, հարկ է նկատել, որ մարզերի դատավորների դեպքում այլևս խոսք չի կարող լինել մինչդատական վարույթին վերաբերող հարցերով նրանց մասնագիտացման մասին, քանի որ նրանք քննելու են նաև քրեական գործեր: Ուստի անգամ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների հիմնավորումներն առարկայազուրկ են առնվազն այդ մասով: Այս կարևոր հանգամանքին Սահմանադրական դատարանը, սակայն, ՄԴՈ-1603 որոշման մեջ չի անդրադարձել:

Հարկ է նաև նշել, որ դատավորների մասնագիտացումը և նրանց ծանրաբեռվածության հարցի լուծումը ինքնին որևէ կապակցվածություն չունեն: Դատավորների ծանրաբեռնվածության հարցը կախված է առավելապես երկրի բնակչության թվի հետ նրանց թվային հարաբերակցությունից, նախադատական և արտադատական ընթացակարգերի արդյունավետությունից, բարձր հայցագին չունեցող դատական վեճերի լուծման պարզեցված ընթացակարգերից, դատավորներին փոխարինելու և գործուղելու կառուցակարգերի արդյունավետությունից, բարդ գործերի քանակից և բազում այլ հանգամանքներից: Դրա պարզ վկայությունն է ՀՀ վարչական դատարանի՝ ստեղծման առաջին տարիներին հաջորդող ժամանակահատվածում գերծանրաբեռնվածությունը, որը նաև մասնակի շարունակական բնույթ ունի, ինչպես նաև ներկայումս, մասնավորապես, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի գերծանրաբեռնվածությունը, որը մինչ օրս հաղթահարված չէ: Բացի դրանից, պարզ է, որ մի շարք դատավորների գերծանրաբեռնվածության հարցի լուծումն ուղղակիորեն փոխկապակցված չէ մասնագիտացված դատարանների կամ մասնագիտացված դատավորներ առանձնացնելու հետ, ավելին՝ ինքնին մասնագիտացված դատավորների առանձնացումը կարող է անգամ հանգեցնել մյուս դատավորների ծանրաբեռնվածության մեծացման: Դատական համակարգի

գերձանրաբեռնվածության խնդրի լուծումը ենթադրում է այլ կառուցակարգեր, որոնցից մեկը, անշուշտ, դատավորների թվի ավելացումն է:

2. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր որ ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր որ, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների կենսագործման համար անհրաժեշտ հիմքերից մեկը դատարանների (դատավորների) անաչառությունն է:

Մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների վերաբերյալ գործեր քննող դատավորների նշանակման կարգը համադրելով դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նպատակով անցկացվող քննության, իրականացվող ուսումնառության ընդհանուր կարգի հետ՝ ակնհայտ է դառնում, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումներով նախատեսվում են գործող կարգից էականորեն տարբերվող պայմաններ, որոնք անհրաժեշտ ենք համարում գնահատել սույն գործով վիճարկվող իրավակարգավորումներին վերաբերող հիմնավորումների համատեքստում:

Այսպես՝ սույն գործով վիճարկվող «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ենթաբաժնի համարման նպատակով որակավորման գրավոր քննության առաջադրանքները կազմվում են *թեստային առաջադրանքների՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրների միջոցով*՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից

ընտրելու պահանջով: Մինչդեռ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 103-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ «1. Որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական կամ վարչական մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքների միջոցով, որոնք, բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, ուղղված են նաև հավակնորդի վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը:

2. Գրավոր առաջադրանքները պարունակում են իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջով:

3. Գրավոր առաջադրանքները կարող են ներառել նաև համապատասխան մասնագիտացման ոլորտում հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրներ՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու պահանջով, ինչպես նաև հիպոթետիկ գործի ամբողջական փաթեթի ուսումնասիրության հիման վրա՝ դատավարական գործողությունների վերլուծություն, դատավարական փաստաթղթերի նախագծում և այլն: Գրավոր քննությունը կարող է անցկացվել տարբեր օրերի ընթացքում տարբեր առաջադրանքներ ներկայացնելու միջոցով»:

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումներով որակավորման գրավոր քննության կարգի տարբերությունն ընդհանուր կարգից ակնհայտ է. առաջինի դեպքում պահանջները սահմանափակվում են բացառապես թեստով, իսկ ընդհանուր կարգով անցկացվող գրավոր քննությունը նախատեսում է իրավական խնդիրներ, որոնք, բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, ուղղված են նաև հավակնորդի վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը, ինչպես նաև պարունակում են փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջ: Հարկ է նաև նկատել, որ որակավորման գրավոր քննության ընդհանուր կարգը վերաբերում է հավասարապես քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացման դատավորների թափուր հաստիքները համայրելուն:

Ինչ վերաբերում է ուսումնառության և փորձաշրջանի համար հատկացվող ժամանակահատվածին, ապա գործող կարգավորումներով սահմանված առնվազն յոթամսյա ժամկետի փոխարեն սույն գործով վիճարկվող՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանվում է ընդամենը մեկամսյա ժամկետ:

Մեր կարծիքով՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառում-

ներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների թեկնածուների հավակնորդների գրավոր քննության այսչափ դյուրին ընթացակարգ նախատեսելը, ինչպես նաև Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ընդհանուր տևողության կտրուկ նվազեցումը չեն կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ, ընդհակառակը, **կասկածի տակ է դրվում Հայաստանի Հանրապետությունում դատավորին ներկայացվող մասնագիտական և անձնական որակների ընդհանուր չափորոշիչներին համապատասխանող դատավոր ընտրելու հնարավորությունը:**

Թեև մասնագիտացված դատարանների դատավորները պետք է տիրապետեն ավելի նեղ ոլորտներում գիտելիքների և հմտությունների, քան ոչ մասնագիտացված դատավորները, սակայն այդպիսի գիտելիքները պետք է լինեն ավելի խորքային, հակառակ դեպքում մասնագիտացումն իմաստազրկվում է: Սակայն սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների հիմքում հակառակ տրամաբանությունն է դրված, ինչը վկայում է օրենսդրի կողմից ոչ լեգիտիմ նպատակներ հետապնդելու մասին: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում սույն գործով վիճարկվող օրենքների ընդունմանը նախորդած ժամանակահատվածում կայացրած որոշակի դատական ակտերից առանձին քաղաքական գործիչների և պաշտոնատար անձանց բարձրաձայնած դժգոհությունների համատեքստում այս հանգամանքն ավելի քան ակնառու է դարձնում օրենսդրի ոչ լեգիտիմ նպատակները, իսկ եթե դրան հավելենք նաև այդ օրենքների հապճեպ ընդունված լինելու փաստը և պարզեցված ընթացակարգերի կիրառումն ապագա մասնագիտացված դատավորների առաջին կազմի նկատմամբ, ապա առավելապես հանգում ենք այն եզրակացության, որ Ազգային ժողովի ընդունած օրենքներն աղերս չունեն դատավորների մասնագիտացման օբյեկտիվ անհրաժեշտության հետ՝ անկախ այդ օրենքների հիմնավորումներից առ այն, որ առաջարկվող կարգավորումները նպատակ են հետապնդում թեթևացնել քրեական մասնագիտացման դատավորների ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև ապահովել մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ գործերի քննության արդյունավետությունը՝ նշված գործերով ապահովելով մասնագիտացում:

Վերոգրյալի հիման վրա արձանագրում ենք, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները հետապնդում են ոչ իրավաչափ նպատակներ, չեն ապահովում դատավորների մասնագիտացում, էականորեն նվազեցնում են դատավորներին ներկայացվող ընդհանուր պահանջները, ինչպես նաև պարունակում են հակահամակարգային լուծումներ, որոնք կարող են ազդել դա-

տավորների պատշաճ ընտրության և դրանով նաև նրանց հետագա անաչառության վրա:

Հարկ է նկատել, որ սույն հատուկ կարծիքի հեղինակների կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին գրեթե համահունչ դիրքորոշումներ է Սահմանադրական դատարան ներկայացրել նաև Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի մայիսի 14-ին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը **հակասում են Սահմանադրության 61, 63 և 164-րդ հոդվածներին:**

ԴԱՏԱՎՈՐ
ԴԱՏԱՎՈՐ

Հ. ԹՈՎԱՄԱՍՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

24 հունիսի 2021 թվականի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի
ՄԴՈ-1603 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ
ԵՎ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի հունիսի 15-ի ՄԴՈ-1603 որոշմամբ որոշել է. *«1. Ազգային ժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը համապատասխանում են Սահմանադրությանը...»:*

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում են Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 15-ի ՄԴՈ-1603 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումից տարբերվող հետևյալ դիրքորոշումը.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(102)2021

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի հունիսի 15-ի ՄԳՈ-1603 որոշման (այսուհետ՝ Որոշում) 3-րդ կետում սահմանադրաիրավական վեճի լուծման համար պարզման ենթակա հանգամանքների շրջանակում՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորների առանձնացման վերաբերյալ հարցադրումները քննարկել է դատարանների ձևավորման ու գործունեության հիմնարար սկզբունքների, անկախության ու անաչառության պահանջների բավարարման և Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակը բնութագրող դրույթների համատեքստում (Սահմանադրության 63, 163 և 173-րդ հոդվածներ):

Սակայն, վիճարկվող օրենքների կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ այդ կարգավորումներն ուղղված են ոչ թե մասնագիտացված արդարադատություն իրականացնող դատարանների ստեղծմանը, այլ՝ ընդհանուր իրավասության դատարանի շրջանակներում դատավորների մասնագիտացմանը:

Ակնհայտ է, որ վիճարկվող օրենքների կարգավորումներով՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորների առանձնացման սահմանադրականությունը պետք է գնահատվեր հենց Սահմանադրության 164-րդ հոդվածի կարգավորումներին համապատասխանության շրջանակում:

Այս հանգամանքով պայմանավորված անհրաժեշտ է նկատել, որ Սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՄԳՈ-780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերելի են հենց մասնագիտացված արդարադատության ինստիտուտի ներդրմանը

(տվյալ պարագայում՝ վարչական արդարադատության ոլորտին), դատավորների մասնագիտացման միջոցով դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը երաշխավորելու խնդրին:

Սահմանադրական դատարանը նույն որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է», և այդ հանգամանքով պայմանավորված՝ «(...) այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործոնը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում»:

Իր մեկ այլ՝ 2008 թվականի դեկտեմբերի 2-ի ՄԴ-Ո-782 որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ «ՀՀ Սահմանադրությունը, սահմանելով ՀՀ դատական համակարգի կառուցվածքը, միևնույն ժամանակ հնարավոր է համարել այնպիսի իրավիճակի ձևավորում, որտեղ հասարակական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև դրանց առավել բարդ իրավական կարգավորվածության պայմաններում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջվի առավել խոր մասնագիտական մոտեցում և լուծումներ: ՀՀ Սահմանադրությունը, նման իրավիճակի գնահատման լիազորությունը վերապահելով օրենսդրին, նախատեսում է նաև օրենքով մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն: Սահմանադրական նորմի բովանդակության նորմատիվ տարրն է կազմում այն պահանջը, համաձայն որի՝ նման դատարանը պետք է իրականացնի արդարադատություն որոշակի իրավագործության շրջանակներում. դա այդ մարմնի բացառիկ իրավասությունն է, այլ դատարան իրավասու չէ քննել նման գործեր, ինչպես նաև մասնագիտացված դատարանն իրավասու չէ քննել այլ դատարանի իրավասությանը վերապահված գործեր: Նույն կերպ, մասնագիտացված դատարանի դատավորը, որն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, որպես մասնագիտացված դատարանում դատավորի պաշտոն զբաղեցնող անձ կոչված է իրականացնելու արդարադատություն՝ բացառապես իրավունքի այդ կոնկրետ բնագավառում»:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է նաև հետևյալ իրավական դիրքորոշումը, որ՝ «Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված դատարան ստեղ-

ծելու՝ սահմանադրական նորմի տված հնարավորության իմաստը ոչ թե գործերի մեխանիկական բաժանումն է տարբեր դատարանների միջև, այլ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող համակարգի ստեղծումն է, որտեղ գործերի բաշխումը տարբեր իրավասությամբ օժտված դատարանների միջև կիրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարաններն իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն»:

Սահմանադրական դատարանն իր վերոնշյալ իրավական դիրքորոշումներով բացահայտել է մասնագիտացված դատարանի բնույթը, գործերի բաշխման արդյունավետ իրականացման իրավական համակարգի առանձնահատկությունը՝ արդյունքում ձևավորելով մասնագիտացված դատարանի դատավորների կողմից արդարադատության իրականացման մեխանիզմը:

2. Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, «Դատավորների մասնագիտացման մասին» թիվ 15 (2012) կարծիքում անդրադառնալով դատավորների մասնագիտացման հիմնախնդրին, «նեղ մասնագետ դատավոր» է դիտարկել այն դատավորին, որը «... զբաղվում է իրավունքի սահմանափակ ոլորտներով (օրինակ՝ քրեական իրավունք, հարկային իրավունք, ընտանեկան իրավունք, տնտեսական և ֆինանսական իրավունք, մտավոր սեփականության իրավունք, մրցակցային իրավունք), և որը զբաղվում է որոշակի ոլորտներում հատուկ փաստական հանգամանքներին վերաբերող գործերով (օրինակ՝ սոցիալական, տնտեսական կամ ընտանեկան իրավունքի ոլորտների գործերով)» (կետ 5):

Այսինքն՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը դատավորների մասնագիտացումը հնարավոր է համարում բացառապես ըստ ոլորտների (քրեական իրավունք, հարկային իրավունք և այլն), այն դեպքում, երբ վիճարկվող օրենքների կարգավորումներով դատավորների մասնագիտացումը կատարվում է ոչ թե ըստ ոլորտային առանձնահատկությունների, այլ ըստ առանձին ինստիտուտների:

Ավելին, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը նույն՝ թիվ 15 (2012) կարծիքի շրջանակում մտահոգություն է արտահայտել «նեղ մասնագետ դատավորների» վերաբերյալ՝ նշելով. «... մասնագիտացման հիմնական վտանգն այն է, որ նեղ մասնագետ դատավորները կարող են տարանջատվել դատական ընդհանուր համակարգից» (կետ 14), և «Դատա-

վորները, որոնք նեղ մասնագիտացման հետևանքով ընդունում են միևնույն տեսակի հարցերի առնչությամբ որոշումներ, կարող են հակված լինել վերարտադրելու նախկին որոշումները, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ հասարակության պահանջներին համապատասխան նախադեպի զարգացմանը: Այդ վտանգն առկա է նաև, երբ որոշակի ոլորտում որոշումները մշտապես ընդունվում են դատավորների միևնույն խմբի կողմից» (կետ 15):

Միաժամանակ, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը նաև արձանագրել է. «Չափազանց նեղ մասնագիտացված դատարան հիմնելը կարող է առանձնացնել դատավորներին դատական համակարգի մնացած կազմից կամ կարող է նման տպավորություն ստեղծել: Նման դատավորները կարող են ենթարկվել դատավարության մասնակից կողմերի, նույն հետաքրքրություններով միավորված մարդկանց խմբերի և պետական այլ ուժերի կողմից ճնշումների» (կետ 19):

Եվ ներկայացված հիմնավորումների համատեքստում Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, նման դատարաններ հիմնելու կապակցությամբ շարունակելով արտահայտել իր առարկությունները, արձանագրել է. «Նեղ մասնագետ դատավորներից իրավական հատուկ ոլորտների բարդ և առանձնահատուկ պահանջների բավարարում պահանջելն այլ խնդիր է և տարբերվում է հատուկ, ժամանակավոր (ad hoc) և բացառիկ իրավասությունների դատարաններ հիմնելուց, որոնց պահանջն առաջանում է կոնկրետ կամ հատուկ հանգամանքներում: Նման դատարանները պարունակում են պոտենցիալ վտանգ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների առումով» (կետ 37):

Սակայն, Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի հունիսի 15-ի ՄԴՈ-1603 որոշման 4.2-րդ կետում կարևորելով միջազգային մի շարք փաստաթղթերից բխող մասնագիտացված դատարանների ձևավորման իրավական հնարավորությունը, այդ թվում՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2012 թվականի թիվ 15 (2012) կարծիքի այն ամրագրումները, որոնց հաշվառմամբ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1603 որոշման մեջ արձանագրել է, որ մասնագիտացված դատարանների ստեղծումը պետք է «... հետապնդի բացառապես դատարանների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակներ»:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ կարծում եմ, որ եթե մասնագիտացված դատարանների ձևավորման իրավական հնարավորությունը երաշխավորված է սահմանադրական կարգավորումների համատեքստում, ապա յու-

րաքանչյուր կոնկրետ դեպքում նման դատարանի ստեղծումը և գործունեության առանձնահատկությունները որքանո՞վ են համապատասխանելու Սահմանադրության 164-րդ հոդվածով ամրագրված՝ դատավորի անկախության և անաչառության սահմանադրական պահանջներին և որքանո՞վ են ծառայելու բուն արդարադատության իրականացմանը:

Այս հարցերի քննարկման համար անհրաժեշտ ենք համարում հստակեցնել, թե որոնք են անկախության և անաչառության գնահատման չափանիշները՝ մասնագիտացված դատարանների ձևավորման կարգի պահանջների համատեքստում:

Այսպես՝ վիճարկվող օրենքների կարգավորումների համատեքստում՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների վերաբերյալ գործեր քննող դատավորների անկախության գնահատման չափանիշների շրջանակում անհրաժեշտ է անդրադառնալ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նպատակով անցկացվող քննության, իրականացվող ուսումնառության ընդհանուր կարգին, որով առաջարկվող կարգավորումները նախատեսում են ՀՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգից էականորեն տարբերվող պայմաններ: Նույնը վերաբերում է ուսումնառության և փորձաշրջանի համար հատկացվող ժամանակահատվածի վերաբերյալ առկա տարբեր ժամկետներին: Այս առումով կարծում եմ, որ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների թեկնածուների հավակնորդների համար պարզեցված ընթացակարգ նախատեսելը, այդ թվում՝ Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ընդհանուր կարգից բացառություն կատարելը, որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում, ընդհակառակը կասկածի տակ է դրվում Հայաստանի Հանրապետությունում դատավորին ներկայացվող մասնագիտական և անձնական որակների ընդհանուր չափորոշիչներին համապատասխանող դատավոր ընտրելու հնարավորությունը և նպատակը:

Եթե օրենսդրական նախաձեռնության հեղինակի կողմից վիճարկվող օրենքների կարգավորումների վերաբերյալ բերված հիմնավորումներով նպատակ է հետապնդվել թեթևացնելու քրեական մասնագիտացման դատավորների գերծանրաբեռնվածությունը և ապահովելու մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու գործերի քննութ-

յան արդյունավետությունը, այդ թվում լրացուցիչ հաստիքների ավելացման միջոցով, ապա հարց է առաջանում՝ ինչպես են վիճարկվող իրավակարգավորումները ծառայելու գերձանրաբեռնվածության թեթևացմանն ու մինչդատական քրեական վարույթի և օպերատիվ-հետախուզական միջոցառումների գործերով առավել արդյունավետ և մասնագիտացված քննության իրականացմանը, եթե մարզերում այդ գործերը քննող դատավորները կրկին ունենալու են նույն ծանրաբեռնվածությունը, և առհասարակ անորոշ է դառնում օրենսդրական նման կարգավորման նպատակը:

Կամ, ինչպես պարզ է դառնում վիճարկվող օրենքների կարգավորումների բովանդակությունից, օրենսդիրը նպատակ է հետապնդում մինչդատական քրեական վարույթի և օպերատիվ-հետախուզական միջոցառումների գործերը քննող դատավորների գիտելիքներն ստուգել առավելապես այդ ոլորտին վերաբերող խնդիրների լուծումների միջոցով, քանի որ նրանք իրենց գործունեությունն իրականացնելու են հենց այդ ոլորտում, սակայն, այդ պարագայում որքանով է նշված նպատակը համարվում իրագործելի և արդյունավետ մարզի դատավորների նկատմամբ, որոնք բացի մինչդատական քրեական վարույթի գործերից քննելու են նաև ընդհանուր բնույթի գործեր:

3. Օրենսդիրը, մի կողմից, կոնկրետ մասնագիտացման դատավորների համար նախատեսել է հատուկ կարգավորումներ, այդ թվում՝ կրճատելով նրանց ուսումնառության ժամկետը՝ մարզերի դատավորներին վերապահելով քննել նաև ընդհանուր բնույթի քրեական գործեր, և ի տարբերություն քրեական մասնագիտացման կամ ընդհանուր բնույթի դատավորների՝ մասնագիտացված դատավորներին անուղակիորեն դարձրել է պակաս պատրաստվածության դատավորներ: Բայց, մյուս կողմից, նախատեսել է այդ դատավորների առաջին համալրման հատուկ ընթացակարգ՝ առանց հիմնավորելու այդ մոտեցման նպատակն ու պատճառաբանությունը: Այսինքն՝ մի դեպքում մասնագիտացման դատավորների համար բերվում են հիմնավորումներ՝ վերջիններիս նկատմամբ առանձնահատուկ մոտեցում ցուցաբերելու պատճառաբանությամբ, իսկ մեկ այլ դեպքում՝ նախատեսվում առանձնահատուկ ընթացակարգ բացառապես այդ դատավորների առաջին համալրման դեպքում, և արդյունքում՝ վիճարկվող իրավակարգավորումների շրջանակներում ակներև է դառնում հակասության առկայությունը:

Կարծում եմ՝ նման մոտեցումը չի ապահովելու ոլորտի արդյունավետությունը, այլ ընդհակառակը՝ նսեմացնելու է ոչ մասնագիտացված դատա-

վորների տեղն ու դերը դատական համակարգում և կարող է խոչընդոտ հանդիսանալ ոչ մասնագիտացված դատավորների թեկնածուների ընտրության առումով՝ լայն պրոֆիլի դատավորի պաշտոնին հավակնող թեկնածուի նկատմամբ մասնագիտացված դատավորի պաշտոնն ավելի գրավիչ լինելու հիմնավորմամբ:

Ավելին, գնահատելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման գրավոր քննության և ուսումնառության տարբերությունն ընդհանուր կարգից՝ այն անմիջականորեն ներգործելու է արդարադատության արդյունավետության և որակի վրա: Արդյունքում նույնանման գործերի քննությունը վստահված է լինելու տարբեր մասնագիտական ունակություններ ունեցող դատավորներին, հատկապես հաշվի առնելով, որ վիճարկվող օրենքների կարգավորումների ուժով բացառապես մեկ անգամ և պարզ ընթացակարգով է անցկացվելու որակավորման գրավոր քննությունն ու ուսումնառությունը:

Ներկայացված հիմնավորման շրջանակում անհրաժեշտ է նշել, որ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2012 թվականի թիվ 15 (2012) կարծիքում ևս անդրադառնալով մասնագիտացում ունեցող դատավորների կարգավիճակին՝ արձանագրվել է. «Ուղղորդող սկզբունքը պետք է լինի այն, որ նեղ մասնագիտացում ունեցող դատավորներն իրենց կարգավիճակի առնչությամբ պետք է արժանանան նույն վերաբերմունքին, ինչպես լայն պրոֆիլի դատավորները: Դատավորների նշանակումը, պաշտոնավարությունը, առաջխաղացումը, անփոփոխելիությունը և կարգապահական հարցերը կարգավորող օրենքները և կանոնները, ուստի, պետք է լինեն նույնը նեղ մասնագիտացում ունեցող և լայն պրոֆիլի դատավորների համար» (կետ 53):

Նշվածը ևս հաստատում է, որ նեղ մասնագիտացման դատավորների թեկնածուների ընտրությունը՝ որպես դատավորների նշանակման գործընթացի նախնական փուլ, ևս պետք է իրականացվի այն նույն սկզբունքներով, ինչպիսիք կիրառելի են ընդհանուր իրավասության դատարանի դատավորների համար:

Վերոգրյալի հաշվառմամբ, կարծում եմ, որ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման գրավոր քննության, Արդարադատության ակադեմիայում ուսումնա-

ռության առանձնահատկությունները՝ համակցված այն դրույթի հետ, որ թափուր հաստիքների համալրման այդ առանձնահատուկ կարգը վերաբերում է տվյալ մասնագիտացման առանձին դատավորների միայն առաջին համալրմանը, խնդրահարույց է Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքի երաշխավորման տեսանկյունից:

Նույնը վերաբերում է անաչառ դատարանի առջև արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրականացման խնդրին՝ հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշման մեջ արտահայտված իրավական հետևյալ դիրքորոշումը, ըստ որի՝ «Ինչ վերաբերում է «անկողմնակալության» հարցին, ապա այս պահանջի մասով գոյություն ունի երկու ասպեկտ: Նախ՝ դատարանը պետք է սուբյեկտիվորեն ազատ լինի անձնական նախապաշարմունքից կամ կանխակալությունից: Երկրորդ՝ այն պետք է նաև օբյեկտիվորեն անկողմնակալ լինի, այն է՝ պետք է ապահովի բավարար երաշխիքներ՝ բացառելու ցանկացած օրինաչափ կասկած այդ առումով»:

4. Վիճարկվող օրենքների հիմնական և եզրափակիչ մասերի ու անցումային կարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դրանք կամ կրկնորդում են ՀՀ դատական օրենսգրքի գործող կարգավորումները, կամ անուղղակիորեն հակասության մեջ են վերջիններիս հետ:

Այսպես՝ ՀՀ դատական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից կարող է ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննում են առանձին տեսակի (անչափահասների, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված և անօրինական պահվող երեխաների վերադարձի, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և այլն) գործեր:

Վերոնշյալ կարգավորման համատեքստում, կարծում եմ, որ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորներ ընտրելու վերաբերյալ հարցերն արդեն իսկ իրենց կարգավորումն ունեն:

Կամ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ

իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների թվակազմի ավելացման հարցը ՀՀ դատական օրենսգրքի 23-րդ և 28-րդ հոդվածների շրջանակում արդեն իսկ կարգավորված է նույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Բարձրագույն դատական խորհրդին վերապահված նույնաբովանդակ լիազորության իրականացման տեսանկյունից, այն է՝ Բարձրագույն դատական խորհուրդը Կառավարության համաձայնությամբ ավելացնում է առանձին դատարանների դատավորների թվակազմը, կրճատում է իր կողմից ավելացված դատավորների թվակազմը:

Իսկ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի 27-րդ մասի կարգավորումն ուղղակի կրկնորդում է ՀՀ դատական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին միայն այն տարբերությամբ, որ օրենսդիրն ուղղորդում է Բարձրագույն դատական խորհրդին կատարելու արդեն իսկ վերջինիս՝ նույն օրենսգրքով վերապահված լիազորությունը:

Բացի դրանից, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 26-րդ մասի կարգավորումներից հետևում է, որ նշված օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ Բարձրագույն դատական խորհուրդը պետք է վերանայի իր՝ նախկինում ընդունված որոշումները, ինչը չի բխում Սահմանադրության 5-րդ հոդվածով սահմանված օրինականության սկզբունքի տրամաբանությունից և այլն:

Ամփոփելով՝ կարծում եմ, որ Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը խնդրահարույց են Սահմանադրության 5, 61, 63 և 164-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍԱՆ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ
(Մ6 ՎԱՆԱԶՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ»
(ՎԱՐԿ ԹԻՎ 3449-ARM) ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հունիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդ-
կարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և են-
թակառուցվածքների նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի ապ-
րիլի 7-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զար-
գացման բանկի միջև «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

նային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (վարկ թիվ 3449-ARM) վարկային համաձայնագրի փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի ապրիլի 29-ի N 652-Ա որոշմամբ 2021 թվականի ապրիլի 7-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (վարկ թիվ 3449-ARM) վարկային համաձայնագրի փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի մայիսի 3-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մայիսի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ վարկային համաձայնագրի փոփոխությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Չ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (վարկ թիվ 3449-ARM) վարկային համաձայնագրի փոփոխությունը (այսուհետ՝ Համաձայնագրի փոփոխություն) ստորագրվել է 2021 թվականի ապրիլի 7-ին:

2. 2016 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված՝ «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր (ընթացիկ գործառնություններ)» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2017 թվականի մարտի 1-ի ԱԺՈ-287-Ն որոշմամբ (ՄԴՈ-1347):

3. Համաձայնագրով սահմանված ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության տարածքում Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի տրանսպորտային արդյունավետությունն ու անվտանգությունը, որի համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել 44.037.000 (քառասունչորս միլիոն երեսունյոթ հազար) եվրո վարկ (այսուհետ՝ Վարկ):

Համաձայնագրով նախատեսված ծրագրի իրականացման մարմինը Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն (ՏԿՏՏՆ) է կամ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) համար ընդունելի այլ իրավահաջորդ:

4. Համաձայնագրով սահմանված ծրագիրը ներառում է Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի՝ մոտ 51.5 կիլոմետր վերակառուցում՝ բարելավված ճանապարհային ծածկույթով, անվտանգության ապահովման և կլիմայի փոփոխությանը հարմարվելու միջոցներով և ՏԿՏՏՆ ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում և Համաձայնագրով նախատեսված ծրագրի իրականացման ուղղությամբ աջակցություն, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված ծրագիրը պետք է ներառի դրա իրականացման համար խորհրդատվական ծառայությունների ապահովում շինարարության վերահսկման, կառավարման, աուդիտի, անվտանգության միջոցառումների իրականացմանն ուղղված աջակցության, պայմանագրի կառավարման, գնումներին ուղղված աջակցության, ճանապարհային անվտանգության և վերապատրաստումների համար:

5. Ըստ Համաձայնագրի՝ Համաձայնագրով նախատեսված ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 102.000.000 (հարյուր երկու միլիոն) եվրո, և Հայաստանի Հանրապետությունը մտադիր է Համաձայնագրով նախատեսված ծրագիրը ֆինանսավորել հետևյալ կերպով. վարկ Ասիական զարգացման բանկից՝ 51 միլիոն եվրո, վարկ Եվրոպական ներդրումային բանկից՝ 51 միլիոն եվրո:

6. 2016 թվականի հունվարի 26-ին Երևանում և 2016 թվականի հունվարի 29-ին Լյուքսեմբուրգում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև՝ «Հայաստանի Մ6 միջպետական ճանապարհ» ֆինանսական պայմանագիրը (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2016 թվականի հունիսի 15-ի ԱԺՈ-220-Ն որոշմամբ (ՄԴՈ-1273)): Վերոհիշյալ պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը հանձն է առել իրականացնել Հայաստանի կենտրոնական մասում գտնվող Վանաձորի և Հայաստանի ու Վրաստանի հյուսիսարևելյան սահմանին գտնվող Բագրատաշենի միջև ընկած Մ6 միջպետական ճանապարհի 90 կիլոմետր երկարությամբ հատվածի վերականգնումը և արդիականացումը և այդ նպատակով Եվրոպական ներդրումային բանկից ստացել է 51 միլիոն եվրո գումարի չափով վարկ:

7. Համաձայնագրի փոփոխությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Համաձայնագրի 3.05 բաժնում նշված վարկի մարման ժամկետը փոփոխել, որի արդյունքում այն երկարաձգվում է մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2021 թվականի ապրիլի 7-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հայաստան–Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր–Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (վարկ թիվ 3449-ARM) վարկային համաձայնագրի փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

22 հունիսի 2021 թվականի
ՍԴՈ-1604



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԾՐՁԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ
(Մ6 ՎԱՆԱՃՈՐ-ԲԱԳՐԱՏԱԾԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ»
(ՎԱՐԿ ԹԻՎ 3449-ARM) ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1604 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2021 թվականի ապրիլի 7-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (վարկ թիվ 3449-ARM) վարկային համաձայնագրի փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի հունիսի 22-ի ՍԴՈ-1604 որոշմամբ որոշել է, որ 2021 թվականի ապրիլի 7-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(102)2021

ման ծրագիր» (վարկ թիվ 3449-ARM) վարկային համաձայնագրի փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 22-ի ՍԳՈ-1604 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1604 որոշմամբ 2021 թվականի ապրիլի 7-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հայաստան–Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր–Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (վարկ թիվ 3449-ARM) վարկային համաձայնագրի փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ են համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեն համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված:

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների:

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում: Նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանա-

դրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության խսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց

ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն զբանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչատոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստո-

րագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինեք արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնա-

րավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագրվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անփոփեղով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի

աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

22 հունիսի 2021 թվականի



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ,
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 հունիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շա-
թիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

դիմողի՝ ՀՀ վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Հայաստանի Հան-
րապետության Ազգային ժողովի ներկայացուցիչներ Կ. Մովսիսյանի, Գ. Աթա-
նեսյանի, Մ. Մոսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդ-
վածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 22, 40, 61 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական դա-
տարանի դիմումի հիման վրա՝ «Պաշտոնատար անձանց գործունեության
ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի
9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատաս-
խանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 2(102)2021

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014թ. փետրվարի 4-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2014թ. փետրվարի 13-ին և ուժի մեջ է մտել 2014թ. հուլիսի 1-ից:

Վիճարկվող նորմում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Օրենքի՝ «Անցումային դրույթներ» վերտառությամբ 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը սահմանում է.

«3. 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև՝

(...)

«1) Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը»:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է ՀՀ վարչական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 18-ի թիվ ՎԴ/11311/05/19 վարչական գործով «Սահմանադրական դատարան դիմելու և վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Վկայակոչելով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ դիմողն արձանագրում է, որ օրենսդիրը դատախազության համակարգի աշխատակիցների համար Օրենքով սահմանել է կենսաթոշակի հատուկ տեսակ այն անձանց համար, որոնք պաշտոնից կազատվեն դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալու հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կճանաչվեն կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք կբերեն: Միաժամանակ, դիմողն արձանագրում է, որ Օրենքի անցումային դրույթներով հատուկ կարգավորում է տրվել դատախազության համակարգի այն աշխատակիցների համար, որոնք 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեն առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխա-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 2(102)2021

տանքային ստաժ, ծնվել են մինչև 1974 թվականի հունվարի 1-ը և պաշտոնից ազատվել են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով, այն է՝ առկա է անձնական դիմում, լրացել է դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին:

Դիմողի կարծիքով տվյալ իրավակարգավորումը խնդրահարույց է խտրականության արգելքի սկզբունքի տեսանկյունից այն հիմնավորմամբ, որ խտրական մոտեցում է ցուցաբերում մի կողմից՝ անձնական դիմումի, մյուս կողմից՝ ատեստավորման արդյունքներով պաշտոնին չհամապատասխանելու հիմքով դատախազի պաշտոնից ազատված անձանց միջև:

Դիմողը գտնում է, որ որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, ըստ էության, նպատակ է հետապնդում երաշխավորելու այն դատախազների կենսաթոշակի իրավունքը, որոնք ունեն երկարամյա ծառայության ստաժ, այն է՝ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, այսինքն՝ իրավակարգավորման նպատակը երկարամյա աշխատանքի խրախուսումն է: Ըստ դիմողի՝ օրենսդիրը չէր կարող խրախուսել մի կողմից՝ երկարամյա աշխատանքը, իսկ մյուս կողմից՝ ատեստավորումը չանցնելու ռիսկից խուսափելու համար պաշտոնից ազատվելու մասին դիմում ներկայացնելը:

Դիմողը նշում է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով պաշտոնից ազատվելը ենթադրում է, որ դատախազը տվյալ տարվա ատեստավորման արդյունքներով որակավորման հանձնաժողովի որոշմամբ չի համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Սակայն, ըստ դիմողի, այստեղ հաշվի չի առնվում, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազները երեք տարին մեկ անցնում են ատեստավորում, ինչը ենթադրում է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով պաշտոնից ազատված դատախազը նախկին ատեստավորումներն անցել է և միայն տվյալ տարվա ատեստավորումը չի անցել: Նման պայմաններում սեփական դիմումի հիմքով պաշտոնից ազատված դատախազի և ատեստավորման արդյունքներով պաշտոնին չհամապատասխանելու հիմքով պաշտոնից ազատված դատախազի միջև տարբերակված մոտեցումը, դիմողի կարծիքով, չի հետապնդում իրավաչափ նպատակ և օբյեկտիվ հիմքով տարբերակում չէ:

Վերոգրյալի հիման վրա դիմողը գտնում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը հակասում է Սահմանադրության 29-րդ հոդվածին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ կենսաթոշակային կամ սոցիալական ապահովության իրավունքին, ինչպես նաև խտրականության արգելքի սկզբունքին վերաբերող մի շարք դատական ակտեր՝ պատասխանողը գտնում է, որ պետության կողմից հատուկ կենսաթոշակի սահմանման նպատակը պաշտոնյաներին երկարամյա անձնվեր ու անբասիր և արդյունավետ ծառայության համար խրախուսելն է:

Ըստ պատասխանողի՝ պետության կողմից պաշտոնյաներին տրվող խրախուսանքի այս տեսակի նպատակն է խրախուսել մի կողմից երկարամյա ծառայության ստաժ ունենալը, մյուս կողմից՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում պաշտոնյաների կողմից գործնական, մասնագիտական և բարոյական բարձր հատկանիշների դրսևորումը: Ուստի՝ տրամաբանական է, որ միմիայն երկարամյա ծառայության ստաժ ունենալը օրենսդրի կողմից չէր կարող դիտարկվել որպես հատուկ կենսաթոշակի նշանակման հիմք:

Պատասխանողը գտնում է, որ հակառակ մեկնաբանման պարագայում ստացվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ անձը կուսենա առնվազն 20 օրացույցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, ձեռք կբերի Օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունք՝ անկախ պաշտոնից ազատվելու հիմքի, ինչն անընդունելի է և չի բխում Օրենքի նպատակներից:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրության պահանջներին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյոք 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ 20 օրացույցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող, մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված, սակայն ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով պաշտոնից ազատված դատախազների՝ Օրենքով նախատեսված համապատասխան կենսաթոշակի իրավունքը սահմանափակելը համահունչ է վերջիններիս սոցիալական ապահովության իրավունքին:

Մինևույն ժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վիճարկվող իրավակարգավորումներում ակնհայտորեն բացակայում է որևէ խտրականության դրսևորում՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը լուծելու է Սահմանադրության 83-րդ հոդվածի լույսի ներքո:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Անձի սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է Սահմանադրության 83-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ ղեպերում սոցիալական ապահովության իրավունք:

Սոցիալական ապահովության իրավունքի և դրա բաղադրատարր հանդիսացող կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանը արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1142 որոշմամբ նշել է, որ «... «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ /հոդվ. 1/, խտրականությունը բացառող հանգամանք /հոդվ. 14.1/, աշխատողի շահի դրսևորում /հոդվ. 32/, սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ /հոդվ. 37/, պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ /հոդվ. 48/, կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ /հոդվ. 89/: Բոլոր ղեպերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հոշակամ պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Տնտեսական, սոցիալական և մշակու-

թային իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը, նաև դրա 9-րդ հոդվածով է միջազգային պարտավորություն ստանձնել ճանաչելու յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը»:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, որոնք իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող: Առավել լայն հասկացություն է սոցիալական պաշտպանությունը, որը ներառում է ոչ միայն սոցիալական ապահովությունը, այլև սոցիալական ապահովագրությունը և պետության ու հասարակության կողմից իրականացվող սոցիալական օգնությունը:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1475 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ թեև Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրին է վերապահված անձի սոցիալական ապահովության, մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքի բովանդակությունը (օրինակ՝ կենսաթոշակի չափը, նշանակման և վճարման կարգը և այլն) որոշակիացնելու լիազորությունը, այդուհանդերձ, Սահմանադրությունը, ի թիվս այլնի, բացառում է այս իրավունքն ընդհանրապես օրենքով չերաշխավորելը, այսինքն՝ օրենսդիրը պարտավոր է կենսաթոշակի իրավունքը երաշխավորող օրենք ընդունել: Բացի դրանից, նման օրենքը չպետք է խախտի Սահմանադրության պահանջները, մասնավորապես, այն պետք է լինի որոշակի, կանխատեսելի, չհակասի իրավահավասարության, խտրականության արգելքի սկզբունքներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատված չափանիշների համաձայն՝ «... սոցիալական օրենսդրության, այդ թվում՝ կենսաթոշակների ոլորտում, պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը ելնելով սոցիալական արդարության և տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող կենսաթոշակի գումարի կարգավորմանը, հարմարեցմանը և նույնիսկ նվազեցմանը: Այնուամենայնիվ, ցանկացած այսպիսի միջոց պետք է կիրառվի ոչ խտրական ձևով և համապատասխանի համաչափության պահանջներին: Այդ պատճառով օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, և նրա կողմից «հանրային շահի» գնահատումը պետք է հարգվի, եթե այն ակնհայտորեն զուրկ չէ նոջամիտ հիմնավորումից» (Carson and Others v. The United Kingdom [GC], cited above, p. 61; Andrejeva v. Latvia [GC], cited above, p. 83; as well as Moskal v. Poland, p. 61):

Անդրադառնալով կենսաթոշակի իրավունքին (այդ թվում՝ հատուկ կարգով նշանակվող)՝ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-881 որոշման շրջանակներում նշել է. Կենսաթոշակային ապահովության իրավունքը՝ սահմանված Սահմանադրության 37-րդ հոդվածով, և բավարար կենսամակարդակի իրավունքը՝ սահմանված Սահմանադրության 34-րդ հոդվածով, թեպետև իրենց բնույթով դասվում են սոցիալական իրավունքների շարքին, այնուամենայնիվ, դրանք տարբեր իրավունքներ են, վերաբերում են տարբեր կատեգորիայի անձանց, և այդ իրավունքները Սահմանադրությամբ տարանջատված են: Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ կենսաթոշակային ապահովության իրավունքը վերապահված է հասարակության՝ սոցիալապես առավել խոցելի խմբերին: Օրենսդիրն այդ խմբերի ներկայացուցիչներին դիտարկում է որպես աշխատունակության լրիվ կամ մասնակի կորուստ ունեցողներ, որոնք դրա հետևանքով չեն կարող սեփական աշխատանքով իրենց և իրենց ընտանիքների համար ապահովել բավարար կենսամակարդակ: Դրա հետևանքով պետությունն իր սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով նշված խմբերի համար սահմանել է կենսաթոշակային ապահովության իրավունք: Կենսաթոշակային իրավունքի նպատակն անձի համար ոչ թե բավարար, այլ նվազագույն կենսամակարդակ ապահովելն է»:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-991 որոշմամբ արձանագրել է, որ կենսաթոշակը և աշխատանքը միտված են միևնույն նպատակին՝ գոյության միջոցների ապահովմանը. աշխատանքը՝ որպես կենսաապահովման միջոց, գործում է անձի լրիվ աշխատունակության պայմաններում, իսկ կենսաթոշակը՝ աշխատունակության սահմանափակման կամ կորստի պայմաններում: Հետևաբար, կենսաթոշակի իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձը, որոշակի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այլևս չի կարող այդ նպատակն իրացնել աշխատանքի միջոցով: Կենսաթոշակի իրավունքի ծագումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունների կրճատմամբ:

Կենսաթոշակի իրավունքը դիտարկելով օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի շրջանակներում՝ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-731 որոշմամբ նշել է, որ այս սկզբունքի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները:

Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:

4.2. Վերոշարադրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատախազի պաշտոնում երկարամյա ծառայության առկայության պարագայում անձի սոցիալական ապահովության, տվյալ դեպքում՝ Օրենքով նախատեսված կենսաթոշակի իրավունքի իրացմանն ուղղված մոտեցումները պետք է համահունչ լինեն նրա նկատմամբ իրականացվող սոցիալական քաղաքականության ընդհանուր դրույթներին:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ Rec(2000)19 հանձնարարականի 5-րդ կետով սահմանել է.

«5. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ երաշխավորելու, որպեսզի.

(...)

դ. Դատախազներն ապահովված լինեն աշխատանքի ողջամիտ պայմաններով, ներառյալ՝ իրենց առանցքային դերին համաչափ վարձատրությամբ, պաշտոնավարման և կենսաթոշակի պայմաններով, ինչպես նաև պատշաճ կենսաթոշակային տարիքով, և այս բոլոր պայմանները կարգավորվեն օրենքով»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ դատախազի կենսաթոշակային ապահովությունը, ինչպես նաև դատախազի կողմից իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով մահանալու (զոհվելու) դեպքում դատախազի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունն իրականացվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով (65-րդ հոդված):

Դատախազին Օրենքով նախատեսված կենսաթոշակ նշանակելու ընդհանուր պայմանները նախատեսված են Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն որի՝ նույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրա-

վունք ունի դատախազի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որը պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով:

Օրենքի անցումային դրույթներով, որպես վերը նշված ընդհանուր կանոնից բացառություն, նախատեսված է նաև հատուկ կենսաթոշակ դատախազի պաշտոնից ազատված այն անձանց համար, որոնք բավարարում են հետևյալ երեք նախապայմանները.

- 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեն առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- ծնվել են մինչև 1974 թվականի հունվարի 1-ը,
- դատախազի պաշտոնից ազատվել են անձնական դիմումի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալու հիմքերով:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված՝ դատախազի պաշտոնից ազատելու տարատեսակ հիմքերից վիճարկվող իրավակարգավորման համար որպես երրորդ նախապայման ընդունելի է համարել երկուսը՝ անձնական դիմումը և դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալը: Հետևաբար՝ Օրենքի վիճարկվող դրույթով սահմանված կանոնի համաձայն՝ եթե անձը 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը, սակայն պաշտոնից ազատվել է ոչ թե անձնական դիմումի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու, այլ մեկ ուրիշ հիմքով (տվյալ դեպքում՝ ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհանապատասխանելու հիմքով), զրկվում է Օրենքով նախատեսված կենսաթոշակ ստանալու իրավունքից:

4.3. Օրենսդիրը, հիմք ընդունելով կոնկրետ (տվյալ դեպքում՝ դատախազության համակարգում) աշխատանքի առանձնահատկություններն ու բնույթը, երաշխավորելով Սահմանադրության 83-րդ հոդվածով նախատեսված՝ անձի սոցիալական իրավունքի իրացման հնարավորությունը, սահմանել է նվազագույն համապատասխան տարիք և մասնագիտական աշխատանքային ստաժի առկայություն այդ իրավունքն իրացնելու համար, և դա ինքնանպատակ չէ:

Մասնավորապես, Օրենքով նախանշված խումբ անձանց հատուկ կենսաթոշակի տրամադրումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք որոշակի՝ օրենքով սահմանված ժամկետներում հանրային ծառայության տվյալ ոլորտում իրենց ծառայությունն են մատուցել պետությանը, ինչն էլ օրենսդիրն իր հայեցողության շրջանակներում դիտարկել է որպես լրացուցիչ խրախուսման հիմք:

Այլ կերպ ասած՝ վիճարկվող նորմով նախանշված խումբ անձինք իրենց ծառայությամբ արդեն իսկ «վաստակել են» օրենսդրի կողմից նախատեսված հատուկ կենսաթոշակի իրավունքը, անկախ այն հանգամանքից, թե հետագայում ինչ հիմքով են ազատվել աշխատանքից (բացառությամբ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հետևանքով որպես անբարենպաստ հետևանք օրենքով սահմանված կարգով որոշակի արտոնությունուններից զրկվելու դեպքերից):

Անդրադառնալով մասնագիտական պիտանիության հարցին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ տեսության մեջ ու համապատասխան պրակտիկայում առավել լայն տարածում ունեցող մոտեցման համաձայն՝ մասնագիտական պիտանիությունը հոգեբանական, հոգեֆիզիկական հատկությունների, ինչպես նաև հատուկ գիտելիքների, ունակությունների, փորձի ամբողջությունն է, որոնք անհրաժեշտ են աշխատանքի ընդունելի արդյունավետությանը հասնելու համար: Մասնագիտական պիտանիությունը մարդուն ի ծնե բնորոշ հատկություն չէ, ձևավորվում է երկարատև մասնագիտական գործունեության արդյունքում, որը ծավալվում է որոշակի սոցիալ-տնտեսական պայմաններում: Ժամանակի ընթացքում ձևավորվում են ոչ միայն մարդու առանձին գործառնական համակարգերը և հոգեկան գործընթացները (մասնագիտական ընկալումը, հիշողությունը, մտածողությունը և այլն), այլև նրա անձը: Կոնկրետ գործունեության համար մասնագիտական պիտանիությունը հիմնվում է որոշակի հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական, մարդաբանական, բժշկական և այլ չափանիշների վրա: Նույն կերպ էլ ժամանակի ընթացքում՝ կախված տարիքից և այլ արտաքին գործոններից, մարդը ենթարկվում է որոշակի հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների, որոնք բացասաբար են ազդում նրա մտածողության, հիշողության, հետևաբար՝ մասնագիտական պիտանիության վրա:

Տվյալ դեպքում ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով պաշտոնից ազատված անձն ունեցել է 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, և այդ տարիների ընթացքում վերջինս դատախազների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների առումով համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին: Եթե հետագայում անձը ա-

տեստավորման արդյունքներով չի համապատասխանում իր զբաղեցրած պաշտոնին, ապա նա **արդեն իսկ կրում է դրա բացասական հետևանքը՝ ազատվում է զբաղեցրած պաշտոնից**, իսկ իր կողմից 20 օրացուցային տարվա ընթացքում արդեն իսկ վաստակած՝ Օրենքով նախատեսված երկարամյա հատուկ կենսաթոշակ ստանալու իրավունքի սահմանափակումը կրկնակի բացասական հետևանքներ է առաջացնում վերջինիս համար և համահունչ չէ իրեն նաև սոցիալական հոշակած պետության քաղաքականության բովանդակությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անդրադառնալով խնդրո առարկա երկու ենթակատեգորիաների անձանց՝ անձնական դիմումի համաձայն պաշտոնից ազատված և ատեստավորման արդյունքներով պաշտոնին չհամապատասխանելու հիմքով պաշտոնից ազատված դատախազներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա չէ որևէ օբյեկտիվ հիմք, որը թույլ կտար պնդելու, որ եթե անձնական դիմում չլիներ, և անձը մասնակցեր ատեստավորմանը, ապա կապահովեր բավարար արդյունք և, ընդհակառակը, առկա չէ որևէ օբյեկտիվ հիմք, որը թույլ կտար պնդելու, որ ատեստավորմանը մասնակցած և բավարար արդյունք չապահոված անձը միշտ էլ ունեցել է անբավարար մասնագիտական պատրաստվածություն: Ավելին, եթե ատեստավորման գործընթացում անբավարար արդյունք ապահոված անձը չմասնակցեր ատեստավորմանը և պաշտոնից ազատման դիմում ներկայացներ, ապա որևէ տեղ չէր արձանագրվի նրա մասնագիտական ոչ պիտանիությունը, և տվյալ անձը, **փաստացի լինելով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող**, կօգտվեր Օրենքի ընձեռած հնարավորությունից և կստանար հատուկ կենսաթոշակ:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ աշխատանքային հարաբերությունների դադարման հնարավորությունը պաշտոնին անհամապատասխանության հիմքով պայմանավորելն ինքնին խնդրահարույց չէ, քանի որ աշխատանքային հարաբերությունների դադարման համար հիմք է ծառայում այնպիսի օբյեկտիվ չափանիշ, ինչպիսին մարդու աշխատունակության չափանիշն է:

Խնդրահարույց իրավիճակն առաջանում է այն դեպքերում, երբ կենսաթոշակի իրավունքի իրացման համար բոլոր օբյեկտիվ պայմանների (տարիք, աշխատանքային ստաժ) առկայության պարագայում սահմանափակվում է անձի՝ համապատասխան դիմում ներկայացնելու հնարավորությունը՝ պաշտոնին չհամապատասխանելու հիմքով նրան աշխատանքից ազատելու պատճառով այդպիսի դիմում ներկայացնելն արգելող իրավակարգավորման բացակայության պայմաններում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով նախքան դատախազի նկատմամբ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ կիրառելը պետք է ապահովվի վերջինիս՝ սեփական դիմումի հիման վրա աշխատանքից ազատվելու և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի իրացման հնարավորությունը: Գործող իրավակարգավորումների բովանդակության միայն այդպիսի ընկալումը կապահովի սոցիալական պետության և, ըստ այդմ՝ Սահմանադրության 83-րդ հոդվածով նախատեսված՝ անձի սոցիալական ապահովության իրավունքի արդյունավետ ու արդարացի իրացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

29 հունիսի 2021 թվականի
ՍԴՈ-1605



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ
ՏԵՍԱՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՍԴ
ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ**

2021 թվականի ապրիլի 7-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը տեսահանդիպում է ունեցել Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Բորիս Վելչևի հետ:

Արման Դիլանյանը և Բորիս Վելչևը մտքեր են փոխանակել Հայաստանի և Բուլղարիայի Սահմանադրական դատարանների միջև երկկողմ համագործակցության շուրջ:

Ձրուցակիցները պայմանավորվել են առավել պարբերական հաղորդակցության միջոցով խթանել լավագույն փորձի փոխանակումը և դատաիրավական ոլորտում երկկողմ այլ նախաձեռնությունների իրականացումը:



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՆԻԴԵՈՒԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ**



2021 թվականի ապրիլի 14-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Նիդեռլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլաս Սխերմերսին:

Ողջունելով հյուրին՝ Արման Դիլանյանը կարևորել է Երևանում Նիդեռլանդների դեսպանության բացումը և ռեզիդենտ դեսպանի նշանակումը, ինչպես նաև բարձր է գնահատել Նիդեռլանդների Թագավորության շարունակական աջակցությունը Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը և իրավունքի գերակայության խթանման նպատակով իրականացվող բարեփոխումներին:

Նիկոլաս Սխերմերսն իր հերթին պատրաստակամություն է հայտնել ներդնել անհրաժեշտ բոլոր ջանքերը՝ միտված հայ-նիդեռլանդական միջդատարանական կապերի ամրապնդմանը՝ առաջնահերթություն տալով իրավունքի գերակայությանը և մարդու իրավունքների պաշտպանության շուրջ համագործակցությանը:

Երկուստեք հեռանկարային է համարվել իրավունքի գերակայության ոլորտում համատեղ ծրագրերի և միջոցառումների իրականացումը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊՊԱՆԻՆ**



2021 թվականի ապրիլի 15-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ժոնաթան Լաքոտին:

Ողջունելով հյուրին՝ Արման Դիլանյանը բարձր է գնահատել հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունների մակարդակը և ընդգծել է, որ Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կարևորագույն միջազգային գործընկերներից մեկը թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ ձևաչափերում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ դեսպան Լաքոտը պատրաստակամություն է հայտնել հայ-ֆրանսիական երկկողմ իրավական հարաբերությունների շարունակական ամրապնդմանը ու միջդատարանական հետազա փոխգործակցության զարգացմանն աջակցելու հարցում:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են իրավունքի գերակայության և սահմանադրական արդարադատության ոլորտներում հայ-ֆրանսիական երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցեր: Երկուստեք կարևորվել է Հայաստանի սահմանադրական դատարանի և Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի միջև բարեկամական կապերի հետազա զարգացումը և ամրապնդումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(102)2021

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ**



2021 թվականի ապրիլի 21-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Բոլատ Իմանրանին:

Ծնորհավորելով դեսպանին՝ Արման Դիլանյանը վստահություն է հայտնել, որ նա իր հարուստ դիվանագիտական փորձն ու ջանքերը կներդնի հայ-ղազախական հարաբերությունների հետագա խորացման գործում: Արման Դիլանյանն ընդգծել է, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և Ղազախստանի Հանրապետության սահմանադրական խորհրդի միջև առկա են դինամիկ հարաբերություններ, որոնք հնարավորություն են ստեղծում երկկողմ փոխշահավետ ծրագրերի իրականացման համար:

Դեսպան Բոլատ Իմանրանն իր հերթին պատրաստակամություն է հայտնել առավելագույնս աջակցել երկու երկրների սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների միջև պատմականորեն ձևավորված բարեկամական կապերի խորացմանը և ամրապնդմանը:

Չրուցակիցները մտքեր են փոխանակել սահմանադրական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության շուրջ՝ առանձնահատուկ կարևորելով Եվրասիական սահմանադրական դատարանների ընկերակցության շրջանակներում տարվող համատեղ աշխատանքները:

**ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԳՐԲԵՐ Է ՆՎԻՐԱԲԵՐԵԼ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ**



2021 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պավել Չեպլակը գրքեր է նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի գրադարանին: Նվիրատվությունը կատարվել է Լեհաստանի Հանրապետության սահմանադրական տրիբունալի և Սեյմի անունից:

Այս առիթով Սահմանադրական դատարանի գրադարանում կազմակերպված միջոցառման ժամանակ դեսպան Չեպլակը ՄԴ նախագահ Արման Դիլանյանին է հանձնել 1791 թվականի մայիսի 3-ին ընդունված Լեհաստանի Սահմանադրության օրինակը՝ հույս հայտնելով, որ Սահմանադրական դատարանի և Լեհաստանի սահմանադրական տրիբունալի երկարամյա գործընկերային կապերն էլ ավելի կամրապնդվեն՝ հիմք ստեղծելով նորանոր փոխշահավետ ծրագրերի իրականացման համար:

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը շնորհավորել է լեհ ժողովրդին՝ մայիսի 3-ին նշվող Սահմանադրության օրվա առթիվ, ինչպես նաև երախտիքի խոսք է ասել դեսպան Չեպլակին՝ առանձնահատուկ կարևորություն տալով սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական և կրթական ներուժի զարգացմանը միտված փոխշահավետ նախաձեռնությունների իրականացմանը: Այնուհետև Արման Դիլանյանը դեսպան Չեպլակին հրավիրել է ծանոթանալու ՄԴ գրադարանի ժառանգությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(102)/2021

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅ-ՌՈՍԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**



2021 թվականի մայիսի 12-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայ-Ռուսական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին:

Ողջունելով ուսանողներին՝ Արման Դիլանյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանի առաքելությունը և գործունեության առանձնահատկությունները: Այնուհետև հանդիպումը շարունակվել է հարցուպատասխանի ձևաչափով, որի շրջանակներում ՄԴ նախագահը պատասխանել է ուսանողներին հուզող հարցերին:

Ամփոփելով հանդիպումը՝ Արման Դիլանյանն ուսանողներին հորդորել է մշտապես բարձր առաջադիմությամբ սովորել և ձեռք բերված գիտելիքները հետագայում ծառայեցնել Հայաստանի Հանրապետության հզորացմանն ու զարգացմանը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**



2021 թվականի մայիսի 19-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի հասարակագիտության բաժնի և Եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին:

Ողջունելով ուսանողներին՝ Արման Դիլանյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանի առաքելությունը և գործունեության առանձնահատկությունները, այնուհետև պատասխանել ուսանողներին հետաքրքրող հարցերին:

Հանդիպման ավարտին Արման Դիլանյանն ուսանողներին հաջողություն է մաղթել և հույս հայտնել, որ նրանք կանեն առավելագույնը՝ իրենց ընտրած ոլորտներում Հայաստանի Հանրապետության առաջխաղացմանը նպաստելու համար:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՄԵՐԻԿԱՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**



2021 թվականի մայիսի 26-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության մագիստրոսի ծրագրի ուսանողներին:

Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանն ուսանողներին ծանոթացրել է Սահմանադրական դատարանում գործերի քննության հիմնական սկզբունքների և առանձնահատկությունների հետ: Այնուհետև ուսանողները ՄԴ նախագահին են ուղղել իրենց հուզող հարցերը:

Հանդիպման ավարտին Արման Դիլանյանն ուսանողներին մաղթել է հաջողություն և հույս հայտնել, որ նրանց կհաջողվի մասնագիտական բարձունքներ նվաճել սահմանադրական արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության ասպարեզում:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ**



2021 թվականի հունիսի 16-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է ԱԺ արտահերթ ընտրություններին ընդառաջ Հայաստան ժամանած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) պատվիրակության ներկայացուցիչներին:

Ողջունելով հյուրերին՝ Արման Դիլանյանը կարևորել է միջազգային դիտորդական առաքելությունների դերը արդար և թափանցիկ ընտրությունների ապահովման գործում, այնուհետև պատասխանել Սահմանադրական դատարանի կողմից Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծման առանձնահատկությունների վերաբերյալ հարցերին:

Պատվիրակության ղեկավար, Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի անդամ Ֆիլիպ Կուրարը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար: Պատվիրակության ներկայացուցիչներն ընդգծել են Սահմանադրական դատարանի և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության միջև երկխոսության սերտացմանը միտված քայլերին աջակցելու իրենց պատրաստակամությունը:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

**Ա. ԴԻԼԵՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՆՅԱՆ,
Ն. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ,
Ն. ՆԱԶԱՐՅԱՆ, Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՎԱԴԱՐՇՅԱՆ**

Ստորագրված է տպագրության՝ 15.12.2021թ
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 100

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011 58 81 81 (189)
E-mail: armlaw@concourt.am
<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения №2(102)2021
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia №2(102)2021
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie №2(102)2021